ՎԱՉԳԵՆ ՕՎՅԱՆ

ԼԵՌՆԵՐԻ ԼԵԳԵՆԴԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԼԵՌՆԱԿԵՐՏ (ՎԵՊ)

ԱՄԱՐԱՍ (ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ - 2003

ՀՏԴ 891.981-8 Օվյան
ԳՄԴ 84Հ7
Օ-737

Գրքի հովանավորն է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Տորոնտոյի Մարմինը

Նվիրվում է 1988-94 թթ. Արցախյան Ազատամարտի հերոսներին: Այն քաջորդիների հիշատակին, ովքեր կյանքի ու արյան գնով կռեցին Հայաստանի պատմական Արցախ նահանգի Ազատությունն ու Անկախությունը, որն իր ստեղծագործություններում եւ իր գործունեությամբ երազել է Վազգեն Օվյանը:

Օ 737 Օվյան Վազգեն - Լեռների լեգենդը. բանաստեղծություններ,արձակ բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպ, ուղեգրություն: Եր.: Անտարես, 2003 թ., 528 էջ

Նկարիչ՝ Սերգեյ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

Գրքում տեղ են գտել հետմահու ԼՂՀ բարձրագույն պարգևով «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրված արցախցի նշանավոր գրող՝ բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, երգիծաբան Վազգեն Օվյանի չափածո («Այս Ղարաբաղն է» ժողովածուից) և արձակ լավագույն ստեղծագործությունները, որոնց գերակշիռ մասը տպագրվում է առաջին անգամ:

4702080206
Օ ---------- 2003 ԳՄԴ 84Հ7
0130 (01) - 2003

Օվյանների ընտանիքն իր երախտագիտությունն է հայտնում «Անտարես» հրատարակչատանը՝ գրքի տպագրությանն աջակցելու համար:

ISBN 99941-32-17-2

© Օվյան Վ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս Ղարաբաղն է-
Մեր սուրբ օջախը, ծուխը ծխանի,
Որ բարձրացել է եղեգան փողից,
Տագնապի գոչը Չենով Օհանի,
Որ Սասնա Դավթին դուրս բերեց հորից.
Հեռատես աչքը Մելիք Ավանի,
Որ կամուրջ ձգեց մեր այս լեռներից
Մինչ հողը Ռուսաց,
Հրաշք տաճարը մեր Գանձասարի
Եվ փառավորված
Մեսրոպյան գրով՝ Ամարաս վանքը,
Հարատևելու այն սուրբ տանջանքը,
Որ հավասար է խոլ-խիզախության,
Հպարտ թևելու այն վեհ խոյանքը,
Որ հատուկ է մեր թևերին միայն,
Եվ այն զրկանքը,
Որ մեզ լիաբուռ պարգևեց տերը,
Այն սուրբ կապանքը,
Որ մենք ենք ահա ու մեր լեռները...
Այս հողի վրա դու զգույշ քայլիր,
Մաքրիր ոտքերդ, դիմակդ հանիր,
Եվ հիշիր մեկ-մեկ
Պսակազերծված առաքյալներին.
Լեռները լուռ են,
Բայց ոչ խուլ ու կույր՝
Տեսնում են, զգում.
Քարը խոսում է,
Քարը ասում է.
Հին հրաբխի խառնարանում դեռ
Հուրը չի պաղել...
ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ է:

ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է

ԼԵՌՆԵՐԻ ԼԵԳԵՆԴԸ

Այս լեռները լեգենդներ են պատմում ինձ-
Ղարաբաղցու կամքի մասին աննկուն,
Հին լեգենդներ, որ եկել են դարերից,
Հասել են մեզ ու երգ դառել մեր հոգում:

Այս լեռները եղել են վեմ ու ամրոց,
Ամեն մի ժայռ թշնամու դեմ մի բանակ,
Ծառս են եղել նժույգները սանձակոծ,
Հառաչել է հողը նրանց ոտքի տակ:

Այստեղ ահա՝ Քառասուն կույս սարի մոտ
Հետքն է մնում քաջակորով առյուծի,
Այս լեռներով, կիրճերով այս քարքարոտ,
Արշավել է Դավիթ Բեկի այրուձին:

Ու շաչել են թրերը կեռ, լայնաշեղբ,
Շառաչել են այս լեռները անառիկ,
Ինչպես հողմի բերանն ընկած մի տաշեղ՝
Նենգ Կաջարը գլորվել է այս ժայռից:

Այս լեռները լեգենդներ են պատմում ինձ-
Ղարաբաղցու կամքի մասին աննկուն,
Հին լեգենդներ, որ եկել են դարերից,
Հասել են մեզ ու երգ դառել մեր հոգում:

1962 թ.

* * *

Նկարեցի լեռներ
Ու լեռներին կակաչ,
Եվ գագաթներ ձյունե,
Աղբյուրների կարկաչ.
Հայրս նայեց երկար
Ու գլուխը կախեց.
- Թթի ծառը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:
Նկարեցի արտեր
Ու հնձաններ հուռթի,

Հազարագույն վարդեր,
Հրաշք ծառը թթի.
Մայրս նայեց դժկամ
Ու ժպիտը պաղ էր.
- Մռավ սարը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:
Նկարեցի Մռավ՝
Արևն ուսին թիկնած,
Նկարեցի Քիրսը՝
Այգաբացից շիկնած.
Հորեղբայրս եկավ
Նայեց, աչքում ծաղր էր.
- Մեր Թարթառը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:
Նկարեցի Թարթառ
Ու քարակերտ ձորեր,
Շուրջը զմրուխտ անտառ,
Արտույտներ ու լորեր.
Եվ տատս այս անգամ
Հոնքը դարձրեց աղեղ.
- Գանձասարը չկա,
Սա ի՞նչ Ղարաբաղ է:

Ես հասկացա մի բան,
Ղարաբաղ իմ անգին,
Փոքր ես դու, սակայն
Մե՜ծ է, մեծ քո ոգին.
Որ մաճառդ մնա
Ազնիվ գինու մաճառ,
Արծիվներդ՝ արծիվ,
Տաճարներդ՝ տաճար.
Օ՜, տուր ինձ՝ նվաստիս,
Ռաֆայելի վրձին
Ու Սարյանի հանճար:

1984 թ.

* * *

Նկարիչ, Արցախ նկարիր, Արցախ,
Վանքեր նկարիր ու բերդեր անառ,
Լեռները դարձրու հավերժի արձան,
Գետերը՝ զնգուն տավիղների լար:
Հողմի դեմ կանգնած անտառ նկարիր,
Ձիեր նկարիր անթամբ ու անսանձ,
Արծիվներ՝ թառած լեռան կատարին,
Արտույտներ՝ երկնի լազուրով արբած:
Մաշտոցյան անմահ գիրը նկարիր,
Պատմությունը մեր՝ գրված այդ գրով,
Որ անզոր էին ջնջել սրտերից-
Աշխարհակործան յաթաղաններով:
Եվ ծռությունը նկարիր նաև
Ու մերկությունը ծռված աշխարհի,
Որ ճիշտն ու սխալը իրար է խառնել
Այս պատմությունը երկերեսանի:
Նկարիչ, «ապրեմ-չապրեմ» նկարիր՝

Տրորված օտար կրունկների տակ,
Ոգին նկարիր Մելիք Ավանի
Ու մեր լինելու ձգտումը արդար:
Պատմիր աշխարհին՝ ով ենք մենք, ինչ ենք,
Եվ ովքեր են թույն խառնում մեր հացին,
Բախտի բերումով թեկուզ և քիչ ենք,
Բայց ոչ քոչվոր ենք, ոչ էլ խառնածին:
Որ մենք ենք ահա ու մեր լեռները,
Մեր Գանձասարը, վանքը Ամարաս,
Բաց են միշտ էլ մեր սրտի դռները,
Մաքուր ենք հոգով, շիտակ ենք ու պարզ:
Նկարիչ, Արցախ նկարիր, Արցախ,
Լեռներ նկարիր, հողմաթեք ծառեր,
Մեր կամքը դարձրու հավերժի արձան,
Ոգին՝ անխորտակ, երազը՝ անմեռ:

1983 թ.

* * *

Քանի՞ հազար տարի,
Քանի՞ ցեղեր վայրի
Քեզ նեղել են,
Քանի՞ հազար տարի,
Հազար ու մի դավով
Քեզ շեղել են:

Քանի՞ հազար տարի
Եկել ու պղծել են,
Վառել տունդ,
Քանի՞ հազար տարի
Ցռել ու կեղծել են
Պատմությունդ:

Քանի՞ նենգ Փանահ խան
Եկել հացդ կտրել,
Քծնել են քեզ, ջանը՞ս...
Հետո գողի նման
Սուրը բկիդ դրել,
Տիրացել են տանը:

Քանի՞ հազար տարի,
Քանի՞ սուլթան ու բեկ
Եկել դուռդ թակել,
Քանի՞ հազար տարի
Քեզ խաբել են այդպես
Եվ թիկունքից զարկել:

Քանի՞ հազար անգամ
Քանի՞ ելուզակ քեզ
Իր հավատով երդվել,
Հետո ջրաղացիդ
Ջուրն են կտրել թաքուն
Ու լծկանդ մորթել:

Քանի՞ հազար անգամ
Կառուցել ես, կերտել
Ամրոցներ ու բերդեր,
Քանի՞ հազար անգամ
Արշավել են քո դեմ,
Կառուցածդ քանդել:

Քանի՞ հազար անգամ
Ամուր ձգել գոտիդ-
Դու քո հերկն ես հերկել,
Ագահ ու չարակամ
Գող ու ելուզակից
Դու քո երգն ես փրկել...

Հողը քո այս մի բուռ
Դու դարձրել ես եդեմ,
Լույսով ճամփադ հարթել,
Ի ցավ քո թշնամու
Կառուցելով ապրել,
Ապրելով ես հաղթել:

1984 թ.

* * *

Հազար տարվա անտառ,
Հազար տարվա ծառեր,
Դեմը բարձրակատար
Հազար տարվա սարեր:

Հազար շանթով վառված
Լեռների մութ կոպեր,
Դաշտեր հազար տարվա,
Ջարդած հազար խոփեր:

Հազար տարվա մի վանք
Ժայռի ծերպին թառել,
Ժայռի ոտքերի տակ
Հազար տարվա քարեր:

Հազար տարվա բերդեր,
Քարանձավներ խավար,
Հազար տարվա երգեր
Ու հաստատուն հավատ:

Հազար տարվա բարբառ՝
Հազար հրով անցած,
Եվ ո՞վ գիտե՝ քանի՞
Հազար տարվա Արցախ:

1984 թ.

ՂԱՐԱԲԱՂ

Ես քո կամը ու կալը քո,
Ես հոտաղն ու մաճկալը քո,
Ես մամռապատ խաչքարը քո,
Զորությունս դու ես:

Ես քո կաղնու լույս սաղարթը,
Ես ստուգված քո հավատը,
Ես կենացի քո գավաթը-
Խորությունս դու ես:

Ես հողի համն ու հոտը,
Ես սարերիդ ցուրտն ու տոթը,
Ես ամպերիդ խոլ որոտը-
Դարպաս-դուռս դու ես:

Ես քո շաղն ու ծիածանը,
Ես մրգաշատ քո հնձանը,
Ոլոր-մոլոր քո կածանը-
Օդս-ջուրս դու ես:

Ես արտույտդ լուսաբացի,
Ես աղբյուրդ՝ ծարավածին,
Ես բույրը քո անուշ հացի-
Թոնրատունս դու ես:

Ես քո տվածն ու թողածը,
Կռվում անհայտ քո կորածը,
Ես քո ծիծաղն ու քո լացը-
Թիկունք-կուռս դու ես:

Ես քո զանգի զիլ ղողանջը,
Աղբյուրներիդ ջինջ կարկաչը,
Ես քո երգը ու քո կանչը-
Մաքրությունս դու ես:

Ես քո տառը ու գիրը քո,
Ես հավատի ջրկիրը քո,
Ես շաղախը ու կիրը քո-
Ամրությունս դու ես:

Ես բեկորը քո մի ժայռի,
Ես տատրակը քո անտառի,
Ես վտակը քո Թարթառի-
Ջուլալ հունս դու ես:

Արդ, ես գոհ եմ ինձ տրվածով,
Քո զրնգուն լուսաբացով,
Լեռնաստանում այս աստղացոլ՝
Տոհմատունս դու ես:

1984 թ.

* * *

Դու անուն չես սոսկ երգելու համար,
Դու հող ես, լեռ ես, երկինք ես, օդ ես,
Անտառ ես կանգուն ու այգի դալար,
Դու սրտերի մեջ սեր ու կարոտ ես:

Դու ձորերի մեջ շաչող Թարթառ ես
Եվ սրնգաձայն զեփյուռ ես սարի,
Դու Ամարաս ես ու Գանձասար ես,
Դու Մռավ սար ես ու մայր ես բարի:

Քո ժայռերի պես դու քարակերտ ես
Եվ քարերիդ պես ամուր ես ու կուռ,
Դարերում կանգնած անխորտակ բերդ ես,
Դու քաջի ձեռք ես, ոգի աննկուն:

Դու բույր ես ծաղկի ու թթի ծառ ես,
Խաղողի վազ ես բերքով ծանրացած,
Երկնքից կախված արտույտի ձայն ես
Ու արտերի մեջ խճճված կածան:

Աղբյուրներիդ պես զուլալ, արդար ես,
Կամք ու սատար ես հպարտ ոգուն մեր,
Դու ճարտարաձեռ մի նոր Ճարտար ես,
Նոր ճանապարհ ես, դու երգ ես անմեռ:

Աղջիկներիդ պես սիրող ու ջերմ ես,
Ջահելներիդ պես խիզախ ու արի,
Դու մեր լեռներից հոսող Խաչենն ես,
Ըմբոստ կաղնին ես Սինգարա սարի:

Ո՛չ, անուն չես սոսկ երգելու համար,
Դու վարդի թաղ ես, աղբյուր ես, բաղ ես,
Դու մեր սրտերի կարոտն ես անմար,
Հավիտյան կանաչ իմ Ղարաբաղն ես:

1962 թ.

* * *

Այստեղ ձորեր կան, լեռներ կապուտակ,
Ծաղիկներ պես-պես ու հովեր մաքուր,
Մի լույս աղբյուր կա ամեն ժայռի տակ,
Ամեն ձորի մեջ ջրերն են երգում:

Այստեղ կիրճեր կան, ուռիներ լացող,
Անդունդներ մթին, շառաչող գետեր,
Վարդեր կան վառված արևի բոցով
Եվ հնամենի քարակոփ բերդեր:

Այստեղ այգիներ, արտեր կան ծփուն,
Գյուղեր կան թառած լեռների լանջին,
Այգաբացներ կան երկնի պես կապույտ
Եվ մայրամուտներ՝ այգի նման ջինջ:

Այստեղ սրտահույզ երգեր կան այնքա՜ն.
Երգում է գետը, երգում է առուն...
Ասում են, իբրև, առաջին անգամ
Երգը ծնվել է իմ լեռնաշխարհում:

1962 թ.

* * *

Քեզ որոնեցի մեր հազարաբույր
Եվ հազարագույն ծաղիկների մեջ.
Դու հեզ մանուշակ ու նարոտ էիր:

Քեզ որոնեցի մեր հայրենախոս
Մագաղաթների տաղիկների մեջ.
Հրեշտակի պես ու խորոտ էիր:

Քեզ որոնեցի լեռներում մեր լուրթ,
Ձոր ու կիրճերում քեզ որոնեցի.
Դու գարնան հեղեղ ու որոտ էիր:

Քեզ որոնեցի դաշտերում կապույտ,
Խաս այգիներում քեզ որոնեցի.
Դու ցողաշաղախ առավոտ էիր:

Լեռներից հոսող խենթ գետակների
Զուլալության մեջ քեզ որոնեցի.
Այգաբացի պես դու շողոտ էիր:

Ես իմ մանկության ծանոթ վայրերում
Գիշեր ու ցերեկ քեզ որոնեցի.
Դու ոսկե երազ ու կարոտ էիր:

1981 թ.

* * *

Ղարաբաղ եմ ասում՝
Հոգիս բաց է լինում,
Ղարաբաղ եմ տեսնում՝
Սիրտս լաց է լինում:

Ղարաբաղ եմ ասում՝
Երգս թև է առնում,
Ղարաբաղ եմ տեսնում՝
Սիրտս սև է դառնում:

Ղարաբաղ եմ ասում՝
Երազներ եմ հինում,
Ղարաբաղ եմ տեսնում՝
Թևաթափ եմ լինում:

Ղարաբաղ եմ ասում՝
Հավքս ձագ է տալիս,
Ղարաբաղ եմ տեսնում՝
Պատս ճաք է տալիս:

Ղարաբաղ եմ ասում՝
Սիրտս պար է ընկնում,
Ղարաբաղ եմ տեսնում՝
Գլխիս քար է ընկնում:

Ղարաբաղ եմ ասում՝
Դրախտին եմ հասել,
Ղարաբաղ եմ տեսնում...
Ա՜խ, ես ձեր ինչն ասեմ:

1981 թ.

* * *

Ինձ ստիպեցին ուղտի պես չոքել,
Բայց ես ուղտ չէի, այլ՝ արշավածի,
Հետո փորձեցին ինձ քեզնից պոկել,
Դարձնել թևատված, անարգված արծիվ:

Ես ամուր էի լեռներդ գրկել,
Քո հողի մեջ էր ուժն իմ առնացի...
Չկարողացան ինձ քեզնից պոկել,
Բայց քեզ ինձանից ինչպե՜ս պոկեցին:

Այդպես պոկում են սիրտը մարմնից,
Այդպես հոգին են հավատից վանում,
Այդպես խլում են լույսը աչքերից,
Այդպես հավատն են միայն սպանում:

Եվ կա՞ ավելի պատիժ մի դաժան,
Քան այս զրկանքը բիրտ ու ահավոր,
Երբ հողիդ վրա տերդ չես քո տան,
Քո տնկած ծառը ու՞մ է հարկավոր:

* * *

Թե իմ Մռավ սարից զատվեմ
Եվ ծուռ նայեմ Շաղասարիս-
Առվի նման պիտի հալվեմ,
Մնամ իմ կես ճանապարհին:

Թե որ լքեմ Գանձասարս,
Ջրաբերդս՝ լեռան արծիվ-
Կչորանա թթի ծառս,
Գտիչ վանքը ինձ կանիծի:

Թե իմ Կիշկում ծաղկաժպիտ
Բուն չունենա հավքը գարնան-
Սևաձորիս ժայռերը բիրտ՝
Սրտիս ծանր սար կդառնան:

Թե որ թողնեմ ճաք տա պատս,
Ցամաքի մեր դռան առուն-
Հարյուր պատան մաշած պապս
Շուռ կգա իր գերեզմանում:

Թե հանդերն այս չնաշխարհիկ
Ու լեռները թողնեմ անտեր-
Ամպրոպագոռ մեր Քիրս սարի
Կայծակները ինձ կշանթեն:

Թե որ դառնամ ես տարագիր
Ու ոտքիս տակ հող չունենամ-
Ղարաբաղս կաղաղակի.
- Քեզ պես որդին թող չունենամ:

1984 թ.

* * *

Բարձր սարերդ
Որոտ ու շանթ են
Խլում ամպերից,
Անուշ հովերդ
Մեղեդիներ են
Շրշում շամբերից.
Ակնաղբյուրներդ
Զուլալ ու զնգուն
Երգ ու ծիծաղ են
Բերում ձորերից,
Այգեստաններիդ
Բիլ անհուններում
Կանաչ ժպիտ է
Կաթում ծառերից.
Վանք ու մատուռիդ
Խորաններում սուրբ-
Դեռ խնկահոտ է
Գալիս քարերից.
Բերդերդ գողթան
Գուսանների պես
Ասք ու լեգենդ են
Պատմում դարերից:

1984 թ.

ՇԱՂԱՍԱՐ

Շաղասարս շաղոտ՝
Ձնգուն-զուլալ առու,
Ցող ու շողի գերի
Թիթեռների պարս-բույլք,
Ձորում խաս հավքերի
Հարսանիք ու կնունք:
Ժայռի ուսին՝ ծառեր
Ու խճճված մոշոտ,
Ոտքերի տակ քարեր
Ու սայլուղի փոշոտ:
Լորն է կանչում ձագին
Կապի կապույտ կիրճում,
Մոշահավը ծեգին
Այդ ու՞մ հետ է վիճում:
. . . . . .

Շաղասարիս հավքե՜ր,
Շաղասարիս ծաղկունք,
Շաղասարիս ասքե՜ր,
Խնջու՜յք, ծնու՜նդ, երկու՜նք...
Շաղասարս երգ է,
Երգի հավերժ գարուն.
Շաղասարից եկել,
Շաղասար եմ գնում:

1982 թ.

* * *

Իմ Շաղասարի
Մի հոնքին ամպ է,
Մի հոնքին՝ ծիծաղ:
Մի հոնք նժարին
Տեղատարափ է,
Մեկին՝ ծիածան:
Մի փեշին անտառ
Ու վայրի վարդեր,
Մի փեշին՝ հերանց
Գնացող արտեր:

Իմ Շաղասարի
Մի կոպի տակից
Աղբյուր է հոսում,
Մի կոպի տակին
Ձմրուխտ հավքերն են
Իրար հետ խոսում:
Մի կոպից հանկարծ
Կայծակն է ճայթում,
Մի կոպից ծաղկանց
Ժպիտ է կաթում:

Իմ Շաղասարի
Մի թևին մատուռ
Եվ աղոթարան,
Մի թևին բերդ է
Անդարպաս, անդուռ՝
Եղինջի դարան.
Մի ունկին ձորեր,
Ծերպ ու քարանձավ,
Մի ունկին լորեր-
Շաղասարաձայն:

Իմ Շաղասարի
Այգը դեղձան է,
Մայրամուտը՝ լուրթ,
Պռունկին ժայռի՝
Առուն ծնծղա է,
Ձեփյուռը՝ շափյուղ...
Հանդե՜ս է գարնան,
Տո՜ն ու բերկրա՜նք է,
Սարյակը՝ սրինգ,
Արտույտը զանգ է:

Իմ Շաղասարի
Շող երկնքի տակ
Մի օր էլ մնամ,
Ձմրուխտ հավքերի
Երգի ու տաղի
Գաղտնիքն իմանամ...
Մի օր էլ քնեմ
Գլուխս քարին,
Ձգամ ինձ նորից
Տերը աշխարհի:

1984 թ.

* * *

Արտ է, արոտ է,
Ամպի որոտ է,
Ջինջ առավոտ է
Այս Ղարաբաղը:

Հինավուրց վանք է,
Գանձերի հանք է,
Ճաքած մի զանգ է
Այս Ղարաբաղը:

Կաքավ է, լոր է,
Սար է ու ձոր է,
Կռվախնձոր է
Այս Ղարաբաղը:

Խոսում եմ՝ վայ է,
Լռում եմ՝ ցավ է,
Ո՞նց չասեմ հա՛յ է
Այս Ղարաբաղը:

* * *

Ոչ մի բան չի փոխվել,
Նույն ձորերն են էլի,
Նույն հանդերում երգող
Նույն լորերն են էլի:
Նույն առուն է զնգում՝
Նույն Մաննուտի կիրճում,
Նույն Կաղնուտի խորքում
Նույն հավքերն են վիճում:
Նույն ամպերն են նորից
Դաշտի անձրև մաղում,
Նույն կայծակն է նորից
Ժայռի կուրծքը դաղում:
Էլի նույն կածանն է
Ձորը ձորին կապում,
Եվ նույն ծիածանն է
Իր գույներով խաբում:

Մանուշակի թերթին
Նույն կապույտն է էլի,
Եվ երկնքի շուրթին
Նույն արտույտն է էլի:
Նույն հովերն են նորից
Քնար ու վին լարել,
Նույն արծիվն է նորից
Բարձր ժայռին թառել:
Նույն մոշահավն է
Ճարճատում մոշուտում,
Նույն ծաղկից նույն մեղուն
Ոտքերն է փոշոտում:
Ոչ մի բան չի փոխվել,
Մռավ սարս նույնն է,
Փեշերը միշտ կանաչ
Ու կատարին ձյուն է:

ՍԱՐԵՐ

Սարեր, ձեզ ի՞նչ ասեմ...
Հ. ՍԱՀՅԱՆ

Բարի լույս ասեմ
Իմ Մռավ սարին,
Բարի լույս ասեմ
Իմ Շաղասարին:

Քառսուն կույս ասեմ,
Ասեմ Կիշկա սար,
Սեգ խնուս ասեմ,
Ասեմ Գանձասար:

Ասեմ Դալի-դաղ՝
Ամպի որոտով,
Իր կայծակներով
Իսկ դուք սարե՞ր եք,

Ասեմ Քիրսա սար՝
Ձյունը միշտ հոնքին,
Ասեմ Ծաղկասար՝
Անտառը կոնքին:

Ասեմ՝ իմ սարե՞ր,
Սարերով մնաք,
Մեկ-մեկու թիկունք՝
Դարերով մնաք,

Մի օր եկել ենք,
Մի օր կգնանք,
Երկինք թրատող:
Սարեր կմնաք:

ՔԱՐԱՇԵՆ

Քարաշենը տունս,
Քարաշենը սերս,
Տոհմածառիս բունը
Ու Շաղասար լեռս:
Մաննուտն ի վեր ձգված
Ոլոր-մոլոր կածան,
Ժայռի հոնքին ծաղկած
Հոնին՝ ոսկե դեղձան:
Արտեր դեղի՜ն-կանա՜չ
Ու երկինքը կապույտ,
Արտերի մեջ կակաչ
Ու երկնքում արտույտ,
Հազարագույն պարտեզ,
Բոստանների ծփանք,
Նախշանկար քարտեզ՝
Լեռան դոշին կպած,
Ածուներում գինձի
Շաղը ուլու՜նք-ուլու՜նք,
Անանուխի, սինձի
Ու ռեհանի բուրմունք:
Քարաշենում տունս,
Սերս, մանկությունս,
Քարաշենս՝ պաշտվա՜ծ,
Քարաշենս՝ աստված:

1982 թ.

ՁՈՆ

Գետակներն են կարկաչում խենթ,
Շուրջը մարմանդ փոշի մաղում,
Ցովացել է գետերի հետ
Գարունը իմ Ղարաբաղում:

Օրորվում են արտերը մեր՝
Կորած գարնան զմրուխտ շաղում,
Գեղեցկություն չես տեսել դեռ,
Թե չես եղել Ղարաբաղում:

Բռնիր ճամփան Շաղասարի,
Ոտքդ թրջիր գարնան շաղում,
Չես ծերանա հարյուր տարի,
Թե որ ապրես Ղարաբաղում:

Հազար երազ, կյանք կա ու տենչ
Պահված մեր ջերմ երգ ու տաղում.
Կուզեմ կյանքում երգել անվերջ,
Երգով մեռնել Ղարաբաղում:

1960 թ.

* * *

Գնամ խառնվեմ մեր գետերին
Ու գետերի հետ հորդանամ,
Ու գետերի հետ խենթանամ,
Ու գետերի հետ ընթանամ:

Գնամ խառնվեմ լուրթ ծովերին
Ու ծովերի մեջ զորանամ,
Ու ծովերի մեջ խորանամ,
Ու ծովերի մեջ ծովանամ:

Անտառները գնամ մտնեմ,
Կաղնիներից ուժ ստանամ,
Ծփանքներով հարստանամ,
Կաղնու նման ըմբոստանամ:

Գնամ ելնեմ լեռները մեր
Ու լեռների հետ ծառանամ,
Ու լեռների պես բարձրանամ,
Ու լեռների հետ կարծրանամ:

Գնամ, գնամ, վառվեմ, հալվեմ,
Լուրթ երկնքում ծիածանվեմ,
Արտերի հետ ծփամ նորեն,
Այգիներում պտղավորվեմ...
Այսքան սերը, կարոտն այսքան
Կրծքիս տակ ո՞նց տեղավորեմ:

1962 թ.

ԽՈԹԱՎԱՆՔՈՒՄ

Կիսավեր վանքի կիսավեր պատին
Մի կիսատ մոմ է թրթռում ծույլ-ծույլ,
Կիսավեր վանքում մի բարի տատիկ
Կիսատ աղոթք է շշնջում աստծուն:

Կիսավեր վանքի կիսավեր բակում
Ծուփ ծաղիկները ծիծաղում են ջինջ,
Կիսավեր վանքի կիսավեր բակում
Լուռ երազում է մի քնքուշ աղջիկ:

Կիսավեր վանքի կիսավեր ճեղքից
Մի դեղին մողես գլուխն է հանել,
Կիսավեր վանքի կիսավեր փեղկից
Մոշին իր կանաչ փեշն է ծածանել:

Կիսավեր վանքի կիսավեր բակում
Մի թխաչ մանուկ խաչքարին նստած-
Օդանավեր է փնտրում երկնքում՝
«Նելսոն Ստեփանյան»՝ թևերին գրած:

ՀՈՒԴԱՅԻՆ

Դու ատում ես այն, ինչ հայկական է,
Մեսրոպագիր է ու մեսրոպատառ,
Քո դեմ մեր հայոց երգը ական է
Եվ ռումբ է հայոց երգը քեզ համար:

Մեր կոթողները քեզ դուր չեն գալիս,
Քեզ դուր չի գալիս Գանձասարը պերճ,
Ահով ես նայում դու մեր խաչքարին,
Տգեղը տեսնում գեղեցիկի մեջ:

Մեր հին ոսոխին անվանում քեռի,
Բամբասում ես մեզ, լկտի ծանակում,
Ճամփա ես տալիս շողոքորթներին,
Ճշմարտախոսի բերանը փակում:

Եղբայրություն ես ամբիոնից գոռում,
Երդվում դրոշով բարեկամության,
Բայց մեր հին վերքն ես նորից փորփրում,
Խարխլում ես դու սյուները մեր տան:

Եվ դու նենգում ես պատմությունը մեր,
Հատել ես ուզում մեր արդար լեզուն,
Մեզ անպատվում ես բիրտ ու լրբորեն,
Անամոթաբար մեզ չարախոսում:

Դու մտագարի ահեղ մոլուցքով
Ոտնահարում ես իրավունքը մեր,
Եվ Ներոնի պես խենթ ու կամակոր-
Մեզ ստիպում ես քեզ ծափահարել:

Այնքան լկտի ես՝ քո թթված թանը
Արդար յուղի տեղ շուկա ես հանել,
Եվ մեզ խաբել ես ուզում մեր տանը,
Դու ցանկանում ես մեզնից մեզ վանել:

Նյութում ես մեր դեմ դավեր նորանոր,
Բարուն դարձնում չար, չարին՝ բարի,
Եվ ընտրելով քեզ արդար դատավոր,
Մեր բախտի հացն ես դնում նժարին:

Դու դատում ես մեզ, բայց ու՞մ անունից
Եվ ովքեր են քո դատը պաշտպանում,
Այդ ու՞մ վրա ես գոռում ամբիոնից,
Ումնի՞ց ես այդպես դու վրեժ առնում:

Դու եղբայրության սուրբ դրոշի տակ,
Ազգի տարազով ծպտված մանեկեն,
Կեղծ նեյնիմների ուշացած թութակ,
Մեր դեմ ամբարված հին լուտանք ու քեն...

Եվ դու էլ կանցնես, ինչպես որ անցան
Քո նախորդները անբարիշտ ու չար,
Ով դու հին ու նոր կրկնվող հանցանք,
Դու հայրենադավ փառամոլ լաչառ[1]:

1975 թ.

Բ. Կ.-ին

Դու ծախու հոգի, քծնության մերան,
Գոռոզ անհարկի ու մեծաբերան:
Դու բութ ու տգետ, խորամանկ սակայն,
Դու կործանիչ ձեռք ու լեզվի կապանք:
Դու դավով հզոր, դու նենգ քամելեոն,
Դու, ծափեր կորզող փառատենչ Ներոն:
Դու, մեր ոսոխի պնչից թռած բիծ,
Դու Ղարաբաղը կործանող դահիճ[2]:

ԲԱՍԱՐԱԿԱՆ

Բասարը քոչի մի փռչոտ շուն էր,
Հաչելուց բացի բան ու գործ չուներ:
Քոչի շների ավագը ինքն էր,
Առաջին լարի նվագը ինքն էր:

Սուր ժանիքներ ու ականջներ ուներ,
Գիշեր ու ցերեկ անվերջ ոռնում էր:
Բայց այնպես եղավ, որ այս Բասարը
Իր քոչը թողեց, թողեց իր սարը,

Սիրված շների ցուցակը մտավ,
Գնաց կրկեսում իր տեղը գտավ:
Հատակն էր ավլում պոչով իր փռչոտ,
Ցատկում շիկացած օղակի միջով:

Զույգ թաթի վրա տոտիկ էր անում,
Ցցում էր դունչը, արձան էր դառնում:
Դեռ պարում էլ էր «Մազուրկա», «Տանգո»,
Լեզու ցույց տալիս կոմիկի հանգով:

Չէ, ուրիշ շուն էր մեր այս Բասարը,
Կրկեսում չուներ իր հավասարը:
Բայց եկեք գործին մոտենանք հանգին՝
Ո՞վ է կրկեսում դեմք դարձել կարգին:

Կրկեսն արվեստ է, ոչ մեծ ասպարեզ,
Արենայից դուրս ո՞վ է հարգում քեզ:
Եվ չանցած տարի՝ հավուր պատշաճին
Մեր այս Բասարին առաջ քաշեցին:

Բասարը դարձավ Բաս Սարկիսովիչ,
Պաշտոն ստացավ, տիտղոսներ թովիչ...
Շեֆի ոտքերը անվերջ լիզում էր,
Ուրիշ շուն տեսնում՝ բռնում գզզում էր:

Փքված կանգնում էր հանդես շքերթում,
Ճառեր էր ասում ու տպում թերթում:
Ասում էր՝ ես եմ շեֆի մահակը,
Այդ ես եմ նրա արթուն պահակը:

Եվ ուներ նաև լեզու մեղրածոր-
Ինչպես աշխարհում ամեն դրածո:
Դե, շեֆն էլ, գիտեք, մեծ դիրքի մարդ էր,
Շուն ճանաչելու գործում մի հատ էր:

Հավատում էր նա խելոք Բասարին,
Ոնց հավասարը իր հավասարին:
Ախր, Բասարն էլ շուն չէր հասարակ,
Զնգուն հաչ ուներ, հաչելու ծարավ:

Սիրում էր կծել տեղի-անտեղի,
Պատիվն էր պահում շնային ցեղի:
Իր շեֆի միտքը կռահում արագ,
Քաշում տանում էր միս, բուրդ ու կարագ:

Ստից թվեր էր թղթերին շարում,
Թե պլաններ եմ գերակատարում:
Խոտը պակաս է, գոմը ճեղք ունի,
Հոտը նվազ է՝ ինքն ի՞նչ մեղք ունի:

Իր ինչ գործն է, թե ով է թալանում,
Ով է կաթին ջուր, յուղին թան խառնում:

Միսն ով է ուտում, ոսկորն ում տալիս,
Ով է ծիծաղում և ով է լալիս:

Գործը՝ իր շեֆի ոտը պաչելն էր,
Միշտ անմեղ մարդկանց վրա հաչելն էր:
Գործը ամենքին խոսքով խաբելն էր,
Բերան փակելն ու կաշառք լափելն էր:

Գործն աշխատողի հոգին մաշելն էր,
Շողոքորթներին առաջ քաշելն էր:
Բանկետ-խնջույքը գործի ոգին էր,
Որտեղ դուրսպրծուկ՝ նրա կողքին էր:

Է՜հ, ինչ անենք, թե մեկ-մեկ էլ լակում,
Գնում անպատեհ դռներ էր թակում:
Իր խաղն էր անում կրքերին գերի,
Կամ թե ձեռ առնում ենթականերին:

Կարգ ու կանոնը նա սիրում է խիստ,
Ճիշտ խոսք ասացիր՝ կդառնաս նացիստ:
Թե շեֆը կանչեց՝ հե՜յ, հասի՛ր, Բասա՛ր,
Պատրաստ էր Բասարն ինչպես մի վասալ:

Ում վրա ասես կարող էր հաչել,
Միայն վերևում իրեն ճանաչեն:
Ասեն Բասարը հոյակապ շուն է,
Իր հավասարը Արցախում չունի:

Բասարը՝ Բասար, գլուխը քարը,
Բայց ի՞նչ կլինի Արցախի ճարը,
Երբ բասարները իրենց ետևից
Նոր բասարներ են բերում նենգ ու պիղծ:

Երես են տալիս ու բնավորում,
Աղմկում անվերջ ճառերով ճոռոմ,
Եվ ապացուցել փորձում հականե,
Թե սուրբ հողը մեր Բասարական է[3]:

ՊԱՐՈԴԻԱՆԵՐ

Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա...
Հովհ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Իմ Ղարաբաղը տեսե՞լ ես, ասա...

Տեսե՞լ ես, արդյոք, այն հովիտները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Որտեղ Լաչինից փախած քրդերը
Իրենց սեփական հոտերն են պահում:

Տեսե՞լ ես, արդյոք, այն այգիները,
Ուր թթենիներն արդեն չորացել,
Նրանց խնամող այգեպան-տերը
Ինչպես է ծանր վշտից կորացել:

Տեսե՞լ ես ինչպես Թարթառի ափին
Ղաչաղ Նաջաֆի թոռները վազում,
Խանանդա Ալիև ականջը դափին-
Արցախի մասին շիքաստ է ասում:

Եվ դու տեսե՞լ ես ինստիտուտը մեր,
Դասախոսներին նրա հաստաբեստ,
Օ՜, դու կարող ես այնտեղ ընդունվել-
Կաշառքի համար եթե փող ունես:

Տեսե՞լ ես, արդյոք, մեր տղերքը քաջ՝
Ոնց են աթոռից իրար գլորում,
Եվ եղբայրության դրոշով ծպտված-
Ազգամոլներ են անվերջ որոնում:

Դու տեսե՞լ ես այն ծախու գրչակին,
Որ քարշ է գալիս շեֆի ետևից,
Եվ շողոքորթի ժպիտը շուրթին-
Երգեր է ծոնում կեղծավոր ու պիղծ:

Տեսե՞լ ես, արդյոք, դու մեր խմբագրին՝
Կիսագրագետ ու կիսատգետ,
Որ թերթում տպում հոդվածներ ջրիկ,
Սեղան է նստում ծախու մարդկանց հետ:

Ասա, տեսե՞լ ես հայ մարդը ինչպես
Վերանում է մեր հայ Ղարաբաղից,
Թե հայերեն խոսք ամբիոնից ասես,
Իսկույն կանվանեն քեզ նացիոնալիստ:

Եվ դու տեսե՞լ ես դրածո շեֆին,
Այդ ակնոցավոր օձին սրբապիղծ,
Զգույշ, բարեկամ, չդիպչես քեֆին,
Թե չէ՝ կքշի նա քեզ քո տնից:

Իմ Ղարաբաղը տեսե՞լ ես, ասա...

* * *

Հիմի է՞լ լռենք...
Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

Հիմա է՞լ լռենք, եղբայրք, հիմա է՞լ,
Երբ թուրքը եկել, մտել տունը մեր,
Ոտնատակ տվել այգի ու պարտեզ,
Օրը ցերեկով անպատվում է մեզ,
Ասում է՝ այստեղ այգի, բաղ չունեք,
Դուք այս աշխարհում Ղարաբաղ չունեք:

Հիմա է՞լ լռենք, երբ մեր քաղաքում
Շեյխի թոռները շիքաստ են երգում,
Իրենց համարում տիրակալ ու տեր,
Առևանգում են աղջիկներին մեր,
Կաշառքի ուժով պաշտոն են ճանկում,
Մեր սրբությունը ծաղրում, ծանակում:

Հիմա է՞լ լռենք, երբ դաչաղ Նաբին,
Այդ մարդասպանը, ավազակը բիրտ-
Մաքուր ազգային հերոս է դարձել,
Մեր հայ թատրոնի բեմը բարձրացել,
Երբ Ռասուլ Ռզան ոռնում է ահա.
«Այս հողում ոչ մի Սմբատ չմնա»:

Հիմա է՞լ լռենք, ասեք, հիմա է՞լ,
Երբ մեր վանքերը փարախ են դառել,
Մեսրոպյան գիրը ջնջում քարերից,
Գրում են իրենց անունները պիղծ,
Թե՝ ձայն չհանեք, չխոսեք, տղերք,
Ձեր Ղարաբաղը միշտ մերն է եղել:

Հիմա է՞լ լռենք, երբ Ալի բաբան
Կեղծավոր լեզվով փակել մեր ճամփան,
Մեր ով լինելը, մեր պատիվը թանկ՝
Դրել է ահա հարցականի տակ,
Եվ ցանկանում է մեզնից մեզ վանել,
Իր ճախարակով մեր թելը մանել:

Հիմա է՞լ լռենք, երբ շողոքորթը
Համբուրում է մեզ խեղդողի ոտը,
Մեր տան դռները բացում է խնդուն
Եվ նրան «բարի գալուստ» է մաղթում,
Ոտի տակ ոչխար ու գառ է մորթում,
Թողած մեր աստծոն՝ նրան աղոթում:

Հիմա է՞լ լռենք, երբ գող Բասարը
Թողել իր օբան, թողել իր սարը,
Եկել մեր գլխին դառել տիրակալ,
Եկել մեր գլխին դառել բռնակալ,
Կոկորդ է պատռում. «Ալլահը վկա,
Ալլահից բացի այլ ալլահ չկա»:

Հիմա է՞լ լռենք՝ լռենք, չխոսենք,
Թող մեր փոխարեն քարերը խոսեն,
Մեր քաջ նախնիքը հարություն առնեն,
Թուք-նախատինքով մեզ խեղդեն, վառեն,
Ասեն՝ դուք պատիվ ու նամուս չունեք,
Մինչև ե՞րբ պիտի լռեք ու ներեք:

Մենք, որ ոչ մունջ ենք, ոչ անդամալույծ,
Չենք սարսել կյանքում ոչ մի թշնամուց,
Նույն ուժգնությամբ մեր երակներում
Թե մեր պապերի արյունն է եռում,
Ինչու՞ որբի պես մեր վիզը ծռենք
    Եվ ինչու՞ լռենք:

* * *

Դու հպարտ չես, իմ հայրենիք...
Վ. ՏԵՐՅԱՆ

Դու հպարտ չես, իմ Ղարաբաղ,
Ինչո՞վ պիտի հպարտանաս-
Զավակներո՞վ քո տարաբախտ,
Թե ծխանիդ ծխով նվազ:
Այդ ե՞րբ այդքան դու հեզացար
Սանձին գերի նժույգի պես,
Քեզանից դու ո՞նց հեռացար,
Որ փնտրում ու չես գտնում քեզ:
Չար կատա՞կ չէր և խաղ մի խենթ,
Բարբարոսի հեգնանք անծիր-
Նշանեցին քեզ հայի հետ,
Բայց թուրքի հետ պսակեցին:
Անուն չունես, սակայն, ավաղ,
Չունես հիմա դու ազգանուն,
Եվ երբ ասում են Ղարաբաղ-
Ծռություն եմ ես հասկանում:

* * *

Մի՞թե վերջին պոետն եմ ես...
Վ. ՏԵՐՅԱՆ

Կկորչեն հավետ և փառք, և անուն,
Ինչպես հողմի դեմ ծաղկունքը անզոր,
Եվ կգա մի օր, որ Ղարաբաղում
Մի հայ չես գտնի հայերեն խոսող:

Ես կլինեմ քո պոետը վերջին,
Քո վերջին բողոքն ու նամականին:
Ձեռքս կդնեմ իմ անմեղ խղճին,
Ողբամ՝ օ՜, տուր ինձ ծուխն իմ ծխանի:

Քո ողբասացը կլինեմ վերջին,
Օտար ոտքի տակ տրորված ածուդ,
Կլինեմ վերջին հառաչանքը քո,
Վերջին հանդուգն ու վերջին ծաղրածուն:

Եվ ինձ կանվանեն ցնորված ու խենթ
Թոռն ու ծոռները նենգ Փեղամբարի,
Ինձ կքարկոծի ամբոխը անգետ-
Դասական ոճով քսաներորդ դարի:

Եվ ես կլինեմ մոռացված հավետ՝
Վերջին պոետը իմ լեռնաշխարհի:

* * *

Հոտը գալիս է,
Քոչը՝ ետևից...
Հ. ՍԱՀՅԱՆ

Հոտը գալիս է,
Քոչը ետևից,
Քոչը գալիս է,
Պոչը՝ ետևից:
Գալիս են, գալիս
Ձորերով, հովտով,
Իրենց շարիաթով
Եվ մուղամաթով,
Ցորուն նամազով,
Օբա-վրանով
Եվ ամենազոր
Իրենց Ղուրանով:
Գալիս են հոտին
Հատուկ ծուլությամբ,

Բայց հաստատակամ
Իրենց հին դավով.
Գալիս են, ինչպես
Մորեխի սև ամպ,
Մորեխից անգամ
Բիրտ ու ահավոր:
Գալիս-ասում են՝
Սա մեր երկիրն է,
Սա մեր սուրբ հողն է
Ու մեր տաճարը,
Սա մեր տան սյունն է,
Ալլահի գիրն է,
Սա մեր խաղողն է
Ու մեր մաճառը...
Եվ դուրս է գալիս,
Որ Փեղամբարը
Այստեղ է ծնվել
Իր ապուպապով,
Եվ դուրս է գալիս-
Դաչաղ Դամբարը
Այստեղ է կռվել
Իր մեծ բանակով,
Եվ դուրս է գալիս,
Որ Ղուրանն անգամ
Այստեղ է գրվել
Ալլահի կամքով...
Սուտ են Գանձասարն
Ու Ամարասը,
Ճիշտը Ղուրանն է,
Մեկ էլ՝ նամազը...
. . . . . .
Իրենց հեռավոր
Ապաստաններից,
Ավազոտ ու չոր
Տափաստաններից
Հոտը գալիս է,
Քոչը՝ ետևից...

* * *

Դլե յաման,
Քոչը եկավ սելավ ինչպես,
Վայ, դլե յաման,
Եկավ քշեց մեր հողից մեզ,
Յաման, յաման:

Դլե յաման,
Ավեր դարձան մեր տուն, ձեր տուն,
Վայ, դլե յաման,
Մեր Թարթառը տնքաց տրտում,
Յաման, յաման:

Դլե յաման,
Կայծակ խփեց Մռավ սարին,
Վայ, դլե յաման,
Թուրքը տիրեց մեր աշխարհին,
Յաման, յաման:

Դլե յաման,
Քուրդը եկավ նման մրրկի,
Վայ, դլե յաման,
Գանձասարը շինեց մզկիթ,
Յաման, յաման:

Դլե յաման,
Ղարաբաղում հայ չմնաց,
Վայ, դլե յաման,
Մեր հայրենին անտեր մնաց,
Յաման, յաման:

Դլե յաման,
Հողմը կենաց-ծառս պոկեց,
Վայ, դլե յաման,
Սև ուղտը մեր դռան չոքեց,
Յաման, յաման:

ՄԵՆՔ

Մենք այնքան խեղճ ենք ու այնքան անճար,
Վախկոտ ենք այնքան ու այնքան ենք թույլ,
Ամեն դուրսպրծուկ կարող է դառնալ
Մեր գլխին՝ նորին գերազանցություն:

Մենք այնքան տհաս ու այնքան մեղք ենք,
Այնքան միամիտ, անզոր ու անխելք,
Ամեն տգետ մեզ կարող է հերքել,
Ժխտել հիմնովին, որ մենք՝ այդ մենք չենք:

Մենք այնքան քնքույշ ու նուրբ ենք այնքան,
Այնքան բարակ են նյարդերը մեր,
Որ կարող են մեզ քառասուն անգամ,
Քառասուն ձևի գզգել ու մանել:

Մենք այնքան պարզ ենք ու անմտածված,
Մեր դուռն այնքան մեր սրտի պես բաց է,
Որ մենք կարող ենք մեր տունը մտած
Ամեն Հուդայի աստվածացնել:

Մենք այնքան փխրուն, այնքան ենք անձև
Եվ կավի նման ամորֆ ենք այնքան,
Որ ամեն ոք մեզ կարող է հունցել
Ու իր ցանկությամբ՝ ուզած տեսքը տալ:

Եվ մենք այնքան ենք մեր այս բախտից գոհ,
Որ թվում է, թե աշխարհը մերն է,
Թե սա կոչվում է ապրել մեծ կյանքով,
Հապա ասացեք՝ խեղդվելը ո՞րն է:

ՀԱՅՐԵՆԱԴԱՎԸ

Նա ամբիոններից այնպե՜ս է գոչում,
Ինչքա՜ն գեղեցիկ խոսքեր է ասում,
Հայրենասեր է իրեն հորջորջում,
Բայց չգիտե իր մայրենի լեզուն:

Գլուխը քարը, թող որ չիմանա,
Ապրի իր փքուն ճառերի վարձով,
Բայց տեսեք ահա՝ ցավն այն է, որ նա
Հպարտանում է իր չիմացածով:

Հպարտանում է, պարծենում անգամ,
Թե ինչպես է իր մայր լեզվից խորշում,
Չի եղել գյուղում իր հայրենական,
Հոր գերեզմանի տեղը չի հիշում:

...Հայրենադավը նրանք չեն միայն,
Ովքեր թշնամու բանակն են անցնում,
Լքում են տունն ու հողը հայրենի,
Օտար ափերում գտնում գրանցում:

Հայրենադավը նրանք են նաև,
Որ երկնքի տակ մեր ջինջ ու լազուր-
Իրենց հորջորջում հայրենասերներ,
Բայց մոռանում են իրենց մայր լեզուն:

ՀԱՅՐԵՆԻՔ

1.

Ես անբաժան եմ հավետ քեզանից,
Ինչպես արևի շողը՝ արևից:

Սնունդ եմ առել քո հողից, ջրից,
Ինչպես արևի շողը՝ արևից:

Ոչ ոք չի կարող քեզնից պոկել ինձ,
Ինչպես արևի շողը՝ արևից:

2.

Լույսդ տուր ինձ՝ չխարխափեմ,
Տու՛ր սերդ ինձ՝ սիրով արբեմ,
Տու՛ր հույզդ ծով՝ աներգ չմնամ,
Արևդ տու՛ր՝ անբերք չմնամ:
Տու՛ր ամպերը քո լեռների՝
Անձրև դառնամ,
Ցիածանի կամար կապեմ,
Տու՛ր զեփյուռդ՝
Բարդիների հետ սոսափեմ,
Տու՛ր ուժդ ինձ՝
Դառնամ ջրվեժ ու շառաչեմ,
Տու՛ր կրակդ,
Որ բքերի մեջ չսառչեմ,
Կարծրությունդ տուր պողպատե՝
Քո դեմ ճայթող շանթերի դեմ
Դառնամ վահան ու շանթարգել:
Երկի՛ր, տուր ինձ
Քո մայրական օրհնանքը ջերմ,
Որ քեզանով մնամ քո մեջ,
Դու ինձնով՝ քեզ
Եվ քեզանով՝ ինձ ճանաչես:

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ
(շիրազյան մոտիվներով)

Հին գայլ է եղել այս նենգ աղվեսը-
Ուշ ենք հասկացել,
Շլյապայով է փոխել իր ֆեսը-
Ուշ ենք հասկացել,
Եղբայրության դրոշով ծպտված
Մտել մեր տունը,
Թուրքացրել է Արցախի կեսը-
Ուշ ենք հասկացել[4]:

* * *

Մուհամեդի թոռները
Այծ ու գառ են գողացել,
Տաճարներից՝ սրբացած
Հուշաքար են գողացել,
Սակայն ինչո՞ւ զարմանալ,
Երբ նրանց գող պապերը
Մեր Հայաստան աշխարհից
Մասիս սար են գողացել:

* * *

Տուն-տեղս ինձնից խլել
Ու ասում ես՝ վայ չանես,
Ավեր Վանում, գերված Ղարսում
Քրիստոնյա հայ չունես,
Բայց ես ինչպե՞ս չըմբոստանամ,
Ասա՛, ինչպե՞ս ես լռեմ,-
Սիրտս կիսել երկու մասի
Ու ասում ես՝ վայ չանես:

* * *

Հին վերքերս, ա՜խ, այդ ինչպե՞ս նորացան,
Վշտի բեռից սեգ թևերս կորացան,
Այնքա՜ն արցունք խլեց Վանը իմ աչքից,
Որ չիմացա՝ Արցախս ո՞նց գողացան:

* * *

Նամազի պես ձեր շիքաստը
Սրտակեղեք ծոր եք տալիս,
Հառաչում եք ու հեկեկում,
Հազար ու մի ցավի գալիս,
Ավերելն ու թալանելը
Ձեր արհեստն է թեկուզ եղել,
Բայց աշխարհում ձեր երգերով
Ամենից շատ դուք եք լալիս:

* * *

Ծոռն Հուդայի տունս մտավ
Ու սկսեց վայրահաչել
Եվ մեր խաչված նախորդներին
Մի անգամ էլ նորից խաչել,-
Փեղամբարի թոռն է նրան
Կաշառել դիրք ու պաշտոնով,
Բայց ի՞նչ կարող էի անել,
Ախր տարին խիստ նահանջ էր[5]:

* * *

Երկու ժպիտ, երկու հավատ
Ու երկու դեմք ունի նա,
Ճամփան բաց է՝ որտեղ լինի
Եվ ում դուռն էլ նա բանա.
Մի թևի տակ Աստվածաշունչ,
Մի թևի տակ Ղուրանը,-
Մզկիթներում շեյխ է շունը,
Եկեղեցում՝ քահանա:

* * *

Բաքվում «Ղաչաղ Նաբի» երգում,
Երևանում՝ «Սիփան սար»,
Քելբաջարում խանանդա է,
Աբովյանում՝ մեծ գուսան.
Այս անաստված խեղկատակը
Երկու աստծո ծառայում,
Երկուսին էլ շողոքորթում
Ու խաբում է հավասար:

* * *

Ասում են, թե իրարից
հավատով ենք օտարանում,
Հոգով, լեզվով ու արյունով
մենք տարբեր ենք ու տարանուն,-
Հապա նայիր, տես ինչպես են
Քրիստոսն ու Փեղամբարը
Գինու թասը իրար զարկում
ու համբուրվում ռեստորանում:

* * *

Ուրիշներից թռցրած երգը
Չայխանայի տաղ է դարձել,
Պատմությունը կեղծելն անգամ
Տգետների խաղ է դարձել:
Ախր ինչպե՞ս մենք հավատանք
Երդումներին ձեր կեղծավոր,
Երբ մեր գերված Արարատը
Աթաթուրքի դաղ է դարձել:

* * *

Դուք փորձեցիք մեր վեհ ոգին
ձեր Ղուրանով «խրատել»,
Ողջ աշխարհում մի հայ թողնել,
մնացածին թրատել,
Բայց իմացեք, թե ալլահն էլ
իջնի անգամ վերևից-
Մեր այս գերված Արարատին
դուք չեք կարող թլպատել:

* * *

Արարատի սեգ կատարին
Ամպը նստել՝ ձյուն է դրել,
Ծիծեռնակը նորից եկել,
Տանիքիս տակ բույն է դրել.
Երազ տեսա, հրա՜շք երազ,
Իմ Տավրոսը ինձ էր կանչում.
- Հե՜յ, որտե՞ղ ես, խելառ տղա,
Պապդ Վանում տուն է դրել:

* * *

Մարդը մարդու դեմ լարողը
Ապականված դարն է եղել,
Ռումբ-ականի նախահայրը
Պարսատիկի քարն է եղել.
Չեմ հասկանում՝ Կայենն ինչպե՞ս
Սպանեց իր եղբորն անմեղ-
Կա թե չկա, Մուհամեդի
Մատն այստեղ խառն է եղել:

* * *

Ցոր է տալիս իր բայաթին
Կարա-Շաբան Ղարաբաղում.
«Դադե՜յ, ամա՜ն, կորցրել եմ
Ես իմ ճամփան Ղարաբաղում»:
Մեկը լինի ու հարցնի՝
Ի՞նչ ես սուգ ու շիվան անում,
Երբ փարոս է ճանապարհիդ
Ալի Բաբան Ղարաբաղում[6]:

* * *

Այս կեղծավոր պատմությունը
Կրկնում է սխալն իր հին,
Սուտ սրբերը աստվածացել,
Ցառայում են իրենց շահին:
Ի՜նչ ցնծություն, փառք ու պատիվ
Եվ ինչպիսի՜ դիֆիրամբներ-
Մարդի՛կ, մարդի՛կ, զգուշացեք,
Քաջ Նազարն է նստած գահին[7]:

* * *

Ցովից ինչպե՞ս անապատին գետ բերել,
Անսեր սիրտը անուշ սիրով գեթ գերել.
Վա՜յ, խեղճ Շիրազ, մանուկներին հավաքել,
Ցանկանում է Մասիս սարը ետ բերել:

ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է

Այս Ղարաբաղն է.
Հեթանոս ու հին:
Նոյի տապանից թռած աղավնին
Տեղ էր որոնում իջնելու համար
Եվ տեղն այդ եղավ կատարն այն լեռան,
Ուր Գտիչ վանքը պիտի բարձրանար:

Այս Ղարաբաղն է:
Եվ զգույշ մի քիչ, հրաբուխն հանգած
Կարող է հանկարծ
Քո ոտքերի տակ բորբոքվել նորից,
Դարերով լռած իր խառնարանից
Նետել հուր ու բոց,
Հողմահար անել և՛ բերդ, և՛ ամրոց:
Եվ մի քիչ կամաց. հողն ականջ ունի,
Ձայներ է բերում,
Ձայներ է տանում,
Մեր պապերն իրենց գերեզմաններից
Կարող են գոռալ.
- Այդ ի՞նչ ես անում:

Այս Ղարաբաղն է:
Մեր պատմիչներից մենք արդեն գիտենք,
Որ այր մի Մաշտոց՝ վանքում Ամարաս,
Դպրոց է բացել, հայ մանկանց կրթել
Լինելիության գրերով անմահ...
Սակայն որտեղի՞ց Մաշտոցն իմանար,
Որ այդ գրերով՝ մի հուդայածին
Պիտի զրպարտեր... Մեսրոպ Մաշտոցին[8].
Ո՞վ է Մաշտոցը՝ ոչ կոմունիստ է,
Ոչ քաղաքական գործիչ մեծանուն,
Նրա նկարը ո՞նց է տեղ գտել
Սոցիալիստական մեր թանգարանում:

Այս Ղարաբաղն է:
Անտառն ի՞նչ անի, երբ իր խորքերում
Հավքերի կողքին կռնչում է բուն,
Որ ծառերից են ծնվում որդերը,
Ծառերին ուտում:
Ախր դու ծովին ո՞նց մեղադրես,
Երբ շնաձուկը անկուշտ է ու նենգ,
Ասա, այս ժայռը ի՞նչ մեղավոր է,
Երբ իր ճեղքի մեջ օձն է բուն դրել...

Այս Ղարաբաղն է՝
Հողը խաղողի ու կենաց հացի:
Եվ զգույշ նայիր քլունգիդ ծայրին-
Մեկ էլ տեսար հայտնաբերեցիր
Գինու կարասը հեթանոս հայի:
Ո՞ւմ է հարկավոր, որ ապացուցես
Ապացուցածը քո նախորդների,
Երբ պատմությունը խուլ է ինչ-որ տեղ,
Ինչ-որ տեղ կույր ու երկերեսանի:

Այս Ղարաբաղն է:
Հանկարծ պատմության
Քառուղիներում դու չխորանաս.
Շիրմաքարերը թող հանգիստ մնան,
Գանձասար չկա,
Չկա Ամարաս,
Մռավ սար չկա
Ու գինու կարաս,
Չի եղել պատմիչ Կաղանկատվացի,
Սուտ են գրերը, վանքերը սուտ են,
Ուրեմն խելոք մոտեցիր հարցին,
Եվ խոստովանիր՝ ոչինչ չգիտեմ.
Ոչինչ չգիտեմ, համր եմ, խուլ եմ,
Ի՞նչ Մեսրոպ Մաշտոց, ի՞նչ Խորենացի,
Մեր պատմիչները սխալ են, ծուռ են...
Այլ ալլահ չկա՝ ալլահից բացի:

Այս Ղարաբաղն է:
Եվ ու՞մ ես ուզում դու ապացուցել,
Որ նախ և առաջ հողն այս Արցախ էր.
Ինչ-որ պատմագետ արխիվներ պեղել
Եվ գիտե՞ք ինչ է նա հայտնաբերել.
Որ Ղարաբաղում հայեր չեն եղել,
Նրանք օտար են այստեղ ու տնկեց,
Սուրբ Մուհամեդը այս թշվառներին
Կորստից փրկեց
Իր սուրբ Ղուրանով...
Եվ պատմագետն այդ՝
Թուրք պատմիչների կեղտոտ մերանով
Լուտանքներ մերեց կճուճում իր գոս,
Հռչակվեց դոկտոր-ակադեմիկոս[9]...

Այս Ղարաբաղն է:
Թեկուզ ժայռերը ի ծնե հավկուր,
Բայց իրենց գործը նրանք լավ գիտեն,
Թե որ փռշտաս դու Խոթավանքում,
Ձայնը կհասնի ո՞վ գիտե՝ որտե՞ղ...
Գերզգոններ կան անբան ու անքուն,
Որ «ազգամոլներ» հայտնաբերելով
Փափուկ պաշտոն ու աթոռ են ճանկում...
Եվ ի՞նչ տղերք են, ինչպե՞ս են պաշտում,
Ինչպե՞ս են շեֆի պատիվը պահում,
Շեֆը ամբիոնից թե որ փռշտում՝
Առաջինն իրենք են ծափահարում,
Թե շեֆն այդ ընկավ (աշխարհի գործն է),
Առաջինն իրենք պիտի քարկոծեն:

Այս Ղարաբաղն է,
Որ փոթորկվել է վտանգի պահին,
Ծառս եղել խրոխտ իր լեռների հետ,
Զորավարներ է տվել աշխարհին,
Ինքը մնացել առանց զորապետ...
Որ իր ոգին միշտ պահել է անբիծ

Ու խավարի դեմ լույսի դուռ բացել,
Սակայն չար բախտի բերումով նորից-
Զրկվել է հսկա իր կաղնիներից,
Գաճաճ թփերի հույսին մնացել:

Այս Ղարաբաղն է,
Ուր քաղցրությունը հակինթ խաղողի-
Գինու ոգին է, կարասի շունչը,
Կարծրությունը ապառաժ քարի-
Քարտաշն է զգում և նրա մուրճը:
Լեռը չափվում է ձորի խորությամբ,
Իսկ խորությունն այդ՝
Գետի զորությամբ:
Բայց երբ ճահիճն է հաճախ հանդգնում
Չափվել ծովի հետ՝ իր նեխած խորքով,
Եվ ինչպե՞ս լռես, երբ պղտոր առուն
Գետ է պղտորում՝ կեղտոտ լուտանքով:
Եվ ինչպե՞ս չասես ջորուն այս ամուլ,
Թե ձի ես իրավ, ու՞ր է թափը քո...
Ցռություններ կան այս մեծ աշխարհում,
Որ չես ուղղի ոչ մի օրենքով:

Այս Ղարաբաղն է:
Եվ ծնել է նա շեփորահարներ,
Թմբուկ-պոետներ՝ հանգավոր ճառի,
Որ ներբողներ են անվերջ հորինել
Վասն քծնանքի ու... հոնորարի,
Եվ առանց խղճի, առանց ամոթի
Շողոքորթել այն ավանտյուրիստին,
Որ կոխկրտելով ամեն սրբություն-
Ազգայինի մեջ տեսել է միայն
Ազգամոլություն...
Այն մոլագարին, որ ամբիոնից
Վիրավորել է մեր հայ լինելը,
Եվ չգիտես ինչ ճանապարհով պիղծ՝
Հռչակել իրեն մեր բախտի տերը[10]...

Այս Ղարաբաղն է-
Իր փափուկ հոգով ու կոշտ բարբառով,
Մի թևին Քիրս է, մի թևին՝ Մռավ,
Լեռը մի լեռան թիկունք ու սատար,
Բայց ձորը ձորից՝ դժգոհ ու խռով,
Ժայռին ցցված մի հին վանքի կատար՝
Ճակատը նախշած մեսրոպյան գրով,
Ցածում բերդի մի քրքրված պատառ,
Կողքին խաչքարը՝ պատած մամուռով,
Կանաչ հովտի մեջ մի չքնաղ ճարտար,
Դեմը խաղողի այգեստանը ծով...
Առուն կարող է ժայռի պռունկին
Ջրվեժի ուժով ահեղ շառաչել,
Աշնան գույները չվող կռունկին՝
Գարնան գույներով գերել, ետ կանչել...
Բայց զգույշ եղիր,
Եվ մի քիչ կամաց,
Ճամփադ մի շեղիր...
Մութ անդունդներ ու վիհեր կան քո դեմ.
Լեռների մարդիկ որքան սրտաբաց,
Որքան հոգով մեծ,
Նույնքան էլ բարդ են:

Այս Ղարաբաղն է:
Խելո՛ք մնա, Ձևս,
Քե՛զ պահիր քո այդ շանթերը ամբուռք,
Բախտի բերումով այսօր հզոր ես,
Աստված գերագույն,
Եվ կուռքերի կուռք,
Վաղն երեսովդ կտանք հանապազ
Բռնած գործերդ անմաքուր ու ծուռ,
Եվ կդարձնենք քեզ քավության նոխազ,
Քո նախորդի սուրբ զոհասեղանին՝
Նոր մատաղացու:

Այս Ղարաբաղն է:
Որքան կռունկներ չվեցին անդարձ
Ու որքան բներ թափուր են մնում,

Եվ ո՞վ է, արդյոք, ստուգել նրանց
Չվացուցակը, թե ուր են գնում,
Ի՞նչ են կորցրել, ու՞մ են որոնում.
Իր պաշտոնական աթոռը գրկած
Բյուրոկրա՞տը պիտի հարցներ,
Երբ նա գտել էր, ոչ թե կորցրել...
Եվ եղան նաև խիզախ ասպետներ,
Քաջ նետաձիգներ՝ ատոմի դարում,
Որ սուր ծոծելով հողմաղացի դեմ,
Հռչակվում էին նոր դոնկիխոտներ...

Այս Ղարաբաղն է:
Բլրի կատարին մի հրաշք արձան՝
Իմ պապն ու տատը,
Քո պապն ու տատը...
Եվ մի մոլագար, ստահակ մի նենգ՝
Ատրճանակի սև փողի նման
Ցցեց իր մատը
Մեր հրաշքի դեմ[11],
Ոռնաց կատաղի. «Իսկ ի՞նչ եք գտել
Դուք այս քարակերտ քարակույտի մեջ»:
Եվ նա հասկացա՞վ, որ մենք անմահ ենք՝
Իմ պապ ու տատով,
Քո պապ ու տատով,
Մեր պապ ու տատով,
Մեր նախնիների պայծառ հավատով...
Գոյատևելը թե որ արատ է,
Փույթ չէ, թող տանջվենք մենք այդ արատով:

Այս Ղարաբաղն է:
Ծառը հզոր է, երբ արմատները
Խորն են մխրճված մայր հողի գրկում,
Գետի թիկունքում կանգնած է լեռը,
Եվ դրա համար նա չի ցամաքում.
Արմատներով են կաղնիները վեհ,
Լեռների մեջ է ուժը գետերի...
Երբ նախորդներդ չեն խանգարում քեզ,
Մի վիրավորիր քո հետնորդներին:

Այս Ղարաբաղն է-
Մեր սուրբ օջախը, ծուխը ծխանի,
Որ բարձրացել է եղեգան փողից,
Տագնապի գոչը Ձենով Օհանի,
Որ Սասնա Դավթին դուրս բերեց հորից.
Հեռատես աչքը Մելիք Ավանի,
Որ կամուրջ ձգեց մեր այս լեռներից
Մինչ հողը Ռուսաց,
Հրաշք տաճարը մեր Գանձասարի
Եվ փառավորված
Մեսրոպյան գրով՝ Ամարաս վանքը,
Հարատևելու այն սուրբ տանջանքը,
Որ հավասար է խոլ-խիզախության,
Հպարտ թևելու այն վեհ խոյանքը,
Որ հատուկ է մեր թևերին միայն,
Եվ այն զրկանքը,
Որ մեզ լիաբուռ պարգևեց տերը,
Այն սուրբ կապանքը,
Որ մենք ենք ահա ու մեր լեռները...
Այս հողի վրա դու զգույշ քայլիր,
Մաքրիր ոտքերդ, դիմակդ հանիր,
Եվ հիշիր մեկ-մեկ
Պսակազերծված առաքյալներին.
Լեռները լուռ են,
Բայց ոչ խուլ ու կույր՝
Տեսնում են, զգում.
Քարը խոսում է,
Քարը ասում է.
Հին հրաբխի խառնարանում դեռ
Հուրը չի պաղել...
ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է:

Դեկտեմբեր 1979 թ.

ԿԱՊՈՒՅՏ ՀՈՒՇԵՐ

ԱՌԱՋԻՆ ԵՐԳԸ

Խոտը մայիսյան ցողով էր թացվել,
Ճերմակ ծաղկունքով զուգվել ակացին,
Տասներկու տարիս նոր էր լրացել,
Երբ իմ առաջին երգը գրեցի:

Հագինս չթե մի հին բլուզ էր
Եվ կարճ փողքերով գունաթափ տաբատ...
Ա՛խ, պատերազմի դաժան տարիներ
Եվ աշխարհ՝ մահ ու արյունով արբած:

Պայուսակիս մեջ, գրքերիս կողքին
Մի կտոր սմքած հաճարի հաց էր,
Հանդ էի քշել նախիրը ծեգին
Եվ ահա նորից դասից ուշացել:

Առաջին երգս հացին էր ձոնված,
Հացին, որ թանկ էր անգամ և կյանքից,
Մահը այնտեղ էր, որտեղ չկար հաց,
Որտեղ չկար հաց՝ այնտեղ լաց, կսկիծ:

Եվ այդ օրն էր, որ ես պատմությունից
«Հինգ» վաստակեցի, իսկ վարքից՝ «երկու».
Ուսուցչանոց կանչեց դիրեկտորը ինձ,
Նայեց տաբատիս, բլուզիս անգույն,

Նայեց վեհերոտ ու կշտամբալից,
Դեմքը դաժան էր, աչքը չէր թարթում,
Եվ այնպես նայեց, մի պահ թվաց ինձ
Հայացքից թույն ու լեղի է կաթում:

- Դե, հապա, - գոռաց,- տեսե՞ք մի սրան,
Միշտ ուշացած է դասերի գալիս,
Բանաստեղծում է, պոե՞տ է տղան
Եվ ինչե՞ր ասեք, որ դուրս չի տալիս:

Ու դեմքիս իջավ ապտակը ծանր,
Ապտակ՝ իմ արդար ու անմեղ խղճին,
Երգիս առաջին գնահատականը
Եվ հոնորարն էր դա իմ առաջին:

Զանգը ծլնգաց ու հառաչեց խեղճ,
Նահանջ էր տարին, արցունք ու լաց էր,
Գիրք-տետրակիս հետ, պայուսակիս մեջ
Մի կտոր սմքած հաճարի հաց էր...

Տասներկու տարիս նոր էր լրացել:

1981 թ.

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մանկություն իմ դեղնածամ,
Մանկություն իմ, որ անցար
Նորացան արտից:

Գ. ՄԱՀԱՐԻ

Մանկությունս անբուն հավք էր
Մեր կիրճերում խորունկ,
Անբուն հավքի նախշուն ձագ էր
Շաղասարի ձորում:
Միջօրեին թոնրից ելնող
Պալան-պալան ծուխ էր,
Մի աղջիկ էր հոգի գերող,
Այտի խալը թուխ էր:

Մանկությունս կամ ու կալ էր,
Հաշան՝ փռած կալում,
Լծից փախած խև լծկան էր
Սուսամբարի սարում:
Իմ եռափեշ Մանուշ տատի
Հեքիաթի ալ ձին էր,
Երգ-լեգենդն էր զմրուխտ հավքի
Ու լեգենդը հին էր:

Մանկությունս թթի ծառ էր,
Երկնասլաց բարդի,
Կարմիր-կանաչ ծիածան էր,
Արտույտ՝ թռած արտից.
Մեր դպրոցի ճաքած զանգի
Ցրտից սառած ձայնն էր,
Երկար ու սև չուխան հագին՝
Կուքան պապիս «վա՜յ»-ն էր:

Մանկությունս հորովել էր՝
Անձրևի տակ թրջվել,
Կամի վրա օրորվել էր,
Դեզի կողքին ննջել:
Մանկությունս քարափների
Ու լեռների ուխտ էր,
Կռվի ահեղ տարիներին
Սևով գրված թուղթ էր:

Մանկությանս ուսին բահ էր
Ու ճակատին քրտինք,
Ոլոր-մոլոր ճանապարհ էր
Եվ կածաններ անթիվ:
Մեր Հոնուտից կաթուկ բերող
Գլոր-գլոր արխ էր,
Ջրաղացի քարին պարող
Խելառ չախչախ էր:

Մանկությունս իմ Քարաշեն
Ու քարաշատ գյուղն էր,
Տոթից շիկնած ժայռերը շեկ,
Ապուպապիս հյուղն էր:
Իմ առաջին հանգն ու վանկն էր,
Պատանության շեմին,
Իմ առաջին թոթովանքն էր
Ուղղված այս աշխարհին:

1981 թ.

ԿԱԼՈՒՄ

Որդուս՝ ՎԱՐԴԳԵՍԻՆ

Պտտվում է կամը կալին
Այնպես դանդա՜ղ, ծուլորե՜ն,
Թխլիկ Սոնան քթի տակին
Ինչ-որ երգ էր ոլորել:

Երգը հին էր, մի քիչ տխուր,
Ոչ տաղ էր, ոչ հորովել,
Մարյան նանը նստել՝ լուռ,
Մտքերի մեջ մոլորվել:

Կծոտում էր արևն ամռան,
Վա՜յ թե հանկարծ անձրև գա,
Ախր ես եմ կալի տղան,
Իմ հույսին են լուծ-լծկան:

Կալի բանը ո՞վ չգիտե,
Խուրձը սայլից թափել կա,
Կալը ջրել, կեմը քանդել,
Կամը լծից կապել կա:

Ցանր հակը շալակն առնել,
Ուժ ու մկան լարել կա,
Ցեգը-ծեգին նոր դեզ դնել
Ու կամերը քարել կա:

Որ եզները տանեմ ջրի,
Օրը պիտի կես դառնա,
Իսկ Խումարը խամ աջառ է,
Դեռ նոր պիտի եզ դառնա:

Մինչ եզ դառնա ու լուծ քաշի,
Ինչե՜ր ասես չի անում,
Մերթ նստում էր հաշանի մեջ,
Կամը կալից մերթ հանում:

Քրքջում էր թխլիկ Սոնան,
Ցիծաղն անմիտ ու գիժ է,
Սիրտը վայ թե սեր է մտել,
էս ի՞նչ ցավ ու պատիժ է:

Մարյան նանը ծուլ է լինում,
Թափահարում ճիպոտը.
- Այ գլխամեռ, մեր էս կալում
էլ չտեսնեմ քո ոտը:

Սոնան տոթին զուլալ ջուր է,
Նրանից ո՞նց նեղանամ,
Թևս բռնում, շշնջում է.
- Ո՞նց ես, որ քեզ գողանամ...

Սիրուն Սոնա, խելառ Սոնա,
Ես ի՞նչ ասեմ հիմա քեզ,
Ախր դու ինձ ո՞նց գողանաս,
Ինձ գողանաս՝ ու՞ր տանես:

Եվ իջնում է զով երեկոն,
Օրը մթնում է կամաց,
Փնթփնթում է նանը դժգոհ.
- էս աղջիկը ու՞ր գնաց:

Քամին կալում պար է բռնել,
էս ցորենը էրնել կա,
Կամը քարել, կալը ավլել,
Բերքը սայլին բեռնել կա:-

Եվ ականջիս ձայն է հասնում
Ու նայում եմ ես թաքուն,
Թխլիկ Սոնան, կրակ Սոնան
Լաց է լինում մարագում:

Մոտենում եմ, բայց ի՞նչ ասեմ,
Հարմար բառեր չեմ գտնում,
Մարյան նանն էլ՝ Ա՛յ սրտասև
Ի՞նչ ես անում էդ մթնում:

Ու քթի տակ մտմտում է.
- Ի՞նչ զուլում է, փրկիր, տեր,
Էս աղջիկը ինչի՞ տեր է,
Որ սիրտը սեր է մտել:-

Սոնան ծանր հոգոց հանում,
Հառաչում է սրտաբեկ,
Ես՝ խելառս, չեմ դիմանում,
Լաց եմ լինում նրա հետ:

Հառաչում է Մարյան նանը,
Ծնկին խփում զարմացած.
- Ի՞նչ կլինի սրանց բանը,
Մի խելք ցույց տուր, տե՜ր աստված:
. . . . . .
Պտտվում է կամը նորեն...
Այս ի՞նչ հրաշք երազ է.
Երազումս ես կալվոր եմ,
Կալը սեր է, մուրազ է:

1981 թ.

ՕՐԸ

Օրը բացվեց, ծփաց բոսոր,
Օրը լցվեց օրվա հոգսով:
Ծառի ստվերն հողում ծծվեց,
Գետն իր ձայնը փորը գցեց:
Օրը քրտնեց, ընկավ հալից,
Եզը խրտնեց, փախավ կալից:
Մի շատախոս հիմար ճիճի
Հավքերի հետ մտավ վեճի:
Խոտին թիկնեց թիթեռն անճար,
Ջորում ճչաց չարդը լաչառ:
Առուն բկում խեղդեց ճիչը,
Շոգից՝ իրեն նետեց կիրճը:
Գետափով մի աղջիկ անցավ,
Հրա՜շք աղջիկ մի ոսկեծամ,
Ու կարկաչեց օրը արծաթ,
Օրը անուշ կարոտ դարձավ:

Մի ձայն զնգաց իմ ականջում.
Մայրս էր, ինձ տուն էր կանչում...
. . . . . .
Ես արթնացա, փախավ քունս...
Այդ ե՞րբ անցավ մանկությունս:

1980 թ.

ՀՈՐՈՎԵԼ

Ցողոտ դաշտերում, շողոտ դաշտերում
Հոտաղ էի ես. մաճկալս ծեր էր,
Քայլերը երեր, բայց արի ու տես՝
Անուշ ձայն ուներ, անուշ հորովել:
Երբ ձեռքը մաճին նա ծոր էր տալիս
Սոխակը հեռվից մեր հանդն էր գալիս,
Ու կախարդվում էր եղնիկը սարում,
Ուրիշ ձենով էր գլգլում առուն:
Եվ մի օր ես էլ ձայնս լարեցի,
Իմ երգը նրա երգին խառնեցի:
Մաճկալս լսեց՝ աչքերում զարմանք,
Գլուխն օրորեց, ժպտաց քթի տակ.
- Չէ՛, ես իմ հոգին, արևս վկա՞,
Քեզանից կարգին մաճկալ դուրս կգա:
Երեխայի պես ես երես առա
Ու չէի լսում տաղերը նրա.
Իմ երգերով ինձ հույս էի տալիս,
Ինքս ինձանից դուրս էի գալիս...
Եվ հյուսում էի բեյթեր ու գազել,
Եվ ուզում էի մաճկալիս հասնել:
Բայց դե մաճկալ էր, և չհամբերեց,
Ճիպոտը քաշեց ու մեջքիս բերեց.
- Ա՛յ զուլում,- ասաց,- ի՞նչ ես ճռվռում,
Քո հորովելը իմին չի բռնում:
Էդ ո՞նց կլինի, անխիղճ տնավեր,
Մաճկալ չդառած երես ես առել:

Տարիներն արագ եկան ու անցան,
Այդպես էլ ահա մաճկալ չդարձա:

1982 թ.

1941 ԹԻՎ

Ոչ, չի մոռացվի այդ թիվն ու տարին.
Ջինջ էր երկինքը, վճիտ ու մաքուր,
Հովը սանրում էր վարսերն արտերի,
Գետը ձորի մեջ իր երգն էր երգում:

Եվ լույսը բացվեց... չեղավ լույս բարի,
Հրդեհ բռնկվեց արտերում մեր ծով,
Եվ լույսը բացվեց ինքնաթիռների
Տագնապալից ու խոլ հռնդոցով:

Եվ լույսը բացվեց ռումբի որոտով,
Բացվեց արկերի շառաչով ահեղ,
Մթնեց, փոթորկվեց անտառը անդորր,
Ծառս եղավ ըմբոստ, շաչեց խելահեղ:

Եվ լույսը բացվեց... Օ՜, պատերազմի
Առաջին տարվա արյունոտ ամառ...
Ջինվորը վերջին նռնակը նետեց,
Վերջին փամփուշտը պահեց իր համար...

1981 թ.

ՁԻԵՐԸ

Այդ ի՜նչ ձիեր էին, ա՜խ, ի՜նչ ձիեր՝ թռչկա՜ն,
Այդ ձիերն ու՞ր են, հիմա չկան:
Կրակ ու բոց էին ընչացքներից ժայթում,
Եվ սանձակոծ էին կանաչ դաշտում:

Նրանք ճերմակ էին, թուխ ու նարնջագույն,
Հուր ու կրակ էին երազ կապույտ:
Եվ զամբիկներ կային ջահելությամբ արբած,
Գեղեցիկ ու վայրի, դեռ չթամբած:

Այդ ի՜նչ ձիեր էին, ա՜խ, ի՜նչ ձիեր՝ թռչկա՜ն,
Այդ ձիերն ու՞ր են, հիմա չկան:
Գետինն էին դոփում ու վրնջում ցասկոտ,
Լկամներին փրփուր ու կանաչ խոտ:

Ասես հրդեհ էին հրացոլք բաշերին,
Ձիեր չէ, խև էին մութ գիշերին:
Եվ կռիվ էր՝ տարան- ի՞նչ իմանաս, թե ուր,
Ձիերի ձիգ շարան, օրը՝ տխուր:

Տարան՝ ֆուրգոն քաշեն ու գերաններ խոշոր,
Տարան՝ պայտեր մաշեն ճամփաներին փոշոտ:
Տարան՝ կրեն բեռներ, բեռների տակ տնքան,
Տարան կռվում մեռնեն ու ետ չգան:

Տարան՝ ծովում լողան, ձյունոտ լեռներ ճեղքեն,
Տարան՝ ցրտում դողան,- ձիեր են, չէ՞, մեղք են:
Եվ ի՜նչ ձիեր էին, ա՜խ, ի՜նչ ձիեր՝ թռչկա՜ն,
Այդ ձիերն ու՞ր են, հիմա չկան:

Բայց ձիերն ի՞նչ անեն, շուրջը աղմուկ, ճռինչ,
Ողջ աշխարհն է խառնվել, դարձել կական ու ճիչ:
Լեզու չունեն ասեն՝ դուք մեզ ու՞ր եք տանում,
Լեզու չունեն խոսեն՝ ի՞նչ եք անում:

Լեզու չունեն, սակայն կարծես լաց են լինում
Ու խրխնջում անկար, ծառս են լինում:
Նրանց ղումաշ մեջքին մտրակներն են շաչում,
Պտտվում են տեղում, խուլ հառաչում:

Ձիե՜ր, ճերմակ, կարմիր, նարնջագույն ու սև,
Ձիեր՝ լուրթ դաշտերի, ձեր ի՜նչն ասեմ...
Երկնքում սև ցինն էր, վիշտն ու ցավը անափ,
Քառասունմեկ թիվն էր, աշուն, տերևաթափ:

Ու գնացին նրանք ճամփաներով քարոտ,
Դարձան երազ, պատրանք և հեռավոր կարոտ:
Այդ ի՜նչ ձիեր էին, ա՜խ, ի՜նչ ձիեր՝ թռչկա՜ն,
Այդ ձիերն ու՞ր են, հիմա չկան:

1981 թ.

* * *

Կռիվ էր, գնաց, դուռը մնաց փակ,
Դռան մոտ ընկած սալաքարի տակ
Անտեր բանալին սևացավ ժանգից
Խոտերով ծածկվեց կածանը բակի:
Որբ էր մեծացել,
Նա ոչ մայր ուներ,
Ոչ հայր, ոչ էլ քույր, որ դուռը բացեն,
Օջախը վառեն, մաքրեն բակ ու տուն,
Անշուք խրճիթը չթողնեն մթնում:
Հիշեն տղային թխաչ ու ջահել
Եվ ճամփան պահեն:
Եվ կտուրի տակ թխլիկ սարյակը
Իր բույնը հյուսեց, գեղգեղաց դարձյալ,
Պարտեզում զնգաց նորից առվակը,
Խոտերին նստեց գարնան ցողն արծաթ:
Տարիներ անցան,
Բայց նա չդարձավ,
Եվ կախված մնաց գերանդին սյունից,
Հողե կտուրը ծանրացավ ձյունից
Ու խարխլվեցին գերանները տան:
Փլվեցին հանդարտ,
Եվ այդ հնացած գերանների տակ
Տրորվեց, կորավ կիսատ մի նամակ,
Մի հուր երազանք,
Կարոտ մի անհուն,
Չծնված սիրո մի ողջ պատմություն:

ՆԱՀԱՆՋ ՏԱՐԻ

Այդ ե՞րբ էր, նահանջ էր տարին,
Սև ցավի պահանջ էր տարին.
Կռիվ էր, ապերը գնաց,
Ապոր հետ ախպերը գնաց,
Տանը մի խեղճ նանի մնաց
Եվ փոքրիկ մի Վանի մնաց:
Մորեխը արտեր էր լափում,
Ուրուրը երկինք էր չափում,

Ջաղացը լլկվել ձորում,
Չախչախը գլուխ էր քորում,
Հանդերի քարափ ու քռում
Երաշտը չոր հողն էր քրքրում,
Իսկ նանին սփռոց էր բացել,
Սփռոցին մի կտոր հաց էր,
Կորեկի մի կտոր չոր հաց,
Մի կտոր հացը՝ մի աստվա՜ծ:
Այն ե՞րբ էր, զուլում էր տարին,
Լխկվել էր պտուղը ծառին.
Երկնքում կայծակն էր ճայթում,
Տանիքից անձրև էր կաթում.
Գարունը որոտով եկավ,
Ախպերը «սև թղթով» եկավ:
Տան դուռը քամու դեմ բաց էր
Եվ տանը շիվան ու լաց էր,
Հառաչում, լալիս էր Վանին,
Ի՞նչ անի, էլ չկա նանին...
Ապերը հին թախտին թիկնել
Եվ կուրծքը մեդալով լիքն էր.
Կռիվ ու մահ տեսած մարդ էր,
Հայհոյեց աշխարհին անտեր,
Եվ հետո մնացին մենակ՝
Հայր-որդի ու մի զույգ հենակ:

Այն ե՞րբ էր, զուլում էր տարին,
Եվ ինչպե՞ս մոռանա Վանին,
Ո՞նց չասի՝ դե ախր ես էլ
Աշխարհում կռիվ եմ տեսել,
Եվ ինչպե՞ս կարող եմ լռել,
Պատրաստ եմ կռվի դամ կռվել,
Որ որդին ապերով մնա,
Ախպերը ախպերով մնա
Ու մնա երկիրը հացով,
Էլ մայրեր չլինեն լացող,
Որ վշտից չմեռնի նանին,
Աշխարհում չլինի որբ Վանի:

Այն ե՞րբ էր, զուլում էր տարին:

1981 թ.

ՄԱՅՐԸ ՈՐՈՆՈՒՄ Է

...Եվ որոնում է մայրը իր որդուն,
Որոնում է նա անվերջ, անդադար,
Ճեծում է ծանոթ պատուհան ու դուռ,
Բացում ամենքին իր սիրտը արդար:

Եվ դիմում է նա նախկին զինվորին,
Վերջին նամակը ցույց տալիս որդու,
Որ հոգու ցավը պատմում բոլորին
Ու հառաչում է դեռ հույսը սրտում:

Եվ մայրը որդուն փնտրում է անվերջ
Քաղաքներում մեր մոտիկ ու հեռու,
Հեռվից ուղարկված նամակների մեջ
Ու եղբայրական գերեզմաններում:

Քայլում է մայրը արցունքն աչքերին,
Մտնում ամեն գյուղ, մտնում ամեն տուն,
Նայում բրոնզե հուշարձաններին,
Զինվորների կուռ շարքերը դիտում:

Փնտրում է որդուն խոր հանքերի մեջ,
Լռություններում ծանոթ վայրերի,
Գարնան արտերի ծփանքների մեջ,
Սիրող սրտերում բոլոր մայրերի:

Քայլում է՝ հոգում հավատը անդավ,
Քայլում է՝ հույսն ու կարոտը սրտում,
Եվ որոնում է անվերջ, անդադար,
Եվ որոնում է մայրը իր որդուն:

1965 թ.

* * *

Այդ ի՞նչ կրակ էր, ինչ ցավ ու կսկիծ,
Վեցից ոչ մեկը չդարձավ կռվից:
Մեծ որդին ընկավ Կերչի ճակատում,
Հետախույզ տղան՝ Ստալինգրադում:
Նավաստի որդին ծովին գնաց կուլ,
Չորրորդն օդաչու՝ խոցվեց երկնքում:
Հինգերորդ որդուց ոչ նամակ, ոչ լուր,
Անհայտ կորել էր՝ ո՞վ գիտե, թե ուր:
Իսկ փոքր որդին՝ քսան տարեկան,
Մայիսի յոթին Բեռլինում ընկավ:
Դատարկված տանը մի ծեր մայր մնաց,
Ձեռքը ծոցի մեջ, աչքն արցունքից թաց:
Աստված այդ տարի շատ էր անաստված:

ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾԸ

Ինչ անհայտ կորած, անհայտս ո՞րն է,
Անհայտ կորածի շիրիմը ծովն է՝
Ձուլված անհունին- ծովն անուն ունի:
Անհայտ կորածի շիրիմը լեռն է-
Լեռն անուն ունի, սիրահարվել է
Նա կյանքում մեկին- սերն անուն ունի:
Նա մարդ էր հողի ու հողապաշտ էր,
Անհայտ կորածի շիրիմը դաշտն է,
Հողը հայրենի- հողն ունուն ունի:
Անհայտ կորածը ճամփեք է անցել
Մահ ու արյունի, իր ճամփան պահող
Մայր է ունեցել- մայրն անուն ունի:
Հարազատներին ուղարկել է գիր-
Գիրն անուն ունի, ունեցել է նա
Հավատարիմ կին- կինն անուն ունի:
Շառաչել է նա հորդ գետի նման,
Ելել իր հունից, և մարտի դաշտում
Ընկել է փառքով- փառքն անուն ունի:
Երբ նա ձուլվել է հող ու ջրին մեր,
Ու սրտում պայծառ երազներ ուներ-
Ի՞նչ անհայտ կորած, անհայտս ո՞րն է:

ԱՍՔ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ

Սերմնացանները չվերադարձան...
Գ. ՍԱՐՅԱՆ

Սերմնացանները չվերադարձան.
Կանաչ դաշտերում շող ու շաղ դարձան,
Լեռների կրծքին՝ ծաղիկներ դեղձան,
Դարձան հրթիռներ, երկինք խոյացան,
Երկնի կապույտում ծիածանացան:
Եվ ջահել էին, ջլապինդ ու ձիգ,
Այդպես էլ կյանքում ջահել մնացին...

Դարձան լույս, արև, փառքի սերմնացան,
Կոթող մարմարե, հպարտ հուշարձան
Ու մեր արյան հետ մեր մեջ մարմնացան:
Նրանք ձուլվեցին մեր հող ու քարին,
Մեր ժայռ ու սարին՝ քարափներ դարձան.
Նրանք ձուլվեցին ճերմակ ամպերին,
Գարնան անձրևի տարափներ դարձան,
Նրանք խառնվեցին ծովի ջրերին,
Կապույտ ծովերում կարապներ դարձան:

Սերմնացանները չվերադարձան...
Լուրթ ստեպներում ցողոտ ու շողոտ
Ծաղկանց բույր դարձան, ծփուն արտերում
Հասկերը շոյող մեղմ զեփյուռ դարձան,
Ճամփեքի վրա՝ կյանքի կենաց ծառ,
Հավերժ կարկաչող հուշաղբյուր դարձան,
Սիրող զույգերի պապակ շուրթերին
Ջերմ համբույր դարձան:

Չվերադարձան... Մայրերի աչքում
Հույս ու կարոտի արցունքներ դարձան,
Թանգարաններում սուրբ հիշատակի
Մասունքներ դարձան, մեր այգիներում՝
Ընգացող առու ու տիեզերքում
Ասուպներ դարձան, մեր քաղաքներում
Ու շեն գյուղերում փառք ու սխրանքի
Բարձունքներ դարձան:

Չվերադարձան... Դարձան շանթարգել
Աշխարհակործան մրրիկների դեմ,
Դարձան սուրբ երդում, սրբացած հավատ,
Ծխանների ծուխ, կենացի գավաթ.
Դարձան պալատ, տուն, անմահության երգ,
Իրավունք, պատգամ, որ էլ աշխարհում
Չպայթի երբեք ոչ մի ռումբ, ական.
Սեր ու կարոտի սրտեր տրոփող
Անուրջներ դարձան, գետերի վրա
Ափն ափին կապող կամուրջներ դարձան,
Ջանգի տագնապող ղողանջներ դարձան
Եվ կամք պողպատե, ոգի անսասան...
. . . . . .
Ասացեք, մի՞թե վերադարձ չէ սա:

1984 թ.

ԵՎ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

Մայրը ասում է.
- Գիտեմ իմ որդուն,
Որտեղ էլ լինի
Կհիշի մորն իր,
Մի օր կգա տուն:-
Եվ սպասում է:

Հայրը ասում է.
- Թե որդին իմն է,
Նրան մահ չկա,
Քարի տակից էլ
Կելնի ու կգա:-
Եվ սպասում է:

Կինը ասում է.
- Գիտեմ իմ արծվին,
Հպարտ ու անահ,
Ուր էլ որ լինի,
Կվերադառնա:-
Եվ սպասում է:

Քույրը ասում է.
- Նրան ոչ հուրը
Կարող է բոցել,
Ոչ էլ գնդակը
Կարող է խոցել:-
Եվ սպասում է:

Օ՜, որքան անհետ
Կորածներ ունենք,
Որ դեռ պիտի գան,-
Եվ սպասում ենք:

ԱՆՀԱՅՏ ԶԻՆՎՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Մի ուկրաինուհի
Մարմարե շիրմին
Փունջ դրեց վարդի,
Շշնջաց.
- Որդի՜ս...

Ղազախ մի տարեց
Եկավ խոնարհեց
Գլուխն ալեվարս,
Մրմնջաց.
- Տղաս...

Հայազգի մի մայր
Եկավ կարոտած,
Ծունկ իջավ ծանր,
Հառաչեց.
- Ջանը՜ս...

Մի տաջիկ, մի ռուս,
Մի ավարացի
Ու մի բելոռուս
Ու մի վրացի
Եկան գրկեցին
Սուրբ գերեզմանն այս,
Իրենց մայրենի
Լեզվով խոսեցին.
- Մինուճար տղաս...
- Անգին զավակս...
- Իմ արծիվ բալաս...
- Հույսի ծրագրս...

Եվ կանգնել ահա
Մտորում եմ ես
Գերեզմանի մոտ
Լռությամբ մի խոր՝
Այսքան մայրերի
Զավակը ինչպե՞ս
Կարող է լինել
Անհայտ մի զինվոր:

ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ

Այստեղ՝ փոքրիկ այս բարձունքում
Քաջի մահով ընկավ տղան,
Որ իմ երկրի լույս երկնքում
Ծիածաններ միշտ շողշողան:

Այստեղ՝ այս սուրբ հողի գրկում
Ննջում է իմ ընկերն արի,
Նա, որ ընկավ այս բարձունքում՝
Հանուն բոլոր բարձունքների:

ՀԻՐՈՍԻՄԱ

Դու շրթունքներով դժբախտ մայրերի,-
Որ տեսան այդքան
Արցունք ու կական,-
Շարունակում ես նրանց նզովել,
Ովքեր աշխարհում առաջին անգամ
Ճեղքեցին մահվան միջուկը ահեղ:

Դու խարխափում ես
Այն զինվորի պես,
Որի դատարկված ականախոռոչում
Խավար է տիրում սև ու դժնդակ,
Եվ երակներում լալիս է, ճչում
Արյունը ճերմակ:

Դու տառապում ես
Այն բորոտի պես,
Որ ամեն դեղ ու միջոցից զրկվել,
Ուզում է գոնե ինչ-որ հնարքով
Իր հետնորդներին
Ատոմայինի ճարակից փրկել:

Դու չորանում ես
Այն բալենու պես,
Որ արմատները փտել են հողում,
Եվ կեղևի տակ որդերն են սողում:

Օ՜, Հիրոսիմա,
20-րդ դարը քեզ կուրացրեց,
Քեզ խլացրեց 20-րդ դարը,
Ճակատիդ մահվան սև խարան դրեց
20-րդ դարը...
Ոճրագործները 20-րդ դարի
Այնպես սառնասիրտ
Ու հաստատակամ
Վառեցին կրակը այն վիթխարի,
Որին կարող էր կայսր Ներոնը
Նախանձել անգամ,

Եվ քեզ դարձրին քո դռան ու տան-
Կիսված միջուկի ճառագայթներով
Հավերժ հաշմանդամ:

Ու դեռ չծնված քառասունհինգին,
Բայց քառասունհինգի ախտով վարակված
Կանայք ծնեցին
Մանուկներ խարկված,
Մանուկներ և կույր,
Մանուկներ և խուլ,
Մանուկներ անգույն,
Անարյուն, անդեմք,
Մեռած,
Կիսամեռ-
Անմեղ մանուկներ,-
Դեմքներին խռովք՝
ժպիտի փոխարեն,
Շրթներին նզովք՝
երգի փոխարեն,
Եվ անե՜ծք, անե՜ծք աչքերում խամրած...
Օ՜, Հիրոսիմա,
Դու դժբախտ իմ մայր...

Օ՜, Հիրոսիմա,
20-րդ դարի խաչակիրների
Ձեռքով դու խաչված Քրիստոս մի նոր,
Եվ կա՞ ավելի
Պատիժ ահավոր,
Քան այն՝
կենդանի մահարձան լինել
Հեգնանքով բախտի,
Եվ դանդաղ մեռնել ատոմի ախտից:

Օ՜, Հիրոսիմա...
Դեռ չծնված քո մանկանց անունից,
Նրանց անունից՝
Քառասունհինգին ովքեր մոխրացան,
Որ չեն բացվի՝
այն ծաղկանց անունից,

Խեղանդամ արված
Քո հազարավոր մարդկանց անունից-
ելի՛ր,
Ղողանջի՛ր ողջ աշխարհով մեկ,
Թնդա՛, որոտա՛ ատոմից ուժգին.
- Մարդի՛կ,
Հիշեցե՛ք
Ու մի մոռացեք
Դուք Հիրոսիման ու Նագասակին:

ԱՆՏԵՐ ՏՈՒՆԸ

Պատերի տակին եղինջ է բուսել,
Խոտի մեջ կորել բակ ու այգին,
Ճնճղուկները բներ են հյուսել
Ծռված կտուրի թեքված կռնակին:

Ու տանիքի տակ մատներով անտես
Նվագում է խենթ քամին իր շվին,
Եվ ջրհորդանը դատարկ թևքի պես
Կախվել, պարում է խարխլված քիվին:

Էլ եկող չկա, գնացող չկա,
Ծիծաղող չկա ու լացող չկա,
Քանի՞ տարի է, ո՞վ է իմանում,
Այս տան դուռը մի բացող չկա:

Որտե՞ղ են հիմա տերերը այս տան.
Խոսեցեք, քարեր, ինչո՞ւ եք լռում:-
Մի բարի տատիկ մոտենում դանդաղ,
Ասում է.
- Նրանք ընկել են կռվում:

Միայն այսքանը: Ես խոսք չեմ գտնում,
Վիշտը ողբալու՝ չեմ գտնում բառեր:
Անտեր տան բակում կանգնել եմ տրտում
Եվ արտասուքն է աչքիս մեջ սառել:

Բայց արտասուքը ուժ չունի այստեղ,
Ո՞ւմ է հարկավոր և տրտմությունը:
Բռունցքվել է պետք սև հողմերի դեմ,
Որ չկրկնվի այս պատմությունը:

1984 թ.

ԵԶԸ

Կա հին մարագը և խոտի դեզը,
Կալատեղն էլ կա, բայց չկա եզը:
Եզը ի՞նչ աներ, անցել է դարը,
Դե եզ է, էլի, գլուխը քարը...

Տրակտորի տված բարիքը ծով է,
Ատոմի դարում եզ պահողն ո՞վ է:
Արորի բախտը բերեց այս անգամ,
Եկան քաղաքից, տարան թանգարան:

- էքսպոնատ է արորը,- ասին,-
Պիտի իմանա աշխարհն էդ մասին:
- Բա ե՞զն,- հարցրին,- ի՞նչ անի անգործ:
- Եզան համար էլ կա սպանդանոց:

Եզը խեղճ եզ էր, դե ո՞ւմ բողոքեր,
Վճիռը անբեկ ու անողոք էր:
Տարան մորթելու, ու չբառաչեց,
Տարան քերթելու, ու չհառաչեց.

Ականջում արտի շրշյուն-շորորն էր,
Հոգում մաճկալի հո՜-հորովելն էր:
Հեռվում մարագն էր ու խոտի դեզը...
Եվ ոչ ոք չասաց. «Ափսո՜ս է եզը»:

1984 թ.

ՍԻՐՈ ՏԱՐԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

Ի՞նչ եմ արել,
Այդ ինչո՞ւ են ձերոնք այդպես իրար խառնվել:
Մեր մարգերի ջուրը կտրել
Ու դեպի ձեր բակն եմ արել.
Մեր ծառերը թողել անջուր,
Ձեր ծառերի տակն եմ արել:
Ի՞նչ եմ արել,
Ասա, մի՞թե քիչ եմ արել,
Ձեր բոստանի միջով այնքան եկել-անցել,
Տրորվել է, կածան դարձել,
Բայց էլի ինձ չես հասկացել:
Ի՞նչ եմ արել,
Չեմ հասկանում ի՞նչ եմ արել.
Եկել եմ ձեր դռնից նայել
Ու սիրտդ սուրբ դող է մտել,
Իսկ տատիկդ ծուլ է եղել.
- Հասե՞ք, հարա՞յ,
Մեր տունը մի գող է մտել:
Ի՞նչ եմ արել,
Ես ձեր տնից ի՞նչ եմ տարել.
Քո այդ սուտլիկ ճիչն եմ տարել,
Ձերոնց չոռն ու պինչն եմ տարել,
Քո հայացքից վիրավորված ու խոցոտված
Ես իմ անմեղ խիղճն եմ տարել...
Ի՞նչ եմ արել.
Լավ, ասենք թե մի քիչ խելառ
Ու մի քիչ էլ չար եմ եղել.
Ա՛յ, անաստված, մերոնց համար
Ախր մինուճար եմ եղել,
Հետո տարվել հանգ ու վանկով,
Վարար գետի պես ցրվել եմ,
Եվ ձերոնք էլ դրան էին հենց սպասում,
Որ ձեռ առնեն.

- Տղան խելքը թռցրել է:
Ի՞նչ եմ արել,
Ես հո չասեմ,
Սակայն ամբողջ գյուղը գիտե,
Որ այդ անմեղ մեղավորը դու ես եղել,
Դու ես արել,
Որ ես այդպես ժամանակից
Մի քիչ շուտ եմ սիրահարվել:

* * *

Առանց քեզ օրս դժվար է մթնում,
Առանց քեզ լորս բունը չի գտնում:
Առանց քեզ՝ ինձնից շվաքս խրտնում,
Գնում ուրիշի այգին է մտնում:
Առանց քեզ հավքս միշտ լուռ է մնում
Ու ջրաղացս անջուր է մնում:
Առանց քեզ ինքս ինձնից փախչում եմ,
Առանց քեզ ես ինձ վառում, տանջում եմ:
Արի՜, լսու՞մ ես, վառիր ճրագս,
Ցուրտ է, մրսում եմ, արի՜, կրակս...
Տունս առանց քեզ համ ու հոտ չունի,
Քունս առանց քեզ առավոտ չունի:

1962 թ.

* * *

Գյուղից այնդին էր, հեռու հանդին էր,
Մեր սիրո վկան կանաչ բարդին էր:
Սիրտս կարոտի խոսքերով լիքն էր,
Խնամախոսը կապույտ երկինքն էր:
Ցողիդն իր անուշ տավիղն էր լարել,
Ցաղկած մասրենին մեր խաչեղբայրն էր:
Գետը դափ զարկում, հովը պարում էր,
Եվ մեր քավորը զնգուն առուն էր:
Հագիդ ճերմակը քո բոյ-բուսին էր,
Հարսանքի ջահը լիալուսինն էր:

Գիշերն իր հրաշք հեքիաթն էր մանել,
Մեզ պսակողը մեր Շաղասարն էր:
Եվ լույսը բացվեց երկինքը լուրթ էր,
Ու մեզ օրհնողը՝ օրհնված արտույտն էր:

ՍՈՆԱՆ ՊԱՐՈՒՄ Է

Նվագն է թնդում ակումբի բակում,
Տոն է, գարուն է,
Զուռնայի ձենը ականջ է ծակում,
Սոնան պարում է:

Հուզվում, փոթորկվում ու ծափ են տալիս
Տղերքը ջահել,
Վահանը տեղում պտույտ է գալիս,
Ուզում է պարել:

Սոնան ճկվում է, շորորում, նազում,
Կաքավում արագ,
Տղերքն իրար են նայում ու ասում.
- Կրա՜կ է, կրակ:

Խոր ախ է քաշում Մուքելն ալևոր.
- Հե՜յ, ջահել օրեր,
Եվ շշնջում է Վահանն ինքն իրեն.
- Չի սիրում, զո՞ռ է:

Սոնան ժպտում է, հովի պես սահում
Վահանի մոտով,
Տղան շիկնում է, փոթորկվում, վառվում,
Լցվում կարոտով:

Նվագն է թնդում ակումբի բակում,
Տոն է, գարուն է,
Զուռնայի ձենը ականջ է ծակում,
Սոնան պարում է:

1958 թ.

ԳՅՈՒՂԻ ՏՂԵՐՔ

Գյուղում ծնված գյուղի տղերք,
Մեր խաղերով, երազներով,
Հազար տեսակ, հազար ու մեկ
Մեր հոգսերով ու հույսերով:

Եվ ունեինք մեր աչք դրած,
Մեր երազի հրաշք փերին-
Ծեգը-ծեգին կուժը առած
Շտապում էր ձորը՝ ջրի:

Գյուղում ծնված գյուղի տղերք,
Մեր ուսին մեր բեռն ունեինք,
Մեր հազար ու մի բեռան հետ
Ակումբում մեր դերն ունեինք:

Սարո էինք, Սեյրան էինք՝
Տրված սիրո քաղցր հուշին,
Բեմի վրա փնտրում էինք
Մեր Սուսանին ու Անուշին.

Մերթ հառաչում սրտակեղեք,
Մերթ ծառս լինում ու բղավում...
Գյուղի բեմում գյուղի տղերք,
Ախր, մենք մեզ էինք խաղում:

1981 թ.

* * *

Կնոջս՝ ԱՄԱԼՅԱՅԻՆ

Քոնն են աշխարհի ծաղիկները պերճ
Ու կարկաչները այս գետակների,
Քոնն են սրտերի կրակներն անշեջ,
Աստղերի լույսն ու ժպիտն արևի:
Քոնն են ծովերի կապույտ անհունը,
Այս պուրակները,

Այս պուրակներում անվերջ կարկաչող
Շատրվանների խելառությունը,
Եվ խանութների ցուցափեղկերի
Շքեղությունը,
Այս մաքուր ձյունը,
Որ որակում ենք այլ խոսքով՝ անբիծ,
Եվ այս աշունը,
Որ արցունքներ է քամում թուխ ամպից,
Այս ժպիտները, այս պարզկա օրը...
Քոնն են բոլորը:
Քոնն են, քեզ համար.
Իսկ ես, անգինս,
Ես ի՞նչ եմ ուզում.
Ուզում եմ լինես աշխարհում իմը,
Ուզում եմ լինես իմ հոգու սյունը,
Ինձ խենթացնող երջանկությունը,
Իմ տեղը, տունը...
Թե չէ՝ ինչի՞ս է
Հարստությունը:

ՆԱՆԱՐԸ ԵԿԱՎ...

Նանարը եկավ՝ արտը կանաչ էր,
Ինքը արտի մեջ կարմիր կակաչ էր,
Ձայնը աղբյուրի զնգուն կարկաչ էր,
Ժպիտն արևից պոկված ճաճանչ էր:

Նանարը եկավ՝ օրվա կեսին էր,
Ջրից էր գալիս, կուժը ուսին էր,
Ծամթելը թաց էր, ցողը հյուսին էր,
Հագի ատլասը բոյ ու բուսին էր:

Նանարը եկավ՝ կրակ ու հուր էր,
Կուրծքը երկնային դրախտի դուռ էր,
Կժինը զուլալ աղբյուրի ջուր էր,
Արտակը նայեց ու միտքը ծուռ էր:

Նանարը եկավ՝ մի քիչ քրտնած էր,
Սարի եղնիկի նման խրտնած էր,
Մաղախում կարագ ու լավաշ հաց էր,
Արտակը ժպտաց՝ ժպիտը խայծ էր:

. . . . . .

Նանարը գնաց՝ այտը շիկնած էր,
Մի աչքում արցունք, մի աչքում լաց էր,
Ծամթելը կորել ու ծունկը բաց էր,
Ա՛խ, Արտակ տղան ի՞նչ անաստված էր:

Նանարը գնաց՝ սիրտը բարակ էր,
Ժպիտը հանգած մոմի ճրագ էր,
Կանաչ թեղու տակ կուժը դատարկ էր,
Էս ի՞նչ կրակ էր, էս ի՞նչ կրակ էր:

* * *

ԱՄԱԼՅԱՅԻՆ

Դու հորոտ-մորոտ նորահարս էիր,
Ես՝ ջահել-ջիվան մի նորափեսա,
Դու աղբյուրի պես ջինջ ու պարզ էիր,
Ես՝ իմ դերի մեջ անփորձ դերասան:

Ափսե դրեցին քո ոտքերի տակ՝
Ոտնագալուստդ որ լինի բարի,
Եվ մեր կենացը խմեց թամադան,
Հետո քաշեցին մեզ հարսնեպարի:

Հարբած քավորը գոռում էր, ճչում,
Իրեն ուտում էր ջահել դհոլչին,
«Շաբա՞շ, շաբա՞շ» էր մի գլուխ գոչում
Սազանդար Սաքոն՝ թառը ականջին:

Ես ջահել էի և իմ ասածին՝
Գրպանիս վերջին տասնոցն էլ գնա՞ց,
Հարսանքավորները կերա՞ն, խմեցի՞ն,
Մեզ վաղվա համար ոչինչ չմնաց:

Ամռան գիշերը կարճ էր, շու՜տ անցավ,
Մեզ համար բացվեց առավոտ մի նո՜ր...
Դու շիկնել էիր արդեն հարսնացած,
Ես ժպտում էի... քո դեմ մեղավոր:

ՀԵՔԻԱԹ

...Եվ մի բարի, մի բուռ տատիկ
Բազմած մեր հին կաղնե թախտին,
Բռնած տուտը իր հեքիաթի-
Բանակներ է տանում մարտի...
Մեզ վաղուց է արդեն հայտնի՝
Բարին պիտի վերջում հաղթի,
Եվ ողջ տունը դարձած մանուկ-
Սպասում է խոնարհ ու լուռ,
Որ երկնքից լուրթ, աստղացո՜ղ
Ընկնի երեք կարմիր խնձոր:

Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ

Հանդիպեցինք մեր այգում,
Հանդիպեցինք ձեր այգում
Եվ եկանք ու գնացինք,
Եվ եկանք ու մնացինք.
Մրգահասի անուշ օր,
Գլուխ-գլխի երկու լոր...
Ոչ ես էի մեղավոր,
Ոչ դու էիր մեղավոր:

Ձմեռ եղավ ու գարուն
Ու բլբլաց գիժ առուն.
Շուրթս դիպավ քո շուրթին,
Շուրթդ դիպավ իմ շուրթին,
Ոչ մի գաղտնիք չմնաց,
Լուրը թռավ թևավոր.
Ո՛չ դու էիր մեղավոր,
Ո՛չ ես էի մեղավոր:

Եվ աղմուկ ու վեճ եղավ՝
Մեղավոր է ձեր տղան,
Հայրս բակից թնդաց գոռ՝
Ձեր աղջիկն է մեղավոր:
Բայց վեճն ու՞մ էր հարկավոր,
Ախր ի՞նչ էր եղել որ...
Ո՛չ ես էի մեղավոր,
Ո՛չ դու էիր մեղավոր:

Տարիները չվեցին
Հավքերի պես թևավոր,
Եվ առաջին սերը մեր
Երազ մնաց հեռավոր...
Որ ոչ դու ես երջանիկ,
Ոչ էլ ես եմ բախտավոր-
Եվ դու էիր մեղավոր,
Եվ ես էի մեղավոր:

1981 թ.

ԾԱՂԿԱՎԱՃԱՌԻՆ

Առավոտյան թարմության պես
Մտնում ես դու փողոցը մեր
Եվ հնչում է ձայնդ նորից.
- Լավ ծաղիկնե՞ր, թարմ ծաղիկնե՞ր...

Ինձ թվում է՝ քո գրկի մեջ
Ողջ գարունն ես առել բերել,
Այդքան սիրուն և այդքան պերճ
Լավ ծաղիկնե՞ր, թարմ ծաղիկնե՞ր:

Ես չեմ կարծում, ով բարեկամ,
Թե քո կյանքին կիջնի ձմեռ,
Երբ գրկիդ մեջ ունես այդքան
Լավ ծաղիկնե՞ր, թարմ ծաղիկնե՞ր:

ՀԱՐՍԱՆԻՔ

Լուսաբացի հետ շառաչեց զուռնան,
Գյուղը աղմկեց լուսաբացի հետ,
Լուսաբացի հետ դհոլը թնդաց,
Երգը կարկաչեց լուսաբացի հետ:

Մակար տղերքը կանչեցին իրար.
- Եկե՞ք, գնում ենք հարսի հետևից,-
Խաչեղբայրը և ջահել քավորը
Եկան բռնեցին փեսայի թևից:

Աղջիկները և ջահել հարսները
Զարդարեցին ու զուգեցին հարսին.
- Բախտավոր լինես, երջանիկ լինես,
Նամուսով լինես, ազիզ ջան,- ասին:

Փոքրերն ու մեծերն իրար խառնվեցին.
- Հարսը բերու՞մ են, հարսը բերու՞մ են:-
Դուդուկը անուշ հա գեղգեղում էր,
Դհոլը թնդում, զուռնան գերում էր:

Հարսի ոտքի տակ ափսե դրեցին՝
Ոտնագալուստդ թող լինի բարի,
Մակարապետը բարակ ծիպոտը
Թափ տվեց օդում՝ «Հարսը թո՛ղ պարի»:

Եվ շորորալեն հարսը թևերը
Ձգեց նազանքով, իր պարը պարեց,
Կեսարը շոյեց երկար բեղերը,
Կեսուրը վիզը դռնից երկարեց:

Թամադան եկավ, բռնեց իր տեղը,
Կոկորդը մաքրեց, ժպտաց առնացի.
- Խմենք մեր երկու ծաղկի կենացը,
Ցանկանք ծերանան կյանքում մի բարձի:

Զուռնան շառաչեց, դհոլը թնդաց,
Դուդուկը նորից անուշ գեղգեղաց,
Տղայի հայրը ծուլ եղավ, խնդաց.
- Քեֆ պիտի անենք մինչև լուսաբաց:

Եվ հողմի նման ջահել տղերքը
Սուրացին մեջտեղ. պարել է՝ պարենք...
Թամադան կորցրեց իր մտքի թելը
Ու գոռաց. «Տղե՜րք, համը չհանեք»:

Եվ հարսանիքը ձգվեց, երկարեց,
Գնաց դեմ առավ աքլորականչին.
Հետո զուռնաչին հոգնած հորանջեց,
Դհոլչին ննջեց՝ դհոլն ականջին:

Հարսը և փեսան ձեռք-ձեռքի տված
Ելան, հեռացան անշշուկ, անձայն:
Լուսինը թաքնվեց ամպի ետևում
Եվ լուռ ժպտացին աստղերը արծաթ:

* * *

Ո՞ւր ես շտապում, կանգնիր,- ասացի,-
Այնպե՜ս եմ ուզում աչքերիդ նայել:
- Պարզ է,- նա ժպտաց,- աչքերից բացի՝
Է՞լ ինչով եմ քեզ այդքան հմայել:

- Ա՛խ, ի՜նչ այտեր դու ունես,- ասացի,-
Ասես մայիսյան բացված վարդեր են:
- Պարզ է,- ասաց նա,- այտերից բացի՝
Քեզ ամենից շատ ինչո՞վ եմ գերել:

- Օ՜, քո հոնքերը, հոնքերն,- ասացի,-
Նման են սիրտս խոցող նետերի:
- Պարզ է,- նա խնդաց,- հոնքերից բացի՝
Ինչո՞վ եմ ես քեզ համար սիրելի:

- Ինչպիսի՜ շուրթեր ունես,- ասացի,-
Գոնե մի անգամ թույլ տուր համբուրել:
- Պարզ,- հեգնեց նա,- շուրթերից բացի՝
Էլ ինչո՞վ եմ ես քեզ հրապուրել:

- Ախր դու այնքան լավն ես,- ասացի,-
Ոտից մինչ գլուխ կախարդել ես ինձ:
- Ուշ է,- ծիծաղեց,- շատ սակարկեցիր,
Այդ մեկն սկզբից պիտի ասեիր:

1984 թ.

* * *

Ցովը կապույտ, ծովը անծայր,
Պարզ էր օրը ու արևկա,
Եվ ես ծովում շատ խորացա՝
Խելքովն ընկած մի աղջկա:

Նա լողում էր, ես՝ ետևից,
Մրցման մեջ ենք մտել ասես,
Ետ էր նայում ու կանչում ինձ.
- Տղա, քոնն եմ, թե որ հասնես:

Լողորդուհի նա մի հմուտ,
Իսկ ես անփորձ մի պատանի,
Ցովը անծայր, ծովը կապույտ,
Ի՜նչ փորձանք էր, գրողը տանի:

Ես լողալու էլ ուժ չունեմ,
Ուժ էլ չունեմ նահանջելու,
Դեմս ծով է, դեմս ջուր է,
Իսկ ափը դեռ շատ է հեռու:

Ես գործեցի ճիգը վերջին
Եվ լողալով հասա նրան:
Օրը պարզ էր, երկինքը՝ ջինջ,
Ցփծփում էր հովը ամռան:

Մոտ էր ափը, նա ինձ գրկեց
Նավաստու պես քաջ ու տոկուն,
Ահեղ ծովից նա ինձ փրկեց
Եվ ինձ խեղդեց նա իր գրկում:

1984 թ.

* * *

Չսասանեց ինձ հողմը խենթ,
Չտապալեց ոսոխը ինձ,
Ես ծովացա ծովերի հետ,
Շառաչեցի ցասումնալից:
Մրրիկը ի՞նչ էր՝ եկավ անցավ,
Ի՞նչ էր արկի որոտն իմ դեմ
Շանթերի դեմ ահեղածայն
Ես շանթ էի ու շանթարգել:
Գլխիս ձյուն ու կարկուտ տեղաց,
Կարկուտն ի՞նչ է, տվի անցա,
Գինու թասին չեկա մեղա,
Խմեցի ու առյուծ դարձա...
Բայց չգիտեմ, այս ո՞նց եղավ՝
Կնոջ առջև ես խեղճացա:

1984 թ.

ԵՍ ՋԱՀԵԼ ԷԻ

Ես ջահել էի, տասնութ տարեկան,
Քթիս տակ մազը նոր էր ծլել դեռ,
Սիրահարվեցի մի լավ աղջկա,
Գյուղում այդ մասին ոչ ոք չգիտեր:

Եվ նա քույր ուներ՝ ճիշտ իրեն հանգույն,
Ինչպես որ միջից կիսած մի խնձոր...
Գիշեր էր ամռան, առուն էր զնգում,
Վերից լուսինը ժպտում մեղրածոր:

Ես լուսամուտից թաքուն մտա ներս,
Կիսամութի մեջ գրկեցի նրան,
Ապտակը դեմքիս շառաչեց այնպես,
Որ աչքերիցս շեկ կայծեր թռան:

Մեղապարտի պես ես կանգնել շվար,
Իսկ նա քրքջում, ձեռ էր առնում ինձ.
- Մի՞թե կույր ես դու, այ խեղճ սիրահար,
Որ չես տարբերում ինձ քո սիրածից:

Ես ջահել էի, տասնութ տարեկան,
Քթիս տակ մազը նոր էր ծլել դեռ...
Ջահելությունս ուր է թե ետ գար
Եվ այս սխալը նորից կրկնվեր:

1984 թ.

ԱՅՍ ՈՒՇ ԳԻՇԵՐԻՆ

Այս ուշ գիշերին փախել է քունս,
Չգիտեմ, թե ում դռներն է թակում,
Չգիտեմ՝ մտել որ հավքի բունը,
Ինձ երազիս մեջ թողել է անքուն:

Այս ուշ գիշերին մի անմիտ ծղրիդ
Թողած դաշտերն ու անտառները մեր,
Թռել մտել է իմ պատուհանից
Եվ ականջիս տակ իր երգը զլել:

Այս ուշ գիշերին մեր Խումար եզը
Ինձ մոտ է եկել հուշերիս կալից,
Ցռել է լծից կոշտացած վիզը
Ու հարցնում է իմ քեֆ ու հալից:

Այս ուշ գիշերին մի քնքուշ աղջիկ
Ցողոտ ձեռքերով իմ դուռը բացել,
Ժպիտը պահած աչքերում վճիտ,
Ասում է՝ արդյոք ինձ չե՞ս մոռացել:

Այս ուշ գիշերին Մանուշակ տատս
Երկար ճամփա է կտրել ու եկել,
Եկել ասում է՝ ասա ինձ, ջանս,
Այդ ինչո՞ւ այդպես վաղ ես ճերմակել:

Այս ուշ գիշերին եկել հայրս ծեր՝
Հողոտ ոտքերով և բահը ուսին.
- Վեր կաց,- ասում է,- քնով ես անցել,
Մեր բոստանները թողել ո՞ւմ հույսին:

Այս ուշ գիշերին խելառ մի տղա
Ինձ է կանչում մեր Խամուտի սարից.
Ասում է՝ ես քեզ գտել եմ ահա,
Որտե՞ղ ես կորել դու այսքան տարի:

Քո տեղն այստեղ է՝ լեռները կապույտ,
Անտառները բիլ, դաշտերը բեհեզ,
Ուր արծիվները երկինքներ չափում,
Գետերն են վիճում քարափների հետ:

Այս ուշ գիշերին փախել է քունս
Ու նետել է ինձ գիրկը հուշերիս,
Ինձ հյուր է եկել պատանությունս
Եվ քունս խլել այս ուշ գիշերին:

Ո՞Վ ԶԱՐՄԱՆԱԼԻ

Թե աստված իրոք արարել է քեզ
Ադամի կողից՝ այդպես նուրբ ու ծույլ,
Այդպես հողեղեն, հիասքանչ այդպես -
Հավատացյալի երկյուղով մի սուրբ
Երկրպագում եմ ես այդ աստծուն:

Թե դու բոցն ես այն փողի եղեգան,
Որ ծնեց մանուկ մի հրագանգուր,
Հուր պսակ գլխին, աչքերն արեգակ -
Չոքում եմ դեմդ ես քուրմի հանգույն
Եվ խունկ եմ վառում քո ոտքերի տակ:

Թե դու ես իրոք այն աստվածուհին,
Որին հեթանոս նախնիները մեր
Կոչեցին սիրո հրաշք Աստղիկ -
Քո վեհությանը թույլ տուր խոնարհվել,
Օրհնել ծնունդը քո սքանչելի:

Թե դու ես իրավ ուժն այն անմեհի,
Որ շանթերի դեմ դառնում շանթարգել,
Աշխարհն է փրկում դավից ու մահից -
Պատրաստ եմ կյանքս պարգևելու քեզ,
Ո՞վ հերոսամայր, ո՞վ զարմանալի:

1984 թ.

ՀԱՍՈՒՆ ՏԱՐԻ

* * *

Այդ ես չեմ երգում, երգում է հովը,
Զեփյուռն է արտի վարսերը շոյում,
Այդ գետն է երգում, երգում է ծովը,
Մեր աղբյուրներն են կարկաչում ձորում:

Այդ կաղնիներն են հպարտ շառաչում,
Կայծակն է ցոլում ամպերից մթին,
Այդ ծղրիդներն են դաշտերից կանչում,
Զեփյուռն է խաղում լեռան գագաթին:

Այդ արտույտներն են կախվել երկնքից
Ու ջրվեժներն են ծկլթում կիրճում,
Մի՞թե չեք լսում, այդ եղնիկներն են
Անտառի խորքում այդպես բառաչում:

Այդ ես չեմ երգում, երգում է առուն,
Գետակն է ձորում թմբուկն իր զարկում,
Այդ տերևներն են խշշում անտառում,
Քամին է մեր տան փեղկերը թակում:

Այդ աղջիկներն են, լսո՞ւմ եք նրանց,
Երգում են սիրո, կարոտի մասին,
Այդ ծաղիկներն են շշնջում կամաց,
Ողկույզն է դողում խաղողի վազին:

Այդ սիրուց մերժված տղաներն են մեր՝
Սիրածի համար այդպես հառաչում,
Այդ մայրն է խոսում կորած որդու հետ,
Այդ մանուկներն են անհոգ քրքջում:

Այդ ես չեմ երգում... Ես անտառներից
Շշուկ եմ պոկում կարոտով անանց,

Աղմուկն եմ բերում մեր գետակների
Եվ առանց վարձի բաժանում մարդկանց:

Ես սիրահարված պատանու նման
Լուսացնում եմ գիշերներն անքուն,
Ու լսում եք դուք երգերն այս հիմա
Եվ դուք կարծում եք այդ ես եմ երգում:

1963 թ.

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Հիսուն տարին, ասում են,
Իմաստության տարի է,
Հիսուն տարում, ասում են,
Մարդիկ անչափ բարի են.
Թիկն են տալիս բազմոցին,
Անցած օրերն են հիշում,
Կարմիր-կանաչ մանկության
Սար ու ձորերն են հիշում,
Իրենց նախկին սերերի
Օրոր-շորորն են հիշում,
Կանաչ բեհեզ հանդերի
Թխլիկ լորերն են հիշում...

Եվ հիշում են, հիշում են,
Մայրական սուրբ օրհնանքի
Անուշ բառերն են հիշում,
Հեռվից կանչող ճամփեքի
Ծաղկած ծառերն են հիշում,
Իրենց ջահել օրերի
Խրոխտ պարերն են հիշում,
Եվ պատրանք ու հուշ դառած
Երազ յարերն են հիշում,
Հետո ապուպապերի
Շիրմաքարերն են հիշում:

Եվ հիշում են, հիշում են,
Կռիվ տարին են հիշում,
Եզը չոքած հերկի մեջ,
Կամը կալին են հիշում,
Ապին գնաց, լուր չկա,
Տատիկի սուգն են հիշում,
Փողոցներում գալարվող
Բորանն ու բուքն են հիշում,
Գտած ինչ-որ հրաշքով՝
Կորեկի հացն են հիշում,
Եվ այրերին սպասող՝
Մայրերի լացն են հիշում...
Հուշը հուշին դարսում են,
Հուշը չար ու բարի է...
Հիսուն տարին, ասում են,
Հասուն մտքի տարի է:

6 հունվարի, 1982 թ.

Ի Ն Ձ

Այս ծերանալը ինչպե՞ս է լինում.
Աշունը գլխիդ եղյամ է դնում,
Մի կարմիր-կանաչ գարուն ես հիշում,
Եվ հուշերիդ մեջ ամառն է խշշում,
Բայց հին իլիկով նույն թելն ես մանում՝
Տեսե՞ք, ջահել եմ ու չեմ ծերանում.-
Սիրուն կին տեսնում՝ խոր ախ ես քաշում,
Չէ, «ախս» ո՞րն է, հոգի ես մաշում,
Մտքում հազար մի նամակ ես գրում
Ջիվան օրերիդ թառլան սիրուհուն,
Եվ գլուխդ ես գովում զօր-գիշեր՝
է՜հ, քանիսին եմ ես կյանքում մերժել...
Ձեռքովդ եկածն այդ է, ի՞նչ անես,
էլ տակիդ Քուռկիկ Ջալալի չունես,
Քուռկիկ Ջալալուն հարմար թամբ չունես,
էլ առաջվա պես ուժ ու թափ չունես,

Որ կրակ կտրած՝ անձրև ու ձյունին
Գնաս հասնես քո Խանդութ Խաթունին:

Այս ծերանալը ինչպե՞ս է լինում.
Քո լռության հետ մենակ ես մնում,
Մի երկու բաժակ գինուց հարբում ես,
Հուշ-պատրանքներով դու քեզ խաբում ես,
Քո այդ մանկության ճամփեքն ես չափում,
Ուր կաղնիներն են հպարտ սոսափում.
Հին երազներդ իրար ես խառնում,
Մի քաղցր խոսքից երեխա դառնում,
Երեխայի պես հրճվում ու ճչում,
Երազից խաբված տեղից վեր թռչում...
Եվ հետո աչքիդ էլ քուն չի գալիս,
Միտքդ նորից ես հուշերիդ տալիս,
Հուշերի թևով հեռուն ես թևում,
Լեռներ ես պատռում, երկինք ես ձևում,
Ու հանկարծ հիշում՝ շատ ես ուշացել,
Ջահելությունդ վաղուց է անցել...

Այս ծերանալը ինչպե՞ս է լինում.
Մտքիդ թելերից գորգեր ես հինում,
Մեկ-մեկ տրտնջում, մեկ-մեկ փնթփնթում,
Բան ես կորցրել, իբր չես գտնում,
Այն ես հավանում, այս չես հավանում,
Եվ քո ասածն ես հա առաջ տանում.
Բայց տեղն է գալիս՝ սիրտդ բարակում,
Կնոջդ անգամ դու չես առարկում,
Այնպես ես նրան «հոգի», «ջան» ասում,
Որ աղջկա պես ժպտում է, նազում...
Էլ ի՞նչ ես ուզում.
Թառլան կին ունես,
Ու ինքդ քո մեջ ջահելանում ես,
Էն նախկին սիրով վառվում, հալվում ես,
Հալվում, ծալվում ես,
Ծալվում, կես լինում...
Ծերանալն ահա այսպես է լինում:

1982 թ.

ՀԱՅՐԱԿԱՆ

Զավակներիս

Տանս դուռը դուք եք,
Կյանքիս նորը դուք եք,
Սրտիս հուրը դուք եք,
Վաղվա օրս դուք եք:

Ով որ դուռս բացի-
Բարևողը դուք եք,
Երբ արևս անցնի-
Արևողը դուք եք:

Թե ծարավեմ նորեն՝
Ջուր տվողը դուք եք,
Արմատներս խոր են,
Ճյուղ տվողը դուք եք:

Ես ձեր ծառն եմ կանաչ,
Ծաղիկներս դուք եք,
Եվ ամենից առաջ
Տաղիկներս դուք եք:

Տունս ձեզնով տուն է,
Իմ գավաթը դուք եք,
Ուրիշ հավատ չունեմ,
Իմ հավատը դուք եք:

Ես գետ եմ լեռնային,
Իմ վտակը դուք եք,
Ուղղված աշխարհին-
Իմ կտակը դուք եք:

Երգիս հույզը դուք եք,
Սրտիս հույսը դուք եք,
Վազգեն Օվյանն ասաց՝
Տանս լույսը դուք եք:

1982 թ.

Աղջկաս՝ ՆԱՐԻՆԵԻՆ

Քանի կողքիս ես, ինձանից անմաս,
Հոգուս սատար ես ու սրտիս հենակ,
Հավք ես, կթռչես մի օր, կգնաս,
Բույնդ կհյուսես ուրիշ հարկի տակ,
Բայց նորից քո հին բույնը կհիշես,
Իմ գլխի ծերմակ ձյունը կհիշես:

Սիրավառ սիրտս քեզ ոսկե սինի,
Օրհնում եմ ճամփադ ես գորովանքով,
Գարնանամուտդ թող ծաղկով լինի,
Ամառնամուտդ՝ բերք ու բարիքով,
Ուր էլ որ լինես՝ քո տոհմին մնաս
Եվ քո հայրական տունը չուրանաս:

1982 թ.

Աղջկաս՝ ՆՎԱՐԴԻՆ

Ծաղկում, բացվում ես,
Իսկ ես խարկվում եմ,
Կյանքով լցվում ես,
Ես ճերմակում եմ:
Դու կարկաչում ես,
Ես ցամաքում եմ,
Դու կանաչում ես,
Ես դատարկվում եմ:
Դու զորանում ես,
Ես կորանում եմ,
Դու նորանում ես,
Ես չորանում եմ:
Դու բոցկլտում ես,
Իսկ ես հալվում եմ,
Ճնգում, հորդում ես,
Իսկ ես ծալվում եմ:
Ծիածանվում ես,
Իսկ ես հանգչում եմ,
Դու բարձրանում ես,
Իսկ ես իջնում եմ:
Դու հուր ես տալիս,
Իսկ ես ձյունում եմ,
Դու նոր ես գալիս,
Իսկ ես գնում եմ:
Օ՜, աղջիկ, իմ լույս,
Հոգուս երկինք մով,
Քեզ բարի գալուստ,
Ինձ՝ գնաս բարով:

1982 թ.

* * *

Ափին զարկվելս
Ու փոթորկվելս
Ծովից է գալիս:

Բարձր թևելս,
Երկինք ձևելս
Արծվից է գալիս:

Անառությունս,
Համառությունս
Քարից է գալիս:

Բարձրությունս,
Կարծրությունս
Սարից է գալիս:

Բախտին հաշտվելս,
Հողը պաշտելս
Ծառից է գալիս:

Տոկունությունս,
Խոկունությունս
Սրտից է գալիս:

Կարոտս, սերս
Եվ ծով հույզերս
Երգից է գալիս:

Երգով ապրելս
Ու տառապելս
Հավքից է գալիս:

Խոսքով բոցվելս,
Երգով ծոցվելս
Բառից է գալիս:

Խոլ շառաչելս
Ու հառաչելս
Ցավից է գալիս:

Դավին տրվելս,
Սիրտ պղտորելս
Չարից է գալիս:

Անհուն տագնապս
Դարից է գալիս:

Եվ ես իմ դարի,
Իմ վիշտ ու ցավի,
Իմ տոհմածառի
Չարհուր սարսափս,
Ոգուց եմ գալիս:

1982 թ.

ԿԱԼԱՏԵՂԵՐՈՒՄ

Կալատեղերում
Կանաչ մարգեր են
Եվ բուրմունք խոտի,
Կալատեղերում
Հողը ճաքել է
Կամի կարոտից:

Կալատեղերում
Ծղրիդներ կան շեկ
Ու կակաչներ տաք.

Կալատեղերում
Կալերը հուշ են,
Հաշանը՝ պատրանք:

Կալատեղերում
Գնամ մի գիշեր
Երազս հյուսեմ
Եվ երազիս մեջ
Իմ երազ դարձած
Կալերը տեսնեմ:

1981 թ.

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Երջանկությունը դա քո առաջին
Քայլերն է երեր՝ սեղանից՝ աթոռ,
Ձեր բակով հոսող առվակն է վճիտ,
Մորդ օրորը ջերմ ու սիրաթով:

Երջանկությունը՝ դա քո առաջին
Ժամադրությունն ու սերն է առկա,
Երբ դու առաջին անգամ քո կյանքում
Համբուրեցիր այն քնքուշ աղջկան:

Երջանկությունը այն է, որ գտար
Քո՛ ճանապարհը այս մեծ աշխարհում,
Հասկացար, որ լեռն ունի վեհ կատար
Եվ թևեր ունես՝ թռչելու հեռուն:

Երջանկությունը քո մաքուր խիղճն է,
Անկեղծությունը՝ հանդեպ քո խղճի,
Հարազատ որդուդ անդրանիկ ճիչն է
Եվ թոթովանքը նրա առաջին:

Երջանկությունը այն է, որ գիտես՝
Ինչի համար ես ապրում, պայքարում,
Քո նպատակն ու երազներն ունես
Եվ հայրենիքիդ պարտք ունես տալու:

Երջանկությունը դա օդից կախված
Շքեղ դղյակ չէ խաղաղ ու անդորր,
Ոչ էլ պատահմամբ գտած ինչ-որ գանձ
Կամ պաշտոնական փափուկ բազկաթոռ:

Երջանկությունը քո տնկած ծառն է,
Քո ցանած արտն է, եռանդդ անհուն,
Քո ձեռքով տաշած այն գլխաքարն է,
Որ տան պատերը ամուր է պահում:

Երջանկությունը այն է, որ մարդկանց
Սրտանց մաղթելու «բարի լույս» ունես,
Քեզ համար սիրուց տրոփող սիրտ կա
Եվ ինչ-որ մի տեղ սպասում են քեզ:

Երջանկությունը դա այն է, որ դու
Եվ կարողանաս ըմբոստ շառաչել,
Լինես լավ ընկեր և թիկունք մարդու,
Քո ապրած կյանքի համար չամաչես:

Երջանկությունը իրավունքն է քո
Աներկբայելի, քեզ հետ է ծնվել,
Այն, որ կարող ես քո ապրած կյանքով
Եվ ուրիշներին երջանկացնել:

* * *

Պոետներին մեծարել են,
Տվել փառք ու պատիվ անծիր,
Պոետներին քարկոծել են
Նենգ ու նախանձ փարիսեցիք:

Պոետներին զրպարտել են
Հուդաները փողի գերի,
Պոետներին բանտարկել են,
Գնդակել են պոետներին:

Դափնիներ են դրել կանաչ
Պոետների սեգ ճակատին,
Ձեռքը խոթել ատրճանակ,
Հրավիրել մենամարտի:

Պոետներին խարանել են,
Վառել նրանց երգերն ընտիր,
Պոետներին դարանել են
Դանտեսները բախտախնդիր:

Պոետներին տվել թևեր
Ու մղել են խոյանքների,
Պոետներին սիրահարվել
Ու լքել են պոետներին:

Պոետներին հայհոյել են,
Հալածել են ու այպանել,
Պոետները զենքը ձեռքին
Հայրենի հողն են պաշտպանել:

Պոետները չեն նահանջել
Ու չեն եղել փառքի գերի,
Փառքը ինքն է վստահորեն
Եկել գտել պոետներին:

* * *

Այս վազերը իմ ձեռքով եմ տնկել
Եվ ինչ գնով եմ երաշտից փրկել:
Թե դառն է մի քիչ իմ այս մաճառը,
Դուք ներող եղեք, ես եմ պատճառը:
Վատ մարդկանց ձեռքից շատ եմ դառնացել
Եվ մաճառիս է դառնությունն անցել:

1984 թ.

* * *

Այս շքերթներից հոգնել եմ արդեն
Ու ձանձրացել եմ ճառերից դատարկ:
Ճառ է հաղորդում ռադիոն երգի տեղ,
Վալսի փոխարեն՝ աղմուկ-աղաղակ:

Կուռքը տապալվել, բայց մի ուրիշ կուռք
Կանգնել է ահա նույն պատվանդանին,
Շողոքորթների ոհմակն ահարկու-
Կրկնում է նորից պատմությունը հին:

Ի՞նչ դիֆիրամբներ և ի՞նչ ցնծություն,
Թերթերում՝ ծափեր, եթերում՝ ծափեր,
Անմիտ ծափերն այս մեզ ու՞ր են տանում,
Այդ ո՞ւմ ենք ուզում ծափերով խաբել:

Այս շքերթներից հոգնել եմ արդեն
Ու ձանձրացել եմ ճառերից դատարկ-
Լեզուս հատեցե՞ք՝ չշողոքորթեմ,
Կտրեցե՞ք ձեռքս՝ որ էլ ծափ չտամ:

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ

1.

Ջան ես ասում, ես հալվում եմ-
Դե քո ջանը ո՞նց կլինի,
Դու ժպտում ես, ես վառվում եմ,
Սրտիս բանը ո՞նց կլինի.
Իմ գրկի մեջ տենչում ես ինձ,
Իմ գրկի մեջ հոգիս հանում,
Իմ գրկի մեջ ինձ դավում ես,
Դավաճանը ո՞նց կլինի:

2.

Ինչո՞ւ համար ահ ու դավով
Դարը այսքան բարդացնել,
Չէ՞ որ կյանքում երկրորդ անգամ
Մենք չենք կարող նորից ծնվել.
Խելոքները երբ անզոր են
Միտք-մտքի տալ, դատել արդար,
Հիմարներին ի՞նչ է մնում՝
Հողագունդը պայթեցնել:

3.

Այդ ո՞ւր է ուզում հասնել տգետն այս-
Սրան ու նրան անվերջ բոթելով,
Մարդիկ հո մորից կուզիկ չեն ծնվում,
Կուզիկանում են քիթը խոթելով.
Բայց կյանքն ունի իր օրենքը անխախտ,
Իր դատը ունի ու դատաստանը.
Աստիճաններից նա է գլորվում,
Ով բարձրանում է շողոքորթելով:

4.

Մեծ լոռեցուն

Երգիչներ եկան, երգիչներ անցան,
Մեր փառքի սյունն ու գերանը դու ես,
Որքան առուներ գետեր չդարձան,

Ծով հասած գետի մերանը դու ես:
Հազարան բլբուլ դու մեր դպրության,
Դարավոր կաղնի դու մեր անտառի,
Դու մեր տենչերի ու սրտերի ձայն՝
Մեր երգի ոսկե բերանը դու ես:

5.

Մի գիշեր մնամ՝ մեր հանդում մնամ,
Հերանց գնացող մեր արտում մնամ,
Ծղրիդների հետ, ա՜խ, արթուն մնամ,
Մի գիշեր մնամ՝ թող անտուն մնամ:
Մի գիշեր լսեմ շշուկն արտերի,
Մի գիշեր ըմպեմ բույրը վարդերի,
Մի գիշեր մնամ քո սիրուն ծարավ
Ու սիրահարված քո գիրկը դառնամ:

6.

Ես իմ երգերով զարմացնեմ ո՞ւմ,
Ո՞նց զարմացնեմ սրտերին անառ,
Երբ նորություն չէ մեր այս աշխարհում
Սոխակի երգը՝ սոխակի համար:
Ահա և քեզ կին, ահա և գինի,
Կյանքը՝ խաս պարտեզ, աշխարհը՝ գարուն...
Բայց ամեն սիրող Մեջնուն չի լինի,
Ամեն թաս բռնող Խայամ չի դառնում:

7.

Մի գնա, անգին, մի քիչ էլ մնա,
Թող որ ականջիս մի ճիչ էլ մնա,
Մի քիչ էլ մնա, որ տանջես մի քիչ,
Քո այդ սուրբ խաչով ինձ խաչես մի քիչ,
Մի քիչ էլ մնա՝ հառաչեմ մի քիչ,
Ափերից ելնեմ, շառաչեմ մի քիչ...
Քո խանդ ու դավից ինձ փրկիչ մնա,
Անգին մի գնա, մի քիչ էլ մնա:

8.

Խրատ էի կարդում ցինին,
Բայց չլսեց, թռավ գնաց,
Գայլը լսեց հորդորանքս,
Սակայն գառս առավ-գնաց.
Գող ագռավը հիսուն տարի
Աշակերտեց Սոկրատեսին,
Բայց այդպես էլ ամբողջ կյանքում
Նա լեշակեր ագռավ մնաց:

9.

Մեկն էլ գնաց իմ շեն գյուղից,
Սրտիս մի քար ծանրացավ,
Ապուպապիս շիրմի կողքին
Մի շիրիմ էլ բարձրացավ:
Մի խնձոր էլ պոկվեց ճյուղից,
Մի երազ էլ մոխրացավ,
Մեկն էլ գնաց մեր շեն գյուղից՝
Սրտիս մի քար ծանրացավ:

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

1.

Բանաստեղծները վաղ են ճերմակում,
Ուշ են ծերանում բանաստեղծները,
Ինչպես երկնամերձ բարձր սարերը,
Բանաստեղծները վաղ են ճերմակում:
Ոչ հանգիստ ունեն, ոչ էլ խաղաղ քուն,
Նրանց ուսին է աշխարհի բեռը -
Բանաստեղծները վաղ են ճերմակում,
Ուշ են ծերանում բանաստեղծները:

2.

Աշխարհ ենք եկել մենք ժամանակին
Եվ ժամանակից շուտ հասունացել,
Մեր ճանապարհը պատվով ենք անցել,
Քանզի ծնվել ենք մենք ժամանակին:
Մեր ապրած կյանքով չենք ձգտել փառքի,
Փառքն ինքն է եկել՝ մեր դուռը բացել,
Քանզի ծնվել ենք մենք ժամանակին
Եվ ժամանակից շուտ հասունացել:

3.

Մի՛ ասա՝ չեմ վերադառնա,
Երբ աչքերդ ետ են նայում,
Երբ ոտքերդ ետ են քայլում,
Մի՛ ասա՝ չեմ վերադառնա:
Սերը խռովք թող չդառնա,
Դարձի կամուրջը չեն վառում,
Մի՛ ասա՝ չեմ վերադառնա,
Երբ աչքերդ ետ են նայում:

4.

Այս Քուչակից մեծ սիրահար
Ոչ մի Քուչակ դեռ չի եղել,
Ու չի ծնվել աշխարհում դեռ
Այս Քուչակից մեծ սիրահար:
Այդքան զուլալ, այդքան վարար,
Եթերային ու հողեղեն -
Այս Քուչակից մեծ սիրահար
Ոչ մի Քուչակ դեռ չի ծնվել:

5.

Կաքավն երգեց Սևածորում,
Երգը կրակ ու կարոտ էր,
Ցողոտ-շողոտ առավոտ էր -
Կաքավն երգեց Սևածորում:

Ժայռին կարմիր բոց էր ցոլում,
Բո՞ց էր, արդյոք, թե նարոտ էր,
Կաքավն երգեց Սևաձորում,
Երգը կրակ ու կարոտ էր:

6.

Կակաչները հագել են ալ,
Լեռան ծերպին պար են գալիս,
Գարնան հովը ծափ է տալիս -
Կակաչները հագել են ալ:
Առուն դարձել սրնգահար,
Նոր տաղեր է բերել սարից,
Կակաչները հագել են ալ,
Լեռան ծերպին պար են գալիս:

7.

Ճերմակաթույր շուշաններ,
Ինչքա՜ն վաղ եք հարսնացել,
Ո՞վ է, արդյոք, սերը ձեր,
Ճերմակաթույր շուշաններ:
Շաղասարում ձյուն է դեռ,
Կածանները չեն բացվել,
Ճերմակաթույր շուշաններ,
Ինչքա՜ն վաղ եք հարսնացել:

8.

Շաղասարի ջրերը
Շաղասարից փախչում են
Ու ձորն ի վեր ճչում են
Շաղասարի ջրերը:
Շաղասարի ձորերը
Մտածում են, թե ինչու
Շաղասարի ջրերը
Շաղասարից փախչում են:

9.

Շաղասարից մի աղջիկ
Ինձ շուշաններ է բերել,
Շուշաններով ինձ գերել -
Շաղասարից մի աղջիկ:
Սիրտ իմ, արի մի վիճիր,
Կանաչ ճամփա ունեմ դեռ -
Շաղասարից մի աղջիկ
Ինձ շուշաններ է բերել:

1982 թ.

* * *

Արևը մարեց լեռան թիկունքին,
Հովը շշնջաց ժայռի մութ ունկին.
- Որտե՞ղ գնացին թխլիկ լորերս:

Մութը թանձրացավ անտառի հոնքին,
Առուն հառաչեց ժայռի պռունկին.
- Որտե՞ղ մնացին կապույտ ձորերս:

Քամին քրքրեց հովիտ ու կածան,
Մի գիշերվա մեջ դաշտը մերկացավ.
- Ովքե՞ր հանեցին զմրուխտ շորերս:

Հավքերը թռան երազի նման,
Մազերիս իջավ արծաթը եղյամ.
- Որտե՞ղ գնացին ջահել օրերս:

1981 թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

ՄՈՑԱՐՏԻ ՄԱՀԸ

Սրինգը ճչաց ու զնգաց ծնծղան,
Ջութակն հեկեկաց արծաթ արցունքով,
Ամբողջ կոկորդով շեփորը ճղղաց,
Գալարափողը փնթփնթաց դժգոհ:
Լռեց ֆլեյտան՝ կոկորդում արցունք
Եվ թավջութակը հառաչեց երկար.
Գալարվեց հողմը դատարկ փողոցում...
Վոլֆգանգ Ամադեյ Մոցարտը չկա:

ԲՈԼՈՐԻՑ ԲԱՐՁՐ

Հաղթահասակ էր Մյուրատն Հովակիմ,
Մազերը գանգուր, աչքերը լազուր,
Երբ Նապոլեոնը կանգնում էր կողքին,
Հազիվ էր նրա ուսերին հասնում:

Եվ Բոնապարտը նեղվում էր մտքում՝
Մյուրատն իրենից ո՞նց բարձր լինի,-
Միշտ որոնում ու մի քար էր գտնում,
Հպարտ, փառահեղ կանգնում էր քարին:

Ահա մի անգամ Մոդենայի տակ,
Երբ Նապոլեոնը կանգնած էր քարին -
Գալիս է հեռվից ինչ որ սուրհանդակ,
Հարցնում՝ կայսրն ո՞վ է ձեզանից:

Մարշալ Մյուրատը իբր չի լսում,
Եկվորը կրկնում է իր հարցը նորից,
Եվ Մյուրատն այստեղ ժպտում է, ասում.
- Նա, որ բարձր է կանգնած բոլորից:

ՊԱՏԿԵՐ

Հռոմն էր վառվում: Նայեց բարձունքից
Կայսր Ներոնը վառվող Հռոմին
Եվ աղաղակեց զվարթ, ցնծագին.
- Օ՜, հիասքանչ պատկեր է սա մի:
- Իրավ, նայեցե՛ք, ո՜վ ազնիվ այրեր,-
Գոչեց այլայլված սենատոր մի ծեր,-
Այսքան հիասքանչ, գեղեցիկ պատկեր
Կարող է միայն կայսրը ստեղծել:

ՊԱՏԱՍԽԱՆ

Պուշկինին ասաց մի պալատական.
- Վերջապես գոհ է ձեզնից մեր արքան,
Կարող եմ ասել, տիրակալը մեր՝
Ձեր նոր պոեմը շատ է հավանել:
Եվ պատասխանեց Պուշկինը այսպես.
- Մեր թագավորին ճանաչում եմ ես.
Այդ օրը, անշուշտ, կամ շատ է կոնծել,
Կամ էլ կարդացել ու չի հասկացել:

ԲԱԹՈՒ ԽԱՆ

Մեծ ավազակ էր ու մեծ սրիկա
Այս Բաթու խանը խորամանկ ու նենգ,
Ինչ երկրներ էլ նվաճում էր նա,
Թողնում էր մի հետք:
Բճեր էր թողնում օտար կանանցից,
Իր նման ճարպիկ, նեղաչք աղվեսներ,
Հրաման արձակում երեք տարի անց.
- Գնանք հավաքենք զավակներին մեր:

Հրով ու սրով գալիս են ջարդում,
Թալանում, վառում ու անում գերի,
Մեղքը ջարդվողի վրա են բարդում.
- Դուք ո՞նց գողացաք մեր զավակներին:
Բճերի մայրերն ի՞նչ պատասխան տան,
Նամուսի հարց է, դժվար է բանը:

Մեծ զորավար էր ու մեծ սրիկա
Խորամանկ ու նենգ այս Բաթու խանը:

1985 թ.

ԴԻՈԳԵՆԵՍ

Նա շատ քիչ բան էր աշխարհից ուզում՝
Թեկուզ դեն նետած տակառ մի դատարկ.
Որ անձրևներին չթրջվի դրսում,
Տոթին չվառվի բարկ արևի տակ:
Իսկ ինչո՞վ է վատ՝ տակառում քնել,
Ինչպես խրճիթում՝
հանգիստ,
փառավոր,
Երբ կարելի է բռով ջուր խմել,
Ավելորդ թասը ո՞ւմ է հարկավոր:
Մեծ փիլիսոփան այսպես էր ապրում
Ու բավարարվում աստծո տվածով,
Ոչ ոքի առջև գլուխ չէր ծռում,
Դռներ չէր ծեծում անձնական հարցով:
Մեծավորներին նա չէր դրվատում,
Կանանց ետևից նա քարշ չէր գալիս,
Մի կտոր չոր հաց, բուռ ոսպ էր ուտում,
Խեղճերին ձրի խորհուրդներ տալիս:
Իսկ ի՞նչ էր ուզում նա ապացուցել
Տեր ու ստրուկի իր դժվար դարում,-
Որ խելոք միտքը կարող է նաև
Ծնվել մի ինչ որ լքված տակառում:

1984 թ.

ՊԱԳԱՆԻՆԻ ԵՎ ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ճակատագրի ի՞նչ նմանություն
Պագանինիի և Պրոմեթևսի,
Մեկը կրակ էր պարգևում մարդուն
Ու արժանանում զայրույթին Զևսի,
Մյուսն անմահ հնչյուններ կորզել
Եվ իր ջութակով աշխարհն էր ցնցում,
Մեկն առասպելի անգո հերոս էր,
Մյուսն հասարակ մի մահկանացու,
Մեկին աստված է բիրտ ժայռին գամել
Անարդարության շղթաներով ծույլ,
Մյուսին նախանձ միջակությունն էր
Գիշեր ու ցերեկ անվերջ հալածում:
Եվ նույնն էր տենչը երկուսի սրտում՝
Ծառայել մարդուն խղճով անբասիր.
Ճակատագրի ի՞նչ նմանություն
Պագանինիի և Պրոմեթևսի:

1984 թ.

ԴՈՆ ԿԻԽՈՏ

Դեմս կանգնել ես ահա դու նորից՝
Քո ասպետական կեցվածքով տոչոր,
Ռոսինանտով քո, որ ընկել հալից,
Բայց դեռ վարգում է դարերի միջով:
Հուզված ես, գիտեմ, գուցեև դժգոհ,
Որ քո դարն այդպես էլ չհասկացավ
Եվ չգնահատեց սխրանքները քո,
Չձոնեց փառքիդ մարմարե արձան:
Սակայն փառք էիր դու տենչում մի՞թե,
Հարկավո՞ր էր քեզ բեռը այդ հետին,
Երբ սուրում էիր հողմաղացի դեմ՝
Ազնիվ մղումով խիզախ ասպետի:
Ընդդիմանալով ծաղրուծանակին,
Արհամարհելով հեգնանքը այրող,

Դու փորձում էիր ետ բերել կրկին
Դարն հանդուգների... նիզակիդ ծայրով:
Այս արևի տակ ո՞ր խելագարն է
Եղել քեզ նման այդքան հանճարեղ,
Ո՞ր ցնորվածը, ո՞ր մտագարն է
Աշխարհին այդքան ծիծաղ պարգևել:
Օ՜, Լամանչեցի փառապանծ ձախորդ,
Տխուր պատկերի ասպետ դու տոկուն,
Իսկ մի՞թե հեշտ է լինել Դոն Կիխոտ,
Ապրել խելագար, մեռնել իմաստուն:
Երեք դար ու կես զրահը հագին
Քայլել հավերժի ճամփեքով խոտոր,
Սանչո Պանսային արած զինակիր
Եվ հալից ընկած մի Ռոսինանտով:

1984 թ.

ԷՎՐԻԿԱ

Նա մտամփոփ էր, երբ բաղնիք մտավ,
Ցրված մի տեսակ, հենց իրեն հատուկ,
Ո՞ւր է օճառը: Այստեղ է՝ գտավ,
Իսկ որտեղի՞ց է ցուրտ ջուրը կաթում:
Նոր տոգան էլի տանն է մնացել,
Բա ո՞ւր են խցկել գուլպաները նոր:
Էհ, ծառա Հեկոն շատ է ծերացել,
Հանգստանալ է նրան հարկավոր:
Չէ, այսօր պետք է լողանալ մի քիչ
Եվ շոգեհարվել, ինչպես որ հարկն է,
Մարմինը շատ է գոլ ջրի ծարավ,
Խոսք չկա, պիտի պահանջը հարգել:-
Եվ թասը լցրեց նա բերնեբերան,
Բռնեց զույգ ձեռքով, գլխին շուռ տվեց,
Ճերմակ ամպի պես գոլորշին ելավ,
Մեղմիկ ու թեթև բաղնիքում ցրվեց:

Թո՛ւհ, օճառն էլի թասի մեջ ընկավ,
Ավելորդ ջուրը հոսեց կողերից:
Նստեց ծալապատիկ ու նայեց երկար,
Թասի մեջ սուզեց օճառը նորից.
Կրկնեց նույն բանը մի քանի անգամ
Ու մատը դրեց օճառված քունքին:
Մենակ էր, կողքին ուրիշ մարդ չկար,
Վերուվար արեց նժարներն հոնքի
Եվ ցատկեց տեղից մերկ, առանց տոգա,
Նետեց իրեն բակ, գոռաց՝
էվրիկա...
Ինչ որ դուռ բացվեց, ինչ որ մեկն ասաց՝
Մեր գիտնականը ցնդել է, աստված:
Ինչ որ մի լակոտ փողոցում ճչաց.
- Արքիմեդը մե՞րկ ու քամակը բա՞ց:-
Մի պառավ կնիկ դեմքը շուռ տվեց՝
Այդ անամոթին պետք է մի լավ ծեծ...
Բաղնիքի տերը՝ Աթոս Արգետին,
Որ շատ էր հարգում մեծ Արքիմեդին,
Քաշեց տարավ ներս և ասաց.
- Իմ տեր,
Խնդրում եմ, ասա, այդ ի՞նչ ես գտել:
Թե Արքիմեդը ինչ պատասխանեց,
Այդ պատասխանից բաղնիքի տերը
Ինչ գլուխ հանեց -
Դա կլինի մի երկար պատմություն:
Թող Արքիմեդը գնա իրենց տուն,
Հագնի նոր տոգան,
Հագնի նոր գուլպան...
Իսկ մենք զավակը լինենք մեր դարի,
Տիրոջ աչքերով նայենք աշխարհին,
Սիրող որդու պես մենք գրկենք նրան,
Մահվան զենքերից մենք փրկենք նրան,
Պահենք, պաշտպանենք գունդն այս արևկա,
Գտնենք, նոր միայն գոչենք՝ էվրիկա...

* * *

Երբ Բրունոյին առան կալանքի,
Վենետիկում ջինջ արև էր, գարուն,
Բակում ջնար էր նվագում մի կին
Եվ երկրագունդն իր պտույտն էր անում:

Երբ Բրունոյին նետեցին զնդան,
Երկինքը մութ էր, անձրև էր մաղում,
Խշշում էր նոճին բարձրակատար
Եվ երկրագունդն իր աղունն էր աղում:

Երբ Բրունոյին տարան քննության,
Մոմի թույլ լույսն էր խուցում թրթռում,
Եվ վերջանում էր կարճ օրը ձմռան,
Երկիրն արևի շուրջն էր պտտվում:

Երբ Բրունոյին մեղադրեցին,
Աստված հաճույքով իր փորն էր քորում,
Եվ վրնջում էր փողոցում մի ձի,
Երկիրն առանցքի շուրջն էր բոլորում:

Երբ Բրունոյի դատավճիռն էր
Կարդում ճիզվիտը հրապարակում,
Քամին երկնքից ամպերը ցրել,
Երկիրն իր պտույտն էր շարունակում:

Երբ Բրունոյին ձգեցին խարույկ՝
Անվանարկելով անհավատ ու պիղծ,
Հազար վեց հարյուր թիվն էր աշխարհում
Եվ պտտվում էր երկիրը նորից:

Երբ Բրունոյի մոխիրը դեռ տաք -
Հավաքել էին ու տվել քամուն,
Կղեմոս պապի թույլ ոտքերի տակ
Հողագունդը իր պտույտն էր անում,

Բակում ջնար էր նվագում մի կին,
Գալիլեյն արդեն դարձել էր հանճար,
Եվ պտտվում էր Նոլացու ոգին
Հողագնդի հետ հավետ անվախճան:

Եվ ծնվում էին նոր Բրունոներ՝
Ընդդեմ չարագույժ խավար ու մութի,
Որ Երկիր կոչվող մոլորակը մեր
Միայն արևի շուրջը պտտվի:

1984 թ.

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ՝ ԿԱԽԱՂԱՆ

Կարծես կրծքիս տակ մակընթացում է
ծովը տեղահան.
Թագավորներին դեպի կախաղան:
Շանդոր ՊԵՏԵՖԻ

Սպան հարբած էր, դժվար էր քայլում,
Թեթև գինով էր սերժանտ Կոբերան,
Թեկուզ երգից բան չէին հասկանում,
Բայց գոռում էին դառած մի բերան.
- Թագավորներին դեպի կախաղան:
Երգը լսել են ինչ որ պանդոկում,
Երգում էր մաջար քարտաշի տղան,
Հռհռում էին ու աղաղակում.
- Գրողը տանի, ճի՛շտ է, կախաղա՛ն:

Եվ նրանք մտան լքված մի պարտեզ,
Մի մարդ էր ընկած թփի տակ վարդի,
Բայց ոչ, մեռած չէր, շարժվում էր կարծես,
Շշնջում կամաց՝ օգնեցե՞ք, մարդիկ:
Կողքին ընկած էր դեղնակազմ մի գիրք,
Ճակատին գրած՝ Շանդոր Պետեֆի:

Հռհռաց սպան.
- Է՛յ, սերժանտ Քիքի,
Այս մարդն ինչո՞ւ է պառկել իր քեֆին:
Ու կրակեց նա ատրճանակից,
Մռլտաց.
- Առ քեզ, հեղափոխական.
Այս մաջարները զզվեցրին ինձ...
Բայց սա մերոնցից չլինի հանկարծ:
- Ոչ, մերոնցից չէ,- սերժանտը ասաց,-
Խռովարար է, հերոս է տղան,-
Հետո քթի տակ նա երգեց կամաց.
- Թագավորներին դեպի կախաղան:

Սպան հարբած էր, տգետ ու ցանցառ,
Սերժանտը բութ էր, սակայն կյանքից գոհ,
Այդ տականքները արդյոք հասկացա՞ն
Ո՞ւմ են սպանել օրը ցերեկով:
Մեծ ու բոցաշունչ պոետի հունգար,
Որ հավասար էր անգամ Պուշկինին,
Եվ բռնության դեմ ելավ ինքնակամ,
Մարտակոչ նետեց աշխարհի դեմ հին:
Նա բարձր պահած դրոշը բոսոր՝
Բարիկադներում կանգնեց անվարան
Ու ձայնը նրա ղողանջեց հզոր.
- Թագավորներին դեպի կախաղան:

ՀԱՆՆԻԲԱԼ

Կարթագենն ընկավ, և Հաննիբալը
Փախավ հեռավոր ու անհայտ ափեր,
Այո, հիրավի մեծ է աշխարհը,
Բայց նա տեղ չուներ, որ իր ձին կապեր:
Եվ փնտրում էին հոռոմներն անգետ,
Որոնում էին հետքերը նրա,

Ի՞նչ գիտես, մեկ էլ նոր զորք հավաքեց,
Նորից հարձակվեց Հռոմի վրա:
Եվ Հաննիբալը գտավ վերջապես
Մի խաղաղ անկյուն աշխարհի ծայրին,
Նոր տուն կառուցեց, այգի ու պարտեզ,
Ստրուկներ վարձեց, առավ ջահել կին:
Այդպես ապրում էր զորապետը մեծ՝
Աշխարհի ծայրին, իր իսկ հարկի տակ,
Մեկ էլ չգիտես որտեղից հայտնվեց
Իր հին թշնամին՝ սենատոր Կատոնն:
Եվ Հաննիբալի որդուն նա գրկեց,
Գանգուր մազերը շոյեց հայրաբար.-
- Անունդ ի՞նչ է, տղաս,- հարցրեց,-
Եվ պատասխանեց տղան.
- Հաննիբալ:
Ծեր սենատորը գունատվեց հանկարծ,
Դողաց ողջ մարմնով, գոռաց շնչահեղձ.
- Մի Հաննիբալը քի՞չ էր, ո՞վ աստված,
Մի Հաննիբալ էլ աշխարհում ծնվեց:

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Բանաստեղծներին ի՞նչ կյանք է տրված՝
Տառապանքներով ապրել ու երգել,
Զգալով սակայն, որ բախտն անկասկած
Իրենցից վաղուց երես է թեքել:
Ի՞նչ երջանկություն և ի՞նչ փառքի տենչ,
Այդպիսի փառքը ո՞ւմ է հարկավոր,
Երբ սուր փշեր կան դափնիների մեջ,
Թույնով թաթախված խոսքեր նենգավոր:
Արքունիքում տոն եղավ պարզապես
Եվ ամենից շատ ցնծաց ինքն՝ արքան,
Նվագախումբը վալս թնդացրեց,
Երբ մենամարտում Պուշկինը ընկավ:

Իսկ Ռուսաստանում այդ ո՞վ չգիտեր,
Թե ինչու զոհվեց իր ազնիվ որդին...
Երբ Պուշկինն ընկավ, Մարտինովն արդեն
Նշան էր բռնել մի այլ պոետի:
Նշան էր բռնել, ձեռքը չէր դողում
Եվ չէր կասկածում՝ վրիպի հանկարծ,
Իսկ Լերմոնտովին հայտնի էր վաղուց
Իրեն ինչպիսի բախտ է վիճակված:

Բանաստեղծները ծառեր են՝ կանգնած
Մայր հողի վրա հպարտ, հաստատուն,
Նրանց ճյուղերին՝ թունոտ ու նախանձ
Անտաղանդներն են միշտ քարեր նետում:
Բանաստեղծներին ի՜նչ ճակատագիր,
Ի՜նչ սիրտ է տրված բանաստեղծներին.
Տանել անմռունչ հարվածը կյանքի
Ու հպարտ նայել մահվան աչքերին:
Երբ բիրտ գնդակից Պետեֆին ընկավ,
Գարսիա Լորկան աշխարհ չէր եկել,
Բայց երկրի վրա այն դահիճը կար,
Որ նրան մի օր պիտի գնդակեր:
Հին պատմությունը նորից կրկնվեց
Եվ այն էլ կեսին քսաներորդ դարի,
Նա, ով Լորկային նշան էր բռնել,
Պղծեց շիրիմը անմահ Կոբզարի:
Ճիգե՜ր ապարդյուն...
Բռնակալները
Թող կրճտացնեն ատամներն իրենց -
Բանաստեղծներն են աշխարհի տերը
Ամենահզոր ու ամենամեծ:
Բանաստեղծներին մահ չկա հավետ -
Ծնվում, ապրում են, այրվում, լույս տալիս,
Եվ ապա ամեն նոր սերնդի հետ
Բանաստեղծները աշխարհ են գալիս:

1981 թ.

ՄԵԾԵՐԻ ԲԱԽՏԸ

Նշան բռնեցեք
բանաստեղծներին
Եվ պատմության մեջ
Կմնաք հավետ:
Ռ. ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ

Մեծերի բախտն է -
Կարծես նախօրոք կանխագուշակված,
Հատուկ պլանով
հղկված,
մշակված,
Հաստատված արդեն...
Պուշկինի դիմաց պիտի անպայման
Լիներ մի Դանտես,
Որ մենամարտեր,
սպանե՞ր նրան,
Մոցարտին պիտի դարանակալեր
Սալիերին թունոտ,
Իսկ Լերմոնտովին նշան պիտ բռներ
Ինչ-որ Մարտինով...
Գոռոզ լորդերի դավից չարագին -
Բայրոնը պիտի դառնար տարագիր,
Գրիբոյեդովը կամոք ի վերին՝
Զոհ գնար պարսիկ մարդասպաններին:

Մեծերի բախտ է -
Այո, այդպես է տերը կամեցել,
Որ Սենեկան իր երակը բացեր,
Եվ Սայաթ-Նովան՝
փառքերի արժան -
Օտարի հրին ու սրին գնար,
Աբովյանը՝
իր երկրում քարաշատ -
Անշիրիմ մնար,
Կրահորի մեջ Պետեֆին այրվեր,
Թոքախտից մեռներ Դուրյանը ջահել,
Որ մի սրիկա,

Իսպանացի մի ֆաշիստ անգետ -
Գրենադայի հանճարեղ երգիչ
Լորկային զարկեր...

Մեծերի բախտ է,
Եվ ո՞վ կարող էր այդ կարգը խախտել,
Խուսափել ահեղ ճակատագրից ...
Իսկ դու, բանաստեղծ,
Քո երգը գրիր,
Ճանապարհդ քո երգերով հարթիր,
Որ արժանանաս մեծերի բախտին՝
Ոչ միայն դարիդ «պարգևած» վերքով,
Այլև քո պայծառ և ըմբոստ երգով,
Եվ հիշիր նաև՝
    որ մեծությունը
Չափվում է ոչ թե սոսկ ապրած կյանքով,
Այլ՝ ապրած կյանքի վսեմ խոյանքով:

ԹԱՄԲԻ ՎՐԱ

Պառկած էր մահճին հունաց մեծ արքան,
Բժիշկներն անվերջ գալիս են, գնում,
Բոլոր դեղերն էլ փորձել են, սակայն
Վիճակը նորից դեռ նույնն է մնում:
Եվ ինքն էլ՝ արքան հաշտվել էր կարծես
Մահվան մտքի հետ: Էլ չէր բողոքում,
Անխուսափելին հեռու չէր, գիտեր,
Ինչ որ մի տեղից նայում է թաքուն:
- Բայց դեռ ապրում եմ,- և արքան կամաց
Բարձրացավ տեղից ու թիկնեց բարձին,
Նույն զորավարն եմ, նույն արքան հունաց,
Նույն Ալեքսանդր Մակեդոնացին:
- Բերել ձիս,- գոչեց,- զենքերս բերեք,
Ռազմի շեփորը թող հնչի կրկին,
Իմ բարեկամներ, ի զեն, շուտ ելեք,
Թե որ մեռնել է, թող մեռնեմ թամբին:

Նոր տերություններ նվաճեց արքան,
Բազմաթիվ նավեր խորտակեց կրկին
Եվ բերդեր գերեց... ու մեկ էլ հանկարծ
Նվաղած ձեռքը դրեց լայն կրծքին:
- Ահա քեզ գտա,- խնդաց մահը սին
Եվ զնգաց ժանգոտ գերանդին նրա:
Պատասխան տվեց Մակեդոնացին.
- Սակայն մեռնում եմ ես թամբի վրա:

ԱՅՍ ՊԸԼԸ-ՊՈՒՂԻՆ

Երկու դար ու կես քայլում է մեզ հետ,
Բռնած ծիծաղի անվախճան ուղին,
Իր խոսքով շիտակ, միշտ խելոք ու խենթ -
Ասք, լեգենդ դարձած այս Պըլը-Պուղին:

Մեզ հետ նստում է քեֆ ու խնջույքի,
Խայթում սուտ մարդկանց՝ առանց երկյուղի,
Դառնում պաշտամունք, դառնում է ոգի -
Մեծ ճամփա անցած այս Պըլը-Պուղին:

Մանկանց հետ մանուկ, մեծի հետ մեծ է,
Մեր Արցախի պես և՛ նոր է, և՛ հին,
Շիտակ է հոգով, սրտով անկեղծ է
Միշտ ճակատը բաց՝ այս Պըլը-Պուղին:

Մեր գինու նման քաղցր է ու թունդ,
Հրաշք է, ինչպես մեր թթի օղին,
Ապուպապերիս խոսքն է իմաստուն -
Պայծառ, սրտաբաց այս Պըլը-Պուղին:

Երկու դար ու կես քայլում է մեզ հետ,
Բռնած հավերժի անվախճան ուղին,-
Ղարաբաղաբույր, ղարաբաղակերտ,
Ղարաբաղացած այս Պըլը-Պուղին:

1983 թ.

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակն ինչքան կուռքեր տապալեց,
Որքան ասպետներ կորան անանուն,
Հեշտ չէ ճակատին դափնիներ պահել
Մեր այս ահեղ ու անհանգիստ դարում:

Ապաշնորհն էլ փառք է երազում,
Փառքի են ձգտում տգետներն անգամ,
Թեկուզ քչերն են բարձրանում գագաթ,
Բայց անմահանալ բոլորն են ուզում:

Անմահությունը ոչ շքահանդես
Եվ ոչ էլ տոմս է վիճակախաղի,
Ծանրաձող չէ այն, որ գետնից պոկես,
Սահմանես ռեկորդ համաշխարհային:

Գրչով հաստատված կոչում չէ էժան
Կամ թե մրցանակ՝ սնդուկում պահես,
Եվ ոչ էլ մեդալ կամ շքանշան,
Որ տոն օրերին կուրծքդ զարդարես:

Այն ոչ կոդեքս է, ոչ էլ հրաման՝
Վավերացրված կնիք ու գրով,
Ոչ էլ մրողի մի թույլ դրամա,
Մեջքին հրելով բեմ տանես զոռով:

Նրանց համար չէ անմահությունը,
Ովքեր քծնությամբ պաշտոն ստանում,
Դրոշակ են դարձնում շեֆի անունը,
Նրա ճառերից մեջբերում անում:

Եվ ոչ էլ նրանց համար է, ովքեր
Սիրում են շուքով նիստ ու հանդիպում,
Եվ համարվելով ճանաչված դեմքեր,
Իրենց գրքերն են արտահերթ տպում:

Անմահությունը բրոնզե արձան չէ,
Որ կանգնեցնես տեսարժան վայրում,
Տեսնես ինչպես են բերանբացները
Զարմացած նրա սֆաթին նայում:

Անմահությունը... պատվանդան է դա՝
Ժամանակների ոգին անբասիր,
Վրան անունդ գրելուց առաջ՝
Մտածիր նաև պահելու մասին:

Այդ պատվանդանին թե որ ուզում ես
Հավերժի, փայլի փառքդ լուսահորդ,
Պիտի լինես կամ ըմբոստ Սերվանտես,
Կամ Լամանչեցի անմահ Դոն Կիխոտ:

1981 թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Եվ տերը կանչեց սուրբ դազավաթի
Գյավուրների դեմ, կեղտոտ հայերի,
Շեյխը կոչ արեց՝ խփեցեք իթին,
Թե չէ՝ կգան ու բազմանան էլի,
Խլեն մեզանից մեր տունն ու տեղը,
Մեր մուլք-դովլաթը, մեր գիտությունը,
Ա՛յ թող կտրվի դրանց գող ցեղը,
Վալլա՜հ, քանդեցին դրանք մեր տունը:

Եվ ելան նրանք՝ հպատակները
Սուրբ Մուհամեդի ու Փեղամբարի.
- Խփե՛ք գյավուրին, վառե՛ք տները,
Մի՛ թողեք քարը դնեն մի քարի.
Իրենց հավատը ինչո՞ւ չեն փոխում,
Ինչո՞ւ են կեղտոտ խոզի միս ուտում,
Մեր կոխած հողը ինչո՞ւ են կոխում,
Իրենց որդոց էլ դեռ չեն թլպատում:

- Յա՜, ալլահ, ալլա՜հ, հայից մեզ փրկիր,
Իրենց բերանի համն էլ չգիտեն,

Գինի են խմում, պահում են մի կին,
Շախսեյ-վախսեյին գնում են միշտ դեմ,
Իրենց մազերին հինա չեն դնում,
Նամազ չեն անում արքին ու սարքին
Քեչայի վրա երբեք չեն քնում
Մեզ նման՝ փալաս-փուլուսը հագին:
Եվ ելան նրանք՝ ցեղերը վայրի՝
Թալեաթով իրենց, իրենց շարիաթով.
Ինչո՞ւ է աստված ստեղծել հային՝
Թուրքերի կողքին՝ հայի մռութով:
Ինչո՞ւ են նրանց շորերը մաքուր,
Եվ կանայք ինչո՞ւ չադրա չեն կրում,
Շալվարի տակից թուման են հագնում,
Ոչ գողանում են և ոչ էլ խլում:

Երբ տերը կանչեց սուրբ ղազավաթի,
Եվրոպան դրել գլուխը բարձին,
Անկարաներից լսում բայաթի
Եվ այլ կողմից են մոտենում հարցին:
Թուրքերը, ճիշտ է, բարբարոս են, նենգ,
Բայց դե հայերը էլ ի՞նչ են ուզում,
Մի քանի հազար ոսկի է, տվեք,
Եվ ապրեցեք ձեր Վանում ու Կարսում:

Երբ Թուրքիան ելավ սուրբ ղազավաթի-
Հայացքը հառած բարձր Մասիսին,
Եվրոպան թուրքի պորտապարն էր
Ուսումնասիրում պատմության դասին:

ԱՐՔԱ ԱԼՖՈՆՍԸ

Դատարկ մարդ էր Ալֆոնս արքան
Գիշեր-ցերեկ քեֆ էր անում,
Եվ կոնծում էր շունը այնքան,
Որ շալվարը կինն էր հանում:
Հարբած արքան մրափում էր,

Ելնում հաջորդ օրվա կեսին,
Տերությունը թողած անտեր,
Չէր մտածում վաղվա մասին:
Այնպես եղավ, որ մի անգամ
Երկիր խուժեց թշնամին,
Բայց հարբած էր Ալֆոնս արքան,
Եվ այդ պահին նա ի՞նչ անի:
Կինն ամուսնու շորերն հագավ,
Կապեց զենքը ու հեծավ ձին.
- Ելե՜ք,- ասաց,- հանուն ի գահ,
Իմ զինվորներ առյուծածին:
Եվ զենքերը շաչեցին զիլ,
Քաղաքի տակ ոսոխն ընկավ,
Հետո հաջորդ օրվա կեսին
Քնից ելավ հարբած արքան:
Ելավ և ի՞նչ տեսնի գահին՝
Գինու բաժակ, գինու շիշ էր,
Եվ նա այստեղ դողաց ահից,
Բայց դե ուշ էր.
Թոկը վերից սև օձի պես
Ճանկեց նրա վիզը հանկարծ...
Ուրիշ ի՞նչ է հարկավոր ձեզ,
Դատարկ մարդ էր Ալֆոնս արքան:

ԽԱՉԱԿԻՐՆԵՐԸ

Նրանք ասացին.
- Երուսաղեմը ահա՝ ձեր ուզած,
Ահա և տիրոջ գերեզմանը սուրբ,
Մենք քանի՜ տարի պահել ենք ուսած՝
Այս սուրբ տապանը դարձրած սուրբ մասունք:

Եվ մենք ասացինք.
- Տիրոջ գերեզմանն ինչո՞ւ է ձեզ մոտ,
Ի՞նչ ունեն ձեզ մոտ մասունքները սուրբ,
Տաճարն ինչո՞ւ է այսքան գարշահոտ,
Արդյոք, մա՞րդ եք, թե՞ կեղտոտ անասուն:

Նրանք ասացին.
- Ալլահը վկա, լավ բան չեք անում,
Դատարկ տեղն ինչո՞ւ բազար եք բացում,
Սա մեր երկիրն է, մեր հողը, ջանը,
Մենք ոչ ձեր ճորտն ենք, ոչ ստրուկը ձեր:

Եվ մենք ասացինք.
- Լռեք, շան տղերք, ո՞նց չեք ամաչում,
Առանց ամոթի խոսում էլ եք դեռ,
Հիմա որտեղի՞ց իմանանք, սրանք
Սուրբ մասունքնե՞ր են, թե՞ շան ոսկորներ:

Նրանք ասացին.
- Յա՜, սուրբ Մուհամեդ, այս ի՞նչ պատիժ է,
Այս ո՞ւր ենք հասել, օգնի՛ր մեզ, ո՛վ տեր,
Անհավատներն այս կատարյալ գիժ են,
Ուզում են նորից մեր տունը քանդել:

Եվ մենք ասացինք.
- Քանի տարի է, արյուն եք թափում,
Ցեղեր եք ջնջում երկրի երեսից,
Դուք կեղծ մասունքով հիմա մեզ խաբում,
Ուզում եք դարձնել մեզ էլ սրբապի՞ղծ:

Նրանք ասացին...
Չէ, չթողեցինք, որ նրանք խոսեն,
Մենք դեռ առջևում թեժ մարտեր ունենք,
Նոր արյան գետեր դեռ պիտի հոսեն,
Մենք ազնիվ, արդար խաչակիրներ ենք:
Այդ սուրբ մասունքի հերն էլ անիծած,
Մերը մի թուր է, մի վահան, մի ձի,
Կշարունակենք կռիվն անկասկած,
Մերը կդարձնենք աշխարհը անծիր...

Եվ մենք այդպես էլ նրանց ասացինք:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրացան պայթեց փերունց քարափին,
Մի սև ձիավոր փախավ ձորն ի վեր,
Եկան ասացին, թե Ավան պապին
Օսմանցի Նիազ Մուսան է սպանել:
Եկան քննեցին ու հաստատեցին՝
Մուսան է որ կա, դա գործն է նրա,
Երեք տարի անց, տակին մի սև ձի-
Եղբոր հետ Մուսան Ղորանի վրա
Երդվելու եկավ՝ ալլահը վկա
Ավան քիրվային ես չեմ սպանել:
Նրա գրպանում ատրճանակ կար,
Տակի այդ սև ձին պապիս սև ձին էր,
Ուսերին պապիս յափնջին երկար:
- Ձիաթափ լինես,- տատս անիծեց,-
Երես էլ ունես, տունս ես մտել...
Ակտիվիստ Համոն մի քիչ մտածեց,
Հորս ականջին շշնջաց՝ Արտեմ,
Հաշտվեցեք գնա, հաշտվեցեք, ջանըմ,
Պատիվ ու անուն ունես շրջանում:
Եվ պատմությունն էլ հենց այստեղ ծռվեց,
Ինչ որ պատմագիր խառնեց ամեն բան,
Օսմանցի Մուսան Արցախում ծնվեց,
Իսկ մենք էլ դառանք ազգությամբ ալբան:
Դիմեցինք մինչև դիստանցիան վերջին,
Սրանք լսեցին, նախատեցին մեզ.
- Պատմությունը՝ դա սայլի անիվ չի,
Որ ուզածիդ պես նստես ու փոխես:
Չէ, մեզ էլ տեղն է. Մուսան ավազակ՝
Այդ ինչպե՞ս է մեր կողմերը ընկել,
Որ գա նստի մեր ընկուզենու տակ,
Ասի՝ էս ծառը իմ պապն է տնկել:
Օ՜, բարեկամներ ունենք սրբապիղծ,
Անամոթաբար իրենցն են անում,
Երեկ մեր հողերն առել մեզանից,
Մեր պատմությունն են այսօր գողանում:
Մաշտոց չի եղել ու Խորենացի,

Սուտ են Վարդանն ու թագավորն Արշակ,
Բաբեկ է եղել քաջ ու առնացի
Եվ Դաչաղ Նաբի՝ ինքն էլ ֆեդմարշալ:-
Փաստերը մի՞թե խեղճ են ու անզոր.
Մուսան պղծել է մեր տոհմատունը,
Իսկ նրա թոռն ու ծոռները այսօր
Բռնած քերթում են մեր պատմությունը:

ՄԵԼԻՔ ԱՎԱՆ ՏԻԶԱԿՑԻՆ

Մեր Արցախը շատ քաջեր է ծնել,
Սակայն ուրիշ էր Ավան Տիզակցին.
Մի կողքից կախած հավլունի թուրն էր,
Մի կողքից՝ մաղախն արդար մեր հացի,
Նաև բազմաթիվ ոսոխներ ուներ,
Եվ բարեկամներ՝ լեռների արծիվ:
Երբ հետն ատելի ոսոխն էր խոսում,
Նա ձեռքը դեպի իր թուրն էր տանում,
Բարեկամին է երբ կողքին տեսնում,
Մաղախից հաց ու պանիր էր հանում:
Իսկ երբ չգիտեր խոսակիցն ով է,
Նենգ սրիկա՞ է, թե՞ քաջ դրացի,
Միշտ ձեռքի մեկը թրի վրա էր,
Իսկ մյուս ձեռքը մաղախին հացի:
Մեր Արցախը շատ քաջեր է ծնել,
Սակայն ուրիշ էր մելիք Տիզակցին:

ՄԵԼԻՔ ԵՍԱՅԻ

Շահը հյուր տարավ Մելիք Եսայուն,
Ցույց տվեց մարդկանց մեծ ու անվանի,
Եվ նայեց նրա աչքերին խոհուն
Ու ասաց.
- Որդի Մելիք Ավանի
Լսել եմ ես քո քաջության մասին,

Դու մարտերի մեջ լավ զորավար ես,
Իսկ ո՞վ կարող է դիպչել քո մազին,
Թե ինձ դաշնակցես, իմ կողքին լինես:
Ես քեզ կդարձնեմ պարսից զորապետ,
Եվ կունենաս դու շքեղ պալատներ,
Կնստես-ելնես միշտ մեծերի հետ,
Փառքերի արժան իշխան կլինես:
- Երկար տարիներ՝ շահին իմաստուն,-
Մելիք Եսային տվեց պատասխան,-
Լավ է իմ երկրում ծորտ լինեմ անտուն,
Քան օտար երկրում դրածո իշխան:

ՄԱՐԱՏ

Խփեցին նրան ուղիղ կռնակից
Եվ այն էլ փոքրիկ մի լողարանում,
Խփողը ստոր ու ծախու կին էր,
Փողոցային լիրբ՝ անտոհմ, անանուն:

Եվ ասում են, թե վերջին շնչում նա
Այսքանն է ասել տանջանքով անլուռ.
- Ափսոս՝ չմեռա ամբիոնի վրա,
Կամ զենքը ձեռքիս՝ բարիկադներում:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿՈԼՈՒՄԲՈՍ

Ամենից առաջ նա փառատենչ էր,
Խիզախ էր նաև ամենից առաջ,
Իր նավի վրա նա ամեն ինչ էր՝
Քաջ ծովակալ էր, հմուտ նավավար:

Հայտնաբերեց նա երկիրներ բազում,
Նոր ծովեր, գետեր, անտառներ մթին,
Իր առագաստն էր ամենուր պարզում
Ու մեկնաբանում հարցերը խրթին:

Բայց ինչպե՞ս եղավ, որ առաջինը
Նոր մայրցամաքը նա հայտնաբերեց,-
Չհասկացավ իր գտածի գինը,
Առանց տրտունջի ինքն իրեն ներեց:

Գուցե՞ փառքերից շատ էր շլացել,
Գլխապտույտ էր ապրում երևի,
Ամերիկա էր նա հայտնագործել
Եվ դա չլսված գյուտ էր հիրավի:

Իսկ գո՞ւցե իրոք մարգարե էր նա,
Գիտեր՝ երկիրն այդ շատ տարիներ անց
Աշխարհում մի նոր պատիժ կդառնա,
Իր փառքին ստվեր գցի անկասկած:

Եվ չէր ցանկանում հողագունդն անծիր-
Այդ Ամերիկան գտնելու համար
Իրեն անիծի:

ԼԵԳԵՆԴ ԱԴԱՄԻ ՄԱՍԻՆ

Երբ չէր ստեղծել Եվային աստված,
Ադամն իր քեֆին ապրում դրախտում,
Բարիքն էր խժռում աստծո տված
Եվ ծաղիկների բուրմունքով արբում:
- Իսկ նրա տաբատն ո՞վ էր կարկատում:

Ադամին պետք չէր տաբատ ու բլուզ:
Թափառում էր նա դաշտերում լազուր,
Պառկում քնում էր մինչև արշալույս՝
Հրեշտակների չքնաղ պարտեզում:
- Իսկ ի՞նչ էր տեսնում նա իր երազում:

Հեռո՜ւ-հեռավոր աշխարհ անծանոթ,
Ատոմային ռումբ ու սնկաձև ծուխ,
Հրանոթների ահարկու որոտ,
Աշխարհն անծանոթ՝ հրդեհի բոցում:
- Իսկ նա հեռավոր վշտից չէ՞ր կոնծում:

Դեռ չարն ու բարին չէր զանազանում,
Պերճ պարտեզներում թրև էր գալիս,
Սրինգ նվագում, երգեր հորինում
Ու արձանիկներ արարում քարից:
- Իսկ ո՞վ էր նրան հոնորար տալիս:

Ինքն էր իր գլխի տերը ու արքան,
Հարկավոր չէին նրան փառք ու գանձ,
Աչքածակ չէր նա և ոչ էլ ագահ,
Հոգին մաքուր էր ու սիրտը միշտ բաց:
- Երբ երջանիկ էր Ադամը այդքան,
Եվային ինչո՞ւ ստեղծեց Աստված:

Որ լինի Կայեն՝ Աբելի կողքին
Եվ մեծ ջրհեղեղ համաշխարհային,
Քրիստոսին մատնի Հուդան չարոգի,
Աշխարհն ավերեն հոները վայրի,
Խաչակիրները ելնեն արշավի,
Ավերեն գյուղ ու քաղաքներ անթիվ,
Եվ Մուհամեդը հանուն հավատի՝
Տանի իր հոտին սուրբ դազավաթի...

Եվ լինեն ջարդեր, ազգասպանություն,
Հազար մի ձևի ճակատամարտեր,
Եվ որբեր, որբե՜ր անտեր ու անտուն,
Դեր-Զոր,
Օսվենցիմ...
Օ, ներիր ինձ, տեր,
Թե որ ճշմարիտ դատելու լինենք՝
Աշխարհի ընթացքն այդ դո՛ւ ես շեղել,
Անշուշտ այս գործում քո մատը խառն է,
Մեծ խառնակիչը՝
այդ դու ես եղել:

1984 թ.

ԼԵԳԵՆԴ ԽԱՆԴԻ ՄԱՍԻՆ

Ադամը ծեգին արթնացավ քնից
Ու կանչեց՝ Եվա՛...
Բայց չկար Եվան:
Ախր ո՞ւր պիտի գնար նա տնից,
Ոչ ծանոթ ունի, ոչ էլ հարևան:
Եվ կանչեց նորից Ադամը՝
- Եվա՜,
Պատասխան չկար,
տնքաց նա անհույս,
Հետո առաջին անգամ լաց եղավ
Ու սարսափեց նա մենակ մնալուց:
- Եվա՜,- հառաչեց թշվառ Ադամը,-
Դրախտն առանց քեզ դատարկ է ահա:
- Եվա՜,- աղաչեց շվար Ադամը,-
Իմ կյանքն առանց քեզ ի՞նչ արժե հիմա:
Իսկ Եվան չկար,
ու վշտից հեծեց
Անմիտ ու բարի նախահայրը մեր,
Սիրտը ահ ընկավ,
ու նա կասկածեց,
Որ Եվան իրեն դավաճանում է:
Քնեց Ադամը տխուր ու խռով,
Ուրիշ Եվայի երազում տեսավ,
Վառվեց նա ուրիշ Եվայի սիրով,
Ուրիշ Եվայի երազում գտավ,
Ուրիշ Եվայի նա ասաց՝ Եվա,-
Եվ ուրիշ Եվան շշնջաց՝ Ադամ,-
Աչքին ուրիշ մի աշխարհ երևաց՝
Գեղեցիկ ու պերճ
դրախտից անգամ:
Իսկ երբ արթնացավ, արդեն կեսօր էր,
Նայեց ու տեսավ Եվան իր կողքին,
Բռնեց մազերից, գոռաց խելահեղ.
- Այդ որտե՞ղ էիր կորել, ստոր կին:
- Քեզ էի փորձում,- ծիծաղեց Եվան,-
Հիմա հասկացա, որ ինձ ատում ես:
- Ախ, կասկածո՞ւմ ես,- Ադամը հևաց,

Իսկ Եվան ճչաց.
- Դու ինձ խանդում ես...
Ի՜նչ տուրուդմփոց, ի՜նչ կոծ ու կական,
Խոսքը խոսք բերեց,
առան, տվեցին...
Ահա աշխարհում առաջին անգամ
Կասկածն ու խանդը այսպես ծնվեցին
Ադամ-Եվայի ժամանակներում:
Ապահարզանը դեռ շա՜տ էր հեռու...

ՍԵՎ ՎԵԶԻՐԸ

Հ. Ալիևին

Երբ հաստատ էր գահին արքան,
Նրա աջը սև վեզիրն էր,
Նրա կեղտոտ գործի վկան
Եվ սուրբ խաչը սև վեզիրն էր:
Արքան որտեղ ճառ էր ասում՝
Ճափ տվողը սև վեզիրն էր,
Արքան խեր ու շառ էր խոսում՝
Չափ տվողը սև վեզիրն էր:
Ուր ոտք դնում տիրակալը՝
Նրա կողքին սև վեզիրն էր,
Մեջքին կանգնած ամուր սարը
Միտքն ու հոգին սև վեզիրն էր:
Ողջ տերության ծանր լուծը
Խալխի մեջքին ու վզին էր,
Իսկ պալատում մեծ արքայի
Խորհրդատուն սև վեզիրն էր:
Տերությունը իրար խառնվեց,
Եվ խառնողը սև վեզիրն էր,
Պալատն, ասին, գող է մտել,
Ու այդ գողը սև վեզիրն էր:
Երբ սթափվեց տիրակալը՝
Կյանքը արդեն օրհասական էր,
Եվ դղրդաց ողջ աշխարհը՝
Գահի վրա սև վեզիրն է:

1980 թ.

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» դրամայից

ՓԱՌԱԲԱՆՈՒՄՆ

Թե իմ մայր հողն ես,
Ես քո հողմաթեք թթենու բունն եմ,
Կածաններիդ ու ճամփեքիդ բացված
Ապրեմ-չապրեմիդ տոկունությունն եմ:
Քո քաված մեղքն եմ, քո անմեղ մեղան,
Խաչված Հիսուսդ՝ աշխարհին ի ցույց,
Ես՝ վանքում փակված քո խեղճ աբեղան,
Որ հառաչում է իր անհույս սիրուց:
Հնձաններիդ մեջ քլթքլթացող լուռ-
Ես քո խաղողի քաղցրությունն եմ,
Ես քո աղեղը, քո վահանը կուռ
Եվ քո ժայռերի կարծրությունն եմ:
Ամառվա տապին մեղմ զեփյուռ դառած-
Քո Մռավ ու Քիրս սարերի ձյունն եմ,
Հարսների աչքին արցունքով վառված-
Ես քո թախիծն ու տրտմությունն եմ:
Վաղվա գեղեցիկ հավատով ապրող,
Ցրտից չխամրող ծաղկունքիդ գույնն եմ,
Արևի փոքրիկ շողից չխաբվող-
Ես քո բողբոջի զսպվածությունն եմ:
Ես երազներն եմ քո հազարաձև,
Ես քո իմաստուն համբերությունն եմ,
Մելիք, խան ու բեկ կգան ու կանցնեն,
Ես, սրբազան հող, քո զորությունն եմ:
Ես՝ ապացուցված քո վեհությունը
Եվ քո ոգին ու երգը քաղցրաբառ,
Դու իմ հայրենի օջախն ու տունը,
Ճիչս Ղարաբաղ, խիղճս՝ Ղարաբաղ:

1975 թ.

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲՈՂՈՔԸ

Օ՜, տեր իմ, տուր ինձ ուժ ու զորություն,
Որ ճանապարհիս ինձ չկորցնեմ,
Տուր իմ մտքերին այնքան խորություն-
Արդարությունս արդարացնեմ:
Տո՛ւր արիություն ու կամք մի համառ՝
Ամեն զուռնայի ձենից չպարեմ,
Մի խակ ու թթու խնձորի համար
Ծառն ամբողջովին չթափահարեմ:
Տո՛ւր ինձ այնպիսի նուրբ լսողություն-
Չխաբվեմ-տարվեմ դատարկ կանչերից,
Եվ այնպիսի ձայն, որ այս աշխարհում
Բան հասկացնեմ խլականջներին:
Տո՛ւր ինձ այնպիսի մի համառություն-
Շաղակրատին չծափահարեմ,
Փղի կամ ուղտի համբերություն տուր-
Հարկ եղած դեպքում լեզուս ինձ պահեմ:
Տո՛ւր ինձ այնքան ուժ, որ կարողանամ
Այս տգետներին զուր չդրվատել,
Կախարդանք՝ փակված դռները բանամ,
Գլուխ չթեքեմ հիմարների դեմ:
Տո՛ւր ինձ իրավունք և ոգու ուժ տուր-
Ապուշի վրա ես էլ մատ ճոճեմ,
Եվ տեր իմ, տուր ինձ համարձակություն,
Որ իրերն իրենց անունով կոչեմ:
Չգողության ուժ տուր ինձ մագնիսի,
Որ ոսկուց ժանգոտ երկաթը զատեմ,
Եվ կարողություն, որ իմ ոսոխին
Ոսոխի նման մինչև վերջ ատեմ:
Տո՛ւր ինձ այնպիսի մի հաստատ հավատ,
Որ իմ հավատը չդավեմ հանկարծ.
Հեռու պահիր ինձ մարդկանցից կավատ
Ու զավզակներից նենգ ու բերանբաց:
Ա՛խ, տե՛ր իմ, տուր ինձ նաև չարություն,
Որ բարությանս գինը իմանամ,
Փխրունությանս կարծրություն տուր,
Որ ամեն ցավ ու վերքի դիմանամ...
Օ՜, տեր իմ, տուր ինձ,
Տո՛ւր ինձ, օ՜, տեր իմ:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏՐՏՈՒՆՋԸ

Ա՛խ, մարդիկ, մարդիկ,
Ախր աշխարհին այդ ի՞նչ եք տվել,
Որ ետ վերցնել չեք կարողանում...
Մեկը մյուսիս ցավը տանելով այսպես ապրում ենք,
Մեկը մյուսիս ցավը տանելով իրար խաբում ենք.
Մեկը մյուսիս լցրած բաժակով խմում-հարբում ենք,
Մի արշին առած՝
Մեկը մյուսիս անվերջ չափում ենք:
Մեկը մյուսիս շնորհավորում
Բաժակ-կենացով փքուն ու շինծու,
Իրար այնքա՜ն ենք սիրուն խոսքերով ստից մեծարում,
Որ մեծերն իրենց գերեզմաններից
Մեր գլուխգովան հերն են անիծում:
Գրկում, համբուրում ու ջան ենք ասում մեկը մյուսիս,
Որ իբր տեսեք, սիրում ենք իրար, հոգի չենք ծռում,
Բայց հետո գաղտնի մեկը մյուսիս ջաղացի ջուրը
Գնում շուռ տալիս,
Մեր բոստանների պղպեղն ենք ջրում:
Մեկը մյուսիս քնքուշ շոյելով-
Մեր իլիկով՝ մեր որոգայթների թելը մանում ենք,
Մեկը մյուսիս աչքին նայելով-
Օրը ցերեկով մեկը մյուսիս աչքը հանում ենք:
Մեր չեղած փառքը երկինք ենք հանում,
Մեկը մյուսիս ձեռքի մեջ խրած փուշը հանում ենք,
Վրան... աղ ցանում:
Դեմ-դիմաց իրար միշտ հաստատում ենք,
Իրար քարկոծում՝ իրարից թաքուն,
Մեր ճանապարհը մեկտեղ հարթում ենք,
Իրարից ծածուկ հարթածը քանդում:
Դհոլ-զուռնայով մեկը մյուսիս փառաբանելով՝
Եղինջի նման տակից դաղում ենք,
Եվ հաջորդ օրը դուդուկ-թմբուկով
Մեկը մյուսիս տանում-թաղում ենք:
Կյանք է, խաղում ենք:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՂՈԹՔԸ

Մեղա՜ քեզ, աստված...
Եթե դու ունես ամբարած քո մեջ այդքան զորություն,
Տո՛ւր հոգուս կորով, սրտիս մխիթարանք, մեղքիս՝ թողություն,
Տո՛ւր այնպիսի ուժ, որ համբերությամբ իմ խաչը տանեմ,
Եվ այնպիսի խելք, որ ծուռ մտքերը իմ գլխից վանեմ:
Լսի՛ր ինձ, տե՜ր իմ, ամենակարող,
Այս փուչ աշխարհում այնքան բաներ կան, տանել չեմ ուզում.
Այդ ինչի՞ համար տերը քացի տա,
Սակայն նոքարը կոչվի անասուն.
Մի՞թե չի զգում ամենազորեղ երկնային տերը,
Որ առանց պոչի չեն կարող ապրել շողոքորթները:
Եթե աստված ես, ինչո՞ւ ես թողնում լիրբը սրբանա,
Ինչո՞ւ մենք դատենք, իսկ չդատողը ուտի, լրբանա.
Թե հավասար են աշխարհում ամեն մի մահկանացու,
Այդ ինչո՞ւ իմ և մելիքի միջև սահման ես գծում.
Ինչո՞ւ դու նրան տալիս ես այնքան, որքան ուզում է,
Իսկ ով որ չունի՝ նրան խուզում ես:
Ներիր, ես ծուռ եմ, խելառ ու խենթ եմ, լեզու ունեմ սուր,
Չի այս աշխարհում ճշմարտությունը խենթերն են ասում:
Թե որ ուժ ունես՝ տուր ինձ զորություն՝ չվիճեմ քեզ հետ,
Բերանս փակիր՝ համր քար դառնամ, լեզուս ինձ պահեմ:
Թե որ արդար ես՝
Ինձ ու մելիքին մի աչքով նայիր,
Թե որ սատար ես՝
Եկ բեռս կիսիր ու ինձ հետ քայլիր.
Քո իմաստությամբ հրաշքներ գործիր՝
Թե որ ճարտար ես,
Ախր ինչո՞ւ ես դու այդքան իջել-
Թե որ կատար ես:
Չէ, խոսքը մեր մեջ, ո՜վ երկնային տեր,
Դու անուն ունես, սակայն չունես խելք,
Չի՞ լինի, արդյոք, տեղներս փոխենք,
Փոխենք մեր դերը առանց երկյուղի-
Թող ես սուրբ կոչվեմ,
Դու՝ Պըլը-Պուղի:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՑԱՍՈՒՄԸ

Ես ծաղրել եմ ու ծանակել սուրբ հայրերին այն կեղծավոր,
Որոնք աստծո փեշը բռնել
Ու տեր աստծո անունով են
Մեր հավատն ու խիղճը խժռել:
Ես ծաղրել եմ ու ծանակել հուդաներին այն եղծավոր,
Որոնք իրենց անմարդկային կշեռքով են
Մեր մարդկային ըմբոստ ոգու ճիչը կշռել:
Ես ծաղրել եմ ու ծանակել այն ստրկահաճ հպատակին,
Որ ջարդվել է կրունկի տակ դաժան տիրոջ,
Սակայն նորից սողացել է ու պատժողի աջն համբուրել:
Ես ծաղրել եմ ու ծանակել մարդուկներին այն երկդեմի,
Որ դավել են բազում անգամ հավատն իրենց,
Բայց և այսօր հանդգնում են Քրիստոսի խաչն համբուրել:
Օ՜, բազում են իմ մեղքերը,
Ոչ դրախտում ես տեղ ունեմ,
Ոչ դժոխքում այն ահավոր.
Ծիծաղել եմ ու ծիծաղիս համար հաճախ լաց եմ եղել,
Լաց ու ծիծաղ իրար խառնած՝
Անցել եմ իմ ճանապարհով...
Իսկ դուք բերել, գլխիս ահա խեղկատակի գլխարկ դրել,
Ինձ խելառ ու խենթ եք կոչում:
Այս ծռված ու փուչ աշխարհում,
Այս զնդան ու մուրճ աշխարհում,
Այս անսիրտ ու մունջ աշխարհում
Ես չգիտեմ՝ որտեղ կորչեմ:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՁԱՅՐՈՒՅԹԸ

Կամոք Աստծո՝ ծնված օրից էլ ես հողապաշտ եմ,
Թե այս կյանքի հետ մեկ-մեկ անհաշտ եմ,
Այդ նրանից է, որ դուք ուզում եք ինձնից ինձ վանել
Եվ հողապաշտի իմ այս հավատը իմ մեջ սպանել:
Իսկ ես ստիպված գլխիս դնում եմ միմոսի գդակ,
Ճշմարիտ խոսքը ներկայացնում որպես սոսկ կատակ:

Ես ծիծաղում եմ արցունքիս միջից, ձեր ծուռը հարթում,
Ծիծաղս տեսնում, սակայն արցունքս դուք չեք նկատում:
Գլխից ձեռք քաշած լարախաղի պես
Կանգնում եմ թոկին ու թափահարում,
Բայց ամոթ ի ձեզ՝
Շներին կապկող խեղկատակին եք դուք ծափահարում:
Ես ճամփի վրա խնձորի ծառ եմ հավիտյան անտեր
Եվ ամեն համբակ պարտք է համարում վրաս քար նետել:
Ես աստվածադավ և աստվածապիղծ մի կռապաշտ եմ,
Ծուռ ու անհաշտ եմ,
Խելառ ու խենթ եմ, լեզու ունեմ սուր,
Չի այս աշխարհում ճշմարիտ խոսքը խենթերն են ասում:
Թե որ ուզում եք՝ հերետիկոս եմ,
Ինձնից հանեցեք իմ ըմբոստ ոգին
Եվ ենթարկեցեք սուրբ Քրիստոսի անլուր տանջանքին,
Միայն խնդրում եմ՝ այնպես կտրեցեք իմ այս վիզը խեղճ,
Որ Ղարաբաղը չսպանեք իմ մեջ:

1975 թ.

ՄԵԼԻՔ ԵՍԱՅՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻՆ

Ձերը լինեն ու ձեզ մնան պարտեզները ոսկեբեհեզ,
Հայրենաշեն մեր լեռների մի չոր քարն էլ հերիք է մեզ:
Ձերը լինեն ու ձեզ մնան պալատները ձեր փառավոր,
Մենք մեր անշուք խրճիթի մեջ և՛ իշխան ենք, և՛ թագավոր:
Ձերը լինեն ու ձեզ մնան հարեմները ձեր հեշտագին,
Մեր օրենքով սերը մեկն է, մենք տրված ենք միայն մեկին:
Ձերը լինեն ու ձեզ մնան աղոթքները ձեր մոգերի,
Մենք մեր ամուր հավատն ունենք, մեր հավատին ենք մենք գերի:
Ձերը լինեն ու ձեզ մնան և՛ գահ, և՛ թագ, և՛ փառք, անուն,
Սակայն այնպես դուք ապրեցեք այս աշխարհում,
Որ այլևս ձեր դաշտերի ագռավները մեր լեռներում չկռնչան,
Մեր սանձակոծ նժույգները ձեր դաշտերում չխրխնջան,
Մեր լեռների ջինջ գետերը չպղտորվեն ձեր հանդերում,
Ձեր աշխարհի սև հողմերը չգալարվեն մեր արտերում,
Ձեր կռվատենչ զինվորները մեր լեռներում չհառաչեն,
Մեր լեռների կայծակները ձեր աշխարհում չշառաչեն:

ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Վատ երազ տեսա՝ իբր մեռել եմ ու թաղող չկար,
Աղունս աղել, ջաղաց են տարել ու աղող չկար,
Թագուհի կինս կարմիր էր հագել, ո՞նց էր պար գալիս,
Ծով այգիներս լցվել բարիքով ու քաղող չկար:

Եվ հետո տեսա ճերմակ ձին հեծած Ծմակի մարդուն,
Որ թուրն էր ճոճում, ինչպես այդ կաներ հաղթողը մարտում,
Սուրբ հայրապետը նստել խորանում, սաղմոս էր կարդում,
Լքված ու անտեր դիակիս վրա խունկ վառող չկար:

Եվ Տիզակի տեր Մելիք Ավանին երազում տեսա,
Բռնեց օձիքս ու խոսեց էսպես՝ դավաճան փեսա,
Արդյոք կո՞ւյր ես դու, մի՞թե չես տեսնում, Ղարաբաղն է սա,
Քելեխիդ ալյուրն արդեն պատրաստ է, բայց մաղող չկա:

- Հե՜յ, հ՜եյ,- գոչեցի,- անաստված մարդիկ, կենդանի եմ դեռ,
Սա Վարանդան է, ու ես եմ նրան տիրակալ ու տեր,
Թուրս տվեք ինձ և շուտ բերեք ձիս, ես դեռ չեմ մեռել...
Ձայնս գալիս էր էն մութ աշխարհից ու լսող չկար:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԸ

Ապրելն ապրել է, ուրեմն եկեք մեծ հոգով ապրենք,
Ատելն ատել է, էլ ինչո՞ւ խաղանք, մինչև վերջ ատենք,
Հարբելն հարբել է, հերն էլ անիծած, մինչև վերջ հարբենք,
Բայց եկեք դնենք մեր խիղճը մեջտեղ՝ իրար չխաբենք:

Հավատն հավատ է, մեր հավատամքին հավատով մնանք,
Մեր լիքը սրտով, մեր լիքը գինու գավաթով մնանք,
Արդարության հետ, արդարության պես անվրդով մնանք,
Աշխարհին դեռ բան ունենք ասելու, կավատ չմնանք:

Իրար չկեղծենք, իրար չպղծենք, իրար չթաղենք,
Մեկը մյուսիս աչքին նայելով՝ տակից չդաղենք,
Եթե ծիծաղ է, ուրեմն եկեք այնպես ծիծաղենք,
Որ կյանքի վրա մեր այդ ծիծաղով արատ չմնանք:

Մեր լեռների ու ժայռերի նման կուռ ու վեհ մնանք,
Քանի ապրում ենք, մեր հանդում բուրող ուրցի պես մնանք,
Եվ Պըլը-Պուղին ասաց՝ հազա՞ր փառք մեր հող ու ջրին,
Մեր թոռների ու ծոռների աչքում պարզերես մնանք:

ՎԱՍՆ ՀՈՒԴԱՅՈՒԹՅԱՆ

Օ՜, Հուդա, Հուդա,
Դու չես վերանա, քանի որ ծնվել
Ու կծնվեն դեռ նոր Քրիստոսներ,
Նոր առաքյալներ կգան ասպարեզ-
Սուրբ Քրիստոսի լուսապսակով,
Միշտ էլ աշխարհում կշարունակվես,
Քանզի ապրում են հետնորդները քո:

Նոր ուժ ու կորով կառնեն քեզանից
Թոռնեթոռներն ու ծոռները Նեռի,
Համբույրներով ու երդումներով պիղծ-
Հարություն առած կքայլեն նորից.
Բանսարկուների դու քաջ դաշնակից,
Հզոր բարեկամ շողոքորթների:

Նոյից մինչ այսօր անհետ, անանուն
Կորել են քանի՜-քանի ազգ ու ցեղ,
Բայց դու անմահ ես, քանի աշխարհում
Հուդայությունը դեռ չի վերացել:

ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՏԱԿԸ

Դուք կթաղեք ինձ Սինգարա սարում,
Սինգարա սարի բարձր կատարին,
Ուր գարնան հովն է ծաղկանց հետ խաղում,
Սաղմոս է կարդում կաքավը քարին:

Չհնչեցնեք զանգեր աղոթքի,
Ինձ հարկավոր չէ և սուգը իմ տան,
Վարդապետները թող պատարագիս
Անմահ Քուչակի տաղերը կարդան:

Ոսկու, արծաթի ես աչք չեմ տնկել,
Գլուխ չեմ գովել, ստից չեմ ճառել,
Կյանքս ապրել եմ անդավ ու անքեն,
Ոչ կաշառել եմ, ոչ էլ կաշառվել:

Չեմ խաբել երբեք ոչ ինձ, ոչ էլ ձեզ,
Աղունս առանց հերթի չեմ աղել,
Բայց պատահել է, եղել է այնպես,
Որ գետի վրա ալյուր եմ մաղել:

Ինձ հարկավոր չեն մարմարե դամբան,
Իշխանավորի փառահեղ թաղում,
Տրեխներով եմ անցել իմ ճամփան,
Տրեխներով ինձ դրեք դագաղում:

Դրախտ ու դժոխք ինձ համար մեկ են,
(Թե մեղք եմ անում, տե՜ր աստված, ներիր),
Պըլը-Պուղին եմ, այն աշխարհում էլ
Ես պիտի պայտեմ սատանաներին:

Եվ պաղատում եմ, քար դրեք վրաս,
Մի հասարակ քար, մամուռը կողքին,
Այդ քարի վրա գրեցեք միայն.
«Այստեղ հանգչում է մեր Պըլը-Պուղին»:

1975-1978 թ.

ՍԱՏԻՐԻԿՈՆ

ՊԶՈՒԿԸ

Ինչպիսի՜ աղմուկ, ի՜նչ իրարանցում,
Զանգերի հեղեղ, ախուվիշ, արցունք.
Ամբողջ հիմնարկն է իրարով անցել,
Օրը ցերեկով սգատուն դարձել:
Քարտուղարուհին, ջահել ու սիրուն՝
Հայելու առջև ուսերն է ցնցում.
- Տե՜ր աստված, ախր ես չեմ հասկանում,
Մեր բժիշկները ի՞նչ են մտածում.
Գոնե, հանուն մեր հիմնարկի պատվի՝
Հրավիրեն մի կարգին կոնսիլիում:-
Ու բաժնի ճաղատ վարիչն է խոսում.
- Ախր չգիտեմ, ո՞ւմ եք սպասում,
Ինչո՞ւ հենց հիմա Մոսկվա չզանգել,
Որ պրոֆեսոր շտապ ուղարկեն:
- Պա՛հ, բան ասացիր,- աչքով ու հոնքով
Նրան սաստում է հաշվապահ Մարգոն.-
Պրոֆեսորն ի՞նչ է, ակադեմիկո՜ս...
Այդպե՞ս եք հարգում Վռամ Մարկիչին,
Մեր բարեկամին ու մեր արարչին...
- Իսկ գո՞ւցե դիմենք հենց վերադասին...
- Թող վերադասը հոգա իր մասին,
Դեռ ինքնաթիռի հարցը չենք լուծել,
Սա կարևոր է, պիտի մտածել:
- Բայց ի՞նչ ինքնաթիռ...
- Ամենաընտիր,
Չորսմոտորանի...
Աղմուկ ու ժխոր, նոր իրարանցում,
Հարցեր են տալիս ու անում հարցում.
- Հիմա ի՞նչ անենք:

- Երևան տանենք:
- Ռիգա...
    - Սարատով...
- Խարկով կամ Ռոստով...
- Չէ՛, լավ կլինի դիմենք Մոսկվային,
Որ դեղը շտապ ուղարկեն փոստով:
Եվ գանձապահը այն մյուս կողմից՝
- Ի՞նչ Ռիգա, Ռոստով, Սարատով, ջանըմ,
Մի ընկեր ունեմ ես Անդիջանում,
Ամեն ինչից լավ գլուխ է հանում...
Եվ տեղակալն է խոսում վերջապես.
- Հարցը շատ լուրջ է, այդ ասում եմ ես,
Այս ձևով իրար չենք հասկանա մենք,
Մինչև որ ժողով չհրավիրենք...
Եվ աղմուկ կրկին ու իրարանցում,
Զանգերի հեղեղ, ախվիշ ու արցունք...
Իսկ ի՞նչ է եղել և հանուն ինչի՞
Ամբողջ հիմնարկը սև սուգ է ուսել.-
Թանկագին պետի՝ Վռամ Մարկիչի
Քթարմատին մի պզուկ է բուսել:

1980 թ.

ՊԱՏԱՀԱՐ

Լեռներից այնկողմ մի փոքրիկ գյուղ կար,
Շուրջը անտառներ, դաշտեր ծաղկավետ,
Շատերին անհայտ այդ գյուղում ահա
Հայտնաբերվեց մի աննման պոետ:
Տրակտորիստ է չնայած, սակայն
Խոսքի վարպետ է, հրաշք գեղագետ,
Վեհ հոգի ունի բանաստեղծական,
Սրտով կապված է հանգ ու վանկի հետ:
Արտերի մասին երգեր է գրում
Մեկը մյուսից դյութիչ ու գերող,
Եվ ինչպես է նա խոսքը զարդարում
Զարմանահրաշ էպիտետներով:

Բնատուր տաղանդ, Թումանյան մի նոր -
Մեր պոեզիայի երկնակամարում
Ընդառաջել է նրան հարկավոր,
Մեծ ապագա է տղան խոստանում:
Եվ ինքն էլ, գիտե՞ք, առաջավոր է,
Բայց եթե դատենք խղճով մեր արդար՝
Տրակտոր կարող են բոլորը վարել,
Բանաստեղծություն գրելն է դժվար:
Եվ գյուղից նրան քաղաք բերեցին,
Նոր բնակարան տվին արտահերթ.
- Չափ տո՛ւր,- ասացին,- պոեզիայիդ ձին,
Դու այն գլխից էլ ծնվել ես պոետ:-
Եվ պոետ տղան ուզածին հասավ՝
Ստացավ պաշտոն, տուն ու տեղ դրեց
Ու մեծերի հետ օգտվեց հավասար
Գրական ֆոնդից, որպես բանաստեղծ:
Բայց արի ու տես, որ խելառ մուսան
Այդպես էլ նրան երբեք չայցելեց:
Եվ հետո եկան, անցան տարիներ,
Փոխվեց աշխարհում հազար ու մի բան,
Նոր բանաստեղծներ ծնվեցին, մինչդեռ
Մեր բնատուրը մնաց հանգաբան:
. . . . . .

Հիմա հասկացա՞ք, թե ինչ կատարվեց,
Ինչի համար եմ ես հուզվում այսքան,-
Մի լավ հողագործ հողը կորցրեց,
Պոեզիան գտավ մի վատ բանաստեղծ:

1981 թ.

ՈՐԴԻՆ

Զանգեցին գյուղից. «Մայրդ հիվանդ է».
Նա պատասխանեց. «Բժիշկ կուղարկեմ»:
Նորից զանգեցին. «Վիճակը վատ է».
Նա պատասխանեց. «Կգամ, իհարկե,

Միայն թե, գիտե՞ք, կուշանամ մի քիչ,
Խորհրդակցություն և ժողով ունենք»:
Իսկ երեկոյան զանգեցին գյուղից.
«Մայրիկը մեռավ, վաղը թաղումն է»:

Չհասավ նա իր մոր վերջին խոսքին,
Սակայն թաղմանը ներկա էր արդեն,
Գնաց ու կանգնեց դագաղի կողքին...
Դե էլ ի՞նչ աներ, պաշտոնյա մարդ է:
Նա հո չի կարող ուրիշների պես
Հուզվել, հառաչել, անել սուգ ու լաց,
Մայրն էլ մեծ կին էր՝ ողջ գյուղին ի տես
Իր բաժին կյանքը ապրեց ու գնաց:

Եվ հետո եղան բաժակաճառեր,
Կենացներ՝ «Մեր սուրբ մոր հիշատակին»,
Որ շատ անվանի որդի է ծնել,
Իսկ ինքը այսքան հասարակ մի կին:
Ինչո՞ւ տրտնջալ, որ այսքան տարի
Չի եղել որդին իրենց հարկի տակ,
Հասկացեք, ախր, ո՞վ բարի մարդիկ,
Գործերը շատ են, ժամանակը՝ թանկ:

Եվ խոսեց ինքը՝ պաշտոնյա որդին,
Խոսքի մեջ ճարտար, գործում՝ անբասիր,
Մոր մասին խոսեց ազնիվ ու անգին
Ու որդիական սուրբ պարտքի մասին:
Ասաց՝ հպարտ եմ, անչա՜փ բախտավոր,
Որ ինձ այդպիսի լավ մայր է ծնել,
Եվ խոստանում եմ՝ հիշատակն իմ մոր
Իմ միջոցներով հավերժացնել...
. . . . . .

Սրան ի՞նչ կասեք՝ որդիական սե՞ր,
Թե հենց պարզապես պա՞րտք որդիական:
Լավ ճառ բոլորն էլ կարող են ասել,
Լավ որդի լինել... դա հեշտ չէ այնքան:

ԼՈԹԻ ԱԲՈՆ

Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Անները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս,
Պա՛հ, էդ էր պակաս, որ լոթի Աբոն
Ազատ չքայլի իր ուզած ճամփով:
Փողը գրպանում, «ժիգուլին»՝ տակին,
Խելքը շշի մեջ, աչքը՝ բաժակին -
Որտեղ որ աղմուկ՝ Աբոն այնտեղ է,
Որտեղ սկանդալ՝ Աբոն անմեղ է.
Դե ի՞նչ է արել տղան այս անգին,
Շշով խփել է Մադոյի գանգին,
Ճակատը պատռել, ծնոտը՝ շեղել,
Դիտմամբ չի՞ արել, հարբած է եղել:
Գո՞րծ են ստեղծել...
Պա՛հ, էդ էր պակաս,
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Անները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս:

Հիմա հասկացա՞ք, թե ով է Աբոն
Եվ ուր է գնում նա այդպես թափով,
Ում հետ է նստում, ում հետ կատակում,
Ում հետ է բաժակ-բաժակի զարկում...
Չկարծեք, թե նա անուսում մարդ է,
Համալսարան է տղան ավարտել
Եվ դիպլոմ ունի առաջին կարգի,
Դա էլ հերիք է, ինչո՞ւ աշխատի -
Հագնելը ձրի, փողն էլ հո ծով է,
Ուտողը ո՞վ է.
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Անները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս:

Դե մեծ աշխարհ է, ո՞ւմ չի պատահել,
Այդ ո՞վ չի կյանքում սիրուհի պահել.
Լավ, ասենք Աբոն սիրած էակին
Խաբել է անխիղճ ու չի առել կին,
Արդյոք կարի՞ք կա դռները թակել,
Մի բաժակ ջրում փոթորիկ սարքել.
Աբոն խաբեբա՞, անբարոյակա՞ն,

Ախր դուք գիտե՞ք, թե ինչ սարեր կան
Նրա թիկունքում.-
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Աները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս:

Աբո, ի՜նչ Աբո, փառքի մարմնացում,
Ի՜նչ հարցեր ասես, որ նա չի լուծում,
Եվ ի՜նչ դռներ են նրա դեմ բացվում.
Գառնիտո՞ւր է պետք շքեղ ու սիրուն՝
Ծանոթներ ունի նա քաղաքնտրում.
Կուրո՞րտ ես ուզում՝ Գագրա՞, թե՞ Սոչի,
Աբոյի համար դա հո մեծ բան չի,
Գետնի տակից էլ կարող է անգամ
Կառավարական ուղեգիր ճանկել,
Եվ ո՞վ կարող է նրան առարկել-
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Աները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս:

Օ՜, Լոթի Աբոն ֆուտբոլասեր է,
Ստադիոններում տիրակալ, տեր է,
Խաղ չի բաց թողել երբեք իր օրում,
Իր թիմին ո՜նց է նա ոգևորում,
Ինչպե՜ս է սուլում, ինչպե՜ս է գոռում,
Մրցավարներին ո՜նց է փնովում...
Ի՞նչ անենք, թե որ մեկ-մեկ արանքում
Խոսքեր է ասում մի քիչ անմաքուր,
Ֆուտբոլ է, էլի՜...
Այդ դու, այս էլ ես,
Լոթի Աբոյին ո՞նց մեղադրես.-
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Աները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս:

Եվ պատահեց այն, ինչ պիտ պատահեր,
Եվ կատարվեց այն, ինչ պիտ կատարվեր.
Հզոր «Ժիգուլի» ու հարբած Աբո,
Իր ճանապարհով սուրում էր թափով,
Եվ մեկ էլ հանկարծ...
Օ՜, բախտ չարակամ,
Աբոն եղել է ու հիմա չկա:

Ի՞նչ ողբերգություն, ինչպիսի՞ ցնցում,
Եվ ովքե՞ր ասես, որ չեն ցավակցում.
Այնքա՞ն պսակներ, այնքա՞ն ծաղիկներ,
Նվագախմբեր, սգո տաղիկներ...
Ախր, հասարակ մարդ չի մահացել,
Լոթի Աբոն է, ո՞նց չցավակցել.-
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Աները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս:

Գերեզմանատանը խոյացավ մի բերդ,
Պանթեոն խոյացավ մի մարմարակերտ,
Ոսկե տառերով գրած ճակատին.
«Խոնարհեցե՛ք ձեր գլուխը, մարդիկ,
Այստեղ հանգչում է Աբոն Անմուրազ -
Հայրը՝ դիրեկտոր, մայրը՝ դատախազ,
Աները՝ դոկտոր, քեռին՝ վերադաս»:

1978 թ.

ԱՌԱՆՑ ՊԵՏԻ

Չեմ հասկանում, առանց պետի
Մարդ ինչպե՞ս է, ապրում, շնչում,
Երբ պետ չունի իր թիկունքում,
Ինչպե՞ս է, որ նա չի կորչում:
Պետը կուռք է նախ և առաջ,
Փառք ու պատիվ, սուրբ աբեղա,
Իրավունք է, օրենք, պահանջ,
Բազկաթոռ ու գրասեղան:
Խոսափող է քո ականջին,
Կաբինետի շքեղ արձան,
Օրակարգի խոսքը վերջին,
Վճռական՝ առաջին ձայն:
Առանց պետի իմացության
Ասա, ինչպե՞ս կարծիք հայտնես,
Ո՞ւմ չոռ ասես, ո՞ւմ ասես ջան,
Ժողովում ո՞ւմ քննադատես:
Երբ խնջույքում պետդ չկա,
Ո՞ւմ կենացը պիտի խմես,
Ինչպե՞ս ասես՝ աստված վկա,

Դուն էն գլխեն իմաստուն ես:
Առաջինը ո՞ւմ բարևես,
Ո՞ւմ մոտենաս՝ քաղցր ժպտաս,
Ո՞ւմ մոտ հալվես,
Ո՞ւմ մոտ ծալվես,
Առանց պետի ո՞նց փռշտաս:
Երբ քո տանը պետդ չկա,
Ո՞ւմ մեծարման ճառեր ձոնես,
Քո տղայի կամ աղջկա
Ծննդյան օրն ինչպե՞ս տոնես:
Ո՞ւմ արշինով մարդկանց չափես,
Ո՞ւմ բռնես ու թափահարես,
Առանց պետի որի՞ն խաբես
Եվ ո՞ր մեկին ծափահարես:
Գլխիդ վերև երբ պետ չունես,
Առավոտներն ո՞ւմ ողջունես,
Ախր դու ո՞ւմ ցավը տանես,
Որի՞ն սիրես, որի՞ն վանես,
Առանց նրան, ասա, ինչպե՞ս
Ինքդ քեզնից գլուխ հանես:
Առանց պետի ախր ի՞նչ ես,
Ոչ գետակ ես, ոչ էլ լիճ ես.
Քո աղունը ինչպե՞ս աղաս,
Ումնի՞ց առնես դու խելքի դաս,
Ո՞ւմ հետ նստես նարդի խաղաս
Ու տանուլ տաս...
Ո՞ւմ վերարկուն պահես՝ հագնի,
Ո՞ւմ մոտ վարդի նման բուրես,
Առանց պետի իրավունքի
Կնոջդ ո՞նց կհամբուրես:
Ո՞ւմ անունով անվերջ երդվես,
Ո՞ւմ բերանով ճիշտը հերքես,
Ո՞ւմ թիկունքով թիկունք դառնաս,
Ո՞ւմ թևերով հզորանաս,
Որտե՞ղ և ո՞ւմ կեղտը հորես,
Ո՞ւմ աթոռի տակը փորես,
Որ չմնաս խեղճ ու հավկուր...
Չեմ հասկանում, առանց պետի
Մարդ ինչպե՞ս է ապրում կյանքում:

1981 թ.

ԲԵՄԻ ԱՍՏՂԸ

Քառասուն տարի նույն դերն է խաղում,
Նույն տաշտի մեջ նույն ալյուրն է մաղում,
Թեկուզ բեմում դեմք չունի, ոչ էլ գույն,
Բայց ամենից շատ ինքն է բողոքում.
- Ախր մինչև ե՞րբ մնամ ես պոչում,
Մեծ է վաստակս, բայց չունեմ կոչում,
Անմահ «Պեպո»-ում Սամսոն եմ կերտել,
Իսկ «Քաջ Նազար»-ում՝ ցնորված տերտեր,
Ինձ մեծարել է Փափազյանն անգամ,
Ասել է. «Կեցցե՛ս, եղբայր պատվական,
Այսօր տերտեր ես կերտել հանապազ,
Իսկ վաղը անշուշտ արքա կդառնաս»:
Ձեզ բան չի՞ ասում այս փաստը միթե,
Բեմի հսկաներն ինձ շատ լավ գիտեն,
Ներսիսյանի հետ բաժակ եմ զարկել,
Ինքն է խմածիս հաշիվը փակել,
Քանի՞ անգամ է Դավիթ Մալյանը
Մեր Ավետի հետ նստել իմ տանը:
Աճեմյանն ինձ ո՞նց էր գնահատում,
Ասում էր. «Ապրես, շնորհք ունես դու,
Չնայած խոշոր դերեր չես կերտում,
Սակայն մեծերին ձեռնոց ես նետում»:
Բա Ղափլանյա՞նը. «Ա՛յ քեզ դերասան,
Ո՞վ գիտե, մեկ էլ Փափազին հասավ...»:
Բայց իմ կարծիքով ինչ որ բան ծուռ է,
Ինձ կամ չեն սիրում, կամ նախանձում են,
Իմ ընկերները ժողովրդական՝
Համլետ, Օթելլո, Ռիչարդ, Լիր արքա,
Բազում դերերում անուն են հանում,
Օրը ցերեկով փառքս գողանում:
Վաստակս վկա՞, մի հնար լիներ,
Թողնել այս բեմը, թատրոնը թողնել,
Բայց վախենում եմ, որ հանձինս ինձ -
Մի նոր գիսաստղ պակասի բեմից:

1978 թ.

ԴԻՐԵԿՏՈՐ-ԴՈՒՔՍ

Մեքենան տակին,
Կաբինետը՝ լյուքս,
Դիրեկտոր մի ասի,
Այլ իշխան կամ դուքս:
Թիվ է հարկավոր
Կամ զեկուցագիր,
Սեղմում է իսկույն
Կոճակը զանգի,-
Եվ նրա դիմաց
Միշտ պատրաստակամ
Խոնարհ կանգնած են
Քսան օգնական:
Երկար նստելուց
Հոգնե՞լ է մի քիչ.
- Շախմատ չխաղանք,
Բարսեղ Նիկիտիչ:-
Թեյել է ուզում
«Գործի թունդ» պահին -
Դրա համար կա
Քարտուղարուհի:
Երբ պետք է վճռել
Կարևոր հարցեր,
Դուռը փակում է.
- Խիստ զբաղված եմ:
Առանց քեֆերի
Կյանքն անիմաստ է,
Ուր ուզի՝ գնա,
«Վոլգան» պատրաստ է:
Հռետոր է ճարտար
Ասել-խոսելիս.
- Մի ողջ հիմնարկ եմ
Պահում ուսերիս:-

Հիմա դուք կասեք՝
Ո՞վ է այդ մարդը,
Այդ պորտաբույծը,
Բյուրակրատը:-
Աղաչու՜մ եմ ձեզ,
Հեռուն չգնալ,
Ձեր մեջ կարող եք
Դուք գտնել նրան:

1982թ.

ՇԱՂԱԿՐԱՏԸ

Նա գիտե բոլոր գրողներին մեծ -
Պուշկինից մինչև Սերգեյ Եսենին,-
Ինչ բաժակով է Հյուգոն ջուր խմել,
Դյուման ում հետ է եղել մտերիմ,
Կոմս Տոլստոյը՝
    ծերուկն իմաստուն,
Ինչպես է հյուրին պատվել ու հարգել,
Մայակովսկին -
    ինչ գույնի կոստյում
Եվ ինչ համարի կոշիկ է հագել...

Սիրուհիներին՝
Շանդոր Պետեֆին
Ինչ թանաքով է նամակներ գրել,
Ում հետ է նստել Խայամը քեֆի,
Բալզակն ինչպիսի թիկնոց է կրել:
Նա գիտե նույնիսկ, թե Չեխով քեռին
Ջահել կանանց հետ ինչպես է կիսվել,
Պապ Կռիլովը կերակուրներից
Որն է ամենից շատ գերադասել...
Որ ձախ այտին խալ ուներ Ֆիրդուսին,
Չարաշահում էր Եսենինն օղին,
Որ թվականի որ օր ու ամսին
Բայրոնն ում հետ է մտել անկողին...
Հայնեն ինչպիսի խոզանակով էր
Իր ատամները ամեն օր մաքրում,
Դոստոևսկու քեռակինն ով էր,
Ում էր Ժորժ Սանդը շատ համակրում:
Թե անմահ Գյոթեն ծերության շեմին
Կանանց տեսնելիս ինչպես էր տխրել,
Պարույր Սևակը երգեր գրելիս
Մի ամսում քանի սիգար էր ծխել:-
Եվ ժպտում է նա հպարտ, ինքնագոհ,
Մաքրում քրտինքը ու հազում թեթև,
Այսինքն տեսեք, ընկերներ հարգո,
Մեծերի կյանքից որքան բան գիտեմ:
Ծափահարում ենք,
բայց ո՞ւմ և ինչի՞,
Շաղակրատին այս հում փաստակեր,
Որ կաչաղակի նման ոստոստում,
Եվ սղոցում է ականջները մեր -
Մայակովսկին ինչ գույնի կոստյում
Եվ ինչ համարի կոշիկ է հագել,
Ու թե ինչպես է ինքը մի անգամ
Մի բանաստեղծի
Կերած-խմածի
հաշիվը փակել:

1984 թ.

ՂԱՐԱԲԱՂԱՍԵՐԸ

Օղին խիստ թունդ է, գինին՝ անարատ,
Պանիրը՝ ընտիր, խորովածն՝ առատ.
Այս ճոխ սեղանը ո՞նց չհավանի.-
Մի բաժակ խմեց ու ցավը տարավ
Մելիք Ավանի,
Երկրորդ բաժակը նա ձեռքը առավ,
Թվաց, թե տակին սուրողը ձի է,
Գոռաց.
- Մաշտոցն էլ ղարաբաղցի է,
Ղարաբաղցի է քաջ Վարդանը մեր,
Ղարաբաղումն է Նելսոնը ծնվել... -
Երրորդ բաժակը երբ նա դատարկեց,
Նուրբ թելի նման սիրտը բարակեց.
- Ա՛խ, Ղարաբա՜ղը, իմ Ղարաբա՜ղը,
Քուչակի տա՜ղը,
Մեր թթի բա՜ղը,
Մեր Բովուրխանի դրախտ անտա՜ռը,
Մեր ճարտար գյուղը, Քիրսի կատարը,
Մռավ սար տանող այն կածան-ուղին,
Մեր Խոթավանքը, մեր Պըլը-Պուղին... -
Խմեց ու հարբեց, փաթ ընկավ լեզուն.
- Ես Գանձասարի մեր վանքն եմ ուզում,
Խեղդվել եմ ուզում մեր Թարթառ գետում,
Մեռնեմ՝ կթաղեք Ստեփանակերտում...
Մեր ղարաբաղցիք քաջ են, անվրդով,
Ամեն մեկը մի խիզախ Մադաթով... -
Խմեց ու հարբեց, հարբեց ու խմեց,
Գլուխը դրեց սեղանին՝ քնեց,
Իսկ առավոտյան, երբ քունը առավ,
Բարձեց մեքենան ու իր հետ տարավ
Թթի թունդ օղի, յուղ, պանիր, կարագ,
Լոբի, կարտոֆիլ, թոնրի հաց բարակ,
Հոնի մուրաբա, նեկտար, բալասան...
Հետո վերջումն էլ դարձավ ու ասաց.
- Դե ես գնացի, իսկ դուք էլ կեցցե՛ք,
Մեր այս լեռները ամուր պահեցեք:

ՊԱՄՖԼԵՏՆԵՐ ԵՎ ԷՊԻԳՐԱՄՆԵՐ

ՄԱՐԴ ԷԼ ԼԻՆԻ...

Մի հանգաբանի

Մարդ էլ լինի այսքան համառ ու պնդերես,
Այսքան ծանծաղ և հոգին լի քեն ու դավով
Եվ ունենա երկու անգամ երկու երես
Ու հորջորջվի տաղանդավոր:

Մարդ էլ այսքան ծալվի, դառնա երկու և կես,
Թուքն ու մուրը ընդունի ոնց տաշի-տուշի,
Չէ, դուռը չէ, պատուհանն էլ թեկուզ փակես,
Բանալու նեղ ծեղքով անգամ ներս կխուժի:

Մարդ էլ լինի այսքան շողոմ և այսքան նենգ,
Գա սեղանդ կենացներով գունավորի,
Հետո ելնի կանչի՝ հարա՜յ, եկեք հասեք,
Քիչ է մնում, որ այս մարդն ինձ թունավորի:

Մարդ էլ այսքան սրան-նրան գրկի, փարվի,
Հալվի՜, հալվի՜, դառնա մեղրի անուշ կաթիլ,
Թե տեղը գա, իր պատյանում կաղապարվի
Եվ հարկ եղած դեպքում օձի նման խայթի:

Մարդ էլ լինի պետին այսքան հավատարիմ,
Գիշեր-ցերեկ նստի կողքին, մեջքը քորի,
Ու բարձրանա, առաջ գնա ամեն տարի,
Հետո աչքը գցի նրա բազկաթոռին:

Մարդ էլ լինի այսքան ստոր ու կեղծավոր,
Այսքան դժխեմ ու փառամոլ, այսքան նամարդ,
Ապրի կյանքում միշտ հանցավոր ու կեղծավոր,
Չգիտես ինչ իրավունքով կոչվի նա մարդ:

ԳՐԻՐ

Կարդա, այ իմ խելոք մանուկ...
Ալ. ՇԱՏՈՒՐՅԱՆ

Կարդա, այ իմ գրող բալա,
Սոնետ գրիր, գրիր օդա,
Հորինիր միշտ պոեմ, բալլադ,
Հորինելն է հիմա մոդա:

Կցմցելով հանգը վանկին,
Կգնաս ու հասնես Պառնաս,
Բնակարան կտան կարգին,
Լավ հոնորար դու կստանաս:

Գիրք տպելով առաջ կանցնես,
Աչքի կընկնես կռվով, դավով,
Մեկ էլ տեսար մի օր էլ քեզ
Անվանեցին տաղանդավոր:

Միջակության թոհուբոհում
Պնդաճակատ եղիր, տղաս,
Միշտ աղմկիր ու կռիվս տուր-
Տակիդ «Վոլգա» դու կունենաս:

Ճառեր ասա և մասնակցիր
Բանկետներին ու քեֆերին,
Հարգիր քեզնից դիրքով մեծին,
Շողոքորթիր քո շեֆերին:

Գրիր, թեկուզ գրածներդ
Չհավանեն ու չկարդան,
Միշտ ձևացիր ազնիվ՝ թեկուզ
Երդումներիդ չհավատան:

Գիշեր-ցերեկ գրիր, տղաս,
Գրիր մինչև շունչդ վերջին,
Լավ բանաստեղծ որ չդառնաս,
Հո կլինես լավ դանոսչիկ:

ՄԻ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Ո՞ւմ ենք մեծարում՝
Մի խեղկատակի,
Որ հանուն շահի
Կեղծել, ստել է,
Մի կաչաղակի,
Որ մեր գրական
Անդաստաններում
Միայն ծրտել է:

ՄԻ ՊՈԵՏԻ

Դու ոչ զուռնաչի եղար պատվական,
Ոլ էլ զուռնաչու դամքաշ մի կարգին,
Եվ բախտ չունեցան տաղերդ այնքան,
Որ այսօր քեզ հետ անցնեն թոշակի:

Է՜հ, բախտ է, էլի, գրողը տանի,
Մարդիկ գալիս են ու գնում հերթով,
Մեկը մեռած է՝ թեկուզ կենդանի,
Մյուսն ապրում է իր մահից հետո:

* * *

Այնպես է փոխվում այս ժամանակը,
Որ դեմք է դառնում և ավանակը,
Երեկ փալան էր առած կռնակին,
Իսկ այսօր «Վոլգա» ունի իր տակին:
Բայց էշը էշ է, մեջքին միշտ մոխիր.-
Որքան ուզում ես փալանը փոխիր:

* * *

Նա երեկ իքսին կոչում էր տականք,
Այսօր տալիս է պատիվ ու հարգանք:
Չէ, մի առանձին բան չի պատահել,
Այդ տականք իքսը պաշտոն է շահել:

* * *

Ցախու գրչակն այս, որ մի ժամանակ
Չարենցի դեմ էր ժանիքներ սրում,
Հիմա առել է թուղթ, գրիչ, թանաք,
Չարենցի մասին հուշեր է գրում:

* * *

Մարդը մարդու դեմ լարողը
Ապականված դարն է եղել,
Ռումբ-ականի նախահայրը
Պարսատիկի քարն է եղել:
Չեմ հասկանում, Կայենն ինչպե՞ս
Սպանեց իր եղբորն անմեղ.-
Կա թե չկա՝ զրպարտիչի
Մատն այստեղ խառն է եղել:

* * *

- Ի՞նչ Թումանյան կամ ի՞նչ Չարենց,-
Գոռաց տգետն ամբարտավան,-
Նորարարը ես եմ հիմա,
Չեմ ճանաչում քեզ ու նրան:-
Բայց ինչո՞ւ մենք գլուխ դնենք
Դղրդացող թմբուկի հետ,
Տգետները մեծամիտ են,
Մեծամիտներն անբարտավան:

* * *

Խրատ էի կարդում ցինին,
Բայց չլսեց, թռավ, գնաց,
Գայլը լսեց հորդորանքս,
Սակայն գառս առավ, գնաց.
Գող ագռավը հիսուն տարի
Աշակերտեց Սոկրատեսին,
Բայց այդպես էլ ամբողջ կյանքում
Նա լեշակեր ագռավ մնաց:

* * *

Լպրծունն այս ներս մտնելու
Եվ դուրս գալու ձիրք ունի,
Վերևներում ամուր թիկունք
Եվ անսասան դիրք ունի.
Թեկուզ հայտնի գրագող է
Ու խայտառակ էպիգոն,
Բայց գիտե՞ք, թե փառաբանված
Քանի խոտան գիրք ունի:

* * *

Անվերջ, անդադար հոխորտում է նա,
Որ դեռ ջահել է ու չի ծերացել,
Մինչդեռ վաղուց են գրքերը նրա՝
Իրենից առաջ թոշակի անցել:

* * *

Առակ գրեցի. «էշը թռչում է»,
էշը բողոքեց՝ բա ես թռչո՞ւն եմ,
Ի՞նչ իրավունքով այդպես անտեղի
Վիրավորում ես մեր ազնիվ ցեղին:

* * *

Պիես գրելը մոդա է հիմա,
Ով ասես՝ պիես չի գրում այսօր,
Թքած տաղանդի ու ձիրքի վրա,
Միայն ունենաս ծանոթ ռեժիսոր:

* * *

Նա այնքան պարզ է, այնքան անբասիր,
Համեստների մեջ միշտ համեստագույն,
Երբ խոսք է բացվում իր անձի մասին,
Գլխարկն հարգանքով հանում է իսկույն:

* * *

Ինչ պաշտոն ասեք, որ նա չի վարել,
Բայց կհարցնեք, թե ինչ է արել.
Ներհիմնարկային ահեղ պայքարում
Իր բազկաթոռն է մի կերպ պաշտպանել:

* * *

Տրեստի հաշվին նոր տուն կառուցեց,
Կերավ, լենք տվեց տրեստի հաշվին,
Եվ դատարանը երբ գործ հարուցեց,
Վնասը ծածկեց տրեստի հաշվին:

* * *

Երեք նախագահ փոխվեց վեց ամսում,
Չորրորդը եկավ՝ եղածը քանդեց.
Թերթում գրեցին, որ կոլխոզը սույն-
Անշեղ վերելքի ճամփին է արդեն:

* * *

Ես չգիտեմ, որքանո՞վ է հնարավոր՝
Բանաստեղծը հարստանա հոնորարով:
Թե այդպիսի պոետներ կան երկնքի տակ,
Նրանց երգին ոչ մի անգամ չհավատաք:

* * *

Դ-ին

Իմ հին բարեկամ, ճանաչում եմ քեզ,
Ես քո բնույթը գիտեմ շատ վաղուց,
Առյուծի կողքին շողոմ աղվես ես,
Աղվեսի դիմաց՝ կատաղած առյուծ[12]:

* * *

Կ-ին

Պուշկինն ապրեր, կգրեր՝
Բախտախնդիր, ինտրիգան,
Դու քո ամբողջ էությամբ
Քաղաքական խուլիգան[13]:

* * *

Խոսում է Կանտից, անում մեջբերում,
Բայց թանը կաթից նա չի տարբերում:

* * *

Ութ պետ է փոխել, տասը տեղակալ,
Ինքը՝ անփոփոխ, ինքը՝ բնակալ:

* * * *Լ-ին*

Թունոտ ես այնքան ու մաղձոտ՝ հոգիդ,
Որ ճանճը անգամ չի նստում դեմքիդ:

* * *

Նարինջը տեսնի, կասի՝ կիտրոն է,
Ուր մատը դնի՝ այն էլ կենտրոն է:

* * *

Ահա ձեզ հայտնի «Ծիրանի ծառի»
Նորահայտ մշակն ու հեղինակը,
Թեկուզ ոչ երգի խոսքն է իրենը,
Ոչ եղանակը:

* * *

Այս հանգաբանը ճակատի զոռով
Մրցանակներ է անընդհատ շահում,
Ի՞նչ փույթ գործերը թույլ են ու ճապաղ,
Մարդը իր գրչով մի տուն է պահում:

* * *

Կարդացել է նա մի քիչ «Սասնա ծուռ»
Եվ «Վարդանանքից» երկու տող սերտել.
Հիմա ամեն տեղ նա կուրծքն է ծեծում.
- Պատմությունն հայոց ես անգիր գիտեմ:

* * *

Մի քիչ Շոպեն է լսել, մի քիչ Բախ,
Որդու անունը դրել Շոպենբախ:

* * *

Պաշտոն է ուզում, թեկուզև՝ ստոր,
Թեկուզև ռոճիկ չստանա կարգին,
Միայն թե ունենա փափուկ բազկաթոռ,
Կողքին՝ հեռախոս, «Վոլգան»՝ միշտ տակին:

* * *

Նա այստեղ-այնտեղ այնքան բողոքեց.
«Կաշառակեր է Չոփուռ Արսենը»,
Որ այդ Չոփուռից մի քիչ փող պոկեց
Ու կտրեց ձենը:

* * *

Հայտնի էպիգոն ու գրագող էր,
Ոչ շնորհք ուներ, ոչ էլ կարգին խելք,
Քննադատեցին՝ պոեզիան թողեց,
Դարձավ դասախոս-գրականագետ:

* * *

Նա հոր ջանքերով բուհում ընդունվեց,
Փեսի օգնությամբ դիպլոմ ստացավ,
Դիսերտացիան էլ խնամին գրեց,
Քեռու թիկունքով գիտնական դարձավ:

* * *

Խաբեց՝ տուն քանդեց,
Լափեց՝ յուղ կապեց,
Իսկ երբ բռնվեց,
Իրար խառնվեց.
- Հա՜յ, հարա՜յ, հասեք,
Մարդիկ, օգնեցե՜ք,
Կերածս մարսեմ:

* * *

Հ. Ալիևին

Քեզ ճանաչում ենք քո ժպիտից կեղծ,
Դու Թալեաթից նենգ, Թալեաթից տխեղծ...
Եվ գիտենք նաև, ով քծնու աղվես,
Որ սողալով ես բարձրացել այդպես
Եվ սողալով էլ մի օր կսատկես:

* * *

Մի քննադատի

Նա ունի ուրույն իր խոսքն ու ոճը,
Գնահատման հարցում անաչառ է խիստ,
Ծանոթի առջև շարժում է պոչը,
Անծանոթներին քացի է տալիս:

* * *

Ոչ ջութակ էր նա՝ ջութակի նման,
Ոչ թութակ էր նա՝ թութակի նման:
Տեսան, որ մարդը խելք չունի կարգին,
Առաջ քաշեցին, դարձրին խմբագիր:

* * *

Քանի՜ տարի է՝ եզան պես համառ
Պայքարում է նա պաշտոնի համար:
Պետեր են գալիս, պետեր են գնում,
Բայց տեղակալ է նա միշտ էլ մնում:

* * *

Վերջացրել է զույգ համալսարան,
Բայց մնացել է նույն էշի բալան:

* * *

Հարմար կաբինետ, փափուկ բազկաթոռ,
Շիք գրասեղան, երազներ բազում,
Թանաք, թուղթ, գրիչ, հաճելի անդորր...
Մուսան է միայն նրան պակասում:

* * *

Այն ո՞վ է ասում, թե Նազար չկա,
Եվ նազարական ավազակ չկա,
Իբր հեքիաթ է Նազարը եղել,
Իբր վաղուց ենք Նազարին թաղել:
Նազարին, ճիշտ է, մենք նոր չենք թաղել,
Բայց արի ու տես, որ խոր չենք թաղել.
Հին Նազարն իր մեջ նոր Նազար սնել,
Հին Նազարից՝ նոր Նազար է ծնվել:
Եվ նոր Նազարն այս իր նախորդի պես
Ոչ թե անտեղի ճանճ է փախցնում,
Այլ ճանճերին է հերոս դարձնում[14]:

1981 թ.

* * *

Լինում է այնպես, հիմարն էլ հաճախ
Դառնում է հանճար,
Մեզ՝ խելոքներիս
Դասեր է տալիս,
Սովորեցնում, թե ինչպես անենք՝
Իր ձեռքով փոսը գլորած քարը
Այդ փոսից հանենք:

Եվ մենք, որ այնքան
Խելոք ենք կյանքում,
Հիմարին էլ ենք հաճախ ենթարկվում,
Նրա դիոլ ու զուռնի տակ պարում,
Մեծարում նրան ու ծափահարում:
Է՜հ, ես ի՞նչ ասեմ աշխարհին այս սին,
Հիմարի քարը մեր խելոք գլխին:

ՊԱՐՈԴԻԱՆԵՐ

ԱՌՅՈՒՇԱՄՈՒՏ
(Հովհաննես Շիրազ)

Մասիսները ուսերիս ու Սիփանը ձեռքերիս,
Ու Զեյթունը այտերիս, ու Սասունը կրծքիս տակ,
Ու Սևանը հոգուս մեջ, ու Արցախը աչքերիս,
Ու Վանա ծովը լեզվիս,- Սիսից իջա ես քաղաք,-
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով ամենուր՝
Սեգ պոեմներ, բալլադներ ու հայրեններ վարդաբույր,
Մասիսավառ տերցիններ, արաքսափայլ սոնետներ,
Նարեկավառ տաղիկներ, անհաշեն նոնետներ,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ զարմանքից քար կտրեցին,
Տեսան ուրիշ մի պոետ, ուրիշ Շիրազ՝ վագրածին.
- Ի՞նչխ առյուծ է,- ասացին,- որտեղի՞ց է,- ու բացին
Իրենց սրտի դռները, մինչդեռ իմը ես բացել՝
Ասում էի ես նրանց՝ մերն են Մասիս ու Սիփան
Արարատի կատարին մեր դրոշները կծփան,
Ես ոչ ոքից ահ չունեմ, ճամփաները լավ գիտեմ,
Դավթի թուրը ինձ տվեք, գնամ Վանը ազատեմ,
Տվեք ինձ քաջ Վարդանի հողմաշառաչ այրուձին,
Ելե՞ք, ի զեն և եղեք թև ու թիկունք առյուծին:-
Կարծես մի ողջ Հայաստան տարվեց մի լույս հեքիաթով,
Սյունիք, Տարոն ու Արցախ երգում էին հոգեթով...
Անցնում էի աշխարհով՝ Մասիսները ուսերիս,
Ու Սիփանը ձեռքերիս, ու Զեյթունը այտերիս,
Սեգ պոեմներ շաղ տալով, ասք ու լեգենդ կրծքիս տակ,
Փառքի դափնին ճակատիս, հատորներս թևիս տակ,
Անցնում էի տիրաբար, անցնում էի առնացի,
Արևները հայացքիս ու հայացքս առյուծի:

Ա՛Խ, ԱՅՍ ՄԱՍԻՍԸ
(Հովհ. Շիրազ և Գ. էմին)

Ա՛խ, այս Մասիսը...
Կարո՞ղ եք ասել՝
Քանի՞ տարեկան կամ դարական է,
Եվ ո՞վ իրավունք ունի մասիսվել,
Ախր Մասիսը շիրազական է:
Երբ դեռ Շիրազը աշխարհում չկար,
Արդյոք եղե՞լ է այս Մասիսը ծեր.
Արագածը և Սիփանը վկա՝
Շիրազն է Մասիս սարը ստեղծել:
Ա՛խ, այս Մասիսը...
Մեզ այսքան մոտիկ, բայց երազային,
Եվ այսքան հեռու, բայց շիրազային,
Սահմանամերձ ու սահմանազատված,
Ինչպես պոեմից զատված մի հատված,
Անգութ աշխարհի մեղքով միրաժված,
Սակայն Շիրազի սիրով շիրազված...
Լոկ Եվտուշենկոն կարող է գրկել
Ու խեղճ Մասիսը Շիրազից... փրկել:

ԻՆՉ ՈՐ ՊԻՏԻ ԵՍ ԳՐԵԻ
(Գևորգ էմին)

Հղացումներ շատ ունեի
Իմ շառաչուն հանգ ու վանկով,
Ինչ որ պիտի ես գրեի՝
Գրեց ինքը՝ Եվտուշենկոն:
Ատոմի ուժ ունի լուցկին,
Էյնշտեյնը դա չի հերքում,
Եվ դեռ չկար Բորիս Սլուցկին,
Որ ես Հեգել էի հեգում:
Համզաթովը դեռ չէր ծնվել,
Որ ես եղա Ղարաբաղում,
Ինչ Բլոկը պիտի գրեր,
Ես գրել եմ դեռ շատ վաղուց:

Ահա այսպես քանի՞ տարի
Ինքս իմ մեջ բարկանում եմ,
Ինչ որ պիտի ես գրեի՝
Հիմա նստել թարգմանում եմ:

ԱՅՍ ՏԱՐԻՔՈՒՄ
(Գևորգ Էմին)

Մի գյուղից չենք, մի հյուղից ենք,
Մի ծառից չենք, մի ճյուղից ենք,
Թե որ իրար մենք չգովենք,
Մեզ չե՞ն ասի, թե դուք ով եք:
Դե, շուտ լցրեք գինին անգին,
Խմենք կենացն Աշտարակի:
Մի հորից չենք, մի մորից ենք
Եվ ապրում ենք մի ոստանում,
Ամենքս մի խմորից ենք,
Զգույշ խոսեք Հայաստանում.
Դե ականջդ հիմա դես բեր,
Բան եմ ասում, պստիկ ախպեր:
Մի ջրից չենք, մի արխից ենք,
Նույն խաղողի քացախից ենք,
Ի՞նչ իմանաս բանն աշխարհի
Եվ կարող է Արցախից ենք:
Բայց ո՞ւմ ինչ, թե որտեղից ենք,
Մի տոհմից ու մի ցեղից ենք:

Մի ձորից չենք, մի սարից ենք,
Ախր, ինչո՞ւ իզուր ճառենք,
Մեր Հայաստան աշխարհից ենք,
Սասնա պարը պիտի պարենք:
Ի՞նչ ես լռել, ե՛լ, զուռնաչի,
Պարը սառեց, զուռնան փչի:
Պարեմ պիտի, տարիք չկա,
Այս հասակում չարիք չկա,
Թե այլևս տարիք չկա,
Այս բարիքը լինի վկա,
Ջահելների հետ չափվելու
Կարիք չկա:

ԵՍ ԿՈՒԶԵՆԱՅԻ
(Համո Սահյան)

Ի՞նչ կուզենայի... Ես կուզենայի
Որ այս աշխարհում ամեն մի գրող
Դառնար խղճաչափն իր ապրած դարի,
Սուրբ ներշնչանքով գրված ամեն տող
Գոհար հռչակվեր համամարդկային:
Ես կուզենայի,
Որ փակվեր ճանփան միջակությունների,
Հանգաթուխներին երես չտային,
Անհույզ ու անկիրք
Ամեն ձևի գիրք
Խոտան համարվեր համաշխարհային:
Ես կուզենայի,
Որ տաղանդներին ճանապարհ տային,
Եվ գնահատեին բանաստեղծներին
Ոչ թե գրքերի բազում քանակով,
Քննադատների հանաք-մանաքով,
Այլ՝ գրքի ոգու մեծ հաղթանակով:
Ես կուզենայի, որ ամեն գրչակ
Հարայ-հրոցով իր տխրահռչակ-
Վեճի չմտներ ավագների հետ,
Էմինի կողքին ինչ-որ մի անճար
Իրեն չանվաներ Նաիրյան պոետ:

Ես կուզենայի,
Որ ավագությունը անժխտելի-
Ոչ թե լավ գինու քաղցրությամբ խաբվեր,
Այլ սահյանական Նաիրյան բարդու
Անուրանալի բարձրությամբ չափվեր:
Եվ, առհասարակ, ես կուզենայի
Ոչ մի ժամանակ
Ամեն զուռնաչի
Չդառնար երբեք գրքի հեղինակ:
Ես կուզենայի,
Որ բիբլիական տապանը Նոյի

Մեր լուրթ Սևանում
Կամ Վանա ծովում
Տիրաբար ճոճվեր,
Առագաստ բացեր ընդդեմ հողմերի
Եվ խաղաղության շոգենավ կոչվեր:
Եվ կուզենայի,
Որ շողոքորթը իր շեֆի համար
Հանրային հոտից ոչխար չմորթեր,
Եվ անարժանը՝ քեռու թիկունքով
Բարձր պաշտոն ու կոչում չշորթեր:

Եվ հետո նաև ես կուզենայի՝
Մեր գարունները հայերեն գային
Եվ մեր ձյունները հայերեն լային:
Մեր լույս ամառը շոգեր հայերեն,
Եզը լուծն ուսին չոքեր հայերեն,
Աղին անալուց ջոկվեր հայերեն:
Մեր ցանած հունդը հայերեն ծլեր,
Ապաշնորհը հայերեն լռեր
Եվ Վահե Քաչան հայերեն գրեր:
Եղնիկը հանդում խրտներ հայերեն,
Հնձվորը արտում քրտներ հայերեն,
Օրը լուսանար, մթներ հայերեն:
Տրակտորն իր հերկը հայերեն հերկեր,
Սխալն ու սուտը հայերեն հերքվեր,
Շառլ Ազնավուրը հայերեն երգեր:
Կռունկն իր բույնը հյուսեր հայերեն,
Հայը թե հայ է՝ խոսեր հայերեն,
Իմ Որոտանը հոսեր հայերեն:
Ձյունը աշխարհում հայերեն տեղար,
Մեր ջրաղացը հայերեն աղար,
«Արարատ» թիմը հայերեն խաղար:
Վարպետն իր պատը շարեր հայերեն,
Մեր անսամբլը պարեր հայերեն,
Ոչ թե պարսկերեն կամ ֆրանսերեն.
Մեր աղջիկները հայերեն սիրեն
Հետո, վերջապես, ես կուզենայի,
Որ հատընտիրս տպվեր... ռուսերեն:

ԱՍՔ ՊՂՆՁԱՁԱՅՆ
(Վահագն Դավթյան)

Եվ պղնձե հազար շեփոր ղողանջեցին պղնձածայն,
Եվ պղնձե հազար թափոր հորանջեցին պաղատածայն:
Եվ պղնձե հազար ծնծղա ծիծաղեցին միանգամից,
Եվ պղնձե հազար քուրմեր երգ ոգեցին արեգակին:
Եվ պղնձե մեր շեփորով գովքը անենք Փառանձեմի,
Գովենք Գնել պատանյակին՝ փանդիռներով հազար ձենի,
Հետո դառնանք փառաբանենք հայոց Արշակ մեծ արքային,
Եվ սրանից երբ որ պրծնենք, մենք արխային՝
Թմբուկներով խրոխտածայն անեծք ասենք նենգ Շապուհին,
Եվ անիծենք, անեծք ասենք Սյունյաց Վասակ դավաճանին,
Եվ չհիշենք բարի խոսքով Կլեոպատրա այդ լաչառին,
Փառաբանենք պղնձակոփ Արտավազդին քաջակորով,
Մուշեղ քաջին փառաբանենք՝ պղնձավառ շեփորներով...
Այստեղ մի պահ մենք շունչ քաշենք, հետո նորից անցնենք առաջ.
Ըմբոստ Գնել պատանյակի մահը ողբանք լալահառաչ,
Ապա դառնանք գովքը անենք պղնձահուր մեր հարսների,
Եվ փառք ասենք պղնձային՝ մեր Թոնդրակյան հերոսներին:
Փանդիռներով պղնձալար, շեփորներով պղնձաբոց,
Պղնձածույլ պոեմներով վիպենք անմահ փառքը Հայոց:

ԸՄԲՈՍՏԱՑՈՒՄ
(Սիլվա Կապուտիկյան)

Ո՛չ, չեք կարող, ինձ չեք կարող մոռանալ,
Ուր էլ գնաք, ես կլինեմ ձեր կողքին,
Մրրիկ կլինեմ, փոթորիկ ու հողմ կդառնամ,
Կարկուտ կլինեմ՝ կջարդեմ ձեր ապակին:
Լիլիթի պես բոց կդառնամ հրեղեն,
Ձեզ կվառեմ հմայքներով կանացի,
Կհաստատեմ՝ Եվայի պես անմեղ եմ,
Ես մայրաշունչ մեր Նուարդն եմ հայածին:

Թե որ փակեք ձեր դռները դուք իմ դեմ՝
Քամու նման լուսամուտից կմտնեմ,
Լուսամուտը թե որ փակեք, օ՜, գիտեմ,
Ամպ կդառնամ ու ձեր գլխին կմթնեմ:
Դյութված սիրով ու կարոտով հայրենի,
Ես կդառնամ տագնապի կանչ, աղաղակ,
Եվ չեմ թողնի ֆրանսահայ պատանին
Դարձնի մեր սուրբ «Արարատը»՝ «Աղաղատ»:
Ո՛չ, չեք կարող ինձ ստիպել համրանալ,
Ողջ աշխարհը ես կտամ իմ ոտքի տակ-
Կամչատկայից մինչև Արցախ և Ուրալ,
Կանադայից մինչև Լոռ ու Նեբեդակ-
Զանգ կդառնամ, կղողանջեմ ամեն տան
Եվ բանակներ դուրս կբերեմ ես ի՛ մարտ,
Որ ինձ՝ հետին մշակիս՝ մեր դպրության,
Չափեն, դատեն մեր մեծերին համեմատ:
Հողմ կդառնամ, արև, կրակ, ամեն բան
Եվ կլինեմ միշտ աննկուն ու համառ,
Թե հարկ լինի՝ ձեզ միլիցիա քարշ կտամ...
Ո՛չ, չեք կարող, ինձ չեք կարող մոռանալ:

ԻՄ ԲԱՐԻ ՖԵԱՆ ԵՎ ԻՄ ԻԴԵԱՆ
(Հրաչյա Հովհաննիսյան)

Ամեն մարդ ունի իր բարի Ֆեան,
Նրան է սիրում, նրան է գերում
Ու նրա հետ է նա միշտ դեգերում,
Տանջելով սիրում, սիրելով՝ ներում:
Ամեն մարդ ունի իր ատմոսֆերան,
Գիշեր ու ցերեկ դռներ է թակում,
Քեռու թիկունքով պաշտոն է ճանկում,
Խուժանների հետ կոնյակ է լակում,
Պապի թոշակով հաշիվը փակում:
Ամեն մարդ ունի և իր իդեան,
Չունեցած փառքով գլուխ է պահում,
Վիճակախաղով «Վոլգա» է շահում,
Թողած կնոջն իր պերճ ու դուրեկան,

Աչքը գցում է ուրիշի կնկան:
Սակայն ուրիշ է իմ բարի Ֆեան,
Ինձ հետ հերկել է այս հողը խոպան
Ու կոչել է ինձ հրաշք այգեպան,
Չի թողել նստեմ վատի հետ սեղան,
Արատավորեմ իմ անմեղ մեղան:
Իմ բարի Ֆեան օգնել է, որ ես
Այգիս դարձնեմ մի դրախտ պարտեզ,
Ամենքի կողքին լինեմ պարզերես,
Եվ պայծառ մի օր պարգևել է ինձ
Բանաստեղծ որդի՝ Դավիթ Հովհաննես:

ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՆՔ
(Մարո Մարգարյան)

Թեկուզ պապիկ, տատիկ ենք մենք,
Սակայն հոգով մանուկներ ենք.
Թե չծաղրեն, ձեռ չառնեն մեզ,
Կգնանք մենք մանկապարտեզ,
Երգենք զվարթ, պարենք, վազենք
Ու շաքարին «կակա» ասենք,
«Մուկ ու կատու» խաղանք բակում,
Մեծերին ձեռ առնենք թաքուն,
Սիրենք մեր լավ մայրիկներին,
Սիրենք մեր լավ հայրիկներին,
Սիրենք մեր լավ պապիկներին
Հայրենիքիս տատիկներին:

Մանուկներ ենք անօգ նորեն,
Թեկուզ ամբողջ դար գլորենք,
Թոռնիկներին մեր օրորենք,
Եվ հարսների պես շորորվենք:
Հնար լիներ՝ այս մեծական,
Այս ծերական դիմակն հանենք,
Օրորոցում բայ-բայ անենք,
Ծաղիկ քաղենք սար ու ձորից,
Մի անգամ էլ գոչենք նորից՝

ճամփա տվեք, մենք ենք գալիս՝
Տատիկները, պապիկները,
Բալիկները ողջ աշխարհի:

ՍԻՐԵՐԳ
(Մկրտիչ Սարգսյան)

Մի՛ գնա, լավս, մի՛ գնա, չարս,
Կարոտս, ջանս, իմ դավաճանս,
Ուժեղս, թույլս, արևս, բույրս,
Արևաքույրս, աստղաբույլս:
Խինդս՝ կապույտ լիճ, վիշտս՝ անհուն ծով,
Կարոտս՝ արձակ, սերս՝ չափածո,
Մի ձեռքիս գրիչ, մի ձեռքիս՝ քնար,
Գիշեր ու ցերեկ երազս Նանար,
Կյանքս անցել է կրակների տակ
Եվ դեռ պոեմներ ունեմ անավարտ...
Ճերմակ մազերիս մի՛ նայիր այդպես,
Վաթսունի մեջ էլ դեռ ջահել եմ ես,
կանգնած Արարատ սարին հավասար,
Թե որ մի զարկեմ՝ կջարդեմ հազար...
Մի՛ գնա, ջանս, մի՛ գնա, չարս,
Իմ Սասնա սարս, իմ լալազարս
Եվ հանգի համար... իմ Քաջ Նազարս:

Ա՛Խ, ՄԻՏՍ ԸՆԿԱՎ
(Աշոտ Գրաշի)

Երազում տեսա մեր Պըլը-Պուղուն,
Իմ Ղարաբաղը, ա՛խ, միտս ընկավ,
Ո՞վ է մնացել տեսնես մեր հյուղում,
Պապիս մաղախը, ա՛խ, միտս ընկավ:
Գառնարած էի Մռով մեր սարում,
Ես իմ սիրածից խռով մեր սարում,
Վրձինով լեռներ էի նկարում,

Վարդերի շաղը, ա՛խ, միտս ընկավ:
Ծննդավայրս Թաղավարդ գյուղն էր,
Հանդերում թափված մեղր ու յուղ էր,
Սիրածիս դոշին փշատի ծյուղ էր,
Մեր թթի բաղը, ա՛խ, միտս ընկավ:
Հե՜յ, իմ բլբուլներ, որտե՞ղ եք թռել,
Ձեր մասին որքա՜ն երգեր եմ գրել,
Սիրտս լցվել է, չեմ կարող լռել,
Մեր թունդ արաղը, ա՛խ, միտս ընկավ:
Ես քո հողից եմ բուսել, Ղարաբաղ,
Կաթի ուժ ունեն քո ջրերը պաղ,
Ի՞նչ հաց կհասնի մեր հացին շարմաղ,
Տատիկիս մաղը, ա՛խ, միտս ընկավ:
Վերադարձրեք իմ մանկությունը,
Հուշ, երազ դառած իմ պապի տունը,
Այսօր տեսա մեր Մասիսի ձյունը,
Իմ Ղարաբաղը, ա՛խ, միտս ընկավ:

ՂԱՐԱԲԱՂԱՁՈՆ
(Միքայել Հարությունյան)

Սիրենք այս հողը քարագիր մատյան,
Սուրբ ներշնչանքով պոեմներ գրենք,
Խոսենք բարբառով մեր ղարաբաղյան,
Մեր լեռնաշխարհը աստվածացնենք:
Այստեղ է ահա գյուղն իմ Հակակու
Եվ մանկությունս, և կարոտ, և սեր,
Մեր «Սովետական Ղարաբաղ» թերթում
Իմ նոր երգերի շարքն է լույս տեսել:
Այստեղ հունվարին ծաղկում է հոնին,
Անտառում հասնում մասուր ու զկեռ,
Արձագանքում են ձորերը ձորին.
- Մեր Միքայելը բարո՜վ է եկել:
Ղարաբաղ մնանք ու ղարաբաղցի,
Չլքենք հողն այս՝ պատիվն իմ ու ձեր...
Մնացեք բարով, դե՛հ, ես գնացի,
Դուք մեր լեռները ամուր պահեցեք:

Օ՜, ՈՉ, ՆԱ ՉԷ...
(Եվգենի Եվտուշենկո)

Օ՜, ոչ, նա չէ հայ եղբայրը ռուսի,
Ով ռուսներից պաշտոն է շորթում,
Տափակ երգեր է գրում մեր մասին,
Ռուսական դպրոց ուղարկում որդուն:
Այլ նա,-
Մոտ է ում սրտին ու հոգուն
Հայկական ոգին, հայոց վիշտը ծով,
Ով ռուս եղբորը չի շողոքորթում,
Հային զրպարտում ռուսերեն լեզվով:
Մենք եղբայրության անունից կյանքում
Ճառեր ենք ասել ամբիոնից այնքա՜ն,-
Նրանք, ովքեր սոսկ լոզունգն են հարգում,
Չեն կարող ռուսին լինել բարեկամ:
Դրանից չէ՞, որ երեկվա գյադան
Ազգամոլներ է փնտրում ամեն տեղ,
Եվ սասանելով սյուները իր տան,
Ապստամբում է հայոց լեզվի դեմ:
Ես գիտեմ, մի օր աշխարհից արար
Կջնջվեն բոլոր շողոքորթները,
Եվ ծիածանը կկապի կամար,
Ամեն ազգ կլինի իր բախտի տերը...
Իսկ թե ոչ...
(Միայն թե ուժս ների,
Չմեղադրեն շովինիստներն ինձ).
Մաշտոցի գիրը կառնեմ ուսերիս,
Փրկեմ աննամուս ու կեղծ հայերից:

1984 թ.

ԴԵԿՏԵՄԲԵՐ
(Մի ուրախ առիթով գրված բանաստեղծություն,
որ պիտի տպագրվեր «Գարուն» ամսագրում)

Աղջամուղջի անցորդները խորհրդավոր,
ինչպես ծառերից կախված ջութակներ,
իրենց ուրախ ու տխուր մեղեդիներն են նվագում
եվ ցույց են տալիս, որ ոգևորված են:

Մինչդեռ նրանք նոտաները խառնել են
ֆոսֆորացող օդի հիերոգլիֆի հետ
և չինական «Տանգո» են նվագում
կամ էլ դրա նման մի բան:
Մաշվում է տեսիլքը.
Ո՛չ, խորհրդավոր անցորդները ծառերից կախված
ջութակներ չեն,
այլ մերժված երգերի բանաստեղծներ,
որ չեն կարողանում տպագրվել,
որովհետև արդյունաբերությունից,
գյուղատնտեսությունից,
մասնավորապես
այգեգործությունից,
բանջարաբուծությունից,
անասնապահությունից ու քաղաքատնտեսությունից
ընդհանրապես ոչինչ չեն հասկանում:
Կամ ահա այս աղջիկը, որ նման է ծերմակ չղջիկի
կամ բունը կորցրած կանաչ ագռավի,
թեկուզ Դեզդեմոնայի գեղեցկությունը չունի,
թեև որևէ համալսարան կամ տեխնիկում է վերջացրել,
բայց գարեջուր է վաճառում
իր քնարական կոնքերով:
Բացվում է օրը:
Ծառերը երկնքից իջնում են հողի վրա,
կախվում ջութակների լարերից,
Պագանինիի «Սատանաների պարն» են նվագում
դողում
քամու ֆուգաներում՝
մեցո-սոպրանո:
Իսկ խոտն այստեղ դեռ չունի իր ազգանունը,
հայրանունը,
և, ընդհանրապես, իր անունը:
Ցողը՝ որ ինչ-որ ժամանակ ամուսնացել խոտի հետ,
պահանջում է ապահարզան,
չզգալով սակայն, որ հիմա դեկտեմբերը վերջանալու վրա է,
հետո պիտի լինի
հունվար, փետրվար, գարուն,
ամառ, արև, լույս,
և բողբոջի պես պիտի պայթի բառը:
Թող չեն մնա մեր պոեզիայի կանաչ անտառը:

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱՏԻՆՔ

Նախատում են ինձ անդադար-
Ինչո՞ւ լեզուդ քեզ չես պահում,
Ի՞նչ ես գոռում գլխապատառ,
Ո՞ւմ համար է սիրտդ ցավում:
Քո ի՞նչ գործն է՝ պարողն ով է,
Շատերի պես դու էլ ծափ տուր,
Թթվին ասա մեղրածոր է,
Յաբուդ նստիր, սանձը թափ տուր:
Ի՞նչ անենք, թե այսինչ պետը
Անբան է ու կաշառակեր,
Քաղցր լեզու գտիր հետը,
Շնորհք ունես, դու էլ առ կեր:
Ուրիշները իրենց համար
Ծովափներին քեֆ են քաշում,
Իսկ դու գրչիդ կպել համառ,
Գիշեր-ցերեկ թուղթ ես նախշում:
Հա՜, գրում ես, հա՜, ջնջում ես,
Ինքդ քեզնից դուրս ես գալիս,
Սիզիֆի պես քեզ տանջում ես
Եվ զույգ ձեռքով գլխիդ տալիս:
Բայց վաստակիդ պտուղն ո՞ւր է,
Որ այրվում ես այդպես անբոց,
Ոչ սեփական «Վոլգա» ունես,
Ոչ էլ շքեղ ամառանոց:
Աշխարհից ի՞նչ պիտի տանես
Քո այդ խելքով պլատոնական,
Ախր դու ի՞նչ տղամարդ ես,
Սիրուհի էլ չունես անգամ:
Շաղակրատ ու շողոքորթին-
Հա՜ ճզմում ես գրչիդ տակին,
Եվ նրանք էլ կարծում են, թե
Նախանձում ես իրենց փառքին:

Դիրեկտոր ու պետ չես ասում,
էլ չես ասում՝ ընկեր, ծանոթ,
Կոխկրտելով ո՞ւր ես վազում,
Յաբուդ պահիր, ա՛յ Դոն Կիխոտ:
Ի՞նչ ես դառնում վատամարդի,
Ինչո՞ւ աչքի փուշ ես դառնում,
Բառագունդդ հանել մարտի,
Խայթում ես ու չես կշտանում:-
Նախատում են՝ թող նախատեն,
Ես ոչ խուլ եմ, ոչ էլ հավկուր,
Հո չեմ կարող ուղտը նստել
Եվ կուզեկուզ ման գալ կյանքում:
Այն հեքիաթի մանկան նման
Լավ չէ՞ ասեմ՝ մե՜րկ է արքան,
Քան անհեթեթ գովեմ նրան
Ու վայելեմ փառք ու հարգանք:

1984 թ.

* * *

Ի՜նչ ասեմ այն խնդությանը,
Երբ ժպիտ ու ծիծաղ չկա,
Այն տխրությանն ի՞նչ անուն տամ,
Երբ արցունքի մեջ ցավ չկա:
Ո՞նց չծաղրեմ այն կոնծողին,
Որ իր ձեռքին գավաթ չունի,
Աստծո դուռն այն ծեծողին,
Որ իր հոգում հավատ չունի:
Ես թքել եմ այն տան պատվին,
Ուր կավատն է ավագ հաշվվում,
Անպատվում է հորը որդին,
Դեռ ականջն էլ մի լավ քաշում:
Ի՞նչ ասեմ այն ծիծեռնակին,
Որ աշնանն է բունն իր շինում,
Եվ այն թշվառ մատռվակին,
Որ հարբում է մի թաս գինուց:
Այն հարսանքին ես ի՞նչ ասեմ,
Ուր փեսան է ճառեր ասում,
Իսկ «ամոթխած» նորահարսն էլ
Պորտապարն է գերադասում:

Ի՞նչ ասեմ այն սևահողին,
Որը երբեք բերք չի տալիս,
Ի՞նչ անուն տամ այն ժողովին,
Որտեղ միայն... ծափ են տալիս:
Այն գիտունին ո՞նց չանպատվեմ
Ու չկոչեմ նրան դահիճ,
Երբ այս չքնաղ աշխարհի դեմ
Ռումբ է ձուլում՝ հանուն շահի:
Չապտակե՞մ այն գծուծ որդուն,
Որ փողեր է միայն դիզում,
Եվ այն անխիղճ շողոքորթին,
Որ իր պետի ոտքն է լիզում...
Ես ի՞նչ ասեմ այն քաղքենուն,
Որ տարված է իր ճաշակով,
Պորտաբույծին այն զազրախոս,
Որ ապրում է հոր թոշակով:
Ստահակին՝ անտուն-անտեր,
Որ մոխիր չի մի տեղ թափում,
Եվ այն նեխած լճին, որ դեռ
Ցողի հետ է իրեն չափում:
Ի՞նչ անուն տամ ես այն գետին,
Որ ծորերում չի որոտում,
Խիղճը մեռած և այն պետին՝
Քեռուց անգամ փող է շորթում:
Եվ այն կատվին, որ քծնելով,
Քսմսվելով վեր բարձրացել,
Ճարպկությամբ իր կատվային-
Առյուծ Մեծի աջն է դարձել:
Չծաղրե՞մ այն խեղկատակին՝
Ո՛չ լավ հայր է, ո՛չ լավ ընկեր,
Բայց իր շիրմին-դեռ կենդանի
Հուշարձան է արդեն տնկել:
Եվ այն լպիրշ հավակնորդին,
Բայց խորամանկ ու կեղծավոր,
Որ եկել է ու մեր գլխին
Դարձել իշխան ու մեծավոր...
Դուրսպրծուկին այն շահամոլ,
Որ դռներ է անվերջ բախում,
Հանուն որդու և հանուն հոր

Մեքենա է առնում-ծախում:
Այն խաղողին, որ հյութ չունի,
Շաքարով են համը բերում,
Այն պոետին, որ նյութ չունի,
Նստել՝ եղունգներն է քերում:
Չհայհոյե՞մ այն հոպոպին,
Որ չունի բույն ու բնակալ,
Բայց ուրիշի տունն է մտնում,
Դառնում և՛ տեր, և՛ տիրակալ:

* * *

Մենք մեզ ենք խաղում-
Մեզ հաստատելով ու մեզ հերքելով,
Մեկը մյուսիս նմանակելով,
Մեր խինդ ու վշտով,
Ցիծաղ ու լացով,
Հաճախ ուրիշի թելադրածով:
Մեզ Օթելլո ենք ներկայացնում,
Փիլիսոփայում Համլետի ոգով,
Բայց մեր Համլետը ինչ-որ տեղ ծռում,
Մեր հոգում տեղ է գրավում Յագոն:
Մենք մեզ ենք խաղում-
Մերթ մեր դիմակով ու մերթ ուրիշի,
Ու թե կեղծում ենք-
Մենք մեզ ենք կեղծում
Եվ հազար անգամ
Նույն ջուրը ծեծում...
Մենք մեզ ենք խաղում-
Ու մեզ ասպետ ենք հաճախ համարում
Մեր դոնկիխոտյան խենթությամբ արի...
Երբ մեր նիզակը հողմաղացին է
Հանկարծ դեմ առնում,
Նոր ենք հասկանում,
Որ գետի վրա ալյուր ենք մաղում,
Որ քեֆերում ու հարսանիքներում
Դհոլ խփելով հանճար չեն դառնում:

* * *

Ոչ մի օրենքով ու հրամանով
Չես կանգնեցնի պտույտները մեր
Մայր մոլորակի:
Ոչ մի օրենքով ու հրամանով
Չես կարող ստիպել,
Որ արեգակը՝ ուր մայր է մտնում-
Այնտեղից ծագի:
Ոչ մի օրենքով ու հրամանով
Շողոքորթների բերանը երբեք
չես կարող փակել:
Ոչ մի օրենքով ու հրամանով
Պատուհանների ապակու վրա
դզզացող ճանճը
Ապակին երբեք չի կարող ծակել:
Ոչ մի օրենքով ու հրամանով
Ստահակին չես դարձնի մեծանուն:
Կյանքը ունի իր օրենքը հաստատ-
Ձուկը ծովումն է ծնվում, մեծանում,
Թեպետ փորձում ենք մենք նրան խաբել
Ցով հիշեցնող ակվարիումներով:

* * *

Չնայած կյանքում
Չենք ծնվել հավկուր,
Բայց հավկուրությամբ գլուխ ենք պահում,
Որ հեշտ ու հանգիստ անցնենք թոշակի:
Ապաշնորհը ձգտում է փառքի
Եվ ուրիշների փառքը գողանում-
Կույր ենք, չենք տեսնում:
Ստոր խարդախը իր թթու թանը
Արդար յուղի տեղ շուկա է հանում-
Կույր ենք, չենք տեսնում:
Ճղճիմ քաղքենին նստած իր տանը՝
Իր բամբասանքի իլիկն է մանում-
Կույր ենք, չենք տեսնում:
Չափը կորցրած ամբարտավանը
Ամբիոններից է իրեն մեծարում-
Կույր ենք, չենք տեսնում:

Պետի աթոռին նստած անբանը
Իր թիկունք-շեֆի ցավն է հա՜ տանում-
Կույր ենք, չենք տեսնում:
Արվեստն արհեստից չզանազանող
Այս հանգաբանը
Պարարտ հող գտել,
Իր նեյնիմներն է մի գլուխ ցանում-
Կույր ենք, չենք տեսնում...
Եվ հավկուրությամբ գլուխ ենք պահում:

* * *

Օ՜, մեծեր, մեծեր,
Փառքերով արբած փառամոլ մեծեր,
Ժողովներից ու ամբիոններից
Դեռ չկշտացած՝ ճառամոլ մեծեր:
Դուք սիրում եք միշտ նույն ջուրը ծեծել,
Ապացուցել այն,
Ինչ ձեզնից առաջ
Ձեր նախորդներն են դեռ ապացուցել:
Որտեղ տեսնում եք թափուր պատվանդան,
Տանում-տնկում եք արձանները ձեր,
Եվ ընդունում եք այնպիսի կեցվածք,
Կարծես աշխարհը դուք եք ստեղծել:
Օ՜, հազար անգամ ու հազար ձևով
Մեծարված մեծեր,
Որ չեք հագենում սին դափնիներից,
Ու ճառ-ծափերից...

* * *

Այո՛, դժվար է, երբ գրելիս
Կամ խմբագիրն է քո մեջ արթնանում,
Կամ քննադատն է խորհուրդներ տալիս՝
Տեսություններով գլուխդ տանում,
Բայց մի նվնվա, մի տրտնջա դու,
Նրանք հո նո՞ր չեն կյանքիդ մեջ մտել:
Ցավալին այն է, որ կան աշխարհում
Հատուկ շտամպի թերուս տգետներ-

Բռնած օրենքի տուտը և ոգին,
Սակայն սրտերում պահած ոխ ու քեն,
Կարդում են երգդ և տողատակին
Հայտնաբերում են հանցավոր մտքեր:
Քննադատների համարում ունեն,
Բելիկովները մեր այդ գերզգոն,
Որքան որ տգետ, նույնքան համառ են
Եվ ամեն ինչից մի տեսակ դժգոհ:
Նրանք կարող են և մեծարել քեզ,
Լույս տեսած գիրքդ դարձնել «երգ-երգոց»,
Իսկ հաջորդ օրը պսակդ պոկել
Եվ հեշտ ու թեթև նետել աղբանոց:
Նույնիսկ ոխերիմ քո թշնամու հետ
Հարկ եղած դեպքում լեզու կգտնես,
Իսկ տգետներից այդ ամենագետ՝
Մահը կարող է միայն փրկել քեզ:

1984 թ.

ՌԵՔՎԻԵՄ

Մարդն աշխատել է քառասուն տարի,
Հսկա հիմնարկ է նա ղեկավարել,
Ընկեր է եղել համեստ ու բարի,
Ենթականերին չի արհամարհել:
Տեղի-անտեղի բռունցքը երբեք
Գրասեղանին չի իջեցրել,
Դեմքը չի փոխել եղանակի հետ,
Իր խղճի առաջ հոգին չի ծռել:
Բայց մեկը ահա բյուրոկրատի,
Փորեց, փորփրեց ու գտավ «մինուս»-
Հիմնարկի պետը ինչ-որ ծանոթի
Մի հին սենյակ է տվել «հերթից դուրս»:
Ու հանձնաժողով ստեղծվեց հատուկ՝
Փորձված ու հմուտ տառակերներից,
Ամբողջ հիմնարկը ընկավ խլրտում-
Երևան բերված թերություններից:
Եվ հարցը դրվեց բյուրոյի նիստում,
Քննադատեցին աջից ու ձախից,

Ով հաշիվ ուներ, քեն ուներ սրտում՝
Բերեց ու թափեց խեղճ մարդու գլխին:
- Նա ղեկավար չէ, այլ ավանտյուրիստ...
- Անբանի մեկն է...
- Ամբարտավան է...
- Նկատողություն հայտարարել խիստ...
- Եվ դնել ի ցույց...
- Պաշտոնից հանել...
Եվ չթողեցին, որ մարդը խոսի.
Բյուրոն որոշեց, բյուրոն հաստատեց:
Իսկ նա տուն հասավ գիշերվա կեսին
Ու բռնեց կուրծքն իր...
Եվ ուշ էր արդեն...
. . . . . .

Իսկ հետո եղան դամբանականներ,
Խոսքեր ասվեցին այնքա՜ն գեղեցիկ...
Մարդն աշխատել է քառասուն տարի,
Հսկա հիմնարկ է նա ղեկավարել,
Ընկեր է եղել համեստ ու բարի,
Ենթականերին չի արհամարհել...
Բայց չեղավ մեկը, որ խոստովանի.
Ախր, հասկացե՛ք, մարդ ենք սպանել:

1984 թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Լույսդ տուր ինձ՝ չխարխափեմ,
Տո՛ւր սերդ ինձ՝ սիրով արբեմ,
Տո՛ւր հույզդ ծով՝ աներգ չմնամ,
Արևդ տուր՝ անբերք չմնամ:
Տո՛ւր ամպերը քո լեռների՝ անձրև դառնամ
Կապույտ գարնան,
Եվ երկնքիդ ծիածանի կամար կապեմ,
Ձեփյուռդ տո՛ւր՝ բարդիներիդ հետ սոսափեմ,
Կրակդ տո՛ւր՝ որ բքերի մեջ չսառչեմ,
Տո՛ւր ուժդ ինձ՝ ձորերիդ մեջ դառնամ ջրվեժ
Ու շառաչեմ:

Տո՛ւր շեփորդ՝ դառնամ ես քո կուռ բանակի
Հաղթանակի
Շեփորահար:
Տո՛ւր դրոշդ, որ փառքիդ պես պահեմ միշտ վեր,
Կարծրությունդ տո՛ւր պողպատե,
Քո դեմ ճայթող շանթերի դեմ
Դառնամ վահան ու շանթարգել:
Երկի՛ր, տուր ինձ քո մայրական օրհնանքը ջերմ,
Որ քեզանով մնամ քո մեջ,
Դու ինձնով քեզ
Եվ քեզանով ինձ ճանաչես:

1974 թ.

ԳՐԱԿԱՆ ԽՈՒԺԱՆԸ

Այսօր Տերյան, վաղը Լորկա ու Սնակ է:
Երեկ Բայրոն, երկու օր անց Պաստեռնակ է:
Մի օր Չարենց, մի օր Սահյան կամ Պետեֆի,
Պետեֆու հետ մի անգամ (հանգի համար) նստեց քեֆի:
Եվ միմոսն այդ հանգի գերի-
Շատ է սիրում «պառնասեցու իր դիրքերից»
Հանճարներին միշտ քարկոծել.
- Ի՞նչ Շահազիզ, ի՞նչ Պատկանյան, ի՞նչ Վարուժան,
Դրանք վաղուց հնացել ու մոռացվել են,
Դոդոխյանն ու Սիամանթոն շատ են էժան,
Քուչակի և Նարեկացու դարն անցել է:-
Նա փորձ ունի արդեն կարգին,
Եվ լավ գիտե երգ թռցնելու,
Ու թռցրածը թաքցնելու
Հարմար ձևն ու եղանակը:
Հասկանում է՝ ինչ ձևով են փառաբանվում
Ու հորջորջվում տաղանդավոր,
Ո՞ւմ կարող է սևով ներկել
Եվ անվանել աղանդավոր...
Կուրծք է ծեծում ամբիոններից ու բղավում.
- Ճանաչեցեք ձեր հանճարին,
Ինչո՞վ եմ ես պակաս թեկուզ Վարուժանից:-
...Քննադատնե՛ր, փրկեցեք մեզ
Պառնաս խուժած այս գրական լիրբ խուժանից:

ԱՍՔ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ

Հովհաննես Շիրազի հիշատակին

Շիրազը Մասիս սարի բողոքն է
Ու հառաչանքը մեր Վանա ծովի,
Շիրազը Արաքս գետի մորմոքն է,
Անլուռ տանջանքը գերված Տարոնի:
Շիրազը հավերժ հոգու թրթիռ է:
Նոյի տապանից թռած աղավնին,
Մեսրոպ Մաշտոցի սրբացած գիրն է,
Տագնապի կանչը Չենով Օհանի:
Շիրազն Ախթամար վանքի արցունքն է,
Չարից շղթայված Արտավազդ արքան,
Օտար ափերի հայի հարցմունքն է
Հայոց կռունկին՝ երկրից լո՞ւր չկա:
Շիրազը Սասնա հույսի Միերն է,
Բախտի հենակը անտեր Սասնա տան,
Որբացած մանկանց արցունքի լեռն է՝
Լցված բաժակը ծով համբերության:
Շիրազն Անին է մեր ավերակված,
Արյունով գրված մեր պատմությունը,
Եվ մոխիրներից հրաշքով հառնված,
Վերածնված մեր Փյունիկ թռչունը:
Շիրազը գերված մեր Կարս քաղաքն է
Ու գետը Եփրատ՝ վշտից խելագար,
Մեր ոգու ցասումն ու աղաղակն է-
Ընդդեմ աստծո՝ կույր ու խլականջ:
Շիրազը հայոց դարավոր հարցն է
Եվ հարցականը չլուծված հարցի,
Շիրազը՝ պանդուխտ այն հայի լացն է,
Որ մոլորվել է ճամփեքին դարձի:
Շիրազը երգի գարնանամուտն է,
Գարնան հեղեղ է ու գարնան որոտ,
Երկնքում թևող զանգակ-արտույտ է,
Շողով ու ցողով բացվող առավոտ,
Շիրազն այն հզոր սիրո կրակն է,
Որ սրտերի մեջ երբեք չի մարում,

Եվ հայրենաշեն այն մեծ բանակն է,
Որի զինվորը չի դավաճանում:
Շիրազն հյութն է մեր անուշ խաղողի,
Կարասների մեջ գժվող մաճառը,
Շաղիկներ դարձած ժպիտն է հողի
Ու մեր դպրության անմահ հանճարը:
Շիրազն իմաստուն մեր ապուպապն է,
Մեր գերդաստանի մանուկն է անեղծ,
Եվ ավանդական մեր երգի թափն է՝
Նարեկից մինչև եղիշե Չարենց:
Շիրազը մեր շեն օջախի ծուխն է,
Կարոտի լեռը ու խիղճը անբիծ,
Մեր ցավից պոռթկված այն հրաբուխն է,
Որ շպրտում է իր խառնարանից
Հրի փոխարեն՝
Լալ ու գոհարներ:
Շիրազն հավերժի հավերժող ձայնն է՝
Դարերից եկած՝ ուղղված դարերին,
Շիրազը հայոց վշտի արձանն է
Ու մոնումենտը գալիք օրերի:
Շիրազը չքնաղ մեր Երևանն է,
Արցախն ու Վանը, Եփրատն ու Անին,
Մեր Հրազդանն ու Մարութա սարն է,
Կապույտ ծփանքը՝ հրաշք Աևանի:
Շիրազը միշտ կա,
Մասիսը վկա,
Վկա Արագածն
Ու Սիսը վկա-
Քանի ապրում ենք այս երկնքի տակ-
Շիրազով պիտի մեր սիրտը բանանք,
Շիրազով պիտի չափենք մեր թափը,
Հայոց Շիրազով պիտի իմանանք
Մեր ոգու ուժն ու մեր սիրո չափը:

1984 թիվ
17-ին մարտի

ՍՄԲԱՏ ԵՎ ԲԱԲԵԿ

...Նույն տարին միևնույն իշխան Սահլի Սմբատյանը ձերբակալում է ապստամբ Բաբանին, որ մարդախողխող, աշխարհավեր, արյունարբու գազան էր, և հանձնում ամիրմունիի ձեռքը:

(«Աղվանաց աշխարհի պատմություն»
Մովսես Կաղանկատվացի)

Լինի թեկուզ Թալեաթ հազար
Եվ նույնքան էլ՝
Փաշա էնվեր,
Որքան ոռնաս, Ռասուլ Ռզա,
Սմբատները միշտ ծնվել են
Ու կծնվեն...
Որ պաշտպանեն երախտամոռ
Բաբեկներից պատիվը մեր,
Որ ինչ-որ մի քոչվորի թոռ,
Դարեր ի վեր
Անտուն, անտեր-
Չմտնի մեր տունն հայրենի
Ու հորջոջի իրեն տանտեր...
Սմբատները պիտի ծնվեն-
Ապացուցեն, որ աշխարհում
Որ այս հողում
Ոչ քո հայրը շիրիմ ունի,
Ոչ էլ պապը,
Որ ցեղիդ հետ եղած կապը
Ոչ թե այստեղ,
Այլ տոթակեզ
Անապատում գնաս փնտրես:
Սմբատները պիտի ծնվեն՝
Հատեն քո այդ լեզուն շողում,
որ առնես դաս,
Ուրիշներից խլած հողում
Ուրիշների պատմությունը
Չգողանաս...

Հիմա լսիր պատմությունն այս,
Ով հանգաթուխ Ռզա Ռասուլ,
Ունկ դիր և տես-
    Մեսրոպագիր
Պատմիչները ինչ են ասում:

1.

Հալածված ահեղ հակառակորդից-
Դեմքին իր հոգու թույնը անթաքույց-
Անտուն, անօջախ քոչվորի որդի
Բաբեկը փախավ ջարդված, մազապուրծ,
Թողած լեռներում, ձորերում մթին-
Զոհեր բազմաթիվ:
Նրա աչքերում սարսափ կար վայրի
Եվ ատելություն աշխարհի հանդեպ,
Շուրջը լեռներ են տոչոր, ամայի,
Օտար ճամփաներ և օտար հանդեր:
Նա հայրենիք էր փնտրում աշխարհում,
Եվ ազգ կոչվելու ուժ ու իրավունք,
Դրա համար էլ ջարդում էր, վառում
Ու պատսպարվում ձորերում խորունկ:
Աղվանքում արյուն, մահ ու կոտորած,
Բաղաց գավառում թալան ու ավեր,
Սյունյաց աշխարհում արտասուք ու լաց,
Կին, մանուկ ու ծեր
    Անտուն բնավեր...
Իսկ հետո... հետո այդ ինչպես եղավ,
Որ իր ոհմակը կրեց պարտություն.
Երկնքից կարծես հուր ու բոց տեղաց,
Հրաբուխ ժայթքեց ասես Սյունիքում:
Դա վերջն էր արդեն,
    և ինքն էլ գիտեր,
Որ ոչ մի ալլահ իրեն չի փրկի,
Եվ այս աշխարհում դժվար է հաղթել,
Նրանց, ովքեր որ Հայրենիք ունեն:

Իսկ ո՞վ է ինքը, ինչ ազգ ու տոհմից.
Քոչվոր էր հայրը,
    Եվ պապն էր քոչվոր,
Եվ ցեղն էր վայրի ու աստանդական,
Եվ նախնիները ավազակ ու գող,
Եվ ինքը հարկավ...
Օ, ալլահ, մի՞թե փրկություն չկա,
Գոնե մի գիշեր, մինչև լուսաբաց
Քներ ապահով...
    Եվ հիշեց հանկարծ,
Բաբեկը հիշեց Սմբատ իշխանին,
Որ մոտը հյուր էր տարիներ առաջ.
Հիշեց կնոջը նրա գեղանի,
Որ ընդունել էր խառնածին հյուրին
Հարգանքով պատշաճ.
Քրոջը հիշեց իշխան Սմբատի-
Նազիրան, հպարտ ու թեթևաոտ,
Նրա բերանը կոկոն էր վարդի,
Ժպիտը գարնան բացվող առավոտ...
Օ, հայը գիտե պատվել իր հյուրին,
Հայը չի խփում երբեք թիկունքից.
Հայը իր տունն ու հայրենիքն ունի,
Սիրտը մաքուր է, մաքուր է հոգին...
- Դեպի դղյակը իշխան Սմբատի,-
Դարձավ նա ասաց իր զորախմբին.
Ուղեղում մի միտք ծնվեց տմարդի,
Աչքերին իջավ... նի՞րհ էր, թե՞ թմբիր...

2.

Իշխան Սմբատը իր հին դղյակում
Նրան ընդունեց բարեկամի պես,
Ճոխ սեղան բացեց ընդարձակ բակում,
Հոսեց յոթ տարվա գինին փրփրադեզ:
Ու գինովացավ Բաբեկը պարտված,
Կենացը խմեց իշխան Սմբատի.
- Թիկունքս,- ասաց,- դու ես անկասկած,

Շնորհակալ եմ իմ հզոր բաթիր,-
Եվ գիշեր եղավ մութ, ականակուր,
Սակայն չքնեց հյուրը սրբապիղծ,
Եվ երբ լռություն տիրեց դղյակում,
Քոչի շան նման զգույշ ու թաքուն
Բաբեկը սողաց, ելավ օթախից
Ու արթնացրեց քնած խուժանին:
- Շղթայել,- ասաց,- Սմբատ իշխանին,
Այդ գյավուրից իմ վրեժը կառնեմ...
Սմբատ իշխանը կանգնեց շղթայված,
Դարձավ Բաբեկին ու այսպես ասաց.
- Բաբեկ, դու Բաբեկ, գող շեյթանի ծոռ,
Քոչվորի պնչից թռած գարշահոտ,
Ես քեզ պատվեցի իմ աղ ու հացով-
Ոնց բարեկամի՝ հարազատ ու մոտ,
Իսկ դու եղկելի անամոթ ու պիղծ-
Իմ այս հարկի տակ շղթայում ես ինձ.
Ո՞րն է իմ մեղքը, ի՞նչ եմ արել քեզ:-
Պատասխան տվեց Բաբեկը այսպես.
- Իմ ցեղն է քոչվոր ու աստանդական,
Եվ իմ արյունն է քոչվորի արյուն.
Իսկ քո մեղքն այն է, որ ապրում ես, կաս,
Սեփական հողի վրա ես քայլում.
Դու ունես օջախ, հայրենիք ունես,
Քո գլխի վերև դու տանիք ունես,
Դու... գալիք ունես...
Եվ շղթայակապ իշխան Սմբատին
Դառն հեգնանքով ծանակեց.
- Բաթիր...
Եվ բռնաբարեց կնոջը նրա,
Եվ բռնաբարեց քրոջը նրա,
Հետո անպատվեց մորը ալևոր,
Ու դարձավ ասաց խուժանին վայրի.
- Հանուն ալլահի, իսլամի թոռներ,
Մեզ վիճակված է միայն թալանել,
Գողանալ, վառել, պղծել ու խաբել.
Գյավուրներն ինչո՞ւ աշխարհում ապրեն,

Ինչո՞ւ ունենան հայրենիք ու տուն,
Ո՞վ է սահմանել այսպիսի օրենք
ու արդարություն...

3.

Եվ լույսը բացվեց, եղավ առավոտ,
Իշխան Սմբատը զայրույթից գոռաց.
- Սուրհանդակ,- գոչեց,- սուրա թևավոր,
Իմ կտրիճներին տուր շուտով իմաց,
Թող ձիեր հեծնեն, թռչեն հողմի պես,
Այդ անտուն շանը բռնեն կենդանի:-
Արփին բարձրացավ, օրը եղավ կես,
Թռան քաջերը Սմբատ իշխանի,
Եվ շառաչեցին թրերն հավլունի,
Եվ նժույգները ծառս եղան ցասկոտ,
Եվ հետո եղավ նորից առավոտ,
Եվ առավոտն այդ Բաբեկի համար
վերջինը եղավ...
Նա գիտեր հարկավ՝
Որ ուշ է արդեն, փրկություն չկա,
Եվ չէր հավատում ոչ մի հրաշքի,
Բութ էր հայացքը ու անասնական,
Եվ բթությունն էր կախվել ընչացքից.
Ու Սմբատն ասաց.
- Անտուն, անոթի
Անծուխ, անօրեն քոչվորի որդի,
Եվ թլպատված շուն նենգ ու տմարդի,
Ես ինքս հիմա կպատժեի քեզ,
Բայց իմ ձեռքերը ես չեմ կեղտոտի,
Կհանձնեմ նրանց, ումից փախել ես.
Այս ամրոցի մեջ գլխատել քեզ պես
գարշելի գերուն,
Իմ սրին, պատվին իմ ազգ ու տոհմին
պատիվ չի բերում:

4.

Տմարդը ընկավ մահով տմարդի,
Բայց չվերջացավ տմարդությունը,
Մի Ռասուլ Ռզա, Ռզայի որդի,
Իր գրչին խառնած նախանձն ու թույնը-
Թալեաթ փաշայի դրոշակն առել,
Ոռնում է մեր դեմ նենգ ու չարակամ,
Որ Սմբատները չպիտի ծնվեն,
Քանի աշխարհում դեռ Սմբատներ կան,
Բաբեկներն իրենց ազատ չեն զգում
Մայր հայրենիքում...
Իսկ Սմբատները պիտի ծնվեն դեռ,
Դառնան մի բռունցք, մի կամք անսասան,
Որ չհոշոտեն պատմությունը մեր-
Ոչ մի Բունիաթով կամ Ռասուլ Ռզա[15]:

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվ ովքեր ասես, որ քեզ չերգեցին:

Եվ ովքեր ասես, որ իրենց երգով քեզ չհերքեցին:

Եվ ովքեր ասես, որ քո հերկածը մի կրկին անգամ չեկան հերկեցին:

Եվ ովքեր ասես, որ չզուգեցին քո սեգ ճակատը էպիտետներով, չզգալով սակայն, որ գեղեցկությունը ոչ մի պերճանքի կարիք չի զգում:

Եվ ովքեր ասես, որ քո անունով չհորջորջվեցին սուրբ առաքյալներ, և քո հասցեով՝ նստած Պառնասի ստորոտներում, թթված երգեր են հիմա վաճառում:

Եվ ովքեր ասես՝ իրենց ճառերով ու կեղծ ձոներով քեզ չեն չարչարում:

Եվ ովքեր ասես՝ մեր նախնիների գերեզմանները քանդուքար չարին, որ տեսնեն ով ես դու իրականում, ինչ ազգ ու տոհմից և ինչ աշխարհից, ով է մեծ պապդ, ովքեր են եղել քո մայրն ու քեռին:

Եվ ովքեր ասես, որ քո անունով չհերոսացան, և հիմա իրենց փայտե սուսերի, տեգերի համար տեղ են որոնում թանգարաններում...

ՂԱՐԱԲԱՂ

Քեզ որոնեցի մեր սուրբ քերթության մատյանների մեջ, մեր հայրենախոս տաղարաններում քեզ որոնեցի և մեր ամրակուռ ու նվիրական ամրոցների մեջ:

Դու մեսրոպյան գիր, դու հայկյան աղեղ, Դավիթ Բեկի սուր, Սասնա ծուռ էիր:

Քեզ որոնեցի նահատակների շիրմաքարերին, որդեկորույս մոր արցունքների մեջ քեզ որոնեցի և խրծիթների սյուները լիզող շեկ բոցերի մեջ:

Դու Կաքավաբերդ, Գայանեի վանք, դու Անահիտի ջարդված գուռ էիր:

Քեզ որոնեցի մեր հին վանքերի կամարների տակ, մեր Գանձասարի խորունկ խուցերում քեզ որոնեցի և Ամարասի արդեն մամռապատ խաչքարերի մեջ:

Դու անխոնջ դպիր, դու հրաշք նաղաշ, մեռոնի բույր ու խնկի հոտ էիր:

Քեզ մեր հեթանոս աստվածների մեջ ես որոնեցի, քեզ որոնեցի վաղուց մոռացված մեհյանների մեջ, բարձր ժայռերի խորհրդավոր ու մութ անձավներում քեզ որոնեցի:

Դու Վահագն էիր մի հրագանգուր, դու գարնան կայծակ ու որոտ էիր:

Քեզ որոնեցի մեր արցախաբառ հորովելներում, մեր քաջ պապերի հյուսած ասքերում քեզ որոնեցի և հեքիաթներում ու լեգենդներում զարմանահրաշ...

Դու հայրենի երգ, հայրենի եզերք, հայրենի արև ու կարոտ էիր:

Քեզ որոնեցի թուխ աչքերի մեջ մեր աղջիկների, մեր տղաների հայացքների մեջ և մանուկների զվարթ ու պայծառ ժպիտների մեջ:

Դու անմեղություն, դու առաջին սեր, դու լուրթ մանուշակ ու նարոտ էիր:

Քեզ որոնեցի կարկաչների մեջ մեր աղբյուրների, մեր գետակների զուլալության մեջ քեզ որոնեցի և մեր հանդերի ու հովիտների ցող ու շաղի մեջ:

Դու լազուր երկինք, դու աստղերի ցոլք, կյանքի արարում ու ծնունդ էիր:

Բարձրագագաթ մեր լեռների մեջ քեզ որոնեցի, քեզ որոնեցի Քիրս ու Մռավի կանաչ լանջերում և իմ հայրենի սեգ կաղնիների շառաչների մեջ:

Դու ոսոխի դեմ միշտ անխոց վահան, անառիկ ամրոց ու մկունդ էիր:

Քեզ որոնեցի պատմությունների քառուղիներում, մեր անցած ճամփի խաչմերուկներում քեզ որոնեցի և որոնեցի մեր երակներում հոսող արյան մեջ:

Դու մեր հավատը ու մեր հավատի հավերժ անվախճան ոսկե հունդն էիր*:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Ոչ Լենկ-Թեմուրի աշխարհակործան բանակները ինձ ծնկի բերեցին, ոչ յաթաղանը դահիճ Կաջարի, ոչ էլ խորշակը անապատների:

Ես քարե տաճար, քարե ամրոց ու քարե բերդ էի:

Ոչ պարսից արքան կարողացավ ինձ առևանգել իր որոգայթներով պիղծ ու կեղծավոր, ոչ էլ մոգերը կարղացան ինձ հավատափոխել սուտ խոստումներով ու երդումներով նենգ ու կեղծավոր:

Ես Ամարասի վանքում դպիր ու վարդապետ էի:

Նենգամիտ մարդիկ ինձ հազար ձևով ամբաստանեցին և հազար ձևով փորձեցին նրանք բնից ինձ հատել, բայց մեր դարավոր թթենու նման ամուր կառչեցի մեր ժայռ ու քարին, ճյուղավորվեցի, խշշացի նորից...

Ես բարձր լեռան գագաթին կանգնած Կուսաբերդ էի:

Ոչ արյունառուշտ դավաճանների թունոտ տեգերը կարողացան իմ հավատը խոցել, ոչ հերետիկոս-կռապաշտները՝ հոգուս մեջ պահած երազը բոցել:

Ես աստվածային Հայկի աղեղից թռած նետ էի:

Ոչ հուդաների սուտ համբույրներն ու հորի բերանին փռած գորգերը ինձ սասանեցին, և ոչ էլ խարդախ դրածոների գոռում-գոչյուններն իմ հայրենականն ինձնից վանեցին:

Ես մեր ձորերում հավերժ շառաչող Թարթառ գետ էի:

Եվ առաջինը մեր այս լեռներից ես ձեռք մեկնեցի բարեկամության՝ լուրթ ստեպների քաջ զավակներին...

Եվ առաջինը ծառս եղա հպարտ՝ ընդդեմ բռնության, և առաջինը ես ազատության դրոշ պարզեցի...

Թիկունքս՝ ամուր, հոգով հայրենի հողի հետ էի:

1975 թ.

* * *

Ոսոխիդ աչքում փշի պես ցցված ես քո կիսավեր վանքի մի սյունն եմ, ես զորությունն եմ քո լուրթ գետերի, քեզնով հաստատված քո խորությունն եմ:

Ես քո հին վիշտը, հին տրտմությունը և քո անսպառ համբերությունն եմ, ապառաժները ճեղքող ծառերիդ ձույլ արմատների համառությունն եմ, ես քո դարավոր բերդ-ամրոցների անառությունն եմ:

Ես՝ քո ծաղկունքի բուրմունքն ու գույնը, փխրությունն եմ քո սևահողի: Ես՝ քո թթենու քաղցրությունը, որը դառնում է նաև թունդ օղի... Դու՝ իմ հայրենի օջախն ու տունը, ես՝ ջերմությունը օջախիդ պողի...

Հեղեղների դեմ ես քո ժայռերի կարծրությունն եմ, ես քո լեռների բարձրությունն եմ մութ հողմերի դեմ: Որ աղբյուրներդ միշտ զուլալ մնան, ես քո

սարերի ճեփ-ճերմակ ձյունն եմ, քնքշությունն եմ ես քո դաշտերի, լեռներիդ թառած սեգ արծիվներիդ քարակոփ բույնն եմ:

Արևի փոքրիկ շողից չխաբվող ես քո բողբոջի զսպվածությունն եմ: Ես հեռուն չված արագիլներիդ քո գիրկը կանչող հայրենի տունն եմ: Այս ժայռերի մեջ ցրտին ու տոթին կանգնած դիմադիր՝ քո կաղնիների տոկունությունն եմ, ես ղողանջը քո հորովելների, ես մոխիրներից հրաշքով հառնած քո հեքիաթային փյունիկ թռչունն եմ:

Ես երազներն եմ քո հազարաձև, քո հնությունն ու քո նորությունն եմ, քո Գանձասարի սրբատաշ քարը, խոյակն ու սյունն եմ, նոր ընթացք առած, ձորում ծովացած Թարթառիդ հունն եմ....

Ես անհիշելի դարերից եկած, փորձությունների հրերով անցած մեր ժողովրդի հավերժ անկաշառ եղբայրությունն եմ, քեզնից սկսած ու շարունակվող քո պատմությունն եմ*:

1975 թ.

ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆՔՈՒՄ

Հրաշք է ասես կանգնած տիրաբար այս կանաչ հովտում:

Մի պառավ տատիկ խորանի առջև զույգ մոմ է վառել, չգիտեմ աստծո՞ն, թե՞ այս հրաշքին է նա լուռ աղոթում:

Հավատացյալի մի սուրբ երկյուղով կանգնել եմ ահա կիսամութի մեջ, շուրջս եմ նայում:

Բարձր գմբեթի քիվերին նստած աղավնիներն են կամաց ղունղունում, իսկ երես առած ճնճղուկները կռիվս են տալիս, ճռվողում անվերջ:

Ու ես փակում եմ աչքերս մի պահ:

Հիմա ուր որ է ղողանջեն պիտի զանգերը պղնձե:

Հիմա կթնդան կամարների տակ Տաղը հարության ու Վարդավառի:

Հիմա մի խելառ, մի ծուռ վարդապետ թաքուն կնայի պատի տակ կանգնած խորոտ Շողերին ու ա՜խ կքաշի:

Հիմա կգա մի թխաչ պատանի և սուրբ Մարիամի պատկերի առջև սիրտը կմաշի:

Հիմա...

Եվ հանկարծ մեկը բռնում ու քաշում է թևս:

Վանքի պահակն է: Ես սթափվում եմ:

- Դո՞ւ հավատո՞ւմ ես,- և նայում է նա իմ աչքերի մեջ, ժպտում մեղավոր:

- Ես հավատում եմ,- պատասխանում եմ:- Ես հավատում եմ Հարության տաղին, խորոտ Շողերին, այն վարդապետին, որ ա՜խ էր քաշում: Ես հավատում եմ այս ճարտարակերտ, կանաչ հովտի մեջ տիրաբար կանգնած հրաշք տաճարին:

Ես հավատում եմ տաճարն այս կերտող իմ ժողովրդին:

1975 թ.

* * *

Եվ ովքեր ասես, որ քեզ չերգեցին:

Եվ ովքեր ասես, որ իրենց երգով քեզ չհերքեցին:

Եվ ովքեր ասես, որ քո հերկածը մի կրկին անգամ չեկան հերկեցին:

Եվ ովքեր ասես, որ չզուգեցին քո սեգ ճակատը էպիտետներով, չզգալով սակայն, որ գեղեցկությունը ոչ մի պերճանքի կարիք չի զգում:

Եվ ովքեր ասես, որ քո անունով չհորջորջվեցին սուրբ առաքյալներ, և քո հասցեով՝ նստած Պառնասի ստորոտներում, թթված երգեր են հիմա վաճառում:

Եվ ովքեր ասես՝ իրենց ճառերով ու կեղծ ձոներով քեզ չեն չարչարում:

Եվ ովքեր ասես՝ մեր նախնիների գերեզմանները քանդուքար չարին, որ տեսնեն ով ես դու իրականում, ինչ ազգ ու տոհմից և ինչ աշխարհից, ով է մեծ պապդ, ովքեր են եղել քո մայրն ու քեռին:

Եվ ովքեր ասես, որ քո անունով չհերոսացան, և հիմա իրենց փայտե սուսերի, տեգերի համար տեղ են որոնում թանգարաններում:

Եվ ովքեր ասես՝ քեզ որոնելով՝ քեզ չկորցրին:

Եվ ովքեր ասես, որ քեզ սիրելով հանդերձ՝ լռեցին:

Եվ ովքեր ասես՝ քեզ չծռեցին:

Բայց դու մնացիր այնպես, ինչպես կաս, հպարտ՝ լեռնցու քո հպարտությամբ և շիտա՞կ քո՝ ղարաբաղյան այդ շիտակությամբ:

ԱՐԱԳԻԼ

Արագիլ, ո՞ւր ես չվում, արագիլ: Արագիլ, բույնդ դատարկ կմնա:

Արագիլ, ախր մեր սար ու ձորին կարոտ կմնաս:

Մեր կանա՞չ , կանաչ լեռները թողած՝ ուրիշ դաշտերում քարոտ կմնաս:

Ոչ ոք քեզ բարի ճամփա չի մաղթի, հայրենի տունդ լքած, արագիլ:

Ոչ ոք չի ասի՝ բարի վերադարձ, մեր հանդ ու քարից, քարափներից ու ձորերից երես թեքած, արագիլ:

Կանցնեն տարիներ, կգաս ուշացած, բույնդ չես գտնի, օտար կթվան քեզ մեր հանդերը՝ մի ոտի վրա կանգնած կմնաս:

Նոր բույն չես հյուսի, ձագեր չես հանի, թևերդ հպարտ չես թափահարի, վշտիդ մոխիրով հանգած կմնաս:

Մեր հովիտները ուրիշ նոր հավքեր կգան ու կերգեն, իսկ դու կորցրած երգդ չես գտնի՝ աներգ կմնաս:

Երամդ կորցրած կռունկի նման ո՞վ գիտե, թե ինչ քար ու քարափի կզարնվես անվերջ՝ մեր սրտերի մեջ նոր վերք կմնաս:

Լուրթ հեռուներում արբած արագիլ...

Հեռվի կանչերով խաբված արագիլ, այդ ո՞ւր ես գնում:

Արագիլ, բույնդ դատարկ է մնում:

1975 թ.

ՆԺՈՒՅԳՆԵՐԸ

Խրխնջում են նժույգները, հողը դոփում ու ծառս լինում ցասումնալից:

Նժույգները հողմապար են բռնել ասես, պտտվում են ու վրնջում:

Նժույգները՝ էժան գնված ու տերերից զոռով խլված... Ու շատերը զամբիկ են դեռ, թամբ չեն տեսել իրենց մեջքին, սանձ չեն տեսել, ոչ էլ խթան:

Օ՜, նժույգներ Ղարաբաղի, դաժան բախտ է ձեզ վիճակվել, աշխարհավեր այս արյունոտ, այս խառնակիչ թոհ ու բոհում:

Դուք կթողնեք հովիտները արծաթաշող, անտառները մեր զովասուն և ջրերը կարկաչահոս: Ձեզ կլցնեն նավերի մեջ բարձրակայմ ու կտանեն հեռու՜-հեռու՝ մառախլապատ այն երկիրը, ուր երկնաքեր ծխաններից մութն է ժայթքում և ծովերն են խոլ շառաչում...

Եվ կհանեն ձեզ վաճառքի, դուք կունենաք ուրիշ տերեր, ու խստասիրտ մարզիկների մտրակները կշառաչեն ձեր գավակին:

Օ՜, նժույգներ վտարանդի...

Դուք ամբոխի խելակորույս գոչյունների, սուլոցների ու ծափերի տարափի տակ կսլանաք հողմից թեթև, ծառս կլինեք ու կզարնվեք թափով իրար, կգլորվեք գորշ փոշու մեջ, և կհիշեք հովիտները արծաթաշող, անտառները մեր զովասուն, աղբյուրները կարկաչահոս:

Դուք կհոգնեք արշավներից, ամենօրյա ու տոնական մրցումներից, և մի օր էլ կկորցնեք ձեր հմայքը ու ձեր տեղը արքայական ախոռներում... Կվաճառվեք շուկաներում և կտանեն, կդնեն ձեզ ֆուրգոնի տակ, ձեզ կդարձնեն բեռնաձիեր, այնուհետև բութ ու անխիղճ ձեր տերերը քարշ կտան ձեզ սպանդանոց:

Խրխնջում են նժույգները, նժույգները բողոքում են, արտասվում են նժույգները... Լսողն ո՞վ է:

Ղարաբաղում տասնութ թիվն էր և աշունը տասնութ թվի:

1975 թ.

ԲՈՍՖՈՐԻ ԱՓԻՆ

Նավերն են գնում, նավերն են գալիս, տոթն ու աղմուկն իրար են խառնվել Բոսֆորի ափին: Ցեր նավապետը՝ հին ծովագայլը, Բրիտանիայի պարծանքն ու փառքը գոռում է վերից և լուտանքներով ծաղրում-ծանակում բեռնակիրներին:

Ժամանակը կարճ, ճամփան երկար է, սակայն ձիերը, որ քշել-բերվել են Ղարաբաղից, նավ չեն բարձրանում: Նավահանգիստը լցվել խրխինջով ու սմբակների ծանր դոփյունով եռում է ասես: Ձգում-քաշում են սանձափոկերը խելառ ձիերի, պարանոցներին օղապարաններն ագուցում ճարպիկ...

Ու բարձրանում է թեք կամրջակով նժույգն առաջին, հետո երկրորդը, և ուրիշներն են հետևում իրենց բախտակիցներին:

Սակայն մի ծերմակ, մի հրեղեն ձի ոտքերը ուժգին գետնին է խփում, խրխնջում անզուսպ ու չի ենթարկվում: Ռունգերն ուռչում են, պայթում փնչոցով. աչքերում ցասման կրակ կա, բողոք... Եվ եթե մի պահ լեզու ունենար ըմբոստ կենդանին, կգոռար, կասեր. «Ինձ ո՞ւր եք բերել և ո՞ւր եք տանում: Ինչո՞ւ եք պոկել ինձ մեր լեռներից ու մեր լեռների ծուռ ու քարքարոտ ճանապարհներից: Ախր, հասկացեք, ես Ղարաբաղն եմ, ղարաբաղյան եմ, և Ղարաբաղի կարոտը իմ մեջ ինչո՞ւ եք խեղդում...»:

Ձին լեզու չունի, իսկ նավապետը գոռում է վերից. «Գրողը տանի՛, դե ի՞նչ եք այդպես մի ձիու համար իրարով անցել»: Եվ երկարակոթ խարազանները սև օձերի պես օդում շաչելով իջնում են ձիու մեջքին, կողերին ու պարանոցին: Բայց ձին, այդ ըմբոստ, հպարտ կենդանին ցնցում է բաշը ու դիմադրում:

Երկարահասակ ու շիկամորուս ինչ-որ մի մայոր իր կողքին կանգնած զինվորի ձեռքից կարաբինն առնում՝ նշան է բռնում ձիու ճակատին, քաշում ձգանը... Ու բոց է ժայթքում զենքի սև փողից, և երերում է նավահանգիստը ու ցնցվում մի պահ...

Ձին ծառս է լինում մի վերջին անգամ, մի վերջին անգամ խրխինջ արձակում և վերջին ուժով թափ առնում, նետվում ծովի փրփրած ալիքների մեջ:

Նավահանգստում տիրում է հանկարծ ծանր լռություն և լռության մեջ խուլ հեծկլտում է ծովը Մարմարա:

1975 թ.

ԴՊՐՈՑՈՒՄ

Հիմա չգիտեմ որտեղ է այն նստարանը, որտեղ մի օր ես եմ նստել:

Չգիտեմ որտեղ է այն թխահեր աղջիկը, որ ամեն առավոտ, դասարան մտնելիս, նայում էր ինձ ու ժպտում:

Որտեղ է իմ ուսուցիչը, որ հոր նման խիստ էր, հոր նման բարի:

Ես նայում եմ իմ նախկին ջահել ուսուցչուհուն, որ տատիկ է դարձել արդեն, և նա հասկանում է ինձ:

- Դու էլ ես ծերմակել, սիրելիս,- ասում է:

Ես ուզում եմ վազել ծանոթ միջանցքով, բացել դասարանի դուռը... Մի գանգրահեր պատանի մոտենում է ինձ ու հարցնում.

- Ո՞ւմ եք որոնում, քեռի:

Ո՞ւմ եմ որոնում: Ախր, ինչպե՞ս ասեմ, որ հասկանաս ինձ: Ես իմ նստարանն եմ որոնում: Որոնում եմ իմ թխահեր դասընկերուհուն, իմ վաղամեռ ուսուցչին եմ որոնում և իմ ջահել ուսուցչուհուն: Ես իմ վիշտն ու ուրախությունն եմ որոնում, իմ ոտնահետքերն եմ որոնում այս սանդուղքներին:

Ես, իմ պատանի բարեկամ, քո մեջ ինձ եմ որոնում:

ԱՐԵՎՀԱՏԸ

Արևհատը աշխարհի ամենաբարի, ամենաչքնաղ աղջիկն է:

Արևհատը լցնում է մեր կուժը, մեզ համար հանդից մոշ է բերում, օգնում մորս լվացքին:

Արևհատը երբ մտնում է մեր տան շեմով, տատիս դեմքին ճառագում է ժպիտը.

- Ծաղկես, ծիրանի դառնաս, Արևհատ...

Արևհատը հասակ առավ, դառավ գյուղի աչքը: Նա իմ մատղաշ սիրտը մտավ, խլեց իմ քունն ու հանգիստը:

Ես մի օր էլ բռնեցի նրա քնքույշ ձեռքն ու ասացի.

- Արևհատ, դու աշխարհի ամենալավ, ամենաբարի աղջիկն ես:

Արևհատը խոնարհեց գլուխը, երկար թարթիչների վրայով արցունքի երկու կաթիլ սահեցին, ընկան ձեռքիս վրա:

- Ես սիրում եմ ուրիշին,- շշնջաց,- ներիր ինձ:

- Իսկ ո՞վ է նա:

- Նա աշխարհի ամենալավ, ամենաբարի տղան է:

Ինձ թվաց, թե պարզկա երկնքից կայծակ պայթեց: Ես վազեցի անտառ, փռվեցի կանաչ խոտերի մեջ ու հեկեկացի անզուսպ:

Ախր, Արևհատը աշխարհի ամենալավ, ամենաբարի, ամենաչքնաղ աղջիկն է:

ՍԵՐԵՆԱԴ

Մենք աստղերի տակ երկար մնացինք, երկար քայլեցինք կանաչ ծառուղով: Գիշերը վաղուց կիսվել էր արդեն, և ինչ որ մի տեղ ծղրիդներն էին դեռ շատախոսում...

Մենք քանի՞ անգամ մաղթեցինք իրար «բարի գիշեր ու անուշ երազներ», և քանի՞ անգամ ծիծաղեցինք մեր անմտության վրա, սակայն չգիտեմ, չգիտեմ ինչու, վախենում էինք ասել՝ սիրու՞մ եմ:

Դա ոչ առաջին մեր հանդիպումն էր, ոչ էլ՝ վերջինը: Ծանոթ-անծանոթ մեզ վաղուց արդեն համարում էին անբաժան զույգեր: Նույնիսկ այն տարեց ծաղկավաճառը մեզ առաջինն էր «բարի լույս» մաղթում ու պարզում փունջը ալ մեխակների: Իսկ մենք՝ չգիտեմ, չգիտեմ ինչու, վախենում էինք ասել՝ սիրում եմ:

Ե՞ս էի անփորձ, դո՞ւ էիր անմեղ, դժվար է ասել... Անձրև էր մաղում, ես իմ թիկնոցը քաշեցի վրադ, և տեսնում էի ժպիտն աչքերիդ ու շրթունքներիդ դողը սիրատենչ... Եվ հալվում էինք մենք անմե՞ղ-անմեղ՝ ես քո կրակով, դու իմ կրակով... Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ դու քո շուրթերով, ես իմ շուրթերով վախենում էինք ասել՝ սիրում եմ...

ԵՐԳԸ ՄՆԱՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Եվ արտույտը բացվող օրը ավետեց, աղբյուրները զրնգացին զանգակաձայն: Փափուկ հովից շնկշնկացին շարմաշուղներ ու շուշաններ շողշողուն, կակաչները ժայռի ծերպին բռնեցին լուռ շուրջպարի...

Եվ դու եկար ցողոտ-շողոտ, եկար ծերմակ շորերով, ու ժպիտը կոկոնի պես բացվեց ղումաշե:

Եվ տաք էին թաթիկներդ, և տաք էին շուրթերը քո, և տաք էին քո այտերը, լույս էր ցայտում քո աչքերից կարոտի:

Եվ, ձեռք-ձեռքի տված, ուրախ մենք քայլեցինք լանջերն ի վեր լեռների: Շուշանները շնկշնկացին, քրքջացին առվակները, լուռ ժպտացին կակաչները, մեխակները հալվում էին կարոտից...

Օ՜, ինչ օր էր, օ՜, ինչ օր էր, մենք էինք ու մեր լեռները, և մեզ համար տոն էր կարծես Վարդավառի ու Համբարձման...

Ես պատանի մի գառնարած, դու մի անմեղ աղջնակ... Դու չիմացար ինչպես եղավ, ես չիմացա ինչպես եղավ, մենք չիմացանք ինչպես եղավ, ինչպես դիպան մեր շրթունքներն իրարու... ինչպես, հանկարծ դու պոկվեցիր, փախար խրտնած եղնիկի պես ձորն ի վար, ու էլ չեկա՜ր, էլ չեկա՜ր:

Ես թողեցի աղբյուրները զանգակաձայն և ներբողը արտույտների: Ես թողեցի շուշանները շուշանաշող, կակաչները հրակարմիր ու մեխակները վայրի... Ու խառնվեցին գառ ու մաքի, ձորը լցվեց մայունով:

Ես գյուղ տանող նեղ կածանով սարից իջա դառնացած...

Երգը մնաց լեռներում:

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԱՂՋԻԿԸ

Ես տեսա աշխարհի ամենագեղեցիկ աղջկան ցողաթաթախ խոտերի մեջ: Նա նայեց ինձ և ասաց՝ արի...

Ես վախենում էի ոտքերս ցողում թրջել:

Աշխարհի ամենագեղեցիկ աղջկան ես տեսա ծովափին: Նա նայեց ինձ, ասաց՝ հասիր ինձ ու նետվեց փրփրադեզ ալիքների մեջ:

Ես վախենում էի ծովից:

Աշխարհի ամենագեղեցիկ աղջկան ես տեսա լեռներում: Նա թափահարում էր իր ծերմակ թաշկինակը և ծիծաղում:

Լեռները բարձր էին:

Իսկ երբ քաղաքի աղմկուն փողոցում ես բռնեցի աշխարհի ամենագեղեցիկ աղջկա թևը, նա ինձ ասաց.

- Ուշացել ես, սիրելիս, շա՜տ ես ուշացել:

Ես նոր միայն հասկացա, որ կրակ սիրողը այրվելուց չպիտի վախենա:

ՀՈՐՈՎԵԼ

Շաղոտ դաշտերում, շողոտ դաշտերում ես հոտաղ էի:

Մաճկալս ծեր էր՝ քայլերը երեր ու ձայնը խզված: Եվ ամեն անգամ, երբ ծոր էր տալիս իր հորովելը, ես իմ մանկական զրնգուն ձայնով ձայնակցում էի նրա կոշտ բասին.

Արեգակը սարի վրա, Ոսկե թասը քարի վրա...

- Օրհնվե՜ս,- մաճկալս ժպտում բեղի տակ, թև էր տալիս ինձ.- Շնորհքով մանչ ես, երբ քիչ մեծանաս, քեզանից կարգին մաճկալ դուրս կգա:

Բայց ես չդարձա ոչ կարգին մաճկալ և ոչ էլ կարգին հոտաղ մնացի:

Որտեղից եկավ իմ ծեր մաճկալի սիրուն թոռնիկը, և հորովելս փոխվեց կարոտի ու ալեկոծվեց մանուկ կրծքիս տակ: Ձայնակցում էի ես իմ մաճկալին, և պատահում էր շուռ էի տալիս երգն ուրիշ ձևով, դուրս էին գալիս եզները լծից, խոփը՝ ակոսից:

Եվ մի օր էլ, երբ կորցրել էի չափն ու սահմանը իմ հորովելի, հատեց մաճկալիս համբերությունը, բարակ ճիպոտը ցած բերեց մեջքիս, գոչեց զայրացած.

- էդ ո՞նց կլինի, այ զուլում լակոտ, իմ հորովելն ու քո հորովելը իրար չեն բռնում:

Է՛հ, ի՞նչ ասեմ քեզ, իմ ծերուկ մաճկալ: Դու այս աշխարհում շատ բան տեսած մարդ, բայց այդ ինչպե՞ս էր, ինչպե՞ս, որ չէիր ուզում հասկանալ՝ քո հորովելում վարդը թառամել, իմ հորովելում նոր էր կոկոնվում: Քո հորովելում արևը արդեն թաքնվել, կորել սարի ետևում, իմ հորովելում դեռ նոր էր ծագում:

Դու, իմ հեգ մաճկալ, մայրամուտ էիր, իսկ ես՝ լուսաբաց:

ԿԱՊՈՒՅՏ ԵՐԱՋ

Ես երազում քսան տարեկան էի:

Պատուհանիս տակ սոսափում էր մեր հին լորենին, հովը ականջիս իր անուշ սրինգն էր նվագում:

Ես երազիս մեջ գիտեի, որ այդ երազ էր, խաբկանք... Գիտեի, որ աչքերս բացեմ, ամեն ինչ կդառնար մշուշ... Եվ քանի որ երազ էր, ուզում էի իմ անցած-գնացած պատանության օրերի կիսատ մնացած չարությունները շարունակել... Ուզում էի մտնել ծեր բակը, խուժել ծեր պատուհանից, առնել քեզ գիրկս...

Ես երազում քսան տարեկան էի, և չէի ուզում բաժանվել այդ երազից, որպեսզի քսան տարեկան աղջիկները չանվանեին ինձ քեռի, մայրս չասեր՝ «Այդ ե՞րբ ճերմակեցին մազերդ...»:

Ես երազում քսան տարեկան էի:

ԵՐԳ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Ես ամբողջ գիշեր չքնեցի: Վերդունց Դավթի տանը հարսանիք էր: Վարդերն ամուսնանում էր դարբին Դավթի որդու հետ: Զրնգում էր դհոլը, զուռնան իր ծկլթոցով ականջ էր ծակում, և դարբին Դավիթը ոտքերը զարկում էր հատակին ու գոչում.

- Ուստա Հակոբ, հոգուդ մատաղ, հիմա էլ «Զեյրանի»...

Ես ամբողջ գիշեր չքնեցի և վաղ առավոտյան, աղբյուրի մոտ հանդիպեցի Վարդերին: Ջուրը կլկլում էր կժի մեջ, իսկ նա լուռ նայում էր վազող ջրերին:

- Վարդե՜ր...

Նա նկատեց ինձ, և հանկարծ կուժն ընկավ ձեռքից ու լսվեց մի խուլ զնգոց: Ես ուզում էի կարեկցանքի խոսք ասել, երբ մեկ էլ, չգիտես որտեղից, հայտնվեց դարբին Դավիթը, նայեց շփոթված Վարդերին ու ժպտաց.

- Բան չկա, հարս ջան, ինչո՞ւ ես դարդ անում, կոտրվողը թող կուժը լինի: Ջրի կուժը ջրի ճամփին կկոտրի:

Բայց դարբին Դավիթը որտեղի՞ց իմանար, որ Վարդերը կժից առաջ իմ սիրտն էր կոտրել:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Իմ այս տարիքում աղջիկների հետ ժամադրվելն ու սիրուց խոսելը անմտություն է, պատշգամբներին հայացք ձգելը խելառություն է իմ այս տարիքում:

Ախր ե՞րբ անցան իմ գարունները, կարմիր վարդերս որտե՞ղ մնացին, ի՞նչ մեղք եմ գործել, որ թուխ մազերիս եղյամ է իջել, և արբունքահաս աղջիկները ինձ քեռի են կոչում իմ այս տարիքում:

Իմ այս տարիքում ոչ կարգին ջահել և ոչ էլ, ոչ էլ ահել եմ կարգին:

Ասում եմ՝ ախր ինձ ի՞նչ է մնում՝ նստել պուրակում և հեռվից-հեռու նայել այս քնքուշ ու սիրուն կանանց, թաքուն ա՜խ քաշել: Մնում է ապրել անցած օրերի ոսկե հուշերով, սեր ու կարոտի երգեր հորինել:

Իմ այս տարիքում ոչ լրջությունն է սազում մի կարգին, ոչ խենթությունը:

Ուզում եմ թողնել ինձ այս կաշկանդող գրասեղանը, վեր կենալ, գնալ և ընկերանալ լեռներից հոսող խենթ գետակներին ու եղնիկների ետևից ընկնել... Բայց ինչ-որ մեկը կարծես բռնում ու քաշում է թևս, ասում է՝ ախր մի լա՜վ նայիր քո ճերմակ մազերին, սար ու ձորերում ի՞նչ ես կորցրել քո այդ տարիքում...

Իմ այս տարիքում ոչ կարգին Մեջնուն և ոչ էլ կարգին մի Դոն Կիխոտ եմ:

ԱՆԾԱՆՈԹ ԱՂՋԻԿ

Անծանոթ աղջիկ, անծանոթ կարոտ, անծանոթ երազ:

Դու թեթև՜-թեթև գալիս անցնում ես միշտ մեր փողոցով:

Եվ թեթև՜-թեթև ժպիտն է խաղում շուրթերիդ վրա:

Եվ մեր փողոցը, պարտեզը, այգին լցվում են գարնան ծափ ու ծիծաղով:

Եվ հառաչում են շատրվանները ու փշուր-փշուր լինում կարոտից:

Եվ հազարաբույր ու հազարագույն ծուփ-ծաղիկները նեկտար են թափում քո ոտքերի տակ:

Եվ ողջ գիշերը պատուհանիս տակ հնչում են կարծես հազար քնար ու հազար ծնծղա:

Եվ բացում եմ ես պատուհանները, նայում կարոտած, սակայն դու չկաս:

Եվ թե լինես էլ, ախր դու ինչպե՞ս ինձ կհասկանաս...

Անծանոթ աղջիկ, անծանոթ կարոտ, անծանոթ երազ:

ԿԱԼՈՒՄ

Կամը պտտվում է կալում և տրորում ցորենի ծանր հասկերը:

Նա նայում է ինձ, և ձախ այտին մի սիրուն փոսիկ է գոյանում: Ես բռնում եմ նրա թևը, քաշում դեպի ինձ... բայց այդ պահին խրտնում են եզները և կամը հանում կալից: Մենք թավալվում ենք հաշանի վրա ու քրքջում խենթ ու խելառ երեխաների պես: Հերիքնազ ազին երկար ճիպոտը թափահարում է.

- Վա՜յ, անիծվածներ, էդ ի՞նչ բանի եք:

Հետո ուզում է ավելի խիստ խոսք ասել, բայց երևի հիշում է իր ջահելությունը և բարկությունը մեղմում.

- Տեսեք, հա՜, կամը կալից չհանեք:

ՕՐՀՆՅԱԼ ՓՈԹՈՐԻԿ

Մենք մենակ էինք ծովում: Մեզ ոչ ոք չէր խանգարում: Մեր նավակը սահում էր ջրերի վրայով, իսկ ծովն այնպե՜ս խաղաղ էր, այնքա՜ն հանգիստ... Ես ուզում էի բացել սիրտս, ասել ամեն ինչ, բայց չէի համարձակվում: Եվ հանկարծ բարձրացավ քամի, ծովը փոթորկվեց, ու մեր փոքրիկ նավակը ջրերի վրա դարձավ խաղալիք: Նա փոքրիկ երեխայի պես կպավ կրծքիս, ու ես լսեցի նրա սրտի զարկերը:

- Օրհնյա՜լ փոթորիկ, որտե՞ղ էիր այսքան տարի:

ՄԵՐԺՈՒՄ

Ես ամեն առավոտ անցնում էի նրանց փողոցով:

Ամեն առավոտ մի փունջ մանուշակ էի դնում նրա պատուհանին, և նա վերցնում էր մանուշակի փունջն ու հարցնում.

- Վաղն էլ կբերես, չէ՞:

Մի օր էլ, երբ մոտեցա նրա պատուհանին, նա վերցրեց մանուշակի փունջը և ասաց՝ սպասիր:

Սպասեցի, եկավ, բուռս խոթեց մի թղթադրամ:

Ես այլևս չանցա նրանց փողոցով: Քարսիրտ աղջիկ:

ԼԵՌՆԵՐԻ ԿԱՐՈՏԸ

Ես քնեցի բաց երկնքի տակ՝ արծակ լեռներում:

Ես երազում լեռներ տեսա, լեռների գագաթներին թառած արծիվներ, լեռներում շառաչող գետեր:

Ես լեռների մասին պատմեցի ծովերին, ծովերն ասացին.

- Սիրտդ լեռներով հիվանդ է:

Ես լեռների մասին պատմեցի դաշտերին, դաշտերն ասացին.

- Հեքիաթ է:

Ես լեռների մասին պատմեցի գետերին, գետերն ասացին.

- Երազ է:

Ես լեռների մասին պատմեցի լեռներին, լեռներն ասացին.

- Կարոտե՞լ ես:

ՊԱՊՈՒՆՑ ՏՈՒՆԸ

Պապս մի լուռ ծերուկ, մի աշխարհ:

Տատս մի բուռ պառավ, մի ծուփ ծով:

Երեք քեռի, երեք բարդի, երեք ասք:

Բակում մանկանց ուրախ ծիծաղ, երգ ու ծափ:

- Բարով եկար,- պապս գրկում, սեղմում է ինձ իր չոր կրծքին:- Որտե՞ղ էիր այսքան տարի:

- Կուրանամ ես, թոռնիկս է,- տատս ելնում, զնգացնում է սուրմաները արծաթե:

Պալան-պալան երկարում է թոնրի ծուխը գյուղի վրա, տարածվում է անուշ բույրը ճերմակ հացի: Գոմի կտրին մի անմեղ գառ վիզը ծռել ու նայում է զարմացած:

Պապունց տանն եմ, պապունց տանը...

ՍԱՆԴԵՐՔԸ

Մեր տանիքի տակ ընկած է տատիս սանդերքը:

Այդ սանդերքի վրա տատս կորացել է մինչև կեսգիշեր, բուրդ է գզել, մանել ճախարակի միալար բզզոցի տակ, գուլպա գործել, պահել երկու որբերի: Այդ սանդերքը տատիս օժիտն էր, տատիս աչքի լույսը և հույսը վերջին:

...Մի անգամ որդիս նկատեց լքված ու մոռացված սանդերքը և հարցրեց հորս.

- Այս ի՞նչ բան է, պապի:

Հայրս նայեց սանդերքին, հիշեց իր տխուր մանկությունը, պատմեց սանդերքի վրա կորացած տատիս մասին, պատմեց երկու որբերի սրտակեղեք պատմությունը և դարձավ որդուս.

- Հիմա հասկացա՞ր, գառնուկս, թե ինչ բան է սանդերքը:

- Հասկացա,- պատասխանեց տղաս,- սանդերքն աշխարհի ամենատխուր պատմությունն է:

ՄԵՆՔ ՇՆՎԵԼ ԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Մենք չտեսանք հայրական ձեռքերի քնքուշ շոյանքը և ժամանակ չունեինք հովիտներում ծաղիկներ փնջելու ու հիանալու սոխակների երգով: Աշխարհում ռումբերի որոտ կար, հրդեհներ կային աշխարհում, և մենք սովորեցինք բոբիկ ոտքերով քայլել կրակների վրայով:

Դրա համար էլ մենք ժամանակից շուտ հասունացանք:

Մեր ձեռքին հոտաղի բարակ ճիպոտն էր, նախրապանի մահակն էր մեր ձեռքին, արորի մաճն ու բահը ջրվորի: Մենք սայլապան էինք, մուրճ էինք խփում դարբնոցում, պողպատ էինք ձուլում հնոցում:

Դրա համար էլ մեր ձեռքերը ժամանակից շուտ կոշտացան:

Մենք վկա էինք, տեսանք մեր աչքերով, թե ինչպես էին մարդակերները կախաղանների վրա ճոճում մեր քույրերին ու եղբայրներին... Տեսանք քաղաքներն ու գյուղերը բոց ու ծխի մեջ, լսեցինք որդեկորույս մայրերի լացն ու հառաչը և բողոքն ալեվարս տատիկների:

Դրա համար էլ մենք ժամանակից շուտ ըմբոստացանք:

Մեր նետած ռումբերից ու արկերից հոդս էին թռչում զինանոցները թշնամու, և գնացքները գլորվում էին մթին անդունդները:

Դրա համար էլ մենք ժամանակից շուտ հերոսացանք:

Ոչինչ, ոչ մի ուժ չկարողացավ կոտրել կամքը մեր՝ ոչ ձմռան բքաշունչ քամին, ոչ տոթը ամռան, ոչ ռումբերի որոտը, ոչ նենգությունը նենգ ոսոխի և ոչ էլ մահը նույնիսկ:

Դրա համար էլ մենք արժանի զավակներն ենք մեր հայրերի և ծնվել ենք ժամանակին:

ՊԱՏՄԻ՛Ր, ՀՈՒՇԱՐՁԱՆ

Քանի՞սը ընկան այս բարձունքներում և քանի՞-քանի ջահել կտրիճներ մարտից չդարձան:

Պատմի՛ր, հուշարձան:

Քանի՞-քանի օր ու քանի՞ ամիս նետվեցին նրանք ահեղ գրոհի, և քանի՞ անգամ ընկան ու ելան, սակայն մնացին անընկճելի, հպարտ, անսասան մնացին դարձյալ:

Պատմի՛ր, հուշարձան:

Ա՜խ , քանի՞ աղջիկ, քանի՞ ջահել հարս, քանի՞-քանի մայր սպասում էին, որ դառնան նրանք... Ու հարսանեկան որքա՞ն զգեստներ սնդուկների մեջ փակված մնացին, ու որքան սերեր մնացին կիսատ, ու որքան հարսներ սգավոր դարձան...

Պատմի՛ր, հուշարձան:

Զավակներն ինչո՞ւ շարունակում են որոնել նորից իրենց հայրերին, որքա՞ն մանուկներ դեռ հայր չտեսած՝ կյանքում որբացան:

Պատմի՛ր, հուշարձան:

Պատմի՛ր, հուշարձան, պատմիր այն մասին, թե ինչ սարսափներ տեսավ սերունդն իմ և անցավ քանի՞ մազե կամրջով, բայց հպարտ նայեց մահվան աչքերին ու հավատարիմ մնաց հավիտյան իր հավատամքին…

Պատմի՛ր, հուշարձան:

Պատմի՛ր դարերին այն խիզախների մասին, որ ընկան, սակայն մնացին ապրողաց սրտերում, կյանքի պես անմեռ... Դարձան ցորենի ծփացող արտեր, այգիներ դարձան բերքով ծանրացած և ահեղ բռունցք՝ պատերազմի դեմ:

Պատմի՛ր, հուշարձան:

ՈՐՏԵ՞Ղ ԵՍ ԴՈՒ

Ո՞ր եղբայրական գերեզմանում ես հանգչում և ի՞նչ ծաղիկներ են բուրում քո շիրմին: Լսո՞ւմ ես, արդյոք, արտերի շրշյունը և թռչունների անուշ երգը: Զգո՞ւմ ես ինչպես են մեղուները ծաղիկներից նեկտար հավաքում, ու այդ նեկտարի մեջ չկա քո մասնիկը:

Որտե՞ղ ես դու:

Գո՞ւցե հանգչում ես այն մարմարակերտ հուշարձանի տակ, որ կանգնած է Դնեպրի ափին, և ծո՞վն է գուցե քո շիրիմը վերջին: Լսո՞ւմ ես, արդյոք, հեռագրալարերի ծանոթ զնգոցը տափաստանում և անիվների աղմուկը գնացքների:

Որտե՞ղ ես դու:

Ո՞ր ճանապարհի եզրին, ո՞ր անտառում և ի՞նչ ծառի տակ ես հանգչում:

Ի՞նչ լեռների զեփյուռներ են շոյում խոտերը քո անհայտ շիրմի, և գիտե՞ս, արդյոք, որ մայրդ կարոտած աչքով դեռ պահում է ճամփադ:

Որտե՞ղ ես դու:

Եթե տափաստանն է գերեզմանը քո, թող դաշտերի լռությունը հանգստություն բերի քեզ:

Եթե ծովն է գերեզմանը քո, թող նրա պաղ ջրերը համբուրեն ողջակիզված սիրտդ...

Եթե անտառն է գերեզմանը քո, թող ծառերը պատվո պահակների պես հսկեն քո խաղաղությունը:

Եթե լեռներն են գերեզմանը քո, թող գարնան մարմանդ հովերը սիրող մոր նման քեզ օրոր ասեն:

Որտե՞ղ ես դու:

ԱՆՀԱՅՏ ԶԻՆՎՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

Անհա՞յտ: Իսկ ինչո՞ւ անհայտ: Մի ռուս կին ծաղկեփունջ դրեց մարմարե պատվանդանին ու շշնջաց.

- Որդի՜ս...

Ծերունի ղազախը հանեց գլխարկը և գլուխն ակնածանքով խոնարհեց.

- Հարազա՜տս...

Մի ալեվարս վրացուհի համբուրեց մարմարե քարն ու ասաց.

- Թանկագի՜նս...

Մի բելոռուս, մի հայ, մի լատիշ, մի ուզբեկ... Բոլորն էլ ծաղիկներ դրեցին գերեզմանին և իրենց մայրենի լեզուներով ասացին.

- Բալա՜ս...

- Տղա՜ս...

- Հարազա՜տս... Թանկագի՜նս...

Ուրեմն ինչո՞ւ անհայտ զինվորի գերեզման: Այսքան ծնողների զավակն ինչպե՞ս կարող է լինել անհայտ*:

ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾԸ

Մայրը ասում է.

- Իմ որդուն գիտեմ, որտեղ էլ լինի՝ կրակների մեջ և թե նույնիսկ զույգ քարի արանքում, իր մորը մի օր կհիշի, կգա:

Ու սպասում է:

Հայրը ասում է.

- Թե որդին իմն է, կանցնի հրերի, սրերի միջով, կանցնի նաև հազար մազե կամրջով, ալեհեր հորը կհիշի, կգա:

Ու սպասում է:

Կինը ասում է.

- Իմ արծվին գիտեմ, որքան էլ հեռուն թռչի, սավառնի, օտար երկնքում նա չի մոլորվի, իր բույնը մի օր կհիշի, կգա:

Ու սպասում է:

Քույրը ասում է.

- Եղբայրս քաջ է, նրան ո՛չ հուրը կարող է բոցել, ո՛չ էլ գնդակը կարող է խոցել, որտեղ էլ լինի, նորից իր տունը կհիշի, կգա:

Ու սպասում է:

Որդին ասում է.

- Գիտեմ իմ հորը, որքան էլ փորձեն դաժան հողմերը մոլեգնել ահեղ ու փակել ճամփան, մեկ է, նա կգա:

Ու սպասում է:

...Օ՜, որքա՜ն անհետ կորածներ ունենք, որ դեռ պիտի գան, որ դեռ պիտի գան:

Ու սպասում ենք:

ՀԻՐՈՍԻՄԱ

Դու որդեկորույս մայրերի շուրթերով շարունակում ես անիծել նրանց, ովքեր աշխարհում առաջին անգամ կիսեցին մահվան միջուկը ահեղ:

Դու խարխափում ես այն զինվորի պես, որի դատարկված ակնախոռոչում խավար է տիրում՝ օրը ցերեկով և երակներում հոսում է դանդաղ արյունը ճերմակ:

Դու չորանում ես այն բալենու պես, որ զրկվել է իր ծույլ արմատներից, և կեղևի տակ որդերն են սողում:

Դու դեռ լալիս ես որբացած մանկան արցունքով աղի, դժբախտ հարսների պապակած շուրթով մրմնջում նորից նզովքի խոսքեր:

Օ՜, Հիրոսիմա, 20-րդ դարը քեզ կուրացրեց, քեզ խլացրեց 20-րդ դարը, դարձրեց ատոմով խեղված հաշմանդամ մի հավերժական:

Ու դեռ չծնված քառասունհինգին, բայց քառասունհինգի ախտով վարակված կանայք ծնեցին մանուկներ և՛ կույր, մանուկներ և՛ խուլ, մանուկներ և՛ լալ... անգույն, անարյուն, անդեմք մանուկներ:

Օ՜, Հիրոսիմա, կիսված միջուկի ճառագայթներով հաշմանդամ անմեղ, գուցե աշխարհում մոռացվի շատ բան, բայց դու՝ ո՛չ, երբեք:

Եվ նրանք, ովքեր հանդգնեն մի օր կրակ բորբոքել այս մոլորակի ինչոր մի մասում, դու որդեկորույս բազում մայրերի, կույր ու խլացած քո մանուկների պապակ շուրթերով, ողջ աշխարհով մեկ կգոչես կրկին.

- Մարդի՛կ, հիշեցե՜ք դուք Հիրոսիման*:

ՔԱՄԻՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Մի բուռ քամի արձակ դաշտերից եկել մտել է անտառ ու անտառում մոլորվել: Դեմը բոխիներ են հսկա, կաղնիներ՝ վիթխարահասակ ու լայնատերև թխկիներ:

Քամին զարկվեց ծառերի բներին, փռշտաց մութ փչակներում, հառաչեց, ճչաց, բայց անտառը մեծ էր, կածանները՝ շատ, ծառերն՝ անթիվ:

Մինչև մայրամուտ թափառեց մոլորված քամին, վազեց, հեկեկաց և, անտառի դեմ զգալով իր անզորությունը, կորցրեց թափն ու անտառից դուրս եկավ զեփյուռ դարձած:

ՄԻԱՅՆԱԿ ԿԱՂՆԻՆ

Արձակ դաշտում սոսափում է միայնակ կաղնին: Կեսօրին հնձվորները նստում են նրա թանձր շվաքում և զովանում: Հոգնած ճամփորդը թեքում է ճանապարհը, նստում այդ կաղնու տակ ու հանգստանում:

Իսկ մենք հաճախ մոռանում ենք այդ միայնակ կաղնուն և փառաբանում անտառը:

ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ՈՏՆԱՀԵՏՔԵՐԸ

Նոր ճանապարհ են կառուցել, հինը ծածկվել է խոտերով: Իսկ այս ծերունին շարունակում է գլխիկոր քայլել հին ճանապարհով:

- Ի՞նչ ես կորցրել հին ճանապարհին, բարի ծերունի,- հարցնում եմ:

- Ջահելությանս ոտնահետքերը,- պատասխանում է ծերունին և շարունակում իր ճանապարհը:

Իսկ դու, երիտասարդ բարեկամ, որ կյանքում սեփական ոտնահետքեր չես թողնում, ո՞ւմ ոտնահետքերը պիտի որոնես կյանքիդ ձմեռնամուտին:

ԼԵՌՆԵՐՈՒՄ

Ուր աչքդ կտրում է՝ լեռներ են: Լեռներ են՝ լեռների թիկունքում, լեռներ՝ լեռների դիմաց, լեռներ՝ լեռների վրա:

- Լեռնե՜ր,- կանչում եմ:

- Լեռնե՜ր,- ձայնս խլում են լեռները:

- Լեռնե՜ր, ես ձեզ հետ եմ:

- ...ձե՜զ հետ եմ,- արձագանքում են լեռները:

Մարդ, որ ծնվել է լեռներում, սեփական շվաքից բացի, սեփական արձագանք էլ պիտի ունենա:

ՇԱՀՐԱԶԱԴԵ

Շահրազադե, ես այն հեքիաթն եմ ցանկանում լսել, որ դեռ չես պատմել կյանքում ոչ ոքի: Ուզում եմ տեսնել քո աչքերի մեջ այն հազար ու մեկ դյութիչ գիշերվա քաղցր թովչանքը, որը տրվում է մարդուն մեկ անգամ: Թող քոնը լինեն և Շամիրամի պարտեզները պերճ, և Դամասկոսի աստղերը զնգուն, և գազելները Աբու-Նուվասի...

Փարավոնները թող պառկեն իրենց սարկոֆագներում լուռ ու անտարբեր, և Շահրիարը թող լինի դաժան՝ էգը կորցրած արու վագրի պես, և թող Բաղդադի մինարեթներից ղուլերն ալլահի աղոթեն նորից սուրբ Մուհամեդին առատաշնորհ...

Հին աստվածները վաղուց են լսել իրենց հեքիաթը, նոր աստված չկա, և եթե կա այն, որին կարող եմ ես երկրպագել, այն դու ես, օ՜, դու իմ Շահրազադե:

Ահա կփակեմ աչքերս այսպես, դու կմոտենաս թեթև ու սահուն, ինչպես լեռներից պոկված զեփյուռը իրիկնամուտին, և ցրիվ կտաս մազերս խռիվ ու կշշնջաս. «Հիմա կպատմեմ ես հազար ու մեկ գիշերվա վերջին հեքիաթը դյութիչ...»:

Եվ դամասկոսյան լուրթ գիշերները կօծվեն բույրերով նունուֆարների ու նարգիզների, և դերվիշների հոգնած աչքերին կիջնի անուշ նիրհ, և եղեգները սրինգներ դառած կերգեն կարոտով հիմնը մեծ սիրո, և կսավառնի Բաղդադի վրա սուրբ տենչանքների մշտարթուն ոգին...

Ամբողջ գիշերը ես կլսեմ քեզ, կնայեմ ես քո աչքերին ժպտուն, և լուսաբացին քեզ հետ միասին՝ գործած-չգործած մեղքերիս համար կներկայանամ խալիֆի դատին:

Շահրազադե, թե աշխարհ ենք եկել ապրելու համար, ուրեմն արի սիրելով մեռնենք:

ԿԼԵՈՊԱՏՐԱ

Դու կելնես ահա դարերի մուժից և քո ճկույթի թեթև շարժումով կհնչեն հազար ծնծղա ու վին, և թմբուկները կթնդան ահեղ, և շեփորները արևագալի հիմնը կավետեն... Ու կխոնարհվեն շողուն քուրմերը ստրուկների պես, ու կհամբուրեն մույկերդ բոսոր... Ամբոխը որպես ափից ելած ծով՝ կալիքվի առաջ աղմուկով վայրի.

- Օ՜, Կլեոպատրա, Կլեոպատրա...

Եվ կծածանվեն Նեղոսի վրա բյուր առագաստներ, ցայգալույսի մեջ կծփան ծուփ-ծուփ ջրերը արծաթ... Եվ կգան գոռոզ արքայազները աշխարհի բոլոր-բոլոր ծագերից, որ լսեն ձայնը քո աստվածային, տեսնեն դեմքը քո, և գիշերները երազների մեջ հառաչեն անհույս.

- Օ՜, Կլեոպատրա, Կլեոպատրա...

Եվ աստվածները, որ միշտ քո հանդեպ եղել են շռայլ ու առատաձեռն, մեղքերդ ներել՝ քո աղոթքները կլսեն նորից... Եվ Անտոնիոսը՝ գերված քո սիրով՝ կգա խոնարհի գլուխը հպարտ՝ մեծությանը քո... Եվ բանակները կելնեն իրար դեմ, և կշառաչեն զենքերը նորից, և ծառս կլինեն ավազուտներում նժույգները խենթ, և նետերից ու սրերից խոցված սրտերից կելնեն անեծքի խոսքեր.

- Օ՜, Կլեոպատրա, Կլեոպատրա...

Ես, որ իշխան չեմ, ոչ էլ արքայազն, սակայն Արտավազդ արքայի նման հպարտ հեգնանքով կնայեմ քո այդ վավաշոտ աչքերին ու շրթունքներին համբույր տենչացող... Իմ երակներում կեռա նորից իմ նախնիների արյունն հեթանոս, իմ մեջ կխոսի իմ նախնիների հեթանոս ոգին. «Մի՞թե աշխարհը նեղ է քեզ համար, մի՞թե քիչ է քեզ անհուն կարոտը քո Անտոնիոսի... Որտեղի՞ց ես դու այդքան չարություն ամբարել քո մեջ...

- Օ՜, Կլեոպատրա, Կլեոպատրա...

...Դարեր են եկել, անցել են դարեր, փարավոնների սուրբ դամբաններին դարերը որքա՜ն ավազ են դիզել: Որքա՜ն ջրեր են հոսել Նեղոսով, որքա՜ն պալատներ դարձել են ավազ... Բայց դու դարերի հեռավոր խորքից ելնում ես ահա դարձած առասպել: Եվ աշխարհ եկող ամեն մի սերունդ միշտ տենչում է քեզ՝ դու սիրատոչոր, սակայն փառատենչ, դու չքնաղ, բայց չար, դու հպարտ, բայց նենգ, դու հզոր, բայց թույլ՝ որպես սիրող կին...

- Օ՜, Կլեոպատրա, Կլեոպատրա...

ՁԵՎՍ, ԽԵԼՈՔ ԿԱՑ...

Ձևս, քեզ պահիր քո շանթերը:

Դու հո չասես, բայց մենք գիտենք, որ դաժան ու նենգ են լինում աստվածները:

Դու հո չասես, բայց մենք գիտենք՝ որտեղից են քո զայրույթի այդ կայծերը:

Դու հո չասես, բայց մենք գիտենք՝ ինչացու են մեր հորինած այդ մեծերը:

Դու հո չասես, բայց մենք գիտենք, թե ով է մեր բախտի տերը:

Ձևս, քեզ պահիր քո ամպերը:

Ոտքերիդ տակ մենք ենք դրել մարմարակերտ պատվանդաններ:

Մենք ենք փառքիդ երգեր ձոնել ու անունդ երկինք հանել:

Մենք ենք այդ քեզ դարձրել պաշտմունք գլխից վերև...

Եվ մենք ենք քո նենգ ու ստոր արարքները տարել-ներել:

Ձևս, քեզ պահիր քո զայրույթը:

Դու հո չասես, բայց մենք գիտենք, որ հավատում ու պաշտում ես «ոսկե հորթին»:

Դու հո չասես, բայց մենք գիտենք, թե ինչպես ես երես տալիս շողոքորթին...

Դու հո չասես, բայց մենք գիտենք, որ դու մարդ չես, այլ շանորդի...

Զևս, քեզ պահիր քո թաթերը:

Մեկ էլ տեսար՝ քեզ դարձրինք խենթ ու խելառ մի Դոն Կիխոտ կամ Քաջ Նազար...

Մեկ էլ տեսար՝ աստվածային քո բարձունքից դժոխքների դուռը հասար:

Զևս, խելոք կա՛ց:

Խելոք կա՛ց, Զևս:

ԴՈՆ ԿԻԽՈՏ

Դու խենթ ես այնքան, որ աշխարհը շարունակում է ծիծաղել վրադ երեք դարուկես:

Անմահ ես այնքան, որ ամեն սերունդ իր քրքիջներով ուղեկցում է քեզ դեպի գալիք դարերը:

Խիզախ ես այնքան, որ քո խենթությամբ ցանկանում էիր ետ բերել անհնարինը:

Տոկուն ես այնքան, որ կարողացար այդ բիրտ աշխարհում ապրել խելագար, մեռնել իմաստուն:

Ժամանակակից ես ու հավերժական, քանզի աշխարհ եկող ամեն մի սերունդ իր մեջ ունի քեզանից մի քիչ... Դոն Կիխոտ:

ՀՊԱՐՏ ՁԻՆ

Ծերացել է: Այլևս չի կարողանում առաջվա նման ոտքերը զարկել գետնին, ցնցել արծաթե բաշը և սուրալ թեթև: Շրջում է հանդերում, ուշ երեկոյան ոտքերը քարշ տալով մտնում գոմ և ախոռի մոտ տխուր կանգնում:

Ու մի օր էլ չվերադարձավ հանդից: Տերը գտավ նրան անտառի խորքում: Ձին մտել էր զույգ կաղնու արանքը, հենվել ծառերին ու... Հպարտ ձին որոշել էր կանգնած մեռնել:

ՀԵՌԱԳՐԱԼԱՐԵՐԻ ԵՐԳԸ

Սիրում եմ հեռագրալարերի երգը: Այդ երգում կարոտ կա, սեր, ցասում ու քնքշանք: Կարող եմ ժամերով ականջս հպել հեռագրասյուներին ու լսել հեռագրալարերի երգը:

Ես մի անգամ մոլորվեցի անտառում: Քայլեցի երկու ժամ, երեք ժամ, ու մեկ էլ հանկարծ ականջիս հասավ հեռագրալարերի ծանոթ երգը: Այդ երգի ուղեկցությամբ դուրս եկա անտառից ու նորից ծանոթ ճանապարհով վերադարձա տուն:

Ես ավելի սիրահարվեցի հեռագրալարերի երգին ու որոշեցի զարմացնել երգահան ընկերոջս՝ սուլեցի քթիս տակ, բայց նա բոլորովին չզարմացավ:

- Ծանոթ սիմֆոնիա է,- ասաց,- Բեթհովենից է գալիս:

ՊԱՏԳԱՄ ՈՐԴՈՒՍ

Ես ուզում եմ կյանքում գտնես այն, ինչ ես չեմ կարողացել գտնել:

Հեռավոր ճամփորդության համար վերցնես այն ամենը, ինչ ես մոռացել եմ վերցնել:

Ես ուզում եմ, որդիս, որ դու լինես իմ ամենալավ շարունակությունը և շարունակելին...

ՏԱՏՍ

- Ինչպիսի՞ մարդ էր պապս...

Տատս տխուր ժպտում է, ապա մի պահ ամփոփվում ինքն իր մեջ ու պատմում.

- Թուխ բեղեր ուներ պապդ, թուխ հոնքեր, թուխ ճակատ՝ թուխ գանգուրներ վրեն: Նստում էր թուխ ձին և թուխ փափախի տակից բոցկլտում էին թուխ աչքերը: Ջահել-ջիվան տղա էր...

Այստեղ մի պահ կարկամում է ձայնը, և աչքերը ջրակալում են:

- Հանդից եկավ տուն, պառկեց թախտին ու ամբողջ գիշեր մղկտում էր ցավից: Ոչ սուրբ Սարիբեկը օգնեց, ոչ հեքիմ Մանասը: Աստված չլսեց ձայնս: Լուսաբացին մոմի պես թրթռաց, մոմի պես հանգավ: Քսանչորսը դեռ չէր լրացել:

Տատս ամուսնու՝ այսինքն՝ պապիս մահից հետո, ապրեց վաթսուն տարի ու երբեք չմոռացավ նրան:

Գարնանամուտին ընկավ անկողին: Նա իր վերջին օրերն էր ապրում: Ու երբ արդեն զգաց, որ մահը մոտ է, կանչեց հորս, բռնեց նրա ձեռքն ու կամաց, շատ կամաց ասաց.

- Մի բան եմ խնդրում...

Նա վերջին անգամ նայեց պապիս լուսանկարին ու հառաչեց.

- Ինձ էն ջահել-ջիվանի մոտ չթաղեք... Ամոթ է:

Հրաշք կին էր տատս:

ՔԱՅԼՈՂ ԿՈՒՌՔԵՐ

Օ՜, քայլող կուռքեր, մայր հողի վրա քայլող արձաններ...

Դուք դեռ կենդանի՝ ձեր արձաններն եք արդեն պատվիրել ամենահմուտ քանդակագործին: Ուզում եք լսել ձեր անձի մասին քաղցր ներբողներ, ճառեր պաթետիկ ու դիֆիրամբներ: Դուք հավատում եք ձեր մուճակների փոշին թափ տվող շողոքորթներին, և նրանց, ովքեր մոտենում են ձեզ թաթերի վրա ու հիշեցնում, թե որ ամսի որ օրն եք ծնվել:

Օ՜, քայլող կուռքեր, քայլող արձաններ, քայլող դիմակներ...

Ձեր ժպիտն անգամ չափած ու ձևած, ամեն տեղ զգույշ և ամեն ինչում միշտ հաշվենկատ ու կասկածամիտ... Դուք գիտեք, թե ում պիտի բարևել և ում բարևին չպատասխանել, և ում Նոր տարին շնորհավորել բաժակաճառով կամ հեռագրով:

Օ՜, քայլող կուռքեր, քայլող արձաններ, քայլող դիմակներ...

Ի՞նչ եք արել դուք մարդկության համար, որ պատմության մեջ տեղ եք որոնում... Մի՞թե չեք զգում, որ Լամանչեցի Դոն Կիխոտի մոտ դուք միայն չնչին խրտվիլակներ եք... Մի՞թե չեք զգում, որ դուք հզոր եք ուղեծիր նետված այն արհեստական արբանյակի պես, որին հրթիռը դեռ ուժ է տալիս, ստիպում թռչել:

Ես չեմ հասկանում, դուք այս աշխարհից ի՞նչ պիտի տանեք, ի՞նչ պիտի թողնեք դուք այս աշխարհին...

Օ՜, քայլող կուռքեր, քայլող արձաններ, քայլող դիմակներ...

ԲԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Չհնձված արտերի վրայով մրրիկ անցավ: Ջահել հնձվորի մանգաղը մնաց կիսատ խրձի վրա, խրտնած եզները կամը հանեցին կալից ու աղբյուրի մոտ լռեց աղջիկների զնգուն ծիծաղը:

Սերմնացանները գնացին:

Կանայք արտասվեցին իրենց այրերի համար, աղջիկները սիրած տղաների համար տխրեցին, ծերունիները հառաչեցին չհնձված արտերի համար, ջահել հարսները կարոտած աչքով նայեցին հեռավոր ճամփաներին:

Սերմնացանները գնացին:

Եվ պատանիները կարծես հասունացան մի օրում, հայրերի պես դարձան լուրջ ու խոհուն. նրանց աչքերում ցոլաց ցասումն անհուն վրեժի. երդվեցին քայլել հայրերի ճանապարհով, լինել նրանց նման հպարտ ու արի:

Սերմնացանները վերածնվեցին:

Գյուղն աղմկեց առաջվա պես. կանայք շարունակեցին ամուսինների կիսատ հունձը, ծերունիները բռնեցին գութանի մաճը, կամը պտտվեց կալում և ծավալվեց երգը հայրենի:

Սերմնացաններին բարի վերադարձ:

ՉԱԽՈՂՎԱԾԻՆ

Ապոլլոնը քեզ չտվեց քնար, և մուսաները չտվեցին քեզ սուրբ ներշնչանք: Եվ Պառնաս տանող ճանապարհները փակ էին քո դեմ, իսկ դու, փառատենչ, շատ էիր ուզում անունդ տեսնել հայտնիների մեջ:

Սակայն մնացիր քո ամբողջ կյանքում այդպես ձախողված և ուղղեցիր թունոտ նետերդ հայտնիների դեմ: Գեղեցիկի մեջ տգեղը տեսար, ճերմակը սևով նշավակեցիր և կրկեսային խենթ ցուլի նման կարմիրը դարձրիր քեզ համար թիրախ:

Այնպես, ինչպես նենգ Հերոստրատը սուրբ Արտեմիսի տաճարը վառեց հայտնի դառնալու իր տենչանքով սին, դու էլ, օ՜, գիտեմ, աշխարհում մի օր կդառնաս հայտնի և քո անունը կնշվի անշուշտ... մեր քաղաքային բյուրոյի սև մատյանի մեջ:

ՄԱՅԻՍԻ ՀԱՄԱՐ

Հիշում եմ, ամեն տարի՝ մայիսմեկին, մեր գյուղի ջահելները բարձր կաղնու ճյուղից ճինջեխ էին գցում և հրապուրում աղջիկներին: Ջորը լցվում էր երգ ու ծիծաղով, բարակ ճիպոտը դաղում էր աղջիկների բարակ մեջքը:

- Անունը տո՛ւր, անունը:

Բայց ո՞ր աղջիկը կարող էր հայտնել սիրած տղայի անունը:

Հաթամենց Ռուբենը բարձրացրեց ճիպոտը, ուզում էր իջեցնել Մելունց Ալվարդի մեջքին, Ալվարդը ճչաց.

- Չխփես, Ռուբեն, չխփես:

- Անունը տուր,- գոռաց ու խփեց:

- Ռուբեն է:

Ռուբենը շիկնեց հանցանքի մեջ բռնված պատանու պես և ... 41-ի մայիսին հետևեց 41-ի հունիսը:

Պատերազմ...

Ռուբենը վերջին անգամ նայեց Ալվարդին ու շշնջաց.

- Մենք կհանդիպենք մայիսին:

Բայց նա չվերադարձավ: Ընկավ մայիսի երկուսին՝ մայիսի 9-ի համար:

ՁԻՆՎՈՐԸ ՉՎԵՐԱԴԱՐՁԱՎ

Լեռներից պոկված զեփյուռը սահեց այգիների վրայով, տերևները տխուր շրշացին, առուն հեկեկաց ձորում, բարդին խոնարհեց սեգ գլուխը:

- Ձինվորը չվերադարձավ:

Ալեհեր մայրը ձեռքը տարավ դեպի ծոցը, հանեց մի լուսանկար, մոտեցրեց շուրթերին և աչքերից երկու կաթիլ արցունք ընկան ցած:

- Զինվորը չվերադարձավ:

Մի թխաչյա աղջիկ անցավ լեռներով ու հովիտներով, ծաղիկներ փնջեց, սեղմեց մատաղ կրծքին ու սպասե՞ց, սպասե՞ց, սպասե՞ց երկար...

Զինվորը չվերադարձավ:

Խրամատները ծածկվեցին կանաչ խոտերով, խարխլված բլինդաժի վրա բացվեցին վայրի վարդերը, սարյակները վերադարձան հեռուներից, նորոգեցին իրենց բները...

Զինվորը չվերադարձավ:

1970 թ.

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Մի խելառ ծղրիդ, չգիտեմ ինչպես, մեր սար ու ձորից եկել, հասել էր այս աղմկաշատ ու մեծ քաղաքը և ողջ գիշերը պատուհանիս տակ իր երգը գլել, հանգիստ չէր տալիս:

Եկել ասում է՝ հերիք է, վեր կաց, գնա հանդերում մի քիչ հողոտվիր, մի քիչ ցողոտվիր, շողոտվիր մի քիչ, լսիր խշշոցը հասնող հասկերի, կարկաչը լսիր խենթ առուների և լուսաբացը դիմավորիր քո կապույտ լեռներում:

Եկել ասում է՝ դու հող ու քարի, շաղ ու շողի մարդ, ախր ի՞նչ ունես այս աղմուկի մեջ, ի՞նչ ես կորցրել այս հսկա շենքի վեցերորդ հարկում... Գնա տես ո՞նց է աղբյուրը ժայռի մամռապատ շուրթին սրինգ նվագում, ինչպես է գետը Մուղոզի ձորում զարկում թմբուկն իր, հովիվ տղերքը լեռան լանջերին խարույկ են վառել, քեզ են սպասում:

Ասում է՝ գնա քո Շաղասարը, քայլիր եղնիկի ոտնահետքերով, լսիր արևի շողերից կախված զանգակ արտույտի անուշ ղողանջը... Գնա «բարի լույս» մաղթիր հողվորին, Սևաձոր իջիր ծանոթ կածանով, ո՞վ գիտե, գուցե գտնես դու այնտեղ ոտնահետքերդ կորած մանկության...

Ամբողջ գիշերը պատուհանիս տակ մի խելառ ծղրիդ ինձ նախատում ու ինձ խրատում էր:

1974 թ.

ՁՈՆ

Դու սուրբ ներշնչման Բեատրիչե և խենթ ու դաժան Կլեոպատրա:

Դու անմահ սիրո Աստղիկ աստված և իմաստության Աթենաս-Պալլաս:

Դու անապատի հեղեղ Շամիրամ և հնարամիտ դու Շահրազադե...

Ասա, դու այն չե՞ս, այն, որի համար կործանվեց Տրոյան:

Դու չէի՞ր արդյոք, որ գայթակղված Յասոնի սիրով՝ օգնեցիր նրան առևանգելու ոսկեգեղմը թանկ, իսկ երբ լքվեցիր, քո հոգում խոսեց վիրավոր կնոջ վրեժը ահեղ:

Դու չէի՞ր արդյոք՝ դարձած մի հպարտ ամազոնուհի և Ժաննա դ՚Արկ, կայծակի նման գրոհում էիր, շանթում թշնամուն:

Եվ քեզ համար չէ՞ր Ռոմեոն այդպես հառաչում անհույս:

Եվ քեզ համար չէ՞ր Օթելլոն այդպես խանդից գալարվում...

Եվ քեզ համար չէ՞ր մեծն Քուչակը հյուսում տաղերն իր սեր ու կարոտի:

Եվ այն դու չէի՞ր քո սիրած այրին դեպի մարտադաշտ ճամփելիս ասում՝ «Դարձիր վահանով կամ թե՝ վահանին»:

Եվ դու չէի՞ր այն տարաբախտ Աննան, որ գնացքի տակ նետվեցիր խելառ՝ աշխարհից անհաշտ, անհաշտ քո բախտից:

Դու աստվածային չքնաղ Արտեմիս և սուրբ հաղթության թևավոր Նիկե...

Դու, այդ դու էիր, որ զենքը ձեռքիդ մարտնչում էիր բարիկադներում:

Դու քայլում էիր Կոմունարների քաջ գնդերի հետ՝ գլուխդ բարձր ու ճակատդ բաց...

Դու մեռնում էիր Կոմունարների քաջ գնդերի հետ և անմահանում ըմբոստ Մարատի, Ռոբեսպիերի, Դանտոնի կողքին:

Դու Զոյան էիր կոմերիտուհի, որ կախաղանի պարանը վզին՝ հպարտ էր նայում մահվան աչքերին:

Դու, այդ դու էիր, որ Բուխենվալդի ու Մայդանեկի մութ ճամբարներում չխոնարհեցիր հպարտ գլուխդ դահիճների դեմ...

Եվ այդ դու էիր, որ մխրճվեցիր տիեզերական անհուների մեջ ու պսակեցիր ճակատդ փառքով...

Դու հրաշք լեգենդ, դու ասք ու հեքիաթ, դու տենչ ու երազ, կսկիծ ու կարոտ, բողոք ու ցասում...

Դու բարիքների արարիչ Գեա, դու՝ կին, մայր, արև...

1975 թ.

ԱՅՍՔԱՆ ԾԱՓ ՈՒ ԱՂՄՈՒԿԻ ՄԵՋ

Այսքան ծափ ու աղմուկի մեջ, այսքան դափ ու թմբուկի մեջ ախր ինչպե՞ս ես տարբերեմ հանճարեղին ու անճարին: Եվ ստիպված ուրիշների նման ես էլ ծափ եմ տալիս, ու չգիտեմ, չեմ հասկանում՝ այս ծափերն ինձ ո՞ւր են տանում: Ծափ տվողներն այնքան շատ են, որ ակամա ծափ ես դառնում:

Այսքան ճառ ու ներբողի մեջ, այսքան գովք ու կենացի մեջ քայլող կուռքերն այնքան շատ են, որ փողոցով երբ անցնում ես, չես իմանում, թե ում առջև գլուխ թեքես, որին մի լավ շողոքորթես, որի հանդեպ մոմի նման հալվես-փափկես...

Այնքան կուռքեր կան աշխարհում, որ չգիտես որին պաշտես:

Այս անաստված աշխարհի մեջ աստվածները շատ են այնքան, որ չգի-

տես՝ որն է գլխիդ կարկուտ բերում, որը՝ ամպրոպ կամ փոթորիկ... Որ ամեն մի քայլող ստվեր առաքյալն է թվում աստծո... Մեկը մեկին մեծարելով, մեծության հերն անիծելով, այս ինքնակոչ մեծություններն աշխարհն այնքան փոքրացրել և այնքան են լկտիացել, որ իրենցից բացի՝ կյանքում ոչ մի հանճար չեն ճանաչում:

Արձանները շատացել են, պատվանդաններն չեն հերիքում:

Այսքան գովք ու ծափերի մեջ, այսքան սուտ ու խաբերի մեջ այնքան շատ են թեկնածուներն անմահության՝ ողջ աշխարհը թե որ հանկարծ դառնա հսկա մի պանթեոն, ա՛խ, հազիվ թե կարողանա իր գրկի մեջ տեղավորել ածյունները այդ ապագա անմահների...

Դարն առատ է հանճարներով, դափնիները չեն հերիքում:

Այսքան քեֆ ու խնջույքի մեջ, այսքան ճառ ու կենացի մեջ, այսքան գովք ու ծափերի մեջ, ախր, ձայնս ո՞վ է լսում, ո՞վ է ինձ հետ հաշիվ նստում, ո՞վ է ասում՝ ի՞նչ ես կորցրել, որ չես գտնում, լեզուդ ինչո՞ւ քեզ չես պահում...

Է՛հ, խրատներ կարդացողներն այնքան շատ են՝ ամբիոնները չեն հերիքում:

ՀՐԴԵՀՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Վառվում է հսկա, հսկա մի անտառ...

Եվ ճարճատում են ջահել բոխիներն ու կաղնիները վիթխարահասակ: Եղևնիները ինչպես կերոններ՝ կարծես ճչում են, կանչում՝ «օգնեցե՛ք...»: Իսկ քամին, անգութ ու դաժան քամին, դարձած մի հրձիգ, վառվող ծառերից բոցեր է պոկում, ծառից-ծառ նետում ու ոռնում վայրագ:

Ու հրդեհի մեջ սաղավարտներն են փայլում-պսպղում քաջ հրշեջների. ֆշշում են ջրի շիթերն անգույն ու խրթխրթում են պոմպերը հզոր: Ուղղաթիռները անտառի վրա շերեփուկների նման կախվել ու դղրդում են խոլ, ինչ որ մի թռչուն իր վառվող բնի շուրջն է պտտվում, չրթչրթում անհույս:

Վառվում է հսկա, հսկա մի անտառ:

Անտառապահը՝ տարիքն առած մարդ, գլուխը կորցրած՝ ծնկներին խփում և նզովում է չգիտես՝ թե ում: Ջահել տեսուչը չի ուզում կարծես նրան հասկանալ և թութակի պես նույն հարցն է կրկնում. «Ախր, լսիր ինձ, գրողի տարած, այդ ո՞նց պատահեց»:

Այս ո՞նց պատահեց... Դե ո՞վ իմանա, թե ոնց պատահեց: Գուցե մի ինչ-որ տուրիստ կամ որսորդ վառվող սիգարը նետել ծառի տակ ու չի հասկացել, որ հրդեհները ծնվում են նույնիսկ մի փոքրիկ կայծից...

Կամ գուցե ինչ-որ մի վնասարար վառել է այնպես, հաճույքի համար, թողել-հեռացել... Թե՞ երեխա է եղել մի անմեղ՝ կատակ է արել լուցկու տուփի հետ...

Ես նայում եմ այս վառվող անտառին, խորհում ինքս ինձ. «Ախ, տեսնես գիտե՞ր Պրոմեթևսը, թե առևանգած իր հուր-հրաշքը ում է պարգևում»:

ԲԱՅԱԹԻ

Կլկլում է Ջրդռ-դուզի բլբուլ Ջումին՝ ինքը թախիծ, երգը՝ թախիծ, և թախիծ է ծորում թառից:

Երգն ասում է՝ աշխարհը փուչ, կյանքը սուտ է, սերը սուտ է, սուտ են արև ու լուսին:

Սադափ դափը թրթռում է բլբուլ Ջումու մատների տակ, և քամանչան հեծկլտում է սրտակեղեք ու մղկտում:

Մի ծեր դերվիշ թիկնել բակում չայխանայի, հորանջում է երկար ու ձիգ և թազբեհի հատիկներին խառնում ոչ ու փուչ աշխարհի խերն ու շառը...

Փողոցով մի կառք է անցնում՝ պրիստավն է իր կապուտաչ սիրուհու հետ: Լռություն է տիրում մի պահ, ծլնգում է թառը կամաց, և քամանչան մրմնջում է: Չայչի Ալին աչք ու ունքով լուռ սաստում է Ղոչ-Երեմին, իսկ վերջինս թավ հոնքերը իրար տալիս, բղավում է հարբած-հարբած. «Հե՜յ, սազանդար, լացացնող մի բայաթի...»:

Կլկլում է Ջրդռ-դուզի բլբուլ Ջումին, և քամանչան մղկտում է, հեծեծում է, լալիս թառը...

Երգն ասում է՝ ով աշխարհում գոզալ ունի՝ նա բախտ չունի, ով փող ունի՝ նա սրտի մեջ միշտ դող ունի, ով իր հոգում երգեր ունի՝ սրտում վառված վերքեր ունի...

Ծեր դերվիշը իր գլուխը կրծքին թեքել և երազում պաչպչում է ջաննաթի հուր-հրեղեն փերիներին ու պապակված շրթունքները շարժում կամաց...

Հառաչում է Ղոչ-Երեմը, Ջրդռ-դուզի գոզալների ցավը տանում ու արտասվում հարբած-հարբած...

Կլկլում է Ջրդռ-դուզի բլբուլ Ջումին՝ սիրտը վառված, հոգին վառված, երգը՝ վառված... Ու կրակված մի ջեյրան է չայխանայի կողքով անցնում, մի հեյրան է անցնում հովի նման թեթև...

Ջումին դափը վեր է նետում, շողշողում են սադափները ու կայծկլտում արեգակի շողերի տակ. աշխարհը՝ սեր, վարդերը՝ սեր, սիրուն յարի աչերը՝ սեր ու կյանքը՝ սեր...

Ջումին միայն մի անգամ է թուխ չադրայի ճեղքից տեսնում նորած լուսնի կեռ հոնքերն ու սև աչքերը...

Ջումին միայն մի անգամ է հասցնում նայել պատուհանց այն ջաննաթի հուր ջեյրանին...

Շողշողում է Ազիմ բեկի սուրը կայծակ...

Բլբուլ Ջումին կրծքից խոցված թավալվում է իր արյան մեջ ու հառաչում. «Աշխարհն՝ արյուն, կյանքը՝ արյուն, սերը՝ արյուն, սիրած յարի մեն մի տեսքին արժանանալն՝ արյո՜ւն, արյո՜ւն...»:

Եվ քամանչան հեծկլտում ու մղկտում է, սրտակեղեք մի թախիծ է ծորում թառից:

* * *

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում...
Պարույր ՍԵՎԱԿ

Մարդ կա՝ իր ապրած գեղեցիկ կյանքով կյանքն է հաստատում:

Մարդ կա՝ շարունակ հա՜ տրտնջում է և հաստատվածը մերժում ու ժխտում:

Մարդ կա՝ իր անշուք, փոքրիկ խրճիթում մեր այս աշխարհին սիրահարվածի աչքով է նայում:

Մարդ կա՝ իր համար դդյակներ կերտել մութ ճանապարհով, բայց հարևանի հավաբունն է միշտ աչքին երևում:

Մարդ կա՝ իր զոհված ընկերոջ շիրմին հսկա մի կոթող է կանգնեցնում:

Մարդ կա, որ իր հոր հիշատակը հավերժ հիշելու համար՝ ուրիշի շիրմի քարն է թռցնում:

Մարդ կա՝ ճակատի արդար քրտինքով եկած վաստակից աղբյուրներ շինում, ճամփեք է բացում...

Մարդ էլ կա՝ նույնիսկ կոպեկի համար հարազատ իր հոր հերն է անիծում:

Մարդ կա՝ տան դուռը իր սրտի նման միշտ բաց է պահում՝ խնդրե՛մ, համեցիր...

Մարդ կա՝ բանալու նեղլիկ ճեղքով է նայում դեպի իր դուռը եկածին:

Մարդ կա՝ ասուպի կարճ կյանք է ապրում, բայց իր տվածով և իր թողածով լեգենդ է դառնում, դառնում ասք ու հավերժական երգ...

Մարդ կա՝ հարյուր չէ, թեկուզև հազար տարի էլ ապրի, այս մեծ աշխարհում չի թողնի երբեք և ոչ մի հետք:

Մարդ կա՝ մեծ պաշտոն ու աթոռ չունի, սակայն մարդկանց մեջ միշտ ունի անուն...

Մարդ կա՝ և՛ պաշտոն, և՛ աթոռ ունի, բայց, խոսքը մեր մեջ, նրա անունը իր կաբինետի դռանը կպած նեղ տախտակից են միայն իմանում:

Մարդ կա՝ տեղով մեկ ժպիտ է, լույս է, խինդ է ու կարոտ, երբ նայում ես՝ փառավորվում է սիրտդ ու հոգիդ...

Մարդ կա՝ այնպես է հոնքերը կիտում, այնպես մթնած է նայում քո դեմքին, որ թվում է, թե կծու պղպեղ է մնացել բկին...

Մարդ կա՝ կարող է ծննդյան օրն իր մի ծաղկեփնջով, թեկուզ մի վարդով, մի ծաղկով գերվել...

Մարդ կա՝ կարող է զայրույթից պայթել, երբ իր ենթական կնոջ կամ որդու ծննդյան տոնին ոսկե մատանի կամ գորգ չի բերել:

Մարդ կա՝ աշխարհին փառք է ու պատիվ, և երբ գնում է նա այս աշխարհից, զգում ես՝ տեղը մնում է միշտ բաց:

Մարդ էլ կա՝ եղած ու չեղած մեկ է, չես էլ իմանում, թե այդ ե՞րբ եկավ և այդ ե՞րբ գնաց...

Օ՜, աշխարհ, աշխարհ, ես քո ինչն ասեմ՝ ախր ինչո՞ւ ես դու մարդու կողքին մարդուկ ստեղծել:

ԿՌՈՒՆԿՆԵՐՍ ՉԵԿԱՆ

Կռունկներս չեկան, կռունկներս չկան...

Ուրիշ կռունկներ եկան հարավից, ուրիշ կռունկներ թևելով անցան այգուս վրայով, մերոնց բները դատարկ մնացին...

Ուրիշ կռունկներ աշնանամուտին երամներ կապած կչվեն հարավ...

Ուրիշ կռունկներ գարնանամուտին ուրիշ աշխարհից կվերադառնան...

Կռունկներս չեկան, կռունկներս չկան...

Գուցե հոգնե՞լ են երկար թևելուց և մոլորվել են օտար սարերում, օտար ձորերում, օտար ծովերում... Թե մութ ամպերից շանթել են նրանց գիշանգղները օտար ափերի...

Կռունկներս չեկան, կռունկներս չկան...

Ի՜նչ շուտ դեղնեցին ծառերը այգուս, տերևաթափը ի՜նչ շուտ սկսվեց... Այդ ե՞րբ թոշնեցին կարմիր վարդերս ու առվակներս իրենց քրքիջը փոխեցին լացի...

Աշնան եղյամ է իջել մազերիս, ձմեռնամուտս հեռու չէ այնքան...

Կռունկներս չեկան, կռունկներս չկան:

ՄԵԾԱՐՈՒՄ

Ընտիր կոնյակն ու գինին հոսում են, ու կենացներն են հետևում նորից մեկը մյուսին:

Եվ հոբելյարը բազմել է ահա սեղանի գլխին, մեծարողներին իր ժպիտներն է բաժանում արբշիռ ու թեթևակի գլուխը շարժում, այսինքն՝ դեմ չեմ, շարունակեցեք:

Խոսում է բաժնի ճաղատ վարիչը, խոսում է ինչ-որ նախկին դիրեկտոր, և տեղակալն է ճառն իր համեմում զրնգուն ու պերճ էպիտետներով:

Ո՞ւմ են մեծարում: Մի մարդու, որը բանսարկությամբ ու շանտաժներով է իր ճամփան հարթել:

Մի մարդու, որն իր ամբողջ կյանքում գլուխ է թեքել պետերի առջև ու շողոքորթել:

Երբ ցանկացել են մեկին մեծարել, միշտ ինքն է ասել առաջին ճառը:

Երբ հարկավոր էր նույն մեծարվածին մի լավ քարկոծել, ինքն է վերցրել առաջին քարը:

Ո՞ւմ են մեծարում:

Մեծարում են մի փառատենչ մարդու, որ միշտ ձգտել է բարձր պաշտոնի և նպատակին հասնելու համար անգամ ընկերոջն ու բարեկամին նա չի խնայել:

Մեծարում են մի այնպիսի մարդու, որ աթոռներից աթոռ է վազել, առագաստ բացել ամեն քամու դեմ, ու բիբլիական Արամազդի պես «հասարակներին» իր աստվածային բարձունքից նայել:

Մեծարում են մի մարդու, որ հանուն սեփական շահի կարող է թքել աշխարհի ամեն սրբության վրա, պաշտոնը դարձնել քավության նոխազ, կնիքը՝ վահան, փրկել իր կաշին:

Մեծարում են մի պիղծ խաչագողի, որը կարող է ամեն դուռ բացել, խոթել գլուխը... Կարող է կերտել իր անձի համար շքեղ դղյակներ և տոնել նույնիսկ կնոջ ու որդու ծննդյան օրը... հիմնարկի հաշվին:

Ընտիր կոնյակն ու գինին հոսում են, և հոբելյարը փառահեղ բազմել սեղանի գլխին, իր ժպիտներով շուրջը բուրավետ թմբիր է ցանում...

Գրողը տանի, հաճախ այնքան ենք մենք գինովանում, տարվում գեղեցիկ խոսք ու ճառերով, որ մեզնից անկախ մենք չենք հասկանում՝ ում ենք մեծարում:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ «ՄԵԼԻՔ-ԱՎԱՆ» ԴՐԱՄԱՅԻՑ

Բավ է, լռի՛ր, Վարանդայի նենգ տիրակալ: Ախր, ինչպե՞ս հավատամ քեզ, քո երդումին: էլ աշխարհում հավա՞տ մնաց:

էլ ազնիվ ու անկեղծ ասված կենացների գավա՞թ մնաց:

Երբ թշնամին եկել ահա ու կանգնել է մեր տան շեմին, ինչպե՞ս եղավ, որ երեկվա ճառախոսը կավատ մնաց:

Եվ գալիս են ու կգան դեռ արևելքից, արևմուտքից ու հարավից: Ով թուր ունի՝ մեզ վրա է բարձրացրել, ով հրացան ունի ձեռքում՝ մեր խաչքարն է թիրախ դարձրել:

Իսկ դու լռի՛ր, Վարանդայի պիղծ տիրակալ: Դու Հուդայի քո համբույրով քանիսի՞ն ես կյանքում մատնել: Այդ դու չէի՞ր, որ բացեցիր Վարանդայի դարպասները թշնամու դեմ մեր դարավոր: Եվ դու չէի՞ր, որ նենգաբար խփում էիր մեզ թիկունքից, դահիճների զորապետին Մելիք-Ավան մեծ յուզբաշու գլուխն էիր ուզում տանել, որպես փեշքեշ մի փառավոր:

Ո՞ւմ հավատամ, էլ աշխարհում հավա՞տ մնաց:

էլ ազնիվ ու անկեղծ ասված կենացների գավա՞թ մնաց:

Օ՜, տեր աստված, օգնի՛ր, ուժ տո՛ւր, պաղատում եմ ու աղաչում...

Ոսոխներս այնքան շատ են, բարեկամիս չեմ ճանաչում:

1970-75 թթ.

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ու պապունց տունը նորից դառնում է հրաշք ու հեքիաթ, նորից իմ դիմաց կանգնում են կատակասեր ու սրտաբաց քեռիներս, տունը կարծես առաջվա պես լցվում է երգ ու ծիծաղով: Ո՛չ, այս ամենը չեմ ուզում թվա որպես երազ, ես զույգ ձեռքս պարզում եմ վեր ու նորից կրկնում.

- Բա՛րև, պապունց տուն:

ՏՈՒՆԸ

ՊԱՊՈՒՆՑ ՏՈՒՆԸ

Պապունց տունը...

Հրաշք ու հեքիաթ էր պապունց տունը: Դա մեր գյուղի ամենամեծ, ամենաշեն տունն էր: Ինձ թվում էր՝ աշխարհում այնքան ուրախ տուն չկար, որքան իմ պապունց տունը, աշխարհում այնքան բարի տատիկ չկար, որքան իմ Մարիամ տատին: Երևի աշխարհում իմ քեռիների նման ուրախ, կատակասեր, սրտաբաց ու սրտամոտ քեռիներ ոչ ոք չուներ: Ոչ ոք:

Նրանք չորսն էին, չորս շախով-շուխով քեռիներ՝ Սարգիս քեռին, Ռուբեն քեռին, Անդրեյ քեռին և Մանուկը: Ես սկզբում Մանուկին քեռի չէի անվանում, որովհետև նա ինձանից երեք տարով էր մեծ, և հետո էլ՝ պապունց տան կրտսերն ինքն էր: Եվ որովհետև պապունց տան կրտսերն ինքն էր, իմ մյուս քեռիները նրան սիրելու չափ ձեռ էին առնում, ձեռ առնելու չափ՝ սիրում: Մեկ էլ տեսար Սարգիս քեռին գիշերվա կեսին տան ավագի իրավունքով քաշեց նրա վերմակի տուտն ու գոռաց.

- Ա՛յ տղա, Մանո՛ւկ, ի՞նչ ես քնով անցել, զանգը երբ են խփել, հա՞...

Մանուկը բռունցքով տրորում է քնատ աչքերը, ճմլկոտում, հորանջում, հագնում շորերը, բայց գրքերի պայուսակը չի գտնում: Նայում է սավանի տակ, ստուգում պահարանները՝ պայուսակը չկա ու չկա:

- Մանուկ ջան,- այտերն ուռցնում է Ռուբեն քեռին,- եթե մի հատ պար գաս, պայուսակիդ տեղը կասեմ:

Սարգիս քեռին աթոռը դարձնում է դիոլ, Անդրեյ քեռին չգիտեմ որտեղից հանում է լարերը կտրտած թառը, Ռուբեն քեռին ծափ է տալիս.

- Շաբա՞շ, շաբա՞շ, այ շաբա՞շ...

Եվ Մանուկը, որպեսզի իմանա պայուսակի տեղն ու դասերից չուշանա, շախով-շուխով պարում է: Պարում է այնպիսի լրջությամբ, որ կարծես բեմի վրա է, հարյուրավոր հանդիսատեսներ իրեն են նայում:

- Լեզգինկա,- գոչում է ավագ քեռիս և ավելի ոգևորված թմբկահարում աթոռը.- Տըմբը-դարա՛բ, դարա՛բ, դարա՛բ, Տըմբը-դարա՛բ, դարա՛բ, դարա՛բ...

- Մանուկ, ա՛յ քյափուռ, չոքիր,- խնդմնդում է Անդրեյ քեռին, թառը թափահարում գլխի վերևն ու նվագում բերանով:

- Մի անգամ էլ չոքիր, մի անգամ էլ,- թշերն ուռցնում է Ռուբեն քեռին, մատները խաղացնում բերանին, իբր զուռնա է նվագում:

Մանուկը ոտքերն ուժգնորեն գետնին է խփում, կոտրատում թևերը, չոքում, վեր թռչում նորից, պտույտներ գործում ու գոչում.

- Հոպա-հոպ, հոպա-հոպ...

Տատս, որ աշխարհի ամենասրտացավ ու ամենաբարի կինն է, ամբողջ հոգով սիրում է Մանուկին, սկսում է նախատել կատակասեր քեռիներիս.

- Հերիք է, ա՛յ շաշեր, էդ եթիմին խի՞ եք չարչարում: Մանուկ բալա, հրեն պայուսակդ թախտի տակին, վերցրու:

Մանուկը թախտի տակից հանում է պայուսակը, հիմա էլ տրեխները չի գտնում:

- Երեք անգամ ծուղրուղու կանչիր, տրեխներիդ տեղն ասեմ,- նորից խնդմնդում է Անդրեյ քեռին.- Մանուկ, աքլորավարի, հա...

Մանուկը թևերը թափահարելով ցատկում է աթոռին, վիզը երկարում ու ծղրտում,

- Ծուղրուղո՜ւ...

- Չոռ ու ցավ քեզ,- իբր բարկանում է Անդրեյ քեռին:- Այ գլուխդ ուտես դու, գիշերվա ժամը երկուսին ի՞նչ ես բողազդ պատռում:

Ու պայթում է ծիծաղը, Սարգիս քեռին բռնում է փորը, թավալ գալիս մահճակալին, Ռուբեն քեռու աչքերը ծիծաղից արցունքոտվում են, Անդրեյ քեռին վեր է նետում բարձը, իսկ տատս՝

- Ա՛յ շաշեր, էդ երեխից ախր ի՞նչ եք ուզում:

Իսկ ես Մանուկ քեռուն ավելի շատ էի սիրում, քան մնացած քեռիներիս: Եվ նա այնպես էր ուզում, որ ես իրեն քեռի անվանեմ:

- Վաղիկ ջան,- ասում էր,- եթե դու ինձ Մանուկ քեռի անվանես, որքան վեգեր ունեմ, քեզ կբախշեմ:

Ես համաձայնվեցի, ուղղակի քեռիներիս ներկայությամբ մոտեցա նրան ու ասացի.

- Բա՛րև, Մանուկ քեռի:

Պատկերացնո՞ւմ եք, քեռիներս այնքան քրքջացին, որ քիչ էր մնում խեղդվեին:

- Մանուկ քեռի,- թշերն ավելի ուռցրեց Ռուբեն քեռին.- Վա՜յ, ես խնդալուց կմեռնեմ... Արա, մի տո՛ւշ, Մանուկն էլ քեռի դարձավ...

Պապունց տունը...

Հրաշք ու հեքիաթ էր պապունց տունը: Դա մեր գյուղի ամենամեծ, ամենաշեն, ամենաուրախ տունն էր: Խոտհարքին ոչ ոքի գերանդիներն այնքան չէին փայլում, ինչպես փայլում էին քեռիներիս գերանդիները: Ոչ ոք այնպես անուշ չէր երգում, ինչպես Անդրեյ քեռին, ոչ ոք այնքան սրամիտ չէր, որքան Սարգիս քեռին, ոչ ոք այնքան ուժեղ չէր, որքան Ռուբեն քեռին, և ոչ ոք ինձ այնպես չէր սիրում, ինչպես Մանուկ քեռին:

Բայց եղավ պատերազմ:

Պապունց տան վրա ասես սառը ջուր մաղվեց, կարծես ինչ-որ կախարդական գավազանի ուժով լռեց երգն ու ծիծաղը:

Այդ օրը տատս լալիս էր և արցունքների միջից անիծում «կռիվ գցողին»: Սարգիս քեռին, որ ամուսնացել էր երեք ամիս առաջ, բահը տնկեց ցանկապատի տակ, նայեց պատշգամբին մոլոր կանգնած քեռակնոջս ու ասաց.

- էս կռիվը մենակ մեզ համար չի, Շողեր, սաղ աշխարհի համար է:

- Հա՛, սաղ աշխարհի համար է,- հաստատեց Ռուբեն քեռին ու նայեց դիմացի տան պատշգամբին կանգնած Աստղիկի կողմը, որի վրա վաղուց աչք ուներ:- Մենակ շուտ վերջանա, որ քիչ արյուն թափվի:

Մեր գյուղից առաջինը ռազմաճակատ մեկնեց Սարգիս քեռին: Մի շաբաթ անց Ռուբեն քեռին գնաց, հետո հերթը հասավ տեխնիկումը նոր ավարտած Անդրեյ քեռուն:

Պապունց տունը մնաց Մանուկի հույսին: Ամբողջ օրը ոտքի վրա էր: Ալյուրը վերջացել է՝ ջրաղաց պիտի գնալ, ցախ է հարկավոր, գոմի կտուրը կաթում է, նախիրը պիտի հանդ տանել, ցանկապատը փլվել է...

- Մանու՛կ,- մուշտուկը փստացնում է նախագահ Մացակը,- կոլխոզի բոստանները ջրող չկա, հասիր:

- Մանու՛կ,- ծոծրակը քորում է գյուղսովետի նախագահ Արմանը,- էս նամակը ղշի թևով քաղաք հասցրու:

Սարգիս քեռին Կերչի ճակատից գրում է. «Մանո՛ւկ, Շողերը քո հույսին եմ թողել»: Ռուբեն քեռին Լենինգրադից գրում է. «Փոքր ախպեր ջան, մաման քեզ ամանաթ...»: Լեյտենանտ Անդրեյ քեռին ինչ-որ «Ն» զորամասից գրում է. «Մանու՛կ ջան, հիմա տանը մեծը դու ես, մեր օջախը վառ պահիր»: Եվ գյուղում բոլորն էլ սիրում են Մանուկին, իսկ Վերդունց Մուխանի շիկահեր Մանուշը գժվում է նրա համար:

- Մեր գյուղում,- ասում է,- Մանուկի նման տղա չկա:

Մանուկն էլ ասում է.

- Մեր գյուղում Մանուշի նման աղջիկ չես գտնի:

Ես հարցնում եմ.

- Մանո՛ւկ, Մանուշի հետ ե՞րբ պիտի պսակվես:

Նա ժպտում է ամոթխած.

- Հենց որ պատերազմը վերջանա, նշան կատամ:

- Պատերազմը ե՞րբ կվերջանա:

- Երբ մերոնք Բեռլինը գրավեն:

- Մերոնք Բեռլինը ե՞րբ կգրավեն:

- Շուտով, Վաղիկ ջան, շուտով:

43-ի ապրիլին Սարգիս քեռին նամակ գրեց. «Մանուկ ջան, ծանր վիրավորվել եմ, մամային ու Շողերին բան չասես: Իսկ եթե հանկարծ ինձ հետ մի բան պատահի, Շողերի ճանապարհը չփակեք, մեղք է»:

Անդրեյ քեռին նամակի հետ մի լուսանկար ուղարկեց՝ ինքն էր, կողքին շիկահեր մի աղջիկ. «Մանուկ ջան,- գրում էր,- այս աղջկա անունը Լիդա է, մեր բուժքույրն է, ինքն էլ ոսկի սիրտ ունի: Դե, ձեզանից ի՞նչ թաքցնեմ, ար-

դեն պսակվել ենք»: Տատս համբուրեց լուսանկարը, սեղմեց կրծքին ու շշնջաց. «Անդրի ջան, քեզ էլ մատաղ, քո սարու հարսին էլ»:

43-ի վերջերին Ռուբեն քեռու սև թուղթը եկավ… Մանուկ քեռին, որ արդեն տասնութ տարեկան էր, թուղթը դրեց ծոցագրպանում, սեղմեց բռունցքները և այսպես էլ սեղմած բռունցքներով մեկնեց ռազմաճակատ:

- Շուտ-շուտ նամակ կգրես,- ասաց տատս:

- Շուտ-շուտ նամակ կգրեմ,- խոստացավ քեռիս:

- Շատ ֆաշիստներ կսպանես,- ասացի ես:

- Շատ ֆաշիստներ կսպանեմ,- ժպտաց քեռիս:

- Ինձ չմոռանաս, Մանու՛կ,- շշնջաց Մանուշը:

- Չեմ մոռանա, Մանուշ,- պատասխանեց քեռիս:

Պապունց տունը դարձավ ջրատված ջրաղաց: Չորս գերանդիներ մնացին կախված սյունից, չորս բահ մնացին ցանկապատի տակ տնկված, չորս մահճակալ մնացին դատարկ: Տատս ձեռքը ծոցում, նայեց քաղաք տանող ճանապարհին ու աղոթքի պես շշնջաց.

- Էս զուլումը ե՞րբ կվերջանա:

Քեռակին Շողերը նայեց տատիս ու հառաչեց.

- Սարգիսից էլի նամակ չկա, սիրտս վատ բան է գուշակում:

45-ի հունվարին Սարգիս քեռին եկավ: Չէ, չեկավ, բերեցին: Աջ ձեռքն ու աջ ոտքը թողել էր Ղրիմում: Պատգարակի մի ծայրը նախագահ Մացակն էր բռնել, մյուս ծայրը՝ փոստի Մինասը: Տատս արտասվեց, քեռակինս երեսը շուռ տվեց, նախագահ Մացակը արցունքը խեղդեց կոկորդում, ասաց.

- Կռիվ է, ամեն ինչ պատահում է, ի՞նչ կարող ես անել: Ճար չկա, եղածով էլ յոլա կգնա:

- Յոլա գնալով ապրել կլինի՞,- չարացավ քեռակին Շողերը:- Առանց ոտ ու ձեռքի էս խեղճ ու կրակն ի՞նչ անի: Իբր էդքանն ինչի՞ եք բերել:

Եվ որովհետև քեռիս շատ հպարտ մարդ է, խոսքը ճակատին ասող մարդ, առողջ ձեռքով խփեց սեղանին ու որոտաց.

- Շողե՛ր, ինձանից այս է մնացել, ես քեզ չեմ խանգարում, ճանապարհդ բաց է: Գնա, էլ ես չկամ: Չկամ, լսու՞մ ես, չկամ:

Շողերը գնաց: Քեռիս երևի սպասում էր դրան, ոչ մի խոսք չասաց: Հասաց. «Այ անխիղճ, ես ի՞նչ մեղավոր եմ, որ մահից փրկվել եմ հրաշքով»: Երեք օր հետո նախագահ Մացակի բերած փայտե ոտքը հագցրեց կտրած ոտքին, մի քիչ ճռճռացրեց ու դարձավ ինձ.

- Վաղիկ ջան, հիմա պատմիր՝ տեսնեմ գյուղում ինչ կա:

Ես պատմեցի Մանուկ քեռու և Մանուշի մասին, նա տխուր ժպտաց.

- Մանուկը դեռ երեխա է, աշխարհից բան չի տեսել:

Ցույց տվեցի Անդրեյ քեռու և Լիդայի լուսանկարը, հառաչեց.

- Միայն կռիվը շուտ վերջանա:

Իսկ Ռուբեն քեռու մասին նա արդեն գիտեր, մատը դրեց շուրթին.

- Տես, հա՜, տատիկին բան չասես:

Ես հիշեցի, որ տատիկն էլ երկու օր առաջ էր ինձ զգուշացրել.

- Սարգիս քեռուդ չասես, սիրտը յարալու է, չի դիմանա:

Բայց Սարգիս քեռին ամուր սիրտ ուներ, դիմացավ: Երբ Շողերն ամուսնացավ դարբին Մկրտչի որդու հետ, նա ճռճռացրեց փայտե ոտքն ու խոսեց.

- Բան չկա, միայն թե այս անգամ թող իրա սրտով լինի: Մանուկը կվերադառնա, մի լավ հարսանիք կանենք:

Մանուկը չվերադարձավ, ընկավ Օդերի ափին, և Սարգիս քեռիս այս անգամ ավելի ճռճռացրեց ոտքը, ու ինձ թվաց, թե այդ ճռճռոցը նրա սրտի միջից է գալիս:

Անդրեյ քեռին միայն մի շաբթով կնոջ հետ եկավ, բոլորիս հետ ռուսերեն կատակեց, ռուսերեն ծիծաղեց (խա՜, խա՜, խա՜) և գնաց հեռավոր հյուսիս: Գնաց ու մնաց:

- Տուն-տեղ ունեմ,- ասաց,- աներս գործարանի դիրեկտոր է, զոքանչս՝ տնտեսագետ, աներձագս՝ ինժեներ: Փողից-մողից կուղարկեմ:

- Փողդ էլ քեզ լինի, մողդ էլ,- ձեռքը թափ տվեց Սարգիս քեռին:- Մենակ մեր օջախը չմոռանաս:

Պապունց տունը...

Պապունց տունը հիմա էլ կա, հիմա էլ ապրում է Սարգիս քեռին: Պատշգամբին թռչկոտում են նրա պստլիկ Ռուբենը, Մանուկը և Շողերը: Քեռակին Վարդանուշը, այսինքն՝ քեռուս երկրորդ կինը բակում լվացք է անում:

Ես բարձրանում եմ քարե աստիճաններով և թվում է՝ ուր որ է կերևա Մարիամ տատիկս, կգրկի, կսեղմի ինձ կրծքին ու կասի. «Տատիկը քեզ մատաղ, Վաղիկ բալա, չես երևում»: Տատիկս չկա, հանգչում է գյուղի ծայրի գերեզմանում: Աչքերս լցվում են արցունքով, ձայնս դողում է.

- Բա՛րև, Սարգիս քեռի:

Սարգիս քեռիս առողջ ձեռքով գրկում է ինձ, նայում աչքերիս մեջ ու ցույց տալիս պատից կախված մեծադիր լուսանկարները: Եվ ես ասում եմ.

- Բա՛րև, Ռուբեն քեռի:

- Բա՛րև, Մանուկ քեռի:

- Բա՛րև, Անդրեյ քեռի:

- Բա՛րև, պապունց տուն:

Ու պապունց տունը նորից դառնում է հրաշք ու հեքիաթ, նորից իմ դիմաց կանգնում են կատակասեր ու սրտաբաց քեռիներս, տունը կարծես առաջվա պես լցվում է երգ ու ծիծաղով: Ո՛չ, այս ամենը չեմ ուզում թվա որպես երազ, ես զույգ ձեռքս պարզում եմ վեր ու նորից կրկնում.

- Բա՛րև, պապունց տուն:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԽԱԼ է

Անմոռաց տատիկիս՝ Մանուշակի հիշատակին

Նախագահ Մացակը ընդհանուր ժողովում կարդում է ցուցակը: Այս անգամ ես կալվոր չեմ: Ես սայլապանի օգնական եմ: Մինաս դային՝ հունական դասական քթով, Հին աշխարհի պատմության դասագրքի առասպելական Հերկուլեսի պես հաղթանդամ մի մարդ, որ գյուղում հայտնի է իր ընտիր հայհոյանքներով, ծանր ձեռքը դնում է ուսիս ու տալիս օրվա հանձնարարությունը.

- Ուրեմս, ընկեր Վաղիկ, առավոտը ծեգին գնում ես եզների ետևից, լավ մազութում սայլի ակները, փոխում մախառը, հետո բանը բան ցույց կտա:

Գյուղում Մինաս դայու հայհոյանքներից ոչ ոք չի վիրավորվում, որովհետև նա հայհոյում է հենց այնպես, կատակի համար: Հայհոյում է բրիգադիր Սարիբեկին, որի խոսքի ութսուն տոկոսը փչոց է, մնացածն էլ՝ կասկածելի: Հայհոյում է Թունունց Ռեհանին, որ ուրիշների համար պատվերներով երազներ է տեսնում, ամուսնուց թաքուն գիր անում, բախտ գուշակում: Այնուհետև հայհոյում է իրենց միաչքանի շանը, որի անունը Գեբելս է, և այդ Գեբելս անունով շունը գիշեր-ցերեկ անտեղի հաչում ու ոռնում է, գողանում Մուլքունց Հայկասարի տրեխները: Թե ինչու միայն Մուլքունց Հայկասարի տրեխները, Գեբելսը նրա հետ ինչ հաշիվներ ունի, այդ արդեն անհայտ է:

Տատս ուրախանում է, որ Մինաս դայու օգնականն եմ, որովհետև Մինաս դային մեզ ազգակից է գալիս: Նրա պապն ու հորս պապը եղել են հորեղբորորդիներ, միասին վարել ու ցանել են, միասին հնձել, ձմռան երկար գիշերները նստել հին դարադանում, հեքիաթներ պատմել:

- Մինաս,- ասում է տատս,- Վաղիկը քեզ ամանաթ, աչքդ վրան պահիր:

Մինաս դային թավ հոնքերի տակից նայում է տատիս, հայհոյում նրա հարսանքի մակարներին, սազանդարներին, «Դենից դեսն ուղարկողներին» ու ավելացնում.

- Պետունց Մանիշակ, բա մի չիմանա՞մ, թե Պետունց Կուքանը քո ինչն է հավանել: Բա դա խո՞սք է, որ ասում ես: Ես չասեմ, դու հո գիտես, Վաղիկն իմ բալան է, իմ մինուճար Արսենը:

Սայլի անիվները ծույլ-ծույլ պտտվում են փոշոտ ճանապարհին: Մինաս դային ճիպոտը ճոճում է օդում. «Հո՜, հո՜, Խումար, Լաչին, օրը կեսօր դառավ»: Սայլը ճլվստալով անցնում է լեռան փեշով: Ձորի բանջարանոցներում Տեփունց Նավասարդը մարգեր է ջրում: Մինաս դային կանգնեցնում է սայլը ու կանչում.

- Հե՜յ, հե՜յ Տեփունց Նավասա՜րդ,- Տեփունց Նավասարդը բարձրացնում է գլուխը:- Արա՜, Նավասարդը դու չե՞ս:

- Բա՞ն ես ասում, Մինաս:

- Հա, բան եմ ասում: Այ խելքի պուլիկ, էդքան ջուրն ինչի՞ ես կապել լաքերի վրա: Բա դու ջրվո՞ր ես, բա դու խի՞ղճ ունես: Դե վիզդ ինչի՞ ես փոկ արել. թե սխալ եմ ասում, էդ բահովդ տուր՝ կարկաժս ճղիր... Թե խոսեմ՝ մարդ չեմ:

Հասնում ենք Սևաձոր: Բրիգադիր Սարիբեկը խոզանի միջով ձին չափ գցած գալիս է, կանգնում ցորենի դեզի շվաքում: Մինաս դային նրա «բարի լույս»-ին չի պատասխանում, նայում է քրտնաթոր ձիուն.

- Արա՜, այ անաստված, էդ ձիուն ինչի՞ ես էդքան չափ գցել: Որ քո սեփականը լինի, էդպես կանե՞ս: Չես անի: Հա՛, հիմա ասա տեսնենք, ինչ կա, որ եկել ես, Գաբրիել հրեշտակապետի պես կանգնել գլխիս: Վայ թե ուզում ես հոգիս առնել, հը՞...

Սարիբեկն ասում է, որ կեսօրից հետո պիտի հանգստանանք, որպեսզի երեկոյան գնանք շրջկենտրոն՝ հացամթերման: «Վերևից շտապեցնում են,- մատը տնկում է վեր:- Լիազոր Անաստասը տելեֆոնով քսան անգամ զանգ է տվել: Խաչոն, Մելիքը և Սանջանն էլ են գալիս: Կլինի չորս սայլ: Դե մնացածը դուք գիտեք, ես գնացի»:

Ցորենի ծանր խրձերը բարձում ենք սայլին, շարժվում եկած ճանապարհով: Խրձերը քսվում են ճամփեզրի թփուտներին, ձորում վշշում է գետակը, ինչ-որ տեղ ճիճին իր ձանձրալի երգն է ծոր տվել՝ ճի՜, ճի՜, ճի՜, ճի՜...

- Ընկեր Վաղիկ,- խոսում է Մինաս դային,- էսպես մեկ-մեկ նստում ու միտք եմ անում... Օրինակի համար, էդ շունշանորդի Հիտլերն ինչի՞ ծնվեց: Է՜, լավ թող դրա մերը շուն ցնկներ, կատու ցնկներ կամ էլ՝ ոչ մի բան չցնկներ, ինչի՞ Հիտլեր ցնկնեց: Տեսնում ես, չէ՞, հարամ հարամի տղան աշխարհը հարամեց: Ուրեմն էս ղալմաղալն ինչի՞ համար է: Հողի համար: Հողն ո՞ւմն է: Աշխատավորինը, այսինքն՝ մերը: Լավ, բա դուք ո՞վ եք, մեզ հետ ի՞նչ գործ ունեք: Հա՛, հասկացանք, թոփ ունեք, թվանք ունեք, բոմբ ունեք, տանկ ունեք, հայրոպլան ունեք: Ի՜նչ է, մեր թվանքի լուլայում մածո՞ւն է մերած, թե մեր թոփերի լուլաները փետի՞ց են սարքած: Բա մեր... Անունն էլ մտիցս գցել եմ... Հա, միտս ընկավ, մեր Համազի աղջկա անունից է:

- Մինաս դայի, Կատյուշա...

- Ապրես, Կատյուշ: Կատյուշը լավ աղջիկ է: Արսենս ֆրոնտից գա, Համազի Կատյուշ աղջկա հետ կպսակեմ: Բայց դե, ընկեր Վաղիկ, ինչ ուզում ես ասա, էս պատերազմը սխալ է:

Ճանապարհվում ենք ուշ երեկոյան: Առջևում մեր սայլն է, հետո գալիս են Մելիքի ու Սանջանի սայլերը: Վերջում Խաչոյի սայլն է: Ես հիմա չորս սայլապանի օգնական եմ: Փաթաթվում եմ Մինաս դայու կոշտ շինելի մեջ, պառկում ցորենի հակերի վրա: Մելիքը պատմում է հացամթերման կետի լիազոր Անաստասի մասին, որ ցորենից թաքուն օղի է թորում, թանկ գներով վաճառում: Ես չեմ հասկանում, թե ինչպես կարելի է ցորենից օղի թորել, այն ցորենից, որից միայն ճերմակ-ճերմակ հացեր են դուրս գալիս, և տատս ասում է. «Մեր զարդա ցորենի հացին աշխարհում հաց չի հասնի»:

- Անաստասի փողը կացին չի կտրում,- շարունակում է Մելիքը:- Բայց դե մեկ է, մի օր կբռնեն ու կխուզեն պոչը: Միայն թե շուտ խուզեն:

- Պատերազմից հետո էնքան պոչեր կխուզե՞ն,- դա էլ Սանջանն է:- Կարծում ես՝ մեր Սարիբեկի պոչը չե՞ն խուզի: Կխուզեն: Որ նախագահ Մացակը չլիներ, էդ շան որդին կոլխոզը մենակ կթալաներ: Մացակն է դրա կապը քաշում:

Կոպերս փակվում են և, կարծես երազում, լսում եմ Մինաս դայու ձայնը. «էդ նրանից է, որ պատերազմը սխալ է: Որ պատերազմը սխալ է, լիազոր Անաստասն էլ պատերազմի սխալն է: Սխալները սխալներից են գալիս»:

Հետո երազում տեսնում եմ լիազոր Անաստասին, և երազում լիազոր Անաստասին ասում եմ՝ դու սխալ ես: Նա բռնում է ականջս, քաշում և ցույց տալիս ատամները: Ես ուզում եմ բղավել, զգում եմ, որ դա երազ է, բերանս բաց ու խուփ եմ անում, բայց ձայն չկա:

- Վեր կաց, ընկեր Վաղիկ,- Մինաս դային թեքվում է վրաս, շոյում մազերս:- Վեր կաց, ջա՜նս, տեղ ենք հասել:

Ես եզներն արձակում եմ գետափին ու վերադառնում մթերման կետ: Բակում ուրիշ շատ սայլեր կան, որոնք եկել են տարբեր գյուղերից: Գալիս է լիազոր Անաստասը՝ լերկ գանգով, դուրս պրծած աչքերով, երկարահասակ մի մարդ: Ինձ թվում է, ինչ-որ տեղ տեսել եմ նրան: Որտե՞ղ եմ տեսել: Հիշում եմ՝ միջին դարերի պատմության դասագրքում: Նա նման է դուքս Ալբանին, միայն այն տարբերությամբ, որ դուքս Ալբանը բեղ ու միրուք ունի: Եթե լիազոր Անաստասն էլ բեղ ու միրուք ունենար, կլիներ իսկական դուքս Ալբան: Նա փայլփլուն սապոգներ է հագել, հաստ գոտին ամուր ծգել: Կանգնում է մեր սայլի կողքին, չրթացնում լուցկին, վառում երկարակոթ գլանակը և հարցնում.

- Ո՞ր գյուղից եք:

- Քարաշենից:

- Ի՞նչ եք բերել:

- Ձառնիշա՜ն,- ծաղրում է Մինաս դային:- Հարցնելն ամոթ չլինի, ընկեր Անազտազ, հացամթերման կետը ի՞նչ են բերում:

Մինաս դային դիտմամբ է ասում Անազտազ: Նրա սովորությունն է, ում չի սիրում, աղավաղում է անունը: Մեր կոլտնտեսության պահեստապետ Սեդրակին Տետրակ է անվանում, պատվերներով երազ տեսնող Ռեհանին՝ Հրեղան, բրիգադիր Սարիբեկին՝ Չալիբեկ, լեզվանի Ճաղկավարդին՝ Շախկաբաղ... Բայց դե Անաստասը շրջանային մասշտաբի ղեկավար է, և նա շրջանային ղեկավարի տոնով բարկանում է.

- Նախ ես Անազտազ չեմ, այլ՝ Անաստաս Մարկիչ, հետո էլ՝ դուք ինձ հետ կատակելու իրավունք չունեք:

Մինաս դային քթի տակ ժպտում է, այսինքն՝ լա՛վ, լա՛վ, քեզ զուր տեղից մի ծանրացրու, ընկեր Անազտազ, օխտը պորտդ գիտեմ: Դու շուշեցի

տեր Մարգարի տղան չե՞ս: Տեր Մարգարն այդ երբվանի՞ց է Մարկիչ դարձել, որ խաբար չենք: Չենք ասում, թե տեր Մարգարը փիս մարդ էր: Դե մարդ էր, էլի՜, ժամում ստից Ավետարան էր կարդում, պատարագ անում, ունեցողներից դեսից-դենից պոկում էր, չունեցողներից ի՞նչ պիտի պոկեր: Սովետը եկավ, տեր Մարգարը «Ավետարանը» փալաս-փլուսի մեջ փաթաթեց, թաքցրեց փայտոնչի Սավադի գոմում, բեղն ու միրուքը խուզեց, ֆարաջան փոխեց, մթամ՝ տեսե՛ք, տեսե՛ք, հրաժարվում եմ հավատից: Իր հավատից հրաժարվեց, բայց ուրիշ ոչ մի հավատ էլ չընդունեց: Ապրեց քրիստոնյա, մեռավ հեթանոս: Քարը՝ փորին:

Ցորենի ծանր հակերը տեղափոխում ենք կշռատուն: Լիազոր Անաստասը քաշում է կշեռքի լծակը, թղթի վրա գումարում, բազմապատկում, ջվալների կշիռը հանում և լերկ գլուխը քորում.

- Հարյուր հիսուն կիլո պակաս եք բերել:

- Հարյուր հիսո՞ւն,- Մինաս դային հոնքերն իրար է տալիս:- էդ ո՞նց թե հարյուր հիսուն կիլո պակաս ենք բերել, ընկեր Անազտազ Տեր-Մարգարովիչ: Սխալ է:

- Ի՞նչն է սխալ,- հոնքը կշեռքի լծակի հետ կշռում է Անաստասը: Հոնքը ծանր է:- Մի ասա տեսնեմ, էստեղ ինչ սխալ կա:

- Դու ես սխալ, քո կշեռքն ու կշռաքարերն են սխալ, քո հաշիվ-հաշվառքն է սխալ: Չենք հանձնում,- ծոցագրպանից հանում է թուղթ ու մատիտ, ինձ քաշում մի կողմ:- Ուրեմս, ընկեր Վաղիկ, էս մինուտին մի դիմում ես գրում, որ քարի վրա ածես, քարը ցրիվ գա: Գրիր՝ դիմում քարաշենցի Մինաս Մկրտչյանից: Առ այն մասին, որ լիազոր Անազտազը...

- Անաստասը,- ուղղում եմ:

- Չէ, Անազտազ գրիր: Ուրեմն Անազտազը շուն է, շունշանորդի է, ավազակ է, աղվես է... սպասիր տեսնեմ էլ ինչ է:

- Մինաս դայի, ախր այդպիսի դիմում չի լինում:

- Քո գործը չի, ինչ ասում եմ՝ դու գրիր: Հա, ուրեմն, շունը գրեցի՞ր: Աշխարհում էլ ի՞նչ փիս գազաններ կան:

- Գայլ, չախկալ, դոդոշ, օձ, խոզ,- հուշում է Խաչոն:

- Շնածուկ, մլակ, ոջիլ, Հիտլեր, փալանգ, Գեբելս,- ավելացնում է Սարիբեկը:

- Հա, դրանք էլ գրիր,- կարգադրում է Մինաս դային:- Գրիր նաև առ այն մասին, որ Անազտազը գող է, ժուլիկ, ես դրա...

- Մինաս դայի, ախր հայհոյում ես:

- Բա դիմումը ո՞նց կլինի: Դու գրիր, մնացածն իմ գործն է:

Նա թուղթը վերցնում, խնամքով ծալում, դնում է գրպանում ու բռնում թևս.

- Ուրեմս՝ գնում ենք ռայկոմ:

Քայլում ենք փոշոտ ճանապարհով, նա քայլը ետ է գցում.

- Ընկեր Վաղիկ, էն բաներն էլ ե՞ս գրել:

- Ո՞ր բաներ:

- Շունը, աղվեսը, խլեզը, Հիտլերը, գելը, կատուն...

- Չեմ գրել: Դիմումի մեջ էդպիսի բաներ չեն գրում:

- Բայց պիտի գրեիր: Պիտի գրեիր, որ պատերազմը սխալ է, Անազտազը սխալ է, սխալ է, որ քեզ նման երեխան գիշերներն անքուն է մնում: Որ սխալ է, ուրեմն սխալ է:

Շրջկոմի քարտուղարը՝ զինվորական բլուզով, թևը վիրակապի մեջ, բարի դեմքով մի մարդ, մեզ շատ քաղաքավարի ընդունում, աթոռ է առաջարկում, կարդում դիմումը, ապա լսում Մինաս դայուն և ասում.

- Պարզ է, ընկեր Մկրտչյան: Դուք գնացեք, ես հիմա մարդ կուղարկեմ:

Ուղարկված մարդը ստուգում է կշեռքն ու կշռաքարերը, ինքն իր ձեռքով կշռում հակերը ու մատը թափահարում Անաստասի վրա.

- Խաբում ես, հա՞, մարդկանց հիմա էլ խաբո՞ւմ ես: Շատ լավ, մենք քեզ հետ կխոսենք դատարանում,- ու դառնում է Մինաս դայուն:- Իսկ դուք, հայրիկ, շատ լավ եք արել, որ բողոքել եք: Շնորհակալություն,- սեղմում է ձեռքը և շոյող հայացքով նայում ինձ:- Դիմումի համար քեզ էլ շնորհակալություն, սիրուն տղա:

Հունձն ավարտվել է, բայց կամերը դեռ պտտվում են կալերում: Վաղը դասերը սկսվում են: Ես ուրախ եմ, որ դասերը սկսվում են, տխուր եմ, որ Մինաս դայուց պիտի բաժանվեմ: Հրաժեշտին նրա աչքերում արցունքներ եմ տեսնում. նա շրջում է դեմքը, ուզում է թաքցնել արցունքները, բայց հանկարծ ցնցվում են ուսերը, և նա երեխայի պես լալիս է: Ես նետվում եմ նրա գիրկը, նա ինձ սեղմում է կրծքին, շոյում մազերս... ձեռքից մի թուղթ է ընկնում: Բարձրացնում եմ գետնից, կարդում: Չէ, մի թուղթ չէ, մի կյանք է: Արսենի «Սև թուղթն» է:

- Վաղիկ,- նա առասպելական Հերկուլեսի պես բարձրացնում է զույգ թևերը:- Վաղիկ, պատերազմը սխալ է: Արսենին սպանելը սխալ է: Կատյուշի սիրտը կոտրելը սխալ է:

Սայլի անիվները թխկթխկալով գլորվում են փոշոտ ճանապարհով, կալերում կամերն իրենց ծույլ-ծույլ պտույտներն են շարունակում, ձորի բանջարանոցներում Նահապետը ռեհանի ածուներն է ջրում, աղբյուրի մոտ մի աղջիկ տխուր երգո՞ւմ, թե՞ լալիս է. «Կերչի ճակատում, մայրիկ ջան, վիրավորվեցի, վիրավորված ժամանակս ծովը նետվեցի...»: Հնչում է դպրոցի զանգը, երեխաները աղմուկով դասարաններն են վազում... Իսկ պատերազմը սխալ է:

Պատերազմը սխալ է:

ԵՍ ՆՐԱ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ

Պատերազմից առաջ մեր գյուղում մի բանաստեղծ կար, և հիմա չկա այդ բանաստեղծը: Ոչ ոք չգիտեր, որ նա բանաստեղծ է: Նա պարզապես լավ տղա էր և սիրում էր Լանջվարդին: Լանջվարդը մեր հարևանի աղջիկն է: Վաղարշակի բանաստեղծությունները ես էի հանձնում նրան:

- Դու լավ, շատ լավ տղա ես,- ասում էր ինձ Լանջվարդը:- Դու կարողանում ես գաղտնիք պահել:

Ես որպեսզի հաստատեմ, որ լավ տղա եմ, վազեցի Վաղարշակի մոտ ու ասացի.

- Բա՛րև, Վաղարշակ:

- Բա՛րև, Վաղիկ,- նա շոյեց մազերս, այտս կսմթեց թեթև ու հարցրեց.- Դու բանաստեղծություններ սիրո՞ւմ ես:

- Բա ո՞նց, սիրում եմ:

- Ի՞նչ գիտես:

- «Շունն ու կատուն»:

- Ուրի՞շ...

- «Գայլն ու գառը»:

- Չէ, ընկեր Վաղիկ, ես ուրիշ տեսակ բանաստեղծություններ եմ ասում,- ու նորից խառնեց մազերս, ծիծաղեց, լրջացավ:- Գիտե՞ս, Վաղիկ, ես բանաստեղծ եմ: Բայց ուրիշ տեղ այդ մասին խոսք չասես:

- Իսկ ինչո՞ւ մեր դասագրքում քո գրածները չկան: Կա Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Խնկո-Ապեր, բայց Վաղարշակ Մկրտչյան չկա:

- Դա ի՞նչ կարևոր է: Լանջվարդը լավ աղջիկ է, չէ՞:

- Լավ աղջիկ է:

Նա գրպանից հանեց մի թուղթ:

- Կտաս իրեն: Ծածուկ: Թող ոչ ոք չիմանա:

- Ես կարո՞ղ եմ կարդալ:

- Դու... դեռ փոքր ես:

Վազեցի տուն, թուղթը հանեցի գրպանիցս ու կարդացի: Ճիշտ է, այդ չափածո տողերից քիչ բան հասկացա, բայց տող առ տող արտագրեցի:

Ինչպես միշտ, այդ օրն ընկեր Լիզան դասարան մտավ բարձր տրամադրությամբ, բարևեց ու հարցրեց.

- Ապա, երեխաներ, ո՞րն է այսօրվա մեր դասը:

- «Սար գնալը»- ձայնակցեց դասարանը:

Ընկեր Լիզան նայեց դասամատյանին ու տվեց անունս:

Ես էլ չիմացա, թե ինչպես կանգնեցի գրատախտակի մոտ ու սկսեցի.

Ծովից խորն է ու անհուն է կարոտս,
Դու պայծառ, պայծառ իմ առավոտս,
Դու արտի միջին բացված նարոտս,

Իմ ճանապարհի հորոտ-մորոտս,
Դու անգին քարս,
Արևագալս,
Ո՞ւր ես շտապում, ինձ էլ տար, լավս:
Ընկեր Լիզան այնպես նայեց ինձ, կարծես առաջին անգամն էր տեսնում: Վերջին շարքի տղաներից մեկը գոչեց.
- Ընկեր Լիզա, դա մեր դասը չի, խաբում է:
Ընկեր Լիզան մտերմաբար ձեռքը դրեց ուսիս ու հարցրեց.
- Ո՞րտեղից ես սովորել այդ ոտանավորը:
- Գրքից, ընկեր Լիզա:
- Ո՞վ է հեղինակը:
- Չգիտեմ, ընկեր Լիզա:
- Վաղը կիմանաս և կասես:
- Չեմ ասի, ընկեր Լիզա, ազնիվ պիոներական, չեմ ասի:
- Ինչո՞ւ:
- Ախր, գաղտնիք է:
Իսկ մեր գյուղում ոչ ոք չգիտեր, որ Վաղարշակը բանաստեղծ է: Ոչ ոք չէր ասում՝ Վաղարշակ, դու բանաստեղծ ես: Նա պարզապես լավ տղա էր: Նախագահն ասում էր՝ սայլը լծիր՝ լծում էր: Ասում էր՝ եզները լղարել են, սար պիտի տանես՝ տանում էր: Հետո նախագահն ասում էր՝ քեզ կուղարկենք մեղվաբույծի դասընթացներում սովորելու, Վաղարշակն ուսերը շարժում էր՝ ընկեր Մացակ, դուք գիտեք:
Վաղարշակը սարից վերադարձավ մի մեծ ծաղկեփնջով, ձեռքով արեց ինձ.
- Բա՛րև, Վաղիկ:
- Բա՛րև, Վաղարշակ:
- Ի՞նչ բանաստեղծներ գիտես:
- Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան, Խնկո-Ապեր: Քո անունը մեր դասագրքում չկա:
- Ի՞նչ ես կարծում, ես կարո՞ղ եմ բանաստեղծ դառնալ:
- Չգիտեմ:
- Ինչո՞ւ չգիտես:
- Որովհետև քո անունը մեր դասագրքում չկա:
Նա ծաղկեփունջը մեկնեց ինձ.
- Կտաս Լանջվարդին: Կասես Վաղարշակը բարևում է...
Բայց ծաղկեփունջը ընկած մնաց մեր պատշգամբում:
Վաղարշակը մի վերջին անգամ նայեց իրենց բակում խաղացող ընկուզենուն, մի վերջին անգամ ժպտաց Լանջվարդին, մի վերջին անգամ շոյեց մազերս ու ասաց.
- Մեր գյուղում միայն դու գիտես, որ ես բանաստեղծ եմ: Հարկավոր չէ, ուրիշներին չասես: Ո՞ւմ է պետք...

Պատերազմից առաջ մեր գյուղում մի բանաստեղծ կար, և հիմա չկա այդ բանաստեղծը: Ոչ ոք չգիտեր, որ նա բանաստեղծ է, ոչ ոք նրան չէր ասում՝ դու բանաստեղծ ես: Նա պարզապես լավ տղա էր:

...Երեկ փողոցում հանդիպեցի ընկեր Լիզային: Նա ուրախացավ:

- Ես այն ժամանակ էլ գիտեի,- ասաց,- որ գրող պիտի դառնաս: Եվ գաղտնապահ էիր, չասացիր, թե այն ում ոտանավորն է: Հիշո՞ւմ ես:

- Հիշում եմ, ընկեր Լիզա, շատ լավ եմ հիշում: Ես այն ժամանակ երեխա էի, կարողանում էի գաղտնիք պահել, իսկ հիմա չեմ կարող:

Պատերազմից առաջ մեր գյուղում մի բանաստեղծ կար. գնաց, որ պատերազմում պատերազմը սպանի, խաղաղություն բերի աշխարհին, բայց չվերադարձավ: Ես նրա շարունակությունն եմ:

1978 թ.

ՀԱՐՍԱՆԻՔ

Օ՜, հարսանիքներ պատերազմական,
Սիրո գորգ՝ փռած հորի բերանին...
Եվ. Եվտուշենկո

Աշնան մթնած երկինքը մանր անձրև է մաղում:

Ինձ կանգնեցրին փեսայի կողքին, վառվող մոմը դրին ձեռքիս, ասացին՝ քեզ լուրջ պահիր, քավոր ես: Իսկ ես իսկապես լուրջ էի. հովհարավոր գլխարկը իջել-ծածկել էր դեմքիս վերին մասը, նախշուն գուլպաները վեր էի քաշել մինչև ծնկներս, հագել ռազմաճակատում զոհված քեռուս ոտնամանները, որոնք ոտքերիս այնքան մեծ էին, որ քթերը փալասներ էի խոթել: Կպչուն ցեխի մեջ ինձ համար դժվար էր քայլել. ձգում, մի կերպ քաշում էի ոտնամաններս և ոչ թե քայլում, այլ սողում էի: Բայց դե հանաք բան չէ, ես քավոր եմ: Փեսան՝ երկարահասակ, հաղթանդամ տղա էր, ես հազիվ էի հասնում նրա գոտկատեղին: Նա նայեց ինձ, հոնքերը վեր քաշեց զարմացած, երևի ուզում էր ասել. «Ա՛յ խոխա, այստեղ քո տեղը չի, ինչի՞ ես ոտնատակ ընկնում», բայց նկատելով ձեռքիս վառվող մոմը, աչքով արեց խաչեղբորն ու ծիծաղեց. «Վա՜յ, ցավդ տանեմ, քավոր ջան, բա ինչի՞ ձեն չես հանում»:

Զուռնան ծկլթաց: Զուռնաչին ու դամբաշը կարծես մրցման մեջ էին մտել՝ տեսնեն ով կարող է ավելի շատ ուռցնել թշերը և չռել աչքերը: Դհոլչին այնպես էր կոտրատվում, ուսերն այնպես էր եղանակի տակտի հետ շարժում, որ եթե ես քավոր չլինեի, մի կուշտ կծիծաղեի: Երևի դամբաշը

կամ շատ բարձր էր վերցրել, կամ շատ ցածր. ավագ զուռնաչին բարկացած շրջվեց նրա կողմը, զուռնան հանեց բերանից ու ասաց. «Մի մատ բարձր վերցրու, չե՞ս տեսնում, որ չի բռնում»:

Հարսնահանդեսը ձգվեց փողոցով, և փեսան տեսնելով, որ ես ոտքերս հազիվ եմ քարշ տալիս խմորի պես հունցված ցեխի մեջ, ինձ պոկեց գետնից, առավ թևի տակ ու նորից ծիծաղեց. «Վա՜յ, քավոր ջան, բա ինչի՞ ժամանակին չես ասել, որ քեզ համար ֆրոնտից հատուկ ավտոմեքենա բերեմ»: Ես կատվի ձագի պես կախվել էի նրա թևատակից, վառվող մոմը ամուր բռնել, իսկ ականջիս տակ զուռնան ծկլթում էր:

Մենք բարձրացանք քարե աստիճաններով. մի տարեց կին, երևի հարսի մայրը, համբուրեց փեսային ու խաչեղբորը, նրանց ձեռքից վերցրեց մոմերը, հանգցրեց, ինձ չնկատեց: Խաչեղբայրը, որ երևի մինչ այդ մի երկու բաժակ տնկել էր, բարձր ծիծաղեց ու քաշեց գլխարկս.

- Վա՜յ, քավոր ջան, քեզ էլ մարդատեղ չդրեցին, բա դա արդարությո՞ւն է:

Ինձ նստեցրին հարսի կողքին, և ես թափանցիկ շղարշի տակ տեսա կավճի պես ճերմակ նրա դեմքն ու ճանաչեցի՝ Մանուշն էր, Մանուկ քեռուս սիրած աղջիկը: Ուզում էի ինչ-որ բանով գրավել նրա ուշադրությունը, զգուշորեն քաշեցի թևն ու հարցրի. «Մանուշ, դու ինձ ճանաչո՞ւմ ես, Մանուկն իմ քեռին է»: Նա բռնեց ձեռքս, շշնջաց կամաց. «Հարկավոր չի, Վաղիկ, հարկավոր չի»:

- Դե, ուրեմն՝ դու Մանուկին չես սիրում,- ասացի և հետո հասկացա, որ սխալ եմ թույլ տվել. ապրողներն ինչպե՞ս կարող են սիրել մեռածներին:

- Մանուկին ես սիրում եմ,- նա թեքվեց, շշնջաց ականջիս:- Մանուկին ես չեմ մոռանա: Ի՞նչ անեմ, այսպես ստացվեց:

- Իսկ դու դրան սիրո՞ւմ ես,- դեմքով ցույց տվեցի փեսային:- Ստից հիվանդացել է, փախել ֆրոնտից:

- Լռի՛ր, պետք չի, Վաղիկ, պետք չի,- նա ուղղակի թախանձում էր, և աչքերը լցվել էին արցունքներով, ձայնը դողում էր.- Դու երեխա ես, ոչինչ չես հասկանում:

Հարսանիքը գրեթե ինձ չէր հետաքրքրում, ես ուզում էի նրա՝ Մանուշի հետ զրուցել: Փեսան նկատեց այդ, թեքվեց մեր կողմը, ոլորեց բեղն ու կատակով մատը թափ տվեց վրաս.

- Տե՛ս, հա՜, քավոր ջան, հարսին գլխից չտանես, թե չէ՝ ես քեզանից խիստ կնեղանամ:

Խաչեղբայրը կարծես դրան էր սպասում, հիմա էլ ինքը սկսեց.

- Քավոր ախպեր, քանի որ հարսանիք է, արի քեզ էլ պսակենք, որ հետագայում մեծ ծախսերի տակ չընկնես:- Ես նրան չպատասխանեցի, բայց նա ձեռք չէր քաշում ինձնից, սկսեց խաղալ հոգուս հետ.- Քավոր ջան, էդ նախշուն գուլպաները ո՞րտեղից ես գտել, չե՞ս տա՝ հագնեմ նկարվեմ, էլի քեզ կտամ: Մի օրով, ավել չեմ ուզում:

Իսկ հարսանիքը շարունակվում էր, թամադան կենացներ էր առաջարկում, ամեն կենացի վրա զուռնան ծկլթում էր, զրնգում էին բաժակները, ջահել մատուցողուհիները հոլի պես պտտվում էին սեղանների շուրջը: Ես հանկարծ նկատեցի, որ դամքաշի աջ ձեռքի երեք մատը չկա, նվագում էր երկու մատով:

- Լեզգինկա՜,- գոռաց Հաբունց Մարտունը. նա, որ չորս ամիս առաջ վերադարձել էր ռազմաճակատից՝ մի ոտքով:- Ես լեզգինկա պիտի պարեմ: Սազանդա՜ր, լեզգինկա՛,- նա հարբած էր, զայրույթից դողում էր, և սազանդարը լեզգինկա նվագեց, Մարտունը մի ոտքով սկսեց պարել: Նա իր կտրած ոտքի վրե՞ժն էր լուծում պատերազմից, թե զարմացնել էր ուզում հարսանքավորներին:

Երկու հոգի բռնեցին նրա թևերը, և Մարտունը սկսեց հայհոյել.

- Լիրբը ինձ չհավանեց, ուրիշի հետ պսակվեց,- նա գրպանից հանեց մի լուսանկար,- տեսե՜ք, ժողովու՜րդ, իր ձեռքովն է գրել՝ հավերժ հիշատակ իմ անմման Մարտունին: Մինչև կյանքիս վերջը քեզ պիտի սպասեմ: Քո Ռոզա: Բա ինչի՞ չսպասեց...

Մարտունին դուրս տարան, փեսան գլուխն օրորեց. «Դրան ո՞վ է հրավիրել. պա՛հ, զարմացնում է, մի ոտքով է պարում: Մաքուր ցիրկ»:

- Քավորի կենացը,- ականջիս հասավ թամադայի ձայնը:- Ո՞րտեղ ես, քավոր, կանգնիր տեսնենք:

Ես չգիտեի՝ նման դեպքերում ինչ են անում. կանգնեցի, ճիշտ կլինի ասել, ցած իջա աթոռից և գլուխս հազիվ էր հասնում սեղանին: Պայթեց ծիծաղը, ինչ-որ մեկն ասաց. «Բարձրացրեք էդ իգիթին, որ սֆաթը լավ տեսնենք»: Խաչեղբորն էլ երևի դա էր հարկավոր, բռնեց գոտկատեղիցս, բարձրացրեց ու գոռաց.

- Ժողովու՜րդ, էքստրա, քավորն ուզում է խոսել:

Իսկ ես այնպե՜ս էի ուզում, որ այդ անիծված հարսանիքը շուտ վերջանար... Բայց դա դեռ սկիզբն էր:

Երբ զուռնան նորից ծկլթաց, մի լղար մարդ բաղաձայն ծոր տվեց. «Վայ ամա, ադե ջան, տանու՜մ են, հորից-մորից հանու՜մ են...»: Դրսում արդեն բավականին մութ էր, և առաջվա պես մանր անձրև էր մաղում: Ես կախվել էի հարսի թևից, ոտքերս հազիվ էի քարշ տալիս ցեխակոլոլ փողոցով: Վառված մոմը ծլծլում էր, թափվում շալվարիս փողքերի և գուլպաներիս վրա, ոտնամաններս կորել էին ցեխի մեջ, գլխարկն անգթորեն իջնում ու ծածկում էր դեմքս: Քաղաքից եկած մի փարթամ կին, կարծեմ փեսայի հորաքույրը, շարունակ փնթփնթում էր: Նրան ոչ մի բան դուր չէր գալիս.

- Բա սա եղավ հարսանի՞ք... Օրենքով աղջկա ծնողներն ինձ նվեր պիտի տային, չտվեցին: Հապա քավորին նայեցե՜ք, գլխարկի տակին չի երևում: Սա ի՞նչ էթիկա է, երեխային ոտատակ են գցել, թե քավոր ես: Ախր, սրանից ի՞նչ քավոր:

Ես կյանքում առաջին անգամ էի մասնակցում հարսանիքի, և ինձ համար անհասկանալի էր, թե ինչո՞ւ անպայման քավորը ես պիտի լինեմ և ոչ թե մի ուրիշը: Անհասկանալի էր նաև հարսի ոտքերի տակ ափսե դնելը: Հարսնեղբայրը օժիտի համար հարյուր ռուբլի պահանջեց, և երբ փեսայի հայրն ասաց. «Հիսուն ռուբլին հերիք է», հարսնեղբայրը բողոքեց. «Մենք ձեզ մաքուր ոսկի ենք տալիս, իսկ դուք ձեր ժանգոտած պղինձը խնայում եք»:

Հարսանիքը շարունակվեց համարյա նույն ծրագրով, ինչպես հարսենց տանը: Թամադան առաջարկեց խմել երկու ծաղիկների կենացը, դիոլչին այդ կենացը ծաղկեցրեց ձանձրալի ինչ-որ երգով, հետո հերթը նորից հասավ քավորին, նորից խաչեղբայրն ինձ բարձրացրեց գետնից ու բղավեց. «Ժողովո՞ւրդ, էքստրա, քավորը...»: Ո՛չ, չասաց քավորն ուզում է խոսել, այլ ուղղակի, անամոթաբար՝ «քավորի չիշիկը գալիս է»: Այդ զավզակը գինին թափել էր տաբատիս: Ամոթից դեմքս վառվում էր, և ես չիմացա ինչպես ճանկեցի գինու բաժակը, պարունակությունը թափով նետեցի նրա դեմքին ու ճչացի.

- Ես չեմ ուզում քավոր լինել, ինձ հարկավոր չէ ձեր հարսանիքը... Դուք վատ մարդիկ եք... Մանուշն իմ Մանուկ քեռու սիրած աղջիկն է...

Ես խելակորույս դուրս նետվեցի հարսանքատնից, մի կին չարացած շպրտեց. «Դրան նայեցե՛ք, մի թիզ չկա, բայց հարսանիք է խանգարում. ախր, ինչո՞ւ են դրան այդքան խմեցրել»:

Չգիտեի շուրջս ինչ էր կատարվում, դրսում մութ էր, ականջիս ձայն հասավ.

- Վաղիկ, ցավդ տանեմ, կանգնիր, բան եմ ասում:

Մանուշն էր, մոտեցավ, բռնեց թևս, թաշկինակով մաքրեց արցունքներս, ասաց թախանձանքով.

- Գնանք, ցավդ տանեմ, գնանք:

- Չեմ ուզում,- գոչեցի,- չեմ ուզում:

- Ամո՛թ է, ցավդ տանեմ... ես ի՞նչ մեղավոր եմ, ես ի՞նչ մեղք ունեմ...

Նա ինձ ներս տարավ՝ ի ցույց ամենքի, ու դարձավ հարսանքավորներին.

- Ախր, ինչի՞ համար, այս անմեղ երեխան ձեզ ի՞նչ է արել...

Ես լալիս էի, արցունքներս հոսում էին անվերջ: Խաչեղբայրն ու փեսան կախել էին գլուխները, կտրվել էր զուռնայի ծկլթոցը, թամադան ինձ համար սփոփանքի խոսքեր էր որոնում և կարծես գտավ.

- Բան չկա, տղա ջան, կատակ էր, էլի, կմեծանաս՝ կմոռանաս:

Բաներ կան, որ ամբողջ կյանքում հնարավոր չէ մոռանալ:

Վիրավորված անմեղությունը սուր հիշողություն ունի:

1978 թ.

ՄԵՆՔ ԱՐԴԵՆ ԵՐԵԽԱՆԵՐ ՉԷԻՆՔ

42-ի հունվարին էր: Ձյան փաթիլները քամին ծեփում էր պատուհանների ապակիներին: Վառարանն այնքան չէր տաքացնում դասասենյակը, որքան ծուխ էր անում ու ցավեցնում մեր աչքերը: Թաց փայտը թսթսում, ճլճլում և վառարանի գոգին դեղին խեժ էր կաթկթում: Ցխատար խողովակները հալից ընկել էին, այնպես որ, հնարավոր չէր նորոգել:

Ադամյան Վաչագանը մեծ-մեծ ականջներով, երկարավուն ու պեպենոտ դեմքով մի տղա, որ նստում էր վերջին նստարանին, տրորեց ծխոտված աչքերը, ձեռք բարձրացրեց ու հարց տվեց.

- Ընկեր էմմա, ֆաշիստներն ուժեղ են:

Ադամյան Վաչագանը շատ հիմար սովորություն ուներ՝ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի մեջ կետադրության նշաններ չէր օգտագործում: Նա այս անգամ էլ կուլ տվեց հարցական նշանը, բայց դրա փոխարեն ծռեց հոնքը: Ընկեր էմման կամ չնկատեց, կամ էլ չնկատելուն տվեց նրա ծռած հոնքը, թանաքամանը ծանր ու թեթև արեց ձեռքում ու չարացավ.

- Հիմարի մեկը, ի՞նչ ես դուրս տալիս:

Վաչագանը հարցը նորից կրկնեց, և թանաքամանը, որի ճերմակ կողին նապաստակ էր նկարած, ընկեր էմմայի ձեռքից թռավ ու դիպավ Վաչագանի գլխին: Դասարանը սկսվեց, և ընկեր էմման հասկացավ, որ դա նրա տված հարցի պատասխանը չէր, շփոթվեց ու, իր արարքն արդարացնելու նպատակով, ասաց.

- Հիմարի մեկը, ֆաշիստներն ինչպե՞ս կարող են ուժեղ լինել: Ֆաշիստները թալանչիներ են, ավազակներ են, մարդասպաններ են, գողեր են:

Վաչագանը ձեռքը տարավ դեպի գլուխը՝ մատներն արյունոտվեցին: Նա զարմացած նայեց արյունոտված մատներին, նայեց ընկեր էմմային ու այնպես ոռնաց, որ ընկեր էմմայի ձեռքի գրիչն ընկավ, տնկվեց հատակին ու ժամացույցի ճոճանակի պես սկսեց ճոճվել:

- էդ ի՞նչ իրավունքով ես թանաքամանը նետում վրաս,- գոչեց նա:- Հայրս այնտեղ արյուն է թափում, իսկ դու այստեղ...

Ընկեր էմման մի տարի առաջ էր ավարտել միջնակարգը, պիտի ընդունվեր ինստիտուտ, բայց պատերազմը խանգարեց: Եվ որովհետև դպրոցում ուսուցիչները չէին հերիքում, միջնակարգը գերազանց գնահատականներով ավարտածները փոխարինում էին իրենց նախկին ուսուցիչներին:

- Ես քեզ դատի կտամ,- Վաչագանը դատի տալու հաստատ վճռականությամբ հավաքեց դասագրքերը, տեղավորեց թևի տակ:- Սրան նայեցե՛ք, օրը ցերեկով աշակերտներին ծեծում է: Այդպիսի օրենք չկա:

- Վաչագա՛ն, տեղդ նստիր,- ընկեր էմման ավելի շուտ խնդրում էր, քան կարգադրում:- Նստիր, բան եմ ասում:

- Վախենում ես, հա՞,- Վաչագանը հարցականի փոխարեն նորից ծռեց հոնքը, և ստացվեց այնպես, որ ընկեր էմման վախենում է:- Միևնույն է, ես քեզ դատի կտամ:

- Ի՞նչ ես ճվճվում,- ընկեր էմման մոտեցավ, ձեռքը դրեց նրա ուսին: Գարանյան, ուսուցչանոցում յոդ ու բամբակ կա, գնա բեր:

Հմայակ Գարանյանը՝ մեր դասարանի ամենախելոք ու աչքաբաց տղան, դուրս վազեց: Ընկեր էմման հարցրեց.

- Վաչագա՛ն, իսկ քեզ ո՞վ է ասել, որ ֆաշիստներն ուժեղ են:

- Ընկեր էմմա, խնդրում եմ ինձ հետ քաղցր չխոսես,- Վաչագանը գրքերը դրեց նստարանին:- Իսկ թերթերն ի՞նչ են գրում:

- Ի՞նչ են գրում, Վաչագան:

- Մինչև ատամները զինված ֆաշիստական հորդաները...

- Այո, մինչև ատամները զինված, բայց այդ չի նշանակում, որ ֆաշիստներն ուժեղ են: Ոտի տակ են:

Գարանյանը յոդ ու բամբակ բերեց: Ընկեր էմման բամբակը թաթախեց յոդի սրվակից, քսեց վերքին:

- Ցավո՞ւմ է, Վաչագան:

- Դա քո գործը չի, ընկեր էմմա: Ես քեզ դատի կտամ:

- Լավ, ասենք թե դատի տվեցիր, հետո՞,- ընկեր էմման յոդի սրվակը դրեց գրասեղանին, յոդոտ բամբակը նետեց վառարանի մեջ:

Վաչագանը մտածեց ու հարցրեց.

- Եթե ֆաշիստներն ուժեղ չեն, այդ ինչպե՞ս են հասել Արմավիր: Հրե՜ն Արմավիրը,- նա մատը մեկնեց անորոշ ուղղությամբ:

- Մերոնք նրանց կքշեն Արմավիրից:

- Ես էլ գիտեմ, որ կքշեն, թերթում գրել են:

- Վաչագան, դու թե՞րթ ես կարդում:

- Ի՞նչ է, ընկեր էմմա, մենք մա՞րդ չենք:

Վառարանի ծակծկված խողովակներից առաջվա պես ծուխ է մաղվում դասարանի վրա: Սեդրակ Աղասարյանը թվաբանության տետրակում պոզավոր ու պոչավոր ֆաշիստ է նկարել, կարմիր սվինը խրել կողն ու գրել. «Ընկեր Բուդյոնին հանեց շաշկան, Հիտլերն ընկավ թեյի չաշկան»: Վերոնյան Գոհարը նայեց նկարին ու փռթկացրեց:

- Աղասարյան, այդ ի՞նչ բանի ես,- ընկեր էմման վերցրեց նրա տետրակն ու շարժեց գլուխը.- Պատմության ժամերին նկարչությամբ չեն զբաղվում: Վաչագա՛ն, արի դասդ պատմիր:

Վաչագանը կանգնեց գրատախտակի մոտ, դեմքի շարժումով հասկացրեց, որ հուշենք: Սեդրակ Աղասարյանը հուշեց, Վաչագանը բարեխղճորեն կրկնեց.

- Պատրիկներ ու պլեբեյներ: Պատրիկները հարուստներ են, պլեբեյները՝ աղքատներ: Պատրիկները ճնշում են պլեբեյներին: Պատրիկները ֆաշիստներ են:

- Ի՞նչ ես դուրս տալիս,- ուսերը շարժեց ընկեր էմման:- Մեր թվարկությունից առաջ ֆաշիստներ չեն եղել:

- Բա Ներոնը ֆաշիստ չի՞: Թե ֆաշիստ չի, Հռոմն ինչո՞ւ վառեց: Ներոնն ու Հիտլերը մի շուն են:

Ընկեր էմման փոխարինում էր մեր պատմության ջահել ուսուցիչ Արարատ Առաքելյանին: Ընկեր Առաքելյանը հիմա մարտկոցի հրամանատար է, լուսանկարն ուղարկել է իր նախկին աշակերտուհուն՝ ընկեր էմմային: Իսկ թե ինչու ընկեր էմմային է ուղարկել և ոչ թե թվաբանության ուսուցչուհի Փունջ Արամյանին կամ ընկեր Գեղանուշին, դա մեզ չի վերաբերում:

Ադամյան Վաչագանը, իհարկե, դատի չտվեց ընկեր էմմային, բայց առաջվա պես պատմությունից հազիվ երեքներ էր ստանում, Իսպանիան շփոթում Իտալիայի հետ, առասպելական Գիլգամեշին անվանում Գայլգոմեշ, Թութմոս Երրորդին՝ Թաթոս Երրորդ...

42-ի ապրիլին ընկեր էմման դասարան մտավ կարմրած աչքերով: Դասարաններում վառարաններն այլևս ծուխ չէին անում, որովհետև վառելափայտը վաղուց էր վերջացել, և եղանակներն էլ բավականին տաքացել էին:

- Երեխանե՛ր,- ընկեր էմման դասամատյանը դրեց գրասեղանին:- Վաղվանից ինձ կփոխարինի ուրիշ ուսուցչուհի: Ես մեկնում եմ ռազմաճակատ: Այնտեղ բուժքույրեր են հարկավոր:

Ադամյան Վաչագանը տեղից վեր թռավ.

- Իսկ մենք այդ ուսուցչուհու դասը կխանգարենք: Դուք մեր դպրոցից ոչ մի տեղ էլ չեք գնա:

- Ես ձեզ նամակ կգրեմ,- ընկեր էմման հենվեց աթոռի թիկնակին:- Միշտ նամակ կգրեմ: Իսկ դուք լավ կսովորեք և խելոք կմնաք:

Նոր ուսուցչուհին ընկեր Նուբարն էր: Նա դասարան մտավ շփոթված, վարանոտ հայացքով նայեց մեզ ու չգիտեր ինչից սկսել: Վաչագանը դիտմամբ թխկթխկացրեց նստարանը, «միա՜ու» արեց, Աղասարյանը չորս անգամ «փռշտաց», Նինել Մակարյանը պլշեց աչքերն ու այծի պես մկկաց, քչախոս Սերոբը «ծուղրուղու» ծղրտաց ու հավի նման կչկչաց:

Ընկեր Նուբարը երեխայի պես պռոշ արեց ու ասաց.

- Երեխանե՛ր, ախր ես ի՞նչ մեղավոր եմ:

- Գնա դիրեկտորին բողոքիր,- գոչեց Վաչագանը:- Գնա, ի՞նչ ես կանգնել: Մենք ոչ մեկից չենք վախենում:

Ընկեր Նուբարը չբարկացավ, չգնաց դիրեկտորին բողոքելու, խնդրեց.

- Երեխաներ, լավ, էլի, խելոք մնացեք: Ախր ես ձեզ ոչ մի վատ բան չեմ արել:

- Վախենում է,- ծափ տվեց Վաչագանը:- էդ լավ է, թող վախենա: Բա ափսոս չէ՞ր ընկեր էմման:

Ընկեր Նուբարը հարևան գյուղից էր եկել, նույնպես ժամանակավոր ուսուցչուհի էր, ինչպես ընկեր էմման: Մենք որոնում էինք նրա դասը խանգարելու տարբերակներ: Մի անգամ Վաչագանն անտառից մի կանաչ մողես բերեց, բաց թողեց դասարանում: Բայց զարմանք բան, ընկեր Նուբարը վերցրեց մողեսը և ասաց.

- Երեխաներ, մողեսը կապ չունի պատմության հետ: Ես սրան կհանձնեմ կենսանաբանության ուսուցչուհուն:

Վաչագանի մողեսը հրաշք չգործեց:

- Հաջորդ ժամին լորտու կբերեմ,- հայտարարեց Վաչագանը:

- Դու արդեն համը հանում ես,- Աղասարյան Սեդրակը սպառնալից նայեց նրան:- Եթե ճիշտն ես ուզում իմանալ, ընկեր Նուբարն ընկեր էմմայից պակաս չի:

- Իսկ ինչո՞ւ ընկեր Նուբարը կամավոր չի մեկնում ռազմաճակատ:

- Բոլորին ռազմաճակատ չեն տանում: Ի՞նչ է, քո կարծիքով դպրոցը պիտի փակե՞նք:

44-ի հունվարին ընկեր էմմայից նամակ ստացանք: Նամակն ուղղված էր ամբողջ դասարանին, և այն կարդաց ընկեր Նուբարը. «Երեխաներ, իմ փոքրիկ բարեկամներ, եթե իմանաք, թե ձեզ ինչպես եմ կարոտել... Դուք լավ սովորեցեք և խելոք մնացեք, իսկ մենք ֆաշիստների հախիցը կգանք»:

Երկու ամիս անց ընկեր էմման ուղարկեց իր լուսանկարը: Հագին զինվորական զգեստ էր, կրծքին՝ Կարմիր աստղի շքանշան, գոտին ամուր ձգած, իսկ աչքերը ծիծաղում են:

45-ի ապրիլին...

Ընկեր Նուբարը դասարան մտավ տխուր, նայեց մեզ ու խոսեց.

- Ընկերներ, դուք հիմա երեխաներ չեք: Դուք բավականին հասակ եք առել: Չեմ ուզում ձեզանից ոչինչ թաքցնել... Ընկեր էմման զոհվել է մարտական առաջադրանքը կատարելիս... Նա հետմահու արժանացել է...

Ընկեր Նուբարը թաշկինակը սեղմեց աչքերին, Ադամյան Վաչագանը գլուխը թեքեց կրծքին, Նինել Մակարյանը, որ նստած էր իմ կողքին, ընկեր էմմայի լուսանկարը հանեց դասագրքի արանքից ու ասաց.

- Նայիր, ինչպես է ծիծաղում: Ապրողները միայն կարող են այսպես ծիծաղել:

45-ի ապրիլին մենք արդեն երեխաներ չէինք:

ԿԱԼԸ

Հիմա չկան կալերը, կալատեղեր կան՝ կանաչ տափարակներ, ուր ժպտում են անմոռուկներն ու կակաչները, կալից-կալ տանող կածանները ծածկվել են խոտերով, մարագներից մնացել են փոսորակներ, ուր եղինջներ են բուսնում:

Մեր կալն ամենից բարձրն էր՝ կոնաձև բլրի գագաթին, որտեղ գիշեր-ցերեկ խաղում էր զղզղան զեփյուռը, լեռնաղբյուրի պես կարկաչում էր Վարդերի ծիծաղը, և Ծիրան անունով եզը պլշում էր խոշոր աչքերը, փորձում

կամը հանել կալից: «Աղջի՜, աբուռ ունեցիր,- բարկանում էր Սոփան ա-զին:- Վո՜ւյ, էս աղջիկը մեր գլխին խաթա կբերի»:

Մեր կալից աշխարհը գեղեցիկ էր երևում, կյանքը՝ հետաքրքիր: Ես այդ կոնաձև բարձունքի վրա իմ վարդագույն երազներն էի հյուսում, և այդ ե-րազները միշտ կապված էին Վարդերի հետ: Բայց ես Վարդերի համար միայն անմեղ երեխա էի, այսինքն՝ տասնհինգ տարեկան մի պատանի, որի համար սերը հետաքրքիր հեքիաթ էր, և այդ հեքիաթի վերջը ես չէի կարո-ղանում գտնել:

Քանի աշխարհում պատերազմ կար, մենք՝ տասնհինգ-տասնվեց տա-րեկան պատանիներս, ամեն երեկո պարտավոր էինք զբաղվել զինավար-ժությամբ: Մեր հրամանատարը Հունան դային էր, որ մասնակցել էր ռուս-ճապոնական պատերազմին, Բաքվում հեղափոխություն արել և իր աչքով տեսել Շահումյանին: Հունան դային մեզ «տեղում քայլով մարշ» էր տա-լիս ու խզված ձայնով գոչում. «Աս, թվանս, ֆրանս... աս, թվանս, ֆրանս...»: Իսկ թե ինչու «աս, թվանս, ֆրանս» և ոչ «Մեկ, երկու, երեք», դա Հունան դայու անձնական գործն էր: Մենք մեր փայտե հրացաններով գրոհում, գրավում էինք մարագները, և միակ իսկական զենքով, չգիտեմ ում որսորդական հրացանով, կրակում օդում: Ես այնպե՜ս էի ուզում Վար-դերը տեսներ մեր զինավարժությունը, նկատեր ինձ ու մի խոսք ասեր...

Յուրաքանչյուր կալ ուներ իր «կալի տղան», որ դեռ լույսը չբացված, եզները բերում էր հանդից, լծում, բարակ ճիպոտը թափահարում օդում ու ծոր տալիս իր իմացած երգը: Տասներկու կալ էր, տասներկու «կալի տղա», և բոլոր տղաներն էլ աչք ունեին Վարդերի վրա: Սակայն Վարդերը մեզ՝ լակոտ-մակոտներիս համար անհասանելի երազ էր, այսինքն՝ ճիշտ այնպես, ինչպես հեքիաթների թագավորների աղջիկները՝ հասարակ մահ-կանացուների համար: Երեկոները՝ զինավարժությունների ժամանակ, մենք Վարդերի պատկերն էինք կրում մեր հոգու խորքում, «գրոհում ու զոհվում» էինք նրա համար:

44-ի ամռանը Մուլքունց Արտակը վերադարձավ ռազմաճակատից՝ թևը վիրակապի մեջ: Արտակը շրջեց կալում, աղջիկներին բարևեց «առանձ-նապես», կուրծքը ցցեց, որ մեդալներն ավելի լավ երևան, աղջիկները հարցեր տան, թե որտեղ և ինչի համար է ստացել այդ մեդալները: Մենք հասկացանք, որ Արտակն ուզում էր հարսնացու ընտրել կալի աղջիկնե-րից, և այդ հարսնացուն անպայման պիտի լիներ Վարդերը:

Կոլտնտեսությունը Արտակին նշանակեց ակումբի վարիչ, ակումբի վարիչ Արտակը մի երեկո հավաքեց մեզ, թե թատրոն պիտի խաղանք: Ձեռ-քին քրքրված մի տետրակ կար, գորշ կազմի վրա խոշոր տառերով գրված՝ «Անուշ»: Վարդերն Անուշ պիտի խաղար, Արտակը՝ Սարո: Բայց Արտակը ոչ կարգին ձայն ուներ, ոչ էլ կարգին բոյ-բուսաթ: Նա անխղճորեն աղավա-ղեց «Աղջի, անաստվածն» ու «Բարձր սարերը», տեսավ, որ չի ստաց-վում, մատը տնկեց վրաս, դարձրեց ինձ Սարո: Դա կյանքում իմ խաղացած

առաջին դերն էր մեր գյուղական բեմում: Հունան դային, որ այդ օրը հիացել էր իմ խաղով, հաջորդ օրը, երեկոյան զինավարժություններից ինձ ազատեց ու ասաց. «Դու իսկական դերասան ես, և քանի որ իսկական դերասան ես, կլինես մեր կոմիսարը»:

Արտակը օրերով մեր կալից չէր հեռանում: Գալիս, նստում էր խրձերի դեզի տակ, կուրծքը հպարտ ցցում ու սկսում. «Ինձ մեր կոմբատը կանչեց, թե՝ ուղարկում եմ հետախուզության: Գնացի... Մութ գիշեր էր, մատ տաս՝ աչք կթափես»: Վարդերը ցույց էր տալիս, որ լսում է նրան, բայց միտքը ուրիշ տեղ էր: Արտակը վերադառնում էր հետախուզությունից, մեկի փոխարեն «երկու լեզու» էր բերում, սանգումարտակի Վալյան գրկում, համբուրում էր նրան: Արտակն ասում էր. «Վալյա՜, Վալենտինա՜, Վալիչկա՜, քեզ իզուր ես սպանում, ես գյուղում սիրած աղջիկ ունեմ»:

Այդ օրը Արտակը չեկավ: Մենք նստել խրձերի վրա, լսում էինք ծղրիդների երեկոյան համերգը:

- Դու կարո՞ղ ես ոտանավորներ գրել,- հարցրեց Վարդերը:

- Չգիտեմ,- ասացի,- չեմ փորձել:

- Իսկ գուցե փորձես:

- Կփորձեմ:

- Ուրեմն կարող ես,- գրկեց վիզս:- Իսկ ինչի՞ մասին կգրես:

Ես ասացի՝ կգրեմ լեռների, աղբյուրների ու ծաղիկների մասին: Բայց ամենից շատ կգրեմ մեր կալի մասին:

- Ուրեմն, գրիր մեր կալի մասին:

Ես ամբողջ մի գիշեր մնացի արթուն: Ուզում էի գրել աշխարհի ամենալավ բանաստեղծությունը կալի մասին: Կալում կամի պտույտ կար, զզզղան զեփյուռ կար, և կար անհուն մի կարոտ: Այդ կարոտը անուն չուներ, այն եթերային էր և կապո՜ւյտ, կապո՜ւյտ, ինչպես կալի վրա կախված երկինքը: Կալում կար չքնաղաչյա մի աղջիկ, որ կանգնում էր իմ դեմ, ինչպես «Վարդավառի վարդագույն երազ», ինչպես զեփյուռն իրիկնամուտին, որ շոյում էր հասուն արտերի դեղին մեջքը:

Ես տառապեցի ամբողջ մի գիշեր. լուսաբացին, անքնությունից կարմրած աչքերով, գնացի եզների ետևից: Կամերի տակ խշշացին չոր հասկերը, և Վարդերը եղանը խրեց ցորենի դեզի կողն ու ասաց.

- Տո՛ւր կարդամ:

Կարդաց, ապա խնամքով թուղթը ծալեց, և ես այդ պահին նրա աչքերում արցունքներ տեսա: Մենք կարծես մի օրվա մեջ հասունացանք, չնայած տարիքի տարբերություն կար: Վարդերն ինձնից չորս տարով մեծ էր, այսինքն՝ տասնհինը տարեկան: Այդ հասակում աղջիկները ամուսնանում են, իսկ իմ հասակում՝ թույլ ոտանավորներ գրում, պահմտոցի խաղում, այգիներից խակ միրգ գողանում և թույլ տալիս, որ մեծերը քաշեն իրենց ականջներից:

Իմ ականջներն էլ քաշեցին, և քաշողը Մուլքունց Արտակն էր: Հասաց, թե ինչի համար է քաշում, բայց ես հասկացա նրան:

- Դու դեռ լակոտ ես,- ասաց,- էս քեզ խրատ, էլ չվարես կտավատ:

Եվ նա դա արեց Վարդերի ներկայությամբ: Վարդերը վեր թռավ, բարձրացրեց եղանն ու ճչաց.

- Գլուխդ հողեմ, դու սկի Վաղիկի մի մազը չարժես:

Արտակը չպատասխանեց, մոլոր քայլերով հեռացավ, Վարդերը մոտեցավ, գրկեց ինձ, գլուխս սեղմեց կրծքին ու շշնջաց.

- Եթե մի չորս տարի շուտ ծնվեի՞ր...

Հիմա չկան կալերը, կալատեղեր կան, կանաչ տափարակներ, ուր ժպտում են անմոռուկներն ու կակաչները, կալից-կալ տանող կածանները ծածկվել են խոտերով, մարագներից մնացել են փոսորակներ, ուր եղինջներ են բուսնում:

Մանուկները ուրախ քրքիջով վազում են կալատեղերում, թավալվում կանաչ խոտերի մեջ, բարձրանում, ընկնում, և ես փակում եմ մի պահ աչքերս, տեսնում նորից Վարդերին, անցած երեսուն տարիների ետևից լսում նրա ձայնը.

- Եթե մի չորս տարով շուտ ծնվեի՞ր...

ՋՐԱՂԱՑՈՒՄ

Չորս գյուղ Քարաշենի ջրաղացի հույսին է: Չորս գյուղ. Շվանի ձորի վրա ձգված մի ծուռումուռ ճանապարհ, երկու հազարից ավելի ուտող բերան, մեջքը ժայռի կողին դեմ արած մի ջրաղաց, մի զույգ պտտվող ջրաղացաքար, մի զույգ չախչախ, մի ջրաղացպան Ասլան: Լեռներում անձրև եկավ, չախչախները գիշեր-ցերեկ՝ չախ-չրախկ, չախ-չրախկ, չախ-չրախկ... Երաշտ եղավ, հողը կճաքճքվի, գետը ձենը փորը կգցի, ջրաղացպան Ասլանը կկանգնի ջրաղացի կտրին, ամպ կորոնի երկնքում ու ծուլորեն կհորանջի: Եվ եթե գետում ջուր կա՝ նշանակում է Շվանի ձորում ջրաղացի հերթ կա, Ասլանի հոնքերին ու բեղերին՝ ալյուր, ջրաղացի բակում՝ բաղարջի անուշ բուրմունք...

Չորս գյուղ՝ մի ջրաղաց: Իսկ մարդիկ գալիս են ու գալիս, հակերը շարում ջրաղացի պատերի տակ, նստոտում նրանց վրա, զրույցի բռնվում, գուլպա գործում, տրեխ կարկատում, հայհոյում ու բամբասում, կատակում, ծիծաղում, նիրհում: Գալիս, կռվում են հերթի համար և հայհոյանքների մեծ բաժինը հասնում է Ասլանին: Ասլանի աչքերը կլորանում են, ձայնը խռպոտվում է.

- Դուք մարդիկ չեք, ղարաչի եք...

Ղարաչին սարաշենցի Մելիքն է, որ մի շաբաթից ավելի սպասում է իր հերթին, բայց որովհետև հերթն ուշանում է, հայհոյում է ջրաղացն ու ջրա-

ղաց շինողին, հայհոյում է համագյուղացի Ադամին, որ մի փութ ցորենը աղել, բաղարջ է թխել և դատարկ պարկը թևի տակ, շրթունքները լիզելով, գյուղ վերադարձել:

- Ժողովուրդ, Ադամը մարդ չի, դրա կոխած հողը պիտի վերցնես, դեն շպրտես:

Ղարաչին հոնուտցի Մամիկոնն է, որ առավոտից մինչև ուշ երեկո ննջում է ջրաղացի պատի տակ ու բողոքում անքնությունից: Ղարաչին Կարապետանց Համասփյուռն է, որ ուզում է առանց հերթի աղունը վրա ածել, որովհետև հարսը գյուղսովետի նախագահ է, խոսքը՝ օրենք:

- Քո հարսը նախագահ է, իմ տղեն էլ փռոնտումը արյուն է թափում,- բարկանում է Քելունց Ալեքսանը:- Հետո էլ՝ թե ճիշտն ես ուզում իմանալ, քո հարսը սկի նախագահացու չի: Իսկական նախագահը Պետունց Վանեսն է, որ Ստալինգրադի տակ փաշիստի երկու տանկ է խփել:

- Հողս դատարկ կարկաժիդ,- չանչում է Համասփյուռը,- բա նախագահացուն դո՞ւ ես, ա՛յ կռապաշտ...

Իսկ Ծատուրենց Ստեփանը նստել գետափի ուռենու շվաքում, նայում է Սալբունց Քնարիկին: Քնարիկը լվացք է անում՝ մինչև ծնկները ջրի մեջ, դեմքին՝ քրտինքի խոշոր կաթիլներ:

Ստեփանը հանդարտ տաշում է ոտքի փայտը:

- Մի տաշիր, Ստեփա՛ն, մի՛ տաշիր:

Ստեփանը նայում է Քնարիկին, ցածրաձայն հարցնում.

- Քնար, հերդ գիտի՞:

- Գի՛տի,- նետում է Քնարիկը:- Հետո ի՞նչ:

- Հենց էնպես, հարցնում եմ:

Քնարիկը ջրից հանում է շորը, թափ տալիս, ոլորում, դեմքը կարմրում է, թևերն ուռչում են: Ստեփանն ուզում է ինչ-որ բան ասել, բայց սարաշենցի Մելիքը խանգարում է.

- Դեռ տաշո՞ւմ ես,- դառնությամբ հարցնում է նա:

- Տաշում եմ, Մելիք դայի,- պատասխանում է Ստեփանը, շարունակելով տաշել փայտե ոտքը:

Մելիքը նստում է Ստեփանի կողքին, հանում տրեխները, թափ տալիս:

- Բա լավ, Ստեփան, մեր մեծերն ի՞նչ են ասում:

- Ինչի՞ մասին,- հարցնում է Ստեփանը:

- Էս պատերազմի մասին:

- Ասում են՝ մեր գործն արդար է, մենք կհաղթենք:

- Որ մեր գործն արդար է, էդ գիտեմ, որ մենք կհաղթենք, էդ էլ գիտեմ, բայց որ ջրաղացում էսպիսի հերթ է, էդ մեկը սխալ է:

- Պետք է դիմանալ, Մելիք դայի:

- Ես դիմանալը՝ կդիմանամ, բայց երեխեքը չեն դիմանում: Ա՜խ, էդ Հիտլեր շան որդուն մի բերեն ձեռքս տան...

- Ի՞նչ կանես:

- Ինչ կանե՞մ... Մի հակ գարի շալակը կտամ, կասեմ՝ շունշանորդի, տար՝ աղի՛ր: Կարծում ես՝ չեմ ասի՞, կասեմ:

Ստեփանը շարունակում է նայել Քնարին, իսկ ներսում ջրաղացքարերը պտտվում են կատաղած, բուռ-բուռ ալյուր նետում ալրատան պատերին: Ջրաղացքարի ամեն պտույտը մի բուռ ալյուր է, մի բուռ հույս, մի բուռ երջանկություն:

Ինչ-որ մեկը ջրաղացի պատին լոզունգ է կպցրել. «Ամեն ինչ ռազմաճակատին, ամեն ինչ հանուն հաղթանակի»: Ինչ-որ մեկը մատիտով լոզունգի տակ խզբզել է. «Հիտլերի քոռ աչքը...»: Ասլանը կարդում է, ուզում է ջնջել, բայց չի ջնջում. «Հիտլերի քոռ աչքն էլ, ականջն էլ, մերն էլ, կնիկն էլ...»:

Ասլանը դուրս է գալիս ջրաղացից, դառնում ուռենու տակ նստած Ստեփանի կողմը.

- Ծատուրի տղա, մի բան հարցնեմ:

- Մեկը չէ, երկուսը հարցրու:

- էդ դուռումսաղ Հիտլերն իսկականից քո՞ռ է:

- Ի՞նչ ասեմ, չեմ տեսել:

- Հա, քոռ է, քառ է, շան որդի է: Դե հիմա հերթը քոնն է, եկ աղունդ վրեն ածիր:

- Իմը չէ, Մելիք դայունն է:

- Գյուղսովետի որոշում կա՝ պատերազմի հաշմանդամներին բաց թողնել առանց հերթի:

- Մելիք դայու տեղը հեռու է,- Ստեփանը բարձրացնում է գլուխը:- Վայ, քո ինչն ասեմ, ընկեր Ասլան... Ա՛յ մարդ, բեղերիդ ու հոնքերիդ էնքան ալյուր կա, որ կարող ես երեք բաղարջ թխել:

Ասլանը ժպտում է.

- Բաղարջի համար թեժ կրակ է հարկավոր, Ծատուրի տղա, փետ չկա:

- Բա սրանից լավ փե՞տ,- փայտե ոտքն է ցույց տալիս Ստեփանը:- Վերցրո՛ւ, ախպեր, տանը մի ուրիշն էլ ունեմ:

- Հանաքի հավես չունեմ: Մելիք, աղունդ բեր, վրեն ածիր:

Քնարիկը լվացքը փռում է ուռենու ճյուղերին, նստում գետափի սալաքարին: Ջուրը փրփրում է նրա ոտքերի տակ, լիզում զգեստի փեշերը:

- Հիշում ես, չէ՞, Քնար:

- Հիշում եմ:

- Ի՞նչը:

- Դու մեր դպրոցի ամենաարագավազ տղան էիր...

- Դու էն ժամանակ պուճուր աղջիկ էիր...

- Հորինում ես,- Քնարիկը լռում է մի պահ:- Իսկ դու հերթդ ինչո՞ւ տվիր ուրիշին:

- Որ դու մենակ չմնաս:

- Իմ մասին շա՞տ ես մտածում: Շնորհակալ եմ, չեմ ուզում գյուղի բերանին ծամոն դառնալ:

- Այսինքն՝ չես ուզում կյանքդ կապել հաշմանդամ մարդու հետ:

- Ամոթ քեզ,- նետում է Քնարիկը:- Իսկ ես կարծում էի...

- Ի՞նչ էիր կարծում:

Քնարիկը չի պատասխանում, շրջում է դեմքը, ուսերը ցնցում:

- Ասլան, արդով ես անում,- ջրաղացի ներսից կանչում է սարաշենցի Մելիքը:- Խոզի համար չի, մարդու համար է:

- Ջուրը պակասել է,- արդարանում է Ասլանը:- Վերևում բանջարանոցները ջրում են:

Մելիքը թափահարում է բռունցքը.

- Էդպիսի որոշում չկա: Դրանց նայեցեք, բանջարանոցները ջրելու ժամանակ են գտել: Ա՛յ ժողովուրդ, ի՞նչ եք պապանձվել, եկեք գնանք էդ ջրվորների հերն անիծենք:

- Գնանք, գնանք,- արձագանքում են այս ու այն կողմից:

Ստեփանը խստությամբ նայում է նրանց.

- Խելքը գլխին գործ չեք բռնում:

- Էդ ո՞նց,- մահակը թափահարում է Մելիքը:- Տուն ունենք, երեխա ունենք, նամուս ունենք:

- Ուրեմն, ձեր ասելով, կոլտնտեսության բանջարանոցները չորանա՞ն: Էդ ո՞նց կլինի, եթե ֆրոնտում էլ մեր զինվորները կանգնեն ու ասեն. «Հերիք է, սուխարին զզվեցրել է մեզ...»:

Ամբոխը ետ-ետ է գնում, սեղմվում ջրաղացի պատին:

- Դուք մարդիկ չեք,- խոսում է Ասլանը:- Դուք մարդիկ չեք, դարաչի եք: Եղած ջուրը մի քարի բոլ-բոլ հերիքում է: Ցատուրի տղա, հերթը քոնն է:

- Ես իմ հերթը տվել եմ Մելիք դայուն:

- Մելիք...

- Ալեքսան ապերը ալևոր մարդ է, թող վրեն ածի:

- Ալեքսան ապեր...

- Համասփյուռի հարսը գյուղսովետի նախագահ է,- խայթում է Ալեքսան ապերը,- վախենում եմ նեղանա:

Համասփյուռը ձիգ է տալիս խլեղի փեշերը, թևերը կանթում կողին.

- Ես չեմ թողնի իմ նամուսևուր հարսի վրա բերան բացեք, չեմ թողնի: Իմ հարսը հարամ աշխատանքի վրա աչք չունի: Թողեք Սալբունց Քնարիկը վրեն ածի, աղջիկ արմատ է, ինչո՞ւ գիշերը էս բրիշակ ջրաղացում լուսացնի:

- Մելիք դայու տեղը հեռու է,- փայտե ոտքը ճռնչացնում է Ստեփանը:- Մելիք դայի, գործիդ կաց:

Համասփյուռը հավաքում է խլեղի փեշերը, նստում հակի վրա. «Մելիք դայիին՝ մահնա, դու, մեկ էլ Սալբունց Քնարիկը՝ շահնա: Թե մտքներումդ բան կա, ասացեք, ի՞նչ եք սարով-ձորով ընկնում»:

Արևը նստում է լեռան վրա, ձորում խաղում է զեփյուռը:

- Ջուրը վարարել է,- ներսից կանչում է Ալեքսանը,- Համասփյուռ, աղունդ բե՛ր, քարը քարին կերավ:

Ջրաղացը դղրդում է, չախչախները վրա են տալիս՝ չախ-չրախկ, չախ-չրախկ...

Ստեփանը քաշում է Քնարիկի թևը.

- Հերդ չի՞ բարկանա:

- Հերս գիտի, մերս գիտի, ամբողջ գեղը գիտի: Հետո ինչ, թող իմանան, գողությո՞ւն ենք արել:

- Ճատուրենց Ստեփան...

- Սպանեցիր, էլի, սպանեցիր, ընկեր Ասլան... էս մի հերթն էլ տալիս եմ Ալեքսան ապորը:

Իսկ ջրաղացը շարունակում է դղրդալ, և այդ դղրդոցի մեջ հանկարծ լսվում է ինչ-որ մեկի ձայնը:

- Ժողովո՜ւրդ, աչքներդ լույս, մերոնք մտել են Բեռլին...

Շվանի ձորը թնդում է ցնծության կանչերից, և Ասլանը պատից ցած է բերում որսորդական հրացանը, երեք անգամ սալյուտ տալիս:

- Մի անգամ էլ կրակիր,- ծիծաղում է Ստեփանը:

Ասլանը շոյում է ալրաթաթախ բեղերը.

- Երկու փամփուշտ է մնացել, սրանք էլ պահում եմ ձեր հարսանքի համար... Դե հիմա ուրախությանդ աղունը բեր, վրեն ածիր:

Շվանի ձորում գարուն է, մայիս:

ՏՈՒՆԸ

Գևորգը սեպտեմբերին եկավ բանակից, տեսավ տունը հոգնած ուղտի պես չոքել, ընկել է կողքի վրա: Դա այն տունն էր, որտեղ ինքն է ծնվել ու մեծացել, կանգնել կտուրին, նայել երկնքում ճվճվացող ծիծեռնակներին, Մռավի ճերմակ գագաթին ու Շաղասարի կանաչ անտառին: Նա մայր ուներ, մեռավ պատերազմի ավարտից երկու տարի առաջ: Քույր ուներ՝ պսակվեց սարաշենցի Գիրիշի հետ, նամակ գրեց, նամակը լաց էր: Հայր չուներ, եղբայր չուներ, ընդհանրապես, գյուղում մոտիկ հարազատ չուներ, որի դուռը բացեր ու ասեր՝ ես Գևորգն եմ, եկել եմ:

Ցախատունը կանգուն էր, ուրեմն գլուխը դնելու տեղ ունի: Չորս տարուց ավելի քնել է բաց երկնքի տակ, խոնավ խրամատներում, բլինդաժներում, ձյան ու ցեխի մեջ, ինչո՞ւ չպիտի քնի ցախատանը: Նա շինելն ու ուսապարկը կախեց հենասյունից, նայեց մրից սևացած գերաններին, որ հիմա բորբոսնել ու մգլել են խոնավությունից, ծանր հոգոց հանեց: Նոր տուն կառուցելը գլխացավանք է. գերաններ ու տախտակներ են հարկավոր, կիր ու ցեմենտ, որտեղի՞ց գտնի:

Գևորգը նստեց թթենու տակ, ծխախոտ փաթաթեց, ծուխ արեց: Ուստա Ավագի Գոհարը վերադառնում էր աղբյուրից, տեսավ թթենու տակ նստած Գևորգին, կուժը ցած դրեց ու հարցրեց.

- Գևորգ, եկե՞լ ես:

- Եկել եմ,- Գևորգը դեմքով ճանաչեց ուստա Ավագի Գոհարին:

- Իսկ քո մասին...,- երևի լեզուն չբռնեց, որ ասի:

- Այսինքն՝ զոհվել եմ, ֆաշիստներն ինձ սպանել են,- կռահեց Գևորգը:

- Ուրեմն՝ գիտես:

- Ապրելս՝ գիտեմ, զոհվելս՝ չէ: Ֆաշիստի գնդակը ինձ չբռնեց,- նա արձակեց օձիքի վերին երկու կոճակը:- Մեծ աշխարհ է, կպատահի,- մի անգամ էլ նայեց աղջկան.- Լսիր, երբ ես սովորում էի տասերորդում, դու այն ժամանակ ո՞ր դասարանում էիր:

- Հինգերորդ:

- Կարգին բոյ ես քաշել: Այն ժամանակ շատ էիր փոքր:

Գոհարը կարծես չէր շտապում, նրան հաճելի էր այդ զրույցը, նայեց կիսավեր տան կողմն ու հարցրեց.

- Հիմա ի՞նչ պիտի անես:

- Ինչ պիտի անե՞մ... Կգնամ քաղաք, մի գործ կգտնեմ: Մի գլուխն ի՞նչ է, որ չպահեմ:

- Բա տո՞ւնը:

- Ի՞նչ տուն, որտե՞ղ է տունը: Այս հողակո՞ւյտն է իմ տունը,- չարախնդաց:- Տուն էլ ասում ես... Եղածն իմ ձեռքով կքանդեմ ու կգնամ: Կարծում ես չե՞մ քանդի: Ո՞վ պիտի ձեռքս բռնի: Տունն իմն է՝ քանդում եմ:

- Ուրիշները շինում են, դու քանդո՞ւմ ես:

Գևորգը չպատասխանեց, ավելի ճիշտ՝ հարցը ականջի ետևը գցեց, նորից մի ծխախոտ փաթաթեց: Աղջիկը հիմա նրան մի տեսակ օտարոտի էր նայում, կարծես դիմացինը ոչ թե Մաշոյի Գևորգն է, այլ բոլորովին օտար մի ճամփորդ, որ եկել, հոգնած նստել է ուրիշի տան մոտ, և ուր որ է՝ վեր կկենա ու կշարունակի իր ճանապարհը:

- Դու ինձանից մի՛ նեղացիր, ուստա Ավագի աղջիկ,- տղան ընչանցքներից բաց թողեց դառն ծուխը: Նրա ձայնի մեջ այլևս չարություն չկար:- Ամբողջ չորս տարի երազել եմ մեր տունը, հիմա այդ տունը չկա:

Նա քնեց ցախատանը, ինչպես մորից խռոված երեխան, ու երբ արթնացավ, գլխում աղջկա հարցն էր մեխված. «Ուրիշները շինում են, դու քանդո՞ւմ ես»: Տես, է՜, երեկվա երեխան է, բայց ինչ լեզու ունի: Լավ, ինքն ինչո՞ւ է Ղարաբաղից հասել Բեռլին: Ինչո՞ւ է երեք անգամ վիրավորվել: Հայրենիքի համար: Գրոհից առաջ միշտ այդպես էլ ասում էին. «Հանուն հայրենիքի, առա՜ջ»: Իսկ հայրենիքը որտեղի՞ց է սկսվում՝ այս տնից, այս բակից, այս գյուղից: Աշխարհը մեծ է, ճանապարհները՝ շատ, բայց այն ճանապարհը, որ իրեն բերել է այստեղ, ետդարձ չունի:

Գևորգը քշտեց թևերը, հողի տակից հանեց գերանները, դարսեց ցախանոցի մոտ, դուրս հանեց անվնաս մնացած պատուհանների փեղկերը,

գլխաքարերը կիտեց առանձին ու մտածեց. «Ահա և եկել, իմ տանն եմ: Սա իմ տնամերձն է, սրանք իմ թթենիներն են, ցախատունը դեռ կանգուն: Ի՞նչ է, դժվարին դիմացել եմ, հեշտին չե՞մ դիմանում: Աշխարհում ամեն մարդ ունի իր տունը: Չունի՝ կառուցում է»:

Գևորգը երեկոյան կանչեց ուստա Ավագին, ցույց տվեց հին կալատեղը, ասաց, որ ինքը հիմա բնավեր ծիծեռնակ է, ուզում է իր բույնն ունենալ:

Ավագը չափչփեց հին կալատեղը, փայտե ձողիկներ տնկեց, թելը ձգեց ու հաստատեց-

- Դու խելոք ես մտածել, Մաշոյի Գևորգ: Աշխարհում ամեն մարդ իր տունը պիտի ունենա: Մարդ իր տունն իր քրտինքով պիտի կառուցի: Քրտինքով շաղախված տան պատերը ամուր են լինում:

Հին կալատեղի հողը երեսից պինդ էր: Գևորգը ամուր էր կպել, քար ու քռիճը տեղի տվին, երևաց կավահողը: Նա գլուխը բարձրացրեց, թևքով մաքրեց ճակատից ծորացող քրտինքն ու նկատեց թթենու տակ կանգնած Գոհարին: Կարծես դա երեկվա իր տեսած աղջիկը չէր: Կարծես մի օրում լցվել ու գեղեցկացել է, և աչքերն այնպե՞ս են ծիծաղում...

- Բարև, Գևորգ:

- Բարև, Գոհար:

- Ես այդպես էլ գիտեի:

- Դու ի՞նչ գիտեիր:

- Որ նոր տուն կշինես:

Գևորգը ծիծաղեց: Նրա ծիծաղի մեջ մի քիչ հեգնանք կար, մի քիչ թախիծ, բայց կարոտն ավելի շատ էր: Դա տան կարոտն էր, աշխատելու ու սիրելու կարոտն էր:

- Գևորգ, մենք առաջվա պես հարևաններ կլինենք,- Գոհարը ձեռքի կապոցը դրեց հողակույտին:- Ճաշի ժամանակն է, մոռացե՞լ ես:

- Մա՞յրդ է ուղարկել:

- Ես էլ աչքեր ունեմ,- աղջիկը ծիծաղեց:

- Քանի՞ տարեկան ես:

- Տասնութ:

- Ուրեմն երեխա չես: Երբ Մոզդոկի մոտ վիրավորվեցի, ես էլ տասնութ տարեկան էի: Վերքս մի ռուս աղջիկ փաթաթեց: Անունը Մարիա էր: Քնքուշ սիրտ ուներ, փաթաթում ու լաց էր լինում: Առաջին անգամ էր գործ ունենում վիրավորների հետ: Հետո ես նրան հանդիպեցի Բեռլինում, ավագ լեյտենանտ էր:

- Քեզ ճանաչե՞ց:

- Ճանաչեց:

- Հասցեն չտվե՞ց:

- Չտվեց,- ծիծաղեց Գևորգը:- Սիրած տղա ուներ:

Տան պատերը բարձրացան, բայց քարը չհերիքեց: Նախագահ Մացակը փայտե ոտքը ճռճռացնելով եկավ, կանգնեց կիսատ պատի տակ ու խոսեց.

- Մեր տղա, ի՞նչ ես նեղսրտվել, քարը չի հերիքում՝ կբերենք: Տախտակը, գերանները, թիթեղը՝ կոլտնտեսության հաշվին: Ավանսի կարգով մթերքներ դուրս կգրենք: Պինդ կաց, մենակ չես:

Սեպտեմբերի վերջին Գևորգը ուստա Ավագին ասաց.

- Շնորհակալ եմ: Հիմա արի մեր հաշիվները փակենք:

- Ի՞նչ հաշիվներ, Գևորգ:

- Ինձ համար տուն ես կառուցել:

- Դրա համար էլ կոլտնտեսությունից աշխօր եմ ստացել:

- Ախր գերանները, կիրը... Դու ես տվել, չէ՞:

- Բան չկա, կուռդ տեղը, ձեռքդ տեղը, կաշխատես՝ կտաս:

Վարչության նիստ էր, նախագահ Մացակը հրավիրեց նաև Գևորգին: Պատերազմը ավարտվել է, բայց հոգսերը շատ են: Ախր կոլտնտեսությունը հազիվ է ծերը ծերին հասցնում: Դու, ընկեր Գևորգ, միջնակարգ ես ավարտել, ռազմաճակատում եղել ես ավագ սերժանտ, նշանակում է՝ կարող ես և պարտավոր ես աշխատանք ղեկավարել: Ուրեմն՝ այսօրվանից քեզ նշանակում ենք այգեգործական բրիգադի բրիգադավար: Փորձ չունես՝ ձեռք կբերես: Կսովորես և կսովորեցնես: Կարծում ես, թե ես նախագա՞հ եմ ծնվել: Վաղը գնում ես շրջկենտրոն, նոր տնկիներ են ստացել: Հին այգիները հալից ընկել են, հարկավոր է նորը գցել:

Երեկոյան Գևորգը վերադարձավ շրջկենտրոնից, սայլը կանգնեցրեց պահեստի կողքին: Գոհարը ոնց որ իրեն էր սպասում, նայեց բեռնված սայլին ու հարցրեց.

- Գևորգ, այսքան ծառերն ի՞նչ պիտի անես:

- Նոր այգի ենք գցում:

- Մի խնձորենի էլ քո բակում կտնկես:

- Որ ուզում ես՝ կտնկեմ: Վաղը կգա՞ս ծառատունկի:

- Որ ասում ես՝ կգամ:

Առավոտյան Գևորգը նայեց բրիգադի անդամներին ու քթի տակ ժպտաց, քսանհինգ հոգուց չորսն էին տղամարդ: Ցականի մարդաթող Սիրանը աչքերով խժռեց ջահել բրիգադավարին, խոսք էր ուզում բռնեցնել, բռնացրեց.

- Ընկեր Գևորգ, այսքան կանանց հետ ո՞նց պիտի գլուխ դնես:

- Լեզու կգտնեմ:

- Բա որ չգտնե՞ս:

- Դիմում կգրեմ ու կազատվեմ բրիգադավարությունից:

- Նշանակում է՝ վախկոտ ես: Բա այդքան մեդալները ո՞նց ես ստացել:

Գևորգը նայեց նրա կրակված աչքերին, ուզում էր խոսել, ասելիքը մոռացավ: Հետաքրքիր է, ինչո՞ւ է Տիրանը բաժանվել այս ջահել ու սիրուն կնոջից: Ուրեմն՝ մեջտեղ մի բան կա: Ուրեմն՝ սազը լարին չի բռնել:

Շամուտը քանի՞ տարի է, խոփ չէր տեսել, հողը խամացել էր, թփակալել: Գևորգը Գոհարի ձեռքից վերցրեց քլունգը, խրեց հողի չեչոտված

կուրծքը: Սիրանը նայեց ու թշշաց. «Հլա Ավագի Գոհարին նայեցեք, հողս գլխիդ, երեկվա երեխան է, ոնց է տղային գլխից տարել: Ուրեմն՝ մենք հեչ, պառավել ենք... Կնանի՞ք, մեր բրիգադավարը տեսեք ոնց է աշխատում, շարժվեցե՞ք...»:

Երեկոյան Գևորգը գրասենյակից տուն էր դառնում, Սիրանը եկավ կանգնեց նրա ճանապարհին:

- Բարի երեկո, Գևորգ:

- Բարի երեկո, Սիրան:

- էդ ի՞նչ է, բլուզդ քրտինքից սևացել է, օձի բերանում մզես, օձը կսատկի: Տուր, տանեմ լվանամ:

- Կարիք չկա, Սիրան, ես ինքս կլվանամ:

- Դու տղամարդ ես:

- Հետո ի՞նչ՝ տղամարդ եմ:

- Տղամարդը տղամարդու գործ պիտի անի:

- Դե, իհարկե:

- Տուր, տանեմ լվանամ:

- Հարկավոր չի:

- էդ ի՞նչ է, գնում ես քնելո՞ւ:

- Առավոտյան շուտ պիտի արթնանամ:

- Բա որ հանկարծ գիշերները գեշ երազներ տեսնես:

- Գեշ երազները տեսել, վերջացրել եմ: Գեշ երազը պատերազմն էր, վերջացավ:

- Չէ, այդ գեշ երազները չեմ ասում,- Սիրանը ծիծաղեց:- Իմ ասած երազը քո տեսած երազներից չէ: Չե՞ս վախենում:

- Ախր ինչի՞ց պիտի վախենամ, ա՛յ աղջիկ:

- Գիշերվա կեսին գամ հանկարծ դուռդ բացեմ... Որ եկա, ի՞նչ պիտի անես: Որ եկա, զոռով դո՞ւրս ես անելու տնից...

- Լավ, հերիք է,- Գևորգը շուռ եկավ:- Վաղը գնում ենք Մաննուտ:

- Մաննուտում ի՞նչ կա:

- Խաղողի այգին ձեռքից գնում է:

- Ա՛յ տղա, ուրեմն քի՞չ բան կա, որ ձեռքից գնում է, բայց չես տեսնում: Ուրեմն որ վարչությունը չի ասում, նախագահ Մացակը չի կարգադրում, ժողովում չեն խոսում, չպիտի՞ տեսնել:

- Բարի գիշեր, Սիրան:

Հաջորդ օրը Սիրանը չեկավ աշխատանքի: Գնացել, բողոքել է կոլտնտեսության նախագահին. այդ ո՞նց կլինի, բահը դրել ես ձեռքիս, թե՝ գնա աշխատիր: Մաշոյի Գևորգին էլ վրաս բրիգադիր ես նշանակել, նա էլ խելքը տվել է Ավագի Գոհարին, կողքից չի հեռանում:

- Դու այդ տղային հանգիստ թող, Սիրան,- նախագահ Մացակը հոնքերն իրար տվեց:- Ես ի՞նչ մեղավոր եմ, որ ամուսնուդ հետ չկարողացար լեզու գտնել...

Գյուղում հարսանիք եղավ, պսակվողը ավտովարորդ Սերգոն էր: Գևորգը տեսավ իր կողքին նստած Սիրանին, հայացքով որոնեց Գոհարին՝ չգտավ: Ախր այդ ինչպե՞ս եղավ, որ նստեց այս կրակի կողքին: Վեր կենա գնա, լավ չի: Սերգոն իր դպրոցական ընկերն է, մարտական ընկերն է, միասին Բեռլին են հասել:

- էդ ի՞նչ ես քիթդ կախել,- Սիրանն աչքի տակով նայեց նրան:- Ոնց որ նավերդ ծովում խորտակվել են, մի կերպ փրկվել ես: Հա, երևի Ավագի Գոհարին կարոտել ես: Խե՜ղճ տղա, բա ո՞նց կլինի:

- Դա քո գործը չէ:

- Խոսք էր, ասացի:

Սիրանը նրա համար մի բաժակ օղի լցրեց, և երբ Գևորգն այն թափով դատարկեց, նորից լցրեց ու մեկնեց իր բաժակը.

- Մեր կենացը, հո դե՞մ չես:

Օղին ու գինին խառնվեցին իրար, իրար խառնվեցին Գևորգի մտքերը, Սիրանը դարձավ եթերային, ծիծաղը աղբյուրի անուշ զնգոց, և աչքե՜րը, այդ սև ու խոշոր, անմեղ ու մեղավոր, մոտիկ ու հեռավոր աչքե՜րը... Որտեղի՞ց է այդքան կրակը նրա աչքերում:

- Ինչո՞ւ ես Տիրանից բաժանվել:

- Տիրանի՞ց,- Սիրանը նայեց բաժակի մեջ ու ժպտաց,- չեմ սիրել՝ բաժանվել եմ: Տիրանն այստեղ ի՞նչ գործ ունի... Բաժակդ խմի՛ր:

Գևորգը զգաց, որ հարբած է և չհասկացավ, այդ օղո՞ւց է, գինո՞ւց, թե՞ կողքի կրակից: Դուրս եկավ բակ, քայլերը լայն-լայն գցեց, Սիրանը եկավ, հասավ նրան, բռնեց թևը: Տղան չտեսավ պատի տակ կանգնած Գոհարին: Սիրանը սեղմեց նրա թևը:

- Դու հարբած ես, Գևորգ, դու հարբած ես:

- Հարբած եմ,- համաձայնեց Գևորգը:- Դրա համար էլ գնում եմ:

- էդպես հարբած-հարբած ո՞նց տուն կհասնես:

- Որ չհասնեմ, ի՞նչ պիտի անեմ: Դու էլ ես հարբած:

- Շատ չէ, մի քիչ: Այսինքն՝ այնքան, որքան քեզ հարկավոր է:

Երբ մարդ գինով է, ուրիշներից հաշիվ է պահանջում, բայց ինքն իրեն հաշիվ չի տալիս:

Նա առավոտյան արթնացավ, տեսավ մահճակալի կողքին ընկած կապույտ գլխաշորը, լարեց թմրած ուղեղը, և այն, ինչ հիշեց, չիմացավ՝ իրակա՞ն է, թե՞ ծանր երազ: Կապույտ գլխաշորը երազ չէր: Կարծես երազ չէր նաև Սիրանի ձայնը. «Ախր սիրում եմ, սիրելու համար ո՞ւմ են մեղադրել, որ ինձ մեղադրեն: Սիրելու համար ո՞ւմ են կախել, որ ինձ կախեն: Սիրելը մեղք չի, մեղքը չսիրելն է»:

Գևորգը կեսօրին Մաննուտ գնաց, որոնեց Գոհարին, չգտավ: Սիրանը բահը տնկեց առվի կողքին, նայեց նրան.

- Գիշերը լա՞վ քնեցիր:

- Ինչո՞ւ ես հարցնում,- Գևորգը գրպանից հանեց կապույտ գլխաշորը, մեկնեց նրան:- Քոնն է, մոռացել ես: Լավ բան չես արել:

- Ո՞վ, ե՞ս,- զարմացավ Սիրանը, և նա այդ պահին հրեշտակի պես գեղեցիկ էր, սատանայի պես խորամանկ:- Քոնը մոռացե՞լ ես: Տես, է՜, խե՜ղճ տղա, խեղճ, խաբար չի:

Գևորգը բարկացած նայեց նրան: Հրեշտակը չքացել, սատանան է մնացել:

- Ի՞նչն եմ մոռացել:

- Այնպե՜ս էիր հարբել...

- Բայց մեր տան ճանապարհը չէի մոռացել, առանց քեզ էլ տեղ կհասնեի: Որքան գիտեմ, դու հարբած չես եղել:

- Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

- Այն, ինչ լսեցիր: Ճանապարհիս չկանգնես:

- Կկանգնեմ,- Սիրանը ետ գցեց գլուխն ու չարացած նայեց նրան:- Իսկ ինչո՞ւ չպիտի կանգնեմ, ումնի՞ց եմ պակաս:

- Խոսք էր, ասացի:

Տարին լավ էր, բերքն՝ առատ: Գևորգը հաշվեց աշխօրի դիմաց ստացած փողը, դրեց գրպանն ու գնաց Ավագենց տուն: Ավագը թախտին թիկնել, թերթ էր կարդում: Մարիամ ազին ցած դրեց ձեռքի գուլպան, աթոռ առաջարկեց հյուրին: Գևորգը նստեց, գրպանից հանեց փողը:

- Բերել եմ, ուստա Ավագ:

- Ի՞նչ ես բերել, Գևորգ:

- Տախտակի, գերանների, կրի փողը:

- Այդ փողից շատ ունե՞ս, Մաշոյի Գևորգ:

- Պարտք եմ, չէ՞:

- Պարտքը չի փախչում: Ես էլ չեմ փախչում: Շինելդ հալից ընկել է, սապոգներդ... Ա՛յ տղա, ո՞նց ես դրանք քարշ տալիս... Հա՜, հասկացանք, տուն ունես: Հիմա քեզ եմ հարցնում. էդ դատարկ տունը ո՞նց պիտի հարս բերես:

Մի-մի բաժակ օղի խմեցին, խոսեցին դեսից-դենից, հետո Գևորգը բակում դիտմամբ ոտքը քարշ գցեց, ծխախոտ փաթաթեց, որոնեց գրպանները, իբր լուցկին չգտավ, ծխախոտը ձեռքից գցեց: Գոհարը գիտեր, որ նա իրեն է սպասում, հարցրեց.

- Գևորգ, բա՞ն ես ասում:

- Լուցկին էր, գտա: Էդ ինչի՞ չես խոսում:

- Ի՞նչ խոսեմ:

- Նեղացած ես երևում:

- Ինչո՞ւ պիտի քեզանից նեղանամ, ես քո ի՞նչն եմ: Լավ, ասենք, հարևաններ ենք, հետո՞:

- Ուզում եմ քեզ հետ անկեղծորեն խոսել:

- Հարկավոր չի, Գևորգ: Հրե՜ն Սիրանը եկել, դռանդ կանգնել ու քեզ է սպասում: Գնա նրա հետ անկեղծորեն խոսիր:

Գևորգը շվարած նայեց նրան, զգաց, որ դա կատակ չէ: Միտքը պղտոր-

վեց, գլուխը պտտվեց ու չիմացավ ինչպես ցատկեց բարձր ցանկապատի վրայով, տեսավ թթենու տակ կանգնած Սիրանին, մոտեցավ հևասպառ:

- Լսի ր, ա՛յ կնիկ, ի՞նչ ես ուզում ինձանից:

- Ինչ եմ ուզո՞ւմ,- Սիրանը ծիծաղեց,- խնամախոսությունդ խանգարեցի՞: Դուռդ էլ այնպես պինդ ես փակել... Վախենում ես մտնեմ և դուրս չգա՞մ: Վախենում ես գամ սերդ գողանա՞մ:

- Ի՞նչ ես ուզում, ա՛յ կնիկ:

- Այդ ո՞նց է, երեկ աղջիկ էի, այսօր կնիկ դարձա: Դու հո չե՞ս ծռվել:

- Աղջիկ ես, կնիկ ես, տատի ես, քեզ համար:

Լուր տարածվեց գյուղում, որ Մաշոյի Գևորգը տունը վաճառում, թողնում է գյուղը: Նախագահ Մացակը մարդ ուղարկեց նրա ետևից, տանը չէր: Երեկոյան փոստատար Սրապիոնը շրջկենտրոնից եկավ, թե՝ Մաշոյի Գևորգին տեսել եմ քաղաքում, հարբած էր: Գևորգն ասել էր՝ պրծա՜վ, ես գյուղում մնացողը չեմ, կգամ տուն-տեղ վաճառեմ ու գնամ:

Նա եկավ կիրակի օրը: Դեմքը գունատ էր, աչքերը չբարձրացրեց ու չբարևեց փոստի շենքի կողքին կանգնած մարդկանց: Դանդաղ բարձրացավ գրասենյակի մոտով, տեսավ ցանկապատի կողքին կանգնած Սիրանին, որ ուզում էր ինչ-որ բան ասել, մռլտաց.

- Լի՜ոբ...

Ոտքով հրեց դարպասը, մտավ բակ ու չհավատաց աչքերին: Գոհարը կանգնել բակում, իրեն էր սպասում:

- Գևորգ, եկա՞ր:

- Եկա, որ գնամ:

- Փախչո՞ւմ ես:

- Փախչում եմ:

- Բա տո՞ւնդ:

- Կվաճառեմ:

- Ո՞ւմ կվաճառես:

- Դա ինձ համար նշանակություն չունի: Չրի կտամ:

- Այս տունը չես վաճառի: Քրտինքով շինած տունը չեն վաճառում: Քրտինքը չեն վաճառում:

- Չեմ վաճառի՞: Այդ ինչո՞ւ: Տունն իմն է, չէ՞:

- Դու ինձ ներիր, Գևորգ: Ես չգիտեի, որ դու նրան չես սիրում: Ինքը՝ Սիրանը, եկավ՝ պատմեց:

- Կպատմի, ինչո՞ւ չպիտի պատմի:

- Դու ինձ լսո՞ւմ ես, Գևորգ:

- Լսում եմ, եկավ՝ պատմեց:

- Ասաց, որ վատ բան է արել և զղջում է... Սա քո տունն է, քո հայրական տունը...

Գևորգը բռնեց նրա ձեռքը, նայեց խունացած աչքերին ու ասաց,

- Իմ տունն է: Իմ և քո տունը: Մեր տունը:

ՏԱՊԸ

ՄԵՆԴԵԼԵԵՎԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Տարեվերջի քննություններին ընկեր Չալյանն ինձ քիմիայից «երկու» նշանակեց: Կարող էր «երեք» նշանակել, կարող էր լրացուցիչ հարցերով ինձ նեղ տեղից դուրս բերել, բայց նա խեղճ-խեղճ նայեց ինձ ու բարեկամաբար հարցրեց.

- Օհանյան, հիմա քեզ հետ ինչպե՞ս վարվեմ, ախր դու չգիտես Մենդելեևի աղյուսակը: Չիմանալ Մենդելեևի աղյուսակը, նշանակում է՝ քիմիա չիմանալ:

Ես էլ վիզս խեղճ-խեղճ ծռեցի ու հարցրի.

- Ընկեր Չալյան, իսկ գուցե պատմեմ Մենդելեևի կենսագրությունը:

Ընկեր Չալյանն աշխուժացավ.

- Պատմի՛ր, Օհանյան, պատմիր տեսնենք:

Ես պատմեցի Մենդելեևի կենսագրությունը: Պատմեցի եռանդով ու ոգևորված, բաց չթողնելով ոչ մի մանրուք: Ընկեր Չալյանը գերագույն հաճույքով լսեց ինձ, իսկ ես առանց ամաչելու, սկսեցի հորինել, եղած-չեղած դեպքերն ուռճացնել, խտացնել գույները: Ստացվեց այնպես, որ ես Մենդելեևի մասին ավելի շատ բան գիտեմ, քան նրա կենսագիրները:

- Լավ ես պատմում, Օհանյան, շատ լավ ես պատմում,- ձեռքերն իրար քսեց ընկեր Չալյանը:- Անկեղծորեն ասած, հոյակա՜պ ստացվեց: Շատ բաներ ինձ համար նորություններ էին:

Ինձ մի պահ թվաց, թե «երեք»-ով արդեն ապահովված եմ և «չորս» ստանալու հեռանկարով լոպազացա.

- Ընկեր Չալյան, թույլ տվեք Լաուազեի կենսագրությունն էլ պատմեմ: Բայց ընկեր Չալյանն այս անգամ չընդունեց իմ առաջարկությունը. նայեց դասասենյակի պատից կախած Մենդելեևի աղյուսակին ու ասաց.

- Օհանյան, ես հավատում եմ, դու նույն հաջողությամբ կարող ես պատմել նաև Լաուազեի կամ Լոմոնոսովի կենսագրությունը: Քո պատմածը գրականություն է, պատմություն է, աշխարհագրություն է, բայց քիմիա չի: Քիմիան Մենդելեևի աղյուսակն է:

Ես աշխարհի ամենաանշնորհք աշակերտի պես կախեցի գլուխս, ծռմռվեցի տեղում ու լրիվ զինաթափվեցի: Իմ իմացած քիմիան՝ «քիմիա» բառի ծագումն էր, ջրի ու աղի ֆորմուլան և քիմիկոսների կենսագրությունները: Իմ իմացած քիմիան չէր համընկնում ընկեր Չալյանի պատկերացրած

քիմիային: Ես քիմիայի ժամերին ոտանավորներ էի գրում, կարդում Ջեկ Լոնդոնի ու Պաուստովսկու պատմվածքները, իմ դասընկերուհի Անգինի աչքերը համեմատում էի եղնիկի աչքերի հետ, ծաղրում վերջին շարքում նստած Անուշին, որ դասերը կակազելով էր պատմում, իսկ «պատերազմ» բառն արտասանում էր «պատերամզի»:

Զգալով, որ միևնույն է, «երեք» չեմ կարող ստանալ, ընկեր Չալյանի մատները չէ, գլուխն էլ կտրես, միևնույն է, ինձ «երեք» չի նշանակի, ստիպված նահանջեցի.

- Ընկեր Չալյան, իսկ գուցե թողնեք աշնանային:

Ընկեր Չալյանը իսկապես ոգևորվեց, թևերը լայն տարածեց, այնպես տարածեց, որ կարծես ուզում էր գրկել ինձ, սեղմել կրծքին:

- Աշնանային, Օհանյան, աշնանային, ուրիշ ելք չկա: Մենք ապրում ենք քիմիայի հզոր դարում, իսկ դու քիմիա չգիտես: Լինել զարգացած մարդ, բանաստեղծություններ գրել քիմիական թանաքով և քիմիա չիմանալ, դա արդեն աններելի է, Վաղիկ Օհանյան, աններելի է:

Ըստ ընկեր Չալյանի, աշխարհի ամենախելոք մարդիկ քիմիկոսներն են: Դրա համար էլ իր ավագ որդու անունը Մենդելեև է դրել, միջնեկինը՝ Լաուազե, իսկ կրտսերինը՝ Լոմոնոսով: Մեր դպրոցում ուսուցիչները կատակով ասում են. «Կարապետ Չալյանի հարկի տակ քիմիկոսների մի նոր պլեադա է աճում ու բարգավաճում»:

Դուրս եմ գալիս դասասենյակից: Դպրոցի դիրեկտոր Սուրեն Ղահրիյանը՝ սուր քթով ու երկար ծնոտով մի մարդ, նայում է ինձ ու նրա անգույն աչքերում տեսնում եմ միայն բարկություն:

- Օհանյան,- ասում է,- ուրեմն աշնանայի՞ն:

- Աշնանային, ընկեր Ղահրիյան:

- Ուրեմն քննություններին, օրինակի համար, չես պատրաստվել այնպես, ինչպես հարկն է:

- Ընկեր Ղահրիյան, դուք ճիշտ եք, քննություններին չեմ պատրաստվել այնպես, ինչպես հարկն է:

- Օհանյան, օրինակի համար, անցիր ինձ մոտ:

Ընկեր Ղահրիյանը սիրում է տեղի ու անտեղի շռայլել «օրինակի համարը»: Նա նստեց գրասեղանի ետևում, վառեց գլանակը:

- Օհանյան, օրինակի համար, դու ծույլ տղա ես: Դու, օրինակի համար, ինչո՞ւ ես քիմիային նայում մատներիդ արանքով: Լավ, ասեք թե, օրինակի համար, լեզուն ու գրականությունը լավ գիտես, բայց այդ չի նշանակում, թե կարող ես, օրինակի համար, անտեսել մնացած առարկաները: Օհանյան, ես, օրինակի համար, քեզ եռանկյունաչափությունից հազիվ եմ «երեք» նշանակել:

Ընկեր Ղահրիյանը շարունակում է իր «օրինակի համար»-ները, որոնք ոչ վերջ ունեն, ոչ սկիզբ: Նայում է պատուհանից, վառում մի նոր գլանակ ու շրջվում դեպի ինձ:

- Օհանյան, օրինակի համար, պա՞րզ է:

- Պարզ է, ընկեր Ղահրիյան:

- Ուրեմն, օրինակի համար, ականջիդ օղ արա:

Հոգնած, անտրամադիր, ջախջախված ու բարկացած, թողնում եմ դպրոցի շենքը և ինձ նետում ճանապարհի կողքի թթենու այգին: Երեսնիվայր փռվում եմ կանաչ խոտերի մեջ, իսկ գլխիս մեջ դրնգում են Չալյանի «Քիմիայի դարն» ու ընկեր Ղահրիյանի «օրինակի համար»-ները: Հետո մի պահ պատկերացնում եմ, որ նոր ուսումնական տարում պիտի նստեմ նույն դասարանում, սիրտս կտոր-կտոր է լինում:

Ա՜խ, այդ քիմիան:

Փակում եմ աչքերս, դեմքս թաղում կանաչ խոտերի մեջ, ականջիս է հասնում Անգինի ոտնաձայնը:

Նա մոտենում, նստում է կողքիս:

- Հեռացի՛ր,- բարկանում եմ,- ինձ մենակ թող:

- Չեմ հեռանա,- համառում է Անգինը,- խնդրում եմ ձայնդ չբարձրացնես:

- Ես կգոռամ:

- Չեմ վախենում:

- Կծեծեմ:

- Չես կարող:

Մեր դասարանում Անգինի պես ոչ ոք քիմիա չգիտե: Անգինն ընկեր Չալյանի երկրորդ «ես»-ն է: Հիմա ընկեր Չալյանի երկրորդ «ես»-ը եկել, խաղում է հոգուս հետ:

- Դու համառ տղա ես, Վաղիկ. ախր ինչո՞ւ չես հասկանում, որ առանց քիմիայի...

- Ես զզվել եմ քո այդ աղերից, թթուներից, էթիլ-մեթիլներից...

Առավոտյան հայրս հոնքերը կիտած նայում է ինձ:

- Ա՛յ տղա, քիմիայից վա՞տ ես ստացել:

- Չէ, «երկու» եմ ստացել:

- Երեսդ պա՜ռզ:

- Շնորհակալ եմ, հայրիկ:

Հայրս ավելի է կիտում հոնքերը:

- Հիմա քեզ հետ ի՞նչ անեմ: Ընկեր Չալյանն ասում է՝ Վաղիկն ընդունակ տղա է, բայց ծուլություն է անում: Որտե՞ղ է քո քիմիան:

Ես դասագիրքը մեկնում եմ նրան: Հայրս թերթում է գիրքը, մատը դնում է Մենդելեևի նկարին:

- Էս տերտերն ո՞վ է:

- Ի՜նչ տերտեր, Մենդելեևն է:

- Էս սիրուն կնիկն ո՞վ է:

- Դա Լոմոնոսովն է: Լոմոնոսովը տղամարդ է ծնվել...

Պատմում եմ Լոմոնոսովի կենսագրությունը, հետո Մենդելեևի մասին եմ պատմում: Հայրս ուշադիր լսում է ինձ ու հարցնում.

- Բա ընկեր Չալյանն էդ ինչո՞ւ է քեզ վատ դրել:

- Որովհետև Մենդելեևի աղյուսակը չգիտեմ:

- էդ ո՞նց է, Մենդելեևի օխտը պորտը գիտես, բայց աղյուսակը չգիտես: Ի՞նչ բան է էդ աղյուսակը:

Սեղանին փռում եմ Մենդելեևի աղյուսակը՝ սա ոսկի է, սա արծաթ է, այս մեկը ցինկ է, այս մեկը պղինձ... ամեն մետաղ իր անունն ու տեսակարար կշիռն ունի: Ահա այս վանդակում ինչ-որ էլեմենտ պիտի լինի, բայց Մենդելեևը չի հայտնաբերել այդ էլեմենտը, թողել է ապագա սերունդներին:

- Իսկ դու չե՞ս կարող գտնել էդ էլեմենտը:

- Չեմ կարող:

- Ընկեր Չալյանը կարո՞ղ է գտնել:

- Դժվար թե:

- Նախագահ Մացա՞կը:

Ես ծիծաղում եմ հորս միամիտ հարցի վրա: Վիրավորվում է:

- Որ էդքան խելք ունես, էլ ինչո՞ւ ես քիմիայից վատ ստացել:

Ես շտապում եմ: Այգում Անգինը սպասում է ինձ: Նրա կողքին առոքփառոք կանգնել է ընկեր Չալյանի եռյակը՝ Մենդելեևը, Լաուազեն և Լոմոնոսովը: Մենդելեևը գրպանից հանում է մի թուղթ, մեծավարի մեկնում ինձ:

- Պապան է տվել: Պապան ասել է՝ սովորիր այս ծրագրով,- քիթը շառաչյունով վեր է քաշում:- Պապան ասել է՝ Անգինը կօգնի:

- Պապան էլ ի՞նչ է ասել:

- էլ բան չի ասել:

Մենդելեևը, Լաուազեն և Լոմոնոսովը իրար հրմշտելով հեռանում են:

Անգինը փռթկացնում է, աչքի տակով նայում ինձ:

- Լսի՛ր, Վաղիկ, եթե ընկեր Չալյանն էլի երեխաներ ունենա, ի՞նչ ես կարծում, ի՞նչ անուններ կդնի:

- Դարվին, Միչուրին, Լիսենկո...

- Իսկ եթե դու հասակ առնես, մտնես կյանք և...

- Նարեկացի, Սայաթ-Նովա, Պռոշյան, Աղայան, Թումանյան, Նար-Դոս...

- Իսկ եթե աշնանայինին լավ չպատասխանեցիր, պատկերացնո՞ւմ ես, թե ինչ է լինելու:

- Պատկերացնում եմ, դու ինձ կասես՝ մնաս բարով:

- Դե ուրեմն սկսենք: Ի՞նչ բան է շղթայական ռեակցիան:

Ամառային արձակուրդներս անցնում են շղթայական ռեակցիաների, թթուների, աղերի, արջասպների, ալկալիների, Մենդելեևի աղյուսակի և չգիտեմ էլ ինչերի մեջ: Մի կողմից՝ Անգինը, մի կողմից էլ ընկեր Չալյանի եռյակը ինձ հանգիստ չեն տալիս: Վազում եմ ձորը, հանում շորերս, նետվում գետի մեջ, ժայռի կատարին տնկվում է ընկեր Չալյանի Մենդելեևը, գլխից վերև ինչ-որ թուղթ թափահարում ու ասում.

- Վաղի՜կ, Մենդելեևի աղյուսակը...

Քնում եմ՝ Մենդելեևի աղյուսակը, արթնանում եմ՝ Մենդելեևի աղյուսա-

կը, փողոցում՝ Մենդելեևի աղյուսակը, հայրս՝ «Ա՛յ տղա, Մենդելեևի աղյուսակը մնաց»:

Եկավ աշունը: Ընկեր Չալյանը մտավ դասասենյակ: Ոտքի կանգնեցի:

- Բա՛րև, Օհանյան:

- Բա՛րև, ընկեր Չալյան:

- Ուրեմն սկսե՞նք:

- Սկսենք, ընկեր Չալյան:

Պատասխանեցի առաջին հարցին, ընկեր Չալյանը գոհ ժպտաց: Պատասխանեցի մյուս հարցերին, հետո անցա Մենդելեևի աղյուսակին: Ընկեր Չալյանը գնաց-եկավ, գնաց-եկավ, բացեց դուռը: Դռան ետևում կանգնած են Անգինը, Մենդելեևը, Լաուազեն և Լոմոնոսովը: Ընկեր Չալյանը նայեց նրանց, նայեց ինձ ու ասաց.

- Օհանյան, Անգինը լավ աղջիկ է:

Եվ որովհետև Անգինը լավ աղջիկ է, ես շիկնեցի:

Եվ որովհետև ես էլ վատ տղա չէի, Անգինի հետ մտա քիմիայի լաբորատորիա, բռնեցի նրա ձեռքը, և այդ ժամանակ ներս մտավ ընկեր Ղահրիյանն ու հարցրեց.

- Օհանյան, օրինակի համար, այդ ի՞նչ բանի եք:

Մենք շփոթված նայեցինք պատից կախած Մենդելեևի աղյուսակին:

- Ներեցեք, ընկեր Ղահրիյան,- ասաց Անգինը,- մենք ուզում ենք իմանալ, թե այդ որ էլեմենտն է, որ բացակայում է Մենդելեևի աղյուսակից:

Ընկեր Ղահրիյանը, որ ընդհանրապես սրամիտ մարդ չէ, պատասխանեց.

- Սիրաբանության էլեմենտը:

ՆՅՈՒՏՈՆԻ ՕՐԵՆՔԸ

Հունիսյան մի տոթ օր ես շրջանավարտների երեկոյից տուն վերադարձա բարձր տրամադրությամբ: Հայրս, որ բակում բահի կոթ էր պատրաստում, հասկացավ, որ տրամադրությունս բարձր է, շուռ եկավ ու հարցրեց.

- Ուրեմն վերջացրի՞ր:

- Վերջացրի:

- էլ չե՞ս ասի՝ էս է պակաս, էն է պակաս:

- Չէ, չեմ ասի:

- Ուրեմն, քո հոգին էլ ազատեցիր, մեր հոգին էլ,- նա ձեռքիցս վերցրեց հասունության ատեստատը, նայեց:- Հիմա էս թղթով ի՞նչ պիտի անես:

- Կընդունվեմ ինստիտուտ:

- Բա չասացի՞ր վերջացրել եմ:

- Խոսքս միջնակարգի մասին էր:

- Ինստիտուտում որքա՞ն պիտի սովորես:

- Չորս տարի:

Հայրս այնպես կուզեր քաշել ականջս: Բայց չի քաշում. հարևաններն ի՞նչ կասեն: Կասեն՝ Պետունց Գարաշը նշանի հասած տղայի ականջը քաշել է:

- Ա՛յ տղա, - նա ձեռքում շուռումուռ է տալիս բահի կոթը, որոնում հարմար բառեր:- Ա՛յ տղա, կարիք կա՞ վարժապետ դառնալու համար տասնչորս տարի գլուխ ճաքացնել; Գոնե բժիշկ դառնաս, հը՞...

- Հայրիկ, իսկ ինչո՞ւ անպայման բժիշկ:

- Որ լավ ռոճիկ ստանաս, կարգին տուն ու տեղ դնես, խելոք հարսնացու գտնես: Մելիքի Անգինից ձեռք քաշիր. անունն է Անգին, մեջտեղ բան չկա:

Ես հասկանում եմ հորս. անցած օրը ընդհարվել է Անգինի հոր՝ պայտառ Մելիքի հետ: Ասել է՝ դու ի՞նչ նալբանդ ես, հրեղեն էշս մեխով ես գցել: Մելիքը խիստ վիրավորվել է. «Սրանից հետո քոսոտ էշդ կտանես ուրիշ տեղ նալել տաս»: Խոսքը խոսք է բերել, իրար ավել-պակաս խոսք են ասել, պինդ խռովել:

- Հայրիկ, դու Մելիքի հետ իզուր ես կռվել:

- Շատ էլ լավ եմ արել, Մելիքն ի՞նչ մարդ է,- հայրս տաքանում է:

- Բա Անգինն ի՞նչ մեղավոր է:

- Անգինը չրթի-փրթի աղջիկ է: Եթե ինստիտուտ ընդունվի, անունս կփոխես՝ Մելիք դնես: Դե որ լավ աղջիկ է, Մելիքին տնփեսա կգնաս: Տնփեսա՜,- նա կնճռոտում է դեմքը:- Դոդոշին հարցրել են՝ յանի աշխարհում քեզանից տգեղ կենդանի կա՞... Դոդոշն ասել է՝ հա՛, կա: Ասել են՝ ո՞վ է, դոդոշն ասել է՝ աշխարհի ամենատգեղ կենդանին տնփեսան է:

Հայրս տնփեսաների մասին ուրիշ շատ անեկդոտներ էլ գիտե, բայց այս անգամ բավարարվում է այդքանով:

- Ուրեմն, ինստիտուտ ես գնում, էլի: Իսկ նախագահ Արտաշը ոչ մի ինստիտուտ չի ավարտել, բայց բոլորից շատ աշխօր է ստանում: Շրջանում էլ հարգանք ու պատիվ ունի:

Ես հորս բացատրում եմ, որ կարևորը ոչ թե աշխօրն է, այլ գիտելիքները: Օրինակ եմ բերում Լոմոնոսովին, էդիսոնին, Տոլստոյին, էյնշտեյնին և չգիտեմ էլ ում:

- Տոլստոյն էն միրուքավոր մարդը չի՞,- հարցնում է,- էն՝ որ պատկերքը գրքում կա:

- Նա է:

- Քո էդ Տոլստոյը կարո՞ղ է կոլխոզ ղեկավարել:

- Հայրիկ, Տոլստոյն իր ժամանակին մաճ է բռնել, խոտ է հարել, հունձ է արել...

- Ուրեմն, լավ մարդ է եղել, և ոչ թե նալբանդ Մելիքի նման: Ախր, լավ մարդու անունը Մելիք կլինի՞... Ե՞րբ պիտի գնաս ինստիտուտ:

- Երկու շաբթից հետո թղթերս կհանձնեմ:

- Անգինն է՞լ:

- Անգինն էլ:

Հայրս ինչ-որ բան է ասում, և ես չեմ հասկանում: Հիշում եմ շրջանավարտների երեկոն, դպրոցի դիրեկտոր Սահակ Ղահիրյանի բաժակաճառը. «Դուք, սիրելի սաներ ու սանուհիներ, հասունության ատեստատով արդեն կյանք եք մտնում: Որտեղ էլ գնաք, ուր էլ լինեք, բարձր կպահեք մեր դպրոցի պատիվը»: Հովիկը, որ ընդհանրապես չի սիրում ընկեր Ղահիրյանին, ականջիս շշնջաց. «Շաբլոն է, եթե հերթը հասնի ինձ, տես ինչպես կխոսեմ»: Իսկ երբ հերթը հասավ Հովիկին, նա կրկնեց ընկեր Ղահիրյանին. «Սիրելի ուսուցիչներ և ուսուցչուհիներ, մենք հասունության ատեստատով արդեն կյանք ենք մտնում: Որտեղ էլ գնանք, ուր էլ լինենք, միշտ բարձր կպահենք մեր դպրոցի պատիվը»: Հետո ձայն խնդրեց դասարանի բանաստեղծ Սուրեն Սարոյանը: Նա գրպանից հանեց ծոցատետրն ու թափով արտասանեց.

Լսեք խոսքը բանաստեղծի,
Որը հեծած իր Պեգաս ձին,
Արշավում է նա անբասիր
Դեպ գագաթը սեգ Պառնասի:

Երեկոն իսկապես անցավ ուրախ, բոլորս խմբով երգեցինք. «Ամպի տակից ջուր է գալիս, դոշ է տալիս, փրփրում...»: Հրանտ Փանոսյանն իր բաժակաճառն ավարտեց «բոլորս դեպի վեհ բարձունքներ» կոչով, իսկ Անգինը քաշեց թևս ու ասաց. «Վաղիկ, գիտե՞ս, անցած օրը քո և իմ հայրը կռվել են»: Ես ասացի, որ նրանց կռիվը մեր երեկոյի հետ կապ չունի: «Ունի,- ասաց նա:- Ես ձեր տուն այլևս հարս չեմ գա»: Մենք քրքջացինք, ընկեր Ղահիրյանը գլուխն օրորեց. «Օհանյան Վաղիկ, դու չես փոխվել, էլի չարություն ես անում: Իսկ դու, օրիորդ Անգին, ես համոզված եմ, որ մինչև հիմա այդպես էլ չկարողացար իմանալ Նյուտոնի ձգողականության օրենքը»:

Հայրս, որ ընդհանրապես ո՛չ քիմիա գիտի, ո՛չ ֆիզիկա, ո՛չ երկրաչափություն, բահը ամրացնում է կոթին, ծանր ու թեթև անում և ասում.

- Խնձորը ծառից հեռու չի ընկնում:

Որովհետև խոսքը նորից Անգինի մասին է, ես ծիծաղում եմ:

- Ի՞նչ է,- բարկանում է նա,- սխա՞լ եմ ասում:

- Սխալ չես ասում, հայրիկ, դու պարզապես հաստատում ես Նյուտոնին:

- Էդ ո՞վ է:

- Անգլիացի մեծ ֆիզիկոս է, ապրել է մեզնից մոտ 250 տարի առաջ:

- Ողորմի հոգուն, երևի լավ մարդ է եղել: Իսկ էդ... ինչպե՞ս է անունը:

- Նյուտոն:

- Էդ Նյուտոնը ինչո՞վ է հայտնի:

- Ձգողականության օրենքով:

- Էդ ի՞նչ բան է:

- Իրարից որոշ հեռավորության վրա գտնվող երկու մարմիններ փոխադարձաբար ձգում են իրար այնպիսի ուժով, որն ուղիղ համեմատական է նրանց մասսաների արտադրյալին, հակադարձ համեմատական՝ նրանց միջև եղած հեռավորության քառակուսուն:

Հայրս բահի կոթը դեմ է տալիս ծնոտին.

- Դե հիմա ասածներդ մանրացրու, որ բան հասկանամ:

«Մանրացնում» եմ, իսկ նա ժպտում է բեղի տակ:

- Ուրեմն, տեսնո՞ւմ ես, էդ Նյուտոնն էլ է իմ կարծիքին՝ խնձորը ծառից հեռու չի ընկնում: Անգինն էլ շատ գա, շատ գա՝ դեպի իր հերը: Իրարից հեռու գտնվող երկու մարմիններ իրար քաշում են... է՜, թող քաշեն, խանգարողն ո՞վ է:

Նա բահը տնկում է ցանկապատի տակ, մի բաժակ ջուր խմում և թևքով սրբում բեղերը:

- Համա Թեղուն ձորում պոմիդորն ինչ բռնել է, հա՜... Նախագահ Արտաշն ասում է՝ ռեկորդային բերք կստանանք: Վաղը չե՞ս գա...

- Կգամ:

Առավոտյան ես և հայրս հանդ ենք գնում: Նրա ուշքն ու միտքը Թեղուն ձորի պոմիդորի վրա է. «Բռնել է, հա՜...»: Նկատում է առջևից գնացող Մելիքին, խոժոռում դեմքը.

- Պահ, էդ լոպազին նայիր, բահն էլ ոնց է բռնել: Մեկն էլ ասի՝ ա՛յ Մելիք, դու որտեղի՞ ջրվորն ես, բոստաններից ի՞նչ ես հասկանում...

Ես դիտմամբ արագացնում եմ քայլերս: Հասնում ենք Մելիքին: Հայրս երեսը շուռ է տալիս, ձեռքը մեկնում սարալանջի արտի կողմը.

- Այ տղա, Վաղիկ, համա ի՜նչ արտեր են...

Իսկ ես՝

- Բարև, Մելիք քեռի:

- Բարև, հազար բարին,- պատասխանում է նա:- Չէ: խնձորն էս անգամ ծառից հեռու է ընկել:

Հայրս կռահում է նրա միտքը, աչքի պոչով նայում ինձ.

- Մի հարցնող լինի, ա՛յ լոպազ, դու Նյուտոնի օրենքից ի՞նչ ես հասկանում, որ դուրս ես տալիս: Քոնը էշն է, նալես՝ մեխով գցես:

...Կեսօր է: Արևը վառում, խանձում է: Հայրս նայում է Մելիքի կողմը, խոսում ինքնիրեն. «Մեկ է, ետ չեմ դառնա, թող Վերդունց Մելիքն էնքան աշխատի, որ քրտինքը տակովը գցի»: Մելիքն էլ հորս ջգրու ինչ-որ երգ է քթի տակ դնդնում և բահի սուր կողով խփում ճմբերին: Մեզանից քիչ վերև երևում է Անգինի ծաղկանկար գլխաշորը: Հայրս նկատում է նրան և բռան մեջ հազում.

- Իրարից հեռու գտնվող երկու մարմիններ իրար քաշում են, մերդ չմեռնի, Նյուտոն, ոնց էլ ասել է...

Անգինը ցատկում է արխերի վրայով, ջրով լի կուլան մեկնում հորը: Մելիքը կուլան գլխին է քաշում, կուշտ խմում: Անգինը գալիս է մեր կողմը.

- Գարաշ քեռի, սառը ջուր եմ բերել:

Հայրս գլխից վերև կլկլացնում է կուլան:

- Ուխա՜յ... Անգինը իր մորն է քաշել: Ապրես, աղջիկս, աստված նշանածիդ երկար կյանք տա:

Մելիքն այս անգամ բահի կողով բարկացած խփում է ճմբին.

- Մեկն էլ չկա, ասի՝ այ կռապաշտ, յանի դու աստծուն հավատո՞ւմ ես:

Անգինն, արխերի վրայով նորից ցատկելով, հեռանում է, վերևից ձեռքով հասկացնում ինձ, որ ուզում է մեծ առվից կտրել ջուրը: Ես համաձայնում եմ, որովհետև հոգնել եմ, ուզում եմ պառկել կեռասենիների շվաքում: Ջուրը կամաց-կամաց կտրվում, դառնում է մի մատ:

- Գնանք,- ասում է հայրս,- ճաշի ժամն է:

Անգինը կեռասենու տակ բացում է սփռոցն ու հրավիրում հորս.

- Գարաշ քեռի, համեցեք, լավաշ է, սալ-սալ մածուն, պանիր, թաղից նոր կտրած վարունգ...

Հայրս նայում է ինձ, նայում է Անգինին, Մելիքին կարծես չի նկատում: Մելիքն էլ ասես հորս չի նկատում, դիմում է ինձ.

- Ա՛յ տղա, բա դու սկի սովա՞ծ չես:

Ես և Անգինը նրանց համար թարգմանչի դեր ենք կատարում: Հայրս ասում է.

- Անգի՛ն, էդ թթու դրած սիբեխից մոտ քաշիր:

Մելիքը՝

- Վաղի՛կ, տես ի՞նչ լավաշ է, շողշողում է, շողշողում...

Մի-մի բաժակ օղի են խմում, մի-մի կտոր վարունգ վերցնում: Անգինը նորից լցնում է նրանց բաժակները, քաշում թևս.

- Գնանք:

- էդ ո՞ւր,- միաժամանակ հարցնում են հայրս ու քեռի Մելիքը:

- Պատրաստվում ենք քննություններին,- Անգինը ցույց է տալիս Ալեքսանդր Դյումայի «Թագուհի Մարգոն» վեպը:

- Լավ եք անում,- համարյա միասին պատասխանում են հայրս ու քեռի Մելիքը և բաժակ բաժակի խփում.- Լավ լինենք, պարզերես լինենք...

Մենք նստում ենք առվի կողքին, հիշում շրջանավարտների երեկոն, ընկեր Ղահիրյանի բաժակաճառը, Սուրեն Սարոյանի Պառնասն ու Պեգաս ձին... Անգինը հանկարծ մատը դնում է շուրթերին.

- Լսո՞ւմ ես, արդեն հաշտվել են:

Հորս ձայնը հասնում է ականջիս.

- Ա՛յ Մելիք, ախր ի՞նչ ես մեծ-մեծ խոսում, դու սկի Նյուտոնի օրենքն էլ չգիտես:

Մելիքը, որ Նյուտոնի անունը երևի կյանքում առաջին անգամն է լսում, ինքն էլ իր հերթին իր գիտելիքներով ուզում է զարմացնել հորս.

- Ուրեմն քո Նյուտոնը Դարվինից շա՞տ գիտի:

- Դարվինը օրենք չունի, օրենքը Նյուտոնինն է:

- Լավ, էդ ի՞նչ օրենք է:

- Ձգողության օրենքը... Ուրեմն, իրարից հեռու գտնվող երկու մարմիններ իրար քաշում են, հասկանո՞ւմ ես, քաշում են, ուզես, չուզես՝ քաշում են... Օրինակ... Ախր ո՞նց ասեմ, որ հասկանաս... Օրինակ, ձեր աղջիկն ու մեր տղան...

Քեռի Մելիքը բռնում է փորն ու ծիծաղում.

- Հա, հա, հա, հա... Վայ, քո ինչն ասեմ, Պետունց Գարաշ... Ա՛յ մարդ, էլ ի՞նչ ես սարով-ձորով ընկել, միանգամից ասա՝ ձեր տղան ու մեր աղջիկն իրար սիրում են... էդ չի՞ քո Նյուտոնի օրենքը:

ՇՈՒՇԱՆԸ

- Վե՛ր կաց, ցավդ տանեմ, վեր կաց:

Մայրս զգուշորեն քաշում է վերմակի տուտը, շոյում կարճ խուզած, ոգնու փշերի պես ցցված մազերս, իսկ ես ստից հորանջում եմ, այսինքն՝ ի՞նչ ես տանջում, քունս տանում է, պիտի քնեմ: Այսինքն՝ դե լավ, էլի՛, սիրելի ու անմոռանալի մայրիկ, ինչո՞ւ ես հալ ու մաշ լինում, կարող ես խոսքդ պահել, հետո ասել:

Չէ, մայրս այսօր ավելի է քաղցրացել և աչքերից բարություն է թափվում.

- Վե՛ր կաց, ջանը՞ս, վեր կաց, հոգիս, վեր կաց, կյանքս, վե՛ր կաց: Քեռուդ փոխարեն էսօր թութ պիտի թափես: Հրե՞ն, կտավը բռնողները աղբյուրի կողքին վզները ծռել ու քեզ են սպասում: Վե՛ր կաց, մատաղ...

Հայրս մտքում ծիծաղում է մորս քնքշության վրա, մոտենում, վերմակը դեն է շպրտում ու ձայնին խստություն դնում.

- Վե՛ր կաց, շան տղա, գիշերը կարճ գարի՞ ես հնձել, թե մեջքովդ Զառուն բաղից քա՞ր ես քաշել: Մի ասող լինի՝ փեշակիդ անունն ի՞նչ է, որ աղավարի մեկնվել ես, մեզ էլ մարդատեղ չես դնում: Է՞, չէ, հիմիկվա լակոտների հետ ուրիշ լեզվով պիտի խոսես:

Ես ուզում եմ հորս մի քիչ բարկացնել. նորից եմ հորանջում, ճմլկոտում, ձգվում, ոտքերս երկարում մահճակալի ճաղերի արանքով, այսինքն՝ տեսեք, է՞, տղամարդ եմ, մահճակալը վրաս նեղ է գալիս: Բա տղամարդ չեմ, ի՞նչ եմ. երեկ վարսավիր Առուստագեսը կարգի բերեց մազերս, երեսս թրաշեց, կտրած տեղերին բոլ-բոլ բամբակ կպցրեց, դեռ քթիս տակին էլ մազ թողեց, մկրատն ականջիս ծլվլացրեց ու ասաց. «Բեղը քեզ շատ կսազի: Աղջիկները բեղավոր տղաների ետևից գյուլլա են գցում: Քեռիդ քեզ օրինակ»:

Եվ հիմա հայրս չի ուզում տեսնել քթիս տակ թողած մազը, չի զգում էժանագին օդեկոլոնի բույրը, որ մնացել է երեկվանից. ծուռ-ծուռ նայում է մորս, այսինքն՝ դու չխառնվես, սիրտդ փափուկ է, թող ես խոսեմ:

- Արա՞, դու գլխիս մինի՞ստր ես, դիրեկտո՞ր ես, թե հողվարչության նաչալնիկ: Որ ասում եմ՝ վեր կաց, ինչո՞ւ ես քեզ կոտրատում: Գիտե՞ս, թե ես քո հասակում ինչե՞ր եմ արել: Բա որտեղի՞ց իմանաս, ուտում-խմում, քեզ համար աղավարի ման ես գալիս:

Ես նստում եմ մահճակալի կողքին, երկու ոտքերս քաշում շալվարի մի փողքով, կարերը ճարճատվելով քանդվում են: Վերմակն առնում եմ վրաս ու ասում.

- Երկրաչափությունից աշնանային ունեմ, հասկանո՞ւմ եք:

- Հիմա աշուն չի, ամառ է,- հայրս իր ձայնի մեջ աշխատում է պահպանել նախկին խստությունը:- Թութն ափսոս է, թափվում է: Մակունց Ռուսեթն ասում է՝ մի օրը երկու աշխօր, հասկանո՞ւմ ես: Սկի արևի տակ պլթպլթացող հնձվորն էդքան չի ստանում:

- Բա աշնանայի՞նը,- երեսս շուռ եմ տալիս և չեմ ուզում տեսնել մորս բերած նոր շալվարը:- Ես աշնանային քննություն ունեմ: Երկրաչափությունից: Իմ փոխարեն քննությո՞ւն եք հանձնելու: Դե հիմա ասացեք տեսնեմ՝ ո՞րն է Պյութագորասի թեորեմը:

- Պա՛հ, զարմացրե՞ց,- ծաղրում է հայրս:- էդ ինչի՞ ուրիշները աշնանային չունեն, դու ունես: Անցած տարում՝ քիմիան, հիմա էլ՝ չափությունից: Տնաշենի տղա, մի չափությունն ի՞նչ է, որ չգիտես:

- Չափություն չի, ընկեր հայրիկ, երկրաչափություն է՝ եռանկյունի, քառանկյունի, բուրգ, ուղիղ գիծ, շրջանագիծ, թեորեմա, աքսիոմա...

- էլ ի՞նչ ես ուզում, ահագին բաներ գիտես:

- Գնա ընկեր Ղահրիյանից հարցրու:

- Ընկեր Ղահրիյան էլ ասո՞ւմ ես, կարծես Փուստունց Ռաքելի տղային չեմ ճանաչում: Ախր, թութն ափսոս է: Քեռիդ էլ սկի լավ բան չարեց՝ թողեց գնաց: Վե՛ր կաց, կնանիքը սպասում են:

Կնանիքը գյուղի ջահել հարսներն են՝ գրադարանավարուհի Լուսինկան, ակումբավար Անգինը, Մակարի շեկ Սալբին, չաղլիկ Աշխենը և Բախշունց հարսը՝ Շուշանը:

Ես քայլերս լայն-լայն գցելով մոտենում, դիտմամբ չեմ բարևում, ուզում եմ գրավել նրանց ուշադրությունը: Լուսինկան փռթկացնում է, և ես պաթետիկ տոնով գոչում եմ.

- Ողջո՞ւյն հայոց փափկասուն տիկնանց: Թույլ տվեք իմանալ, ո՞վ գեղեցկուհիներ, ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ:

Շուշանը հայացքով մի լավ բզկտում է ինձ ու դիմում ընկերուհիներին.

- Վու՜յ, կնանիք, ա՛յ կնանիք, բեղ էլ է պահում: Ոնց որ ստից կպցրած: Արա, ընկեր Վաղիկ, էդ ինչի՞ տրեխներդ թարս ես հագել: Բա գլխարկդ ո՞ւր է:

- Գլխարկ չունեմ,- ասում եմ,- գուցե մարդուդ գլխարկը մի քանի օրով ինձ տաս:

- Որ մարդուս գլխարկը դնես, մարդուս գո՞ծն էլ կանես:

- Թե չանեմ, ամոթ ինձ,- նետում եմ երես առած լակոտի պես:- Ուզո՞ւմ ես մարդուդ գլխարկի վրա գրազ գանք:

Կնանիքը ծիծաղում են, ու այդ ծիծաղը Շուշանի օգտին չէ: Շուշանը չի ծիծաղում, նույնիսկ ժպտալու փորձ չի անում:

- Կերա՞ր,- չաղլիկ Աշխենը մթամ կատակով խփում է նրա ուսին ու փառ-փառ ծիծաղում: Ես հասկանում եմ, նա Շուշանի հետ իր հաշիվներն ունի, և տեղն է եկել, պիտի խայթի:- Դե պատասխան տուր:

Շուշանը չի պատասխանում նրան, քաշում է կտավի տուտը ու շտապեցնում.

- Կնանի՞ք, օրն անցնում է, շարժվեցե՞ք:

Ես գետնից բարձրացնում եմ ծանր թակը, քրտինքից սևացած կաշեփոկը օդակում ձեռքիս: Դա քեռուս քրտինքն է, որ կաթիլ-կաթիլ հոսել, ծծվել է կաշեփոկի մեջ, և հիմա թոկից քրտնահոտ է գալիս:

Ներքևից վեր չափում եմ ծառի բարձրությունը՝ հեռագրասյունի պես բունն ուղիղ է, ոտ դնելու տեղ չկա: Շուշանի հայացքը կարծես ասում է՝ կաթնակեր լակոտ, քեռուդ թակը բարձրացնողը՝ քեռուդ խելքն ու ուժը պիտի ունենա. հիմա ուտելու հերթը քոնն է, դե բարձրացիր:

Շուշանը երևի սպասում է, որ թակը նետեմ խռովկան երեխայի պես ու ասեմ՝ գնացեք ձեզ համար թութ թափող գտեք, ես այս ծառը բարձրացողը չեմ: Չէ, չեմ ասի, զոռով կբարձրանամ: Չանգռոտելով, մատներս արյունլվա անելով կբարձրանամ և թույլ չեմ տա ինձ վրա ծիծաղեն: Ախր սա էլ ծառ չի, աստծու պատիժ է, սրա տնկողի հերն անիծած:

Բարձրանում եմ: Թակը դիպչում է սրունքներիս, ծնկներս ծեծում, քրտինքը լցվում է աչքերս, շունչս կտրվում է... Չեռքս մեկնում եմ, բռնելու տեղ չկա: Քիչ է մնացել, կճանկեմ թեքված ճյուղը, ոտքս կդնեմ դուրս պրծած ոստին:

Դա ուրիշների համար չգիտեմ թե ինչ, բայց ինձ համար հաղթանակ է: Ես հաղթողի հայացքով վերևից ներքև եմ նայում, թակն իջեցնում ճյուղին: Հասած թթերը կարկուտի պես թափվում են կտավի մեջ, ճերմակ ուլունքների պես դիզվում իրար վրա:

- Կնանի՞ք, կտավը լայնք տվեք, ծայրն առե՞ք,- գոռում եմ, և իմ սեփական ձայնն ինձ անբնական է թվում:- Շուշան, էդ հաստ-հաստ կռները քոնը չե՞ն, ծայրն ինչո՞ւ չես առնում:

Շուշանը կտավը ձգում, ծայրն առնում է, ես նորից՝ «Շուշան, քաշիր, աջ շուռ տուր: Շուշան, աչքդ ճյուղին պահիր: Շուշան, տնաշենի կնիկ, օրը ցերեկով քնե՞լ ես»:

Շուշանը կտավ բռնողների ավագն է, ավագության համար լրացուցիչ աշխօր է ստանում, բայց հիմա չի ուզում ընդունել իմ «մարտահրավերը», նահանջում է.

- Արա՜, ցավդ տանեմ, աչքդ մենակ Շուշանի՞ն է տեսնում,- ասում է նեղսրտված:- Ինչո՞ւ ես լեզուդ չարչարում, ես քո թայը չեմ:

- Ավագը դու ես:

- Է՜ լա՛վ: Ժողովներում՝ Շուշան, տանը՝ Շուշան: Դու էլ էսօր ոնց որ թարսի ձին ես նստել:

- Բա ո՞նց, էսօր տրեխներս էլ եմ թարս հագել, բլուզս էլ, դեռ մի ուրիշ բան էլ:

- Էդ մի ուրիշ բանը չպիտի ասեիր,- Անգինը մի ձեռքով կտավի տուտն է բռնել, մի ձեռքով քանդված ծամը, խոսում է Շուշանի փոխարեն, Շուշանի փոխարեն նախատում է ինձ:- Դեռ միջնակարգ էլ ես ավարտում... էդ բաները դպրոցում են սովորեցրե՞լ:

- Հա, դպրոցում: Ընկեր Ղահրիյանն ասել է՝ Օհանյան Վաղիկ, դու երկրաչափություն էլ չգիտես, քեզանից կարգին հորթապահ դուրս կգա: Դե որ բութանկյուն եռանկյունին սուրանկյուն եռանկյունուց չես տարբերում, մնում ես աշնանային:

- Ընկեր Ղահրիյանն էլ ի՞նչ է ասել:

- Ասել է՝ «Ելնեմ ծառը թութ թափեմ, քեզ մի խնձորով խաբեմ»:

Աշխենն աչք-ունքով սաստում է Անգինին. «Աղջի՜, սո՜ւս, զոռով բռնել-բերել, զոռով ծառ է բարձրացել. կթողնի՝ կգնա: Որ թողեց գնաց, ի՞նչ պիտի անես: Է՜, խոսում է, թող խոսի, հո դրա ասածով չի: Թե որ ճիշտը մոտենանք, մեղավորը Շուշանն է: Ուրիշի կռիվն ինչի՞ ես քեզ վրա վերցնում»:

Թակն իջնում է ճյուղին, տերևները խշշում են, ինչպես հորդառատ անձրևի ժամանակ, թութը բուռ-բուռ թափվում է կտավի մեջ: Առաջվա պես թակից քրտնահոտ է գալիս, քեռուս քրտինքի հոտը:

Մայրս ասում է՝ դու քեռուդ կտորն ես, հայրս հաստատում է՝ հա՛, նրա նման մեծագլուխ, կողքահաստ, կռվարար, լեզվին տվող:- Հայրս գույները շատ է խտացնում, բայց ես նրան չեմ առարկում:

Իմ և քեռուս մտերմությունը գալիս է այն ժամանակներից, երբ ես մի մատ մանուկ էի, քաշում էի մորս մազերն ու ճվճվում. «Քելին եմ ուզո՜ւմ, տալ ինձ քելի՜ն»: Քեռիս ինձ վեր-վեր էր թռցնում ու ասում. «Երեխա չի, է՜, կրակ է, կրա՜կ: Վա՜յ ես քո ցավը տանեմ, Վաղիկ բալա»:

Քառասունմեկին քեռիս մեկնեց ռազմաճակատ, կռվեց Կերչում, և որովհետև թշնամին դեռ ուժեղ էր, մի բուռ մարտիկների հետ նահանջեց, գնդի դրոշն ու վիրավորված քաղդեկին փրկեց: Նա այդ դրոշի տակ քայլեց մինչև Բեռլին, և եթե ինքնագլուխ կերպով չխփեր գերված ֆաշիստ սպային, կմնար ավագ լեյտենանտ, նշանածը՝ մեր ռուսաց լեզվի ուսուցչուհի ընկեր Տիգրանուհին, մինչև վերջ կսպասեր նրան և չէր պսակվի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ապիկոն Սեդրակյանի հետ:

Հիմա քեռիս սարերում է, կարող է չգնալ, բայց գնաց: Շուշանը գիտե, թե ինչու գնաց: Շավարշը գյուղը գլխին է հավաքել, ձենը գլուխը գցել. «Քանի որ թութ թափողը Պետրուսանց Սահակն է, կնիկս տանը կնստի: Ախր, ինչո՞ւ եք ուզում մեզ իրարից բաժանել»: Շուշանը լսեց ու բարկացավ. «Մի ասող լինի՝ այդ ե՞րբ ենք միացել, որ բաժանվելու մասին ես խոսում: Դու էլ գիտես, որ էն գլխից մեր ջուրը մի առվով չի գնում: Դու էլ գիտես, որ մեր մեջ ամեն ինչ վերջացած է»:

Եթե Շուշանը չասի էլ, ամբողջ գյուղը գիտե, թե բանն ինչումն է: Շավարշը շրջկենտրոնում մթերային խանութի վարիչ է, կպել է ամուսնաթող մի կնոջ, շաբաթներով գյուղ չի գալիս, ու թե գալիս է, կռվում է Շուշանի հետ, հոխորտում. «Սաղ շրջկենտրոնն իմ արևով է երդվում. ես քո թայը չեմ»: Գժվելու բան է, մարդ էլ Շուշանի նման ջահել, սիրուն կնիկ ունենա ու ընկնի մի լկստվածի ետևի՞ց:

- Քեռուդ կասեմ ականջներդ մի լավ քաշի,- Անգինը կտավի տուտը սեղմել է ծնկների արանքում, հյուսում է քանդված ծամն ու հետո հանկարծ

հասկանում, որ ինքն էլ այդ խոսքը չպիտի ասեր, բայց որ ասել է, ետ վերցնել չկա: Հիմա որ հարցնեմ՝ քեռիս Շուշանի հաշվով ականջներս ինչո՞ւ պիտի քաշի, ի՞նչ կպատասխանի: Քեռիս Շուշանի ամուսի՞նն է, թե՞ տեգրը:- էդ ինչո՞ւ քեռիդ մեզ մի անգամ ցուրտ խոսք չի ասում,- Անգինը խորամանկում է, քեռուս հեռացնում է Շուշանից, բարկացած նայում Աշխենի կողմը՝ «Հողեմ գլուխդ, խոսքի է ման գալիս»:- Արա՜, ընկեր Վաղիկ, էն կողմի ծյուղն ո՞ւմ համար ես պահում: էդ որ Ռուսեթը տեսնի, ի՞նչ կասի»:

- Կասի՝ Անգին, ծամդ հյուսել ես ու կանգնել կալը, շափաղ է տալիս երեսիդ խալը:

- Վո՜ւյ, կնանիք, էս Չարլի Չապլինն ո՞վ է մեզանով գցել,- Անգինը սոթ է տալիս, ոտքը չլմփում է առվի մեջ:- է՜, լավ, խոսք ասացինք, ցավի մեջ ընկանք: Գյոզալական թափչին վերցրել են, երեխային ուղարկել, թե թութ պիտի թափես: Նրա թափած թթից ի՞նչ դուրս կգա:

- Հիանալի արաղ,- պատասխանում եմ,- ի՞նչ եք ննջել, տիկնայք փափկասուն հայոց աշխարհի, կտավը լցվել է, թափեցեք:

Ես նստում եմ ծառի ծյուղին, ոտքերս կախում ձորի վրա ու մտածում քեռուս մասին: Քառասունհինգի աշնանը նախկին լեյտենանտ Սահակ Պետրոսյանը ավագ սերժանտի ուսադիրներով կարգ ու կանոն էր պաշտպանում Դրեզդենում: Ինչ-որ մեկը թիկունքից կարող էր կրակել նրա վրա, և բացառված չէր, որ այդ կրակողը կարող էր լինել այն նույն սպայի եղբայրը կամ որդին, որին գնդակահարել էր ինքը՝ նախկին ավագ լեյտենանտ Սահակ Պետրոսյանը: «Ախր ինչո՞ւ կրակեցիր,-հարցնում եմ,- չէ՞ որ նա գերի էր»: «Չէի կարող չկրակել: Ով էլ լիներ իմ փոխարեն՝ կկրակեր: Սրիկան հայհոյում էր մեր պետությանը: Ստալինին էր հայհոյում: Իրենք քի՞չ են կրակել»:

Քեռիս Դրեզդենում ուշացավ, և երբ վերադարձավ, Տիգրանուհու հարսանիքն էր: Խմեց ու հարբեց: «Ցավդ տանեմ, Սահակ,- ասաց մայրս,- ջահելություն չանես, գյուղում քի՞չ աղջիկներ կան»: Քեռիս գլուխն օրորեց . «Բանիդ կաց, ինձանից ոչ Մեջնուն դուրս կգա, ոչ էլ Սեյրան: Աշխարհ է, ամեն ինչ պատահում է»:

Հայրս տակառները էշին բարձած գալիս է, լիքը բեռնում, դատարկները դնում ծառի տակ և ձեռքը ծառերի, բլուրների ու ձորերի վրայով երկարում դեպի Գալուստենց բաղը.

- Հրե՜ն, Ռուսեթն էնտեղ, զավոդի կողքին: Ասում է՝ կարգադրություն կա, սրանից դենը եկող-գնացողին՝ ոչ մի կապլի... Ախր ո՞նց չասի, երեկ Արմավիրը լակել, ուշունց է տվել Ռուսեթին: Բա դա մարդավարությո՞ւն է:

Արմավիրը Աշխենի ամուսինն է, և Աշխենը ծուլ է լինում.

- Աչքն էլ է հանել, որ ուշունց է տվել: Մարդուս բանջարաբուծականից հանել է, թե քո տեղը խոզաբուծականն է: էդ որ խոզաբուծականը լավ է, ինչո՞ւ Շավարշը չմնաց, փախավ շրջկենտրոն: Մենք էլ ենք մարդ, որ ուրիշների նման բերան չենք պատռո՜ւմ...

- Վարչությունն է որոշել, հո մենակ Ռուսեթով չի,- հայրս վարից վեր նայում է ինձ:- Արա՜, էլի աղայությունդ բռնե՞ց: Ռուսեթն ասում է՝ կարգը փոխ-

վել է, աշխօրը ծառով է, պակաս ժամանակը՝ ցենտներով:

Իջնում եմ ծառից, մեջքս հենում բնին:

- Քո էդ Ռուսեթի մասին կգրեմ թերթում, խայտառակեմ:

- Հա, գրողներից ես, կգրես: Որ գրելով լինի՞...,- հայրս նայում է Շուշանին ու մտածում: Մտքինը երևի քեռիս է, բայց ուրիշ բան է ասում:- Շուշան, աչքդ տղայի վրա պահիր, մեկ էլ տեսար՝ ոտքը դուրս պրծավ,- ու դառնում է ինձ:- էդ գրելը մենակ դու գիտե՞ս: Որ Ռուսեթին բրիգադիրությունից հանեցին, կարծում ես՝ տեղը քեռո՞ւդ կդնեն: Ձիդ պահիր:

- Քեռիս ումնի՞ց է պակաս, Բեռլին է գրավել, տասներկու մեդալ ու երեք շքանշան է ստացել:

- Արա՜, վա՛յ թե մարշալ Ժուկովի զամն է եղել: Կարծում ես, թե դրանցից Ռուսեթը քի՞չ ունի: Մարդը արտիլերիստ է եղել: Որ Ռուսեթը արտիլերիայով վրա չտար, քեռիդ ո՞նց Բեռլին կգրավեր:

Հայրս ինքն իրեն խոսելով հեռանում է, և էլի մտքինը քեռիս է: Քեռիս ու Շուշանը: Քեռուս ու Շուշանի մասին տարածված լուրերը:

Ուզում եմ Շուշանին քաղցր խոսք ասել, խոսք չեմ գտնում: Քանի որ Շուշանի համար քաղցր խոսք չեմ գտնում, կպչում եմ Աշխենից: Ասում եմ՝ մարդդ բանջարաբուծությունից այնքան գաղափար ունի, որքան ես՝ երկրաչափությունից կամ քիմիայից. վարունգ է վարել, բայց սեխ է դուրս եկել, էդ տնաշենը վարունգի ու սեխի սերմերն իրարից չի տարբերո՞ւմ: Ասում եմ՝ վայ թե Արմավիրից կարգին խոզապահ էլ չստացվի: Աշխենն ընդունում է իմ մարտահրավերը.

- Արա՜, ընկեր Վաղիկ, դու քո քեռու մասին մտածիր, որ Ռոմեո է դարձել, սարերն ընկել, Ջուլիետ է կանչում: Դու էն մասին մտածիր, որ երկրաչափությունից աշնանային ունես:

Կեսօրին մի անուշ նիրհ է գալիս վրաս, մի անուշ նիրհ... Մոմի նման փափկում եմ, ուր որ է՝ կհալվեմ, կճլճլամ ու կթափվեմ: Պառկում եմ հոնու թանձր շվաքում, թուլացնում խոնջացած, ջարդված, փշրված մարմինս, փակում աչքերս, ու մեկ էլ կարծես երազում, լսում եմ Շուշանի ձայնը.

- Ընկեր Վաղիկ, բա սովա՞ծ չես:

- Մի քիչ քնեմ՝ հետո:

- Տես ինչ եմ բերել՝ սա լավաշ է, սա պանիր է, ես էլ վարունգ ու պոմիդոր:

Աչքովս է ընկնում օղու շիշը:

- Սա քեզ համար չի,- Շուշանը ժպտում է, և ժպիտը ուրախ ժպիտ չէ,- քեզ չի կարելի, դու երեխա ես:

- Բա ո՞ւմ համար է:

- Քեռուդ համար եմ բերել:

- Քեռիս հիմա սարվոր է:

- Գիտեմ: Գնաց ու չասաց, որ գնում է: Դե երևի ճիշտն ինքն է: Բայց պիտի ասեր: Նա ինձանից թաքցնելու բան չունի: էս մեկն էլ քամած մածուն է:

- Որ Շավարշն իմանա...

- Ես Շավարշի հետ հաշիվներս վաղուց եմ վերջացրել,- Շուշանը գլու-

խը հպարտ ետ է գցում, և ես տեսնում եմ, որ նա իսկապես գեղեցիկ է, մտքիս մեջ արդարացնում եմ քեռուս, մեղադրում Շավարշին:- Հա, վերջացրել եմ: Դու երեխա ես, նման բաներից գլուխ չես հանի:

Ես ձայն չեմ հանում: Իմ մեջ երես առած լակոտին փոխարինում է ամոթխած տղան: Հիմա ես իսկապես այն եմ, ինչ որ պիտի լինեմ, ինչ որ եղել եմ, ինչ որ չպիտի լինեմ:

- Շուշան,- ասում եմ,- քիչ առաջ հիմարություններ եմ դուրս տվել: Չպիտի ասեի: Խնդրում եմ ներես:

- Լավ, լավ, պետք չէ, ո՞վ է դրա մասին մտածողը: Կարծում ես՝ չգիտե՞մ, թե իմ մասին գյուղում ինչեր են խոսում: Գնամ կռվե՞մ: էդ էր պակաս: Ախր ես իմ դեմ ո՞նց կռվեմ, ես իմ մեջ ինձ ո՞նց սպանեմ:

Թեթև քամուց հոնու տերևները ծփծփում են: Մի զահուրմար ճիճի կպել ճյուղին, իր ձանձրալի երգն է ծոր տալիս՝ ճի՜, ճի՜, ճի՜, ճի՜... Կերգի, կերգի, այնքան կերգի, որ մեջքը կպատռվի, պատռված մեջքից կամաց-կամաց դուրս կգա դեղնականաչ մի ուրիշ ճիճի, ճյուղն ի վեր կսողա, կպնդի, կամրանա ու իր նախորդի ձանձրալի երգը կշարունակի՝ ճի՜, ճի՜, ճի՜, ճի՜...

- Ճիճիներն ինչո՞վ են սնվում,- հարցս Շուշանին է ուղղված, և նա տարակուսանքով վեր է քաշում ուսերը, որ երևի նշանակում է՝ ճիճիներն այստեղ ի՞նչ գործ ունեն:- Քեռիս ասում է՝ ցողով են սնվում:

- Դու քեռուդ շա՞տ ես սիրում:

- Ես քեռուս հիմա խղճում եմ: Եթե նա իմանա, որ իրեն խղճում եմ, ինձանից կխռովի:

- Ինչո՞ւ ես խղճում:

- Դե ո՜նց ասեմ: Մեկ էլ տեսար ինքդ քեզանից անկախ խղճացիր քո սիրած մարդուն:

- Շավարշին է՞լ ես խղճում:

- Խղճում եմ, բայց երկու ձևի խղճալ կա: Մեկին խղճում ես, որովհետև լավ մարդ է, մյուսին էլ խղճում ես նրա խեղճության համար:

- Գրքերո՞ւմ ես կարդացել:

- Դե չէ, ես դա ասում եմ քեռուս հաշվով:

- Ինձ է՞լ ես խղճում:

- Ասացի, չէ՞, քեռուս հաշվով:

- Իմ հաշիվն ինչո՞ւ ես խառնում քեռուդ հաշվի հետ:

- Չգիտեմ: Ես այդպես եմ մտածում: Կարող է՝ սխալ է, բայց այդպես եմ մտածում: էդ կնանիքը որտե՞ղ են:

- Կտավը լվանում են: Կլվանան, կփռեն արևի տակ, իրենք էլ գետում մի լավ կլողանան և վրաս կթոնթորեն: Թոնթորելուց չեմ վախենում, բամբասելուց չեմ վախենում, ինքս ինձնից չեմ վախենում: Ես աշխարհում միայն մի բանից եմ վախենում:

- Ինչի՞ց:

- Վախենում եմ քեռուդ կորցնեմ: Միայն չկորցնեմ:

- Բա Շավարշը...

- Ես նրան չեմ գտել, որ կորցնեմ:

Ես փակում եմ աչքերս, բայց քունս չի տանում: Բացում եմ՝ Շուշանը չկա, գնացել է կանանց մոտ: Մի զարմանալի թախիծ է իջնում վրաս, ուզում եմ արտասվե՞լ, արտասվել: Ու հանկարծ խղճում եմ ինձ, որ այսքան փխրուն սիրտ ունեմ, փխրուն հոգի, փխրուն մտածողություն: Մարդ էլ այսքան փխրուն լինի ու մարդուն ծուռ աչքով նայի՞:

- Քիթդ կախել ես: Բա՞ն է պատահել,- երեկոյան հարցնում է հայրս:- Թե բան է պատահել, ասա:

- Ի՞նչ պիտի պատահի:

- Աչքիս մի տեսակ ես երևում: Գուցե հոգնել ես:

- Չէ, չեմ հոգնել:

- էդ Շուշանը...,- հայրս նայում է մորս, ծամծմում լեզուն,- ախր բարի սիրտ ունի, ափսո՞ս է: Մենակ չեմ հասկանում, թե մեր Սահակն ինչ է մտածում: Ասում եմ՝ հետները մի կարգին խոսեմ, մեկ էլ մտածում եմ՝ հերն էլ անիծած, իմ ի՞նչ գործն է, իրենք եփել են, թող իրենք էլ ուտեն:

Օգոստոսի կեսերին քեռիս վերադառնում է սարերից:

Օգոստոսի կեսերին Շավարշը բաժանվում է Շուշանից:

Քեռիս կանգնում է մեր բակում, վառում ծխախոտը, դիմում հորս.

- Քեզ հետ խոսելիք ունեմ:

- Դե ի՞նչ ես բակում կանգնել, բարձրացիր՝ տեսնենք:

- Թաքուն բան չի: Ասում եմ՝ գնանք Շուշանին բերենք:

- Հենց հիմա՞: Գուցե սպասենք:

- Ո՞ւմ սպասենք:

- Երեկոյան հարմար կլինի:

- Չէ, հիմա, օրը ցերեկով: Հո գողություն չե՞մ անում: Թող ամբողջ գյուղը տեսնի:

- Վա՛յ թե հարսանիք էլ անես:

- Դե ի՞նչ հարսանիք, հո տերտեր չեմ կանչելու,- քթի տակ ժպտում է:- Սպասիր, որ հարսանիք անեմ, խանգարողն ո՞վ է: Վաղիկը խաչեղբայր կլինի, քավորն էլ մի տեղից կբռնեմ: Հա՛, հարսանիք եմ անում*:

1974 թ.

ԱՌԱՋԻՆ ԿԵՏԸ

Ես և քեռորդիս միասին անցանք կոմերիտմիության շարքերը: Նա ինձանից չորս տարով մեծ էր, բոյը իմի երկու չափ, բռունցքները՝ փթանոցներ, ոտնաթաթերը՝ մի-մի կամեր, մի խոսքով՝ Տորք Անգեղ:

Քեռորդիս հովիվ էր, գիշեր-ցերեկ սարերում, ամիսը հազիվ էր մեկ-երկու անգամ գյուղ գալիս, և այն էլ գործով: Գալիս էր մթերքների համար՝

սարվորներին կարտոֆիլ է հարկավոր, վարունգ, լոլիկ, կաղամբ, սոխ, սխտոր է հարկավոր: Անասունները բերանհարիքից ընկել են, իսկ Պահեստ Սեդրակը աղը սուլֆիդին է շինել, կախել երկնքից: «Օրենք կա, կանոն կա,- քթի մեջ մսմսում է Սեդրակը,- ամեն ինչ հաշվով է»: Քեռորդիս աղը լցնում է ջվալները, բարձում ձիուն ու խփում Սեդրակի տռուզ փորին.

- Բա էդ ինչի՞ հաշիվ-հաշվառքով չես փորիդ նայում, մի գլուխ լափում ես ու չես կշտանում: Օրենք կա, կարգ կա, կանոն կա... Չխոսես, կտամ գլուխդ ջարդեմ, շան որդի:

Եվ մի օր կոմերիտքարտուղար Արտաշը բռնեց քեռորդուս, թե՝ առաջավոր հովիվ ես, առաջավոր երիտասարդ, բայց մինչև հիմա կոմսոմոլ չես, ի՞նչ ես մտածում: Մի քիչ էլ ամոթանք տվեց, ինչ-որ տեղից ցիտատներ բերեց: Քեռորդիս եկավ մեր տուն, թե՝ մի դիմում ինձ համար գրիր, մեկն էլ քեզ համար, կոմսոմոլ կդառնանք և Պահեստ Սեդրակի հերը կանիծենք:

Ես այն ժամանակ սովորում էի յոթերորդ դասարանում, դրամատիկական խմբակի ակտիվ անդամ էի, մեկ-մեկ ոտանավորներ էի գրում, ուղարկում «Սովետական Ղարաբաղ» թերթին, բայց չէին տպագրում: Որոշել էի կամ գրող դառնալ, կամ դերասան:

Երեք օրից հետո կոմերիտական ժողով արեցին, հրավիրեցին ֆերմայի վարիչ Մանուկին, թե՝ ի՞նչ կասես Մանվել Պետրոսյանի մասին:

- Մանվելը լավ տղա է,- ասաց Մանուկը,- մեր ֆերմայի աչքն է: Համա մեկ-մեկ ջահելություն է անում: Անցած օրը... ամոթ չլինի ասելը, աքլորի ետևը յուղ է քսել, որ չկանչի:

Պայթեց ծիծաղը: Մանուկը զարմացած շարժեց ուսերն ու շարունակեց.

- Ի՞նչ եք քրքջում, սար տեղ է, մեր ժամացույցն էլ աքլորն է, աքլորը մինչև չկանչի, տղերքը չեն արթնանա: Դե, ախր, հասկացեք, աքլորը ետևից խեղճ կենդանի է, հենց որ յուղ ես քսում, չի կանչում: Մի խոսքով, Մանվելը մեր ֆերմայի աչքի լույսն է:

Մի շաբաթ անց, ես և Մանվելը ճանապարհվեցինք Ստեփանակերտ: Նա հագել էր իր նոր տաբատը, դոշից կախել «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշանը, մաքուր թրաշվել:

- Հը՛, ինչպե՞ս է, կոմսոմոլի սֆաթ ունե՞մ:

Ես նրան հարցրի.

- Կանոնադրության առաջին կետն ի՞նչ է ասում:

Քեռորդիս հարցը ականջի ետևը գցեց, նայեց սարերին:

- Էլի թխպել է, վերևներում անձրև է գալիս:

- Կանոնադրության առաջին կետը...

Էլի չլսելուն դրեց:

- Վաղն էլի աղ պիտի տանեմ, տավարը բերանհարիքից ընկել է: Իսկ աքլորի ետևը յուղ քսելը սուտ է, Մանուկի սարքածն է: Համա դուք էլ հռհռացիք, հա՞, բերանբացնե՞ր:

- Ընկեր Պետրոսյան, կանոնադրության առաջին կետն ի՞նչ է ասում:

Քեռորդիս բռնեց ուսս, սեղմեց, ոսկորներս ճռճռացին:

- Սրան նայեցե՞ք, հարվածային նախրապահ Մանվել Պետրոսյանին հուպ է տալիս: Կանոնադրության առաջին կետն ասում է... Ուրեմն կանոնադրության առաջին կետն ասում է... Սպասիր հիշեմ:

- Չիմացար: Ո՞վ է Սովետական Միության առաջին մարշալը:

- Ընկեր Չապայովը:

- Նախ Չապայով չի, Չապաև է... Հետո էլ, ընկեր հարվածային հովիվ Մանվել Պետրոսյան, Չապաևը մարշալ չի եղել:

- Եղել է: Չապայովն իսկական մարշալ է, ամենամեծ մարշալը: Կինոն տեսել եմ: Կուտուզովն էլ է մարշալ, ընկեր Սուվորովն էլ: Դոշները մեդալներով լիքն են:

- Չէ, Մանվել, խառնում ես, շատ ես խառնում: Դու այդ մակարդակով ինչպե՞ս կարող ես դառնալ կոմերիտական: Կենսագրությունդ պատմիր:

- Արա՜, դմբոյի մեկը, ես ի՞նչ կենսագրություն ունեմ, որ պատմեմ: Գրող չեմ, մարշալ չեմ, վարժապետ չեմ: Իսկ դու քիթդ շատ մի գցիր: Ի՜նչ անենք, թե թատրոն ես խաղում և ոտանավորներ գրում: Տես, է՜, սարերը թխպել են:

Մանվելի միտքը նորից սարերում է: Սարերում զուլալ աղբյուրներ կան, ծաղիկներ կան սարերում և կթվորուհի Սաթեն: Սաթենը հաստ-հաստ ծամեր ունի, այտի վրա սև խալ ու զնգուն ծիծաղ ունի: Սաթենը վազում է ցողոտ-շողոտ խոտերի միջով, բռնում խելառ հորթի ականջն ու քաշում: Սաթենը խնոցին դնում է ոտքերի արանքում, ցնցում կուրծքը, և վիզը դառնում է վարդագույն:

Սաթենը նայում է քեռուս ու վրա պրծնում.

- Խելառ, ուրիշ բան ու գործ չունե՞ս, ի՞նչ ես տնկվել ու չտեսի պես աչքերդ պլշել:

Սաթենն ամեն երեկո ջուր է տաքացնում, լցնում տաշտի մեջ և ասում.

- Մանվել, բեր ոտքերդ լվանամ:

Սաթենը խուտուտ է տալիս Մանվելի կրունկը, Մանվելը ծուլ է լինում ու քրքջում:

Մենք քայլում ենք քաղաքի մայթերով, և քեռորդիս այլևս ուշադրություն չի դարձնում իր նոր տաբատին, կրծքանշանին, գեղեցիկ, իր ձեռքով գործած երեք քթանի տրեխներին: Միտքն ուրիշ տեղ է:

Մտնում ենք կոմերիտշրջկոմի շենքի միջանցքը, նայում պատերից կախված նկարներին ու պլակատներին: Ես ինձ մի տեսակ վատ եմ զգում. ո՜վ գիտե, մեկ էլ տեսար չկարողացա պատասխանել հարցերին, խայտառակվեցի: Վերհիշում եմ կանոնադրության առաջին կետը, երկրորդը, երրորդը ու հրում Մանվելի կողը:

- Առաջ դու մտիր:

Քարտուղարը ջահել աղջիկ է: Նա ցույց է տալիս մեզ պատի տակ շարած աթոռներն ու գրիչը թղթին ճռճռացնում: Ներս են մտնում պեպենոտ դեմքով մի տղա, երկու աղջիկ և նորից մի տղա: Բյուրոյի անդամներն են: Քեռորդուս միտքը փախել է սարերից և հիմա այստեղ է: Նա արմունկով հրում է ինձ:

- Համա ի՜նչ աղջիկ է... Սաթենը դրա մուշտլուղը չարժե: Ի՜նչ սիրուն քիթ ունի: Բա Սաթենի նմա՞ն...

- Ամո՛թ է,- ասում եմ,- կլսի:

- Լավ աղջիկ է, բայց դե սեխի լավը չախկալն է ուտում:

Քարտուղարը ցած է դնում գրիչը, նայում քեռուս:

- Ուրեմն հրաձի՞գ եք:

- Հա,- Մանվելը գլխով է անում,- տիրով լավ նշան եմ բռնում:

- Քանի՞ աշխօր ունեք:

- Երկու հարյուր հիսուն չգիտեմ քանի...

- Իսկ ինչո՞ւ մինչև հիմա չեք անցել կոմերիտմիության շարքերը:

Մանվելը շփոթվում է:

- Դե ոնց ասեմ, չոբան մարդ եմ, գիշեր-ցերեկ սար ու ձորում:

Քարտուղարը ժպտում է և ձախ այտին գոյանում է մի սիրուն փոսիկ: Պեպենոտ դեմքով տղան հարցնում է.

- Ընկեր Պետրոսյան, ինչի՞ համար եք անցնում կոմերիտմիության շարքերը:

- Արտաշը բռնեց, թե՝ դիմում գրիր...

- Իսկ եթե Արտաշը չասեր, չէի՞ք գրի:

- Արտաշը քարտուղար է, հո ամեն մարդու չի ասում, թե դիմում գրի:

- Լավ, կարո՞ղ ես ասել՝ ո՞վ է Սովետական Միության արտաքին գործերի մինիստրը:

Եթե այդ պեպենոտ դեմքով տղան, որ կյանքում ոչ մաճ է բռնել, ոչ հունձ է արել, ոչ էլ թրջվել է անձրևի տակ, մի ուրիշ տեղ ընկնի Մանվելի ձեռքը, Մանվելը նրան հում-հում կուտի: Բայց հիմա հարվածային նախրապանը խեղճացել, ծամծմում է լեզուն:

- Ներողություն,- ասում է,- ընկեր ջան, շա՞տ չեք խոր-խոր տեղերից բռնեցնում: Ես չոբան մարդ եմ, հարցրու, թե անասուններն ինչպես կարածացնեն, ինչպես են յուղ ու պանիր սարքում, ինչո՞ւ շունշանորդի Պահեստ Սեդրակին չեն քշում պահեստից, էդ ո՞նց է, Դալաքենց Սարոն չի քրտնում, բայց բոլորից շատ է աշխօր ստանում: Թե չէ՝ ո՞վ է Սովետական Միության արտաքին գործերի մինիստրը: Դե լավ, դու կարո՞ղ ես ասել, թե ով է մեր կոլխոզի ֆերմայի վարիչը:

Նստածներն աշխուժանում են: Քարտուղարը դուրս է գալիս գրասեղանի ետևից, մոտենում քեռորդուս:

- Մանվել, դու լավ տղա ես,- ասում է,- համարձակ տղա ես: Ինձ մի անգամ կտանե՞ս քեզ հետ ձեր սարերը:

- Չէ, չեմ կարող:

- Ինչո՞ւ:

- Ինչ իմանամ, մեկ էլ տեսար՝ ընկար անձրևի տակ, մրսեցիր, հիվանդացար: Սարը քո տեղը չի: Սարը Սաթենի տեղն է: Սաթենն անձրևի տակ էլ ընկնի, կարկուտի տակ էլ, սովոր է, կդիմանա: Քո բանն ուրիշ է:

Քարտուղարը չարաճճի ժպտում է:

- Իսկ Սաթենն ո՞վ է:

- Աղջիկ է, էլի: Նրա տեղը գյուղն է, քաղաքում մի օր էլ չի դիմանա:

- Քաղաքի և գյուղի տարբերությունը վերանում է,- նկատում է պեպենոտը:

- Թող վերանա,- չարանում է քեռորդիս,- բայց ինձ հետ անասուն կպահե՞ս, կով կկթե՞ս, աքլորականչին կարթնանա՞ս: Չես անի, մեջքդ բարակ է, շատ է բարակ: Երևում է՝ Պահեստ Սեդրակի նման կյանքում չես քրտնել: Պիտի քրտնես, որ քրտնողին հասկանաս:

Չէ, քեռորդիս իսկապես համարձակ տղա է: Պեպենոտը կարմրում, կախում է գլուխը, կողքի նստած աղջիկը խայթում է:

- Հը՛, կերա՞ր, համո՞վ է:

Քարտուղարը սեղմում է քեռորդուս ձեռքը, հանձնում կոմերիտական տոմսը և կրծքանշանն ամրացնում «Վորոշիլովյան հրաձիգի» կողքին:

Հերթն ինձ է հասնում: Պատասխանում եմ բոլոր հարցերին, իսկ այդ պեպենոտը որոշում է քեռորդուս վրեժն ինձնից առնել, և հարցնում է.

- Օհանյան, ո՞վ է Սպարտակը:

Եթե իմ փոխարեն Մանվելը լիներ, երևի ասեր՝ Սպարտակը մեր կոլխոզի հաշվապահն է:- Ես պատասխանում եմ.

- Գլադիատոր է, ղեկավարել է ստրուկների ապստամբությունը:

- Քաղաքացիական պատերազմի հերոսներից ո՞ւմ գիտես:

- Չապաև, Լազո, Շչորս, Դունդիչ, Պարխոմենկո, Կոտովսկի...

- Հասկանալի է,- գլխով հավանություն է տալիս քարտուղարը,- իսկ ի՞նչ գրքեր ես կարդացել:

Թվարկում եմ կարդացած գրքերը, իսկ քեռորդիս կախարդվածի պես նայում է քարտուղարին: Սաթենը նրա համար հիմա չկա, չկան սարերը:

Մենք տուն ենք վերադառնում: Քեռորդիս առջևից՝ իր մտքերի հետ, ես՝ ետևից:

- Ուրեմն քաղաքի և գյուղի տարբերությունը վերանո՞ւմ է,- հարցնում է նա:

- Վերանում է,- պատասխանում եմ:

- Ուրեմն էդ սիրուն քարտուղարը կարո՞ղ է կով կթել:

- Կարող է:

- Իսկ նա կնշանվի՞ ինձ հետ:

- Եթե սիրի...

- Եթե սիրի՜,- հառաչում է քեռորդիս:- Բայց չի սիրի... է՜, ով գիտե աշխարհի բանը, գուցեև սիրեց,- քայլերն ուղղում է խանութի կողմը:- Գնամ Սաթենի համար մի դուխի առնեմ: Ի՞նչ ես բերանդ բացել, Սաթենը էդ քարտուղարից հազար անգամ սիրուն է: Բերանբացնե՜ր, հենց որ քաղաքի մի օրիորդ են տեսնում, հայիլ-մայիլ են դառնում: Ախր, Սաթենը ուրիշ աղջիկ է, ուրիշ են Սաթենի աչքերն ու հոնքերը: Հարսանիք կանենք, դու էլ խաչեղբայր կլինես: Սկի մեր գյուղում քեզ նման տղա չկա: Հալալ լինի, հարցերին լավ պատասխանեցիր: Բա ո՜նց, թիկունքիդ գիտե՞ս ով է կանգնած՝ քո քե-

ռու տղան՝ հարվածային նախրապան Մանվել Պետրոսյանը,- ձեռքը տանում է դեպի ծոցագրպանը, շոշափում է կոմերիտական տոմսը:- Ինչի՞ համար եմ կոմերիտական դառել... Կոմերիտական եմ դառել, որ խոսքը ճակատին ասեմ, Պահեստ Սեդրակի հերն անիծեմ, բռնեմ Դալաքենց Սարոյի բկից ու ասեմ՝ հերիք է, քիչ գլուխ պահիր, ավազակ... էդ է կանոնադրության առաջին կետը:

1971 թ.

ԹԱՏՐՈՆ

Թատրոնը սիրուն աղջկա պես սիրտս էր մտել, դուրս չէր գալիս: Մեր գյուղի՝ պատերը խարխլված, հատակի տախտակներն իրարից խռոված, իր ծանրությունից ճկռած բեմում Սեյրան էի, Սոս էի, Բարխուդար, Գզիր Մուկուչ, Ասլան ամի, Պեպո էի: Հետո դարձա Օթելլո, հարձակվեցի ինձանից տասը տարով մեծ, իմ քաշից երկու անգամ ծանր ընկեր Սիրանի վրա, որ օթելլոյավարի խեղդեմ: Ընկեր Սիրանը Դեզդեմոնա չէր, մսագունդ էր, ճարպագունդ էր, ջադու էր, դպրոցի աշակերտների աչքի փուշն էր: Դահլիճում մի լակոտ ծղրտաց. «Խեղդի՜ր, խեղդի՜ր դրան, թող տեղը ուրիշ դասատու բերեն, հոգիներս հանեց էդ կռապաշտը»: Ամռան հնձից, կալից, խոտհարքից բեզարած, կիսարթուն, կիսաքուն հանդիսատեսը ծիծաղեց, և ներկայացումը խանգարվեց, էլ շարունակելու միտք չկար: Իմ Օթելլոն խեղճացել, մատաղի գառ էր դարձել, իսկ ընկեր Սիրանը խեղդվելու միտք չուներ, քրքջում էր ու ինձ ձեռ առնում. «Օհանյան, քո հերն անիծած, առյուծ էիր կտրել, դե հիմա ձենդ կտրի, չխոսե՛ս»:

Առավոտյան դպրոցի դիրեկտոր ընկեր Հակոբ Խանումյանը ինձ կանչեց ուսուցչանոց, ծխախոտ առաջարկեց ու սկսեց. «Օհանյան, պիեսը հակադաստիարակչական է, ուսուցչուհուն բեմում, մասսայի աչքի առաջ խեղդելը՝ հակամանկավարժական, քո Օթելլոն՝ հակահասարակական: Կարգին պիես չե՞ք գտել, որ «Օթելլո» եք խաղում: Մեզ ժամանակակից, կոլտնտեսային կյանքն արտացոլող, բարձր մակարդակի պիեսներ են հարկավոր և ոչ թե «Օթելլո»: Ասացի՝ «Ներողություն, ընկեր Խանումյան, Պետրոս Ադամյանն իր ժամանակին Օթելլո է խաղացել, Հովհաննես Աբելյանը խաղացել է, Վահրամ Փափազյանին գիտե՞ս...»: «Գիտեմ, գիտեմ,- ասաց,- դու քեզ նրանց հետ մի համեմատիր»:

Մենք կարգին վիճեցինք, ընկեր Խանումյանն ինձ մեղադրեց նատուրիալիզմի մեջ, ես ընկեր Խանումյանին մեղադրեցի գավառացիության մեջ, նա ինձ անվանեց դեմագոգ, ես իրեն՝ դոգմատիկ, հետո նա գլուխն օրորեց ու ձեռ առավ ինձ. «Ընկեր Օթելլո, հիշում ես, չէ՞, քիմիայից «երկու» էիր, բայց ես քեզ «երեք» նշանակեցի»:

- Դու քո քիմիայով ինձ խեղդել ես,- պատասխանեցի,- աշնանային ես թողել: Դիտավորյալ կերպով, հաշիվ էիր մաքրում: Հիմա ասա տեսնեմ՝ ե-թե «Օթելլոն» հակադաստիարակչական է, ինչո՞ւ Վահրամ Փափազյանը խաղում է:

- Դու Վահրամ Փափազյան չես,- ոտքը հատակին խփեց ընկեր Խանումյանը:

- Իսկ դու էլ Մակարենկո չես,- պատասխանեցի ու դուրս եկա ուսուցչանոցից:

Բրիգադիր Սմբատը դպրոցի բակում ինձ էր սպասում:

- Ա՛յ տղա, ա՛յ տղա,- ասաց,- ընկեր Օթելլո, ընկեր Պեպո, բոստանները չորանում են, բա օրվա էս ժամին ջրվորը տանը կլինի՞: Կաղնուտի լոբու հալը հալ չի, ջուր է ուզում, ջո՜ւր...

- Դե քեզ էլ, քո լոբին էլ,- բարկացա,- գնա քեզ համար ջրվոր գտիր, ես գնում եմ:

- Ո՞ւր ես գնում, գյուղից քոչո՞ւմ ես:

- Քաղաք եմ գնում, թատրոն:

- Բա որ չընդունեցին:

- Բա որ ընդունեցին:

- Լավ ռոճիկ կստանաս,- Սմբատը մի ծխախոտ է փաթաթում,- գատովի պապիրոս կքաշես, գալոստիկ կկապես, շլյապա կդնես, քաղաքի փողոցում ինձ կհանդիպես, մարդատեղ չես դնի... Կաղնուտի լոբուտը չորանում է:

- Թող չորանա:

- Ճակատդ չեն պաչի:

- Թատրոնից կհանե՞ն:

- էդ երբ ընդունեցին, որ հանեն,- Սմբատը ծիծաղում է:- Դե որ լավ չխաղաս, կհանեն ու կասեն՝ գնա բոստանդ ջրի: Բայց դեռ չեն ընդունել:

- Բա որ ընդունեն:

- Բա որ չընդունեն:

- Կգամ լոբուտը ջրեմ, խամուտում բահով կտամ, պոմիդորի ու վարունգի կողովները կշալակեմ, որ դու միշտ էդպես առաջավոր մնաս: Սմբատ, էդ ինչի՞ց է, որ միշտ առաջավոր ես:

- Կնիկս սիրուն է, դրա համար էլ առաջավոր եմ:

- Չէ, չէ, հանաքը մի կողմ:

- Թատրոն չեմ խաղում, այ տղա, աշխատում եմ, աշխատում: Ես քո չորս օրվա արած գործը մի օրումն եմ անում: Մեծ-մեծ խոսում ես, բա ինչի՞ չկարողացար ընկեր Սիրանին խեղդել:

- Որ դու լինես իմ տեղ, կխեղդե՞ս:

- Բա աչքն էլ չեմ հանի՜...

Տնաշենիդ կնիկն էնպես լենք է տվել... Ամառվա այդ ճնճռնոցին իմ Օթելլոն խեղճանում է, ճապաղում, ընկեր Սիրանի Դեզդեմոնան ներսումս սրտխառնուք է առաջացնում: Եվ լավ կլինի, որ ընկեր Խանումյանը կող-

քիս լիներ, բահի կոթով մեջքին տայի ու ասեի. «Որտե՞ղ է քո քիմիան, քո տված գիտությունը որտե՞ղ է. տեսնում ես, չէ՞, տարրական կրթությամբ Սմբատը վրաս գոռում է՝ ընկեր Օթելլո, ընկեր Պեպո, ընկեր Սեյրան, սա քեզ համար թատրոն չի, բոստան է, բոստան...»:

Ուղեղիս մեջ հալած մոմ է ճլճլում, և դա տոթից չէ, արևի ճնճռնոցից չէ, մտքերից է, ջրվոր լինելուց է, որ հարցականի տակ է դրել իմ Սեյրանը, Սարոն, Սոսը, Պեպոն և Օթելլո՞ն, ընկեր Սիրանի յոթ փթանոց մարմինը ու այն լակոտի ճիչը՝ «Խեղդի՞ր, խեղդի՞ր դրան, թող տեղը ուրիշ դասատու բերեն, հոգիներս հանեց էդ կռապաշտը»: Բայց եթե ճիշտը դատելու լինենք, իմ Օթելլոն էլ Օթելլո չէր, գյուղում մեծացած մեծամիտ, լոպպազ լակոտ էր, և ով էլ որ լինի, պիտի զարմանա, թե էս սիրուն շան լակոտ Օթելլոն ինչպե՞ս է սիրահարվել յոթ փթանոց, էդ լխկած Դեզդեմոնային:

Սմբատը ռեհանի համար նոր ածուներ է պատրաստում: Նա այդ գործում վարպետ է, հողը տափանում է, բազուները բարձրացնում, միջնարխը ձգում, ձգում. նայում ես, ոնց որ տողաշարը դրել, գծել է՝ ուղիղ, սիրուն, կոկիկ, հավաք: Ցուռ տեղ չունի:

Սմբատը մեր գյուղի առաջին բանջարաբույծն է, երկու անգամ գյուղատնտեսության համամիութենական ցուցահանդեսին մասնակցել է, և մենք նրան նստեցրել ենք ակումբում, թե Մոսկվայում ինչ որ տեսել ես, պատմիր լսենք:

- Ա՜յ լակոտներ,- Սմբատը ծիծաղից թուլացել է,- ի՜նչ կնանիք, ի՜նչ կնանիք, ի՜նչ հարսներ, ի՜նչ աղջիկներ, ի՜նչ օրիորդներ... նայում ես՝ բերանիդ ջրերը վազում են,- ու Սմբատը չգիտեր, որ կինը՝ Սաթոն, ետևի շարքում նստած է, գույները սկսեց թանձրացնել:- Ա՜յ լակոտներ, ուրիշ տեղ բան չխոսեք,- ու ձայնն իջեցրեց,- էնտեղ մի սիրուն հարս եմ գտել, անունը Նատաշա է:

Սաթոյին էլ այդ էր հարկավոր, տեղից վեր թռավ:

- Ապրե՛ս, ապրե՛ս,- գոչեց,- քեզ էլ ճանաչեցի: Արա՜, ընկեր բրիգադիր, դու ցուցահանդեսին մասնակցելո՞ւ ես գնացել, թե՞ կանանց հետ ժամադրվելու: Կգաս տուն, ես քոնը քեզ կտամ:

Սմբատը բահը տնկում է արխի կողքին, ծխախոտ փաթաթում:

- Ընկեր Օթելլո, ջուրդ ոնց որ վարար ես կապել, արխերը կքանդի:

- Թող քանդի,- պատռում եմ արխի բերանը,- ես վաղը գնում եմ:

- Մոսկվա՞...

- Մոսկվա, Նատաշային բարև չե՞ս ուղարկում:

- Նատաշան քեզ բանի տեղ կդնի՞ որ...

- Հասցեն կտաս,- ասում եմ,- նկարդ էլ կտաս: Վաղը գնում եմ:

- Թատրո՞ն:

- Թատրոն:

- Բա որ չընդունեցին:

- Բա որ ընդունեցին:

- Օթելլո չխաղաս, Օթելլոն քո բանը չի: Սեյրան, ոչինչ, կարելի է: Սոսը, այ տղա, Սոսը քեզ լավ է բռնում, էն երգը է՞, էն երգը, որ երգում ես՝ Ձմռան կեսին, Վարդիթեր, Մի փունջ մանուշակ եմ բերել... Տես, հա՞, մեր շենի անունը բարձր կպահես:

- Շնորհակալ եմ բարի խորհուրդների համար:

- Խաղալու ժամանակ հուշարարի կողմը չնայես: Հուշարար չկա, էդ մեկը մտքիցդ հանիր: Պարզ խոսիր, որ խոսքդ տեղ հասնի:

- Սմբատ, չի՞ լինի, որ քեզ էլ տանեմ, վրաս ռեժիսորություն անես:

Սմբատը բահը շպրտում է իմ կողմը.

- Դե՛ գնա, քո լոպպազ հերն անիծած...

* * *

Ես ներկայանում եմ գլխավոր ռեժիսորին: Այդպես միայն հռչակավոր դերասանն է ներկայանում հռչակավոր ռեժիսորին: Նա միջահասակ, փոքրիկ բեղով, կապույտ աչքերով տղամարդ է: Ինձ դուր է գալիս նրա վարդագույն փողկապը, ժպիտը, թավշյա ձայնը:

- Հիմա մենք դերասանի ազատ տեղ չունենք,- ասում է,- բայց մեկ-մեկ, բացառության կարգով... Հասկանո՞ւմ ես, բացառության կարգով: Ի՞նչ կրթություն ունեք:

- Միջնակարգ եմ վերջացրել:

- Ինքնագործ խմբերում խաղացե՞լ եք:

- Խաղացել եմ:

- Ի՞նչ եք խաղացել:

- Սեյրան, Սարո, Ղաչաղ Արսեն, Աբիսողոմ աղա, Էլիզբարով, Գզիր Մուկուչ, Պեպո, Մինթոն...

- Մի ոտանավոր արտասանիր:

Արտասանում եմ Թումանյանի «Մարոն»:

- Կատարածդ դերերից մի բան խաղա:

Ասում եմ.

- Մի Ձիմզիմով տուր՝ Պեպո խաղամ, մի Սուսան տուր՝ Սեյրան խաղամ, մի Դեզդեմոնա տուր՝ Օթելլո խաղամ:

- Օթելլո՞,- զարմանում է,- դա շատ չի՞:

- Շատ է,- համաձայնում եմ,- Օթելլո չեմ խաղա:

- Իսկ Համլետ կխաղա՞ս:

- Չէ, տակիցը դուրս չեմ գա:

- Եղավ,- ռեժիսորը հավանություն է տալիս:- Գյուղում ի՞նչ էիր անում:

Ասում եմ՝ յոթ փթանոց Դեզդեմոնա էի խեղդում: Վիզն այնքան հաստ էր, որ խեղդելիս ես էի խեղդվում: Իմ Օթելլոն գյուղացի տղա էր, չկարողացավ մարդկանց հավատացնել, որ ինքն իսկապես Օթելլո է: Քարաշենում Սոս է լինում, Սեյրան է լինում, Պեպո է լինում, Էլիզբարով է լինում, բայց Օթելլո չի լինում: Քարաշենցի Օթելլոն, թե որ լինի էլ, մի թաշկինակի համար կնոջը չի խեղդի: Բրիգադիր Սմբատ Աթանեսյանը երեկոները խաղս հավանում էր,

ցերեկները գլխիս կանգնում ու սկսում՝ ընկեր Պեպո, ընկեր Համլետ, ընկեր Սեյրան, ընկեր շան որդի, ռեհանի ածուներն այդպես չեն ջրում:

- Պարզ է, պարզ է,- ռեժիսորը կամ տեղ է շտապում, կամ ուզում է ինձ գլխից ցանել, նայում է ժամացույցին.- Վաղը կանցնես. եթե կարողացար քեզ փորձնական շրջանում արդարացնել, ինչու չէ, դեր կստանաս:

Փորձնական շրջանը բանվորություն էր, բեմի բանվոր: Իշխանական դղյակներ եմ քարշ տալիս, պարիսպներ եմ տեղահան անում, ծառեր եմ շալակում, թագավորների համար պալատներ եմ կառուցում, բեմում սարեր եմ կանգնեցնում: Սրանք թատրոնի լեզվով կոչվում են դեկորացիաներ, իսկ մեր ավագը, որ նույնպես մի ժամանակ երազում էր դերասան դառնալ, ասում է՝ դեկլարացիաներ: Ռեժիսորն ուղղում է՝ ա՛յ տղա, դեկլարացիան ուրիշ բան է, դեկլարացիանե՞ր, դեկորացիաներ ասա: Մեր ավագը դիտմամբ էլի դեկլարացիաներ է ասում:

Ազատ ժամանակներ էլ եմ ունենում, մի անկյունում նստում, դերասանների վիճաբանություններն եմ լսում: Բոլորն էլ ուզում են կոչում ստանալ՝ վաստակավոր, ժողովրդական: Կուլիսների ետևում իրար ձեռ են առնում, բեմում համբուրվում:

Մի ամսից հետո դեր ստացա ու հիասթափվեցի: Դա ընդամենը մի նախադասություն էր, վիզս խեղճ-խեղճ պիտի ծռեի ու ասեի. «Խազեին, խոստացել ես վարձս տալ, բա ինչի՞ չես տալիս»: Այս խազեինն էլ ոտքով պիտի հասցներ նստատեղիս ու պատասխաներ. «Ա՛ռ, էս էլ քո վարձը»: Իսկ ես որտեղի՞ց իմանայի, որ բրիգադիր Սմբատը գյուղից վեր էր կացել եկել՝ խաղս դիտելու: Դեռ կոլտնտեսային շուկայից էլ մի մեծ ծաղկեփունջ էր գնել, որ վերջում, երբ հանդիսատեսն ինձ ծափահարի ու բեմ կանչի, ինքն իր ձեռքով ծաղկեփունջը մատուցի ինձ ու ասի. «Քարաշենի կոլտնտեսության աշխատավորության անունից...»: Իհարկե, ինձ բեմ չկանչեցին, Սմբատը ծաղկեփունջը նվիրեց մի անծանոթ կնոջ, թատրոնի բակում կանգնեց դիմացս, մի շառաչուն ապտակ քաշեց ու ասաց.

- Ես քո տեղը ամաչեցի, գետինը մտա, ամոթից կիսաջան եղա: Էդպես լավ չէր, ձեռքդ մեկնեիր քո էդ ռեժիսորին ու ասեիր. «Խազեին ջան, քո հերն անիծած, խոստացել էիր ինձ կարգին դեր տալ, բա ինչի՞ չտվեցիր»: Քո ռեժիսորը հիմա ես եմ, էդ հարցն ինձ ես տվել: Գիտե՞ս ինչ կպատասխանեմ՝ գնա բոստանդ ջրիր, թատրոնը քո տեղը չի:

Դա օգոստոսին էր. թատրոնը թողեցի, Սմբատի հետ վերադարձա գյուղ: Նա առջևից, ես՝ ետևից: Ոնց որ Թումանյանի «Գիքորի» մի նոր, ժամանակակից տարբերակ էինք խաղում: Համբոն եկել՝ Գիքորին քաղաքից գյուղ է տանում: Ես վիզս ծռում եմ Գիքորի հանգով ու ասում. «Ապի, մեր գեղում ի՞նչ նորություններ կան»: Սմբատը շուռ է գալիս ապտակ քաշելու, բայց միտքը փոխում է, չի ապտակում, փոթկացնում է ու ասում.

- Ընկեր Օթելլո, տավարիշչ Պեպո, ամիրխանգո Ղաչաղ Արսեն, խնդրում եմ մայմունություն չանես,- և փոշմանում է ապտակի համար.- Ա՛յ տղա, չդիմացա, ապտակ քաշեցի: Ախր, դա քո դերը չէր, մեղքս եկար: Բայց

դե խոսք չունեմ, վատ չէիր խաղում,- Սմբատը և նալին է խփում, և մեխին է խփում,- իմ արևը, ինձ դուր չեկար, խաղդ խաղի նման չէր, մասխարա էր: Քո էդ ռեժիսորն էլ շան որդի է, մի կարգին դեր չկա՞ր, որ էդ մասխարայությունը գլխիդ կապեց... Այ տղա, իմ արևը, ախր տաղանդ ես, կորչում ես...

Թատրոնի պատմությունը սրանով չվերջացավ: Սմբատը գյուղում տարածեց, թե իբր պետական թատրոնում ես Սեյրան եմ խաղացել, և ի՞նչ ծափահարություններ, ի՞նչ ծաղկեփնջեր, ինչ ցնծություն, ի՞նչ բիսեր, եվ լավ է հորինում, շատ լավ է հորինում, իսկ եթե որևէ մեկը կասկածանքով հարցնում էր՝ է՞, լավ, բա թատրոնն ինչի՞ թողեց, Սմբատն իսկույն գտնում էր պատասխանը՝ անխելքությունից, անխելքությունից, ինքն իր արժեքը չհասկացավ, չկարողացավ գնահատել իր տաղանդը: Ռեժիսորն իմ ներկայությամբ այսպես էլ ասաց. «Ա՛յ տղա, գոնե, մի ամիս էլ մնա, վաստակավորի կոչումը դոշիցդ կախիր, ուր ուզում ես՝ գնա...»:

Ես մի տեսակ անհարմար եմ զգում, ասում եմ՝ Սմբատ, հորինում ես, հորինում: Նա գլուխը թափահարում է. «Թողնեմ՝ գյուղի բերանում մատի փաթաթա՞ն դառնաս: Իմ այս հորինելու մեջ իմաստ կա, էդ հասարակ բանը չե՞ս հասկանում»:

- Ի՞նչ իմաստ:

- Ժողովում հարց կբարձրացնենք՝ տաղանդավոր արտիստ ունենք, բայց կարգին ակումբ չունենք: Մենք մինչև նոր ակումբը սկսենք, կառուցենք, վերջացնենք, դու թատերական ինստիտուտ կընդունվես, կավարտես, մենք էլ նոր ակումբի անունը կուլտուրայի պալատ կդնենք, քեզ էլ դիրեկտոր նշանակենք... Խնդրեմ, սիրտդ որքան ուզում է՝ Դեզդեմոնա խեղդիր...

- է՞, բա որ չընդունվեցի:

- Բա որ ընդունվեցիր...

Բայց իսկապես չընդունվեցի: Չէ, սխալ կլինի ասել՝ քննությունից կտրվեցի: Ասացին՝ մի բան խաղա, մի քիչ Պեպո խաղացի, մի քիչ էլ՝ Սեյրան: Ասացին՝ քո ծանոթներից մեկին նմանարկիր, Սմբատն իսկույն միտս ընկավ. «Ա՛յ տղա, ա՛յ տղա, ընկեր Օթելլո, ընկեր Պեպո, տավարիշչ ռևիզոր, ամիրխանգո Ղաչաղ Արսեն, յոլդաշ Գյուլումսարով, ես քո տեղն ամաչեցի, ամոթից գետինը մտա, կիսաջան եղա... էդպես լավ չի, ձեռքդ մեկնիր էդ քննող դասախոսին ու ասա՝ մեծ բան չեմ ուզում, մի «երեք» նշանակիր, որ դերասան էլ չդառնամ, ոչինչ, մենակ մեր գյուղում ակումբի նոր շենք կառուցեն»:

Քննող դասախոսը բռնեց փորն ու ծիծաղեց: Ես էլ իմ փորը բռնեցի ու սկսեցի նրա հանգով ծիծաղել:

- Դու կոմիկ ես,- ասաց քննող դասախոսը,- «հինգ» եմ նշանակում:

- Ո՛չ, ես կոմիկ չեմ,- այստեղ էլ ես ծռվեցի,- խնդրում եմ ինձ «հինգ» չնշանակես:

- Կոմիկ ես,- ձայնը բարձրացրեց դասախոսը,- տաղանդավոր կոմիկ ես:

Ներսումս քնած համլետները, օթելլոները, արբենինները, պեպոները, մակբեթները, ռիչարդները միանգամից արթնացան և ինձ հետ ըմբոստացան:

- Կոմիկ չեմ, ես կոմիկ չեմ,- բղավեցի,- ես Օթելլո եմ, Համլետ եմ, Պեպո եմ, Մակբեթ եմ...

- Այ տղա,- դասախոսը ձեռքը դրեց ուսիս,- ախր, շա՜տ ես բնական, շա՜տ ես ինքնատիպ, պատրաստի կոմիկ ես, արի ձեռքիցդ բռնեմ, տանեմ ուզածդ թատրոնը...

- Շատ շնորհակալ եմ,- ասացի,- քո լավությունը չեմ մոռանա, ինձ զոռով կոմիկ սարքեցիր:

Առավոտյան ավտոբուս նստեցի, երեկոյան հասա գյուղ:

- Ա՛յ տղա, ընդունվեցի՞ր,- հարցրեց Սմբատը:

- Ընդունվելը ընդունվեցի, բայց...

- էլ ոչ մի բայց, նոր ակումբը սկսում ենք:

Դա վաղուց էր: Այդպես էլ ես դերասան չդարձա: Թատրոնից վրեժ առնելու նպատակով սկսեցի պիեսներ գրել: Իմ պիեսներն ինձանից բախտավոր դուրս եկան, նրանք բեմ բարձրացան, ես մնացի դահլիճում:

1983 թ.

ՏԱՊԸ

Հիմա Շարմաղը* կգա: Կգա անտառի կողմից, ձորից կգա ցողաթաթախ ոտքերով, Սառնաղբյուրից կգա կուլան ուսին, այտերը՝ խոնավ, շուրթերը՝ խոնավ, ժպիտը՝ ցողոտ-շողոտ վարդ, բանջարանոցից կգա՝ քթոցը լիքը թաղից նոր կտրած պզուկոտ վարունգներով, կգա Վերին հանդից՝ կարմիր թաշկինակի մեջ մի քանի փունջ դաղձ ջրակոտեմ... Կգա այնպես կծիծաղի, որ Կողունց Մոսին փոշոտ հոնքերի տակից կճպճպացնի աչքերն ու կթոնթորի. «Իմ արևը, էս հարսը ոնց որ խելառ է, գոնե, մարդու սրտից ծիծաղի ու ծիծաղն էլ ծիծաղ լինի»: Կգա ու կանաչ խոտերի մեջ շուռ կտա քթոցը, մի անմոռուկ, մի բարձմենիկ, զանգակիկ կամ հովտաշուշան կպոկի ու կմեկնի ինձ. «Վերցրու, էս ծաղիկը քեզ համար եմ բերել»: Ախր ծաղիկը որտեղի՞ց է բերել, ձեռքս մեկնեմ՝ մեկի փոխարեն քսան ծաղիկ կպոկեմ, քսան բարձմենիկ, քսան կուժուկոտրուկ, քսան զանգագիկ... Եվ կնայի դեմքիս, այնպես կնայի, որ խեղճանամ, վիզս ծռեմ ու ասեմ՝ ա՛յ անաստված, ինչո՞ւ ես ինձ տանջում, ի՞նչ հաշիվ ունես ինձ հետ, քեզ ի՞նչ եմ արել: Բայց չեմ ասի, կլռեմ քարի պես կամ կվազեմ Թբղլուտը, ու մեկ էլ տեսար լաց եղա:

Շարմաղը կես աղջիկ է, կես հարս է: Աչքում կես ժպիտ կա, կես լաց: Մեկ էլ տեսար այդ լացն ու ժպիտն իրար խառնվեցին, և Կողունց Մոսին նայեց՝ չհասկանալուն տվեց, քթի տակ սկսեց նորից թոնթորել. «է՜, էս հարսն իսկականից խելառ է»:

Շարմաղը Արշավիր անունով ամուսին ուներ, ոչ ու փուչ ամուսին, մի տեղ մոխիր չէր թափում, որ վրան կրակ աներ, սիրտ տաքացներ: Արշավի-

ը Կողունց Մոսու մինուճարն է, գնաց քաղաք, եկավ, էլի գնաց, էլի եկավ, թե ավտովարորդ եմ, տրակտորիստ եմ, ավտոտեսուչ եմ... իբր թե սովորում էր հաշվապահական դասընթացներում... Հետո թատրոն գնաց, բեմի բանվոր էր, եկավ գյուղում փչեց, թե՝ «Նամուս»-ում Սեյրան եմ խաղում, և ապացուցելու համար, որ Սեյրան է խաղում, մազերը ցրիվ տվեց ու գոռաց. «Այն սուրը, որ սպանել է դավաճան հորը, կսպանի նաև ուրացող մորը»: Բայց դա «Նամուս»-ից չէր, այլ «Սամվել»-ից, և այդ աննամուսը չհասկացավ, թե ինչի համար են տղաները հռհռում:

Կողունց Մոսին ուզում էր որդուն խելքի բերել, տանով անել. պսակեց Շարմաղի հետ: Շարմաղն ինքն էլ չիմացավ, թե այդ ինչպես եղավ. երևի ուզում էր ազատվել խորթ մորից ու չլսեր նրա ծկլթոցը. «Շարմա՜ղ, աղջի՜, Շարմաղ, անունդ քարին գրեմ»: Ախր Շարմաղը որտե՜ղ, Արշավիրը որտե՜ղ: Արշավիրը՝ ծույլ ու մեծաբերանի մեկը, հազար խոսք կասեր, հազարն էլ՝ սուտ: Գնաց Կրասնոդար, վեց ամիս մնաց, ձեռքը բան չընկավ: Եկավ շրջեց գյուղերը, թե շինվարչությունից են ուղարկել, փող տվեք՝ տախտակ ու ցեմենտ բերեմ: Մարդկանց խաբեց ու բռնվեց: Դատ եղավ՝ դատվեց ու մի անգամ չասաց՝ բա Շարմա՜ղը...

Կողունց Մոսին զայրացած ծեծում է գերանդին, որովհետև Շարմաղ անունով հարսն ուշանում է, Արշավիր անունով տղան փուչ դուրս եկավ, Հովսեփ անունով խնամին ամեն անգամ, երբ հանդիպում է, ասում է. «Հիմա չեմ հասկանում, մեր աղջկան հա՞րս եք տարել, թե տան ծառա»: Զայրանում է նաև նրա համար, որ խոտը մարդաբոյի է, վայ թե չհասցնի գերանդել, չորացնել, հավաքել ու դիզել:

Արևը կծոտում է, մեկ էլ տեսար՝ անձրև եկավ: Շարմաղը կընկնի անձրևի տակ, կթոնթորի՝ ինչի՞ եք ոտս կապել, բախտիս քար գցել: Ախր ես հիմա ինչացո՞ւ եմ՝ ոչ կարգին հարս եմ, ոչ էլ կարգին աղջիկ: Ոչ խնձորի ծառ եմ, ոչ չինարի: Գլխիս սև լաչակ գցեմ՝ կասեն խելքը պակասել է, կարմիր գցեմ՝ կասեն հողս գլխիդ, բա դու նամո՞ւս չունես:

Կողունց Մոսին նայում է ձորի կողմը, և միտքը Շարմաղի վրա է, բայց ուրիշ բան է ասում. «Մի տարի ես ու Հաբունց Սարոն Վերին հանդում խոտ էինք հարում: Խոտ, ի՜նչ խոտ, մախմուր: Մեկ էլ տեսնեմ երկու կրիա. արմանք-զարմանք բան, էդ անտերները քիթ-քթի դնում, գնում-գալիս, չանաղներով իրար խփում են: Ասացի՝ Սարո, սրանք ինչի՞ են կռվում, բաժանելու ի՞նչ ունեն: Սարոն նայեց ու ծիծաղեց. «Տնաշեն,- ասաց,- էդքան տարվա մարդ ես, գլխի՞ չես ընկնում՝ ի՞նչ կռիվ, իրար սիրում են, դրանց սերն էլ էդ տեսակի է»:

Նա մի անգամ էլ ձեռքը դրեց ճակատին, նայեց ձորի կողմն ու երևի մտքում ինքնիրեն հարց տվեց. «Մթամ էս հիմար պատմությունն ինչի՞ արեցի»: Շարմաղը չէր երևում, գերանդին ամրացրեց կոթին, խոսեց.

- Իմ արևը, էս հարսից խելքս բան չի կտրում: Ասում եմ՝ բերանս բացեմ, ասում եմ՝ խոսեմ, բայց ի՞նչ ասեմ, լեզուս կարճ է: Արշավիրը կտրել, կարճացրել է, մարդամեջ խոսելու իրավունք չունեմ: Զայնազուրկ եմ: Ցավդ

տանեմ, Սառնաղբյուրը կորած չի, հրե՜ն քթիդ տակին… Ասենք՝ ո՞վ գիտե, գուցե դաղձով-մաղձով է ընկել, կինարմատ է, լեզուն երկար, աչքը՝ ծակ: Մեր տղա, որքան չլինի, դու ջահել ես, գնա տես ինչի է ուշանում: Բան չասես, ցավդ տանեմ, գործ չունես, դրա լեզվիցը պրծնողը չես:

Հիմա կգնամ ձորագլխից կնայեմ, ձորագլխից կկանչեմ՝ Շարմա՜ղ, հե՜ Շարմաղ: Ա՛յ աղջի, չլինի թե աղբյուրը ցամաքել է, որ չես գալիս: Չէ, ցուրտ խոսք չեմ ասի, ես ո՞վ եմ, որ ցուրտ խոսք ասեմ նրան: Հերս ասել է՝ գնա Խաչահանդում գերանդի բռնիր, խոտը փչանում է: Ասել է՝ ի՞նչ անենք, թե համալսարանում ես սովորում, հո գլխիս մինիստր չես: Բան չկա, որ մինիստր դառնաս, էն ժամանակ ոտդ-ոտովդ կգցես ու կարգադրություն կանես. «Ալո, ընկեր Գարաշ, երկու օր ժամանակ եմ տալիս, խոտը հնձիր, դիզիր և լավ իմացիր, որ կաթը խոտից է գալիս, յուղն էլ՝ կաթից»: Հայրս զարմանալի մարդ է, միշտ տարօրինակ բաներ է ասում և գյուղի բերանին անեկդոտ դառնում:

Ձորագլխից ձորի հատակը չի երևում՝ ուռենիներ են, ընկուզենիներ, մոշուտ, շարմաշուղներ՝ շուլալված թփուտներին: Թվում է՝ գետի թշշոցը գալիս է քառասուն սարի ետևից, և ես քառասուն սարի ետևից կանչում եմ.

- Շարմա՜ղ…

Չայնս երևի տեղ չի հասնում, իսկ այդ անիծված դեղնակարմիր դեղձանիկը նստել թբղլու ճյուղին, այնպես անուշ է գեղգեղում, որ քիչ է մնում աչքերս փակեմ ու նետվեմ ձորը:

Բռնում եմ կածանի տուտը, իջնում թփուտների արանքով, քարանում աղբյուրի կողքին: Չէ, դա Շարմաղը չի, հավերժահարս է, ջրի մեջ կանգնած ճերմակ բոց է, և այդ ո՞նց է, որ ջուրը չի թշշում, գոլորշի չի բարձրանում: Այդ սիրուն սրունքները, հղկված մարմարի պես թևերը, ղումաշ մեջքը թե մեր ֆակուլտետի աղջիկներն ունենային, տղաները կթողնեին դասախոսությունները և Նահապետ Քուչակի ոճով ոտանավորներ կգրեին, կուղարկեին թերթերին ու ամսագրերին և, իհարկե, խմբագիրներն անպայման կմերժեին. «Մեր օրերում նման վուլգար բաներ չեն գրում»:

Խեղդված ձայնով կանչում եմ՝ Շարմա՜ղ… Չայնս հազիվ ես եմ լսում և մեկ էլ այդ դեղնակարմիր դեղձանիկը, որ հիմա էլ եկել թառել է վայրի խնձորենու ճյուղին ու պապանձվել: Շարմաղ, ի՜նչ Շարմաղ, անաստված-անաստվածի աղջիկ: Այ անաստված-անաստվածի աղջիկ, ես քեզ ի՞նչ եմ արել, որ այդպես կանգնել ես գետի մեջ՝ մերկ ու անմեղ, և մերկ ու անմեղ ժպտում ես ու սպանում ինձ: Բա որ գժվեմ, բա որ գլուխս առնեմ ու կորչեմ, ի՞նչ պատասխան պիտի տաս:

Շարմաղ, հիմա գնամ Կողունց Մոսուն ի՞նչ ասեմ: Ասեմ՝ աշխարհ տեսած մարդ ես, որ հարսիդ հալը գիտես, ինչո՞ւ ես ինձ ուղարկում նրա ետևից: Ասեմ՝ քո Արշավիրը հիմարի մեկն է, խոզ է, խուլ է ու մի խոսքով՝ մարդ չի:

- Ի՞նչ ես տնկվել ու չտեսի նման բերանդ բացել…

Շարմաղը ներքևից վերև է նայում ու ծիծաղում: Նրա ծիծաղն անմեղ է, աշխարհը՝ մեղավոր: Հոսող ջրի մեջ թրթռում է մի ճերմակ երազ, և ես ու-

զում եմ փախչել այդ երազից, ոտքս սայթաքում է, նա ջուրը շրմփացնում է դեմքիս ու քրքջում:

- Մի վախենա, այ տղա, մի վախենա, քեզ չեմ ուտի:

Ստվերախիտ ծառերի արանքից մի կտոր կապույտ երկինք է երևում, իսկ դեղձանիկը թռել՝ գնացել, ճլվստում է ձորագլխին:

- Արի պսակվենք, ուսանող բալա,- Շարմաղը նորից է ծիծաղում, և նրա ծիծաղն այս անգամ մեղավոր է:- Արի մեղավորվենք ու մնացածի հերն էլ անիծած:

- Դու պսակված ես, Շարմաղ, դու մարդ ունես:

- Ո՞վ ասաց մարդ ունեմ: Այդպիսի մարդը չունենալուց լավ է: Ես մարդ չունեմ, անտեր եմ, ում ուզեմ՝ կսիրեմ, չեմ ուզի՝ չեմ սիրի:

Ես խեղդվում եմ նրա ճերմակ թևերի մեջ. նրա տաք շունչը դիպչում է դեմքիս, ամեն ինչ թվում է զարմանալի երազ: Գետը կարծես հոսում է ներքևից վերև, ուռենիները կանգնել են գլխիվայր, երկինքը մոտիկացել է, ձեռքս մեկնեմ՝ կհասնի:

- Ես մարդ չունեմ, դու էլ գիտես, որ չունեմ... Լռի՛ր, չխոսե՛ս... Որ խոսես՝ ի՞նչ պիտի ասես:

* * *

Մենք բարձրանում ենք ձորից, քայլում կողք-կողքի, մի քիչ խռոված, մի քիչ տխուր, մի քիչ զարմացած: Դեղձանիկն առաջվա պես իր երգն է երգում, գետը թշշում է, երկինքը կապույտ է, արևը՝ հրաշեկ:

- Ես մեղավոր չեմ այս անմեղ աշխարհում,- նա կողքանց նայում է ինձ. դեմքը մռայլ է, աչքերում չարություն կա:- Որ ես մեղավոր չեմ, քեզ ի՞նչ է եղել: Ես կես հարս եմ, կես աղջիկ, կես ծիծաղ, կես արցունք: Կես-կես դառնալով ապրում եմ, կես-կես դառնալով հալվում: Ինձ հայհոյիր, կուզես՝ ծեծիր, ձեն չեմ հանի: Միայն խնդրում եմ՝ իմ մասին վատ բան չմտածես:

Կողունց Մոսին գերանդում է խոտը և կարծես մեզ չի նկատում: Նա կուլան վերցնում է հարսի ձեռքից, հարսին չի տեսնում: Խմելուց հետո պիտի ասեր՝ ուխա՜յ, սիրտս հովացավ, չի ասում: Կողունց Մոսին իր ասելիքն ամբարել է սրտի մեջ և չի վախենում, որ սիրտը հանկարծ պայթի: Չի էլ ասում՝ տղա, խոտ հարելը քո համալսարանը չի, գերանդու քիթը բարձր պահիր, որ քարու չտաս: Երեկ ասում էր, մինչև կեսօր ասում էր, հիմա չի ասում:

- Ծանր խոտ է,- նա ուզում է ցրել մտքերը, իբր սրտին ծանրացած սար ու ձորը քիչ է, ուրիշ սար ու ձորով է ընկնում:- Հերու ես ու Սարոն Խամուտում խոտ էինք հարում, նայեմ տեսնեմ երկու կիխտար ձորն են իջնում: Ոնց որ խռոված երեխաներ: Կիխտարները, որ ծարավում են, իրարից խռովում են: Էս Սարոն թե՝ կարոտ ունեն: Ուրեմն, աստծու կենդանիները ձորը գնացին խռոված, քիթ-քթի տված վերադարձան: Էդպես է աշխարհի բանը, ի՞նչ կարող ես անել:

- Զը՜նգ...

Գերանդին քարու եմ տալիս: Քարը չեչոտ քար է, կուրացել ու չեմ տես-

նում: Կողունց Մոսին խլացել ու չի լսում: Մոսու Շարմաղ հարսը պապանձվել ու ձեն չի հանում: Որ ձեն հանի՝ ի՞նչ պիտի ասի: Կասի՝ ապեր, կիխտարները հորինում ես, Խամուտում կիխտար չի լինում: Կասի՝ ինչ ուզում ես հորինիր, բայց ես մեղավոր չեմ: Ի՞նչ եմ արել, որ մեղավոր լինեմ…

- Ջը՜նգ…

Չէ, քար չի, մի մեծ կրիա է. եկել ու գերանդուս բերանն է ընկել:

- Կրիա է,- ասում եմ,- ամուր մեջք ունի:

- Կրիան աստծու ստեղծածն է,- Կողունց Մոսին խարտոցում է գերանդին, թևքով սրբում ճակատի քրտինքը:- Աստծու ստեղծած անասունը ոչ քեզ է խանգարում, ոչ ինձ, ոչ էլ ուրիշներին: Թող ապրի: Ապրողն ապրողին չպիտի խանգարի: Այդպես է աշխարհի կարգը:

Հաջորդ օրը Շարմաղը խոտհարքի չի գալիս: Ո՞վ պիտի մեզ համար Սառնաղբյուրից ջուր բերի, բանջարանոցի թաղից կտրած թարմ վարունգ, վերին հանդից՝ դաղձ ու ջրակոտեմ… Ո՞վ պիտի չորացած խոտը եղանով շուռ տա, երեքնուկի տերևը մեկնի ինձ ու ասի. «Ուսանող բալա, սիրի-սիրի, մեկին սիրի»: Եվ իմ պոկած թերթիկն անպայման ինքը պիտի լինի, որ հոգուս հետ խաղա. «Ձեր համալսարանի աղջիկնե՞րն են սիրուն, թե ես»: «Մեր համալսարանի աղջիկների հերն անիծած, ես նրանց հետ գործ չունեմ»: «Հիմա չունես՝ հետո կունենաս: Հիմա չսիրես՝ հետո կսիրես: Է՜, լավ, ձեզ էլ գիտեմ, ստից սուրբ եք ձևանում»:

- Գլուխը ցավում է,- իմ չտված, բայց սրտիս ծանրացած հարցին պատասխանում է Կողունց Մոսին:- Ասենք ո՞վ գիտե, գուցե բան է պատահել: Կին է, կինարմատ է, ի՞նչ իմանաս մտքինը: Էդ կնանիքը, որ ծռվում են՝ պրծա՜վ:

Շարմաղը մյուս օրն էլ չի գալիս: Կողունց Մոսին նոթերը այնպես է կիտել, որ չեմ համարձակվում խոսք ասել: Բայց մտքինը գիտեմ, խոսել է ուզում. կլռի, կլռի ու կխոսի:

Եվ խոսում է.

- Շարմաղը եղած-չեղածը հավաքեց, գնաց հերանց տուն: Ասում է՝ հերիք է, որքան ձեզ հարսություն եմ արել: Ասում է՝ իմ մասին վատ բան չմտածեք: Ասում է՝ ինչի՞ համար համ ձեզ խաբեմ, համ՝ ինձ:

* * *

Ես երեկոյան անցնում եմ Հաբունց Հովսեփի տան կողքով, ցանկապատի տակ իբր պատահաբար հանդիպում եմ Շարմաղին: Նա չարացած նայում է ինձ, բայց աչքերում բոլորովին չարություն չկա:

- Շարմաղ,- ասում եմ,- վաղը գնում եմ:

- Դե որ եկել ես, ուրեմն պիտի գնաս:

- Գուցե նամա՞կ գրեմ:

- Նամա՞կ: Ի՞նչ նամակ:

- Դե ոնց ասեմ… Նամակ, էլի:

- Ախր ես ո՞վ եմ, որ նամակ գրես: Ես կես աղջիկ եմ, կես հարս: Ցիծաղս

գնաց, լացս մնաց: Իմ ստանալիք նամակները վաղուց են այրվել ճանապարհներին և միայն մոխիրն է հասել ինձ: Դու քո ճանապարհը ունես, ես՝ իմ: Դու, ախր դու...

Պոկվում է տեղից, մոտենում, գրկում գլուխս, սեղմում կրծքին:

- Խնդրում եմ իմ մասին վատ բան չմտածես, ես մեղավոր չեմ:

- Դու մեղավոր չես,- հաստատում եմ,- աշխարհն է մեղավոր:

...Քանի՞-քանի տարի է անցել և քանի՞-քանի դեղձանիկներ են եկել ու երգել մեր Թբղլուտում: Որքա՞ն ջրեր են հոսել մեր ձորի գետով, որքան անմեղ եղնիկներ են իջել ձորն ու մեղավորվել: Հիմա էլ ականջիս մեջ է գերանդու զնգոցը, արևի տակ չորացող խոտերի չրթչրթոցը, գետի վշշոցն ու դեղնակարմիր դեղձանիկի անուշ երգը և Շարմաղի ձայնը.

- Ես մեղավոր չեմ:

Հիմա կգնամ նստեմ գետափին, գլուխս կառնեմ ափերիս մեջ և կմտածեմ այս զարմանալի ու անբացատրելի, հետաքրքիր ու անընմբռնելի, գժվելու չափ գեղեցիկ ու ապրելու չափ ցանկալի աշխարհի մասին:

1974 թ.

ԽԵՐՍՈՆԻ ԽԵՉՈՆ

Աշխարհում շատ քաղաքներ կան, բայց նրա տեսած միակ քաղաքը Խերսոնն է: Ուրիշները պատմում են Մոսկվայի մասին, Կիևի ու Լենինգրադի մասին են պատմում, իսկ նա՝ Խերսոնի: Նրա համար աշխարհի ամենամեծ ու ամենագեղեցիկ քաղաքը Խերսոնն է, որովհետև Խերսոնից բացի ուրիշ ոչ մի քաղաք չի տեսել:

- Նիկոլի օրոք սալդաթություն էի անում էդ քաղաքում,- պատմում է,- մի օր ծովափով անցնելիս՝ մի կնիկ տեսա պառկած ծովափի ավազին: Նայեց ինձ, ծիծաղեց: Ի՞նչ մարմին, ի՞նչ աչքեր: Չուտես, չխմես, նայես: Բայց դե Նիկոլի սալդաթին էդքան իրավունք ո՞վ էր տվել:

Միայն այդքանը: Քարաշենցի Խեչոն հեռվից-հեռու նայել է խերսոնցի անծանոթ կնոջը, և Խերսոնը նրա համար դարձել է աշխարհի ամենագեղեցիկ ու ամենամեծ քաղաքը: Հետո եկել ու անցել են շատ տարիներ, փոխվել է աշխարհը, փոխվել են մարդիկ, բայց նրա հիշողությունների մեջ չի խամրել Խերսոնը, ծովը, ծովափի ավազի վրա պառկած հրաշք կինը:

Կռիվ եղավ աշխարհում, եղավ կրակ ու արյուն, ռմբակոծվեցին տասնյակ, հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, բայց նա ամենից շատ մտածում էր Խերսոնի մասին:

- Միայն թե էդ անիծված ֆաշիստները չառնեն Խերսոնը:

Թշնամին գրավել էր Մոզդոկն ու շարժվում էր առաջ.

- Յանի Խերսոնից դեսը անցե՞լ են,- հարցնում է:

Մեր բանակը Բեռլին էր հասել, իսկ նա՝

- Տեսնես Խերսոնը ե՞տ ենք վերցրել:

Մարդիկ երեկոները, նստած ակումբի բակում, օրվա թերթերն են կարդում՝ այսինչ քաղաքում կառուցվել է հսկա մի գործարան, նա նորից՝

- Բա Խերսոնի մասին բա՞ն չեն գրում:

Եվ զարմանում է՝ ինչպե՞ս կարելի է մոռանալ Խերսոնը, բա դա արդարությո՞ւն է:

Դրա համար էլ գյուղում նրան Խերսոնի Խեչո են անվանում: Ոչ ազգանունն են տալիս, ոչ հոր անունը՝ ուղղակի՝ Խերսոնի Խեչո: Եթե որևէ մեկը նրա որդուն հարցնում է՝ ո՞ւմ տղան ես, սա հանգիստ պատասխանում է.

- Խերսոնի Խեչոյի տղան եմ:

Իսկ երբ որևէ անասուն է մտնում կոլտնտեսության բանջարանոցը, նա բահը թափահարում ու գոչում է.

- Ես Խերսոնի Խեչոն չլինեմ, թե ոտքդ չկոտրեմ:

Բայց չի կոտրում, որովհետև, նախ՝ անասունը լեզու չունի, և հետո էլ՝ մեղավորը նրա տերն է, որ բաց է թողել անլեզու անասունը:

Բոստանչի է Խերսոնի Խեչոն: Առավոտից մինչև ուշ երեկո ջրում է ռեհանի, սամիթի, սոխի ու թարխունի մարգերը: Արևի շողերի տակ փայլփլում է երկարակոթ բահը, և ջուրը ծիծաղելով ցրվում է կանաչ մարգերի մեջ: Ճաքճքված հողը խմում է ջուրը, կշտանում, խմորի պես ուռչում: Ռեհանի մուգ-վարդագույն ցողունները շտկվում են, բարձրանում կամաց-կամաց, ու շոգից ճապաղած տերևները բացվում են փոքրիկ, շատ փոքրիկ թաթիկների պես: Խեչոն ուրախանում է ռեհանի համար, ուրախանում է, որ զնգում է բահը, և ջուրը ծիծաղում է անմեղ երեխայի պես:

Դժբախտություն պատահեց Խերսոնի Խեչոյին: Մահացավ կինը՝ Սոփան մորքուրը: Աշխարհը մթնեց գլխին, և նա կյանքում առաջին անգամ մոռացավ Խերսոնը, ծովը, ծովափին պառկած կնոջ և ռեհանի ու թարխունի մարգերը:

- Աշխարհի կարգն է,- սփոփում էին բարեկամներն ու հարևանները,- տղամարդ ես, հավաքիր քեզ:

Հավաքիր քեզ: Ասելը հեշտ է, ախր կյանքի ընկեր է կորցրել, հավատարիմ ընկեր: Առանց կնոջ տունն ի՞նչ է՝ շուշեն փշրված լամպի ճրագ, լույսի տեղ ծուխ է անում, ցավեցնում աչքերդ: Հիմա ո՞վ պիտի Ստեփանին քաղցր խոսք ասի, ո՞վ պիտի լվանա նրա շորերը և ամեն առավոտ ուղարկի դպրոց: Չէ, երեխան մորով է լինում որբ:

Ամիսներ անցան: Մի օր էլ հարևան Մուքելը քաշեց նրան մի կողմ ու հարցրեց:

- Խերսոնի Խեչո, ի՞նչ ես մտածում, տունդ քանդվում է:

- Հա, քանդվում է,- Խեչոն կախեց գլուխը:- Ի՞նչ կարող եմ անել: Երևի իմ ճակատին էդպես է գրած:

- Նոր կնիկ առ:

- Խալխն ի՞նչ կասի:

- Ի՞նչ պիտի ասի, աշխարհում մենակ դու չես:

- Ախր, Մուքել, ինձ ո՞վ կգա:

- Հերիքնազը կգա:

Գյուղում ո՞վ չի ճանաչում Հերիքնազին: Երկու տարվա հարս էր, երբ թուրքերը Մուղոզի ձորում սպանեցին ամուսնուն: Գուցե ամուսնանար նամուսով մի մարդու հետ, եթե նրան էլ դժբախտություն չպատահեր: Ընկավ թթենուց և ոտը վնասեց: Ուղարկեցին կոլտնտեսության ֆերմայում աշխատելու: Վատ չէր վաստակում: Միակ աղջիկն էլ պսակեց ու մնաց մենակ:

Երեկոյան Խեչոն խոսեց որդու հետ: Հերիքը լավ կնիկ է, ասաց՝ քեզ մայրություն կանի: Ստեփանը դիվոտվեց.

- Չէ, կաղ Հերիքնազը մեր տուն չպիտի մտնի:

- Չես ուզում, չեմ բերի,- հառաչեց Խեչոն,- մի կերպ յոլա կգնանք:

Ստեփանն ավարտեց միջնակարգը, գնաց քաղաք ու չվերադարձավ: Ուզում էր ընդունվել ինստիտուտ, չհաջողվեց, կտրվեց առաջին քննությունից: Մտավ գործարան, սկզբում հասարակ բանվոր էր, դարձավ ենթավարպետ:

- Գյուղի օդ ու ջրին կկարոտի, կգա,- մտածում էր Խեչոն:- Հողը քաղցր է, կքաշի, կբերի:

Բայց Ստեփանը չվերադարձավ: Նամակ գրեց, թե՝ ապեր, նոր բնակարան եմ ստացել, խոհանոցը՝ մեջը, ջրածորակները՝ մեջը, լողարանը՝ մեջը... Կգամ տուն-տեղ ծախեմ, քեզ էլ կտանեմ ինձ հետ քաղաք:

Խեչոն կարդաց նամակն ու տխրեց: Բնակարա՞ն եմ ստացել... Իսկ հայրենի տո՞ւնը, այգի՞ն, հարազատ գյուղն ու նրա հո՞ղը: Վաղն էլ երեսը ներկած մի կնիկ կառնի, երեխաներ կունենա և կասի՝ ես ոչ գյուղում եմ ծնվել, ոչ էլ Խերսոնի Խեչո անունով հայր ունեմ: Չէ, Խեչոն մենակ բու բայղուշ չի, մարդ է և ուզում է մարդավարի ապրել: Կգնա Հերիքնազին կբերի: Հազար Ստեփան էլ լինի, կբերի:

Ամեն ինչ անցավ առանց աղմուկի: Հերիքնազն իր տան եղած-չեղածը հավաքեց, տունն էլ տվեց բարեկամներից մեկին ու տեղափոխվեց Խերսոնի Խեչոյի հարկի տակ: Եկավ Մուքելը, մի-մի բաժակ օղի խմեցին ու սկսեցին պատմել անցած-գնացած բաներից: Խեչոն նորից հիշեց իր սալդաթությունը, Խերսոնը, ծովը...

Խեչոն նորից դարձավ առաջվա Խերսոնի Խեչոն: Բանջարանոցներում նորից զնգաց նրա բահը և ճաքճքված հողը ճրթճրթալով խմեց ջուրը: Խմեց, որ սիրտը հովանա, կյանք տա անուշաբույր ռեհանին ու թարխունին, որ պոմիդորը կարմրի թաղին, վարունգն ուռչի, երկարի... Հողն էլ սիրտ ունի:

Ամռան վերջերին Ստեփանը վերադարձավ քաղաքից: Հագել էր նորաձև կոստյում, սուր-սուր քթերով կոշիկներ, գլխին դրել լայնեզր շլյապա: Չէ, շլյապան կարծես ինքը չի դրել, ինչ-որ մեկը նետել է, պատահաբար եկել, նստել է նրա գլխին: Նա համբուրվեց հոր հետ, իսկ Հերիքնազի մեկնած ձեռքը կախված մնաց օդում: Կարծես ինչ-որ թանկագին բան փշրվեց Խեչոյի սրտում: Ուզում էր բռնել որդու օձիքից, բղավել՝ դո՛ւրս կորիր իմ

տնից: Դու Խերսոնի Խեչոյի տղան չես, խոզ ես, բայց զսպեց իրեն: Մարդիկ ի՞նչ կասեն: Կասեն՝ տղան քաղաքից եկել է, որ մի քանի օր գյուղում հանգստանա, հերը հետը չի հաշտվել, քշել է տնից: Պիտի համբերել: Խերսոնի Խեչոն երեխա չի:

Հերիքնազը ճաշ պատրաստեց, նստեց տան մի անկյունում ու գլուխը կախեց: Աչքերում արցունքներ չկային, արցունքները սրտի մեջ էին: Իսկ սրտի բանն ո՞վ գիտե, մեկ էլ տեսար չդիմացավ վշտերին ու պայթեց:

Հաջորդ օրը լուրը հասավ Խեչոյին, որ Ստեփանը վաղուց աչք ունի Ղազարենց Մանուչարի աղջկա վրա: Աղջիկն էլ էր համաձայն, հերն էլ:

Եվ նա խոսեց որդու հետ.

- Ուրեմն՝ եկել ես պսակվելու, էլի՞:

- Կպսակվեմ, տուն-տեղ կծախեմ, քեզ էլ կվերցնեմ ու կտանեմ ինձ հետ:

- Բա Հերիքնազը,- դուրս թռավ Խեչոյի բերանից:

- Ստեփանը չլսելուն տվեց հոր հարցն ու նայեց գերաններին:

- Կոճերը փտել են, ապեր, այստեղ ո՞նց ես ապրում:

- Ես իմ հայրական պարտքը կկատարեմ, տղաս,- դողաց Խեչոյի ձայնը,- կպսակեմ, ինչ սիրտդ ուզում է, էս լիքը տնից կվերցնես, հալալ քեզ, բայց ես իմ տունը չեմ թողնի:

Խերսոնի Խեչոյի հարկի տակ հարսանիք եղավ: Հարսանքավորները կերան, խմեցին, մինչև լուսաբաց դոփեցին գետինն ու ցրվեցին: Ոչ ոք չհիշեց Հերիքնազին, ոչ մեկը չտվեց նրա անունը: Կարծես աշխարհում նա գոյություն չուներ: Այդ ամենը նման էր տխուր երազի: Խեչոյին թվաց, թե հարսանիքը ոչ թե իր հարկի տակ է եղել, այլ՝ ուրիշ, անծանոթ մարդու հարկի տակ: Պսակվողն էլ կարծես իր տղան չէր, այլ ուրիշ, անծանոթ տղա, որի անունը նույնպես Ստեփան էր: Ուրախացողներն ուրիշներն էին, տխրողը՝ ինքը, ուրիշներն էին գինի խմում, բայց ինքն էր հարբում: Չէ, զուռնայի իսկական ձենը չէր հնչում իր տանը, այլ նրա խեղդված արձագանքը: Հերիքնազը... Ախր ինչպե՞ս է նա կարողանում իր մի բուռ սրտի մեջ այդքան արցունքներ պահել ու ոչ մի անգամ չբողոքել:

Երեք օրից հետո Ստեփանը նորահարսի հետ թողեց գյուղը և ճանապարհվեց քաղաք: Նույնիսկ հրաժեշտին գեթ մի անգամ չնայեց Հերիքնազի կողմը: Իսկ Հերիքնազը ձեռքը չմեկնեց, որպեսզի այն չմնա օդում կախված:

- Կգամ քեզ էլ կտանեմ,- ավտոմեքենայի պատուհանից գլուխը հանեց Ստեփանը:- Տուն-տեղ կծախեմ, ապեր, էդ փտած կոճերը...

Ավտոմեքենան պոկվեց տեղից: Խերսոնի Խեչոն լսեց որդու վերջին խոսքն ու ալեկոծվեց:

- Փտածը քեզ քաղաքում տուն տվողի կոճերն են,- շշնջաց,- «կգամ տուն-տեղ ծախե՞մ»: Իսկ դու տո՞ւն ես շինել, որ ծախում ես:

Կյանքը նորից մտավ իր սովորական հունի մեջ: Խերսոնի Խեչոն աշխատում էր առաջվա պես: Ջուրը ծիծաղելով ցրվում է ռեհանի ու թարխունի մարգերի մեջ: Հերիքնազը վառում է օջախի կրակը, ջուր տաքացնում, լվացք անում և սպասում ամուսնուն: Հանդից գալիս է Խեչոն, նստում բա-

կի սալաքարին ու տրեխների հողը թափ տալիս: Նրա շորերից ռեհանի բույր է գալիս: Նայում է պատշգամբին կանգնած կնոջն ու հարցնում.

- Հը՛, քեֆդ ո՞նց է, Հերիք:

- Էսօր թանով եմ եփել, քիչ էլ թալ տապակել,- պատասխանում է Հերիքնազը:

- Բայց աչքիս մի տեսակ հոգնած ես երևում:

- Ի՜, ի՞նչ եմ արել, որ հոգնեմ, Խերսոնի Խեչո:

Հետո գալիս է հարևան Մուքելը, մի-մի բաժակ թթի թունդ օղի են խմում ու խոսում աշխարհի բաներից.

- Մի անգամ էլ Խերսոնը տեսնեմ, մեռնեմ, դարդս չի, Մուքել:

Աշնան վերջերին էր: Խեչոն որդուց ծանրոց ստացավ: Նա մկրատով կտրեց բարակ տախտակի վրա քաշած մահուդի կարերը, բացեց կափարիչը: Մի զույգ զինվորական կոշիկներ, տաք ձեռնոցներ, կոստյում և մորթե գլխարկ: Այդ ամենը հոր համար է, իսկ Հերիքնազի համա՞ր: Գոնե, մի զույգ գուլպա ուղարկեր... Նա վերցրեց ծանրոցի մեջ ընկած քառածալ թուղթն ու կարդաց. «Իմ սիրելի և անմոռանալի հայրիկ, ես շատ լավ եմ, նույնն էլ քեզ եմ ցանկանում: Ուղարկում եմ քեզ համար մի զույգ սապոգներ, տաք ձեռնոցներ, գլխարկ և կոստյում: Բարևներս կանեմ քեզ, Մուքել ապորը, Մանուչար քեռուն...»:

Տունը կարծես պտտվեց Խեչոյի գլխին և նրան թվաց, թե ինչ-որ մեկը շիկացած երկաթով շամփրեց իր կուրծքը: Ստեփանն անխիղճ բան է արել: Ինչո՞ւ է ուղարկել այս ծանրոցը: Հորը շա՞տ է սիրում: Չէ, հարկավոր չեն ոչ այս սապոգները, ոչ կոշիկները, ոչ գլխարկը և ոչ էլ կոստյումը:

Խեչոն այդ ամենը տեղավորեց ծանրոցի մեջ և նամակի մյուս կողմին մատիտով ծուռումուռ տառերով գրեց. «Շնորհքդ շատ, որդի, ուղարկածդ ետ եմ ուղարկում: Այդ ամենը դիր առջևիդ, շլյապադ հանիր ու հաշիվ տուր քեզ: Ախր ես էլ մարդ եմ, Հերիքնազն էլ է մարդ: Էդ ի՞նչ իրավունքով ես մեզ բաժանում իրարից»:

Այդ գիշեր Խերսոնի Խեչոն քնեց հանգիստ ու անխռով: Քնեց ու երազում տեսավ Խերսոնը, ծովը և ծովափին պառկած կնոջը: Կինը բարձրացավ ավազից, մոտեցավ նրան ու ժպտաց: Նրա ժպիտն այնպե՜ս անմեղ էր, այնպես ամոթխած... Նայեց կնոջն ու ճանաչեց: Հերիքնազն էր... Հերիքնազը՝ ջահել ժամանակ:

ԿԱՏՈՒՆ

Բարթուղը նեղացած է: Նեղացած է կնոջից, որդուց, հարսից: Ամենից շատ հարսից է նեղացած: Տնաշենիդ աղջիկը ոնց որ աշխարհը առել, մեջը նստել է, և այս մեծ աշխարհում ինքն է, որ կա: Ախր նա առաջներում այդ-

պես չէր: Բերանումը ոնց որ լեզու չլիներ, ոչ խոսում էր, ոչ ծիծաղում էր, ոչ էլ... Կերածն էլ ի՞նչ էր՝ առավոտները երկու թերխաշ ձու, կեսօրին՝ մի քիչ սուպ, իրիկունները սկի սեղանին չէր մոտենում, քաշվում էր մի պուճախ, թե աշակերտների գրավոր աշխատանքներն ուղղում եմ: «Այ հարս,- ասաց Բարթուղը,- իմ արևը, ոնց որ էս աշխարհից չլինես: Գոնե գլուխդ մի անգամ բարձրացրու, որ երեսդ տեսնենք: Ախր էդքան խեղճ լինելը սկի լավ չի»:

Բայց Բարթուղը որտեղի՞ց իմանար, որ հարսն էդպիսի հունար ցույց կտար: Ուրեմն, էդ սուսիկ-փուսիկը դարմանի տակով գնացող ջուր է եղել, ինքը չի հասկացել: Երեխա ունեցավ, աչքն հոնքից բարձրացավ, քիթն այնպես տնկեց, ոնց որ կնյազ Կուտուզովի աղջիկը լինի: Կնյազ Կուտուզովս ո՞րն է, դու թագավորից խոսիր: Հետո երկրորդ երեխան ծնվեց, շրջազգեստը փոխեց շալվարով: Հիսուս Քրիստոս, կնիկն էլ շալվա՞ր հագնի:

Բարթուղը լռեց մի օր, լռեց երկու օր, մի շաբաթ լռեց, բայց դե մարդ է, չհամբերեց, ասաց. «Ելեն, ցավդ տանեմ, շալվարով դասարան չմտնես, երեխաները կծիծաղեն»: Ելենը, Գագունց Ցականի աղջիկն ի՞նչ ասի, որ լավ լինի. «Դուք ձեր էդ նահապետական բորբոսնած գաղափարներով լավ կլինի մեզ չխանգարեք»: Ապրես, ընկեր Ելեն, շնորհքդ շատ, հալալ լինի ծծած ծիծդ: Աղջի՜, քո մերն ինչի՞ քեզանից մի յոթը, ութը աշխարհ չի գցել: Դու էլ շեն կենաս, Թորգոմ տղա, կնիկդ պոզերն արդեն ցույց տվեց»:

Ուրեմն, կիրակի օրն էր: Երեխան վառարանի մոտ նստած խաղում էր կատվի հետ: Դե կատուն լեզու չունի, որ ասի՝ այ լակոտ, ես քեզ ի՞նչ վատ բան եմ արել, որ ուզում ես ականջներս քոքահան անել: Քեզանից հաց չեմ ուզում, ջուր չեմ ուզում, չեմ ասում՝ գիշերները քիչ ճվճվա, գլուխներս տանում ես: Կատուն լեզու չունի, մի քիչ չանգռեց էդ լկստվածի ձեռքը, էս հարսն իսկույն գյուրգա օձի նման կանգնեց պոչի վրա ու ծկլթաց. «Վու՜յ, երեխայիս սպանե՜ց... Հերիք է, այս տանն այլևս կատու չտեսնեմ... Կատուներից զզվում եմ»: Ախր, այ հարս, կատվից ինչո՞ւ ես զզվում, կատուն աստծու ստեղծած անասունն է: Խոսքի օրինակ, եթե կատվին տնից դուրս անենք, մեր նկուղի մկները դո՞ւ ես բռնելու, թե էշի ականջում քնած մարդդ: Մի բան ասեմ, այ հարս, չծիծաղես. կատուն աստծու թաշկինակն է: Հա՛, իմ արևը, մի տեղ կարդացել եմ: Սո՞ւտ է: Ի՞նչն է սուտ, կատո՞ւն, թե՞ Աստված:

Դրսում ձյուն, ձմեռ էր, քամին տերը կորցրած շան նման վնգստում ու կաղկանձում էր: Կատուն չանգռտեց դուռը, մլավեց, կանգնեց պատուհանի տակ, սկսեց դողդողալ ու աղերսել, ոնց որ որբ երեխա: Բարթուղը քաշեց կնոջ թևը. «Սոփի՜, ողորմի հորդ, գնա դուռը բաց արա, կատուն մեղք է»: Սոփին ստից քուն էր մտել, ձեն չհանեց: Դե պարզ է, հարսի լեզվից էր վախենում: Բարթուղը վերմակը նետեց, գնաց դուռը բացեց, ներս թողեց կատվին ու մթության մեջ մատը թափահարեց. «Կատու՜, այ կատու, տես, հա՜, սրանից դենը քեզ խելոք կպահես, ընկեր Ելենի քեֆովը կգնաս, թե չէ՝ բանդ բուրդ կլինի»:

Առավոտյան Ելենը տեսավ վառարանի տակ մռմռացող կատվին, աչքերը չռեց, ոտքը խփեց հատակին ու գոռաց ամուսնու վրա.

- Թորգո՜մ, այս տանը կամ ես պիտի մնամ, կամ այս կատուն: Այն բազմոցին կամ ես պիտի նստեմ, կամ այս աստծու թաշկինակը:

Վա՜յ, Թորգոմ, կնկա համար մեռած Թորգոմ, կնկա եթիմ Թորգոմ, բա դու տղամա՞րդ ես: Պապդ կնկանից վախեցող չէր, հերդ վախեցող չի, բա դու ո՞ւմ ես քաշել: Որ այդ կատուն չբռնես տանես ֆերմայի մոտ բաց թողնես, քեզ չե՞ն ճանաչի: Գոնե, ներողություն խնդրեիր, ասեիր՝ այ կատու, ես մեղք չունեմ, մեղավորը ուսուցչուհի կինս է, որ քեզ դռնեդուռ է գցում:

Երեքշաբթի օրը նախագահը կանչեց Բարթուղին, թե՝ ֆերմայի շենքի տանիքը քամին պոկել է, գնա սարքիր: Բարթուղը գործն ավարտեց, իջավ տանիքից ու ականջին ձեն հասավ: Նայեց, տեսավ պատի տակ սրթսրթացող կատվին, սիրտը մղկտաց: Անտերն այնպես էր կլավ-կլավ գալիս, այնպես էր իրեն սպանում, որ Բարթուղը չդիմացավ, աչքերը ջրակալվեցին:

- Վա՜յ, կատու՜, կատու, արի մոտս:

Կատուն ճանաչեց տիրոջը, եկավ ոտքերն ընկավ, պոչը մանգաղ արեց, քսեց, քսմսվեց ու մլավեց: Ի՜նչ մլավել, բողոքում էր: Բարթուղը գրկեց խեղճ կենդանուն, սեղմեց կրծքին, տարավ տնտեսվար Աստղիկի մոտ:

- Աստղիկ, էս կատուն քեզ ամանաթ: Մեր հարսը հետը չի հաշտվում, ասում է՝ լավ է մորս սիրեկանը տեսնեմ, քան կատուն: Տնից քշել է: Ախր աշխարհում սրա նման խելոք կատու չկա է՜... տաս՝ կուտի, չես տա՝ ձեն չի հանի:

Աստղիկը վերցրեց կատվին, շոյեց փափուկ մեջքը, պանիր տվեց, անկյունում մի քիչ սերուցք թափեց և խոսեց.

- Բարթուղ, հարսդ զուլում է, զուլում:

- Հա, զուլում է:

- Տղադ էլ, խոսքը մեր մեջ, դանա է:

- Դանա է, ոչխար է, եզ է:

Աստղիկն էլի սերուցք տվեց կատվին ու աթոռը քաշեց, նստեց կողքին:

- Փիսո ջան, ընկեր Ելենը քեզ չի՞ սիրում: Բա էդ խիղճը մեռածն էս ցուրտ ձմռանը ո՞նց է քեզ տնից քշել: Հիմա կնստենք և ընկեր Ելենին մի թունդ նամակ կգրենք: Կգրենք՝ ընկեր Ելեն, նախ և առաջ շատ ու շատ բարևներ: Ես հիմա Աստղիկ մորաքույրի մոտ եմ և ինձ շատ լավ եմ զգում: Նույնն էլ կցանկանամ քեզ ու քո կռապաշտ լակոտին: Համա լավ բան չես արել, ընկեր Ելեն: Բարևներով... Բարթուղ, անունն ի՞նչ է, ասա գրենք:

- Ելեն է:

- Չէ, կատվի անունն եմ ասում:

- Փիսո:

- Ի՞նչ փիսո: Փիսոն անուն չի: Բեր անունը Գոգա դնենք:

- Պահեստապետ Գոգան կլսի, կնեղանա:

- Վովան ո՞նց է:

- էդ մեկը բռնում է:

- Մի նամակ էլ դպրոցի դիրեկտորին կգրենք:

- Որ ի՞նչ...

- Որ հարսիդ հարցը դնի մանկխորհում, մի լավ հուպ տա:

- Թող կորչի, գլխացավանք է:

Բարթուղը գիշերը երազում տեսավ կատվին: Կատուն լեզու էր առել և փոքրիկ երեխայի պես բլբլացնում էր: Ասում էր՝ Բարթուղ ապի, դու լավ մարդ ես, Աստղիկ մորաքույրը լավ կնիկ է, Սոփի մաման փիս կնիկ չի: Փիսը ընկեր Ելենն է: Աչքս էլ դրան չտեսնի:

Արթնացավ, երազը պատմեց կնոջը, Սոփին տխրեց:

- Հա, Բարթուղ, քոռանամ, կատուն մեղք է:

- Բա որ մեղք է, ինչի՞ դուռը չէիր բացում:

- Եսիմ, խլացել էի:

- Դու գլուխ պահող կնիկ ես, Սոփի:

Բարթուղը հարսի հետ պինդ խռովեց: Ոնց չխռովի, հենց որ լակոտն ուզում է իր լակոտությունն անել, իսկույն սկսում է. «Տես, հա՜, հիմա կգնամ փիսոյին կբերեմ, քեզ կուտի: Փիսո՜, փիսո՜, փիսո՜... Անիկը չարություն է անում, ինձ չի լսում, արի կեր»:

Տես է՜, կատուն, աստծու խեղճ անասունը հիմա էլ մարդակեր է դարձել: Այ ընկեր Ելեն, ախր ուսուցչուհի ես, էդ ինչի՞ ես անմեղ երեխային խաբում: Բա որ երեխան կատու չսիրի, շուն չսիրի, ոչխար, ձի չսիրի, նրանից մարդ դուրս կգա՞: Հիմա, քո կարծիքով, դա կոչվեց մանկավարժությո՞ւն: Ընկեր Մակարենկոն այդպես է սովորեցրե՞լ...

Երեկոյան Ելենը ամուսնու հետ վիճում էր: Բարթուղն ականջ դրեց, բան չհասկացավ նրանց վեճից, դարձավ կնոջը.

- Սոփի, էդ հարսը ամուսնուց հիմա ի՞նչ է ուզում: Կատվին քշել է, վայ թե ուզում է հիմա էլ նրան քշել տնից:

- Չէ, սիրտը փափկել, բամբակ է դարձել:

- Հը՞...

- Կպել է մարդուն, թե՝ գնա կատուն բեր: Ուզում է իր անկարգ լակոտին կատվով վախեցնի:

- Հա՞,- Բարթուղը թեյի բաժակը հրեց մի կողմ:- Թորգո՛մ:

Թորգոմը ներս մտավ, մեղապարտի պես կանգնեց դռան մոտ:

- Ի՞նչ կա, հայրիկ:

- Գլխարկդ հանիր, տար դիր կնկանդ գլխին: Քեզ չի սազում:

- Չեմ հասկանում:

- Ջուր տաքացրու, ամեն երեկո կնկանդ ոտքերը լվա, երեխային ծիծ տուր, տակաշորերը փոխիր...

- Հայրիկ, ի՞նչ է եղել:

- Լվացքը սապնիր, լեղակիր, մաքրաջրիր, արևի տակ փռիր...

- Ախր, հայրիկ...

- Տո՜, հայրիկի հերն անիծած, քո էլ հերն անիծած... Հա, գժվել եմ, լրիվ գժվել եմ: Էս տանը բոլորը խելոք են, փիլիսոփաներ են, պրոֆեսորներ են, ակադեմիկոսներ են... Տանը մի գիժ պիտի լինի, չէ՞: Մի գիժ պիտի լինի, այդ գիժը ես եմ:

- Հայրիկ, ախր մի կատվի համար…

- Ի՞նչ կատու, կատուս ո՞րն է: Կատուն գել է դարձել, առյուծ է դարձել և մարդ է ուտում: Արա՜, շան տղա, ի՞նչ ես նայում: էդ արդուկը վերցրու, խփիր՝ կարկաժս ցրիվ տուր: Բա տղամարդն էլ կնկա համար էդքան եսիր լինի՞… Արա, դու ո՞ւմ ես քաշել…

- Հայրիկ, խնդրում եմ…

- Ինձ ինչի՞ ես խնդրում: Գնա կնկանդ խնդրի:

Բարթուղը երազում նորից տեսավ կատվին:

- «Փիսո՜, փիսո, արի մոտս»:

- «Ես փիսո չեմ, իմ անունը Վովա է»:

- «էդ ինձնից նեղացե՞լ ես»:

- «Ինչի՞ պիտի նեղանամ, Բարթուղ ապի: Ես քեզանից շնորհակալ եմ»:

- Բարթուղ,- Սոփին հրեց ամուսնու կողը:- էդ ո՞ւմ հետ ես:

- Խղճիս հետ: Խիղճս, Սոփի, խեղճացել, կատու է դարձել:

ՔԵՌԻ ԻՍՈՆ, ԳՐԱՄԱՖՈՆԸ ԵՎ ՊԵՊՈՆ

Ամեն ինչ սկսվեց հենց այդ չարաբաստիկ գրամաֆոնից, որը քեռի Իսոն գնել էր Բեդի Հաբուդիչի դուքանից: Այն հավանաբար իր նախկին տերերին շատ երկար էր ծառայել: Մորաքույր Փունջիկը անձամբ չէր ճանաչում Բեդի Հաբուդիչին, բայց ամեն անգամ, երբ այդ գրամաֆոնը ձայն էր հանում, իսկույն հերսոտվում, ինքն իրենից դուրս էր գալիս. «Վու՜յ, Բեդի Հաբուդիչին թաղեմ, ինչի՞ էդ զահուրմար ճլվստաֆոնը մեզնով գցեց»: Իսկ Բեդի Հաբուդիչը դեռ մեռնելու միտք չուներ, ուր մնաց, թե թաղվելու մասին մտածեր: ՆԷՊ-ի տարիներին նա ավելի ընդարձակեց իր դուքանը և ճակատին մի շքեղ ցուցանակ կախեց. «Դուքան Բեդի Հաբուդիչ- վաճառվում է ամեն ինչ»: Իսկապես, այդ դուքանում վաճառվում էր ամեն ինչ՝ սկսած Ղարաբաղի կծու տաքտեղից ու ավանակի նալից մինչև Խորասանի գորգեր ու անգլիական մաստակ, հոլանդական պանիր ու Աստրախանի չորացած ձուկ:

Չնայած Բեդի Հաբուդիչն առանձին մի սեր չուներ դեպի գրականությունը, սակայն նրա դուքանում կարելի էր գտնել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» ու Ռաֆֆու «Կայծերը», եղիշեի «Վարդանանց պատմությունն» ու Թումանյանի «Շունն ու կատուն»: Բայց ահա Հաբուդիչի ղումարբազ ու շուլլեր փեսան՝ Գարբուգ Չանգալջանսազյանը, մի օր հասկացավ, որ ծերունին մեռնելու մտադրություն չունի, օրը ցերեկով մտավ դուքանը, դուռը ամուր փակեց ու ասաց. «Քավթա՜ռ, կամ ոսկիներդ, կամ թափանթրիքդ ցրիվ եմ տալիս»:

Բեդի Հաբուդիչը մի օրվա ընթացքում սնանկացավ, դարձավ գավառական քաղաքի վերջին աղքատը, գլուխը դրեց վաճառասեղանին, քնեց

ու արթնացավ, քնեց ու արթնացավ, ուզում էր էլի քնել, նայեց տեսավ դիմացը կանգնած երկարահասակ, կարմիր այտերով ու խոշոր աչքերով մարդուն, ցույց տվեց նրան պատի տակ ընկած գրամաֆոնը ու խոսեց. «Մարդ, դրա գինը երկուհարյուր է, բայց հիսունով եմ տալիս»: Այդ երկարահասակ մարդը քեռի Իսոն էր, այսինքն՝ մորաքրոջս ամուսինը: Հաբուդովիչը փչեց, գրամաֆոնից ամպի պես փոշի բարձրացավ: Ապա նա աչքով արեց ու ժպտաց. «Չես փոշմանի, տար բանեցրու»:

Քեռի Իսոն գնեց գրամաֆոնը, բայց որովհետև լեզուն լավ չէր իմանում, փինաչի Ալեքսանին տասը ռուբլի տվեց, թե՝ էս տերը մեռածի լեզուն ինձ հասկացրու: Մի շաբթից հետո Բեդի Հաբուդիչը ոտքերը մեկնեց, և բժիշկները նրա ստամոքսում հայտնաբերեցին այնքան մկնդեղ, որը կարող էր լիուլի բավականացնել երեսուն կոտր ընկած նէպմանի:

Այն ժամանակներում գրամաֆոնը մեր գյուղում նորություն էր, ինչպես որ նորություն էր Սանամ Մելիքջանյանի երկհարկանի սանրվածքն ու նրա ամուսնու ամերիկյան շլյապան: Քեռի Իսոն որոշել էր ուրախացնել իր ջահել կնոջը, լարեց գրամաֆոնը, ձայնապնակը պտտվեց, մի տղամարդ անուշ-անուշ երգեց. «Կրծքինդ չեմ ճանաչում, մանիշակի թաղ եմ ասում, էշխիցդ ջունուն դառած, գիշեր-ցերեկ խաղ եմ ասում»: Այսպես առավոտից մինչև ուշ երեկո, մինչև գիշերվա կեսը երգեց, հետո հայտնվեցին ուրիշ ձայնապնակներ. «Գացեք տեսեք, ով է կերել զէծ», «Կոլխոզի հողե՞ր, տրակտորը վարում է», «Նա մի նազ ունի, նազ ունի» և այլն:

Այնքան երգեց, ձայնապնակներն այնքան պտտվեցին իրենց առանցքի շուրջը, որ հալումաշ եղան: Այն դեղնագույն ձագարը, որ գյուղով մեկ սփռում էր երգը, թոքախտավորի պես սկզբում սկսեց խզխզալ, շուտով խզխզոցը փոխվեց խռխռոցի, և ինչպես արդեն վերևում ասացի, մորաքույր Փունջիկը նորից թաղեց վաղուց արդեն թաղված և օխտը պատան մաշած Բեդի Հաբուդիչին ու հարցը սրեց. «Իսո, կամ էս տանը ես պիտի մնամ, կամ էս ճլվստաֆոնը»: Քեռի Իսոն նայեց կնոջը, նայեց գրամաֆոնին, նայեց պատի տակ կանգնած իր փոքրիկներին, մտքումն ասաց. «էդ ե՞րբ էսքանը ծնվեցին», մի քիչ էլ մտածեց, գտավ, որ գրամաֆոնը չի կարող իր կնոջը փոխարինել, ասաց. «Փունջիկ, էս տանը դու կմնաս: Դա ես եմ ասում, յոթ երեխաների հայր Իսո Մովսիսյանս»:

Քեռի Իսոն ուզում էր գրամաֆոնը նետել նկուղ, բայց վերջին պահին միտքը փոխեց, թևի տակն առավ, տարավ էժան գնով վաճառեց դանակմկրատ սրող Հեթանոսին, ստացած փողով մի նկար գնեց, բերեց տուն: Դա քթակնոցով, լայն ընչացքներով սրված բեղերով մի տղամարդ էր, հոնքերը բարդ-բարդ կուտակված, աջ թևը հենած ծնոտին:

Քեռի Իսոն նկարը տեղավորեց շրջանակի մեջ, կախեց պատի ճակատից, նայեց մոտիկից, նայեց հեռվից, կողքանց նայեց ու ասաց.

- Սա Պեպոն է:

Մորաքույր Փունջիկը, որ պատուհանի մոտ բրինձ էր մաքրում, ելավ տեղից, նայեց նկարին ու հաստատեց.

- Հա էլի՛, Պեպոն է, մեր Պեպոն է: Խե՜ղճ Պեպո՛, խե՜ղճ... Զիմզիմովը ոչ լավ օրի հասնի, որ քեզ էդ օրին հասցրեց:

- Ախ, Պեպո, ես քո ցավը տանեմ,- քեռի Իսոն, որ այդքան փխրուն սիրտ ուներ, ինձ համար միանգամայն նորություն էր: Նրա ներքին շրթունքը դողաց, աչքերը ջրակալվեցին, շուռ եկավ, կանչեց իր յոթ ծուտիկներին, կանգնեցրեց նկարի առջև ու ասաց.

- Լակոտնե՜ր, ես ձեր ցավը տանեմ, սա մեր Պեպոն է:

- Մեր Պեպոն է,- առաջինը ձայնակցեց ավագը, որի անունը Շուշան է, բայց տնեցիք Շարմաշուղ են կոչում:

- Մեր Պեպոն է,- կրկնեց իմ հասակակից Վրույրը, որին քեռի Իսոն Վույ-վույ է անվանում, մորաքույրը՝ Տույ-տույ, ուրիշները՝ Պույ-պույ:

- Պեպո՜ն է, Պեպո՜ն է,- ձայնակցեցին մյուսները:

Բայց դա իմ պատկերացրած Պեպոն չէր: Դա այն Պեպոն չէր, որին տեսել էի էկրանների վրա: Դա բոլորովին ինձ անծանոթ մարդ էր, որի աչքերում ե՛ւ հեգնանք կար, ե՛ւ անթաքույց չարություն: Դա այն Պեպոն չէր, որ Արութին Զիմզիմովի դեմ ըմբոստանում էր. «Բաս քու սրտի դավթարումն էլ վո՞ւչինչ չկա գրած»: Եվ, քանի որ դա իմ հասկացած Պեպոն չէր, և ես էլ քեռի Իսոյի իմացած Շարմաշուղը կամ Վույ-վույը չէի, առանց ձայն խնդրելու գոչեցի.

- Դա Պեպոն չի:

Յոթ երեխաների հայր քեռի Իսոն կարծես նոր միայն նկատեց ինձ, զարմացած նայեց ինձ, հետո նայեց կնոջը, երեխաներին, կրկին նայեց նկարին ու հարցրեց.

- Ի՞նչ ասացիր:

- Պեպոն չի:

- Ոնց թե Պեպոն չի,- նա տարակուսանքով շարժեց ուսերը:- Իսկ գուցե Կակուլին է:

- Կակուլին չի:

- Ուրեմն՝ Գիքոն է:

- Գիքոն էլ չի:

- Հա, ուզում ես ասել՝ Զիմզիմովն է:

- Ոչ:

- Բա լավ, Պեպոն չի, Կակուլին չի, Գիքոն չի, Զիմզիմովն էլ չի. էս շան որդին ո՞վ է, ինչո՞ւ եմ կախել մեր տան պատից: Դե հիմա դու ասա՝ ո՞վ է:

- Չգիտեմ:

- Այ տղա, դու հո շառ չես,- ու դարձավ մորաքրոջս,- Փունջ, քո կարծիքով, էս մարդն ո՞վ է:

- Պեպոն է, Պեպոն:

Քեռի Իսոն հաղթողի ժպիտով նայեց ինձ.

- Հը՛, տեսա՞ր, այդ էլ ես չեմ, քո մորաքույրն է:

- Իսո, ցավդ տանեմ, երգի, թող երեխան լսի Պեպոյի երգը,- ոգևորվեց մորաքույրս:- Երգի, ջանս, երգի, դու լավ ես երգում:

Քեռի Իսոն մաքրեց կոկորդը, երաժշտությունն ու բառերն աղավաղելով ծոր տվեց.

- Դամբը ձեռքիս ձուկ եմ որսո՜ւմ,

Հալալ աշխատանքով ապրո՜ւմ…

Մորաքույր Փունջիկը նրան ձայնակցեց.

- Վա՛յ էն մարդին, որ աշխարհում

Խալխի դատած հացն է ուտում:

- Հը, հիմա Պեպո՞ն է, թե չէ՞,- հարցրեց քեռի Իսոն և բուռս մի խնձոր խոթեց:- Ուրեմն ես մեր Պեպոյին չե՞մ ճանաչում... Ուզո՞ւմ ես քեզ համար «Կինտաուրի» պարեմ:

- Չէ, չեմ ուզում:

- Հանդից քեզ համար նապաստակի մի ձագ կբերեմ:

- Չեմ ուզում: Դա Պեպոյի նկարը չի,- գոչեցի ես, խնձորը նետեցի ու խելակորույս դուրս փախա,- Պեպոն չի՛, Պեպոն չի՛…

Նրան երբեք այդքան վշտացած չէի տեսել: Ես այդպես էլ չկարողացա հասկանալ, թե քեռի Իսոն ինչու էր ուզում ապացուցել, որ դա Պեպոյի նկարն է:

Այլևս չգնացի քեռի Իսոյենց տուն, և եթե պատահմամբ նրան կամ մորաքրոջս փողոցում հանդիպում էի, շուռ էի գալիս ու փախչում: Ա՛խ, այնպես էի ուզում այդ ատելի նկարը ոտքերիս տակ տալ…

Աշնանը մեր գյուղը մի մարդ եկավ, ասաց հին ապրանքներ եմ հավաքում՝ պատեֆոն, նավթավառ, հին ձայնապնակներ, գրամաֆոն և չգիտեմ էլ ինչ:

Դանակ-մկրատ սրող Հեթանոսը քարշ տվեց Իսոյից գնած գրամաֆոնը, որի մեջ արդեն ոչ խզխզոց էր մնացել, ոչ էլ տզտզոց, դրեց հնահավաքի առջև ու ասաց.

- Լավ ապրանք է, վերցրու, թե փոշմանես, քիթս կկտրեմ:

Հնահավաքը նայեց գրամաֆոնին, նայեց Հեթանոսին ու հարցրեց.

- Սա քեզ որտեղի՞ց:

- Իսոյից եմ գնել:

- Իսո՞ն: Դա ո՞վ է:

Նույն պահին հայտնվեց քեռի Իսոն, թևի տակ մի փաթեթ:

- Իսոն ես եմ,- ասաց:- Իսկ էդ գրամաֆոնը ես գնել եմ քսանչորս թվին՝ Բուդի Հաբուդիչի դուքանից:

- Հա՜, էդպիսի մի մարդ կար,- բազմանշանակ ժպտաց հնահավաքը:- Դու ի՞նչ ես բերել:

Քեռի Իսոն բացեց փաթեթը, մեկնեց նրան այն նկարը, որին Պեպո էր անվանում: Հնահավաքը նայեց և կարծես չհավատաց աչքերին: Ելավ նստած տեղից, բարձրացրեց նկարն ու գոչեց.

- Ցավդ տանեմ, ախր սա իմ հանգուցյալ հայրն է:

- Քո հա՞յրն է,- Քեռի Իսոն ճպճպացրեց աչքերը:- Իսկ դու ո՞վ ես:

- Ես Գարբուզ Չանգալջանսազյանն եմ:

Քեռի Իսոն նախ զարմացավ, ապա զարմանքը փոխեց զայրույթի.

- Ուրեմն դու Բուդի Հաբուդիչի շուլլեր, կարտոժնիկ, ավազակ, գող, թալանչի փեսա՞ն ես: Տո՜, ավազակ, ես քեզանից Պեպոյի նկարն եմ խնդրել, իսկ դու քո հաստափոր հոր նկարն ես վրաս ծախե՞լ,- հետո դարձավ ներկաներին:- Ախր գժվելու բան է, Պեպոն չի, Կակուլին չի, Գիքոն չի, Զիմզիմովը չի… ես որտեղի՞ց իմանայի, թե այդ որ շունշանորդու նկարն է, որ էսքան տարի կախել էի մեր պատից…,- քեռի Իսոն հուզմունքից հևում էր:- Ախր խեղճ երեխան ասում էր… Ախր ես հիմա ո՞նց նայեմ էդ անմեղ երեխայի երեսին…

1977 թ.

ԿԻՆՈ

- Կինոն սկսվել է, եկե՜ք...

Կինոն համր կինո է, կինոմեխանիկ Սերոժը՝ թլատ, կինոմեխանիկի օգնական Բագրատը՝ խուլ: Կինոապարատը կարի մեքենայի պես ձեռքով է պտտվում, և որքան արագ են պտույտները, այնքան աշխույժ են կադրերը: Սերոժը պտտում ու պատմում է այն ամենը, ինչ տեղի է ունենում էկրանի վրա, ինչ հանդիսատեսներն են տեսնում իրենց աչքով: Պատահում է և այնպես, որ նրա կողմից «սպանված» հերոսները հաճախ հարություն են առնում, երգում, պարում, ծիծաղում:

- Նայեցեք, ժողովուլդ, Չալլի Չապլինը այդ բուլժուա շանոլդուն հիմա կտա սպանի: Տվեց սպանեց... Հա՜, տեսեք, ելգ է ասում,- և Չարլի Չապլինը էկրանի վրա բաց ու խուփ է անում բերանը, կինոմեխանիկ Սերոժը նրա փոխարեն երգում է այդ ժամանակներում ամենատարածված երգը.

- Նա մի նազ ունի, նազ ունի, նազ ունի, ձելքին սազ ունի, սազ ունի, սազ ունի... Մալադեց Չապլին, Սելոժը քո ցավը տանի...

Կադրը փոխվում է, սպանված բուրժուան կենդանանում է, ու հիմա էլ ինքն է ձեռքերով, ոտքերով, ծնկներով, փորով, գլխով խփում Չարլի Չապլինին: Չապլինը գլուխկոնծի է տալիս, ցատկում է, վազում է, ընկնում է, բարձրանում է, ծեծում ու ծեծվում է... Ավագենց Հակուն գլուխն օրորում է զարմացած.

- Ժողովուրդ, յանի դա իսկականից է՞... Ժողովուրդ, յանի աշխարհում էդպիսի մարդ էլ է լինո՞ւմ...

- Բա ո՜նց, լինում է,- սա էլ դանակ-մկրատ սրող Հեթանոսն է:- Յապոնի փռոնտում մեզ մի պրապորշչիկ ունեինք, ջհուդ էր, անունը հայի անուն էր, Փամիլը... Կաց, տեսնեմ փամիլն ինչի փամիլ էր... Հա, փամիլը՝ Իսակ Կառուզման: Ուրեմն՝ էդ Կառուզմանը կրակը կուլ էր տալիս, ականջներից պապիրոզներ հանում...

Բագրատը գլուխը կախ պտտում է դինամոն, չի լսում դահլիճի ծիծաղն ու սուլոցները, ծափերն ու աղմուկը: Էկրանը նրա համար ընդամենը մի սպիտակ փալասի կտոր է, որ կինոն վերջացնելուց հետո ծալում, դնում է ապարատի կողքին ու սպասում Սերոժի հերթական կարգադրությանը:

Կինոն համր է, կինոմեխանիկ Սերոժը կինոնկարը ցուցադրելուց առաջ պահանջում է քառասուն ձու, որպեսզի խմի, ձայնը տեղը մնա, էկրանի վրա տեղի ունեցող գործողությունները լավ մեկնաբանի: Թե ինչպես է նա այդ քառասուն ձուն միանգամից խմում, դա հանդիսատեսներին չի հետաքրքրում:

Կինոապարատը չխչխկում է, դինամոն տժժում է, էկրանը լուսավորվում է, Սերոժը մաքրում է կոկորդն ու պատմում.

- Չալլի Չապլինը գալիս է: Հիմա բեղավոլի կանդազին կտա: Տվեց: Ժողովուլդ, լավ նայեցեք, մի սիլուն կնիկ է գալիս... Հա, եկավ... Փա՜հ, ի՜նչ կնիկ է, գլուխդ դնես էն լավ տեղին ու լա՜ց լինես, լա՜ց լինես, աշխալի հելն անիծես, լաց լինես...

Դահլիճում թնդում է ծիծաղը, դպրոցի դիրեկտոր Խորեն Աբաղյանը վեր է թռչում տեղից, բվի պես չռում կանաչ աչքերը.

- Որքան աշակերտներ կան, թող գնան իրենց տները: Վե՜րջ, այսուհետև երեխաների մուտքը խստիվ արգելվում է,- ու չարացած շուռ է գալիս կինոմեխանիկ Սերոժի կողմը:- Դու էլ չափավորիր քո խոսքերը, ամոթ է: Ո՞նց թե գլուխդ դնես... Գլուխդ որտե՞ղ դնես...

- Իմ խոսքելը համ չափված են, համ կտլված,- տաքանում է Սերոժը:- Մասսան պահանջում է, ես էլ պատմում եմ: Ուլիշ գյուղերում հիսուն ձու են տալիս, վաթսուն են տալիս, դել ելկու շիշ օղի էլ վլեն, դուք քալասուն ձու եք տալիս: Քալասուն ձուն մենակ մի հավ է ածում...

- Հավը ես եմ, ձու չեմ ածում,- արանքն է ընկնում Հաթափաթա Խուրշուդը:- Կարծում ես ձու ածելը փլա՞վ է: Դե մի ձու էլ դու ածիր, էլի, ինչի՞ չես ածում:

Կինոմեխանիկ Սերոժը երդվում է, որ մեր գյուղում այլևս կինո չի ցուցադրի, բայց մի շաբթից հետո երեխաները ձեն-ձենի են տալիս.

- Կինոն սկսվում է, եկե՜ք... Կինոն թունդ կռիվ է, եկե՜ք...

Կինոն իսկապես թունդ կռիվ է: Թնդանոթները կրակում են, և Սերոժը թնդանոթների փոխարեն բղավում է. «Բում, բու՜մ, բու՜մ»: Ռումբերը պայթում են, ձիերը ծառս են լինում, սվիններն ու թրերը փայլատակում են, գնդացիրների փողերից հուր է թափվում:

- Չապանը գալիս է, ժողովուլդ, ծափ տվեցեք,- ոգևորված գոչում է Սերոժը:- Էդ մեկն էլ Պետկան է, տեսեք սպիտակներին ո՜նց է հնձում... Պետկա, ցավդ տանեմ, հու՜պ տուլ, ես դրանց... Սերոժը հայհոյում է, մոռանալով, որ դահլիճում կին ու երեխա կա: Ընկեր Աբաղյանը այս անգամ նրան նկատողություն չի անում: Թող որքան ուզում է՝ հայհոյի, թշնամուն պիտի հայհոյել:

Կինոն համր է, կինոմեխանիկ Սերոժը՝ թլատ, կինոմեխանիկի օգնական Բագրատը՝ խուլ: Որտեղի՞ց եկավ խոսող կինոն: Որտեղի՞ց եկավ խոսող կինոյի մեխանիկ Համոն, նայեց համր կինոյի մեխանիկ Սերոժին ու ծիծաղեց: Նայեց կինոմեխանիկի օգնական Բագրատին, ձեռքերն օղակեց բերանին ու նրա ականջին գոռաց.

- Բագրա՜տ, էսօրվանից դու էլ, Սերոժն էլ, ձեր կինոն էլ արխիվ եք գնում, արխի՜վ, հասկացա՞ր...

Բագրատը լավ չլսեց, բայց ասաց.

- Խուլ չեմ, հասկացա:

Սերոժը ծուռ-ծուռ նայեց Համոյին, ուզում էր հայհոյել, անպատվել, բայց չգիտեր որտեղից սկսեր: Մտածեց, մտածեց ու գտավ.

- Համո,- ասաց,- այ մասխարա, էլի կնիկդ դու՞րս ես արել: Ախր դու ի՜նչ մարդ ես, տարին երկու անգամ պսակվում ես:

Համոն հասկացավ, որ Սերոժն ուզում է խոսող կինոյից վրեժ առնել, ձեռքը թափ տվեց.

- Քո կինոն հեչ, դատարկ բան է: Դե հիմա գնա տրաքվիր:

Պեպոն էկրանից հայերեն խոսեց ու հայերեն երգեց.

«Դամբը ձեռքիս ձուկ եմ որսու՜մ...»:

Գիքոն խոսեց, Կակուլին խոսեց, Ջիմզիմովը խոսեց, Կեկելը լաց եղավ, լացը հայերեն էր... Ավագենց Հակուն զարմանքից բերանն ավելի լայն բացեց ու գլուխը շարժեց.

- Ժողովու՜րդ, յանի սա հավատալու բա՞ն է... Ասում եմ՝ գուցե փարդայի ետևում մարդի՞կ են նստած, նրանք են խոսում:

Կինոմեխանիկ Սերոժը խեղճացավ, կինոմեխանիկի օգնական Բագրատը, որի համար խոսող և համր կինոները նույն բանն են, գլուխը դրեց արկղին ու քնեց: Սերոժը խեղճացավ, բայց չնահանջեց, և հաջորդ օրը կանգնեց ակումբի բակում ու կանչեց.

- Ժողովու՜լդ, Սելոժի կինոն ձլի է, ձեզանից Սելոժը փող չի ուզում, ձու չի ուզում...

Ակումբի ներսում խոսող կինոն էր, դրսում՝ Սերոժի համր կինոն: Համր կինոն ձրի էր, խոսողը՝ տոմսով: Կինոապարատը տժժաց: Սերոժը սկսեց պատմել. «Ժողովուլդ, տեսեք, էդ ավազակը Կաշչեյ Բեսսմելտնին է, դլան սպանելը հանաք բան չի»: Նա դիտմամբ բղավում էր, որ կարողանա խլացնել Համոյի կինոյի ձայնը, գոռում ու գոչում էր, հայհոյում ավազակ Կաշչեյին, թափահարում ազատ ձեռքը, ճչում...

Եվ ահա, այդ պահին ինչ-որ մեկը ձեռքը դրեց նրա ուսին ու խոսեց.

- Սերոժ, ախր այդ ո՞ւմ համար ես փորդ պատռում, խուլ Բագրատի՞...

Սերոժը սթափվեց, նայեց շուրջը, տեսավ մարդ չկա, ձեն-ձուն չկա, եղած-չեղածը պատի տակ պպզած մի շուն էր... գետնից մի քար վերցրեց, նետեց շան կողմը.

- Քու տիլու հելն անիծած, ձլի կինո է տեսել, թամաշա է անում:

ՃԱՊՈՒՏ

Ճաղասարի մի փեշին ճապուտն է, մի փեշին ծմակը, ոտքերի տակ Դիլանի այգին, ձորում շատախոս գետակը, որ գարնանը հորդանում է, գոռում-գոչում՝ տեսեք, ես իսկական գետ եմ, ամռանը ձենը փորն է գցում ու անխոս հարսի նման թաքուն քսփսում կողքի լերկ ժայռերի հետ:

Հին է Ճապուտ գյուղը, ինչպես հին են գերեզմանատան մամռապատ շիրմաքարերը Ես. Հովսեփի եկեղեցին, որ ետևից արդեն ճաք է տվել, բայց դեռ կանգուն է, փլվելու միտք չունի:

Ճապուտը մեծ գյուղ չէ, փոքր էլ չէ. ունի իր փոստը, ակումբը, գրադարանը, դպրոցը, վարսավիրանոցն ու գրասենյակը: Ամռանն այստեղ ջրերը զուլալ են, երկինքը լեղակով լվացած, Չարդասարի անտառի զեփյուռը խաղում է կանաչ մարգագետիններում, սարյակները երամով գալիս նստում են տների քիվերին, իրենց սրինգը նվագում: Աղջիկները հասակ են առնում ժամանակից շուտ, ամուսնանում գյուղից քաղաք տեղափոխված իրենց հայրենակիցների հետ, թողնում գյուղը և մոռանում են, որ ճապուտցի են:

Ակումբավար Ռիտան շրջանային օլիմպիադաներում միշտ մի «Մի բալա է» ու «Ձով գիշեր» էր երգում, գրավում առաջին մրցանակը, կինոմեխանիկ Արարատը նրա սիրուց հալվում էր և իր հալված ու մաշված ձայնով ծոր տալիս. «Աշուղ եմ էդ քո սև-սև աչերին»: Այնքան աշուղ դարձավ, որ Ռիտան ստիպված ամուսնացավ նրա հետ ու հրաժարվեց օլիմպիադաներից:

Ճապուտն ունի իր ճանապարհը, որ ձգվում է քերծերի արանքով, ձորաբերանով պատ տալիս, Արզումանի խութի մոտ միանում խճուղուն: Ճապուտցին ասում է. «Հրե՜ն Երևանը, Բաքուն, Թիֆլիսը, հո քառասուն սարի ետևում չեն: Հասար Արզումանի խութին, դեմդ՝ աջ կողմից Երևանն է, ձախ կողմից՝ Թիֆլիսը: Մի քիչ էլ գնաս, կհասնես Կրասնոդար»: Ճապուտցին դա ասում է ոչ թե նրա համար, որ անտեղյակ է աշխարհից, այլ նրա համար, որպեսզի հաստատի իր հայրենի գյուղը, հաստատի նաև իր տեղն աշխարհում: Ի՞նչ եք ուզում, մի քանի տարի առաջ գուսան Աշոտը իր խմբով ելույթ է ունեցել Ճապուտում, կինոմեխանիկ Արարատենց տանը գինի խմել ու ասել. «Արարատ, թե որ գաս Երևան, իսկույն զանգիր մեր տուն. ահա իմ հեռախոսի համարը՝ 52-20-53»: Արարատը գործով գնացել էր Երևան, նույն համարով զանգել գուսան Աշոտին, բայց ընկել էր ուրիշի բնակարան և այդ ուրիշն ասել էր. «Ցավդ տանեմ, դարաբաղցի, համարը սխալ ես հավաքել, բայց վնաս չկա, մենք էլ ենք սիրում գուսան Աշոտին, այսօր դու մեր ազիզ հյուրն ես»: Դա վաղուց էր:

Հունիսին խոսք եղավ Դանդարովի ձորում բացվող քարահանքերի մասին, հուլիսին մեքենաները դղրդացին, ժայռերը փուլ եկան, օգոստոսի վերջերին կրահորերից քուլա-քուլա ծուխ բարձրացավ: Գյուղի ջահելները մեկ-մեկ իջան ձորով ոլորվող կածանով ու չվերադարձան: Ջահել հարսերը իրենց ամուսինների ետևից գնացին ու չվերադարձան: Օրորոց օրորող տատիկները գնացին իրենց փամփլիկ թոռնիկներից կարոտներն առնելու՝ չվերադարձան: Մի օր էլ գյուղսովետի քարտուղար Աշխենը հաշվեց և տեսավ, որ վերջին երկու տարում գյուղում յոթ երեխա է ծնվել: Դպրոցի դիրեկտոր ընկեր Մարգարը լուսբաժնին ներկայացրած փաստաթղթերում յոթը դարձրեց տասնյոթ, բայց էլի չստացվեց, ութամյա դպրոցը փոխվեց տարրականի: Տարրականը երկու տարի դիմացավ, և որովհետև այլևս ծնունդ չեղավ, ընկեր Մարգարը ստիպված անցավ թոշակի, տեղափոխվեց քաղաք՝ որդու մոտ, մի երկու թղթակցություն գրեց Ճապուտի այգեգործների մասին՝ տպեցին: Հոդված գրեց՝ Ճապուտը դատարկվել է, մի քանի հալևոր են մնացել՝ չտպեցին: Ասացին՝ դա մեր այսօրվա գյուղի համար տիպական չէ, չի կարելի քաղաքը հակադրել գյուղին: Եվ ընկեր Մարգարը այլևս ոչ մի թղթակցություն էլ չգրեց, գնաց քաղաքային զբոսայգում իր հասակակիցների հետ նարդի խաղալու:

Աշունքին Լաչինի քրդերը Ճապուտում ոչխար, բուրդ, մոթալի պանիր են ծախում, գնում կանգնում կոլտնտեսության գրասենյակի մոտ, որ յոլդաշ Սանթրոսյանի քեֆն ու հալը հարցնեն:

- Կին, խոխա լա՞վ են, յոլդաշ սադիր:

Սանթրոսյանը տեղ է շտապում՝ հա, լավ են:

- Դու ինչպե՞ս ես, յոլդաշ սադիր:

- Ոչինչ, վատ չեմ:

- Լավ լինես, յոլդաշ սադիր, լավ լինես… Կարելի՞ է մի րոպե:

- Հը, ի՞նչ կա, ասացեք:

- Մեզ ընդունեցեք ձեր կոլխոզում, ձեր ոչխարը, տավարը, ձիերը, այծերը տանենք պահենք: Վալլահ, չեք փոշմանի:

- Քանի՞ երեխա ունես,- հարցնում է ճպճպացնող աչքերով քրդին:

- Հինգ տղա, չորս աղջիկ:

- Խարման քիրվա, դու քանի՞ երեխա ունես:

- Կնիկս էսքանի օրը մի երեխա էլ կբերի, կհաշվեմ, կասեմ:

- Հա, աստված պահի ձեր րեխոցը, ես շտապում եմ:

- Բա մեզ ձեր կոլխոզում չե՞ս ընդունում:

- Ինչի՞…

- Էս հողերը առաջներում մեր հողերն են եղել:

- Բա մենք որտե՞ղ ենք եղել:

- Ի՞նչ իմանամ: Սրանք մեր հողերն են:

- Համա խելոք եք, հա,- Սանթրոսյանը փակում է իր աշխատասենյակի դուռը,- էլ ձեր ոտը էստեղ չտեսնեմ… գեդին, գեդին:

- Ցախշի, յոլդաշ սադիր,- ասացին, և կոլտնտեսության Ճապուտի տեղա-

մասի բրիգադավար Իշխան Ջաղացպանյանը նայեց տեսավ իր եղբոր՝ Ներսեսի պատշգամբին մի քուրդ կանգնած, ուսերը վեր քաշեց ու հարցրեց.

- Գարդաշ, խե՞ր օլսին:

- Սալամ, Իշխան գարդաշ,- քուրդը ոնց որ ուրախացավ,- նաթարի սան, խոխենքդ ո՞նց են, կինդ, մերդ, եղբայրդ...

- Հլա մի ասա տեսնեմ, ուրիշի պատշգամբին ի՞նչ գործ ունես:

- Լավ տուն է, քեֆս եկավ, որքա՞ն տամ:

- Ի՞նչ է, դու տո՞ւն չունես:

- Ի՞նչ տուն, գոմ ասա: Ձեր ոչխարը կպահեմ:

- Մենք ոչխար չունենք, մեր կոլխոզը բանջարաբուծական թեքումով է:

- Կտանեմ ձեր կանաչին ծախեմ, մի բան էլ ձեզ կմնա:

- Լսիր, դա իմ եղբոր տունն է, էսքանի օրը կգա... Դուրս եկ, դու էստեղ տուն չունես:

- Եղբայրությանը դեմ ես, էլի:

- Դու որտե՞ղ ես հայերեն այդպես լավ սովորել:

- Աթադան-բաբադան մենք էդպես ենք, եղբայրը եղբոր լեզուն պիտի իմանա:

- Տո, չլինի՞ ինձանից էլ եղբայրաբաժին ուզես. մենք ծախու տուն չունենք:

- Գյուղսովետի սագրի հետ կխոսեմ:

- Գյուղսովետի նախագահն էլ եմ հիմա ես, քանի միլիցիա չեմ զանգել, հեռացիր այստեղից:

Ճապուտը հին գյուղ է, Ղաշունց Իշխանը այդ հին գյուղի պատմությունն ավելի լավ գիտե, քան պատմության ուսուցիչ Շեքսպիր Օհանջանյանը: Բայց հիմա այդ պատմությունը ո՞ւմ է հարկավոր, լսողն ո՞վ է: Օհանջանյան Շեքսպիրի սիրտը կատակ էր ուզում, նայեց բոստանում կանգնած Իշխանին ու հարցրեց. «Ընկեր Իշխան դայի, ինչո՞ւ ձեր Սաթենը երեխա չի բերում, որ դպրոցը չփակվի»: Ընկեր Իշխան դային պատասխանեց. «Ընկեր Շեքսպիր, էս սահաթին գնամ մեր Սաթենին ասեմ՝ քեզ համար մի դասարան երեխա ծնի: Դու էլ քո սիրուն կնկան ասա՝ թող շալվար չհագնի, ամոթ է»:

Ուրեմն՝ քարահանքերից ոչ ոք չվերադարձավ: Գյուղսովետի նախագահ Ցատուրը մտածեց, ասաց՝ գնամ դրանց համոզեմ բերեմ, ախր գյուղը դատարկվել է: Գնաց, չկարողացավ համոզել, երեք օրից հետո քարտուղարուհի Աշխենին զանգեց, թե՝ կնիքը, մատյանները, սեյֆը՝ մնացած բաների հետ տանում ես շրջկենտրոն, ռաշոտդ վերցնում: էլ մենք չկանք:

Աշխենն առավոտյան ճանապարհվեց շրջկենտրոն, երեկոյան զանգեց ամուսնուն՝ «Արա՜, Հաթամ, ախր Ճապուտում ի՞նչ ես կորցրել: Եղած-չեղածը հավաքիր, լցրու մեքենան, արի»:

Հաթամը եղած-չեղածը լցրեց մեքենան ու գնաց: Փոստի Միշան գնաց ու մի անգամ չասաց՝ բա որ գնում եմ, գյուղի փոստն ո՞վ կբերի: Նավասարդենց Սիմոնը բահը տնկեց առվի կողքին, նայեց ծորի բոստանների կողմն

ու կանչեց. «Ժողովո՜ւրդ, ախր ջուրը զուր տեղը հոսում է, ինչի՞ չեք շուռ տալիս ձեր լոբուտի վրա»: Ասաց ու ծիծաղեց, և որովհետև ծիծաղը մնաց անպատասխան, տխուր հառաչեց. «Ճապո՜ւտ, մեջքդ կոտրվի, որ իմ մեջքը կոտրեցիր»:

Իշխանը բոստանից եկավ ու կանչեց Վանատուրենց Գասպարին, թե՝ արի հաշվենք, տեսնենք գյուղում ով է մնացել: Հաշվեցին՝ Մակարենց Առնավուդը, Նավասարդենց Սիմոնը, Առաքել ամին, Թափալ դային, Միսրի Սահակը, Գալունց Հաբեդը...

- Թափալ դային հաշիվ չի,- Գասպարն օրորեց գլուխը:- Բերանում մի շունչ է մնացել: Գնացի տեսության՝ չճանաչեց: Արի նամակ գրենք:

- Ի՞նչ նամակ:

- Թող քարահանքերը փակեն:

- Խելքդ տե՞ղն է, Գասպար: Քարահանքերը ո՞նց կարող են փակել:

- Բա ի՞նչ անենք:

- Մի բան պիտի մտածել:

Առավոտյան նախրապան Առնավուդը կանգնեց գյուղի կենտրոնում ու կանչեց.

- Ժողովու՜րդ, նախիրը բերե՜ք, տանում եմ:

Նախիրը վեց կով էր, ութ այծ: Էլի կանչեց. «Նախիրը բերե՜ք, տանում եմ», հետո հասկացավ, որ եղածն այդ էր, գնաց Սիմոնի ավանակն էլ հանեց գոմից, միացրեց նախրին ու հանդ քշեց:

Թափալ դային իրիկնամուտին մահացավ, բարեկամներն ու ծանոթները եկան քարահանքերից, մի քիչ ախուվիշ արեցին, Վանատուրենց Գասպարը հանգուցյալի մասին շատ լավ խոսքեր ասաց ու վերջում էլ նախատեց ճապուտցիներին, որ թողել են գյուղը, թողել են իրենց ապուպապերի գերեզմաններն անտեր:

- Նախիրը բերե՜ք, տանում եմ,- կանչեց Առնավուդը:- Սիմոն, էշդ որտե՞ղ է, ինչի՞ չես բերում:

- Էշը նախի՞ր է,- ծիծաղեց Սիմոնը:- Իրիկունը ակումբում ժողով է, զուռնադ չմոռանաս:

Երկու հարյուր տեղանոց ակումբում նստել էին քսան մարդ: Նստել ու չէին խոսում: Ախր, ինչի՞ց խոսեն: Առնավուդը գտավ, թե ինչից պիտի խոսել՝ բարձրացավ բեմ ու փչեց զուռնան: Պարեղանակը հին էր, բայց Առնավուդը լավ էր նվագում: Իշխանը թևերը լայն տարածեց ու կնոջը՝ Սաթենիկին հրավիրեց պարի: Գասպարը քաշեց իր Նուբարի թևը, Առաքելը կնոջ հետ էլի խռով էր, Առնավուդի Անգինին հրավիրեց: Սիմոնը ոտքերը խփեց հատակին ու գոչեց.

- Այ ժողովուրդ, շաբա՜շ, շաբա՜շ, այ շաբա՜շ...

Պարողներն էլ էին իրենք, շաբաշ տվողներն էլ: Հավաքվեց քսանութ ռուբլի, Առնավուդն ուզում էր գրպանում դնել, փոշմանեց.

- Չէ, ժողովուրդ,- ասաց,- թողեք մնա ձեզ մոտ, որ վաղը նորից շաբաշ տաք:

- Խելոք միտք է,- համաձայնեց Իշխանը:- Ես մի առաջարկություն ունեմ՝ եկեք թատրոն խաղանք:

- Թատրո՞ն,- ծիծաղեց Սիմոնը:- Ի՞նչ թատրոն:

- «Անուշ»: Ես Սարո կլինեմ, դու՝ Մոսի, Առնավուդը՝ տերտեր, մեր Սաթենը՝ Անուշ, Նուբարը՝ Նանի, Առաքելը...

- Առաքելի անունն էդ ցուցակից հանիր,- Առաքելը կիտեց հոնքերը:- Ես թատրոն խաղացող չեմ:

- էդ ինչի՞ մենք կխաղանք, դու չես խաղա,- հարցրեց Սիմոնը:

- Հենց էնպես:

- Ուրեմն հարցդ կդնենք ընդհանուր ժողովում:

Երեքշաբթի երեկոյան Առնավուդը կանչեց.

- Ժողովու՜րդ, թատրոնը սկսել է, եկե՜ք...

Թատրոնի միտքն Իշխանի մոտ էր ծագել, Իշխանն էլ երգեց. «Աղջի, անաստված, նստիր վրանում...», շարունակությունը մոռացավ, Նուբարը հուշեց. «Ի՞նչ ես դուրս գալիս խելքամաղ անում»: Սաթենը երգելու միտք չուներ, ծիծաղեց, հետո Առնավուդը սկսեց ցուցադրել իր օյինբազությունները՝ կրակ կուլ տվեց, բերանից բամբակ հանեց, բամբակը կուլ տվեց, Առաքելի գրպանից հավի ձու հանեց: Առնավուդին ծափահարեցին: Գասպարը կապկեց գյուղսովետի նախագահ Ցատուրին՝ ծիծաղեցին: Սիմոնը արտասանեց «Մի կաթիլ մեղրը» և՛ ծիծաղեցին, և՛ տխրեցին: Առաքելը ոչ մի շնորհք չուներ, հայհոյեց Ցատուրին, դպրոցի դիրեկտոր Մարգարին ու կարգադրեց.

- Առնավուդ, սրանից դենը դրանց նախիրը հանդ չես տանում:

- Աչքիս վրա,- Առնավուդը զույգ մատը դրեց աչքին,- մասսայի որոշումը բոլորիս համար օրենք է:

Չորեքշաբթի երեկոյան Առնավուդը նախիրը հանդից բերեց ու կանչեց.

- Ժողովո՜ւրդ, Թիֆլիսի խումբը եկել է, լավ կոնցերտ է, բիլեթը պրծնում է, եկե՜ք...

Հինգշաբթի իբր թե Երևանի խումբը եկավ, ուրբաթ՝ Բաքվի խումբը, շաբաթ օրը՝ Մոսկվայի Մեծ թատրոնը, կիրակի օրը՝ հանրահռչակ Դուրովն ու Կարանդաշը...

Երկուշաբթի օրը քուրդ Աստանը եկավ՝ եղբոր, բաջանաղի, քեռու հետ, մահակը դեմ տվեց ծնոտին, ասաց. «Իշխան, տան միար եմ եկել, արի տեսնենք քանի մանեթի վրա ենք բարիշում»: Իշխանը ցույց տվեց եղբորորդուն, որ բակում բեռնատար ավտոմեքենա էր նորոգում. «Տան տերը ինքն է, գնա հետը խոսիր»: Հուսիկը ավտոմեքենայի տակից հանեց գլուխն ու ասաց՝ հիսուն հազար, հարյուր հազար, ալըրսա՞ն: Աստանը ծոծրակը քորեց՝ չէ, հանաքը մի կողմ, որքա՞ն տամ: Հուսիկը փալասով ձեռքի մազութը մաքրեց, մտավ խցիկը, մեքենան գործի գցեց ու խոսեց՝ տունը ծախու չէ, հիմա գնում եմ մերոնց հավաքեմ բերեմ: Հետո, լավ հիշիր, քիրվա, ճապուտցին իր ձեռքով շինած տունը չի ծախում ամեն մարդու վրա:

Երեքշաբթի՝ օրը ոչ մի խումբ էլ չեկավ: Իշխանը բացատրեց, որ այդ օ-

ներին արվեստի մարդիկ հանգստանում են, հետո թերթեց Շեքսպիրի առաջին հատորը, մտքում դերաբախշում կատարեց. «Ես՝ Օթելլո, մեր Սաթենը՝ Դեզդեմոնա, Սիմոնը՝ Յագո… Հա, Սիմոնից լավ Յագո դուրս կգա, միշտ մարդկանց իրար դեմ է լարում, կողքից թամաշա անում: Նուբարը կլինի էմիլիա, Առնավուդը՝ Ռոդրիգո…»:

- Առաքել, կարո՞ղ ես Կասիո խաղալ:

- Էդ ո՞վ է:

- Իմ տեղակալը:

- Քանի՞ աշխօր ես տալիս:

- Աշխո՞ր,- Իշխանը ծիծաղեց:- Արա, Առաքել, դու թամամ ցիրկ ես: Թատրոն ենք խաղում, թատրոն:

- Էլի թատրո՞ն: Ախպեր, դու քո էդ թատրոնով մեզ կսպանես: Խի՞ ուրիշ բան չկա:

- Ինչո՞ւ չկա. խնդրեմ, ֆիգուրնի կատանի, կնկանդ կվերցնես ու սառույցի վրա կֆռռաս:

- Ամռան էս տաքին սառույց որտեղի՞ց: Ես ուրիշ բան եմ մտածել: Եկեք նամակ գրենք.

- Ո՞ւմ գրենք,- հարցրեց Սիմոնը:

- Գյուղսովետի նախագահ Ցատուրին:

- Ի՞նչ գրենք:

- Ասացի, չէ՞, նամակ գրենք, թունդ նամակ:

Նամակ գրեցին: Ցատուր, քեֆդ ո՞նց է: Ասում են՝ քարահանքերում ոսկի ես գտել, ճի՞շտ է: Վա՜յ, Ցատուր, վա՜յ… Թութը ճապուտում ծլլում է, ուտող չկա: Խորովածը գցել ենք՝ Ցատուր չկա: Իմացած լինես, Թիֆլիսի խումբը երեկ եկավ, լավ կոնցերտ տվեց… Վաղն էլ Թաթուլ Ալթունյանի խումբն է գալիս, մյուս օրը՝ գուսան Շահենը… Արա՜, ա՛յ տնաքանդ, մեր հողերը Չափարի կոլխոզը վարում է և աչքդ էլ է հանում, խի տիրություն չես անում, հը՞… Հիմա ուզում ենք անունդ մեր գյուղի ցուցակից ջնջել, ի՞նչ ես ասում: Քեզ էլ կջնջենք, դպրոցի դիրեկտոր Մարգարին էլ կջնջենք, քարտուղար Աշխենին էլ կջնջենք… Որ ջնջենք՝ ի՞նչ պիտի անեք: Որ ջնջենք, կարո՞ղ եք ապացուցել, որ ճապուտցի եք: Չեք կարող: Դե ուրեմն ջնջեցինք:

Նամակը ծրարեցին, Իշխանը ծրարի վրա խոշոր տառերով գրեց. «Քարահանքեր, Ճապուտի նախկին գյուղսովետի նախագահ ընկ. Ցատուր Աղաջանյանին»: Առնավուդն ուզում էր ծրարը խցկել գյուղի կենտրոնի հեռագրասյունից կախած փոստարկղի ճեղքից ներս, Իշխանը չթողեց.

- Ա՛ շաշ, ախր մինչև հիմա փոստատար չունենք, նամակն ո՞վ պիտի հանի:

- Հա, էլի,- ասաց Առաքելը:- Եկեք Սիմոնին փոստատար դարձնենք: Ամիսը հարյուր ռուբլի աշխատավարձ: Հը՞, Սիմոն:

- Հարյուրը քիչ է,- Սիմոնը գլուխն օրորեց:- Շատ է քիչ:

- Թող լինի հարյուր հիսուն:

- Համաձայն եմ:

Սիմոնը փոստը տարավ: Փոստը մի նամակ էր:

Օրվա երկրորդ կեսին կոլտնտեսության նախագահ Սանթրոսյանը ելկավ, թաշկինակով ճակատի քրտինքը սրբեց ու հարցրեց.

- Հը, Իշխան, ի՞նչ կա:

- Ջանսաղություն:

- էն քրդերին շատ ես երես տվել:

- Ո՞վ ասաց:

- Շատ են էս կողմերի վրա շուռ գալիս:

- Ինձ վրա չէ, դատարկված տների վրա են պտտվում:

- Բա լավ, էս ո՞նց եղավ:

- Ո՞նց պիտի լինի, ավտոմեքենան մեր տեղամասից վերցրիր, տրակտորը վերցրիր, ակումբավարը կրճատեցիր, փոստի բաժանմունքի պետին դարձրիր հաշվապահի օգնական, քարահանքերը քթներիս տակին տնկեցիր...

- Հա, քարահանքերի հարցում սխալվել ենք,- համաձայնեց Սանթրոսյանը,- երեկ ժողովում ասացին, որ այդ հանքերն իրենց չեն արդարացնում, ուրեմն այդ հարցն ինքնըստինքյան մեջտեղից վերանում է:

- Դրանով մեր ծուռ վիզը դզվեց:

- Հաշվել եմ, տասնհինգ ընտանիք վերադառնում են:

- Բա՞ դպրոցի հարցը...

- Դպրոցն էլ կլինի,- Սանթրոսյանը լավ էր տրամադրված, աչքով արեց,- Իշխան, ճի՞շտ է, ասում են մեկ-մեկ թատրոն եք խաղում:

- Բա էս անտեր գյուղն ինչո՞վ շեն պահենք:

Առավոտյան Իշխանը մտավ գրասենյակ, զանգեց շրջկենտրոն, գծի մի ծայրին հայտնվեց կինոմեխանիկ Արարատը: Նա աչքով արեց ու սկսեց ռուսերեն խոսել.

- Էտո կինոմեխանիկ Արարա՞տ: Արարատ, տի նախալ, տի բեզդելնիկ, տի մուդակ ի չուդակ: Ո՞նց թե ով է: Քո նաչալնիկը: Պաչեմո՞ւ: Պատամու չտո վ Ճապուտե կինո նետո: Էդ ո՞նց թե Ճապուտում մարդ չկա: Էս րոպեին կինոդ Ճապուտում լինի: Վաղն էլ՝ կինդ, երեխաներդ... Լսեցի՞ր:

Իշխանը լսափողը իջեցրեց, հիմա էլ հավաքեց անասնաբույժ Խորեն Սառիկյանի տան համարը:

- Լսողն ո՞վ է... Ա, բարև, ընկեր անասնաբույժ: Ձեզ ոչինչ չե՞ն ասել: Դե ուրեմն հիշեցեք, եթե վաղը ամբողջ գերդաստանով Ճապուտում չլինես, մենք ստիպված ուրիշ քայլի կդիմենք: Լսու՞մ եք, ընկեր Սառիկյան... Չգիտեմ, կարող եք մի բեռնատար վարձել:

Սիմոնը երեկոյան քարահանքերից վերադարձավ ու կանչեց.

- Ժողովո՜ւրդ, կինոն սկսվում է, եկե՜ք...

Հավաքվեցին ակումբի բակում, տեսան ճիշտ է, կինոմեխանիկ Արարատը կարգի է բերում կինոապարատը:

Նկարը հին էր, բայց չբողոքեցին, մենակ Առաքելը մի քիչ թնկթնկաց.

- Որքան հին բաներ կան, քշում են Ճապուտ: Հիմա, որ թերթին նամակ գրենք, ո՞նց կլինի:

Արարատը հավաքեց ապարատը, ուզում էր տեղավորել ավտոմեքենայի մեջ, Իշխանը չթողեց.

- էս ապարատը, Արարատ, կմնա մեր գյուղում:

- էդ ո՞նց ,- զարմացավ Արարատը:- Տասը մարդու համար այստեղ ապարատ եմ պահելո՞ւ:

- Ինչ ես ախմախ-ախմախ դուրս տալիս,- բարկացավ Առնավուդը:- Քեզ ո՞վ է իրավունք տվել, որ մասսային մատներիդ վրա հաշվում ես: Ուրեմն՝ Դուրովը քեզանից պակա՞ս տղա էր, որ Մոսկվայից վեր կացավ եկավ: Ուրեմն, քո կարծիքով, Թաթուլ Ալթունյանը, գուսան Շահենը, Հավասին խելք չունե՞ն: Հլա մի լավ նայիր, հրես նամակ ենք գրել, էս քանի օրը Չարլի Չապլինը, Շառլ Ազնավուրը, Հովհաննես Շիրազը մեր հյուրերն են: Տես, հա՜, նաչալնիկիդ պոչը կքանդենք:

Կինոմեխանիկ Արարատը գնաց քարահանքերում տարածեց, թե Ճապուտի ալևորները ցնդել են, տարօրինակ բաներ են ասում: Չեք հավատում, ինքներդ գնացեք՝ տեսեք:

Գյուղսովետի նախկին նախագահ Օատուրը, որ նույնպես այդ կարծիքին էր, եկավ Ճապուտ, ակումբից զուռնայի ձեն լսեց, դռան ճեղքից նայեց, մնաց շվարած, Առնավուդը նվագում է, Առաքելը դամը պահում է, Իշխանը դհոլ է խփում, կնանիքը պարում են, ո՜նց են պարում: Սիմոնը պարում է, ո՜նց է պարում: Առնավուդը նվագում է, ո՜նց է նվագում: Իշխանը դհոլ է խփում, ո՜նց է խփում:

Օատուրը դուռը բացեց ու հարցրեց.

- էդ հարսանի՞ք է:

- Հարսանիք է,- Իշխանը դհոլը սեղմեց կրծքին, մոտեցավ նրան:- Ճապուտի հարսանիքն է: Կարծում եք՝ ձեր գնալով Ճապուտը վերջացա՞վ: Չէ, սխալվում եք: Լավ նայիր, կինոապարատ ունենք, հեռուստացույց ունենք, հեռախոս ունենք: Մենակ էդ չի՝ թատրոն ենք խաղում, ժողով ենք անում, համերգ ենք տալիս, նախիրը հանդ ենք քշում, կնանիքը խնոցի են հարում... Հլա մտքներումը դրել են՝ երեխա են բերելու: Դե հիմա տրաքվեցեք:

Իշխանը ծիծաղո՞ւմ, թե՞ լաց է լինում, բողոքո՞ւմ, թե՞ նախատում է, պարծենո՞ւմ, թե՞ սպառնում է: Նրա աչքերը խոշորացել են, մկանները պրկվել, բայց խոսքի մեջ հաստատակամություն կա:

- Օատուր, հիմա ասա տեսնեմ՝ ինչո՞ւ ես եկել:

- Լռությու՜ն, ժողովուրդ, կինոն սկսում եմ,- Առնավուդը բարձրացրեց ձեռքը:- Օատուր, բիլեթ վերցրու, կինոն ձրի չի:

Կինոապարատը տժժաց, բարձրախոսը աղմկեց, էկրանի վրա նկարները շարժվեցին: Օատուրը նստեց վերջին շարքում, գլուխն առավ ափերի մեջ ու երեխայի պես հեկեկաց: Հեկեկաց, հանգստացավ, ելավ տեղից ու խոսեց.

- Ժողովո՜ւրդ, գնում եմ տուն-տեղ հավաքեմ՝ գամ, ընդունո՞ւմ եք:

- Ի՞նչ ասեմ,- ուսերը շարժեց Իշխանը:- Հարցը ժողովում կդնենք:

- Մենակ չեմ գա, ուրիշներին էլ կբերեմ:

Առնավուդը նայեց ներկաներին, ապա մոտեցավ, գրկեց Ցատուրին ու գոչեց.

- Ցավդ տանեմ, ընկեր Ցատուր, դու լավ մարդ ես:

ՄԵՂՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Մի ասող լինի՝ Ադամ, Ադամի թոռ Ադամ, Ավագի տղա Ադամ, Ադամենց Ադամ, այս տակուգլուխ տունը, այս կազարմա օթախները, այս դարանդազ պատշգամբն ո՞ւմ համար ես շինել: Այս թթենիները, այս ծիրանի, խնձորի, տանձի ծառերն ո՞ւմ համար ես տնկել: Ո՞ւմ համար ես շարել այս մեղվափեթակները, այսքան հավ ու ճիվն ո՞ւմ համար ես պահում, էդ ո՞ւմ համար է սիրտդ էդպես պողերին գցել: Անդոն կնկա խելքով ընկավ, գնաց Քելունց Մարտիրոսի տներն առավ, քանդեց, նորից սարքեց, մինչև տուն դարձրեց, հոգին հասավ կոկորդին: Նավասարդը գյուղի էն մի ծերին տուն շինեց, Լազրը գնաց քաղաք, պսակվեց, փա՛ռք աստծո, էլի ամռան ամիսներին մեկ-մեկ ծնողներին հիշում է, կնկա հետ տեսության գալիս:

Գալիս է, պատշգամբին նստում, ոտը ոտովը գցում, նայում ծառերին ու խոսում կնոջ հետ. «Սուսան, այս ծառերը քաղաքում, մեր բակում լինեի՞ն...»: Սուսանը ծառերին չի նայում, ծառերը չի տեսնում, միտքն ուրիշ տեղ է. ծառերի տակ շարված մեղվափեթակների վրա է: Ուզում է իմանալ, թե ամեն մի մեղվափեթակից որքան մեղր է գալիս: Սուսանի սիրտը մեղր է ուզում: Սուսանի դիրեկտորը, դիրեկտորի տեղակալը, կադրերի բաժնի վարիչը, գլխավոր հաշվապահը մեղր շատ են սիրում, շա՜տ: Սուսանը մի հարևանուհի ունի՝ Սառա Արմենակովնա, թիկունքում չորս Սուսան կթաքցնի: Այս Սառա Արմենակովնան ամեն առավոտ մեղր պիտի ուտի: Որ չուտի, Սուսանն ինչպե՞ս կարող է խանութից իմպորտնի գուլպաներ, կոշիկներ, խշխշան թիկնոցներ, նախշուն-նախշուն ժակետներ գնել: Կեցցե՜ս, հարս, Ադամի մեղվափեթակներով գործդ քաղաքում լավ ես դրստում:

Հունիսի կեսերին էր, մարդ ու կնիկ եկան, թե ապեր, մի քիչ մեղր է հարկավոր: Ախր, ապերը ձեր ցավը տանի, հիմա փեթակներում ի՞նչ մեղր պիտի լինի, չե՞ք կարող մի քանի շաբաթ էլ սպասել: Տեսնում եք, չէ՞, տերը մեռած ճանճերի շնացած ժամանակն է, փեթակներին մոտենա՞լ կլինի: Դե լավ, որ ասում եք, որ շատ եք խնդրում, որ էդ Սառա Արմենակովնան չի ուզում սրտի քեֆին կպչել, ի՞նչ կարող եմ անել:

Ադամը մտավ մեղվանոց, բարձրացրեց փեթակի կափարիչը, մի շրջանակ հանեց, ձեռքում շուռումուռ տվեց. չէ՛, բանի նման չէ: Վերցրեց մի ուրիշը, և որտեղից որտեղ տերը մեռած մեղուն թռավ, գնաց պտտվեց պատշգամբում, բզզաց Սուսանի ականջի տակ, Սուսանը ձեռքերը թափահարեց, ոնց որ պարելիս լիներ, մեղվին էլ այդ էր հարկավոր, խայթը խեղճ

հարսի շուրթը խրեց, դե մեղու է, էլի, խայթեց՝ խայթեց, Ադամն ի՞նչ մեղք ունի: Հո ինքը չի ասել՝ ա՛յ մեղու, էն պատշգամբին կանգնած ջահել ու սիրուն կնիկը տեսնո՞ւմ ես՝ մեր հարսն է, գնա դրան էնպես խայթիր, որ եկած ճանապարհը մոռանա:

Պա՛հ, քո ինչն ասեմ, նեժնի-մարոժնի հարս, ձենը գցեց ու սաղ գյուղը գլխին հավաքեց: Կանչեցին ֆելդշեր Արմանին, Արմանը նայեց հարսի ուռած դեմքին ու ծիծաղեց. «Վա՜յ, Սուսան, Սուսան, Ադամ ապուն մեղուն սորտդ փոխել, քեզ մաքուր ուզբեկ է դարձրել»: Հավաքվածները ծիծաղեցին, այս Սուսանն ավելի հերսոտվեց, բոլորին բաց թողեց, ամուսնուն բռնեց. «Ես այստեղ ի՞նչ գործ ունեմ, ի՞նչ եմ կորցրել այս գյուղում: Մեղր է հարկավոր, շուկայից կառնենք: Վե՛րջ, ես ոտս այլևս Քարաշենում չեմ դնի»:

Մարդ ու կնիկ ավտոբուս նստեցին ու գնացին: Խռոված գնացին: Բարի ճանապարհ: Գնացեք կոլտնտեսային շուկայից խնկաբույր, մեռոնի պես մաքուր Ղարաբաղի մեղր գնեցեք. թե կեսը շաքար չեղավ, նշանակում է՝ Ադամը Ադամի թոռ Ադամը չի, Ավագի տղա Ադամը չի, համշարի է: Գնացեք ճաղունց Սիմոնից գնեցեք ձեր մեղրը: Սիմոնն, էլի, այն Սիմոնը, որ մի կիլոգրամ մեղրի վրա քառասուն կիլոգրամ երդում է դնում. «Էս մի կտոր հացին ոչ արժանի լինեմ, երեխեքս մեռնեն, թե իմ մեղրի նման աշխարհում հալալ-զուլալ մեղր գտնեք: Քռասնու մեղր է, Քռասնու մեղրին աշխարհում մեղր չի հասնի»: Մի ասող լինի՝ Ճաղունց բերանը պատռած Սիմոն, դու երեխա ունե՞ս, որ երեխաների անունով երդվում ես: Չորս կնիկ ես փոխել, վերջը պարզվել է, որ մեղքը քոնն է, չբերը հենց դու ես: Տո՜, ա՛յ անպտուղ ջորի, խանութներում շաքար չես թողել, խեղճ մեղուներին էլ քեզ նման ծույլ ու անբան ես դարձրել: Բա որ գարնան ու ամռան ամիսներին մեղուներին շաքար տաս, մեղուները ծաղկի վրա կգնա՞ն: Ոտերս կուտեն»:

Դա հունիսի կեսերին էր: Մարդ ու կնիկ խռոված գնացին, փոշմանած վերադարձան: Բժիշկ Աղամալովն ասել է՝ ընկեր Սուսան, դու գրագետ աղջիկ ես, ուրեմն մինչև հիմա չե՞ս իմանում, որ մեղվի խայթը առողջարար է: Իսկ Սառա Արմենակովնան, այդ խորամանկ ջադուն՝ «Ջանիկս, խելքդ հավաքիր գլուխդ, արձակուրդ վերցրու, թռիր գյուղ, մեղրի լավ ժամանակն է: Գնա կեսուր-կեսարիդ շոյիր, փայփայիր, քաղցր աչքով նայիր, բեր տունդ մեղրով լցրու»:

Մի հարցնող լինի՝ Ադամ, Ադամի թոռ Ադամ, Ավագի տղա Ադամ, Ադամենց Ադամ, հարսդ ինչո՞ւ գնաց, ինչո՞ւ եկավ: Ետևից կարմիր խնձո՞ր ես ուղարկել, գնացել, ոտներն ես ընկել, աղաչել-պաղատել՝ լավ էլի, հարս ջան, առանց քեզ օրս օր չի, հացն առանց քեզ բկովս կուլ չի գնում, ինչո՞ւ ես խռովել:

- Հարս, որ եկել ես, լավ ես արել, որ եկել ես,- ասաց Ադամը,- գլխիս վրա տեղ ունես, բա գնալդ, լակոտի նման խռովելդ ինչի՞ համար էր: Լավ, բան չկա, մոռանանք:

Սուսանը բարակ-բարակ մատներով բռնեց թեյի բաժակը, բարակ-բարակ մատները հախճապակե բաժակի դրսի կողմից խոշորացան: Դեմքը

մոտեցրեց բաժակին, դեմքն էլ խոշորացավ, ճիշտ այնպես, ինչպես մի շաբաթ առաջ մեղվի խայթելու օրը:

- Ասեղի նման ծակեց, հայրիկ, այնպե՜ս է ցավում,- մտածեց ու հորինեց:- Ասացի՝ խայթը երևի թունավոր է: Գիտե՞ս, հայրիկ, թունավոր մեղուներ էլ են լինում: Կարդացել եմ մի ամսագրում:

- Հարս, ծաղկի փոշուց մեղր պատրաստող մեղվին թույն չի լինում: Մեղուն մեղու է, օձ չի:

- Բժիշկ Աղամալովն էլ կարծեմ այդպես ասաց:

- Բժիշկ Աղամալովը խելոք մարդ է,- ժպտաց բեղի տակ:- Որ գնաս քաղաք, բժիշկ Աղամալովին ինձանից շատ բարևներ կտանես... որ բարևներս համով լինեն, վրան մի երեք կիլոգրամ մեղր կավելացնես:

էն լենք տված կնկա անունն ի՞նչ է:

- Ի՞նչ կնիկ:

- Ձեր հարևանը, էն որ ուրիշների կերածն էլ է ինքը մարսում:

- Սառա Արմենակովնա՞ն:

- Հա, էդ Սառա Արմենակովնային էլ կասես, որ գնա իր մեղրը Ճաղունց Սիմոնից առնի: Իմ առևտուրը Սառա Արմենակովնայի առևտրի հետ չի բռնում: Թող ինքը Սիմոնին խաբի, Սիմոնը՝ իրեն:

Սուսանը խռոված երեխայի պես գլուխը կախեց: Հեղինեն աչք-ունքով ամուսնուն հասկացրեց, որ զրույցը փոխի, ուրիշ բանից խոսի: Ադամը նայեց դեպի բակ, տեսավ թոռնիկը ճիպոտը քաշել, հավերի ետևից է ընկել, կանչեց.

- Արթուր, այ շան թուլա, էդ հավերից ի՞նչ ես ուզում:

- Մաման ասել է...,- Արթուրը վեր քաշեց քիթը, մոռացավ, թե մաման ինչ է ասել, լաց լինելու նման մզմզաց:- Պապի՜, մեղր եմ ուզո՜ւմ...

- Արի, պապին ցավդ տանի,- Ադամը շուռ եկավ կնոջ կողմը,- Հեղինե, երեխային մեղր տուր:

- Փեթակները կտրե՞լ ենք, որտե՞ղ է մեղրը:

- Որ ուզես՝ կգտնես:

Արթուրը կերավ մեղրն ու հիշեց, թե մաման ինչ է ասել:

- Մաման ասել է՝ Լազր հորեղբայրը և Սուսան տյոտան երեկոյան թող գան մեզ մոտ: Ասել է՝ թող պապին էլ գա:

- Մաման լավ է արել, որ ասել է,- Ադամը շոյեց փոքրիկի գանգուրները:- Հեղինե, երկու հավ բռնիր, ուղարկիր:

- Մա՜րդ, ա՛յ մարդ, հավերը ձու են ածում:

- Թող մի երկու ձու էլ պակաս ածեն: Այ, էն սարսաղ աքլորը բռնիր:

- Մեն մի աքլոր ունենք, բռնե՞մ:

- Տանը մի աքլոր կա՝ հերիք է:

- Ո՞ւր է էդ աքլորը,- չհասկացավ Հեղինեն:

- Ի՜նչ է, ես պակաս աքլո՞ր եմ:

Լազրն ու Սուսանը ծիծաղեցին, Հեղինեն չանչեց ամուսնուն.

- Ա՛ռ, է՜, անամոթ, սպիտակ մազերիցը չի ամաչում:

Մի ասող լինի՝ Ադամ, Ադամի թոռ Ադամ, Ավագի տղա Ադամ, Ադամենց Ադամ, քեզ ո՞վ ստիպեց, որ գնաս երկու բաժակ գինի խմես, կատարդ տաքացնես, հարսներիդ կողք-կողքի նստեցնես, ավել-պակաս դուրս տաս:

- Ա՛յ հարսներ, էս ինչ լավ է, որ եկել, հավաքվել եք մի տեղ, ասում-խոսում եք, ծիծաղում եք, իրար ոնց որ ծուռ աչքով չեք նայում: Ես էլ եմ ուզում լսել ձեր ծիծաղը: Էն մեծ տակուգլուխ տունը, էն կազարմա օթախները, էն շքեղ բալկոնը, ծառերը, հավ ու ճիվը ո՞ւմ համար է: Ո՞ւմ համար եմ պահում էն մեղվափեթակները: Տեսնում ես, չէ՞, Անդոյի Համեստ, տեսնում ես, չէ՞, Նավասարդի Ռուզան, Սուսանը պառավներին կարոտել, քաղաքից վեր է կացել եկել: Լազրին մնար, չէր գա: Լազրը մեղրի համը որտեղի՞ց իմանա...

Ակնարկը բավականին թափանցիկ էր.

- Դե լավ, էլի, հայրիկ:

- Կնոջիցդ վախենո՞ւմ ես,- Ադամն աչքով արեց հարսներին ու ծիծաղեց:- Վա՜յ, հարսնե՜ր, հարսներ, մեղրածոր հարսներ, ձեր կենացը:

- Հայրիկի խոսքը մի փութ մեղրով չես կարող կտրել,-Նավասարդը հարբած-հարբած մոտեցավ, գրկեց հոր գլուխը, համբուրեց ճակատը:- Հայրիկը մեր տոհմածառն է, մենք նրա դալար ճյուղերն ենք:

- Ապրես, Նավասարդ, որ մի քիչ խմում ես, խելքդ տեղն է գալիս,- Ադամն իր բաժակը մոտեցրեց նրա բաժակին:- Բայց խոսքը մեր մեջ, ճյուղերը որքան էլ ծգվեն, իրենց բնից չպիտի հեռանան: Անդո, սխա՞լ եմ, թե՞ ճիշտ:

- Ճիշտ ես, հայրիկ:

- Լա՛զր...

- Ճիշտ ես խոսում, հայրիկ:

- Հարսներ, դուք ի՞նչ կասեք:

- Ճիշտ ես, ճիշտ ես,- ճվճվացին հարսները:

Անդոն երգեց, հետո երգեցին հարսները, Ադամը լսեց ու ժպտաց, լսեց ու տխրեց, լսեց ու հուզվեց, լսեց ու փառավորվեց.

- Վա՜յ, ես ձեր ցավը տանեմ, հարսներ, էդ ի՞նչ լավ եք երգում...

Մեղրի ժամանակ էլ են մեղուներն էդպես անուշ երգում:

Ադամը երեկոյան հանդից եկավ, նայեց տեսավ հարսներն ու թոռները շարվել են պատշգամբում, ասում, խոսում, ծիծաղում, երգում են: Պատեֆոնը մի կողմից է աղմկում, ռադիոն մի կողմից, Նավասարդի տղան կիթառը գրկել, գլխին մի լայնեզր շլյապա է տնկել, դարձել մեքսիկացի, գյուղի աղջիկներին շուրջը հավաքել, երգում է. «Ճանապարհնե՜ր, ճանապարհներ... ճանապարհներ, ճանապարհներ...»: Մեջտեղ ուրիշ բան չկա, միայն ճանապարհներ են...

Ադամը նայեց ու փառավորվեց:

Վա՜յ, Ադամ, Ադամի թոռ Ադամ, Ավագի տղա Ադամ, Ադամենց Ադամ, բա այսպիսի հարսներից, որդիներից ու թոռներից էլ մարդ նեղանա՞... Դե լավ, ի՞նչ ես շշկլվել, մեղվափեթակները դատարկելու, մեղրի ամենալավ ժամանակն է, գնա տես ինչ ես անում:

1979 թ.

ՈՒՏՈՂ-ԽՄՈՂ ՄԱՐԴԻԿ

Մկրտիչ պապն իր հաշվով 120 տարեկան է, որդու՝ Ներսեսի հաշվով՝ 112 տարեկան, գյուղսովետի տնտեսական մատյանով՝ 115 տարեկան: Սրբուհի ազին, որ թվով Մկրտիչ պապի երրորդ կինն է, վերցնում է միջինը՝ 110 տարեկան: Բայց պապն իր հարյուր քսանից չի հրաժարվում: Ասում է՝ գեներալ Մադաթովին իմ աչքով տեսել եմ և հետն էլ զրուցել: Մաթեմատիկայի ուսուցիչ Երանոս Պապիկյանը հաշվում է մտքում և չի համաձայնում.

- Խառնում ես, Մկրտիչ պապ, խառնում ես: Եթե էդպես վերցնենք, ուրեմն գեներալ Մադաթովին հանդիպել ես 150 տարի առաջ: Իսկ գուցե գեներալ Մադաթովը չի եղել, լավ միտդ գցիր:

- Ո՞նց թե՝ Մադաթովը չի եղել,- ծիծաղում է Մկրտիչ պապը,- ինչ է, ես գեներալ Մադաթովին չե՞մ ճանաչում: Էսպես՝ լենք տված մարդ էր, բեղերը ոնց որ ագռավի թևեր, աքսելբանտերով, ոսկե թուրը կողքից կախած, սպիտակ ձին տակին պար էր գալիս, ինքն էլ ուտող-խմող մարդ էր:

Մկրտիչ պապը շատ է սիրում հիշել ուտող-խմող մարդկանց: Հաթամենց Թավադը ուտող-խմող մարդ էր: Ենովքենց Սահակը ուտող-խմող մարդ էր: Ճաղունց Մազրանը կնստեր, միանգամից մի ոչխար կուտեր, կասեր՝ վայ, աշխարհ, աշխարհ, բրիշակ դառնաս, փորս բան չմտավ: Գրբացենց Ծատուրը մի դույլ խաշած ձուկ էր ուտում, վրան մի կուժ ջուր խմում՝ վեջը չէր: Կյալուստենց Թևանը մի նստելով օխտը խաշած հավ էր ուտում:

Ընկեր Պապիկյանը ժպտում է: է, լավ, այ ալևոր, ասում ես՝ պակաս ենք ապրել, ասում ես՝ գարի հացը գաթայի տեղ ենք ընդունել, բա էդ որտեղի՞ց եք էդքան կերել-խմել: Ճաղունց Մազրանը, էդ մի ոչխար ուտողը, մորս կողմից պապիս հերն է: Մայրս ասում է՝ գծուծի մեկն էր, մեջքը փորին կպած... Բա լավ, էդ տնաշենը մի ոչխարը ո՞նց է միանգամից կերել:

- Անհավատներ եք,- Մկրտիչ պապը չոր ու անարյուն մատներով ետ ու առաջ է տալիս թազբեհի սաթե հատիկները:- Աստծուն չհավատացիք: Աստված էլ տեսավ, որ իրեն չեք հավատում, բարկացավ ու ինքն էլ իր հավատը փոխեց:

- Հավատը փոխեց՝ ի՞նչ դարձավ:

- Անհավատ: Ձեզ նման անհավատ: Աթասենց Արամի նման անհավատ: Արմանն էլ, Բայանդուրի տղան, գնաց սուրբ Սարիբեկի մատուռը քանդեց, թե՝ աստված չկա, սուտ է: Արսեն, գնա սրինգս բեր:

Արսենը Մկրտիչ պապի թոռան թոռն է, տասնութ տարեկան, սիրուն-սիրուն, թուխ բեղերով, կլոր դեմքով տղա:

Արսենը բերում է սրինգը, պապը մատները հարմարեցնում է անցքերի վրա ու նվագում: Մեղեդին հին է, շատ է հին, ինչպես Սինգարա սարի կաղնի ծառը, ինչպես Խաչին տակի քարանձավը, ինչպես Քարահատի մամռապատ աղբյուրի գուռը և ինչպես ինքը՝ Մկրտիչ պապը:

- Այ հերամեռ, սիրտս կտոր-կտոր արեցիր,- Սրբուհի ազին բարձրացնում է գոգնոցի տուտը, մոտեցնում կարմրած աչքերին:- Այ հերամեռ, երկու

կնկա գլուխ ես կերել, վախենում եմ իմ գլուխն էլ ուտես: Այ գլխակեր ղուզ-ղուն, ես քո ոսկե մատներին մատաղ, ես քո քաղցր բայաթուն մատաղ...

Մկրտիչ պապը չի լսում, ինքն իր հետ է, սարերի, ձորերի, քարերի, ծառերի ու ծաղիկների հետ է: Մաննուտով ճերմակ ձին չափ գցել, Մուրսինի խամուտով իջել է Քահրիզի ձորն ու տեսել աղբյուրի մոտ կանգնած Նունուֆարին:

- Նունուֆար, աղջի, ծեգը-ծեգին ի՞նչ ունես այստեղ:

Նունուֆարի ատամները ձյունի պես ճերմակ են, ճակատը ճերմակ է, մատները՝ ճերմակ մոմեր, մեջքը բարակ և այդ բարակ մեջքը արծաթե գոտին օձի պես գրկել, խեղդում է: «Մկրտիչ,- ասում է,- Մկրտիչ, սրնգիդ ձենը լսում եմ, համա քեզ չեմ տեսնում: Այ, հիմա տեսա»:

- Մկրտիչ պապ,- ընկեր Պապիկյանը նստում է ծերունու կողքին,- այդ մեղեդին քանի՞ տարեկան կլինի:

- Քանի՞ տարեկան,- պապը ծիծաղում է միամիտ ուսուցչի միամիտ հարցի վրա:- Նոյը քանի՞ տարեկան կլինի: Ադամը, Եվան, Հաբեթը, Տրդատ թագավորը, Ճաղունց Մազրանը, գեներալ Մադաթովը, Պըլը-Պուղին, գոռ-բագոռ Մելիք Շահնազարը քանի՞ տարեկան են: Իմ աշխարհը, քո աշխարհը, իմ ու քո աշխարհը: Այս երգն էլ՝ դրանց նման...

Գլուխը հակում է կրծքին, շվին դնում ծնկներին ու ննջում. ննջում է, որ Նունուֆարին լավ տեսնի: Նունուֆարն աշխարհից ջահել-ջահել գնաց, կարոտած ու դարդոտած գնաց: Մկրտիչը բռունցքով խփեց գլխին, կրծքին, գոռաց, ճչաց. «Նունուֆար, մեջքդ կոտրվի, էդ ինչի՞ մեջքս ջարդեցիր: Նունուֆար, ախր երեխան մեղք է, ես մեղք եմ, դու մեղք ես, էսքան մեղքերի տակից ո՞նց դուրս գամ»:

- Պապի, քնելուդ ժամն է, գնանք տուն,- Արսենը բռնում է նրա թևը:- Պապ, լսո՞ւմ ես, վեր կաց:

- Այ գլխամեռ, վեր կաց,- Սրբուհի ազին հավաքում է փեշերը:- Ես քո ոսկի մատներին մատաղ, այ գլխամեռ:

Մկրտիչ պապը գլուխը դանդաղ բարձրացնում, հորանջում է և քնից նոր արթնացած երեխայի պես տրորում աչքերն ու դառնում ընկեր Պապիկյանին.

- Ուրեմն Նոյը սո՞ւտ է:

- Նոյը առասպել է:

- Չհասկացա:

- Հեքիաթ է:

- Հա, ապրես, շեն կենաս, հեքիաթ է: Ուրեմն՝ էս սարերը, ձորերը, քարերը, ջրերը, հավքերը, ծաղիկները հեքիաթ չե՞ն: Հեքիաթ են: Հազարան բլբուլի հեքիաթը: Մենք հեքիաթ չե՞նք: Բա որ հեքիաթ չենք, ի՞նչ ենք:

- Իրական հեքիաթ ենք, պապ:

- Իրական,- Մկրտիչ պապը մտքում ծանր ու թեթև է անում այդ բառն ու ծիծաղում,- հերիք է, գնամ քնեմ: Գնամ քնեմ, վեր կենամ, տեսնեմ քնել եմ, մնացել քնած: Վեր կենամ, վայ տամ գլխիս... Ոնց որ Ավունց Ջումշուդը. ա-

սում էր՝ բա ես իմ աչքով չտեսնե՞մ, թե ինչպես եմ մեռել: Ողորմի նրան, ուտող-խմող մարդ էր: Որքան ենք միասին քեֆ արել:

- Ախր էդ ի՞նչ եք կերել-խմել, ա՛յ գլխամեռ,- Սրբուհի ազին հուպ է տալիս շրթները, որ չծիծաղի:- Ուտող-խմող, ուտող-խմող... Քնում է՝ ուտող-խմող, արթնանում՝ ուտող-խմող...

Մկրտիչ պապը խեթ-խեթ նայում է կնոջը:

- Ի՞նչ է, քո հաշվով ուտել-խմելը մենակ փոր կշտացնե՞լ է: Ուրեմն իմ ապրած կյանքը հե՞չ... Բա Նունուֆարը, Մուրսինի տափը, Քյահրիզի ձորը, Շաղասարը, Մաննուտի կաղնիները, Պետրուսանց Սողոմոնի հարսանիքը, իմ սպիտակ ձին, Սալբու ծիծաղը... Սալբին գնաց Նունուֆարի ետևից, դու եկար: Ուրեմն՝ դու հե՞չ: Իմ ուտող-խմողները ձեր ուտող-խմողների հետ չեն բռնում... Արսեն, պապը ցավդ տանի, սրինգը չմոռանաս:

Մկրտիչ պապը գնաց քնեց հանգիստ ու անխռով, սրինգը սեղմած կրծքին, երազում տեսավ Նունուֆարին, ասաց. «Նունուֆար, հա, գալիս եմ, Սալբուն ասա, որ գալիս եմ... Սիրտդ ի՞նչ է ուզում, ի՞նչ բերեմ քեզ համար: Հա, սրինգը բերեմ. սրնգով եմ գալիս, Նունուֆար...»:

Հետո Մկրտիչ պապը մեռավ հանգիստ ու անխռով: Սրբուհի ազին հանգուցյալի հոգեհացին խոսք ուներ ասելու և ասաց.

- Ժողովուրդ, կերեք, խմեցեք, քեֆ արեք... Մկրտիչը ուտող-խմող մարդ էր:

1976 թ.

ՄԻՋՈՐԵ

Օրվա այս ժամին գյուղամիջում ո՞վ պիտի լիներ: Մի Մարտիրոս պիտի լիներ, որ շոգից կուչ ածեր աչքերն ու թնկթնկար.

- Հե՜յ, աշխարհ, աշխարհ, ես քո ինչն ասեմ:

Օրվա այս ժամին Մարտիրոսի կողքին պիտի նստած լիներ Համազ ամին, որ բեղերի արանքից թանձր ծուխը բաց թողներ, բռներ խոսակցի խոսքի տուտը և կորցներ իսկույն:

- Պա՛հ, մեր էս ղարաբաղցիք, ղարաբաղցիք ինչ ժողովուրդ են: Անցած օրը Ռուբենը տղին պսակեց Մաթոսի աղջկա հետ. աղջիկը, ոչինչ, խոսք չունեմ, վատ աղջիկ չի... Պատը պատին հազար տարվա հարևաններ ենք, չկանչեց: Ռուբենի տղան էլ լավ տղա է, բայց դե մենք էլ մարդ ենք:

Օրվա այս ժամին ընկեր Գրետան թևերը բաց արած, դույլերը զրնգացնելով, ջրի պիտի գնա, որ Մարտիրոսը նայի ու ձիգ տա.

- Համազ, սա Ավունց Իվանի հարսը չի՞:

- Հա, Իվանի վարժուհի հարսն է: Խոսք չունեմ, լավ հարս է, բայց որ արևի էս ճնճռնոցին թևերը բաց է արել, սխալ է:

Ընկեր Գրետան լիքը դույլերով անպայման պիտի անցներ Մարտիրոսենց տան կողքով, աչքը գցեր պատշգամբին, նկատեր Մարտիրոսի թոռանն ու ասեր.

- Կարինե՜, այսօր լվացք ունեմ, արի օգնիր:

Կարինեն պարտավոր է օգնել ընկեր Գրետային, որովհետև քիմիայից աշնանային քննություն ունի: Ընկեր Գրետան համ «երկու» է դրել, համ էլ ասել՝ «կգաս՝ կօգնեմ»:

Եվ հիմա օգնում է: Ասում է՝ լվացքը պարզաջրիր, ջուրը տաքացրու, Վահրամիկի շորերը արդուկիր, սպիտակեղենը փռիր, տունն ու բակը ավլիր... Ասում է՝ Կարինե, կաթսան կրակի վրա այդքան չեն պահի, կօքսիդանա:

- Թոռդ խելոք աղջիկ է, Մարտիրոս:

- Խելոք է, մեզ ի՜նչ: Իվանի Գրետա հարսը թողնո՞ւմ է, որ մի անգամ էլ մեր տան գործից բռնի: Ասում են՝ դպրոցի դիրեկտոր Հովսեփի գլխին էն օյինն է դրել, որ խեղճ մարդը դիմում է գրել, թե կամ ես, կամ Իվանի հարսը պիտի մնա էս դպրոցում: Հովսեփը լավ տղա է, ափսո՜ս..

Օրվա այս ժամին փողոցով պիտի անցներ Գաբրիելի աղջիկը և փոխեր ծերունիների զրույցի թեման: Համազ ամին կարծես սպասում էր Գաբրիելի ժասմեն անունով աղջկան, որ կարճ, ծնկներից վեր յուբկա է հագել, բաց արել սիրուն-սիրուն սրունքները և սիրուն-սիրուն շորորվում է:

- Մարդի՜, էս էլ Գաբրիելի աղջիկն է: Բժիշկ պիտի դառնա, գա կանգնի գլխիդ վերև ու ասի. «Ընկեր Մարտիրոս, ինչի՞ց եք բողոքում»: Գաբրիելի աղջիկ, հլա մի նեղություն քաշի, եկ էստեղ:

Ժասմենը եկավ թեթև-թեթև: Գիտեր, որ Համազ ամին մի հարց պիտի տա, կամ շատ սովորական, կամ տարօրինակ մի հարց:

- Գաբրիելի աղջիկ, շատ ներողություն, մի հարց եմ տալիս, մենակ չծիծաղես:

- Ինչո՞ւ պիտի ծիծաղեմ,- ծիծաղեց Գաբրիելի աղջիկը:

- Գաբրիելի աղջիկ, էս ինչի՞ցն է, որ ընկեր Մարտիրոս Իսաջանովը քնած վախտը պառավոզի ձեներ է հանում:

Ժասմենը քրքջաց: Համազ ամին նայեց նրա ճերմակ-ճերմակ ատամներին, կլոր-կլոր ուսերին, երկար-երկար եղունգներին, ներկած հոնքերին, հետո նայեց բաց սրունքներին ու հարցրեց.

- Գաբրիելի աղջիկ, հարցնելն ամոթ չլինի, էդ կեփերդ ինչի՞ ես բաց արել:

Գաբրիելի աղջիկը պիտի ասեր՝ անհարմար է, մեծ մարդ ես, բայց չասաց: Պիտի կարմրեր, բայց չկարմրեց: Շրջվեց, ծիծաղելով հեռացավ, և Համազ ամին նույնպես ծիծաղեց:

- Վա՜յ, քո ինչն ասեմ, Մարդի... Ադա, թամամ ցիրկ ես, ցիրկ:

Մարտիրոսն արթնացավ, տրորեց աչքերը, հորանջեց:

- Ի՞նչ ցիրկ, էլի էդ աչքակապները եկե՞լ են:

- Ջանըմ, ի՞նչ աչքակապներ:

- Միտդ չի՞, էն որ թաշկինակը շուռ է տալիս, նայում ես, բան չկա, մեկ էլ շուռ է տալիս, կարմիր-կանաչ թղթեր են թափվում:

- Չէ, էդ չեմ ասում:

- Բա ի՞նչ ես ասում:

- Գաբրիելի աղջիկն էր, եկավ բժշկեց ինձ ու գնաց: Համա ի՜նչ խռմփացնում էիր, հա՜...

Օրվա այս ժամին Մարտիրոսը պիտի պատմեր իր երազը, պատմեց.

- Մթամ տեսնում եմ՝ մեր Ձորի ջրաղացում հերթ է: Օղորմած հոգի Մակիչը կանգնել էր ջրաղացի նովի մոտ, ձեռքով էր անում: Ես եմ, մեր Թարխանն է, Հաբեթանց Ճապին է, Առուստամի Կրիքորն է... Չգիտեմ, դու որտե՞ղ էիր գնացել, դու չկայիր: Մեկ էլ ինչ տեսնեմ, ջրաղացի քարերը Շաղասարն ի վեր գնում են, ո՜նց են գնում: Մեր Խեչանի կաղ Հերիքնազն էլ ծիծաղում է, հա, ծիծաղում է... Արսզ-արսզի կնիկը ոնց որ սարսաղվել է: Չէ, դու չկայիր, քեզ չտեսա... Որտե՞ղ էիր գնացել:

- Շաղասարում խոտ էի հարում:

- Միտս չի, ես քեզ չտեսա:

- Որ տեսնեիր՝ ի՞նչ պիտի անեիր:

- Հե՜չ, խոսք է, էլի, ասում եմ:

Օրվա այս ժամին պիտի սպառվեր ծերունիների զրույցի թեման, որովհետև սոսկալի շոգ է, տանիքների թիթեղները շիկացել, հուրհրատում են, ծառերի ստվերները կծկվել, դարձել են մի բուռ:

Եվ շոգից խեղճացած Մարտիրոսը հորանջեց, լարեց հիշողությունը, հիշեց:

- Հա, Համազ, ցիրկ ասացիր, միտս ընկավ: Հերու էր, մեր Արմանը տարավ ինձ Բաքու: Պա՛հ, քաղաք է, հա՜... Սաբունչու վագզալից որ նայում ես, խելքդ գնում է: էն Արմենիքենդը որ ասում են, մեր Ստեփանակերտի օխտը չափ կա: Ի՞նչ էի ասում...

- Ցիրկը...

- Ո՞ր ցիրկ...

- Ցիրկն էլի... Դու չասացիր՝ ցիրկ ասացիր, միտս ընկավ:

- Հա, ճիշտ է: Ուրեմն Արմանն ինձ տարավ ցիրկ. ցիրկս ո՞րն է, մեր շկոլի օխտը չափ կա: Մի կնիկ դուրս եկավ՝ պա՛հ, պա՛հ, պա՛հ... Իվանի վարժուհի հարսը նրա կողքին ի՞նչ է: էդ կատաղած-կատաղածի կնիկը պարանից կախվել, գնում-գալիս է, գնում-գալիս է... Ախր հագին էլ մի բան չկար՝ դիփ տկլոր: Ասում եմ՝ այ տղա, Արման, ախր, էսպես ո՞նց կլինի... Ասում է՝ բան չկա, արտիստ է... Հետո ասաց...

Մարտիրոսը մոռացավ, թե հետո ինչ է ասել, Արմանն ինչ է պատասխանել: Չհիշեց, թե Արմանն ու հարսը հաջորդ օրը ինչի համար վիճեցին, հարսն ինչի համար ամուսնուն ասաց. «Գեղացի եղել ես, գեղացի էլ մնացել ես»: Արմանը պիտի մի լավ հայհոյեր լեզվանի կնոջը, չհայհոյեց: Վա՜յ, վա՜յ, Արման, բա դու տղամա՞րդ ես, բա դու նամո՞ւս ունես...

- է, էդ քաղաքի կնանոցից խելքս բան չի կտրում, Համազ:

- Ո՞ր կնանոցից, ցիրկի՞:

- Դե չէ, ի՜նչ ցիրկ:

- Օպերայի՞:

- Սարսաղվել ես, Համազ, սարսաղվել ես:

Խլուղի փեշը ձիգ տալով, սուրմաները զրնգացնելով, եկավ Նաբաթ ազին, թևերը կանթեց կողքին ու չարացավ.

- Մարդի, օրվա էս ժամին ի՞նչ ես շնթռնել պատի տակ, բա մենք տունտեղ չունե՞նք:

Մարտիրոսը ձեռքը ծույլ-ծույլ թափ տվեց.

- Այ դարաչի, զահլես ի՞նչ ես տանում: Գնա, գալիս եմ:

- Չէ՛, չէ՛, վեր կաց:

- Պահո՜, կրակն ընկանք, էլի:

Եվ օրվա այս ժամին Համազ ամին անպայման պիտի ծիծաղեր կնոջից վախեցող Մարտիրոսի վրա՝ ծիծաղեց: Ծիծաղեց, որ սպանի օրը, որ շոգը ծիծաղով խեղդի, ծիծաղեց, որ չձանձրանա, չտխրի...

Եվ որպեսզի չտխրի, հիշեց ընկեր Գրետային, որ ջանի վրա ցրիվ է գալիս, հիշեց Գաբրիելի ժասմեն անունով աղջկան, որ սրունքները բաց է ման գալիս... Հետո պատկերացրեց կրկեսի մերկ կնոջը՝ Մարտիրոսի կողքին կանգնած ու փռթկացրեց:

- Մարդի, բան չկա, արտիստ է:

Մարտիրոսը գլուխը դանդաղ շրջեց.

- Համազ, քանի գնում, սարսաղվում ես:

Պիտի ուրիշ բան ասեր: Պիտի ասեր. «Ռուբենի հետ պատը պատին հազար տարվա հարևան ես, Ռուբենը տղին պսակել, քեզ մարդատեղ չի դրել»:

Օրվա այս ժամին մի կիսամերկ երեխա պիտի անցներ փողոցով, որպեսզի Համազ ամին նայեր ու հարցներ. «Այ լակոտ, դու Առուշանենց Մեխակի թոռը չե՞ս... Հա, տեսա՞ ր, ոնց իմացա: Առուշանենց Մեխակը լավ մարդ էր, օղորմի հոգուն, դու էդ ո՞ւմ ես եկել»:

Հետո փողոցում պիտի տիրեր լռություն, որպեսզի Համազ ամին ամփոփվեր ինքն իր մեջ ու մատների վրա հաշվեր, թե իր հասակակիցներից ով է գնացել և ով է մնացել: Գնացել են Ասլանենց Գերասիմը, Շիրինանց Խաչին, Զառունց Ակուփը, Ավունց Նեսին, Առուշանանց Մեխակը, Մկրտիչի Մոսին... Մնացել են Մարտիրոսը, Բաբունց Ակուն, Թոխունց Սարգիսը, Աղասունց Արտաշը... Սևունց Ռուբենը դեռ ջահել է, երեկվա երեխան, մի քանի տարի էլ կապրի: Ռուբենը ցիգան-ցիգանի տղա է, դեռ կապրի...

Օրվա այս ժամին Համազ ամին երկնքում պիտի ամպի կտոր որոներ ու չգտներ: Պիտի զայրացած նայեր զենիթում կանգնած հրաշեկ գնդին, ձեռքը դներ գլխին ու զայրացած գոչեր.

- Ա՜յ ավազակ, գլուխս թանախաշիլ ես արել, դե եկ լակի:

1971 թ.

Ա՛Խ, ԻՄ ՃԱՄՓԵՆ...

Երևի աշխարհի ոչ մի գյուղում այնքան հովեկներ չեն լինում, որքան՝ Քարաշենում: Երևի աշխարհի ոչ մի գյուղում հովեկներին այնքան չեն հայհոյում, որքան՝ Քարաշենում: Եվ երևի աշխարհի ոչ մի գյուղում հովեկներին այնքան չեն սպասում, որքան՝ Քարաշենում:

Անկախ այն բանից, թե իրենց հայհոյում են կամ չեն հայհոյում, սիրում են կամ չեն սիրում, սպասում են կամ չեն սպասում, հովեկներն ամեն ամառ գալիս են ու գալիս են: Դրանք մեծամասամբ նախկին քարաշենցիներ են, քարաշենցու տղաներ ու աղջիկներ, փեսաներ ու հարսներ, թոռներ ու ծոռներ, որոնցից շատերը գյուղում ազդեցիկ երևալու համար շլյապա են կրում և իրար հետ խոսում ռուսերեն: Եթե ֆրանսերեն իմանան, կխոսեն նաև ֆրանսերեն: Գալիս են զուգված-զարդարված, իրենց բարեկամների ու ազգակիցների գիրկը նետվում, լալիս ու ծիծաղում, տխրում ու ուրախանում: Ավելի փոքրերը, որ ծնվել են քաղաքում և քարաշենցի են հեռակա կարգով, զարմանում են՝ թութը, մոշը, մորին ձրի են, համարյա ձրի են տանձն ու խնձորը, վարունգն ու պոմիդորը, հոնն ու դեղձը, իսկ կինոն ու համերգը՝ կոլտնտեսության հաշվին: Զարմանում են նաև, որ իրենց ծնողները այս հրաշք աշխարհը թողել, ապրում են քաղաքում, ուր ամեն ինչ փողով է: Այդ ամենը վայելելուց հետո, շան լակոտներն այնքան են երես առնում, որ կախվում են Պետունց Անդրու սայլից՝ վարունգ, ծիրան, դեղձ, պոմիդոր թռցնում: Անդրին երեսառածներին փախցնելու նպատակով ճիպոտը թափահարում է ու հայհոյում: Այնքան թունդ է հայհոյում, այնքան պատկերավոր, որ Սալբունց Մարկոսի հարսը երեսը շուռ է տալիս, քիթը ծռմռում:

- Բեզսովեստնի, ռազվե տակ մոժնո՞:

- Մոժնո-մոժնո,- պատասխանում է Պետունց Անդրին ու տրտնջում,- ի՜նչ աներես մարդիկ են էս դաչնիկները: Կաթը տալիս ես, մածուն են ուզում, մածունը տալիս ես, պանիր են ուզում... Կաթը սերուցքով են ուզում, պանիրը՝ յուղալի, մածունը՝ սալ-սալ: Դեռ ասում են՝ ձուն էլ փոքր է: Ձու ածողը հավն է, թուխս նստողը, ճուտ հանողը հավն է, ես մե՞ղք ունեմ:

- Ամա՜ն, էս դաչնիկները, էս դաչնիկնե՜րը,- բողոքում է բաղվանչի Գիրիշը,- լավ է մեր թթենու վրա կարկուտ գա, քան դաչնիկ:

Մինչև ուշ երեկո Կարապետի աղբյուրի մոտ թշշում է խորոված, թռչում են շշերի խցանները, գլխատված հավերը թպրտում են, դուդուկը հեկեկում է: Քելունց Տիգրանը գինու շիշը դրել գլխին, պարում է: Պարում է շախով-շուխով, որովհետև տրամադրությունը բարձր է. տղան՝ Օնիկը, քաղաքում ռեստորանի դիրեկտոր է, հարսը՝ գլավբուխ, խնամին՝ գնդառանցքակալների գործարանի դիրեկտոր: Պարում է, որովհետև հայրենի գյուղումն է, հայրենի հանդում, ոտի տակ հող կա: Տիգրանը պարելով մոտենում է Անդրուն, զոռով իջեցնում սայլից ու նստեցնում իր կողքին: Օնիկը փայլեցնում է ոսկե ատամնաշարը:

- Վա՜յ, Անդրի քեռի, ինչ լավ ես արել, որ եկել ես: Հայրիկ, Անդրի քեռու բաժակը կոնյակ լցրու: Հինգ աստղանոցից լցրու:

Անդրու համար հինգ աստղանոցը նույնն է, ինչ երեք աստղանոցը: Քաղցր-մեղցր խմիչք է, երևի կանանց համար է: Շամպայնն էլ չի հավանում, գարեջուրն էլ: Տիգրանը աշխարհում շատ բան տեսած մարդու տոնով ծիծաղում է, բայց նրա ծիծաղը մի տեսակ անբնական է: Ուզում է ցույց տալ, որ ուրախ է:

- Անդրի, պիվա խմիր, պիվա խմիր, թող ջանդ գա:

- Տեսնում եմ, յուղերդ ծլծլում են,- խայթում է Անդրին:- Արա՜, էդ չե՞ս, դատարկ բոստանի չոր-չափար: Ի՜նչ է, էդ քաղաքներում հա՞ց չեն տալիս, որ ուտես: Կենա՛ցդ, պարզերես լինենք:

- Սաղ լինես, Անդրի, շնորհակալ եմ:

Տիկին Ռոզիկը, որ ծնվել ու հասակ է առել քաղաքում, և հիմա զարմանում է, թե մարդիկ ինչպես են ապրում գյուղում, այս սարերի ու ձորերի մեջ, վիզը երկարում փքված հնդկահավի նման, կանչում է.

- Կառինե՜...

Թփուտների ետևից դուրս է նետվում նրա փոքրիկ տղան:

- Մամ, Կարինեն գետում լողանում է:

- Ո՞ւմ հետ է լողանում,- հերսոտվում է Ռոզիկը:

- Արարատի:

- Ի՞նչ Առառատ:

- Արարատ, Արարատ, պուրուժինի կարավաթ,- ծիծաղում է տղան:

- Քեզ եմ հարցնում՝ ի՞նչ Առառատ:

- Տրակտորիստ Արարատը, էլի, էն որ ամեն օր մորի է բերում Կարինեի համար: Կավալեր է բռնել:

Տիկին Ռոզիկը նայում է ամուսնուն, տեղում անհանգիստ մի շարժում կատարում և նորից կանչում.

- Կառինե՜...

Ձայնն այնպես խեղդված է, կարծես շշի բերանից է դուրս գալիս: Իսկ Կարինեն ձորում այնպես է ծիծաղում, որ թվում է այս կոնյակը, գինին, խորոված, գարեջուրը իր համար նշանակություն չունեն:

Անդրին ուզում է բարձրանալ տեղից, Տիգրանը չի թողնում: Անդրին նայում է սայլի կողմը: Տիգրանը ձեռքը թափ է տալիս:

- Չէ՛, չէ՛, ինձ թաղես, Անդրի, չեմ թողնի: Վերցրու բաժակը: Հիմա խմենք ազնիվ աշխատավորի կենացը:

- Տիկո, դու է՞լ ես ազնիվ աշխատավոր:

- Բա ի՞նչ ես կարծում:

- Տղադ է՞լ:

- Տղաս էլ:

- Հարսդ է՞լ:

- Հարսս էլ: Տնով-տեղով:

- Բա ազնիվ աշխատավորին էսքան փող որտեղի՞ց:

- Ի՞նչ փող,- չհասկանալուն է տալիս Տիգրանը:- Փողն այստեղ ի՞նչ գործ ունի:

- էս գինին, օղին, կոնյակը, շանփայը...

- Շանփայ չի, շամպայն է:

- Թող էդպես լինի: Պիվան, հավերը, խորովածը, պանիրը... էս մեկն ի՞նչ է:

- Չոռնի իկրա:

- Չոռնի իկրան, յուղը, կալբասը, հացը երկնքի՞ց են թափվել: Փող եք տվել, չէ՞:

Տիգրանը չի պատասխանում: Դուդուկը հեկեկում է. «Ախ, իմ ճամփեն մոլոր գնաց», և նա միտն է գցում Շաղասարի հունձը, Կաղնուտի անտառը, Դովթալաբ խութի կաքավների երգը, Դերունց ձորի միրհավերի կանչն ու փռռոցը... Աչքերն արցունքոտվում են, ճակատի երակները ուռչում...

- Տիկո, էնտեղ գործիդ անունն ի՞նչ է:

- Մագազինի վրա պահակ եմ,- կծկվում է Տիգրանը:

- Խի էստեղ չե՞ս կարող պահակ կանգնել:

- Ինչի՞ վրա:

- Այգիների վրա, արտերի վրա, բանջարանոցների, պահեստի վրա: Ասում ես՝ տնե՞ր եք ստացել:

- Հա, վեցերորդ հարկում:

- Շա՛տ է բարձր, քեզ համար դժվար կլինի:

* * *

Ձորից դուրս է գալիս Կարինեն: Մազերը թաց են, շորերը թրջվել, կպել են մարմնին, աչքերը ծիծաղում են: Մայրն աչք-ունքով ինչ որ բան է ուզում հասկացնել, ուշադրություն չի դարձնում, սփռոցից մի կտոր հաց է վերցնում, վազում նորից դեպի ձորը:

- Կառինե՜,- կանչում է տիկին Ռոզիկը ու նորից հերսոտվում,- նիգադայ տի, նախալ տի...

Կարինեն չի պատասխանում, իսկ դուդուկը հեկեկում է, մղկտում, մղկտացնում Տիգրանին: Արցունքի կաթիլը կախվում է բեղի ծայրից, ընկնում բաժակի մեջ: Խանութի վրա պահակ է, ամիսը յոթանասուն ռուբլի աշխատավարձ է ստանում, հազար ռուբլու մրսում:

- Հողը քաշում է, Անդրի, քաշում է:

- Կքաշի՜,- հառաչում է Անդրին,- հողը նրա համար է, որ քաշի:

- Եկող ամռանը կգամ ու կմնամ: Պառավն էլ քաղաքի օդն ու ջուրը չի վերցնում, ասում է՝ գնանք գյուղ: Դու էլ աչքդ մեր տան վրա պահիր: էսքան բան:

- Միտքդ փոխե՞լ ես:

- Միտքս նոր չեմ փոխում:

* * *

Սայլը ճլվստալով մոտեցավ գյուղին: Եզները թեքվեցին դեպի աղբյուրը և փնչացնելով ընկան ջրի վրա: Անդրին նայեց խշշացող ընկուզենու տակ քիթ-քթի դրած զույգին: Աղջիկը կանգնել էր ծառի դուրս պրծած հաստ արմատի վրա, և կարճ շրջազգեստը չէր հասնում ծնկներին: Տղան թևը գցեց նրա ուսով, մյուս թևով գրկեց նրա մեջքը, բարձրացրեց ու նստեցրեց ծառի թեքված ճյուղին: «Ապրես, հալալ լինի,- Անդրին մտքում ծիծաղեց,- անիծվածն ի՞նչ էլ սիրուն է, ոնց որ հնդուշկա Ռոզիկի աղջիկը չլինի»:

- Կառինե՜,- դիմացի տան պատուհանից վիզը երկարեց տիկին Ռոզիկը:

Կարինեն ծիծաղեց բարձր ու զնգուն:

- Կառինե՜, իդի դամո՜յ:

- Դե լավ, էլի, մամ:

- Քեզ ասում եմ՝ իդի դամոյ:

Ռոզիկը գլուխը քաշեց հաստ ուսերի մեջ, շրխկոցով փակեց պատուհանը:

Արարատը տուն եկավ ուշ երեկոյան, ընկավ դես ու դեն. կերակուրը վաղուց էր սառել, թեյը թշշացել, թափվել էր, կրակը հանգցրել: Մի կտոր հաց ու պանիր վերցրեց և դրանով էլ բավականացավ:

- Էլի ժողո՞վ էր,- մահճակալը ճռճռացրեց Անդրին:

- Ժողով էր,- աթոռը ճռճռացրեց Արարատը:

- Էլի քննադատե՞լ ես:

- Մի քիչ:

- Ինչո՞ւ մի քիչ:

- Որ մի քիչ էլ վաղվա համար մնա:

- Բա լավ, ամեն օր ժողո՞վ կլինի:

- Կլինի, ապեր:

Անդրին ավելի պինդ ճռճռացրեց մահճակալը: Մթամ ես էլ եմ իմ ժամանակին մեծերին նեղը լծել: Մթամ զուր ես պոչդ խոր թաղում, տեսել եմ, գիտեմ:

- Արարատ, էն աղջիկն ո՞վ էր:

- Ի՞նչ աղջիկ:

- Էն էլի, էն:

- Ախր ո՞րը, է՜...

- «Կառինե, իդի դամո՜յ»: Քելունց Տիգրանի թոռը: Հերը ռեստորանի վրա դիրեկտոր է, մերը՝ գլավբուխ: Որ ծառից ընկնի ոտը ջարդի, ի՞նչ պատասխան ես տալու տիկին Ռոզիկին:

Առավոտյան տիկին Ռոզիկը գլուխը հանեց պատուհանից, կանչեց.

- Կառինե՜...

Կարինեն էլ իր գլուխը հանեց Արարատի տրակտորի խցիկից, գլխաշորը թափահարեց: Օնիկը վառեց գլանակը, նայեց տրակտորի ետևից: Տրակտորը, բուռ-բուռ ծուխ շպրտելով, սողաց ճանապարհով:

- էլ Քարաշեն չենք գա, ուժե նադայել,- ծվծվաց տիկին Ռոզիկը:- Ես ո՜ւր, Քարաշենը ո՜ւր: Դրան նայեցե՜ք, տրակտորիստի ետևից է ընկել:

- Դե լավ, հերիք է,- բարկացավ Օնիկը,- առավոտից մինչև երեկո՝ Կառինե՜, Կառինե՜: Գլուխս տարար քո Կառինեով:

- Կարիք չկա,- միջամտեց Տիգրանը,- մարդիկ կլսեն ու վատ բան կմտածեն: Արարատը մեր Անդրու թոռն է: Հերը լավ մարդ է, ինքն էլ լավ տղա է, գյուղի աչքը:

- Պադումայե՜շ, գյուղի աչքը...

Հարսն այնպես նայեց Տիգրանին, որ վերջինս կախեց գլուխը և ոտը սկսեց գետնին քսել:

* * *

Ամռան վերջերին Անդրին պատահաբար մտավ Արարատի սենյակը, նկատեց մահճակալի վերից կախած աղջկա լուսանկարը:

- Էս էն ժողովի աղջի՞կն է:

Արարատն ուռցրեց թշերը, բայց չծիծաղեց: Չասաց՝ սուտ է, ժողով չի եղել: Չասաց՝ ոչ ոքի չեմ քննադատել: Չասաց՝ դու էլ գիտես, որ սուտ է... Խոսք էր, թռավ բերանից:

- Էդ ո՞ր ժողովի մասին ես խոսում:

- «Կարինե՜, իդի դամոյ»:

- Հա, Կարինեն,- ծիծաղեց:

- Գնա՞ց:

- Գնաց:

- Հետո՞:

- Էլի կգա:

- Բա որ չգա՞:

- Կգա... Տիգրան քեռու հետ: Խոսք է տվել:

Զարմանալի բան, Պետունց Անդրին երևի կյանքում առաջին անգամ հովեկների մասին վատ բան չասաց: Նա միայն կուզեր, որ աշունն էլ շուտ անցնի, ձմեռն էլ, գարունն էլ: Հետո հիշեց դուդուկի սրտաճմլիկ «Ախ, իմ ճամփեն մոլոր գնաց»-ը, հիշեց Տիգրանին, որ հիմա պահակ է խանութի վրա, ամիսը յոթանասուն ռուբլի աշխատավարձ է ստանում, հազար ռուբլու մրսում:

Եվ ամբողջ գիշեր նա մտածում էր Տիգրանի մասին: Տիգրանը հողի մարդ է, բայց ապրում է քաղաքում և հայրենի գյուղին կարոտում է վեցերորդ հարկից:

1968 թ.

ՍԵՎԱԴԱ, ՏՂԱՍ...

- Սևադաս եկել է: Սևադաս, տղաս, աչքի լույս միևուծարս, տանս սյունը, դուռն ու դարպասը, օրն ու արևս: Գիշերներս առանց քեզ չեն լուսանում, տղաս, ցերեկներս առանց քեզ գիշեր են դառնում: Քնում եմ՝ երազումս դու ես, արթնանում եմ՝ դու ես մտքինս: Առանց տղամարդու տունը տուն չի, անտեր բրիշակ է: Հերդ, ականջը կանչի, լավ մարդ չէր: Մի գլուխ խմում, տուն էր գալիս խմած: Ում անունը բերանն էր գալիս, ում հետ հաշիվ ուներ, բերում կապում էր ինձ հետ: Ես նրա համար քավության նոխազ էի: Չխմած ժամանակը հերդ մարդ էր, արածները հիշում էր, փոշմանում, գլուխը ծեծում, մեղա գալիս: Սաթենիկ, ասում էր, ես մեղավոր չեմ, խմիչքն է մեղավոր, էդ անտեր խմիչքն է ինձ գազան դարձրել: Մի խմիր, Սերգեյ, ասում եմ, ձեռք քաշիր խմիչքից, ամբողջ գյուղը վրադ ծիծաղում է: Երդումհավատ էր անում՝ պրծավ, թե սրանից դենը մի բաժակ խմեմ, ես հորս տղան չեմ: Հա, ինչ ճիշտ է՝ ճիշտ է, տղաս, հերդ ոսկի ձեռքեր ուներ, լավ մեխանիկ էր, կոլտնտեսության նախագահ Ասսատուր Հայրապետյանն ասում էր. «Սերգե՛յ, դու քո արժեքը չես իմանում, թե որ խմելդ չլինի, գյուղի կենտրոնում արձանդ կկանգնեցնեմ: Ա՛յ մարդ, ասում էր Հայրապետյանը, պապդ խմող չէր, օղորմած հերդ խմող չէր, դու էդ ո՞ւմ ես քաշել»: Ասողին էլ լսող էր հարկավոր: Նրա ընկերն ո՞վ էր՝ Հունանյան Լազրը: Մեկ էլ տեսար, մի ավտոմեքենա քարշ տվեց մեր բակը, թե՝ Սերգեյ, տերը լավ փող ունի, կացին չի կտրում, գործդ տես: Փողը ջրի նման գալիս էր, ջրի նման գնում: Ասսատուր Հայրապետյանը խաթրով մարդ էր, բայց դե ղեկավար է, խաթիրն էլ մի օրով կլինի, երկու օրով կլինի: Հայրապետյանը մի օր եկավ, տեսավ Առաքելովի մեքենան է նորոգում, բարկացավ հորդ վրա. «Ա՛յ ընկեր, ասաց, բա դու մի կորեկի չափ խիղճ չունե՞ս, ախր մենք էլ մարդ ենք, մեր համբերությունն էլ սահման ունի, հիմա քեզ հետ ինչպե՞ս վարվեմ»:

Սաթենիկը խոսում է ինքն իրեն, բայց մտովին որդու հետ է: Բակում մենակ ինքն է, երկու հավ է մորթել, փետրահան արել, հիմա փորներն է մաքրում, որ եփի՝ գյուղատնտեսական ինստիտուտը կարմիր դիպլոմով ավարտած որդուն պատվի: Որդին լավ չի լսում մորը, վերևում անասնաբույժ Վաչագան Ադամյանի հետ շախմատ է խաղում:

- Հա, Սևադա, տղաս, էդ խոսքերն ասաց Ասսատուր Հայրապետյանը, հերդ էլ ինոն իրենից դուրս եկավ՝ ես կոլխոզում մնացողը չեմ, ազատիր ինձ աշխատանքից: Դու էն ժամանակ տասը տարեկան էիր: Կատաղած, գազան կտրած տուն եկավ, թե՝ սեզոն եմ գնում: Ի՞նչ սեզոն, այ մարդ, ասացի, տուն ունես, կին ու երեխա ունես, կոլխոզում պակաս չես վաստակում: Ինչե՞ր ասես, որ ինձ չասաց: Հիմա էլ ինձ տարավ կապեց կոլխոզի նախագահ Ասսատուր Հայրապետյանի հետ: Գոնե, մի ուրիշի հետ կապեր, Հայրապետյանը հորս տարիքին մարդ է: Եղբայրս՝ Սամվելը, լսեց, եկավ կանգնեց, թե՝ «Օրենքով տունն էլ է Սաթենիկինը, երեխան էլ, մտքումդ դրել ես սեզոն գնալ, գնա, ախպեր, ճանապարհդ բաց է»:

Գնաց: Այն գնալն էր, որ գնաց: Ընկերն էլ Հունանյան Լազրն էր: Գոնե մի նամակ չգրեց, չասաց՝ կինս ջահանդամը, երեխա ունեմ: Աշնանն էդ ձիաթափ դառած Լազրը մի քանի օրով եկավ գյուղ, փողոցում հանդիպեց, բարևեց ու ասաց. «Սաթեն, ինչի՞ չես հարցնում, թե մարդս ինչ բանի է: Հա, նա իր համար էնտեղ պսակվել, տուն-տեղ ունի, դու կարող ես քո գլխի ճարը տեսնել: Ջահել հարս ես, ինչի՞ օրդ սև անես»: Գլխիս ոնց-որ եռացրած ջուր լցրեց: Վա՜յ, նամուսդ թաղեմ, Սերգեյ, հիմա ի՞նչ երեսով պիտի երևամ մարդկանց աչքին: Նախագահ Հայրապետյանը լավ մարդ է, կանչեց ինձ գրասենյակ, թե՝ Սաթենիկ, Ռոզային վարչությունը ազատել է աշխատանքից, միջնակարգ ես ավարտել, գրագետ աղջիկ ես, ուզում ենք քեզ թռչնաբուծական ֆերմայի վարիչ նշանակել: Ասացի՝ ընկեր Հայրապետյան, հարկավոր չի, Ռոզան հարևանս է, ես նրա լեզվից չեմ պրծնի: Կոլտնտեսության վարչության որոշումը բոլորիս համար օրենք է, ասաց, Ռոզան իրեն չի արդարացնում աշխատանքում, գնա ֆերման ընդունի: Շարունակությունը չեմ պատմում տղաս, դու գիտես:

Սաթենիկը հավերի փորները լցրեց բրնձով ու չորացրած հոնով, կարեց, ոտքերը կապոտեց, տեղավորեց կաթսայում, դրեց կրակին, գնաց Աստատուր Հայրապետյանի ետևից: Նախագահը գրասենյակի բակում զրուցում էր բրիգադավար Ռուբենի հետ, հասկացավ, որ Սաթենիկն իր ետևից է եկել, զրույցը կարճեց ու շուռ եկավ:

- Հա, Սաթեն, լսում եմ:

- Տղաս՝ Սևադան եկել է, ընկեր Հայրապետյան:

- Բարով է եկել,- Հայրապետյանը ժպտաց,- քե՞ֆ ենք անում:

- Համեցեք, ընկեր Հայրապետյան,- ուզում էր բրիգադավար Ռուբենին էլ հրավիրել, միտքը փոխեց՝ թող կորչի, փչացած Լազրի եղբայրն է:

- Լավ, հիմա կգամ,- Հայրապետյանը շարժվեց դեպի գրասենյակ, ոտքը դրեց աստիճանին, կանգնեց.- Սաթեն, թե պակաս բան ունես, մի ամաչիր, ասա: Գուցե մի քանի հավ դուրս գրենք:

- Շնորհակալ եմ, ընկեր Հայրապետյան, տանս ամեն ինչ կա:

- Մենակ հարսն է պակասում,- ծիծաղեց Հայրապետյանը:- Բան չկա, հարսն էլ կլինի:

Սևադան և անասնաբույժ Վաչագան Ադամյանը դեռ շախմատի իրենց խաղն են շարունակում: Երևում է, Սևադան նրան նեղում է, տնաշենիդ անասնաբույժն այնպես է մթնվել, կարծես աշխարհի վերջն է:

- Գնացի ընկեր Հայրապետյանի ետևից,- ասաց Սաթենիկը,- հիմա կգա:

- Թող գա իր անասնաբույժի հալը տեսնի,- Սևադան աչքով արեց:- Տեսնո՞ւմ ես, չէ՞, մամ, թե ինչ օրն եմ գցել:

- Տեսնում եմ,- ծիծաղեց Սաթենիկը,- Վաչագան, երեսիդ նայել չի լինի... Դե լավ, դուք խաղացեք, ես գնամ իմ գործին:

Սաթենիկը մտածեց, որ երկու հավը քիչ է, ուզում էր կանչել հարևան Ռոզայի որդուն, որ մի երկու հավ էլ մորթի, հիշեց՝ մի շաբաթ առաջ իրար հետ կռվել են, խռովել: Մեղավորը Ռոզան էր, իրենց բակից նայեց Սաթե-

նիկի հավերին ու ասաց. «Աղջի, Սաթեն, կարողանո՞ւմ ես կոլխոզի հավերը քո հավերից ջոկել»: Սաթենիկը բերանը ծոթռած Ռոզային հո նո՞ր չի ճանաչում, և խոսքի տակ չմնաց. «Ընկեր Ռոզա, խելքդ քեզ չգնա, որ քո մարդուն շփոթես Դիլանենց Աղասու հետ»: Ռոզան փրփրեց՝ դե լավ, տղայովդ թեր չառնես, եղբորդ բաջանաղը՝ պրոֆեսոր Արամ Սահակյանը շեն կենա, նա չլիներ, Սևադայիդ ո՞վ կընդուներ ինստիտուտ:

Հա, տղաս, բերանը ծոթռած Ռոզան այդ խոսքերն ասաց ինձ: Մարատը՝ մարդը եկավ, հավարային շնաթակ պիտի տար, արանքն ընկա, չթողեցի: Իմ պատճառով ինչո՞ւ կռվեն, հետո էլ, որքան չլինի, հարևաններ ենք: Մարատը լավ մարդ է, մենակ կնոջ կողմից բախտ չունի:

Ռոզան աղբյուրից էր գալիս, վիզը երկարեց, տեսավ Սաթենիկին, դույլերն իջեցրեց գետնին, կանչեց.

- Սաթեն, աչքդ լույս, Սևադան եկել է:

- Աչքդ միշտ լուսով մնա, Ռոզա,- ու մտքում՝ «երես ունի, հա՜»:

- Ե՞րբ պիտի հարսանիք անես:

- Երբ մի լավ հարսնացու գտնեմ:

- Գյուղսովետի նախագահ Հայկազ Ասրյանի Անահիտից լավ հարսնացու ոչ մի տեղ չես գտնի,- Ռոզան ծիծաղեց, և նրա ծիծաղի մեջ նենգություն կար:- Տղադ բարձրագույն, կրթությամբ գյուղատնտես, հարսդ՝ բարձրագույն կրթությամբ ուսուցչուհի: էլ ի՞նչ ես ուզում:

Ռոզայի ասածների մեջ ճշմարտություն կա. Սաթենիկը գիտե, որ մի ժամանակ Սևադան սիրահարված էր Անահիտին, իսկ գյուղսովետի նախագահ Հայկազ Ասրյանը, թե՝ «Պա՜հ, պակասն էլ պիանիսկա Սերգեյի տղան է: Թող ամեն մարդ իր ճիպոտն իր քոլից կտրի»: Հետո գյուղում տարածվեց, թե Սևադային ու Անահիտին տեսել են Մանասի ձորի գետում լողանալիս: Տարածողը բերանը ծոթռած Ռոզիկն էր: Հենց այդ տարում Սևադան բանակ գնաց, Անահիտն ընդունվեց ինստիտուտ:

- Ռոզա, ես ի՞նչ ասեմ, իրենց գործն է:

- Անահիտը լավ աղջիկ է, մենակ քիթը շատ է ցից,- էլի Ռոզայի խոսքի մեջ նենգաթյուն կար.- Աշոտիկիս անգլերենից «երեք» է նշանակել: Մի հարցնող լինի՝ ընկեր Անահիտ Հայկազովնա, քո էդ անգլերենն ո՞ւմ է հարկավոր, Քարաշենում ո՞վ է անգլերեն խոսում: Անահիտի մերն ամբողջ կյանքում իր սկեսուրին օր ու արև չի տվել,- Ռոզայի նենգությունն արդեն բացահայտ էր,- խեղճ պառավը հարսից խռով մեռավ:- Սաթեն, պտուղը ծառից հեռու չի ընկնում:

- Լավ, տղադ «հինգի» է պատասխանել, ինքը «երեք» է նշանակե՞լ:

- Ախր, մի ասա տեսնեմ՝ էդ անգլերենն ո՞ւմ է հարկավոր,- Ռոզան թևերը կանթեց կողին, մարտական դիրք ընդունեց.- Որ Հայրապետյան Ասսատուրը անգլերեն չգիտե, պակա՞ս է կոլխոզը թալանում:

- Ռոզա, ամոթ է, դու էլ գիտես, որ սուտ ես խոսում: Բերանդ վատ ես սովորեցրել...

- Լավ, լավ, մի նեղանա,- Ռոզան նահանջեց,- մեր գործից խոսենք, մեր

ցավ ու դարդից խոսենք: Հյուրեր ունես, պիտի պատվես, թե արաղ չունես, մի քաշվիր, ասա:

- Արաղ խմողս ո՞վ է, որքան ստացել եմ աշխօրիս, պահում եմ:

Ասաց ու մտքում ծիծաղեց իր խոսքի վրա: Ականջդ կանչի, Սերգեյ, որտե՞ղ ես, օղին շշերի մեջ շարել եմ՝ խմող չկա: Կարասը գինով լիքը՝ խմող չկա: Մեր բակում մի հավ չի եղել, հիմա վաթսուն հավ ունեմ: Տան կողքին երկու օթախ եմ ավելացրել, բանկում հինգ հազար ռուբլի ունեմ՝ Սնադայի անունով: Ճակատիս քրտինքով եմ աշխատել: Կով եմ պահում, պուլիկները լցրել եմ յուղով: Թող տղաս վայելի: Մի այնպիսի հարսանիք անեմ, այնպիսի՜ հարսանիք... Ինչի՞ չպիտի անեմ, ումի՞ց եմ պակաս: Անահիտին էլ տունս հարս կբերեմ: Հա, կբերեմ, Հայկազ Ասրյանի ջգրու, թող իր ասած խոսքերը հիշի. «Պակասն էլ պիանիսկա Սերգեյի տղա՜ն է»: Հայկազ Ասրյան, պիանիսկա Սերգեյի տղայիս՝ պրոֆեսոր Սահակյանի աղջիկն է սիրահարվել: Խոսք չունեմ, սիրուն աղջիկ է, բայց դե սրտովս չէր, անցած ամռանը հոր հետ եկավ՝ գյուղում հանգստանալու, երեսն այնքան էր քսել, որ սիրունութունից բան չէր մնացել... Բայց դե, տղաս նրան չհավանեց:

Հայրապետյանը եկավ՝ թևի տակ մի փաթեթ: Երկու շիշ կոնյակ էր: Բարևեց Սնադային, գրկեց ուսերը, ծիծաղեց.

- Հա, տեսնում եմ,- ասաց,- Վաչագանին ջարդում ես: Տեղն է դրան, երեկ էլ վարչության նիստում ենք ջարդել:

- Բայց անտեղի, խոզաբուծական ֆերմայի վարիչ Արտաշի պատճառով...

- Դե լավ, չարդարանաս,- Հայրապետյանը մոտ քաշեց աթոռը:- Դաբաղի մասին հո գիտեիր:

Սաթենիկը շարունակությունը չլսեց, դուրս եկավ, կաթսայից հանեց եփած հավն ու դրեց պատշգամբին, որ հովանա, հայացքով որոնեց հարևան Ռոզայի որդուն, կանչեց.

- Աշոտիկ, ցավդ տանեմ, չե՞ս գնա գյուղսովետի նախագահ Հայկազի ետևից:

- Չէ, չեմ գնա,- Աշոտիկը պարսատիկով նշան էր բռնել ծառի ճյուղին թառած ճնճղուկին:

- Ինչի՞, ցավդ տանեմ:

- Ձեր հարսնացուն ինձ անգլերենից «երեք» է դրել,- Աշոտիկը վրիպեց, քարը կպավ ճյուղին, հասած թթերը թափվեցին:

- Ի՞նչ հարսնացու...

- Դե, ընկեր Անահիտն, էլի:

- Դե լավ, վազիր, ցավդ տանեմ:

- Ասացի՝ չեմ գնա:

- Կասեմ՝ «երեքդ» «չորս» դարձնի:

- Պա՛հ, հլա ձեր տունը հարս չի եկել, վրան կարգադրություն ես անում: Ուրիշ բան ասա՝ անեմ:

- Գլխիդ վրա կանգնիր:

- Կանգնեմ, ըհը,- Աշոտիկը երկու ձեռքը պարզեց վեր, ճարպկորեն ցատկեց, կանգնեց ձեռքերի վրա,- ո՞նց է, դուրդ եկա՞վ:

- Ֆիզկուլտուրայից՝ «հինգ»:

- Ես միշտ էլ ֆիզկուլտուրայից «հինգ» եմ:

- Լավ, հորդ կասեմ՝ ականջներդ մի լավ քաշի:

- Անահիտ Հայկազովնային էլ կասես, որ «երեքս» «երկու» դարձնի:

- Աշոտիկ, քո ուսուցչուհին ես լինեի՞...

- Ի՞նչ կանեիր...

- Վարքդ «երկու» կդնեի, ականջներդ այնպես կքաշեի, որ հորդ հարսանիքը միտդ կգցեիր:

- էդ բաները քո ժամանակներում են եղել,- Աշոտիկը ծիծաղեց:- «Երկու» դնես, դասարանի, դպրոցի առաջադիմության տոկոսը կիջնի, դիրեկտորը մանկխորհում քեզ մի լավ հուպ կտա:

- Դիրեկտորը չէ, մինիստրն էլ կարգադրի, թվանշանդ չեմ փոխի, երկու տարի իրար վրա նույն դասարանում կնստեցնեմ:

- Դու գնա քո հավերին դաս տուր՝ մի օրում երկու ձու ածեն, որ ձվամթերման պլանը ժամկետից չորս ամիս առաջ կատարես:

- Իմ հավերը դեռ քո մոր տված դասերովն են գնում: Միտդ պահիր, Աշոտիկ, ասածս չարեցիր:

Աշոտիկը ցատկեց, կախվեց, թթենու ճյուղից, երգեց.

- Արի գնանք կալիցը, յարո ջան, Պաչեմ թշիդ խալիցը, յարո ջան, Յարն անուշ է, լեզուն նուշ է, յար-յարո, յար ջան, Քարաշենի աղջիկները համ մարալ են, համ ջեյրան...

- Տես է՞, շան լակոտն ինչ լավ ձայն ունի: Հայրը երգող չի, մայրը երգող չի, կա-չկա, Դիլանենց Աղասու փարչովը ջուր է խմել:

- Աշոտի՛կ,- բերանը ճոթռած Ռոզան պատշգամբից կանչեց,- դպրոցո՞ւմն են էդ երգը սովորեցրել:

- Հա, Անահիտ Հայկազովնան է սովորեցրել:

- Մի անգամ էլ էդ երգը երգես, ձեռքիցս չես պրծնի: Մի թիզ չկա, յարի թուշ է պաչում: Գնա խանութից չորս հատ լվացքի սապոն առ:

- Չեմ գնա:

- էդ ո՞նց չես գնա:

- Երեկ խանութի Նորայի հետ կռվել ես:

- Աչքդ էլ եմ հանել, բա դու ո՞վ ես:

- Չեմ գնա, ուրիշ բան ասա՝ անեմ:

Սաթենիկը ուզում էր կծու խոսք ասել Ռոզային, լեզուն պահեց ատամների տակ և մտքում ինքն իրեն նախատեց, ախր ինչ ես այդ մի մատ երեխայի հետ լեզու թակում, տեսար, չէ՞, մորն էլ շշպռեց: Հայկազ Ասրյանն ո՞վ է, քո եղբա՞յրն է, թե՞ տեգրը, առանց նրան պատառդ կուլ չի գնո՞ւմ: Պա՜հ, Հայկազն է, էլի, մեծ մարդ չի: Դու որ ութերորդումն էիր, ինքը տասերորդումն էր սովորում: Գնաց բանակ, եկավ քաղաքում մեղվաբուծական դասընթացներ վերջացրեց, կոլխոզի մեղվափեթակների վային նստեց: Ես

մեղք չունեմ, արդարացավ, մեղուները փթախտից վարակվել են: Դարձրին շինարարական բրիգադի բրիգադավար, երեք տարում հազիվ մի խանութ սարքեց, էդ խանութի վրա գյուղում երգ կապեցին.

Հո՛պ, ստոպ, մագազին,
Ի՞նչ ասենք մեր Հայկազին,
Կիրն ու ցեմենտը ծախեց,
Տարավ, տվեց բողազին:

- Եվ հերդ, տղաս, իմ անունը մեկ էլ կապեց Հայկազի հետ: Ես այն ժամանակ ակումբավար էի, դու դեռ չէիր ծնվել: Ի՞նչ ձայն ունեի: Չգիտեմ, հերդ ձայնի՞ս էր սիրահարվել, թե՞ սիրունությանս: Մարզային օլիմպիադայում գրավեցի առաջին տեղը, նկարս տպեցին թերթում, հոդված գրեցին. «Սաթենիկ Ռուքանյանն իր անուշ ձայնով, իր գեղեցիկ ու հմայիչ արվեստով գերեց ունկնդիրներին»: էդ թերթը պահում եմ, կտամ՝ կկարդաս: Հերդ նայեց նկարիս, գազան կտրեց, ես ծրտի-մրտի բաները չեմ սիրում, գոռաց, կգնաս՝ ակումբը հանձնես ուրիշին, տանը նստես: Սիրտս լցվել էր, չդիմացա՝ ես քո ստրուկը չեմ, ասացի, ես քո գերին չեմ, քո ծառան չեմ, հերիք է, հոգիս, հանել ես: Թողեցի, գնացի իմ հերանց տուն, հերդ հաջորդ օրը եկավ, լեզու թափեց՝ խմած եմ եղել, Սաթեն, խոսք է, էլի, ասել եմ, ինչո՞ւ ես ասածներս սրտիդ մոտ ընդունում: Ինձ խոսքով կաշառեց, մի քանի օր անց էլի եկավ խմած, կռիվ գցեց: Դու Հայկազի սիրեկանն ես, ասաց, Հայկազը քեզ մի տեսակ է նայում:

...Հայկազ Ասրյանը եկավ առանց հրավերի, բարձրացավ աստիճաններով, մտավ ներս, գրկեց ու համբուրեց Սևադային:

- Մեր Սևադան բարով է եկել: Հա, լսել եմ, ինստիտուտը կարմիր դիպլոմով ես ավարտել,- քաշեց աթոռը, նստեց սեղանի մոտ, բացեց կոնյակի շիշը, լցրեց բաժակները:- Շատ ենք մասնագետների համար դես ու դեն ընկել: Ասել եմ, հիմա էլ եմ ասում՝ մեր մասնագետը բժիշկ է, թե անասնաբույժ, ուսուցիչ է, թե գյուղատնտես, տեղացի պիտի լինի: Ուրիշի սիրտը մեր գյուղի համար շա՞տ է ցավում: Չէ՞ մի: Ի՞նչ կասես, Ասսատուր Պատվականովիչ:

- Ես էլ այդ կարծիքին եմ, բայց,- Հայրապետյանը կոնյակ չէր խմում, իր համար մի բաժակ գինի լցրեց,- բայց Սևադան մտքում ուրիշ բան է դրել: Ուզում է վերադառնալ քաղաք:

Սաթենիկը քիչ մնաց ձեռքից գցեր ափսեն: Նրան մի պահ թվաց՝ ճիշտ չի լսել, նայեց որդու դեմքին, Սևադան խուսափեց նրա հայացքից:- Դա ո՞նց կլինի,- Սաթենիկի ձայնը դողաց.- Սևադա, տղաս...

- Դե լավ, մամ,- Սևադան զոռով ժպտաց:- Հետո կխոսենք:

- Բա մեր տունը, մեր տան ծուխը...

- Մամա, ամեն ինչ լավ կլինի:

Սիրտը պիտի դատարկեր, իջավ ներքնատուն, դուռը փակեց, նստեց թեք ընկած տաբուրետին, հեկեկաց:

- Սևադա, տղաս, մինուճարս... Հերդ քեզ հերություն չարեց, քո մերն էլ էի ես, քո հերն էլ էի ես: Քեզ աչքիս լույսի պես եմ պահել, մի անգամ չեմ ա-

սել աչքիդ վրա հոնք կա: Ո՞ւմ համար եմ սարքել այս օթախները, ո՞ւմ համար եմ գնել էս նախշուն խալիչաները, ինչի՞ համար եմ քաշել բերանիս պատառը: Ջահել հարս էի, ուզողներ եկան՝ չգնացի: Ասացի՝ տղաս խորթություն չպիտի տեսնի: Քեզ համար երջանկությունս զոհեցի: Տրակտորիստ Մարտունը եկավ, ձեռքս խնդրեց՝ մերժեցի: Վահան Գարաքյանը կրունկներս կոխ էր տալիս: Ա՛յ տղա, ասացի, գյուղում քի՞չ աղջիկներ կան, ինձնից ի՞նչ ես ուզում: Նա թե՝ ես քեզ եմ սիրում, սիրտս քեզ է կպել: Չգնացի: Բերանը ճոթռած Ռոզան վրաս ծիծաղում էր՝ Սաթեն, մեղք ես, ասում էր, ի՞նչ ես թխսահավի նման թևերդ փռել մի ճտի վրա: Մարդուդ ձեռքին օր չես քաշել... էսպես որ նայում եմ՝ ոնց-որ տասնութ տարեկան աղջիկ լինես: Բերանումս ուրիշ խոսք չկար, «չէ՛» էր: Այդ «չէ»-ն ոնց-որ դու էիր բերանումս դրել: Աշունքին էր, Կրասնոդարից մի ջահել տղա եկավ: Չէ, ինձ ուզելու մտքով չէր եկել, հերդ էր ուղարկել: Սիրտը փափկել էր, իր արածները միտն էր գցել, փոշմանել: Հազար ռուբլով ուզում էր մեղքերը քավել: Փողին ձեռք չտվեցի, ասացի՝ տղա ջան, աչքս փողի վրա չի, փողը երջանկություն չէ, կտանես տաս իրեն, կասես՝ շատ ես ուշացել: Հարցուփորձ արեցի հորիցդ: Իր արհեստին է, չորս աղջիկ ունի, կնոջ անունը Լիզա է, ինձ բարևում է: Չէ՛, տղաս, մերդ մուռ պահող մեր չի, եղածը եղել է, կոտրածը զոռով չես կոծկի: Երեք մեծ բանկա հոնի մուրաբա, երկու բանկա բալի մուրաբա, չորս լիտր թթի օղի ուղարկեցի: Ասացի՝ երեխատեր է, չորս աղջիկ մեծացնելն ու մարդու տալը հեշտ բան չի: Լիզային կասես, ասացի էդ տղային, քո երկու աղջիկների պսակի բաժինքը վերցնում եմ վրաս: Բա չվերցրի՞, մի զույգ վերմակ, մի զույգ դոշակ, չորս բարձ, իմ կողմից մի ոսկի ժամացույց, հինգհարյուր ռուբլի: Հարսանքին չգնացի, էդ բաներն իմ ձեռքով ուղարկեցի: Լիզան նամակ գրեց. «Շատ շնորհակալ եմ, քույր Սաթենիկ, մինչև մահ ու գերեզման լավությունդ չեմ մոռանա»:

Սաթենիկը չիմացավ, թե հյուրերն իրենից հետո ինչ խոսեցին, Սնադան ուր գնաց:- Հավաքեց սեղանը, դուրս եկավ բակ: Ռոզան լվացք էր փռում, գլուխը բարձրացրեց, ասաց.

- Սաթեն, երևի Սնադան Անահիտին շատ է կարոտել, գնաց կարոտն առնի: Թող բախտավոր լինեն, չուզողի աչքը դուրս գա,- սպասում էր պատասխանի, բայց Սաթենիկը լուռ էր: Ռոզան որսի շան հոտառություն ունի, լեզուն կծեց՝ չէ, մի բան Սաթենիկի սրտովը չի, քիթը կախել է:- Սաթեն, չես խոսում, ի՞նչ է եղել:

- Հեչ բան էլ չի եղել:

- Դե լավ, ինչո՞ւ ես թաքցնում: Վայ թե Անահիտը միտքը փոխել է:

- Ախր ես որտեղի՞ց իմանամ՝ փոխել է, թե չի փոխել: Ես նրա ի՞նչն եմ՝ հե՞րն եմ, թե՞ մերը:

Ռոզան մինչև իր ուզածը չիմանա, գիշերը չի քնի: Որ չիմանա՝ կխեղդվի, հազար ցավի կգա, գյուղն իրար կխառնի: Նա արագ-արագ փռեց լվացքը, դույլերը զնգացնելով գնաց ջրի: Անասնաբույժ Վաչագանի կինը՝ Սիլվան, գյուղի անթել հեռախոսն ու ռադիոն, աղբյուրի մոտ արդեն գլխին

էր հավաքել կանանց: Ամուսինն ամեն ինչ տեղը-տեղին պատմել է: Ամուսնու պատմածն էլ մի քիչ ինքն է մշակել ու խմբագրել, և դուրս եկավ այնպես, որ սեղանի շուրջը տվել են, կռվել, իրար անպակաս խոսքեր ասել: Իբր Սևադան ասել է՝ քանի կոլտնտեսության նախագահը Ասսատուր Հայրապետյանն է, ես էս գյուղում մնացողը չեմ: Գյուղսովետի նախագահ Հայկազը դրան պատասխանել է. «Ա՛յ տղա, էնպես ես խոսում, ոնց որ պիանիսկա Սերգեյի տղան չլինես: Ջոռով չենք պահի, բարի ճանապարհ: Իսկ ինչ մնում է քո և Անահիտի ամուսնության հարցին, ներողություն կանես, ես քեզ տալու աղջիկ չունեմ»:

Սևադան եկավ ուշ երեկոյան, դեմքից երևում էր, որ տրամադրությունը տեղը չի: Պառկեց, քունը չէր տանում, հագավ տաբատը, դուրս եկավ պատշգամբ, ծխեց, և իբր թե առանձին մի բան էլ չի եղել, գրկեց մորը, պտտեցրեց ու ասաց.

- Դու ուժեղ կին ես, մամ:

- Ինչո՞վ եմ ուժեղ:

- Ուժեղն ինչպե՞ս է լինում՝ հոգով, սրտով, կամքով, խելքով:

- Սևադա, տղաս, ես առաջին հերթին մայր եմ:

- Այն էլ ինչպիսի՜ մայր... Լավ, ի՞նչ ես հոնքերդ իրար տվել: Դու գրագետ կին ես, հասկացիր, մեջտեղ դիսերտացիայի հարց կա: Պրոֆեսոր Սահակյանը գտնում է, որ...

Սաթենիկը ընդհատեց նրան.

- Կգնաս էդ պրոֆեսոր Սահակյանի կապիկ աղջիկը կառնես, տնփեսա կդառնաս: Քո էդ պրոֆեսորն ի՞նչ է գտնում՝ որ կարելի է ասֆալտի վրա ցորեն ցանել, ճակնդեղ աճեցնել, տների կտուրներին խաղողի վազեր տնկել, մեքենաների գարաժներում կովեր պահել, սառնարանում հավ թուխս դնել...

- Մամ, եկ իրար լավ հասկանանք...

- Պրոֆեսոր է, չէ՞, կտանի քեզ նստեցնի մինիստրի աթոռին: Իսկ ինձ համար մեր գյուղում շարքային հովիվն ավելի մեծ մարդ է, քան քաղաքում՝ մինիստրը: Ես քո ճանապարհը չեմ փակում և չեմ էլ ուզում, որ մեր ճանապարհները բաժանվեն: Այդ դիսերտացիան չե՞ս կարող այստեղ գրել...

- Անահիտն էլ այդպես ասաց,- Սևադան հանգած սիգարեթը վառեց:- Ի՞նչ է, խոսքներդ մե՞կ եք արել:

- Ես չգիտեմ, թե Անահիտն ինչ ասաց: Դու գնա Ռոզայի բերանը փակիր: Ես մայր եմ, պատրաստ եմ իմ մայրական պարտքը կատարելու:

- Մամ, ես պարտքի տակ չեմ մնա:

- Երեսովս տված պարտքը չեմ վերցնի:

* * *

Նա առավոտյան քաղաք ճանապարհվեց: Միակ ուղեկցողը մայրն էր:

Ավտոբուսի պատուհանից նայեց ճանապարհի եզրին, բարդու կողքին մտամոլոր կանգնած մորը, ականջին հասավ նրա տխուր ու թախծոտ ձայնը.

- Սևադա՜, աղաս...

Ներսում ասես ինչ-որ բան կտրվեց, գուցե դա իր և հայրենի գյուղի, իր և հարազատ մարդկանց կապվածությունն էր, որ ընդհատվեց: Անահիտը չեկավ ուղեկցելու, հենց այնպես, պատահաբար հանդիպեց փողոցում, ասաց՝ հաջողություն եմ ցանկանում: Երբ ծանոթ վայրերը մնացին ետևում, նա նորից մտովին պատկերացրեց մորը՝ ճանապարհի եզրին կանգնած, և շարունակ նրա ձայնն էր լսում.

- Սևադա, տղաս...

...Եվ այն պահին, երբ քաղաքի կենտրոնական հեռագրատանը Սևադա Ռուքանյանը հեռագրաթերթիկում գրում էր. «Մայրիկ, վերադառնում եմ», ավելի պարզորոշ պատկերացրեց մորը՝ հեռագիրը սեղմած կրծքին, որ լալիս էր ուրախությունից և արցունքների միջից ասում.

- Սևադա, տղա՛ս...

ՀՈՎՆԱՆԸ

Ամպերը ղռղռացին: Ասես հսկայական ջրաղացքարեր էին պտտվում երկնքում. Դովթալաբի խութից, Կիշկի կատարից, Չախմախասարի կողմերից հատուկ հրանոթները ամպերի վրա կրակեցին, հատուկ հրանոթների քաղաքացիական համազգեստով հրամանատարները զեկուցեցին իրենց պետերին, թե քանի արկ են արձակել, արտերը, խաղողայգիները, բանջարանոցները փրկել կարկուտից: Բայց կարկուտ, այնուամենայնիվ, եկավ, կարկուտը թափվեց Դովթալաբի խութի հրետանավորների գլխին, և ջոկի հրամանատար Վաղես Կնյազչյանը կատակի ձևով ասաց. «Տղերք, ինչպես տեսնում եք, մենք հերոսաբար հարվածը վերցրել ենք մեզ վրա. հուսամ, որ այս անգամ էլ վերևներում մեր հերը չեն անիծի»:

Քարաշենում կարկուտ չեղավ, կարկուտը ուրիշ կողմի վրա գնաց: Հովնանը կալատեղերից ձին չափ գցեց դեպի Ուղտաքարի խամուտը, և այդ տրաք-տրաքոցների տակ իրեն գեներալ Մադաթով էր երևակայում, թե որ գեներալ Վալերիան Մադաթովի փարթամ բեղերն ունենար, գանգուր-գանգուր բակենբարդերն ունենար, կողքից կախած ոսկեպատյան թուր ունենար՝ պատրաստի պատկեր է, տեղավորիր արծաթագույն շրջանակի մեջ, տակին խոշոր տառերով գրիր՝ գեներալ Հովնան Փարսադանով, կախիր որևէ ցուցասրահում, դպրոցի երեխեքին բացատրիր. «Երեխաներ, սա գեներալ Հովնան Փարսադանյանն է, բոստանչի Առաքելի որդին. դպրոցում էլ խիստ աչքաբաց տղա էր, մերը կանչում էր՝ Հովնա՜ն, Հովի՜կ, ա՛յ շան լակոտ, ա՛յ տափու եկած, էլի հաշիվ-հաշվառքից երկո՞ւ ես ստացել»: Իսկ Հովնանը մեծահոգաբար կլլում էր մոր վիրավորանքները, քանզի գիտեր, որ ինքը մի օր գեներալ պիտի դառնա:

Իսկ ձին լավ է չափ ընկել, անիծվածը ոնց որ հասկացել է գործի էությունը: Շունշանորդի Մարտին Հովսեփյանը տրակտորը շուռ է տվել Թեղուտի վրա, նոր հողամաս է յուրացնում: Չի ասում՝ ընկեր բրիգադիր, որքան չլինի, նախագահից հետո գյուղում երկրորդ խոշոր դեմքը դու ես, խնդրում եմ թույլ տաս, որ անձնական նպատակների օգտագործման համար՝ մի քիչ հողամաս յուրացնեմ: Թյո՛ւ, անարխիստ-անարխիստի տղա, տրակտորիստ է, կարծում է մեծ բանի վրա է: Տակուգլուխ տներ է սարքել, ապրուստին ապրուստ չի հասնում, կնիկն էլ՝ խանում-խաթուն, քիթը երկինքներովն է ման ածում, ոնց որ հինգերորդի ծիպլի Համեստը չլինի՝ պատմությունից երեք, աշխարհագրությունից՝ երեք, մաթեմատիկայից՝ երկու, հայոց լեզվից էլ մի բան չէր, կանգնում էր գրատախտակի առջև, վիզը սագի պես ձգում, որ հուշեն:

- Գայլն ու գառը: Մի ամլիկ գառ իրեն համար... Մի ամլիկ գառ իրեն համար...

- Սիմոնյան, մի ամլիկ գառ իրեն համար ի՞նչ էր անում:

- Արածում էր, ընկեր Ախշեն:

- Սիմոնյան, նստիր, երկու, դասդ չես սովորել:

- Ընկեր, լավ էլի, թող նորից սկսեմ: Գառն ու գայլը: Մի ամլիկ գառ իրեն համար արածում էր դաշտերում:

- Սիմոնյան, վաղը ծնողիդ կբերես դպրոց:

- Ընկեր Ախշեն, լավ էլի, խնդրում եմ, թող սկզբից նորից սկսեմ...

Ուրեմն, միջակ սովորող էր, բայց մանկավարժական տեխնիկում վերջացրեց, դառավ խանում-խաթուն ուսուցչուհի: Ոնց որ վարսավիր Արտուշի աղջիկը չլինի: Դե, Արտուշն էլի, ձեռքից ուրիշ բան չի գալիս, մորից էդպես վարսավիր է ծնվել, մի ձեռքին՝ մկրատը, մյուս ձեռքին՝ ածելին: Մի անգամ Հունանի գլուխը կարգի էր բերում, թոռը մտավ վարսավիրանոց, թե՝ պապի, քսան կոպեկ տուր, կինո եմ գնում: Եվ այս Արտուշն ի՞նչ ասի, որ լավ լինի. «Պապին քե մատաղ, բա չե՞ս տեսնում, որ քսան կոպեկի համար շուն եմ խուզում»: Շունն էլ Հունանն է, էդպես կիսատ-պռատ գլխով վեր կացավ տեղից ու ասաց. «Շնորհակալ եմ, բրիգադիրիդ լավ պատիվ ես տալիս»:

- Ես քու ինքնագլուխ, ես քու լածիրակ հերն եմ անիծել,- Հովնան Փարսադանյանի միջից գեներալ Մադաթովն անհետացավ, տեղը զիջեց գնդապետին, գնդապետը դառավ կապիտան, կապիտանը մի քանի աստիճան իջավ, եղավ սերժանտ: Այդպես էլ կար, Հովնան Փարսադանյանը բանակում սերժանտ էր, 48-ին սերժանտի ուսադիրներով, հաստ գոտին մեջքը պինդ գրկած, սապոգները փայլփլուն, գլխարկը թեքած աջ հոնքին, եկավ արձակուրդ, և չնայած մի կարգին ձայն չուներ, բայց մի գլուխ երգում էր, որովհետև սիրահարվել էր վարսավիր Արտուշի Համեստին, այսինքն՝ ընկեր Համեստին ու չգիտեր, որ Համեստը կապված է շարքային Մարտին Հովսեփյանի հետ:

- Ես քո էգոիստ հերն եմ անիծել,- Հովնանը մտրակեց ձիուն, ձին Ուղտաքարի սալուտում թափը կորցրեց, և մեկ էլ ո՞վ պիտի լինի, Կապի տա-

կից ձենեց. «Մարտի՜ն, գեներալ Փարսադանովը եկավ, փախի՜ր»: Դե էլ ուրիշ ո՞վ, անտառապահ Հազարապետն էր, Քարաշենի կիսափիլիսոփան, կիսախելոքը, կիսագրագետը, կիսախենթը՝ թանգարանային հրացանը մեջքին, հանգած «Ավրորան» բերանի մի պուճախում: Հազարապետն առաջներում կոլխոզից էր աշխօր ստանում, նախագահ Հմայակ Առուշանյանը անտառապահի հաստիքը կրճատեց, Հազարապետը դառավ ձրի անտառապահ, բոլոր դիստանցիաներով նամակ գրեց, բողոքեց, վերևներից եկան անտառը պետականացրին, Հազարապետը դարձավ ռոճիկով անտառապահ...

Հովնանը քաշեց ձիու սանձը, ներքևից վերև ձենեց.

- Հազարապետ, դու հլա սպասիր, գլխիդ էնպիսի մի խաղ խաղամ...

- էդ մեկը դալաթ կանես,- Հազարապետի ձայնը լսվում, ինքը չէր երևում.- Հովնան, իմ թիկունքում պետությունն է կանգնած, բա քո թիկունքինը ո՞վ է՝ սղոցագործարանի դիրեկտոր Մանուկյան Նիկի՞տը: Համա մեծահոգի տղամարդ ես, հա՜, կոլխոզի ճողպորուտը ծախեցիր Նիկիտին... Թե՞ ձրի տվեցիր, որ տղայիդ գործի ընդունի:

Փարսադանյանն ինքն իր մեջ տաքացավ, պլթպլթաց, եռ եկավ, թշշաց, իսկ ձին հոլի պես տեղում պտտվում էր, պտտվում էր, չգիտեր որ կողմի վրա գնա, ոնց որ կինոյի պատկեր, Հովնանին թուրն էր պակասում. մենամարտի տեսարան կստացվի: Հազարապետն ինչ որ տեղից նայում ու ծիծաղում է. «Արա՜, դու հո ցիրկի կլոուն չե՞ս, էդ խեղճ անասունին ինչի՞ ես տանջում»:

- Հազարապե՜տ, էդ ե՞ս եմ ծախել ճողպորուտը,- Հովնանը հիմա տեսավ Հազարապետին:- Գոմի համար երկու գերանացու ուզեցի՝ չտվիր, մի՞տդ է:

- Միտս է,- Հազարապետն իր տեղն ավելի աշկառ արեց:- Ծմակը իմ հոր սեփականությունը չի, պետական է, իսկ ճողպորուտի հարցում դու մեծ մեղք ունես:

- Արա, ես ինչացո՞ւ եմ:

- Դու վարչության անդամ ես:

- Վարչության անդամ եմ, վարչության նախագահ չեմ: Կամ իմ խոսքը, կամ քո խլամ հրացանը:

- էդպես ենթարկվելով, էդպես նախագահիդ կարգադրությունները կատարելով, էդպես ձիդ քշելով որտե՞ղ պիտի հասնես, Հովնան: Իմ հրացանը, ճիշտ է, տրաք չունի, բայց դու մարդ ես, հրացան չես: Չէ, շատ լավ հրացան ես, բայց՝ ուրիշի ձեռքին:

Հովնանը կորցրել էր իր նախկին թափը, մեջը նախկին սերժանտությունից մնացել էր շարքայինը, և ձին անտառակողի կածանով քշեց՝ թիկունքին զգալով Հազարապետի ծաղրող հայացքը և կծու խոսքը. «Չէ, շատ լավ հրացան ես, բայց՝ ուրիշի ձեռքին»: Մտքերը խառնվեցին իրար, մտքում ինքն իրեն տարավ դրեց կոլտնտեսության նախագահի տեղը, ձեռքն առավ կոլտնտեսային օրինակելի կանոնադրությունը, գտավ համապատասխան կետը, այդ համապատասխան կետով անտառապահ Հազարապետին ազատեց աշխատանքից, Մարտին Հովսեփյանին հայ-

տարարեց խիստ նկատողություն ու մտքում ինքն իր վրա ծիծաղեց՝ ա՛յ հողս գլխիդ, աշխարհին իբր թե զարմացրեցիր:

Կարկտահար հրանոթները հիմա էլ Չախմախասարի կողմերից մի քանի անգամ դրմփացրին, քամին ինչ-որ տեղից մագնեզիումի ծանր հոտ բերեց, օդը մի տեսակ ծանրացավ, դարձավ խեղդուկ, անտառում ծլվլացող թռչունները սկսվեցին, մենակ չարդն էր լաչառություն անում: Չախմախասարի կարկտահարների հատուկ ջոկատի պետ Սամվել Չալոյանը հեռադիտակով նայեց, տեսավ անտառակողի կածանով գնացող ձիավորին, ծիծաղեց. «Բաջանաղս է, Հովնանը, Քարաշենի գեներալը: Արխերի տակից մի քիչ բոստանատեղ էի վերցրել, եկավ գլխիս կանգնեց, թե՝ բաջանաղ, էդպիսի որոշում չկա, դու կոլխոզնիկ չես, ծառայող ես: Ասացի՝ ա՛յ մարդ, ձեր հանդերը ես եմ պաշտպանում կարկուտներից, էդ ո՞նց թե իրավունք չունեմ,- հարիֆը ձեռ առավ՝ համա պաշտպանում եք, հա՜... Առաջներում կարկուտը սպիտակ էր, հիմա դարձրել ես դեղնագույն:

Եվ ջոկատի պետ Սամվել Չալոյանը ձեռքը բարձրացրեց. «Կրա՛կ»: Հրանոթը որոտաց, Հովնանը նայեց Չախմախասարի կողմը, թքեց՝ թյո՛ւ, ախմախ, շատ մեծ գործի վրա է, դեռ բոստան էլ է ուզում:

Մարտինը տրակտորի խցիկից տեսավ թե չտեսավ Փարսադանյանին, լսեց թե չլսեց նրա ձայնը.- Ինքնագլուխ սրիկա, հլա մի կանգնիր,- կարևորություն չտվեց, դիտավորյալ գազն ավելացրեց, «Բելոռուսը» շուռ տվեց ուղիղ Հովնանի ու ձիու վրա, ձին խրտնեց, իրեն մացառուտներին տվեց, Մարտինը գլուխը հանեց խցիկից, գոռաց.

- Ողջո՜ւյն Հովնան Փարսադանյանին:

- Բերանդ փակիր, անարխիստի մեկը:

Հովնանը թամբից ցատկեց, լկմանները հանեց ձիու բերանից, բաց թողեց կանաչուտում, լայն-լայն քայլեր գցելով, մոտեցավ, սապոգի քթով խփեց ծանր գուղձին:

- Տեսնում եմ,- ասաց,- մեծ բանի վրա ես,- ու գոռաց,- խոպաննե՞ր ես յուրացնում:

Մարտինը իջավ տրակտորից, պատիվ տվեց, և դա ձեռ առնել էր:

- Թույլ տվեք զեկուցել, ընկեր գնդապետ... ներողություն, ընկեր գեներալ, որոշել եմ այգի գցել: Անհասկանալի հարցեր ունե՞ք:

- Մասխարա՞ ես անում,- Հովնանը մի սիգարեթ կպցրեց,- թատրո՞ն ես խաղում, ուզում ես քո էդ դերասանություններով բերանս փակե՞լ,- նայեց թեք ընկած մոխրատանձուն, և գիտեր, որ ծառը մի տարի առաջ էր չորացել, չիմանալուն դրեց.- Մենակ ես ծառի համար վրադ մի էնպիսի ակտ կկազմեմ... Որ կազմեմ, ի՞նչ պիտի անես:

- Կստորագրեմ,- Մարտինը ծիծաղեց ու վրա տվեց,- բանջարանոցների հողերը տվել ես սղոցագործարանին, իբր թե ավելցուկ հողեր են: Ագրոնոմի դիպլոմով տղայիդ տեղավորել ես սղոցագործարանում:

- Դու քո տղայից խոսիր, Մարտին:

- Գիտես, իմը վերջացրել է գյուղատնտեսականը, գալիս է:

- Պինդ կպահես, որ չփախչի:

- Պինդ կպահեմ, որ չփախցնես: Դու էլ ձիուդ թամբին պինդ կնստես, որ բարձրագույն կրթությամբ տղաս քեզ ձիաթափ չանի,- Մարտինը ձեռքը մեկնեց դեպի ներքև.- Հիշո՞ւմ ես,- մի տասը տարի առաջ այստեղ լավ խնձորայգի կար:

- է՜, հա, կար:

- էն ժամանակ դու էիր տրակտորի վրա:

- Խոսքդ ասա:

- Ավերեցիր խնձորայգին:

Հովնանը ներողամտաբար, իրեն հատուկ մեծահոգությամբ պատասխանեց.

- Ըստ էության, դո՛ւ էլ ուրիշների խոսքերն ես կրկնում: Կոլխոզը որոշում ուներ, այդ առթիվ ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, իսկ ես այն ժամանակներում շատ փոքր մարդ էի:

- Իբր թե հիմա շա՞տ մեծ մարդ ես,- Մարտինը ծիծաղեց.- Հա, ասենք, Համո Առուշանյանի տեղակալն ես՝ քանդման գծով... Դե լավ, պարզ խոսենք՝ որոշել եմ այգի գցել: Տղաս գալիս է կարմիր դիպլոմով, ինչի՞ վրա պահեմ:

- Դու գիտե՞ս, թե հանրային հողերն ինքնագլուխ կերպով շռայլելու համար ինչ են անում, բռնում են բրիգադիր Հովնան Փարսադանյանի կոկորդից ու ասում...

Մարտինը չթողեց շարունակի, վրա բերեց.

- Ընկեր Փարսադանյան, դու քո թերի կրթությամբ, կիսատ-պռատ գիտելիքներով, կուրորեն կարգադրություններ կատարելով որտե՞ղ ես գնում: Ասում են՝ գյուղում ջահել չես թողել, քշել ես:

- Ե՞ս,- Հովնանը ձեռքը դրեց կրծքին,- էդ ե՞ս եմ քշել:

- Չէ, պապս է քշել: Էնպես էլ անմեղանում ես... Բա ո՞նց, պաշտոնդ կխլեն, կասեն կիսագրագետ սերժանտն ի՞նչ իրավունքով է գրագետ լեյտենանտի վրա կարգադրություններ անում: Կասեն՝ կոլխոզի հողերը շռայլում ես, հիմա էլ քարահանքերի դիրեկտորի հետ ես ախպերացել,- Մարտինը հերսոտվեց.- Արա, դու սկի մի քիչ ինքնասիրությո՞ւն չունես, ով որ բերանը բացում է, դու ծափ ես տալիս,- չսպասեց պատասխանի, մտավ խցիկը, գործի գցեց մոտորն ու գոռաց.- Դե ի՞նչ ես տնկվել, ռադդ քաշիր այստեղից:

Հովնան Փարսադանյանը ետ-ետ գնաց, իր ոտնահարված հպարտությունը գցեց ձիու թամբին, մացառուտներով ձին քշեց ու չգիտեր, որ իր հարգելի բաջանաղը, նա ինքը՝ հրետանավորների հատուկ անձնակազմի հրամանատար Սամվել Չալոյանը, ջոկատի տղաներին մի նոր անեկդոտ է պատմում.- Տղերք, ուրեմն մեր էս Հովնանը մի տատ ուներ, թատրոն էր, ցիրկ էր, կինո էր: Մի օր մեր շենի դպրոցի նոր ուսուցիչը նայեց տեսավ պառավը բոստանում կանաչի է քաղում, հարցրեց՝ Եղիսե բիբի, էդքան կոտեմը ի՞նչ պիտի անեք: Եղիսե բիբին թե՝ հընգեր Անդրանիկ, արաղ ենք քաշելու:- Բա լավ, գինձը ի՞նչ պիտի անեք:- Հընգեր Անդրանիկ, գինձից էլ բաքմազ ենք ետփելու: Էս հընգեր Անդրանիկը թե՝ Եղիսե բիբի, չէ, գինձի բաքմազին չեմ հա-

վատում,- և էս պառավը տարավ բերեց ու ասաց. Այ վարժապետ, որ կոտեմի արաղին հավատում ես, գինձի բաքմազին ինչի՞ չես հավատում:

Չալոյանը մի ուրիշ անեկդոտ էլ էր ուզում պատմել, չհասցրեց, ամպերը ղռղռացին, անցավ իր ծառայողական պարտականություններին՝ էդ ղռղռոցի ուղղությամբ երեք սնարյադ... չէ, երկուսը հերիք է:

Դը՛մբ, դը՛մբ... Հովնանը գիտեր, որ դա իր բաջանաղի տրաքոցներն են, հայհոյեց՝ էշի կարկաժ, չի թողնում, թե մի քիչ անձրև գա, թխպերը ցրիվ է տալիս: Հետո որտեղից-որտեղ, անտառապահ Հազարապետը կանգնեց դիմացը՝ թանգարանային հրացանը մեջքին, շինելի մի փեշը խրած գոտու տակ, մի փեշը գետնին, ասես անտառապահ չի, պատերազմական տարիներից մնացած պարտիզան է, իսկ ինքը՝ Հովնանը, թշնամական սպա է, մի «հինդի հոխ» է մնում, որ ձեռքերը բարձրացնի ու ասի՝ Հիտլեր կապուտ, ախպեր, ցավդ տանեմ, թվանգիդ լուլան դեն պահիր:

- Փարսադանյան Հովնան, փուքսդ նստե՞ց,- ասաց Հազարապետը քամահրանքով, մի տեսակ ոգևորված:- Մարդն այգի է գցում հասարակական հիմունքներով, իսկ դու կանգնել ես ճանապարհին, թե կոլխոզն էդպիսի որոշում չունի,- բռնեց ձիու սանձը, ներքևից վերև նայեց, և այնպե՜ս անմեղ են աչքերը, դու կասես Հիսուս Քրիստոսն է, հարություն է առել:- Հովնան, որ ես մեռնեմ, մեր քարաշենցիք իմ արարքների մասին մի լավ խոսք են ասելու: Դու որ մեռնես՝ ի՞նչ պիտի ասեն: Հա, կասեն՝ Հովնանը է՜, բոստանչի Առաքելի տղան, երբ առաջներում շարքային էր, լավ մարդ էր, բրիգադիր դառավ, պոզերը ցույց տվեց:

- Ցնդած,- Հովնանը դա ասաց բարեկամաբար,- երկու գերանացու ուզեցի, մեծ բան չէր: Իսկ դու մեր ծմակները քեզ հետ էն աշխա՞րհն ես տանելու:

- Չէ մի՜,- Հազարապետը ձեռքը թափ տվեց,- մի դագաղացուն ինձ հերիք է: Բայց դե, մեր էս ծմակներով ինձ հիշելու են, ողորմի ասեն:

- Ուղտաքարի գլխին արձանդ կանգնեցնելու են:

- Արձանի համար ես շատ փոքր մարդ եմ, արձանը քեզ է սազում: Հրե՜ն, քարահանքերի դիրեկտոր Մակբեթ Ղավալյանը հատուկ քեզ համար, քո բոյին արձանացու է պատրաստում: Խելոք գործ է բռնում, Պռիշնու տակի հողերը իրեն ես տվել:

- էդ ինչի՞ ինձ եք ասում,- Հովնանը թեքվեց ձիուց,- էդ ինչի՞ կուժն ու կուլան իմ գլխին եք կոտրում, ես ինձանից ի՞նչ եմ ներկայացնում: Ա՛յ ախպեր, իմ տեղ դու ես, ես չկամ, ես մեռել եմ: Մակբեթ Ղավալյանի հերն անիծած, նա իմ ի՞նչն է:

- Դե լավ, գնա,- Հազարապետը բաց թողեց ձիու սանձը,- հրեն կոլխոզի նախագահ Համո Առուշանյանը կալատեղերում քեզ է սպասում:

Այդպես էլ կար. Հմայակ Առուշանյանը շլյապան թեքել հոնքին, կանգնել էր խանդակի ծայրին, ոնց որ՝ պատրաստի արձան, պատվանդանն էր պակասում: Մի տասը քայլի վրա նախագահական ավտոմեքենան է, վարորդը բարձրացրել կապոտը, բզզում է, երևի ինչ-որ բան տեղում չէ: Իսկ մեքենան բոլորովին նոր է, մի շաբաթ առաջ են ստացել, քարահանքերի

դիրեկտոր Մակբեթ Ղավալյանի հատուկ ֆոնդից, Պռիշնին տակի հողերի դիմաց: Մի հարցնող լինի՝ Համո Առուշանյան, դու էդ հողերի վրա քրտի՞նք ես թափել, որ էդպես հեշտ ու թեթև վերցրել, դրել ես Ղավալյանի ձեռքին, թե՝ բան չկա, մեր տնտեսության ներսում կարող ես դու էլ քո տնտեսությունը ստեղծել: Եվ ստեղծեց, մի կողմում՝ թռչնաբուծարան, էն մի ծայրին էլ իր համար ամառանոց կառուցեց, որ կնիկը ամռան ամիսներին գա հանգստանա, գետում լողանա, տավարած Կուքանը Ցաքուտից նայի ու ասի. «Տեսնես էդ կնիկն ինչ է ուտում, որ էդքան սիրուն մարմին ունի»:

Առուշանյանը Հովնանին էր սպասում, Հովնանին չնայեց, թխպերին էր նայում՝ կանգնած գեղեցիկ ու ծիք, համարյա անթերի, և մոխրագույն կոստյումը վրան շատ լավ է նստել, ասես արտելից միասին են դուրս եկել, մի արշինով չափած, մի մկրատով ձևած, մի վարպետի ձեռքով կարած ու արդուկած: Այդ կոստյումից քարահանքերի դիրեկտոր Մակբեթ Ղավալյանն էլ է հագնում, Առուշանյանը ամեն մի հարցում նրան է ընդօրինակում, բան է, եթե Մակբեթ Պայազատովիչը կնոջից բաժանվի, ինքն էլ նույն բանը կանի:

- Եկա՞ր, Փարսադանյան,- տնտեսության ղեկավարը տեղից չշարժվեց, ուզում էր Հովնանը մոտենա, գուցեև խելքը չկտրի, իջնի խանդակը, ներքևից իրեն նայի:- էդ ի՞նչ է, ջիգիթությունդ բռնել է, ձի ես խաղացնում: Հա, հասկացանք, ուզում ես Քարաշենի սիրուն հարսերի սիրտն առնել,- դա նրա խոսելու տոնն է, ուզում է մի քիչ ձեռ առնել:- Տնաշենի տղա, հիսունդ անցել է, էլի մնացել ես հին խելքին,- հանդիմանանքով շարժեց գլուխը.- Գիտես, չէ՞, հողերի հարցով գրել են:

- Ո՞ր հողերի,- Փարսադանյանը դեմքին մի քիչ զարմանք դրեց:

- Ջահանդամի հողերի: Կնստես ու մի բացատրագիր կգրես:

- Ի՞նչ բացատրագիր:

- Որ կոլտնտեսության հողերն ինքնագլուխ կերպով շռայլել ես:

- Հմայակ Ավետովիչ, մենք օրենքից դուրս գո՞ծ ենք բռնել:

- Փարսադանյան, ինձ չխառնես,- Առուշանյանը թափ առավ, ցատկեց խանդակի վրայով, և դա նրա կողմից շա՜տ մեծ համարձակություն էր:- Լսո՞ւմ ես, ինձ չխառնես:

- Ես ընդամենը կարգադրություն կատարող եմ,- Հովնանը ուսերը բարձրացրեց, հավասարացրեց գլխին,- հետո էլ՝ որոշում կա, չէ՞:

- Չօգտագործվող հողերի մասին՝ այո, չօգ-տա-գործ-վող,- վանկարկեց տնտեսության ղեկավարը:- Դու կաղնուտի տափերն ի՞նչ իրավունքով ես տվել սղոցագործարանի դիրեկտորին:

- Գիտեմ, գրել են,- լեզուն սեղմեց ատամների տակ, որ չասի.- սղոցագործարանի դիրեկտորը քո ծանոթն է, ի՞նչ անեմ, որ արանքներով սև կատու է անցել:

- Մարդիկ տառաճանաչ են, ինչո՞ւ չպիտի գրեն:

- Հովսեփյան Մարտինը,- Հովնանը ձեռքը մեկնեց Թեղուտի կողմերը,- հրե՜ն, «Բելոռուսը» շուռ է տվել Թեղուտի վրա: Ինձ էլ մարդատեղ չդրեց, վրաս քշեց:

- Դու Հովսեփյան Մարտինի հետ գործ չունես,- սաստեց տնտեսության ղեկավարը:- Խնդրում եմ քո անձնական հաշիվները չխառնես ընդհանուր գործին: Մարտին Հովսեփյանի տղան գալիս է գյուղատնտեսի դիպլոմով, նշանածն էլ այգեգործ է, հերը՝ վաստակավոր մեխանիզատոր,- նա լո՞ւրջ է խոսում, թե՞ կատակում է.- Երիտասարդ կադրերին պիտի ընդառաջել՝ համեցեք, ձեր երիտասարդական ցավը տանեմ, բարով եք եկել, մենք մեր դարն ապրել ենք, հնացել ենք, արխիվի ենթակա ենք, մենք հին մեթոդներով որքան ղեկավարել ենք, հերիք է, եկեք արմատավորեցեք ձեր այդ նոր մեթոդները,- ու շեղակի նայեց Փարսադանյանին,- կարծում ես՝ Թեղուտի այգիների համար ճակատդ կպաչե՞ն:

- Ես կատարել եմ տնտեսության նախկին ղեկավար Անդրանիկ Սահակովիչի կարգադրությունը:

- Անդրանիկ Սահակովիչը չկա, մեռել է, վրան մի հսկայական քար են դրել, որ գերեզմանից պատանքով դուրս չգա պատասխանատվությունը վերցնի իր վրա, քեզ արդարացնի: Քանի՞ ընկուզենի ես տվել սղոցագործարանի դիրեկտորին:

- Չլինի՞ էդ մեկն էլ վրաս դնես,- Հովնան Փարսադանյանը ձգեց, ուսերի միջից հանեց գլուխը:- Ես քանի՞ գլուխ ունեմ, որ առանց տնտեսության ղեկավարի կարգադրության էդ գյոզալական ծառերը տապալեմ:

- Գլուխ, իհարկե, ունես,- Առուշանյանը մի քանի քայլ գցեց դեպի ավտոմեքենան, շուռ եկավ.- Քո ազգուտակի, թուփուծուփի, քո անձնական շահերի համար գլուխ ունես: Կնիկդ՝ գրադարանի վարիչ, եղբայրդ՝ թռչնապահական ֆերմայի վրա պահակ... Ասում եմ՝ հրետանավոր բաջանաղիդ էլ նշանակենք գյուղսովետի նախագահ, ի՞նչ ես ասում: Թող իր այդ թնդանոթներից մեկը բերի դնի մեր էս կալատեղերում, որ կողքովդ անցնող չլինի:

- Բաջանաղս էստեղ գործ չունի,- Հովնանը գրպանից հանեց թաշկինակը, սրբեց դեմքի քրտինքը,- ես առանց բաջանաղի էլ յոլա կգնամ: Իսկ ինչ մնում է իմ անձնական շահերին, իմ ազգուտակին, իմ թուփուծուփին, խնդրում եմ, Հմայակ Ավետովիչ, նման հարցերում ինձ չմեղադրես:

- էդ ո՞նց չմեղադրեմ,- տնտեսության ղեկավարն արձակեց պիջակի կոճակները, ասես կոխ պիտի բռնի,- դու էդ ի՞նչ տոնով ես խոսում ինձ հետ: Անցյալ տարի չորս հեկտարի վրա սոխ ես ցանել, մի հատ սոխ չենք պոկել: Ես դրա համար քեզ պիտի դատի տայի:

Հովնան Փարսադանյանը մտքում ասաց՝ ապրե՛ս, կեցցե՛ս, մալադե՛ց ընկեր Հմայակ Ավետիսովիչ, լռել ես, ձեն չես հանել, սխալներս հիմա ես աշկառ անում: Վերևներում կոշտուկներդ լավ տրորել են, դու էլ եկել, ուզում ես իմը տրորել, որ իմ ցավով քոնը մեղմես,- ու բարձրացրեց գլուխը, բարձրաձենեց.

- Ի՞նչ ես առաջարկում, խոսքդ ասա:

- Բացատրագիր, Փարսադանյան, բացատրագիր եմ ուզում:

- Այսինքն՝ իմ սխալները, քո թերությունները, գյուղատնտես աներձագիդ թերությունները շալակս առնեմ, դառնամ քավության նոխազ: Բա

մե՞ղք չեմ, ընկեր տնտեսության ղեկավար, էդ որ ուզում ես կուժն ու կուլան իմ գլխին կոտրել: Ի՞նչ ես կարծում, վերևներում չե՞ն ասի՝ ներողություն, Առուշանյան Համո Ավետիսովիչ, բա դու քո բարձրագույն կրթությամբ որտե՞ղ էիր, որ Հովնան Փարսադանյանն իր յոթնամյա կրթությամբ էդքան սխալներ է թույլ տվել: Չէ, ցավդ տանեմ, իմը ինձ հերիք է, քոնի համար դու ինքդ պատասխան կտաս:

- Փախչո՞ւմ ես,- Հմայակ Առուշանյանը կանգնեց նրա դիմաց,- վայ թե ականջիդ ձեն է հասել: Լսի՛ր, Փարսադանյան Հովնան, ինձ որ գործից ազատեն, դիպլոմս ձեռքիցս չեն խլելու, դու քո մասին մտածիր:

- Իմ էլ բահը չեն ձեռքիցս խլելու, կլինեմ շարքային, դա ինձ ձեռք է տալիս: Եթե նեղություն չէ, կարող ես էսօրվանից ինձ համարել շարքային:

- Ես իմ ֆունկցիաները գիտեմ,- Առուշանյանը կոծկեց պիջակը,- քո մնալ-չմնալու հարցը ես չեմ որոշում, դրա համար կա վարչություն:

- Վարչությունը դո՞ւ չես... Մենք ի՞նչ վարչություն ենք: Մուրճն էլ է քո ձեռքին, մեխն էլ, որ կողմի վրա ուզում, էն կողմի վրա խփում ես:

- Փարսադանյան, դու վերջին ժամանակներս շատ ես ակտիվացել,- Առուշանյանը հեգնեց,- ակտիվությունը ինքնին լավ բան է, հատկապես ես դեմ չեմ:

- Իսկ դու ե՞րբ ես հենվել ակտիվի վրա,- և խոսքը կոնկրետացրեց,- գնա քեզ համար բրիգադիր գտիր:

- Դու քո լավնուվատը չես հասկանում,- տնտեսության ղեկավարը դա ասաց ընկերական կարգով, համարյա բարեկամաբար, համարյա սիրաշահելով:

Հովնանը չգայթակղվեց, մտքում ասաց՝ երեխա չեմ, էդ ինչի՞ ես ոտքերիս տակին նախշուն գորգ փռում, քոռ չեմ, տեսնում եմ, ոտքս դնեմ էդ նախշուն գորգին, կընկնեմ Մսրա Մելիքի սարքած հորի մեջ,- և բարձրաձենեց.

- Որտեղի՞ց հասկանամ, երբ քո լավնուվատը իմ լավնուվատի հետ համաձայնության չեն գալիս: Քոնը Ղավալյանն է:

- Ղավալյանին ինչո՞ւ խառնեցիր,- Առուշանյանը կուչ ածեց աչքերը,- Ղավալյանն այստեղ ի՞նչ գործ ունի: Ղավալյանը արդյունաբերություն է, մենք՝ գյուղատնտեսություն:

- Պռիշնին տակի հողերը մերը չե՞ն:

- Երբ ուզենք՝ ետ կվերցնենք:

- Ո՞նց չէ, ետ կվերցնենք: Գուցե՞ էն իշխանական ամառանոցն էլ դարձնենք դաշտային օթևան:

Դովթալաբի խութից Մուղոզի ձորի ամպերի ուղղությամբ երեք արկ արձակեցին, եղած-չեղած ամպերը ցրիվ եկան, Չախմախասարից Սամվել Չալոյանը հեռադիտակով նայեց դեպի Դովթալաբի խութը, ծիծաղեց. «Ախմախ շան տղերք, էդ սնարյադներն ինչի՞ եք փչացնում,- և իր բաջանաղ Հովնանի մասին դատողություն արեց՝ թարս մարդ է, որ կողքին ընկավ՝ պրծավ, մորթես՝ խոսքից ետ չի կանգնի»:

...Եվ Հովնանը հիշեց, որ իր բաջանաղ Սամվել Չալոյանին վատություն է արել, թույլ չի տվել Արխերի տակի հողակտորն օգտագործել, կինը ասել է՝ երեսդ պարզ, մի գլուխ քո բարեկամներին վատություն ես անում, և հետո մտածեց, որ Մարտին Հովսեփյանի վերաբերյալ սխալվել է, որ Հազարապետը լավ մարդ է, որ, ընդհանրապես, ինքն իր լավնուվատը չի հասկանում: Հաստատակամ քայլեց ձիու կողմը, սանձն արձակեց թամբից, լկմանները խոթեց ձիու բերանն ու ասաց.

- Թե որ իմանամ ինձ պիտի գնդակահարեն՝ ես իմ խոսքից ետ կանգնողը չեմ: Գնա քեզ համար բրիգադիր գտիր:

- Փախչո՞ւմ ես, փախչում ես,- տնտեսության ղեկավարը քիչ էր մնում մատները խոթեր բերանը և լակոտի պես սուլեր:- Չիո՛վ, ձիո՛վ ես փախչում: Դու հիմա ձիավոր ես,- ծիծաղեց,- դու հիմա կարգին հեծելազոր ես, կավալերիա:

- Սխալվում ես, Հմայակ Ավետիսովիչ,- նա նստեց թամբին,- սխալվում ես: Ես իմ գյուղից, իմ սարուձորից, իմ տունուտեղից, ես ինձանից որտե՞ղ պիտի փախչեմ: Ավտոմեքենան քո տակին է, փախչելը քեզ է սազում, և դա քեզ համար նորություն չէ: Դպրոցի դիրեկտոր էիր, չհաշտվեցիր կոլեկտիվի հետ, ուսուցչի դիպլոմով դարձար պանրագործարանի դիրեկտոր, էդտեղից էլ հանեցին, մսամթերման կետում երկու տարի գլուխ պահեցիր, հետո տարան նստեցրին կենցաղսպասարկման դիրեկտորի տեղակալի աթոռին, մի երեք տարի պետիդ աթոռի տակը քանդեցիր, չէ, տեսար պինդ է նստած, ատամդ չի կտրում, փախար: Էստեղից էլ որ քշեն, Ղավալյան Մակբեթը թիկունքիդ պինդ կանգնած է, տեղակալ կվերցնի: Համո Առուշանյան, եղածդ էդ չի՞...

Հովնանը չսպասեց հարցի պատասխանին, չտեսավ տնտեսության ղեկավարի այլայլված դեմքը, գրեթե ասաց ամեն ինչ, և գիտեր, որ իր ետևից կամուրջները վառում է, բայց դրանից իրեն լավ զգաց: Չին թեթև է քայլում (թե՞ իրեն է այդպես թվում), երկնքում ամպի ոչ մի կտոր չկա, ցրվել գնացել են, ոչխարի հոտի նման՝ ինչ իմանաս, ո՞ր ձորում են մակաղել... Եվ նա մտածեց՝ ձին հիմա իմ ինչի՞ն է պետք, կտանեմ հանձնեմ անտառապահ Հազարապետին, կասեմ՝ ինձանից քսան տարով մեծ ես, լավ չի, որ ես ձիավոր եմ, դու՝ ոտավոր: Ես գլուխս խոնարհում եմ քո առջև, որովհետև կարողացել ես մեր անտառները փրկել Առուշանյաններից: Առուշանյանները գնացական են, մենք՝ մնացական: Իսկ ես սխալներ եմ թույլ տվել, թիկունքիս ժողովուրդ էր կանգնած՝ չտեսա: Չէ, կույր չէի, տեսնելը տեսնում էի, բայց մի տեսակ խլացել էի, մի տեսակ շատ էի ուժերիս վստահ, և իմ սխալները այդտեղից սկսվեցին...

Կարկուտներից փրկված այդ արևոտ օրը Հովնանը ձին քշեց Ցաքուտի խամուտներով, գնաց գետափով, քարքարոտ զառիվայրով բարձրացավ դեպի Պռիշնուն տակի տափերը, ձին գայթեց, դիմացը հսկա խանդակ էր. քարահանքերի դիրեկտոր Ղավալյանն իր տիրույթը անջրպետել էր դրսի աշխարհից, ինքն իր մեջ առանձնացել, ասես սուվերեն տերություն է, մնում

է մի քանի սահմանապահ կանգնեցնել վերևներում ու ներքևներում, մի քանի սահմանածող տնկել: Հովնանը ձիու գլուխը շուռ տվեց այն ուղղությամբ, ուր պիտի լիներ երկաթակուռ դարպաս,- և այդպես էլ կար,- ասպանդակից հանեց աջ ոտքը, հրեց դարպասը, միջնադարյան ասպետի պես ներս մտավ տիրաբար, տեսավ ջրավազանի կողքին կանգնած Ղավալյանին:

- էդ ո՞ւր, էդ ո՞ւր,- Ղավալյանը ձեռքերը թափահարեց և հագի տնական փայլփլուն խալաթի տակից երևաց նրա լավ դասավորված, կանոնավոր, իր սիրունությանը համապատասխանող մարմինը:- Ո՞ւր ես քշում,- գոռաց,- ճմռռած ո՞ւր ես գնում, ծաղիկներ են ցանած, մարդ ես, չէ՞:

- Պարզ է,- խաղաղասիրաբար ասաց Հովնանը,- մարդ չենք, բա ի՞նչ ենք: Էսօրվա դրությամբ, Առուշանյան Համոյի ողորմածությամբ դեռ բրիգադիր ենք, այսինքն՝ այս հողերի տերը:

- Ի՞նչ հողեր,- Մակբեթ Ղավալյանը, շան որդի դիրեկտորը, այնքան սիրուն տղամարդ է, ասես պատկերք է, ցուցասրահից հանել, բերել են ու ասել՝ էս քարահանքերի վրա դիրեկտորություն արա: Թյո՛ւ, բա տղամարդն էդքան սիրուն կլինի՞:- Ի՞նչ հողեր, ա՛յ մարդ, հո երազ չե՞ս տեսել:

- Կոլխոզի հողերը,- Հովնանը 30-ական թվականների մի երգ ձգեց.- Կոլխոզի հողե՞ր, տրակտորը վարում է:

- Լավ է անում, թող վարի,- Ղավալյանը երևի գաղափար չուներ այդ երգից,- իսկ դու որտե՞ղ ես խմել, հասցեդ մոռացել:

- Ջահել ժամանակներից հարբածությունս դեռ չի անցել,- և լրջացավ, դարձավ գործունյա.- Ներողություն, ես կարևոր գործով եմ եկել: Նախ և առաջ դուք ոչ մի բարոյական իրավունք չունեք խանդակ փորել, կտրել ճանապարհը: Այս դարպասը նույնպես ավելորդ է:

- Բա դու ո՞վ ես,- բարկացավ Ղավալյանը,- դու այստեղ ի՞նչ գործ ունես:

- Որ եկել եմ, նշանակում է՝ ունեմ: Ես այսօրվա դրությամբ Քարաշենի կոլտնտեսության բրիգադիրն եմ: Հարկ եղած դեպքում կարող եք ստուգել: Դուք ի՞նչ իրավունքով եք յուրացրել կոլխոզի հողերը:

- Յուրացրե՞լ,- Ղավալյանը զարմացավ,- ինչպե՞ս թե յուրացրել:

- Այսինքն՝ գրավել, նվաճել, զավթել:

- Կարծեմ՝ Քարաշենի կոլտնտեսությունը նախագահ ունի:

- Ուզում եք ասել՝ Համո Ավետիսովիչը թույլ է տվել,- Հովնանը դիտավորյալ ձիուց չէր իջնում, վախենում է թափից ընկնի:- Դե, ուրեմն, ի գիտություն ձեզ՝ մեր կոլտնտեսության նախագահ Առուշանյանը կոլտնտեսության հողերը անօրեն կերպով շռայլելու համար շրջկոմի կողմից խիստ նկատողություն է ստացել: Գուցե՞ ձեզ մոտ տեղակալ ձևակերպեք:

- Լռի՛ր,- գոչեց Ղավալյանը:- Դու այդ ի՞նչ ձևով ես խոսում ինձ հետ:

- Քննադատությունն ընդունում եմ և խնդրում եմ դուք էլ ինձ հետ դուքով խոսեք,- թեքվեց ձիու թամբից, ասաց.- Դուք այս իշխանական դդյակը ձեր փողերով չեք կառուցել, ճի՞շտ է: Ճիշտ է: Մենք այս թթենիները, խնձորենիները, տանձենիները հատուկ ձեզ համար չենք տնկել: Ներողություն, ընկեր դիրեկտոր, դուք այսքան հողերն ի՞նչ պիտի անեք, ախր կալվածա-

տեր չեք, երևի ձեզ մոտ էլ են լինում քաղխմբակների պարապմունքներ, կարող է՝ հենց դուք եք անցկացնում այդ պարապմունքները:

- Մալչի՛,- սաստեց Ղավալյանը,- բերանդ փակի՛ր,- գոռաց,- ես քեզ կալ-վածատեր ցույց կտամ: Սրիկա՛:

- էդ մեկը ձեր դիրքին, պաշտոնին, ձեր նստել-վերկենալուն չի սազում, ընկեր Ղավալյան,- Հովնանը միայն նոր տեսավ պատշգամբին կռթնած Ղավալյանի սիրուն կնոջը և ազդվեց:- է՜, բա ո՞նց կլինի, մեր հողերին պինդ նստել եք, մեզ հայհոյում եք: Դիցուք ես կուլտուրա չունեմ, շենացի մարդ եմ... Որ ինձ կոլխոզից հեռացնեն, դուք ձեր քարահանքերում ինձ կընդունե՞ք: Չեք ընդունի, Առուշանյանը չի թողնի:

- Վերջացրի՞ր,- Ղավալյանը նայեց կնոջը,- Մարիա,- ասաց, դու կարող ես գնալ քաղաք, ես մի քիչ ուշ կգամ,- Մարիան շարժեց գլուխը.- «Դու կգաս հենց ինձ հետ»: Ղավալյանը իբր թե կարևորություն չտվեց կնոջ խոսքին, դարձավ Հովնանին.- վերջացրի՞ր:

- Իմ վերջացնելը ձեզանից է կախված: Բրիգադի գործերը հանձնում եմ ուրիշին: էդ ուրիշը չի ընդունում, ասում է՝ Պռիշնուն տակի հողերը նույնպես պիտի հանձնես: Ասում եմ՝ այ մարդ, համարիր հանձնված, ձեռ է առնում՝ էդ ո՞նց համարեմ հանձնված, երբ վրան ցանկապատ ու դարպաս է դրված:

- Լավ, գնա, ես Հմայակ Ավետիսովիչի հետ կխոսեմ:

- Խնդրում եմ ավել-պակասը ներեք,- Հովնանը շուռ տվեց ձիու գլուխը, բայց չշարժվեց,- էս դարպասը, էն խանդակը, վերևների ցանկապատը նույնպես չմոռանաք՝ կվերացնեք: Հետո էլ՝ լավ կլինի, որ Համո Ավետիսովիչի հետ այդքան մեծ հույսեր չկապեք: Հողերը իրենը չեն, հանրայի՛ն են: Տնաշե՜ն, քարահանքերում նստել եք, ձեռքներդ տարածել, ինչ որ տեսնում եք՝ զավթում եք: է, լավ չի, ընդհանուրն ու սեփականը խառնել եք իրար, հենվել անհատականին:

Հովնանը Ցաքուտից նայեց՝ Ղավալյանի սիրուն կնիկը պատշգամբից վիճում է ամուսնու հետ, իսկ դիրեկտոր ամուսինը կանգնել ներքևում, մատաղացու ոչխարի պես կախել է գլուխը, չի կարողանում իր սիրուն տղամարդությունը ցույց տա: Հսկա քարահանքեր է ղեկավարում, բայց կնկա հարցում խեղճ է, կինն է իրեն ղեկավարում: Ասում են՝ աները մեծ պաշտոնի է, համարյա կես մինիստր է: Բա պատի՞վ է բերում կես մինիստրի փեսային, որ Քարաշենի կոլտնտեսության կիսագրագետ բրիգադավարն անպատվի իրեն:

- Ես թքել եմ քո սիրուն տղամարդության վրա,- Հովնանը մտքում ծիծաղեց,- տգեղ եղիր, գեշուգրող եղիր, բայց կնոջդ առջև մի՛ խեղճացիր, ատամներդ ցույց տուր: Իսկ դու նստեցրել ես գլխիդ, իրավունքներդ տվել իրեն, թույլ ես տալիս, որ ինքնուրույնությունդ շահագործի: Թե՞ սկի ամբողջ կյանքում ինքնուրույն չես եղել. էդ ամառանոց-դղյակը քո կնոջ թելադրանքով չե՞ս կառուցել: Հիմա էլ կնոջդ թելադրանքով կգանգես Քարաշեն ու կասես. «Առուշանյան, դու այդ երբվանի՞ց ես լիազորություններդ դրել բրիգադավարիդ ձեռքին: Առուշանյանը Համո Ավետիսովիչը չի,

ես եմ, պատասխանում եմ՝ քեզանից եմ սովորել, ես միշտ քեզ եմ ընդօրինակում: Տնաքանդ, բա դու ինչի՞ քո սանձը դրել ես կնոջդ ձեռքին, և ինքն է ղեկավարում քեզ: Որ ուրիշների սիրուն կնանիքը սեփական ամառանոցներում չեն հանգստանում՝ մեռնո՞ւմ են: Կնկանդ շալվար ես հագցրել, շլյապադ էլ դիր գլխին, տեղներդ փոխեցեք»: Բայց Առուշանյանն էդպիսի բան չի ասի, ուղղակի կկանչի Հովնան Փարսադանյանին և...

Եվ այդպես էլ կար, Հմայակ Առուշանյանն իջեցրեց լսափողը, քանի որ ներսում բավականին բարկություն էր կուտակել, պայթեց միանգամից.

- Նախալ տի,- գոռաց:- Շանտաժյոր,- բռունցքն իջեցրեց գրասեղանին,- ներողություն, Փարսադանյան, այս սեղանի ետևում հիմա ես եմ նստած, հիմա ե՛ս եմ...

- Դրության տերը,- հուշեց Հովնանը:

- Խնդրում եմ ինձ չընդհատես, ես իմ ֆունկցիաները լավ գիտեմ:

- Արդեն զանգե՞լ է:

- Քեզ ինչ՝ զանգել է, թե չի զանգել:

- Դե լավ, խնդրում եմ չտաքանաս, առանց այն էլ եղանակները տաք են, դրսի ու ներսի տաքությունից, ասում են, ռեակցիա է առաջանում: Ես ուզում եմ հարցի մեջ կոնկրետություն մտցնել՝ մինչև մեր հողերը ետ չվերցնենք, ձայնս չեմ կտրի:

- Հողերը քո՞նն են:

- Դե որ իմը լինեին, գուցե թե Ղավալյանի էն սիրուն կնկա խաթրու ձենս կտրեի: Հողերը հանրային են, կոլտնտեսության սեփականությունը, օրենքով հաստատված: Մակբեթ Ղավալյանի թիկունքը կես մինիստր աներն է, իմ թիկունքին լրիվ մինիստրներ են կանգնած: Քոնը քո իրավունքներն են, իմը՝ օրենքը: Իմ օրենքը քո իրավունքներից ուժեղ է: Դու գնացական ես, ես՝ մնացական:

Դեպքից մի շաբաթ անց, երբ Հովնանը գործերն արդեն հանձնել էր Մարտին Հովսեփյանին, տնտեսության ղեկավար Հմայակ Առուշանյանը Թեղուտի ճանապարհին կանգնեցրեց ավտոմեքենան, ձեռքով բարևեց նախկին բրիգադավարին, տատամսելով հարցրեց.

- Փարսադանյան, դու ինչո՞ւ շտապեցիր... Ենթադրենք մի քանի ցուրտ խոսք եմ ասել, ենթադրենք մի քիչ տաքացել եմ, ենթադրենք ինչ-որ տեղ սխալ եմ թույլ տվել... Ախր ղեկավար եմ, չէ՞, ես էլ մարդ եմ, կարող եմ սխալվել:

Հովնանն ասաց.

- Ընկեր Առուշանյան, պառաված ձիուն քուրու-քուրու չեն անում, թթի ծառի վրա էլ ճողոպուրի չեն պատվաստում: Ես քեզանից ինձ փրկեցի, որ արմատահան չլինեմ, մնամ իմ հող ու ջրին, իմ քար ու քարափին, իմ տան ու դռան: Հիմա հերթը քոնն է, տեսնեմ դու ինչպես պիտի ինձանից փրկվես,- ու ավելացրեց,- բայց քեզ համար դժվար կլինի, ես մտնում եմ քո դրության մեջ. դու այստեղ արմատներ չունես:

1984 թ.

ՀԱԶԱՐԱՊԵՏԸ

Ապրիլին Քարաշենում մի դեպք պատահեց: Կարելի էր առանձին կարևորություն չտալ դրան, ընկերական դատարանի միջոցով գործը հարթել առանց որևէ գլխացավանքի, բայց ընկերական դատարանի նախագահ Սերոբ Ասլանյանը քաղաք էր գնացել մեղվաբույծների հնգօրյա սեմինարին մասնակցելու կամ, ինչպես ինքն է կատակով ասում՝ լուսավորվելու: Իհարկե, Սերոբ Ասլանյանը մեղվաբույծ չէ, Քարաշենի կոլտնտեսությունը մեղվաբուծությամբ չի զբաղվում, բայց կարգ է, հատուկ գրություն է ստացել, մեկը պիտի լինի, որ մասնակցի սեմինարին: Քարաշենում դա էլ նորություն չի՝ գրքասերների ընկերության կոնֆերանս է, ագիտատորների հավաք է, հակահիդեհային ընկերության ժողով, գյուղատնտեսության առաջավորների խորհրդակցություն, և եթե պահանջեն՝ լավագույն զուռնաչիների օլիմպիադա է, ուղարկեցեք ձեր ներկայացուցիչը, էլի Սերոբ Ասլանյանին պիտի ուղարկեն: Գյուղում մեկը պիտի լինի, որ մասնակցի այդ զանազան ժողովներին, կոնֆերանսներին, խորհրդակցություններին, սեմինարներին,- Սերոբ Ասլանյանը ամենահարմար թեկնածուն է, չի բողոքում, չի ասում՝ ա՛յ մարդիկ, ես մեղվաբուծության հետ ի՞նչ կապ ունեմ:

Իսկ այդ օրը շատ սովորական օր էր, դպրոցի բակում երեխաների երգ ու ծիծաղ կար, կալատեղերում Ցուլունց Սմբատ դային կոլտնտեսության առաջին տրակտորիստ, անհատական թոշակառու Բագրատ Ասլամազյանին ուզում էր ապացուցել, որ տրակտորից առաջ տանկն է ստեղծվել, այնպես որ՝ տանկն է տրակտորի նախահայրը: Իսկ Բագրատը չի համաձայնում, ասում է՝ տրակտորն ավելի հին է, անգլիացիներն են առաջին անգամ տրակտորի վրա մի աշտարակ դրել, աշտարակին մի թնդանոթ տնկել, անունը դրել տանկ:

Ահա հենց այդ ժամանակ անտառապահ Հազարապետը եկավ, ո՞նց եկավ... Եվ ինչպե՞ս էր հայհոյում, ինչպե՞ս էր հայհոյում, ինչեր ասես, որ չէր ասում: Չէ, Քելունց Հաբուդի նման կոպիտ ու անտաշ չէր հայհոյում, գրագետ, կուլտուրական էր հայհոյում, գեղեցիկ, պատկերավոր, և եթե գոռգոռալը չլիներ, բռունցքների թափահարելը չլիներ, անգլերենի ուսուցչուհի Նովելա Աշոտովնային կթվար՝ ոչ թե հայհոյում է, այլ Պեպոյի հանրահայտ մենախոսությունն է արտասանում, մերկացնում Արութին Զիմզիմովին. «Արա՜,- բղավում է Հազարապետը,- բա դու մա՞րդ ես, մարդկության ցուցակում քո անունն է՞լ են գրել... Ա՛յ, ես թուքել եմ քո բարձր ու սիրուն ճակատին»: Ֆիզկուլտուրայի ուսուցիչ ընկեր Շիլլեր Ղազարյանը, որ գործով եկել էր գրասենյակի բակում կանգնել, ուղղում է՝ ընկեր Հազարապետ, ոչ թե՝ թուքել եմ, այլ՝ թքել եմ: Հայերենի որոշ փակ վանկերում ձայնավորները հնչյունափոխության են ենթարկվում. օրինակ՝ ջուր-ջրել, գիրգրել, ծուխ-ծխել, ծուռ-ծռել և այլն:

Հերսոտված Հազարապետը նրա դիտողությանը ուշադրություն չի դարձնում.

- Ժողովո՞ւրդ, ժողովո՞ւրդ,- ժողովուրդն էլ կոլտնտեսության գրասենյակի բակում կանգնած ընկեր Ղազարյանն է, մեկ էլ՝ խուլ Սարիբեկը, ականջի տակ հրացան չէ, թնդանոթ պայթի, ճանճի տզզոցի տեղ չէր դնի.- Ժողովո՞ւրդ,- Հազարապետն այնպիսի դիրք է ընդունել, կարծես ճառ պիտի ասի, սպասում է ծափահարությունները դադարելուն.- Հարգելի ընկերներ, ես դիմում եմ ձեզ ու ձեր խղճին՝ ո՞վ է Շմավոն Մեսրոպյանը…

Շմավոն Մեսրոպյանը Քարաշենի կոլտնտեսության գլխավոր հաշվապահն է, ծնված օրից հաշվապահություն է անում: Ուժեղ հաշվապահ է, լավ գլուխ ունի, իհարկե, համրիչը կողքին է, առանց համրիչի հաշվապահ չի, տավարած է, անասնաբույծ է, զոոտեխնիկ է, կարող է՝ գեներալ է, բայց հաշվիչը չկա՝ հաշվապահ չի: Եթե փողոցում կանգնեցնեն ու հարցնեն՝ ութից հանած չորսն ի՞նչ է անում, կասի՝ չոթկս բեր՝ ասեմ ինչ է անում: Շմավոնն ուժեղ է գրասեղանի ետևում, երբ կողքին հեռախոս կա, համրիչ կա, թանաքաման ու գրիչ կա: Դեմքից ոչինչ, հանգիստ, անվնաս մարդ է, նույնիսկ՝ կուլտուրական, բայց մի շատ զզվելի սովորություն ունի՝ կմտնի անտառ, որտեղ մի շիմալ ծառ տեսնի, իսկույն կացինը կքաշի վրան: Սրա կտրելն էլ մի ուրիշ կտրել է՝ ուղղակի հարձակվում է ծառի վրա, ասես դիմացինը ոչ թե ծառ է, այլ իր ոխերիմ թշնամին է, իր մոր սիրեկանն է, բերանը պատռած իր զոքանչն է… Եվ ինչպիսի՜ ցնծություն է ապրում, երբ ծառը շառաչյունով տապալվում է գետնին: Հաղթողի իրավունքով ոտքը դնում է բնին, թևքով մաքրում ճակատի քրտինքն ու ասում՝ սա էլ էսպես գնաց:- Հիմա այդ ծառը նրա ոխերիմ թշնամին է գերանացու է, լոփա է, հենասյուն է, վառելափայտ է: Մեծ բան չի, մի հաճարկի է, էլի, կտրել եմ, հո անտառը մի ծառով չի վերջանում: Հաշվենք, սկի այս ծառը չի եղել:

Հազարապետն էլ իր ծնված օրից կոլտնտեսության անփոխարինելի անտառապահն է, մեկփողանի հրացանը մեջքին, խզակոթը կպած ուսին, փողը դեպի ներքև, բթամատը կաշվե փոկի տակ… Գյուղում ոչ ոք չի հիշում, թե այդ զենք կոչվածը երբ է կրակել և, ընդհանրապես, հնարավո՞ր է դրա ժանգոտած փողորակը փամփուշտ խցկել: Բայց դա չի խանգարում իր ծնված օրից անտառապահ Հազարապետին, որ անտառագողին զգաստ կանգնեցնի կտրած ծառի կողքին ու ասի՝ չշարժվե՛ս, փորդ ծխով կլցնեմ: Իսկ գլխավոր հաշվապահ Շմավոն Մեսրոպյանը Սերգունց վախկոտ Կարոն չի, որ ձեռքերը բարձրացնի ու ասի՝ Հազարապետ դայի, թող ուշքս դեն անեմ, հետո կրակիր: Շմավոն Մեսրոպյանը հին աղվես է, պոչը ծաղիկ աղվես, նստել կտրած ծառաբնին ու ձեռ է առել Հազարապետին՝ դե հիմա փորս ծխով լցրու, տեսնեմ ոնց ես լցնում- Այսինքն, այսպես՝ Հազարապետ, ախր, հրացանդ հրացան չէ, մահակ է, փետի կտոր է, երկաթ է, գուցեև գնդացիր է, մաուզեր, հրանոթ է, բայց հրացան չի, դրանով դու ինձ չես վախեցնի:

- Շմավոն Մեսրոպյանը վնասարար է,- իր հարցին պատասխանում է Հազարապետը,- էդ ժուլիկը, էդ մախիրովնի շուլլերը որտեղ ոտը դնում է, կանաչ խոտ չի բռնում:

Խուլ Սարիբեկը հիմար-հիմար ծիծաղում է, բայց նրա ծիծաղն ուրիշ բանի վրա է:

- Հազարապետ, մի՞տդ է, որ հերու քեզ տելեվիզր գցեցին: Ոնց որ Չարլի Չապլինը լինեիր, էնքա՜ն ծիծաղեցի, էնքան ծիծաղից թուլացա՜...

Դա անտառապահի օրվա նախօրյակին էր, հեռուստատեսությունից մարդիկ էին եկել, Հազարապետի հետ զրուցեցին, հարցեր տվեցին, Հազարապետն ասաց՝ անտառը մեր օդն ու ջուրն է, մեր բնության կանաչ ժպիտն ու ծիծաղն է, առանց անտառի՝ ոնց որ սոխակն առանց երգի, կերակուրն առանց համ ու հոտի... Հազարապետը խոսում էր, օպերատորը նկարում էր ու գլխով անում՝ ճիշտ է, հայրիկ, ճիշտ է, շարունակիր:

- Գլուխդ քարով տվիր, որ ծիծաղեցիր,- ասաց Հազարապետն ու քայլ գցեց նրա կողմը.- Քա՞ռ եմ, քաչա՞լ եմ, Շմավոն Մեսրոպյանի նման վնասարա՞ր եմ, անհամի մեկը, աշխարհը քեզ վրա է ծիծաղում, բա դու ո՞ւմ վրա ես քրքջում:

Անտառապահ Հազարապետն ավելի շատ բարկացած է նրա համար, որ Մեսրոպյանը կտրել է Սառնաղբյուրի կողքի կաղնի ծառը, այն ծառը, որի թանձր շվաքում ակումբավար, շրջանային թերթի արտահաստիքային թղթակից Միհրան Մինասյանը նստում, ոտանավորներ է գրում սիլոսի, ֆուրաժային կովի, կոմբի կորմի, բտման դրած խոզերի, ծխախոտի պլանտացիաների ու ծխախոտագործ աղջկա մասին: Միհրան Մինասյանը գրում է նաև սիրային ոտանավորներ, և դրա իրավունքն ունի, թունդ սիրահարվել է անգլերենի ուսուցչուհի Նովելա Աշոտովնային: Թերթում նրա թղթակցությունները տպում են, ոտանավորները՝ մերժում: Ասում են՝ պիտի մշակել, վերամշակել, հղկել, մաքրել: Միհրան Մինասյանը տարակուսանքով ուսերը վեր է քաշում. «Ոտանավորը ծխախոտի պլանտացիա՞ է,- ասում է,- թե՞ խաղողայգի, որ մշակեմ՝ ռեկորդային բերք ստանամ: Հանգն ու վանկը տեղն են, էլ ի՞նչ եք ուզում»:

- Հը՛, կերա՞ր, Սարիբեկ,- ընկեր Ղազարյանը հազում է բռան մեջ, աչքով անում Սարիբեկին ու նայում Հազարապետի հրացանին.- Հազարապետ, քանի՞ ռուբլի տամ՝ հրացանդ ինձ տաս:

- Դու հրացանիս հետ գործ չունես,- Հազարապետը գրպանից մի թուղթ է հանում,- ակտ եմ կազմել, խնդրում եմ ստորագրես:

- Ի՞նչ ակտ:

- Ակտ, էլի, մենք՝ ներքոստորագրյալներս, կազմում ենք սույնը այն մասին, որ կոլխոզի գլխավոր հաշվապահ Շմավոն Մեսրոպյանը կտրել է Սառնաղբյուրի կողքի կաղնին:

Ընկեր Ղազարյանը հրաժարվում է: Փաստորեն սխալ կլինի, ասում է, որ ես ստորագրեմ, որովհետև իրավաբանորեն չեմ կարող ապացուցել՝ ինքն է կտրե՞լ, թե՞ մի ուրիշը, և սկզբունքորեն չեմ կարող խառնվել ձեր անձնական գործերին:

- Դու սեռի խոտ ես, տատանվողական, հարմարվողական,- Հազարապետը մի ուրիշ բառ էլ է որոնում, չի գտնում, չգտածն ուրիշ բառով է փո-

խում.- Դու անսկզբունքային ես: Շմավոնի մերը ես պիտի լացացնեմ, էնպես լացացնեմ, որ հոր հարսանիքը միտը գցի:

Կոլտնտեսության գրասենյակի կիսաբաց դռան արանքից երևում է Շմավոն Մեսրոպյանի կիսադեմը: Դուռը վերևից ներքև նրան բաժանել է երկու հավասար մասի: Առանձին մի հանդիսավորություն կա նրա այդ պահվածքի մեջ, ասես թատրոն է խաղում, սպասում է մուտքին, և մուտքի ռեպլիկը Հազարապետը ուշացնում է:

- Ես Շմավոնի հերն էնպես անիծեմ,- վերջապես հնչում է ռեպլիկը, և Շմավոն Մեսրոպյանը մտնում է իր դերի մեջ:

- Մեծ մարդ ես, չե՞ս ամաչում, որ հայհոյում ես:

- Շնավո՞ն,- Հազարապետը ներքևից վերև է նայում, դիտավորյալ աղավաղում նրա անուն-հայրանունը.- Շնավոն Իխշանովիչ, հերդ՝ Իխշան, զոքանչդ՝ Ախշալույս, կնիկդ՝ Ախշեն, բա ձեզ հասնո՞ղ կլինի, ընկեր Շնավոն Իխշանովիչ, գյուղի իխշանությունը վերցրել եք ձեր ձեռքը, մեզ էլ մարդատեղ չեք դնում:

- Ասում եմ՝ մի հայհոյիր,- Շմավոն Իշխանովիչը մոտենում է բազրիքին,- չես ասում՝ մեծ կա, փոքր կա, կնիկարմատ կա: Սա քեզ համար քո ծմակները չեն:

- Չես ասում մեծ կա, փոքր կա, կնիկարմատ կա,- ծաղրում է Հազարապետը:- էդ ո՞նց կլինի, Իխշանի տղա Շնավոն, չես ասում ծմակապահ կա, գյուղխորհուրդ կա. կաղնի չես ասում, հաճարկի չես ասում, բոխի չես ասում, հացի չես ասում՝ կտրում ես: Բա մարդ էդքան աչքածա՞կ կլինի: Տեսե՞ք, ղեկավար եմ, գլխավոր հաշվապահ եմ: Դու քանի՞ գլուխ ունես, որ ծմակը փչացնում ես:

- Չէ, գլուխը քոնն է, դեմագոգի մեկը:

- էդ դեմագոգն էլ ե՞ս եմ, ծմակի աղվես:

- Ասում եմ՝ մի հայհոյիր:

- Ընկեր Շնավոն Իխշանովիչ, ես օրենքով եմ հայհոյում: էս ակտը ստորագրո՞ւմ ես, թե՞ փորդ ծխով լցնեմ:

- Բերանդ ցրիվ չտաս,- Շմավոն Իշխանովիչը իջնում է աստիճաններով, բայց չի մոտենում:- Անգրագետ տեղովդ փիլիսոփա ես դառել գլխներիս:

Հազարապետը անգրագե՞տ... Այն Հազարապետը, որ Ռաֆֆու «Սամվելն» ու «Խենթը» անգիր գիտե, գրականության ուսուցիչ Սարմեն Գարաքյանին նեղն է լծում, Միհրան Մինասյանի թղթակցությունները կարդում է, չի հավանում, ասում է՝ Միհրան, գրածներիդ մեջ պողվատ չկա, ոնց որ գյուղխորհրդի ժողովի արձանագրություն լինի: Բա որտե՞ղ մնաց մեր սոցիալիստական քննադատությունն ու ինքնաքննադատությունը:

- Շնավոն Իխշանովիչ, էդ ե՞ս եմ անգրագետ:

- Բա անգրագետ չես, ի՞նչ ես:

- Ես անգրագետ եմ, դու գրագետ ես, հա՞...

- Սորբոնի համալսարանն ես վերջացրե՞լ:

- Չէ, Սորբոնի համալսարանը հերդ՝ Իխշանանց Իխշանն է վերջացրել: Որ չոթկը ձեռքիցդ վերցնեն, քեզանից ի՞նչ դուրս կգա:

- Դե լավ, Հազարապետ, կարիք չկա,- Շիլլեր Ղազարյանը արանքն է ընկնում,- անհարմար է:

- Անհարմարն ի՞նձ համար է, թե իր համար: Չէ, Շնավոն Իխշանովիչ, մեր երկրում էդպիսի օրենք չկա:

- Օրենքի ստեղծողն էլ դու կլինես, ավարայի մեկը:

- Արա՜, ա՛յ հարիֆ, ավարան ո՞վ է...

Այստեղ կարելի է մի ուրախ կամ տխուր պատմություն հորինել՝ իբր թե Հազարապետի հարյուր տարվա ժանգ բռնած, չախմախը խարխլված, փողը ծռված հրացանը պայթել է... Իբր թե Շմավոն Իշխանովիչը բռնել է փորը, իբր թե անտառապահ Հազարապետը նայել է Շմավոն Իշխանովիչի դեղնած սֆաթին, հրացանը պարզել առաջ ու ասել՝ արա, ընկեր Շնավոն Իխշանովիչ, էդ ինչի՞ ես դերասանություն անում, բա էս զահուրմարի մեջ տրա՞ք կա...

Բայց տրաքոց իսկապես եղել է, դա կարող է հաստատել ֆիզկուլտուրայի ուսուցիչ Շիլլեր Ղազարյանը: Միայն թե այդ տրաքոցը հրացանի տրաքոց չէր, հաշվապահի օգնական Թամարի լեթված ու անդաստիարակ լակոտի խաղալիք ատրճանակի տրաքոցն էր: Կարող է ընկեր Ղազարյանը մի քիչ խտացնում է գույները, բայց դա կարևոր չէ, տրաքոց եղել է, և այդ տրաքոցը ողջ գյուղն է լսել:

Իսկ ամենամեծ տրաքոցը հետո եղավ:

Կոլտնտեսության նախագահ Համո Առուշանյանը մի օր Ծակուռի քերծից նայեց Տափուտի անտառին, աչքաչափով հաշվեց՝ հիսուն-վաթսուն հեկտար,- ասաց,- ի՜նչ հողեր են կորչում, ի՜նչ հողեր են փչանում,- ու գտավ, որ անտառն ավելորդ է, օգուտը՝ քիչ, վնասը՝ շատ: Գյուղում նրան այնքան էլ լավ չհասկացան՝ կոլտնտեսությանը վարելահո՞ղ է հարկավոր, թե՞ վառելափայտ:

Այդ զրնգուն ապրիլին, կարմիր-կանաչ ապրիլին Տափուտի անտառը հառաչեց: Մի կողմից՝ կացնավորները, մի կողմից՝ բուլդոզերն ու տրակտորը (տեխնիկայի մերը չմեռնի, մի տես ինչ է անում, է՜, հազար տարվա անտառը երկու օրում շուռ է տալիս ու դարձնում վա-ռե-լա-հող, խոպանների յուրացում) սկսեցին իրենց անտառաջարդը: Պա՛հ, մեծ բան չի, անտառ է, էլի, մի անտառով Ղարաբաղի տունը չի քանդվի: Բնական գազը, ածուխը, սալյարկան, էլեկտրականությունը որ կան, անտառն ո՞ւմ է հարկավոր: Թե որ ճիշտն եք ուզում իմանալ, անտառը հնի մնացուկ է, արջի, աղվեսի, գայլի բուն: Գյուղթղթակից Միհրան Մինասյանի ոգևորությունը հասավ գագաթնակետին, նստեց ու մի շռնդալից թղթակցություն գրեց թերթին՝ Քարաշենի կոլտնտեսությունը նոր հողեր է յուրացնում և այդ գործում աչքի է ընկնում հատկապես Հովնան Փարսադանյանի բրիգադը, որ մի օրում հատել է այսքան հեկտար անտառ:

Հազարապետը եկավ կանգնեց Ծակուռի քերծի գլխին, ոնց Ձենով Օհանը, էն որ հորից դուրս բերեց Սասնա Դավթին,- և հայհոյում էր, ո՞նց էր հայհոյում: Չէ, օրենքով էր հայհոյում և առանձնապես լավ էր նախշում բրիգադավար Հովնան Փարսադանյանի կնոջը, բայց այդ օրենքը չմտավ Հովնանի գլուխը, սա ներքնից վերև նայեց, տեսավ ձորագլխին կանգնած Հազարապետին, սկսեց ձեռ առնել. «Հազարապետ, քսանհազարապետ, հարյուր հազարապետ, միլիոնապետ, ակտ կազմիր, Միհրան Մինասյանին ասա՝ գազեթին նյութ գրի... Վա՜յ, թաղեմ քեզ, Հազարապետ, թատրոն ես, թատրոն»:

Հազարապետը ձորագլխից նորից աղաղակեց, լսող չեղավ, այդպես աղաղակելով, հայհոյելով, հրացանը մեջքին գնաց քաղաք, մի կայծակ հեռագիր ուղարկեց անտառտնտեսության մինիստրին, հետո հեռախոսով կապվեց կոլտնտեսության նախագահի հետ ու շրջգործկոմի նախագահի պաշտոնով սպառնաց՝ Առուշանյան, ա՛յ Առուշանյան, էդ որ անտառը ջարդում ես, տակից ինչպե՞ս ես դուրս գալու: Առուշանյան, շան որդի, դու սեփական ուղեղ չունե՞ս, որ հաշվապահ Շմավոն Մեսրոպյանի զուռնայի տակ ես պարում: Չխոսես, չխոսե՛ս, դու արժանի ես գնդակահարության...- Առուշանյանը չհասկացավ, որ դա անտառապահ Հազարապետն է, դասը վատ սերտած աշակերտի նման կմկմաց, լսափողը դրեց տեղը ու ասաց՝ պահո՜, էս գործի համար վայ թե շալվարս հանեն:

Վերևներից հատուկ հանձնաժողով եկավ, խմբագրությունից՝ ֆելիետոնիստ, ժողվերահսկողության կոմիտեից՝ հրահանգիչ, բնության պաշտպանության կոմիտեն իր ներկայացուցիչն ուղարկեց: Կոլտնտեսության նախագահ Համո Առուշանյանը քրտնեց, քրտնեց, մի օրում երեք ներքնաշապիկ փոխեց ու մտքում ասաց՝ վա՜յ, Հազարապետ, եթե այս անգամ կարողացա չոր դուրս պրծնել, ես քո դեմագոգ հերն էնպե՜ս անիծեմ, էնպե՜ս անիծեմ...- Եվ որպեսզի աթոռը չզիջի մի ուրիշ Առուշանյանի, իր հասցեին արված քննադատությունը լիովին ընդունեց ու փրկվեց խիստ նկատողությամբ:

Հուլիսին էր, կոլտնտեսության գլխավոր հաշվապահ Շմավոն Իշխանովիչը չխկչխկացրեց համրիչը ու գտավ՝ կոլտնտեսությունը աննպատակ աշխօրներ է շռայլում: Շեշտը դրեց անտառապահ Հազարապետի վրա: Հիմա մարդկանց գիտակցությունը շատ է բարձրացել, ո՞ւմ է հարկավոր անտառապահը:- Համո Առուշանյանն էլ, իր հերթին, մտածեց ու համաձայնեց՝ ճիշտ է, ի՞նչ անտառապահ, կոլտնտեսությունը հո սոբես չի, որ ամեն պարապ-սարապ դնի գլխին՝ պահի: Ու կանչեց անտառապահ Հազարապետին: Իր մորից անտառապահ ծնված Հազարապետը հոգու խորքում վիրավորվեց, բայց չբողոքեց, գլխով արեց ու ասաց.

- Հա, բա ո՞նց, երեխա չեմ, հասկացողություն ունեմ, մարդկանց գիտակցությունը, հատկապես Շմավոն Իշխանովիչի գիտակցությունը շա՜տ է բարձրացել, ոսկին թափես առջևում, չի մոտենա, կասի՝ չի կարելի, սա ընդհանուրի արդար քրտինքն է: Բայց մի ուրիշ հարց ունեմ, ընկեր տնտեսության ղեկավար:

- Խնդրեմ, լսում եմ:

- Որ ձրի անտառապահություն անեմ, կարո՞ղ եք ինձ մեղադրել:

- Այ մարդ, ձրի անտառապահս ո՞րն է,- այն կողմից ծիծաղեց Շմավոն Իշխանովիչը,- մենք մարդկանց բարձր գիտակցությունից ենք խոսում, իսկ դու՝ ձրի անտառապահություն անեմ:

- Հասարակական կարգով, ընկեր Շնավոն Իխշանովիչ, հասարակական կարգով,- ասաց Հազարապետը:- Ինչ իմանաս, մեկ էլ տեսար՝ ախորժակդ Մաննուտի անտառի վրա բացվեց, մյուս օրն էլ աչքդ տնկեցիր Տանձուտի անտառի վրա: Գերանացու է հարկավոր, լոփա է հարկավոր, բիհր է հարկավոր... Համա աղվես ես, հա՜, Շնավոն Իխշանովիչ:

- Հազարապետ, էլի հայհոյում ես,- վիրավորվեց Շմավոն Իշխանովիչը:

- Ես օրենքով, օրենքով եմ հայհոյում... Դե հիմա հասարակական կարգով անտառապահություն եմ անում, դու էլ տղամարդ ես՝ ծմակի կողքովն անցիր:

Գյուղում լսեցին ու զարմացան: Մեկն ասաց՝ Հազարապետի խելքը ոնց որ տեղը չի, մի ուրիշն ուրիշ բան ասաց: Որքան մարդ, այնքան էլ կարծիք: Ֆիզկուլտուրայի ուսուցիչ Շիլլեր Ղազարյանը կատակելու տրամադրություն ուներ, աչքով արեց Շմավոն Իշխանովիչին ու դարձավ Հազարապետին:

- Բա մի չիմանամ, թե դու ո՞ր օրվա հազարապետն ես, որ անունդ Հազարապետ են դրել:

Հազարապետն էլ աչքով արեց գյուղթղթակից Միհրան Մինասյանին, պատասխանեց.

- Ներողություն, ընկեր Ղազարյան, իսկ դու ո՞ր օրվա Շիլլերն ես, որ անունդ Շիլլեր են դրել:

Կատակ էր, արեցին ու ծիծաղեցին, ընկեր Շիլլեր Ղազարյանը հիմա էլ ուրիշ բան ասաց.

- Հազարապետ, ես քեզ չեմ հասկանում, աշխօր չես ստանում, փայտ չես ծախում, դրա համար քեզ չեն խրախուսում... Բա մարդ էլ ձրի անտառապահություն կանի՞: Թե ճիշտ չեմ, ասա՝ ճիշտ չես:

- Ճիշտը՝ ճիշտ ես,- ասաց Հազարապետը,- բայց մի բան էլ կա՝ քո ճիշտը սկզբունքորեն է ճիշտ, իմն էլ ճիշտ է և՛ սկզբունքորեն, և՛ տեսականորեն: Քոնը կեցությունն է, իմը՝ գիտակցությունը, Շմավոն Իշխանովիչինը՝ անտառագողությունը: Իսկ թե մեզանից ով է ավելի ճիշտ, էդ էլ թողնենք մարդկանց խղճին:

Եվ Հազարապետը քայլերն ուղղեց դեպի անտառ:

ՄԵԾ ՄԱՄԸ

Բոլորը եկան, մարդ չմնաց…
Շ. Ազնավուր

Եկել են բոլորը: Ասես, պայմանավորվածության համաձայն, իջել են նույն գնացքի նույն վագոնից, միասին շտապել այստեղ՝ կանխագուշակելով, որ Մեծ մամի հետ բան է պատահել: Բայց Մեծ մամը, ինչպես միշտ, ինչպես մի ամիս առաջ, ինչպես մի տարի, երկու տարի առաջ, նստած է իր հին տեղը՝ մոդայից ընկած բազմոցի մի անկյունում, բրդե շալը ծնկներին, գլուխը հակած կրծքին: Որդու մահից հետո, դա նրա անփոփոխ տեղն է, չնայած ունի իր փոքրիկ ննջասենյակը, իր «անձեռնմխելի տնտեսությունը»՝ ճռճռացող զսպանակներով մի մահճակալ, գունավոր թիթեղներով երեսպատված մի սնդուկ, մահճակալից վերև կախած որդու մեծադիր լուսանկարը՝ գնդապետի համազգեստով:

Եկել է Հովակիմը՝ Մեծ մամի քրոջ որդին, դուրս ընկած այտոսկրերով, նոր ճաղատացող գլխով, կապույտ աչքերով մի մարդ, որ երկար տարիներ աշխատել է քաղաքնտրում որպես ապրանքագետ և հիմա ռեստորանի դիրեկտոր է: Նա այստեղ նոր մարդ չէ, ինչպես ասում են՝ դուռը ոտքով է բացում, հետը բերած կոնյակի, օղու, գինու և չեխական գարեջրի շշերը ցուցադրաբար շարում սեղանին, ու առաջին հարցը լինում է. «է՜, ո՞նց ես, Մեծ մամ… Չէ, աչքիս լավ ես երևում, շատ լավ: Դու տղամարդ կնիկ ես»: Մեծ մամը հասկանում է, որ Հովակիմը դա անում է ի ցույց գնդապետ որդու, այսինքն՝ տեսնո՞ւմ ես, Գեղամ Համազասպովիչ, ես Մեծ մամին պակաս չեմ սիրում, քան դու:

Այստեղ է Սահակը՝ Մեծ մամի եղբորորդին. կոլտնտեսությունում գլխավոր գյուղատնտես է, թերթերում նրա լավ աշխատանքի մասին հաճախ են գրում: Սահակը միայն մի անգամ է եղել հորաքրոջ տանը. գործով էր եկել քաղաք: Թինան նույնիսկ նրա բարևին չպատասխանեց, և երբ Մեծ մամն ասաց՝ Սահակն է, իմ եղբոր մեծ տղան, հարսը չլսելուն դրեց: Եթե հարսը հյուրին չի ընդունում, հյուրը հո չի՞ կարող պնդաճակատություն անել. Սահակը գնաց հյուրանոց, իսկ առավոտյան պարզվեց, որ նա դատարկաձեռն չէր եկել, հետը մի բիդոն մաքուր մեղր էր բերել: Թինայի սիրտը փափկեց, զանգեց հյուրանոց, բայց ուշ էր արդեն, Սահակն արդեն առավոտյան ավտոբուսով գյուղ էր գնացել:

Սահակի դիմաց նստած է Մեծ մամի ավագ թոռը, հաղթանդամ մի տղամարդ, ըմբշամարտի գծով սպորտի վարպետ: Նա սպորտդպրոցում հիմա մարզիչ է և շարունակում է ապրել իր նախկին փառքով: Հագել է իր տոնական կապույտ կոստյումը, կրծքին սպորտի վարպետի կրծքանշանն է, վարդագույն փողկապին շողշողում է ոսկե քորոցը: Գեդեոնի համար Մեծ մամն իր դարն ապրած կին է, որը, չգիտես ինչու, հորեղբայր Գեղամի մահից հետո շարունակում է ապրել, չնայած դրանից առանձին մի հաճույք չի ստանում:

Գեդեոնի կողքին Մեծ մամի աղջկաթոռն է, մասնագիտությամբ՝ երաժիշտ, կոնսերվատորիա է ավարտել, երաժշտական ուսումնարանում կլարնետի դասեր է տալիս: Նա ներկաների մեջ թերևս ամենաինտելիգենտ մարդն է, որ ուզում է տարբերվել նրանցից և՛ իր ծանրակշիռ խոսքով, և՛ նուրբ ու ընտիր բառերով, և՛ վարվեցողությամբ: Երբ գնդապետ քեռին մեռավ, ինքն էր այստեղ կարգադրություն անում, բոլորի ուշադրության կենտրոնում ինքն էր: Մերթ վազում էր պսակների ետևից, մերթ փողային նվագախմբին դիտողություն էր անում և բացատրում, թե ինչ սգո քայլերգ պիտի նվագել:

Մնացածները տնեցիներն են. Թինան՝ երկարահասակ, չորուկ դեմքով և ներկած մազերով մի կին, Լևոնը՝ որդին, որ կաբելի գործարանում ինժեներ է, և սրա կինը՝ Վիոլետան: Վերջինս չի մասնակցում զրույցին, իր սենյակում աշակերտների գրավոր աշխատանքներն է ստուգում ու մեկ-մեկ մատը թափահարում իր չարաճճի աղջկա վրա. «Հերիք է, Նունե, խանգարում ես, տե՛ս, կծեծեմ»:

Խոսողը հիմնականում Թինան է: Նա այդ հանդիպմանը շատ լավ է նախապատրաստվել. խոսում է ազատ ու անկաշկանդ, ոչ մի ավելորդ բառ, ոչ մի ավելորդ ժեստ: Այդպես կարող է միայն խոսել իր դերը վարժ սերտած այն դերասանուհին, որն հույս ունի մոտ ապագայում արժանանալու վաստակավորի կոչման:

- Դուք, հարազատներս, հիմա տեսնո՞ւմ եք իմ վիճակը,- հարցն ուղղված է բոլորին,- Լևոնը շարունակ գործուղման մեջ է, Վիոլետան չի կարող բացակայել դասերից,- նա ակնհայտ չարությամբ նայեց դեպի հարսի սենյակը,- իսկ ինձ բուժում է հարկավոր, եղել եմ պրոֆեսոր Մանուկցյանի մոտ: Նա գտնում է, որ անպայման պիտի մեկնեմ Սոչի կամ Գագրա: Հիմա ձեզ եմ հարցնում, որպես իմ հարազատների՝ ո՞վ պիտի խնամի պառավին: Քառասուն տարի հարսնություն եմ արել, ոչ մի անգամ ծուռ աչքով չեմ նայել, չեմ ասել՝ Մեծ մամ, աչքիդ վերև հոնք կա: Քառասուն տարի խնամել եմ, ինչպես մայրը կխնամի իր հարազատ երեխային: Այդպես չէ՞, Մեծ մամ:

Մեծ մամը բարձրացրեց գլուխը, ակնոցի հաստ ապակիներից նայեց հարսին, հառաչեց.

- Թինա՜,- ասաց,- Թինա, այդ ինչե՞ր ես ասում: Դու լավ գիտես, որ ես Գեղամի մահից առաջ այսպես չէի: Ինձ դո՞ւրս ես անում տնից: Շնորհակալ եմ, Թինա, շատ եմ շնորհակալ:

- Իսկ ո՞վ ասաց, թե քեզ դուրս եմ անում տնից,- Թինայի լարի պես բարակ շրթները դողացին:- Խնդրեմ, տեսնո՞ւմ եք, թե ինչեր է հորինում: Վաղն էլ կասի՝ ինձ հարսս քաղցած-ծարավ է պահում: Ես թաքցնելու բան չունեմ, այստեղ մերոնք են, օտար մարդիկ չկան…

- Պարզ է, թաքցնելու բան չկա,- ասաց Գեդեոնը և զգալով, որ իր խոսքը ներկաների վրա տհաճություն պատճառեց, ուղղեց փողկապը, մոտեցավ պառավին:- Մեծ մամ, դու ինձ ճանաչո՞ւմ ես,- և նորից զգաց, որ սխալ է գործել. իսկ եթե Մեծ մամն ասի՝ տար ինձ ձեր տունը, ես ուզում եմ ձեր տանն ապրել ու մեռնել, ի՞նչ դուրս կգա:

Մեծ մամը լարեց հիշողությունը, նայեց մշուշված աչքերով ու խոսեց.

- Լավ չեմ տեսնում, աչքերիս մեջ լույս չի մնացել:

- Մեծ մամ, ես Գեդեոնն եմ:

- Գեդեո՞նը,- պառավի խորշոմած դեմքին առկայծեց ժպիտի պես մի բան:- Գեդեոնը, հա՛, Գեդեոնը, մեր Գուրգենի տղան: Ես քեզ ձեռքերիս վրա եմ պահել, ո՞նց չեմ հիշում: Գուրգենս ինչպե՞ս է:

- Թոշակի է անցել, Մեծ մամ:

- Բա ինչի՞ չի եկել:

- Քաղաքում չէ, գնացել է բուժման:

- Ասում են՝ կնկանդ հետ չես հաշտվում, էդ ո՞նց կլինի, ցավդ տանեմ:

- Ես հաշտվում եմ, Մեծ մամ, ինքը չի հաշտվում,- աշխուժացավ Գեդեոնը: Այդ լավ է, թող հիմա բոլորն էլ իմանան, որ Նյուրան չար կնիկ է. հազիվ թե պառավին ընդունի:- Նա նույնիսկ չհաշտվեց իր հարազատ մոր հետ, տնից դուրս արեց: Կանանց հետ լեզու գտնելը դժվար, շատ դժվար բան է, Մեծ մամ:

- Այսինքն՝ զոքանչիդ դուրս արեց,- չարությամբ պարզություն մտցրեց Արթուրը՝ երաժիշտը:- Նշանակում է, բարեկամս, ձեր ջուրը մի առվով չի գնում:

Գեդեոնն այնպե՞ս կուզեր շշպռեր այդ զուռնա փչողին. «Հոպոպ, դու քեզանից խոսիր, երեք անգամ պսակվել ես, երեք կնոջից երեք երեխա ունես»: Բայց պահեց իրեն, ձեռքերն անզոր տարածեց.

- Ինչ ճիշտ է՝ ճիշտ է, մի առվով չի գնում,- և, այնուամենայնիվ, չդիմացավ, խայթեց:- Ի՞նչ անեմ, հո չե՞մ կարող ուրիշների նման երեք անգամ ամուսնանալ: Հա, մի հայտնի գրող ասել է. «Ինչպես մահից, այնպես էլ կնոջից չես կարող փրկվել»:

- Այդ հայտնի գրողն իր համար է ասել,- Թինան զայրացած նայեց նրան:- Գրողները շատ բան կարող են ասել,- ու դարձավ Արթուրին:- Արթուր, ինչպե՞ս է Ելենի առողջությունը:

Դա հերթական հարց չէր, նպատակային հարց էր, և Արթուրը անակնկալի եկավ:

- Շնորհակալ եմ, ոչինչ... Պարզապես մայրիկը այն չէ, ինչ որ առաջներում: Անշուշտ, հին հիվանդությունն իրեն զգացնել է տալիս:

- Ես այդ հին հիվանդության մասին առաջին անգամն եմ լսում:

- Դե, կանացի հիվանդություն... Քեռակին, մի՞թե նա այդ մասին քեզ ոչինչ չի ասել:

- Ոչ, չի ասել: Անցած ամսին եկավ, թե մամային շատ եմ կարոտել: Գոնե, մի քանի օր մնար, տեսներ հալս: Չմնաց: Իսկ դուք չե՞ք կարող երկու ամիս պառավին պահել, մինչև բուժումից վերադառնամ:

- Մայրիկն ինձ այդ մասին բան չի ասել:

- Հասկանում եմ, դուք էլ եք ձեռքներդ լվանում: Դուրս է գալիս, որ ձեր մեջ ամենաանխելքը ես եմ: Ամո՛թ է, ամոթ:

Հովակիմի դեմքի մկանը թրթռաց. նայեց Սահակին, վերջինս փախցրեց հայացքը: Նայեց Լևոնին, և Լևոնը հասկացավ նրան, ներվային շարժումով ետ քաշեց աթոռը:

- Մամա, հերիք է,- ձայնը դողաց:- Լսո՞ւմ ես, հերիք է: Եվ, ընդհանրապես, ո՞ւմ է հարկավոր այս պրես-կոնֆերանսը:

- Դու լռի՛ր,- սաստեց Թինան:- Դու, ընդհանրապես, ինչո՞ւ ես խառնվում: Ես վաղը ճանապարհվում եմ Սոչի: Ես էլ եմ ուզում ուրիշների նման ապրել:

- Քեզ ոչ ոք չի խանգարում:

- Իսկ ո՞վ պիտի խնամի այս պառավին. կի՞նդ: Նա առավոտից մինչև երեկո իր մազերով ու եղունգներով է միայն զբաղված:

- Մամա, ամո՛թ է, դու արդեն հորինում ես:

- Ես ե՞մ հորինում: Քո հարազատ մայրը հորինում է, հա՞... տեսնո՞ւմ եք, թե նա ինչպես է խոսում ինձ հետ:

- Իսկ դու ինչպե՞ս ես վարվում Մեծ մամի հետ:

Հովակիմն արդեն դաշնակից էր գտել, չէր կարող չեզոք դիրք բռնել, դանդաղ բարձրացրեց թավ հոնքերը, խոսեց.

- Թինա քույրիկ, իմ կարծիքով, գործը ծուռ ես բռնել: Երբ Մեծ մամը Մեծ մամ էր, ուրիշ ձևով էիր խոսում: Երբ Մեծ մամը տանդ լվացքն էր անում, եփում ու թխում էր, տունը հավաքում, շուկա գնում, երեսդ պարզ անում, մեր տեղը չգիտեիր, մեզ մարդատեղ չէիր դնում:

Թինան դրան չէր սպասում, դա թիկունքից հարված էր, և շիկացած Թինան թավայի մեջ լցրած յուղի պես թշշաց.

- Դու լռի՛ր...

- Որքան լռել եմ, հերիք է:

- Հասկացանք, մորաքրոջդ պաշտպանում ես... Ասա, խնդրեմ, ո՞վ է քեզ մարդ դարձրել: Գեղամը չլիներ, քեզ քաղաքներից այնպե՞ս կքշեին...

- Ինձ քաղաքներից քշողը դեռ մորից չի ծնվել:

- Գեղամի թիկունքով... Մոռացել ես, չէ՞, գիշեր-ցերեկ մեր տնից դուրս չէիր գալիս:

- Ես երբեք դատարկ ձեռքով ձեր տուն չեմ մտել:

- Բերածդ ի՞նչ էր՝ երկու շիշ թթված գինի:

- Էդ ե՞րբ թթվեց:

- Դու շատ լավ գիտես, թե երբ թթվեց: Եվ, ընդհանրապես, ինչո՞ւ ես քիթդ խցկում այնտեղ, որտեղ դրա կարիքը չի զգացվում: Նախա՛լ...

- Թինա՜...

Դա անզուսպ մի ճիչ էր, բոլորը շրջվեցին Մեծ մամի կողմը: Պառավը հենվեց բազմոցի թիկնակին, շարժեց չորացած շուրթերը, ուզում էր խոսել, չկարողացավ: Լևոնը բռնեց նրա ձեռքը:

- Մեծ մամ, կարիք չկա, ամեն ինչ լավ կլինի:

- Լավ կլինի, գիտեմ,- հոգոց հանեց պառավը,- մենակ չգիտեմ, թե այդ լավը երբ կլինի: Իմ մեռնելուց հետո՞: Ցավդ տանեմ, Լևոն, ինձ տար իմ օթախը: Տա՛ր, ես ձեզ չեմ խանգարի:

- Մեծ մամ, քեզ վա՞տ ես զգում:

- Չէ, շատ լավ եմ զգում: Տա՛ր, բալաս:

Տիրեց լռություն: Սահակը մի ծխախոտ վառեց, Հովակիմն ամփոփվեց ինքն իր մեջ, Գեդեոնը շարժեց ուսերը, Արթուրը մատները տկտկացրեց սեղանին:

- Լավ չի,- խոսեց մինչ այդ լուռ ու չեզոք Սահակը:- Չէ՛, լավ չի:

- Ի՞նչը չի լավ,- հարցրեց Թինան:

- Դե ո՞նց ասեմ... Պառավը մեղք է, նստեցրել եք այստեղ ու խոսք եք կռվեցնում: Դա եղավ ի՞նչ,- և անսպասելի հայտարարեց:- Ես պառավին ինձ հետ կտանեմ գյուղ:

- Դու կտանե՞ս,- կարծես լավ չլսեց Հովակիմը:

- Որքան չլինի, Մեծ մամն իմ հորաքույրն է:

- Դու այդ սկզբից պիտի ասեիր, Սահակ... Իսկ ձերո՞նք...

- Մերոնք ի՞նչ պիտի ասեն:

- Շնորհակալ եմ, Սահակ,- Թինան թաշկինակը մոտեցրեց աչքերին,- երկու ամիսն ինչ է, որ յոլա չտանեք: Հանգիստ պառավ է, ձեզ չի խանգարի:

Ամեն ինչ հարթվեց ու խաղաղվեց: Բոլորը դարձան սրտացավ ու մտերիմ բարեկամներ, հիշեցին, թե Մեծ մամն ինչպես էր իրենց սիրում: Թինան հարցրեց Սահակի ընտանիքից՝ ով որտեղ է աշխատում, ինչպես է վաստակում, և խոստացավ կրտսեր որդուն տեղավորել ինստիտուտում, հետո ասաց, որ գյուղում ապրելը հեշտացել է, յուղը՝ բո՞լ, մեղրը՝ բո՞լ, կեր ու խմիր և մաքուր օդում քեզ համար ման եկ:

Երբ սեղանն արդեն պատրաստ էր, երկու բաժակից հետո Գեդեոնի տրամադրությունը բարձրացավ, համբուրեց Սահակի ճակատն ու ասաց.

- Խմում եմ քո բաց ճակատի կենացը: Խմում ու ասում եմ՝ պարտական մնաս, թե երկու ամսից հետո Մեծ մամին չուղարկես մեզ մոտ: Մեր Նյուրան, իմ արևը, ոսկե սիրտ ունի, մեր օխտը պորտի համար հոգի է տալիս:

- Այդ ե՞րբ ոսկի դարձավ,- խեթեց Արթուրը:- Քիչ առաջ ուրիշ բան էիր ասում: Ո՛չ, բարեկամս, Մեծ մամը մենակ քո Մեծ մամը չի... է՛հ, քեռին կենդանի լիներ,- ու արտասվեց:- Ախ, քեռի՜, քեռի՜, ինչո՞ւ այսօր մեզ հետ չես, մեր կողքին:

- Թե որ քեռին մեր կողքին նստած լիներ, Մեծ մամին ո՞վ պիտի դռնեդուռ գցեր,- Հովակիմն աչքի տակով նայեց Թինային:- Սահակ եղբայր, պառավը քեզ ամանաթ:

- Անհոգ եղեք, ես իմ խոսքի տերն եմ:

- Էդ լավ է, որ քո խոսքի տերն ես, բայց իմ կարճ խելքով պառավի հետ պիտի խոսել, գուցե սկի չի ուզում: Լևոն, Մեծ մամը քնա՞ծ է:

- Մեծ մամը միշտ ուշ է քնում:

- Գնա խոսիր հետը: Ասա Սահակն ուրիշ չէ, քո հարազատ եղբորորդին է:

- Մեծ մամը կուրախանա, շատ կուրախանա,- Գեդեոնը բաժակները կոնյակ լցրեց:- Մեծ մամի կենացը: Մեծ մամը մեր տոհմածառն է:

- Մեծ մամի կենացը,- բաժակը բարձրացրեց Հովակիմը,- մենք Մեծ մամի արած լավությունները թե մոռանանք, նշանակում է՝ մարդ չենք:

Լևոնը Մեծ մամի ննջասենյակից դուրս եկավ, բացակա հայացքով նայեց ներկաներին, ասաց.

- Մեծ մամը ոչ մի տեղ էլ չի գնում... Մեծ մամը մեռել է:

1976 թ.

ՄԵԾ ՄԱՄԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Եկել են բոլորը, ճիշտ այնպես, ինչպես մի տարի առաջ, նույն հանդիսավոր տխրությամբ, նույն ընդգծված լրջությամբ և նույն հերթականությամբ:

Եկել է Հովակիմը, որ մի ժամանակ «Արցախ» ռեստորանի, իսկ հիմա էլ պանրագործարանի դիրեկտոր է, բավականին մեծ կոլեկտիվ է ղեկավարում, ունի իր շրջապատը, արդեն ճանաչված մարդկանց հետ է նստում-վերկենում, և այդ շրջապատում իրեն ազատ է զգում, ինչպես ձուկը՝ ծովում: Շատերն են զարմանում, թե ինչպես եղավ, որ Հովակիմ Նավասարդովիչը թռավ ռեստորանից ու հայտնվեց ոչ թե մեղադրյալի, այլ պանրագործարանի դիրեկտորի աթոռին: Բայց այստեղ առանձին մի գաղտնիք չկա, նոր շեֆը՝ Պարիս Կիրիկորովը, հոր կողմից ազգակից է գալիս. զանգել է գլխավոր դատախազին, կարգադրել՝ մի բաժակ ջրում փոթորիկ չբարձրացնել, գործը կարճել: Մի տարվա մեջ Մեծ մամի քրոջ որդին կարգին չաղացել է, կամ, ինչպես նրան ճանաչողներն են ասում՝ Նավասարդիչը ռեստորանի կերածը նոր է սկսել մարսել: Նա այնպես է նստել սեղանի մոտ, կարծես շատ կարևոր անձնավորություն է, և իր ներկայությունը մեծ պատիվ է ներկաների համար: Ի՞նչ եք ուզում, մարդը Պարիս Կիրիկորովին շաբաթը մի անգամ հրավիրում է իր տունը՝ խաշի, հետը նարդի է շրխկացնում, խորհրդակցություններում ու ժողովներում նրա ճառերից մեջբերումներ անում, խոսքի տակուգլխին հիշեցնում, որ Պարիս Սահակովիչի նման ղեկավարը գյուտ է մարզի համար:

Եկել է Սահակը՝ Մեծ մամի եղբորորդին, որ կոլտնտեսությունում գլխավոր գյուղատնտես էր, վերջերս անցել է թոշակի, մեղվաբուծությամբ է զբաղվում: Քառասուն մեղվափեթակ ունի, կինը կոլտնտեսային շուկայում մեղր է վաճառում: Ասում է՝ լավ մեղր է, ծաղկի մեղր է, բալասան է, իսկ ովքեր մեղրից գլուխ են հանում, հակառակն են պնդում՝ հիսուն տոկոսը շաքար է: Սահակը երկու ամիս առաջ պսակել է ավագ որդուն, քաղաքում ապրող բարեկամներին ու ազգակիցներին չի հրավիրել հարսանքին: Հովակիմը այնպե՞ս է ուզում շշպռել այդ «խորամանկ գեղջուկին», բայց չի շտապում, սպասում է հարմար առիթի: Սահակը դեմքից հասկանում է նրան, ինքն էլ իր հերթին պատրաստ է մի լավ պոզահարել այդ փքվածին,

և կորցնելու ոչինչ չունի. Պարիս Կիրիկորովն ի՞նչ պիտի անի իրեն, հո գյուղից չի՞ քշելու:

Այստեղ է Գեդեոնը՝ Մեծ մամի ավագ թոռը, որ սպորտդպրոցում ըմբշամարտի գծով ավագ մարզիչ էր, հիմա նոր աշխատանք է գտել՝ բուֆետապան է, մեկից երկու է վերցնում: Չվերցներ, «ժիգուլի» չէր գնի, կնոջ՝ Նյուրայի բերանը ոսկով չէր լցնի ու չէր ասի՝ հերն էլ անիծած, այս մեծ աշխարհից ի՞նչ պիտի տանեմ, ուտել-խմելն է մնում, մնացածը դատարկ բան է: Գեդեոնի պիջակի դարձածալքի՝ սպորտի վարպետի կրծքանշանի կողքին փայլում է առևտրի գերազանցիկ աշխատողի կրծքանշանը: Ով՝ ով, Հովակիմ Նավասարդովիչը շատ լավ է հասկանում, թե ինչպես է նա արժանացել այդ կրծքանշանին, և եթե տեղը գա, կասի՝ դրանից մի հատ էլ ես ունեմ, արի քեզ տամ, դա էլ էն մի դոշիցդ կպցրու:

Գեդեոնի դիմաց, ինչպես մի տարի առաջ, այստեղ, այս նույն սենյակում և կարծես նույն աթոռին, նստած է Մեծ մամի աղջկաթոռը՝ երաժշտության դասատու Արթուրը: Հնար լիներ, նա հիմա տեղը կփոխեր, որ չտեսնի այդ լպիրշ, մեծամիտ ու ամբարտավան գարեջրավաճառի դեմքը: «Երկու ամիս առաջ մեր դիրեկտորի հետ եկա բուֆետդ, ասացի՝ որքան չլինի բարեկամ է, հյուրասիրությունը վրաս թեթև կնստի: Դու է՛լ եկար մեզ հետ կերար-խմեցիր և վերջում էլ յոթ ռուբլի ավել փող պոկեցիր: Բա բարեկամը բարեկամին այդպես անխիղճ կթալանի՞: Իսկ մեր դիրեկտորին չպիտի հյուրասիրեի. հավատացրեց, թե՝ ուսմասվարի ամենահավանական թեկնածուն դու ես, բայց ուրիշին ընդունեց և աչքիս թոզ փչեց՝ դե ի՞նչ անեմ, վերևներում չեն համաձայնում»:

Թինան հյուրերի համար թեյ բերեց: Ուզում էր սեղանին մի շիշ կոնյակ դնել, փոշմանեց. «Հողեմ սրանց գլուխը, թեյն էլ է ափսոս. հլա սպասեմ, տեսնեմ այս գործի վերջն ինչ է դառնում... Ի՞նչ ասեմ, տղաս՝ Լևոնն էլ միշտ կնոջ զուռնայի տակ է պարում, նրա խոսքովն է գնում: Նրանց համար ոնց որ օտար լինեմ: Առաջներում այդպես չէր, կինը՝ Վիոլետան, այդ օձը, փոխեց տղայիս»:

Եվ ինչպես մի տարի առաջ, երբ դեռ Մեծ մամը կենդանի էր, առաջինն ինքը սկսեց.

- Պատկերացնո՞ւմ եք, նրանք գիտեին, որ այսօր հյուրեր պիտի ունենանք, բայց չսպասեցին. Լևոնը գնաց գործուղման, կինը՝ հերանց տուն: Դրությունս տեսնում եք, չէ՞,- Թինան թաշկինակը մոտեցրեց աչքերին, փղձկաց,- մեղքս ո՞րն է, ես կյանքում մեկին ասած կլինե՞մ՝ աչքիդ վերև հոնք կա,- մի քիչ թսթսաց, ուսերը վեր քաշեց,- բախտի բան է, ի՞նչ կարող ես անել: Ես հո չասեմ, դուք շատ լավ գիտեք, որ Մեծ մամը բոլորիս համար հարազատ մայր է եղել: Լավ, ձեզ եմ հարցնում՝ մենք ինչպե՞ս կարող ենք նրան մոռանալ:

- Մայր է եղել, քույր է եղել, տատ է եղել,- Հովակիմը մատները մեկ-մեկ ծալեց ու մտքում հայհոյեց Թինային. «Լաչառ, իբր դու նրան հարսնությո՞ւն ես արել. խեղճ պառավին խեղդած ես պահել, դեռ վերջումն էլ ու-

զում էիր դռնեդուռ գցել, էլի փա՜ռք աստծո, մահը ժամանակին վրա հասավ ու փրկեց»,- և ծալեց հինգերորդ մատը.- Աստվա՜ծ է եղել, աստված: Մեծ մամը աստվածային կին էր, ողորմի իրեն:

- Ողորմի՜, հազար ողորմի,- Սահակը նայեց առաստաղին, ասես աղոթում է.- Բա նրան մոռանալ կլինի՞... Մի աշխարհ էր, մի կանգնած ծով էր, բարեկամի տեղը միշտ իմացող,- դա ասաց Թինային խայթելու նպատակով,- հարևանի հետ՝ հարևան, երեխայի հետ՝ երեխա, մեծի հետ՝ մեծ: Էդպիսի կին հիմա դժվար կգտնվի աշխարհում:

- Շնորհակալ եմ,- Թինան թաշկինակը սեղմեց ձեռքի ափում:- Դուք այդ ամենը ինձնից լավ գիտեք: Ես նրա համար հարս եմ եղել, մայր եմ եղել, քույր եմ եղել, քոր եմ եղել: Գլխիս եմ պահել: Ասել եմ՝ մեծ կին է, սրտի քեֆին չկպչեմ: Ես եմ, որ դիմացել եմ նրա կապրիզներին: Հիմիկվա հարսները իմ արածը չեն անի: Դուք իմ հարազատներն եք, ես ձեզանից ոչինչ չեմ թաքցնում, սրտինս ասում եմ: Ո՞վ պիտի նրա գերեզմանին մի քար դնի: Որ այդ բանը չանենք, քաղաքում կծիծաղեն մեզ վրա: Հա՛, կծիծաղեն, ազնիվ խոսք:

- Կծիծաղեն,- հաստատեց Գեդեոնն ու մտքում ասաց. «Գիտենք ինչպես ես հարսնություն արել. խեղճ պառավի գլխին պոպոք ես կոտրել, քո հերն անիծած: Դիակը դեռ հողին չհանձնած, ծլկել ես Սոչի: Մթամ չգիտենք՝ ինչու ես գնացել՝ որ լրբություն անես»,- բա որ մենք չկատարենք մեր հոգու սուրբ պարտքը, ո՞վ պիտի կատարի: Ուրիշներն իրենց մեռելների վրա արձաններ են կանգնեցնում:

- Դա հետամնացություն է, քաղքենություն,- ասաց Արթուրը,- իսկ մենք քաղքենիներ չենք և ոչ էլ՝ չտեսներ: Համեստությունը լավ բան է, ինչո՞ւ հետևենք ուրիշների վատ օրինակին:

Գեդեոնը գլուխն առաջ թեքեց, ասես պատրաստվում էր դիմացինի հետ ըմբշամարտել:

- Վա՛յ, ես քո համեստ ջանին մատա՜ղ,- ծիծաղեց թունոտ,- բա ինչի՞ զոքանչիդ գերեզմանին թևավոր հրեշտակներ ես տնկել: Լաց ես լինում՝ փող չունեմ, փող չունեմ, պակաս եմ... Մի մեռելի վրա մի անգամ մի «Սիրեցի, յարս տարան ես» փչում, հարյուր ռուբլի պոկում: Մի հարսանքում երկու «Ջեյրանի» ու մի «Քոչարի» ես ճլվստացնում, չորս հատ հարյուրանոց դնում գրպանումդ:

Արթուրը դա սպասում էր Գեդեոնից, պարտքի տակ չմնաց:

- Ես ազնիվ երաժիշտ եմ, ապրում եմ իմ ազնիվ վաստակով:

- Երաժի՜շտ եմ,- Գեդեոնը բերանը արհամարհանքով ծռեց, նրա տնազն արեց,- ազնիվ վաստակով եմ ապրում: Չլինի՞ թե Բեթհովեն ես, Մոցարտ ես, Արամ Խաչատրյան ես կամ Շառլ Ազնավուր: Դու զուռնաչի ես, ոչ թե կոմպոզիտոր:

- Իսկ դու թալանչի ես, ոչ թե առևտրի գերազանցիկ աշխատող,- հարձակման անցավ Արթուրը:- Դու մեկին երկու ես վերցնում՝ չես կշտանում: Հիշո՞ւմ ես, մի անգամ մեր դիրեկտորի հետ եկա բուֆետդ. յոթ ռուբլի ավել փող պոկեցիր:

- Ես թալանում եմ թալանողներին,- հանգիստ ու անվրդով պատասխանեց Գեդեոնը:- Դու ո՞ւմ փողերով էիր հյուրասիրում դիրեկտորիդ:

- Իմ ազնիվ վաստակած փողերո՜վ:

- Ազնիվ վաստակած փողերո՝վ... Ես էլ հավատացի, էլի: Ռենա Բագրատովնայի լակոտին ինչպե՞ս չորս նշանակեցիր:

- Ի՞նչ Ռենա Բագրատովնա:

- էն լիրբն, էլի, էն որ միասին բռնվեցիք: Մոռացե՞լ ես:

- Շանտաժ ես անում:

- Հա, իհարկե, ճշմարտությունը քեզ համար շանտաժ է: Բա ինչո՞ւ չնստեցիր ուսմասվարի աթոռին:

- Ես երաժիշտ եմ, ոչ մի աթոռի վրա աչք չունեմ:

- Երաժիշտ եմ, երաժիշտ եմ: Ինչպես երևում է, հալվա-հալվա ասելով, բերանդ քաղցրանում է: Գուցե «Անուշ» օպերան դո՞ւ ես գրել: Վայ թե՝ էն Չույկովսկին, որ ասում են, դու ես:

- Լսի՛ր, անգրագետի մեկը, Չույկովսկի չի, Չայկովսկի է: Ստից սպորտի վարպետ ես դարձել, կարծում ես՝ աշխարհի տերն ես: Բա ինչո՞ւ սպորտը թողեցիր:

- Դա իմ անձնական գործն է, ընկեր կոմպոզիտոր:

- Պահո՜,- նեղսրտեց Սահակը,- սա ոնց որ կռիվ դառավ: էդպես լավ չի, վեր կացեք իրար դնքսեցեք: Բա ձեզ սազո՞ւմ է: Արթուր, ես դա քեզանից չէի սպասում:

- Ես մեղք չունեմ, առաջինն ինքը սկսեց:

- Դո՛ւ ստիպեցիր,- Գեդեոնը գլուխը նորից առաջ մղեց:

- Ի՜նչ է, ես իրավո՞ւնք չունեմ իմ կարծիքը հայտնելու:

- Դու քո կարծիքը կարող ես ձեր տանը հայտնել:

- Վե՛րջ տվեցեք,- Թինան ձեռնափով խփեց սեղանին, չնայած նրա սրտովն է այդ վեճը. «էդպե՛ս, ա՛յ այդպես, իրար կերեք, իրար ոսկոր կրծեցեք, դա ձեզ շատ է սազում, փողով հարբած լակոտներ»:- Այս ի՞նչ բան է, հազիվ մի անգամ իրար տեսնում եք և իրար զուր տեղից վիրավորում: Ամոթ է, չէ՞, դուք հո երեխաներ չեք, բաժանելու ի՞նչ ունեք:

- Ամո՛թ է, իհարկե, ամոթ է,- Հովակիմը մոտ քաշեց մոխրամանը, սիգարետի մնացորդը ճզմեց մեջը:- Սա էլ դառավ բարեկամությո՞ւն: `

- Ռեստորանում կլյաուզնիկները շառ դրեցին վրաս, քիչ էր մնում գործ ստեղծեին, մեկը դուռս չբացեց՝ հարցնի՝ Հովակիմ Նավասարդովիչ, էդ ի՞նչ կեղտ է, որ ուզում են կպցնել վրադ: Բա որ մենք նեղ օրին իրար չօգնենք, ո՞վ պիտի օգնի: Ի՞նչ կասես, Սահակ:

- Ի՜նչ ասեմ,- ուսերը շարժեց Սահակը,- բան չեմ հասկանում:

- Ներողություն, ինչո՞ւ չես բան հասկանում. երկու ամիս անգործ մնացի, չէի՞ր կարող մի քանի կիլո մեղր ուղարկել: Բկիս կմնա՞ր:

- Հովակիմ, ով բարեկամությունից խոսի-չխոսի, դու չպիտի խոսես: Սարից խոսիր, ձորից խոսիր, համա բարեկամությունից մի՛ խոսիր:

- էդ ինչո՞ւ:

- Տղայիս հարսանքին հիսուն շիշ չեխական գարեջուր խնդրեցի՝ մերժեցիր: Հո ձրի չէի ուզում:

- Չմերժեցի, Սահակ, քեզ մարդավարի հասկացրի, որ չեխական գարեջուրը մեզ հաշվով են տալիս: Պարիս Սահակովիչն էր կարգադրել: Դրա համար չհրավիրեցի՞ր: Վախեցար՝ դատարկ ձեռքո՞վ գամ:

- Ես որդուս համար հարսանիք չեմ արել:

- Բա որ հարսանիք չես արել, Արթուրն ո՞ւմ հարսանքին է կլարնետ նվագել, հինգհարյուր ռուբլին ծալել, դրել գրպանը:

Գեդեոնը թշնամանքով նայեց Արթուրին, լաց է լինում, փո՜ղ չունեմ, փո՜ղ չունեմ... Բա հիմա երեսին չթքե՞մ:

Սահակը ծռմռվեց աթոռին, խոսեց բառերը ծամծմելով.

- Ուզում եմ ասել՝ առանձնապես մեծ հարսանիք չեմ արել, էնպես, թեթև բան էր:

- Հարսանիքը հարսանիք է, մեծս ո՞րն է, փոքրս ո՞րն է,- պատասխանեց Հովակիմը և մի նոր սիգարետ վառեց:

- Իսկ լավ կլինե՞ր, որ ես քեզ հյուրասիրեի թթված գարեջրով:

- Եղածով յոլա կգնայի:

- Դու եղածով յոլա գնացողներից չես: Մեր Արփիկից յոթ կիլոգրամ մեղր ես վերցրել, փողն էլ չես տվել: Ասել ես՝ Պարիս Կիրիկորովի համար է: Ի՜նչ է, Պարիս Կիրիկորովը գլխիս տե՞րն է:

- Խաբում ես:

- Ո՞վ, ե՞ս...

- Բա ե՞ս... Պարիս Սահակովիչի անունն ինչո՞ւ ես շոշափում:

- Ես չեմ շոշափում, դու ես նրա անունով առևտուր անում: Չլիներ քո էդ Սահակովիչը, այսօր չէիր նստի պանրագործարանի դիրեկտորի աթոռին: Կարծում ես, որ գյուղումն ենք ապրում, խո՞տ ենք ուտում:

- Սահակ, էդ խոսքերի համար դու տեղ չունես:

- Գնա խաբար տուր: Գնա ասա՝ Պարիս Սահակովիչ, քարաշենցի Սահակ Վարդապետյանը ասել է՝ ես քեզանից չեմ վախենում: Պարտական մնաս, թե չասես: Թիկունքդ Կիրիկորովը չի՞...

- Հիմա ասա տեսնեմ՝ քո թիկունքն ո՞վ է:

- Կգտնվի: Խնդրում եմ ազգակցիդ անունով թեր չառնես:

- Տե՜ր աստված,- հոգոց հանեց Թինան, բայց հոգու խորքում ցնծում է. «Լավ է, շատ լավ է, դուք էլ իրար կերեք: Ա՛յ թե Սահակը դրան լավ քծծեց: Տեղն է, թող քիթը շատ չբարձրացնի»: Նա նախատող հայացքով նայեց Հովակիմին, ապա թեթևակի ժպտաց Սահակին, գլուխը հանդիմանանքով շարժեց:- Չեմ հասկանում, ինչի՞ համար է այս աննպատակ վեճը: Ասենք՝ Գեդեոնն ու Արթուրը ջահել են, չեն հասկանում, բա ձեզ ի՞նչ է եղել: Է՛հ, Մեծ մամ, սրանք էլ քո բարեկամներն ու ազգակիցները...

Նա բնազդաբար նայեց դիմացի պատին, ուր մի տարի առաջ Մեծ մամի լուսանկարն էր՝ արծաթագույն շրջանակի մեջ: Այդ նկարում Մեծ մաը Մեծ

մամ չէր, այլ ջահել, գեղեցիկ ու ամոթխած նորահարս: Մեծ մամի լուսանկարի տեղը մերկ աղջկա յուղանկար է, կիսադեմ կանգնած մեծադիր հայելու առջև, ասես զարմացած իր մերկության վրա: Թինան ինքն էր իր ձեռքով իջեցրել Մեծ մամի նկարը ու կախել այդ մերկ գեղեցկուհու պատկերը, և դա էլ պատճառ էր դառել, որ մայր ու որդի նորից ընդհարվեն ու գժտվեն:

Գեդեոնը հավանաբար գիտեր այդ մասին, և նույն պահին բռնեց Թինայի հայացքը, իբր թե նոր միայն տեսավ մերկ աղջկա նկարը, և հարցրեց.

- Բա ո՞ւր է Մեծ մամի նկարը:

- Այնտեղ է, սնդուկում,- Թինան դեմքով ցույց տվեց դիմացի սենյակի սնդուկը:- Ուրիշ բան չկարծեք, շրջանակը հնաոճ էր…

- Հա՜, շրջանա՜կն էր հնաոճ,- երկիմաստ ժպտաց Գեդեոնը:- Մեծ մամը ուրիշ Մեծ մամ էր. նա սովորեցնում էր մեզ, որ հարգենք իրար, մեծի պատիվը պահենք:

- Տեսնում եմ ինչպես եք հարգում ու պատիվ պահում,- ձեռքն արհամարհանքով թափ տվեց Արթուրը:- Մեծ մամի մեծ թոռն էլ իբրև դու ես:

- Դու թո՞ռ չես,- հոնքը վեր նետեց Գեդեոնը:- Ես թոռ եմ, դու թո՞ռ չես:

- Ես աղջկաթոռն եմ:

- Աղջկաթոռը խո՞րթ է:

- Մի քիչ հեռու է:

- Բա ինչի՞ ես եկել, ախպեր ջան: Այսօր կիրակի է, հարսանքի օր, ինչի՞ չես գնում շաբաշի:

- Չեմ ուզում, չեմ գնում:

- Շատ լավ էլ ուզում ես, Կուկույի խումբը ճանապարհդ փակել է:

- Կուկույի խո՜ւմբը,- Արթուրը ծիծաղեց:- Ցավդ տանեմ, Կուկուն ո՞ր օրվա երաժիշտն է: Նա կարող է միայն քեզ նման հետամնացներին զարմացնել:

- Վա՛յ, ես քո առաջավոր ջանին մատաղ: Բա որ էդքան զարգացած ես, ինչի՞ ես գնում «Հոռուն տակի» ճաշարանում վիզդ փոկ անում, տեսնես ով է մի երեքանոց տալիս, որ մի շիքյաստ նվագես: Էդպես լավ չի, ընկեր կոմպոզիտոր, գլխարկդ հանիր, փայ հավաքիր:

Դա արդեն չափազանց էր, Արթուրն ընդոստ վեր թռավ աթոռից:

- Լսի՛ր, Գեդեոն ես, թե ինչ զիբիլ ես. ես քեզ համար լակոտ չեմ: Եթե ռեխդ չփակես, Մեծ մամի գերեզմանովն եմ երդվում…

- Դու ինձ ի՞նչ պիտի անես,- Գեդեոնը նույնպես կանգնեց,- մի ասա տեսնեմ՝ դու ինձ ի՞նչ պիտի անես: Դու ո՞ւմ շունն ես, որ Մեծ մամի գերեզմանով երդվում ես:

- Գեդեոն,- Հովակիմը նույնպես կանգնեց, բռնեց նրա ուսերից,- սարսաղություն չանես, տեղդ նստիր,- և ապա Արթուրին,- դու էլ տեղդ նստիր: Սրանց նայեցե՜ք, աքլորացել են… Աննամուսների մեկը:

- Չէ, ջանըմ, սա չեղավ,- փնթփնթաց Սահակը,- դուք ձեր անձնական հաշիվների ետևից եք ընկել, մեզ էլ մարդատեղ չեք դնում: Եկեք մեր դարդ ու ցավից խոսենք:

- Դրանց դարդ ու ցավն իրար խայտառակելն է, էլ ուրիշ դարդ ու ցավ չունեն,- Թինան հավաքեց թեյի բաժակները:- Լավ չի, իրար վրա դանակ քաշեցեք: Սահակ, խոսքդ ասա:

- Ես ավտոբուսից ուշանում եմ,- Սահակը նայեց ժամացույցին:- Դուք հիմա ինձ կոնկրետ ասեք՝ ի՞նչ գերեզմանաքար եք պատվիրում և որքա՞ն փող պիտի տամ:

- Իհարկե, ոչ սովորական գերեզմանաքար,- առաջ ընկավ Գեդեոնը՝ մեծ թոռան իրավունքով:- Մարմարից: Իմ կարծիքով՝ վարդագույնը ավելի հարմար է:

- Ամենահարմարը սևն է,- խոսեց Արթուրը,- հիմա սևն է մոդա:

- Սև գերեզմանաքարը կտանես դնես քո զոքանչի գերեզմանին,- նետեց Գեդեոնը,- Մեծ մամին վարդագույնն է սազում:

Հովակիմը շարժեց գլուխը, բարձրացրեց ուսերը:

- Չեմ հասկանում, մարմարի ու հասարակ քարի արանքում ի՞նչ տարբերություն կա: Եկեք մի քիչ էլ մեզ համեստ պահենք: Էն որ չտեսներն իրենց հարազատների գերեզմաններին դամբարաններ են սարքում, կարծում եք, թե ճի՞շտ է: Սրանից երկու ամիս առաջ Պարիս Սահակովիչը կոնֆերանսում տեսա՞ք ինչպես քննադատեց քաղքենիներին:

- Պարիս Սահակովիչն ուրիշներին քննադատում է, իսկ ինքն իր հոր գերեզմանին արձան է կանգնեցրել,- խայթելու հարմար առիթը բաց չթողեց Սահակը,- Ղարաբաղում մարմար չի թողել…

- Կերե՞լ է,- Հովակիմը ատելությամբ նայեց նրան,- ծախե՞լ է, գողացե՞լ է: Սահակ, հարկավոր չի, դու բոլորին սևացնում ես:

- Ես ասում եմ ճշմարտությունը:

- Սա ոչ կոնֆերանս է, ոչ էլ մարզային խորհրդակցություն: Լավ, թող հիմա էլ գերեզմանաքարը մարմարից լինի:

- Մենակ քարը չի,- պարզություն մտցրեց Թինան,- ռեշոտկա էլ է հարկավոր:

- Ի՞նչ ռեշոտկա… Մեծ մամը առյո՞ւծ է, թե՞ վագր, որ դուրս գա փախչի,- սրամտեց Հովակիմը, բայց զգալով, որ դա շատ կոպիտ ստացվեց, մեղմացրեց խոսքը:- Մեծ մամը աշխարհի ամենահամեստ կինն էր, առանց ռեշոտկայի էլ կարող է յոլա գնալ: Էն քաղքենությունը, որ ասում է Արթուրը, հենց ռեշոտկան է: Գեդեոն, դու թվաբանությունից ուժեղ ես, հաշվիր տեսնենք որքան փող է նստում:

Գեդեոնը ծոցագրպանից հանեց բլոկնոտը, գրեց-ջնջեց, գումարեց-հանեց և կարծես չվստահելով իր գրածին, մտքում ինչ-որ մտմտաց ու հայտարարեց:- Մի գերեզմանաքարը մեզ վրա կնստի ուղիղ 500 ռուբլի: Հինգ հոգի ենք, հինգհարյուրը բաժանած հինգի՝ հավասար է հարյուր:

- Շա՜տ լավ թվաբանություն է,- Թինան խռոված երեխայի պես շուռ տվեց դեմքը, թևերը ծալեց կրծքին, շուտասելուկի պես վրա տվեց:- Ես Մեծ մամի համար հարս եմ եղել, մայր եմ եղել, հայր եմ եղել, քույր եմ եղել, քոր եմ եղել. հասկանո՞ւմ եք, քո՜ծ, այսինքն՝ ծառա, նյանկա: Ես Մեծ մամին գլ-

խիս եմ պահել: Դուք պիտի մտնեք իմ դրությունը, ստացած թոշակս հազիվ ուտելուն է հերիքում:

- Թինա, դու մոռանում ես, որ տղադ ու հարսդ աշխատում են,- ասաց Հովակիմը:

- Ես նրանց հետ գործ չունեմ: Ե՞րբ են տղաս ու հարսս ինձ կոպեկ ցույց տվել:

- Այդ դեպքում հինգհարյուրը բաժանած չորսի,- Գեդեոնը բլոկնոտը դրեց գրպանում:- Ովքեր համաձայն են, թո՛ղ ձեռք բարձրացնեն:

- Սա ժողով չի,- դժգոհեց Արթուրը,- իմ բաժինը որքա՞ն է:

- Մի «Սիրեցի, յարս տարան»,- Գեդեոնը աչքով արեց Հովակիմին:- Բայց քանի որ Թինան չի կարող տղամարդկանց հետ ոտք բռնել, «Սիրեցի, յարս տարան»-ի վրա մի «Ջեյրանի» էլ ավելացրու, կդառնա ուղիղ հարյուր քսանհինգ ռուբլի:

- Այդքան փողով կարելի է երկու գերեզմանաքար պատվիրել,- Հովակիմը նայեց Սահակին, բայց վերջինս լուռ էր:- Դուք շատ լավ գիտեք իմ վիճակը, երկու ամիս չեմ աշխատել, պարտքերի մեջ թաղված եմ: Խոսքը մեր մեջ, Թինա քույրիկ, դու էլ լավ բան չես անում: Մեծ մամն ամբողջ կյանքում քեզ է ծառայել. էն նյանկան, որ ասում ես, Մեծ մամն է եղել:

- Քեզնից էլ նույնպես շնորհակալ եմ,- Թինան ցուցադրաբար ետ ընկավ աթոռին:- Հերի՛ք է, ի սեր աստծո, հերիք է: Ձեր կեղտոտ փողերն ինձ հարկավոր չեն: Դուք մանրախնդիր, գծուծ, քաղքենի, կոպիտ ու անտաշ մարդիկ եք: Ես տուն-տեղ կծախեմ, օրվա հացին կարոտ կմնամ, բայց Մեծ մամի գերեզմանին քար կդնեմ:

Տիրեց լռություն: Յուրաքանչյուրն իր մտքի հետ է, և այդ ամենը մեկնաբանում է յուրովի ու արդարացնում իրեն:

ՀՈՎԱԿԻՄ- Չեմ հասկանում, այս լաչառը մեզ ինչի՞ տեղ է դրել: Բա հիմա չասե՞մ՝ խնայդրամարկղիդ գրքույկը բեր տեսնեմ: Տղադ ինժեներ է, հարսդ՝ ուսուցչուհի, դու էլ ամիսը 120 ռուբլի թոշակ ես ստանում: Է՜, կրակն ընկա՞, որ Մեծ մամի քրոջ որդին եմ: Եթե ճիշտը վերցնենք, սրանց մեջ ամենահեռավոր բարեկամը ես եմ: Մեծ մամի հոգեհանգստի միսը, հացը և գինին իմ հաշվին էր: Ուղիղ 280 ռուբլի ծախսեցի: Վա՛յ թե կարծում են՝ ռեստորանից ձրի եմ բերել: Լա՛վ, հիմա էլ հաշվենք ձրի, դրությունը փոխվո՞ւմ է: Մինչև ռևիզորի հետ լեզու գտա, վնասը մի կերպ ծածկեցինք, հոգիս եկավ բերանիս հասավ:

ՍԱՀԱԿ - Մեծ մամի դագաղը ես էի պատվիրել. դագաղը 125 ռուբլի : Թագավորական դագաղ էր, ժողովուրդը հայիլ-մայիլ նայում էր: Քելեխին 50 ռուբլի, քառասունքին՝ 60, դրան էլ հիմա գումարած 125 ռուբլի, կդառնա 360 ռուբլի: Ի՜նչ է, ես Ռոկֆելլերի թո՞ռն եմ, թե՞ Մորգանի փեսան: Որքա՞ն մեղր պիտի ծախեմ, որ դառնա 360 ռուբլի: Մեջտեղ ամենից շատ տուժողը ես եմ: Հիմա դառնամ ասեմ՝ Թինա քույրիկ, մի՞տդ է, էն որ մի գիշեր ինձ հյուր չպահեցիք, կասեն՝ Սահակը հիշաչար մարդ է: Եվ շատ էլ լավ կանեն, ախր, ես այստեղ ի՞նչ գործ ունեմ:

ԱՐԹՈՒՐ - Բա ես այստեղ ի՞նչ գործ ունեմ: Կուկուն այսօր ամենապակասը 300 ռուբլի փող կծալի դնի գրպանումը: Կուկուն, այդ գռեհիկ զուռնաչին, այդ դատարկագլուխը... Տեսեք ով է գովում Կուկուին՝ գարեջրավաճառը, թալանչին, գողը, ստից սպորտի վարպետը... Բայց դե այս Թինան էլ մի բարի պտուղ չի, մի թալանչի էլ սա է. այնպես է լաց լինում, կարծես չգիտենք, որ դերասանություն է անում: Քեռուս «Վոլգան» ծախել է տաս հազարով. ուզում էի ութիարյուրով վերցնել՝ չտվեց, և հիմա բարեկամությունից է խոսում:

ԳԵԴԵՈՆ - Գյադանե՞ր, չարչինե՞ր, կոպեկի համար մեռած ցիգաննե՞ր... Սրա՞նք են իմ բարեկամները: Վա՛յ, ես ձեզ նման բարեկամները չունենամ: Չէ, ես սրանց թայը չեմ, տղամարդ եմ, հիմա ցույց պիտի տամ իմ տղամարդությունը: Բոլորին պիտի ստորացնեմ: Մի գերեզմանաքարը որքա՞ն արժե... Գլուխ է, հա՜, գլուխ է, ո՞նց եմ մոռացել. մեր գեղի կողքին հին գերեզմանոց կա, հին գերեզմանաքարեր, հիմա ո՞վ է դրանց տերը: Չէ, ես սրանց մի լավ սյուրպրիզ կանեմ...

- Դե լավ, եկեք վերջացնենք,- Գեդեոնը հանդիսավոր ելավ տեղից:- Մեծ մամի մեծ թոռը ես եմ: Ինչպես տեսնում եք, ես չեմ մեռել, որ Մեծ մամն անհիշատակ մնա: Հաշվեցեք՝ գերեզմանաքարը պատրաստ է: Իմ հաշվին:

- Քո հաշվի՞ն,- Հովակիմը տարակուսանքով շարժեց ուսերը՝ չլինի՞ այս մասխարան մեզ ձեռ է առնում:- Ասացիր՝ իմ հաշվի՞ն:

- Ասացի՝ իմ հաշվին:

- Ուրեմն մենք հե՞չ, մեզ մարդատեղ չե՞ս դնում:

- Իսկ ինչո՞ւ մարդատեղ չպիտի դնեմ. գերեզմանաքարը կլինի մեր՝ բոլորի անունից հիշատակ: Շատ չէ, յուրաքանչյուրդ կցնծաք երեսունական ռուբլի: Չեք ուզում, հարկավոր չի:

- Ա՛խ, Գեդեոն, Գեդեոն,- Թինան համբուրեց Գեդեոնի ճակատն ու արտասվեց:- Ուրեմն Մեծ մամը ճիշտ էր, որ ամենից շատ քեզ էր սիրում,- պահարանից հանեց կոնյակի շիշը, բաժակները, մի տուփ շոկոլադ:- Դե լավ, օտարի տուն չեք եկել, լավ կոնյակ է, Լևոնն է Երևանից բերել, խմեցեք, ձեզ հալալ:

Ասես կախարդական գավազանի մի հարվածով ամեն ինչ փոխվեց, և բոլորն էլ սկսեցին կատակել ու ծիծաղել, սիրով ժպտալ, հիշել Մեծ Մամին, որ աստվածային կին էր:

- Գեդեո՛ն,- Հովակիմն իր բաժակը խփեց նրա բաժակին,- դու նամուսով տղա ես, քո բաց ճակատի, քո ազնիվ հոգու, քո նամուսի ու պատվի կենացը: Ես առաջարկում եմ, որ բոլորդ մինչև վերջ դատարկեք ձեր բաժակները:

- Արժե, իմ արևը, արժե,- ասաց Սահակը,- հալալ լինի, Գեդեոն, քո էդ բաց ճակատի կենացը:

Հետո Գեդեոնն ու Արթուրը հաշտվեցին, նույնիսկ երկու անգամ համբուրվեցին, Հովակիմը Սահակի բաժակն իր ձեռքով լցրեց ու ասաց. «Ախպեր ջան, բարեկամ եղել ենք, բարեկամ էլ կմնանք», տիկին Թինան կոնյակի երկրորդ շիշը դրեց սեղանին ու առաջարկեց Հովակիմի կենացը կանգնած խմել...

* * *

Իսկ շիրմաքա՞րը...

Շիրմաքարը հասարակ շիրմաքար էր, որի ճակատին մի շաբաթ առաջ գրված էր. «Այս է տապան լուսահոգի Հայկազ Ավագյանի, որ որդին է Առաքելի, ծնված 1782 ամի, վախճանյալ 1871 ամի...»:

Հին գրերն ընկան քարտաշ Սիմոնի «հրաշագործ» մուրճի տակ, ջնջվեցին, Սիմոնը Գեդեոնի պատվերով գրեց այսպես. «Այստեղ հանգչում է Մեծ մամը՝ Մարիամ Ավանեսի Մելիքյանը. ծնվել է 1888, վախճանվել է 1972 թվականին: Հիշատակ նրա հարազատներ Գեդեոնից, Թինայից, Լևոնից, Վիոլետայից, Հովակիմից, Ելենից, Մարատիկից, Նունեից, Աշոտիկից և Սահակից»:

Սահակը կարդաց ու դժգոհեց.

- Վա՜յ, ավազակներ, անունս էլ վերջն են գցել:

1980 թ.

ԱՆՃԱՆՈԹ ԱՂՋԻԿԸ

Այդ տարիքի աղջիկները միշտ լուրջ են լինում: Բայց նրա լրջության մեջ ինչ-որ ուրիշ բան կա:

Նա սկզբում ավտոբուսի բաց պատուհանից նայում էր ցորենի կանաչ արտերին, ճամփեզրի դալար բարդիներին և բլուրների վրա ցցված գաճաճ թփուտներին: Գիշերը անձրև էր եկել, արտերի կանաչ թավիշը շողշողում է ծիածանի բոլոր գույներով: Հեռագրալարերը նույնպես ոսկեգույն են, հեռագրասյուներին թառած թռչունները նման են մի կաղապարից դուրս եկած արձանիկների:

Նա նստած է իմ կողքին, պատուհանի մոտ: Մեր ետևում տեղ են գրավել երկու երիտասարդ, մեկը՝ կապույտ պիջակով, մյուսը հագին ունի բաց-նարնջագույն բլուզ: Կապույտ պիջակով տղան անեկդոտներ է պատմում, և որքան ես հասկացա, իր անեկդոտներով ուզում է գրավել կողքիս նստած աղջկա ուշադրությունը:

Նրանց ետևում նստած է քառասունհինգ-քառասունութ տարեկան կարմրաթուշ մի կին: Տեղը երևի այնքան էլ հարմար չէր, տեղափոխվեց իմ դիմացի նստատեղին, պայուսակից հանեց թարմ բուլկիներ... և, աստվա՜ծ իմ, նա այնպես էր խժռում, կարծես առնվազն մի շաբաթ քաղցած է եղել: Երբ կապույտ բլուզով տղան հերթական անեկդոտն էր պատմում ինչ-որ անհաջողակ սիրահարների մասին, կարմրաթուշ տիկինը, որ արդեն վեցերորդ բուլկին էր ոչնչացրել, այնպես ծիծաղեց, առաջին տեղերում նստածները գլուխները զարմացած շրջեցին: Կապույտ պիջակով տղան արհամարհանքով նայեց նրան, և նրա հայացքը կարծես ասում էր.

«Ում համար եմ պատմում, տեսեք ով է ծիծաղում»: Տղան ընկած տրամադրությամբ շուռ եկավ, գլուխը հանեց պատուհանից և երկար մազերը տվեց քամուն:

Մենք բավականին ճանապարհ ենք անցել: Ավտոբուսի անիվների տակ ասֆալտը ճլճլում է, ինչպես յուղը՝ թավայի մեջ: Պատուհանից երևում են լեռների ձյունածածկ գագաթները, ներքևում՝ մթամած անտառը: Ես ուզում եմ ծխել և խնդրում եմ հարևանուհուս՝ տեղներս մի քանի րոպեով փոխել: Վառում եմ սիգարեթը, ծուխը բաց թողնում պատուհանից: Այստեղ իսկապես զով է, աղջկան առաջարկում եմ գրավել իր տեղը, նա թեթևակի շիկնում է.

- Դե, ոչինչ, ինձ համար այստեղ էլ վատ չէ, եթե ուզում եք...

Ի՞նչ կարող ես անել, եթե նա հարգում է իմ ծերմակ մազերը, նշանակում է՝ կարիք չկա երկրորդ անգամ խնդրել: Հերթական կայարանում մեր ավտոբուսը կանգնում է: Ավտովարորդը ճաշարան է շտապում, նրան հետևում են ուղևորները: Իսկ կարմրաթուշ կինը տեղից շարժվելու միտք չունի, պատուհանից հանում է գլուխը, մի եփած հավ գնում, ձեռքում ծանրութեթև անում և ասում.

- Սրա գինը շատ լինի, շատ լինի՝ երեք ռուբլի, իսկ այդ սպեկուլյանտն ինձնից հինգ ռուբլի պոկեց: Որտե՞ղ է մեր միլիցիան, որտե՞ղ է դրուժիննիկը: Օրը ցերեկով թալանում են մարդկանց: Անխիղճնե՜ր:

Երկար ճանապարհը հոգնեցրել է, ուզում եմ դուրս գալ ավտոբուսից, աղջիկը մեկնում է ինձ մի թղթադրամ:

- Խնդրում եմ, եթե կարելի է, ինձ համար մի շիշ ջուր բերեք:

Կարմրաթուշ կինը շուռ է գալիս, ակնհայտ չարությամբ նետում.

- Տեսեք, է՜, մայրիկի սիրունիկ բալիկը չի ուզում իջնել ավտոբուսից, և առանց ամաչելու ուրիշներին է շահագործում: Ա՛յ աղջիկ, ի՞նչ է, դու ոտքե՞ր չունես:

Աղջկա դեմքը կարծես ցավից կծկվում է, շուրթերը դողում են: Նրա աչքերում աղերսանքի պես մի բան կա: Ո՛չ, նա չի ուզում պատասխանել, և ես նրա փոխարեն պատասխանում եմ.

- Ներեցեք, տիկին, ուրիշների գործերին խառնվելն այնքան էլ լավ բան չէ: Խորհուրդ չեմ տալիս:

Բուֆետից գնում եմ երեք շիշ հանքային ջուր, մտնում ավտոբուս: Կարմրաթուշ տիկինն արդեն խժռել է հավը, հիմա էլ թարմ վարունգ է խրթխրթացնում: Աղջկա և ինձ համար երկու շիշ եմ բացում, ճամպրուկից հանում խաշած միս, հաց ու պանիր: Աղջիկը նույնպես բացում է իր ճամպրուկը, հանում տապակած ձուկ և երկու բաժակ:

- Հիմա կարգին քեֆ կանենք,- ասում եմ:

Տիկինը ցուցադրաբար շուռ է տալիս դեմքը:

Մենք նստել ենք մի ավտոբուսում, ճաշում ենք միասին և անծանոթներ ենք: Ես չգիտեմ, թե ով է այդ աղջիկը, ուսանողուհի՞ է, թե՞ ինչ-որ հիմնար-

կում մեքենագրուհի կամ քարտուղարուհի: Պարզապես լուրջ աղջիկ է, կարող ես հետը զրուցել լուրջ հարցերի շուրջ, կատակել ու ծիծաղել չափավորության սահմաններում: Բայց մենք հիմա ծանոթներ ենք ավտոբուսում և այն էլ պատահական ծանոթներ: Երեկոյան տեղ կհասնենք, նա իր ճանապարհով կգնա, ես՝ իմ: Գուցե վաղը կամ մյուս օրը փողոցում պատահաբար հանդիպենք և իրար բոլորովին չճանաչենք:

Ուղևորները ներս են մտնում: Կապույտ պիջակով տղան երկու մեծ փունջ մորի էր գնել, մի փունջը մեկնում է աղջկան.

- Վերցրեք, խնդրեմ, այս կողմերի մորին քաղցր է:

- Իսկ փունջը որքա՞ն արժե:

- Ինձ համար՝ ձրի:

- Այդ դեպքում թողեք ձեզ մնա:

Բաց-նարնջագույն բլուզով տղան ժպտում է.

- Մեկ-զրո:

Կարմրաթուշ տիկինը նորից չարացած նայում է աղջկան:

- Ա՛յ աղջիկ, դու էլ ի՞նչ ես ձևեր թափում, տալիս է՝ վերցրու:

Տղան ուզում է հաշիվը հավասարեցնել և դիմում է իմ օգնությանը.

- Քեռի, ասացեք՝ թող վերցնի: Ես անկեղծ սրտով... Խնդրում եմ, ուրիշ բան չմտածեք:

Այ թե լավ բռնեցրեց՝ քեռի՞: Իսկ գուցե՝ հայրիկ կամ պապիկ: Եթե այս գեղեցիկ աղջիկը չլիներ, նա երբեք ինձ քեռի չէր անվանի: Բայց ի՞նչ կարող ես անել, քառասուն տարեկանները միշտ էլ քսան տարեկանների համար քեռի են:

- Խնդրում եմ, քեռի,- տղան իսկապես խնդրում է, և ես քեռու իրավունքով հարցնում եմ.

- Քանիսո՞վ եք գնել:

- Դատարկ բան է, քեռի, կոպեկներ:

- Կայարաններում, բալիկ ջան, կոպեկներով մորու այսպիսի փնջեր չեն, վաճառում:

Նա իմ «բալիկ ջանն» ընդունում է այնպես, ինչպես երես առած երեխան կընդունի քեռու ապտակը: Ես նրա բուռն եմ խոթում մեկ ռուբլանոցը, մորու փունջը տալիս աղջկան: Բաց-նարնջագույն բլուզով տղան, որ հավանաբար սպորտսմեն է, հաշվում է.

- Երկու-զրո, այն էլ՝ տասնմեկ մետրանոցով:

Ավտոբուսը ծանր փնչոցներով հաղթահարում է վերջին վերելքը: Կապույտ պիջակով տղան գրպանից հանում է խաղաթղթերը, խառնում և ընկերոջը հրավիրում խաղի: Վեց բուլկի և մի հավ խժռող տիկինը նրան ցույց է տալիս իր կողքի ազատ տեղը:

- Եկեք միասին խաղանք:

Տղան երեք անգամ տանուլ է տալիս, նրա մրցակցուհին քրքջում է:

- Դե լավ, դե լավ, երեք անգամ դուռակ դարձար, դա էլ է հերիք:

Սպորտսմենը գլուխն առանց ամսագրից կտրելու, խաղավարի սառնասրտությամբ հաշվում է.

- Հաշիվը դարձավ 3:0:

Ավտոբուսը թեթև սահում է ուղիղ ու հարթ, ասես տողաշարով գծած ճանապարհով: Երկինքը բաց կապույտ է, օդը հագեցած ճամփեզրի փշատենիների բուրմունքով: Կարմրաթուշ տիկինը հենվել թիկնակին, քնել է կուշտ կերած երեխայի քնով, սպորտսմենը ամսագիր է կարդում, կապույտ պիջակով տղան լուռ նայում է պատուհանից: Առաջին շարքում նստած շիկահեր մարդը, որ հավանաբար մեղվաբույծ է, իր տարիքն առած հարևանուհուն պատմում է, թե ինչպես կարելի է մի տարում միևնույն մեղվափեթակից երեք անգամ մեղր ստանալ: Չնայած տարեց կինը նույնիսկ դեմքի շարժումով չի հակաճառում նրան, բայց մեղվաբույծը շարունակ կրկնում է. «Է՜, տեսնո՞ւմ եք, չեք հավատում»:

Աղջիկը մորու փունջը ինձ հետ կիսում է, և մենք հիմա զրուցում ենք որպես մոտիկ ծանոթներ: Ես նրան պատմում եմ իմ փոքրիկ տղայի մասին, որ սիրում է քանդել իր խաղալիքներն ու նորից հավաքել: Իսկ մի անգամ, երբ քանդելու բան չէր մնացել, աչքը գցել է հեռուստացույցին ու հարցրել. «Հայրիկ, իսկ հեռուստացույցը ե՞րբ պիտի փչանա, որ մի լավ քանդենք»:

* * *

Կայարանում կայարանի աղմուկն է: Կարմրաթուշ տիկինն իր երկու խոշոր սնդուկներ հիշեցնող ճամպրուկները դրեց մայթեզրին, սպորտսմենը և կապույտ պիջակով տղան կանգնեցին բարդու շվաքում, իսկ աղջիկն ուշանում է: Ես մոտեցա, նա կանգնած էր դռան մոտ. նայեց ինձ ու շշնչաց մի տեսակ մեղավոր.

- Իսկ գուցե օգնեք, ուզում եմ իջնել:

Կարմրաթուշ տիկինը ծամածռեց դեմքն ու՝

- Տեսեք, է՜, խնդրում է օգնել... Ա՛յ աղջիկ, ի՞նչ է, դու ոտքեր չունե՞ս:

Դա ոչ ոք չէր սպասում: Աղջիկը նայեց նրան և ճչաց.

- Տիկին, չունեմ, պրոթեզ է, ի՞նչ եք ուզում ինձնից:

Նա երեխայի պես ծածկեց դեմքն ու սկսեց հեկեկալ: Սպորտսմենն ու կապույտ պիջակով տղան կարծես տեղում քարացան, մեղվաբույծը մոտեցավ կարմրաթուշ տիկնոջը և գլուխն օրորեց.

- Տիկին, ինչպե՜ս չեք ամաչում:

ՇԱՓԵՐԸ

Լեոնիդ Ենգիբարյանի պայծառ հիշատակին

Ձեռնածուն ուրիշ նոր ֆոկուս ցույց տվեց: Նա ծերմակ թաշկինակը փաթաթեց ծերմակ թղթի մեջ, թափահարեց օդում, փոքրիկ փաթեթի միջից մի վարդագույն թաշկինակ ընկավ: Վարդագույն թաշկինակը փաթաթեց՝ կապույտ թաշկինակ հանեց, կապույտը փաթաթեց՝ ոչ մի բան չհանեց:

- Հայրի՛կ,- առաջին շարքում նստած փոքրիկ շիկահեր տղան բռնեց հոր թևը, ականջին շշնջաց,- ես ծաղրածու եմ ուզում:

- Որ քեզ խելոք չպահես, ծաղրածուն կխռովի,- պատասխանեց հայրը:- Հապա մի լավ նայիր, տես ֆոկուսնիկ քեռին ինչ է անում:

Երկու տղամարդ ներս բերեցին երկու մեծ արկղ, ձեռնածուն ձեռքով մոտ կանչեց անկյունում կանգնած բաց սրունքներով աղջկան, պառկեցրեց դարչնագույն արկղի մեջ, կարմիր շորով ծածկեց: Հաղթ ուսերով տղամարդը թեթև փետուրի պես մի ձեռքով վեր բարձրացրեց արկղը, պտտեցրեց ու դրեց գետնին: Ձեռնածուն վերցրեց կարմիր ծածկոցը, հանդիսատեսներին ցույց տվեց դատարկ արկղը և ապա մոտեցավ, բացեց երկրորդ արկղի կափարիչը: Երկրորդ արկղից թռավ բաց սրունքներով աղջիկը, ժպտաց հանդիսատեսներին:

- Հայրիկ, իսկ որտե՞ղ են ծաղրածուները,- հարցրեց տղան:- Որտե՞ղ են կարմիր, կանաչ, կապույտ թասակավոր ծաղրածուները:

- Եթե խելոք չմնաս, ես քեզ համար հեծանիվ չեմ գնի,- ասաց հայրը:

- Ես հեծանիվ չեմ ուզում, ծաղրածու եմ ուզում:

- Հապա նայիր, առյուծներն են գալիս:

Ժոկեյի կանաչ տաբատով, երկար մազերով, երկարաճիտ կոշիկներով աղջիկը մտրակը թափահարելով ներս բերեց երկու առյուծի: Մտրակի շրխկոցների տակ առյուծները խեղճացան ու պառկեցին գետնին: Աղջիկը վառեց բարձր գմբեթից կախած օղակը, թափահարեց մտրակն ու գոչեց.

- Ալե՛յ, հո՛պ...

Առյուծներն իրար ետևից ցատկեցին հրե օղակների միջով: Նույն բանը կրկնվեց երեք անգամ, միայն այն տարբերությամբ, որ վերջին ցատկի ժամանակ առյուծներն ավելի բարձր էին մռնչում:

Այնուհետև եկավ փիղը, աղջկա հրամանով չոքեց, պառկեց, կանգնեց զույգ ոտքերի վրա ու կնճիթը թափահարեց: Ուղտերն իրենց բրդոտ սապատները ճոճելով, պտտվեցին կլոր հարթակում, արջերը մրթմրթալով հեծանիվ քշեցին, շները վազեցին ֆուտբոլի գնդակի ետևից, նապաստակն ու գայլը պառկեցին կողք-կողքի...

Տղայի համար առյուծները, ուղտերը, արջերը, գայլն ու նապաստակը խրտվիլակներ էին, բայց, այնուամենայնիվ, փիղը մեղք էր, որովհետև չոքում, զույգ ոտքերի վրա կանգնում էր մեծ դժվարությամբ, և ո՞վ գիտե, գուցե լա՞ց էր լինում:

- Ես ծաղրածու եմ ուզում, իսկական ծաղրածու,- գոչեց տղան և դահլիճը ծիծաղեց:

- Ամոթ է,- սաստեց հայրը,- ես քեզ այլևս կրկես չեմ բերի:

- Բայց ես ծաղրածու եմ ուզում,- նա թախանձանքով նայեց հոր դեմքին և ուռցրեց այտերը:- Որտե՞ղ են ծաղրածուները:

- Քեզանից լավ ծաղրածո՞ւ,- իբր սրամտեց հայրը:- Տզտզանի մեկը:

Երաժշտությունը թնդաց, նույն պահին հայտնվեցին օդային մարմնամարզուհիները՝ փայլփլուն, մարմիններն ամուր սեղմած մայկաներով ու կիսավարտիքներով, կախվեցին օղակներից, սկսեցին ճոճվել օդում՝ բարձր գմբեթի տակ: Հզոր յուպիտերների լույսի ներքո նրանք գեղեցիկ էին, շլացուցիչ, գայթակղող ու եթերային: Վարդագույն մայկայով ու կիսավարտիքով աղջիկը ակրոբատիկ ցատկեր կատարեց, գալարվեց օձի պես, տարածեց վարդագույն թևերը, նազանքով խոնարհվեց հանդիսատեսներին:

- Լավ է, չէ՞,- հայրը շոյեց տղայի գլուխը:

- Չգիտեմ,- տղան շարժեց ուսերը:- Ես ծաղրածու եմ ուզում:

- Դու քո ծաղրածուներով մեզ սպանեցիր: Խնդրեմ, ահա նրանք գալիս են:

Ծաղրածուները երկուսն էին՝ մեկը կանաչ, ծոպավոր թասակով, բավականին մեծ-մեծ կոշիկներով և տաբատի նեղ փողքերով, մյուսը՝ երկար, նարնջագույն քթով, երկփեղկված ճաղատով ու պոմիդորի պես կարմիր այտերով: Ճաղատը ապտակեց ծոպավոր թասակավորին, ծոպավոր թասակավորը գրպանից հանեց մուրճը, խփեց նրա գլխին, ճաղատից ճարճատելով կայծեր թռան: Դահլիճը ծիծաղեց: Ճաղատը հարձակվեց նրա վրա, պոկեց քիթը, և որովհետև դա քիթ չէր, այլ իսկական գազար, դանակով բաժանեց երկու հավասար մասի, կեսը վերադարձրեց տիրոջը, կեսն ինքը կերավ: Դահլիճը ծիծաղեց:

Ճաղատը գրպանից հանեց օղու թե լիմոնադի շիշը, պարունակությունը դատարկեց թասակավորի կոկորդի մեջ, մատով սեղմեց նրա ճակատը, թասակավորի զույգ ականջներից ջուր շատրվանեց:

Դահլիճը ծիծաղեց:

Ճաղատ ծաղրածուն նայեց, տեսավ առաջին շարքում, հոր կողքին նստած շիկահեր մանչուկին, մոտեցավ, գրպանից մի կարմիր խնձոր հանեց, մեկնեց նրան ու ասաց.

- Բալի՛կ, սա այն հրաշք խնձորներից է, որ միշտ հեքիաթների վերջում ընկնում է երկնքից: Հապա՛ փորձիր:

Տղան գիտեր, որ դա իսկական խնձոր չէր, այլ ծաղրածուի հերթական ֆոկուսն էր, պատասխանեց.

- Ծաղրածո՛ւ, չեմ ուզում, հեքիաթների խնձորները համ չունեն:

Դահլիճը և՛ ծիծաղեց, և՛ ծափահարեց: Ծափերն ուղղված էին շիկահեր տղային, ծիծաղը՝ ծաղրածուին:

* * *

Նա առավոտյան պտտվեց կրկեսի շենքի շուրջը: Ջրավազանի մոտ կանգնած անծանոթ մարդը նկատեց ու հարցրեց.

- Պստիկ, ո՞ւմ ես որոնում:

- Ես ուզում եմ խոսել ծաղրածուի հետ,- մեծավարի պատասխանեց տղան:

- Ծաղրածուները շատ են:

- Գիտեմ,- ասաց տղան:- Ես ուզում եմ խոսել այն ճաղատ ծաղրածուի հետ, որն ինձ երեկ ուզում էր հյուրասիրել հեքիաթի խնձորով:

- Ահա թե ի՜նչ,- անծանոթը մեկնեց ձեռքը:- Դե, ուրեմն, նախ և առաջ ծանոթանանք: Անտոն Պլատոնովիչ: Վաստակավոր արտիստ:

Տղան նույնպես ասաց իր անուն-հայրանունը ու հարցրեց.

- Իսկ ինչո՞ւ դուք ճաղատ չեք:

- Ես միայն արենայում ելույթների ժամանակ եմ ճաղատանում: Իսկ դու ինչի՞ մասին ես ուզում խոսել ինձ հետ:

- Ես ուզում եմ ծաղրածու դառնալ: Դրա համար ի՞նչ է հարկավոր:

- Հումորի զգացում, տղաս: Իսկ դու այդ մեկն արդեն ունես, երեկոյան տեսանք:

- Բայց ես ուզում եմ մե՜ծ, շա՜տ մեծ ծաղրածու դառնալ:

- Դա, իհարկե, դժվար է, բայց ոչ անհնարին:

- Ես ուզում եմ, որ մարդիկ չծիծաղեն ծաղրածուների վրա:

- Չծիծաղեն ծաղրածուների վրա՞,- ծաղրածուն լրջացավ:- Բայց դա ինչպե՞ս հասկանալ:

- Ծաղրածուն մարդ է, չէ՞ :

- Իհարկե, մարդ է:

- Ծաղրածուն ուզում է, որ ամենքը ծիծաղեն վատ մարդկանց վրա:

- Ահա թե դու ինչպիսինն ես, շեկլիկ,- ծաղրածուն քնքշանքով շոյեց նրա մազերը:- Այդքան պստլիկ ու այդքան մեծ երազներ: Զարմանալի է: Իսկ ո՞վ գիտե, գուցե մի օր մենք հանդիպենք:

* * *

Որտե՜ղ ասես, որ չտարան նրան ճանապարհները. Մոսկվայից՝ Վարշավա, Հեռավոր Արևելքից՝ տոթակեզ Ուզբեկստան, Պրահայից՝ Լոնդոն, Բոմբեյից՝ Վաշինգտոն, Հռոմից՝ Լյուքսեմբուրգ... Որտե՜ղ ասես, որ նրան չծափահարեցին ու չդրվատեցին նրա անզուգական արվեստը՝ կրկեսի նոր աստղ, աշխարհի ամենազարմանահրաշ կախարդը, մնջախաղի ամենամեծ վարպետը…

Երբ կլոր դահլիճում մարեցին ծափերի տարափները, նա հոգնած ու գոհ մտավ գրիմանոց, ծաղկեփնջերը դրեց հարդասեղանին ու ընկղմվեց բազկաթոռի մեջ: Ո՞վ էր այդ ծերունին, որ նստել առաջին շարքում, այդպես եռանդով ծափահարում էր իրեն: Զարմանալի է, ծաղիկները սովորա-

բար աղջիկներն ու ջահել կանայք են նվիրում արտիստներին, և հանկարծ այդ ծերուկը մոտեցավ, կարմիր վարդերի մի փունջ մեկնեց ու ասաց. «Շնորհակալություն, որդի՛ս...»:

Նա վառեց հանգած սիգարետը, փակեց աչքերը: Շնորհակալություն, որդիս: Ձայնը կարծես ծանոթ էր, հեռուներից, շա՜տ հեռուներից էր գալիս: Որտե՞ղ է տեսել այդ կապույտ աչքերը, որ ժպտում են այդպես ջինջ ու խորհրդավոր:

- Ներեցեք, ես ձեզ խանգարեցի: Դռան մոտ կանգնած է ինքը՝ առյուծաբաշ ծերունին:

- Խնդրեմ, հայրիկ,- ցույց տվեց նրան դիմացի բազկաթոռը:- Նստեցեք: Ես նոր, հենց հիմա մտածում էի ձեր մասին: Դուք ինձ կարմիր վարդեր նվիրեցիք,- դեմքով ցույց տվեց վարդերի փունջը:

- Տարօրինակ է, չէ՞,- ծերունին թեթևակի խոնարհեց գլուխը:- Ես Ձեզ մոտ եմ եկել մի հարցով:

- Լսում եմ, հայրիկ:

- Գիտե՞ք, ես քսանհինգ տարի առաջ հանդիպեցի մի հետաքրքիր մանչուկի: Դա Կիսլովոդսկում էր: Նա ինձ ասաց՝ ուզում եմ մարդիկ չծիծաղեն ծաղրածուների վրա:

Արտիստը վառեց մեծ լապտերը, նայեց ծերունու դեմքին:

- Սպասեցեք, հայրի՛կ, դուք այն ճաղատ ծաղրածո՞ւն չեք... Եթե չեմ սխալվում՝ Անտոն Պլատոնովիչը...

- Աստվա՜ծ իմ, հիշում եք... Ինչ լավ է, որ հիշում եք:

- Իմ սիրելի բարեկամ,- նա գրկեց ծերունուն, պտտեցրեց, նստեցրեց բազմոցին, մոտ քաշեց աթոռը:- Վաղո՞ւց եք թողել կրկեսը:

- Վաղո՜ւց,- խոր հոգոց քաշեց ծերունին:- Ես այդպես էլ չկարողացա գտնել այն, ինչ որ դուք էիք երազում: Հանդես եկա առանց դիմակի՝ չստացվեց: Դիմակով՝ չստացվեց: Մոսկվայում առաջին անգամ տեսա ձեր ելույթը ու հիշեցի այն շիկահեր տղային, որին այսօր աշխարհն է ծափահարում: Ձեր մնջախաղը հրաշք է, տղաս: Շնորհակալություն:

Ջահել արտիստը բռնեց ծերունու ձեռքն ու մտածեց. «Իսկ ես վաղը նորից կգնամ ծափեր հավաքելու: Ո՞վ գիտե, գուցե գտնեմ այն ծափերը, որ իր ամբողջ կյանքում որոնել է այս բարի ծերունին ու չի գտել»:

ԼԵՌՆԱԿԵՐՏ (վեպ)

Ուրեմն Լեռնակերտը նշանավոր քաղաք է, զարմանալի մի հրաշք, դարաբաղյան գլուխգործոց, անկրկնելի երգ-երգոց: Ինքը՝ Գալիֆե Գուգուշը, այս ուրախ լեռնակերտցին կարող է հաստատել, որ Լեռնակերտը ոչ միայն նշանավոր, այլև մեծագույն քաղաք է: Ինչպե՞ս կարելի է անտեսել աղյուսագործարանատեր Մամբրե Խաբարդանովիչին, որ չնայած ոչ մի կուսակցության չէր հարում, բայց դարաբաղցու համառությամբ ձգտում էր Լեռնակերտը դարձնել ինդուստրիալ քաղաք: Եվ դեռ չենք խոսում այն մասին, որ Գալիֆե Գուգուշն իր բաղնիս-համամով փորձում էր եվրոպականացնել Լեռնակերտը, իսկ Դուքան Սեդրակը, չնայած դեմ չէր առաջադիմական այդ քայլին, սակայն իր արարքներով երբեմն Լեռնակերտը պահում էր ասիական մակարդակի վրա...

ԼԵՌՆԱԿԵՐՏ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինչպես աշխարհի բոլոր նշանավոր քաղաքները, այնպես էլ Լեռնակերտն ունի իր կենսագրությունը: Այստեղ հարգարժան Սիմոն Սարխոշյանցը (նա ինքը՝ Վարժապետ Սիմոնը) կարող է ինձ հակաճառել, որ Լեռնակերտը ոչ մի ծննդյան վկայական չունի, հետևապես չի կարող նշանավոր քաղաք կոչվել: Սակայն Լեռնակերտն ինչո՞ւ նշանավոր չկոչվի, երբ նա աշխարհին տվել է Սիմոն Սարխոշյանցի նման խոշոր գլուխ: Ի՞նչ անենք, թե այդ խոշոր գլուխը ծնվել է ինչ-որ գյուղում: Բայց չէ՞ որ նա իր գործունեությունը ծավալել է հենց Լեռնակերտում, և եթե ճիշտը կուզեք իմանալ, ինքն է եղել մտքի այն հզոր կենտրոնը, որի շուրջն են պտտվել այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են պ. Սիլվեստը, Առուստամ Լալախանբեկյանը, Աղամ Բիրղամիչը, խմբապետ Խորենը, վաղամեռիկ Ապետնակ Մելիք Տեր-Աթաջանբեկնազարյանը, Գորոդովոյ Անտոնը և ինքը՝ Դուքան Սեդրակը: Սրանք այն փայլուն արբանյակներն են, որոնք նույնիսկ իրենց փայլը կորցնելուց հետո, շարունակում են պտտվել այդ մտքի կենտրոնի շուրջը և սնվել նրա ճառագայթներից:

Թող ինձ ներեն Ուստա Ճատուրը և Նալբանդ Աթունը. ես ինձ թույլ եմ տալիս հայտարարելու, որ իմ այս վեպը կկորցներ իր համն ու հոտը, եթե չլիներ Սիմոն Սարխոշյանցը: Նա իմ վեպի աղն է, իսկ առանց աղի կերակուրը համ չունի: Եվ եթե Սիմոն Սարխոշյանցը գտնում է, որ Լեռնակերտը նշանավոր քաղաք չէ, դա գալիս է ոչ թե նրա հոգու չարությունից, այլ բացարձակ համեստությունից:

Ուրեմն Լեռնակերտը նշանավոր քաղաք է, զարմանալի մի հրաշք, դարաբաղյան գլուխգործոց, անկրկնելի երգ-երգոց: Ինքը՝ Գալիֆե Գուգուշը, այս ուրախ լեռնակերտցին կարող է հաստատել, որ Լեռնակերտը ոչ միայն նշանավոր, այլև մեծագույն քաղաք է: Ինչպե՞ս կարելի է անտեսել աղյուսագործարանատեր Մամբրե Խաբարդանովիչին, որ չնայած ոչ մի կուսակցության չէր հարում, բայց դարաբաղցու համառությամբ ձգտում էր Լեռնակերտը դարձնել ինդուստրիալ քաղաք: Եվ դեռ չենք խոսում այն մասին, որ Գալիֆե Գուգուշն իր բաղնիս-համամով փորձում էր եվրոպականացնել Լեռնակերտը, իսկ Դուքան Սեդրակը, չնայած դեմ չէր առաջադիմական այդ քայլին, սակայն իր արարքներով երբեմն Լեռնակերտը պահում էր ասիական մակարդակի վրա:

Գիտեմ, ինձ կլինեն մեղադրողներ, և դա օրինաչափ է: Եղել են այլ նշանավորներ, որոնց անունները չեմ հիշատակել իմ այս վեպում: Բայց հարց է ծագում՝ որևէ խնջույքի, հարսանքի կամ քելեխի ժամանակ հնարավո՞ր է

սպառել բոլոր կենացները: Եթե նույնիսկ գինին էլ բավականացնի, միևնույն է, սեղանակիցները չեն կարող 20-րդ կենացից հետո բաժակ բարձրացնել: Ուրեմն ամեն տեղ և ամեն ինչի մեջ կարևորը չափն է,- կասեր Լեռնակերտի անփոխարինելի թամադա Մուշեղ Չանչախովը:

Եթե Լեռնակերտը նշանավոր քաղաք է, ապա իր մեջ պիտի կրի ղարաբաղյան ոգին, և այդ ոգին, ինչպես սաղմը արգանդի մեջ, անպայման պիտի ձևավորվի, ստանա միս ու արյուն: Բանաստեղծ-բժիշկ-փիլիսոփա Կարկազ Լեռնակերտցին իր աշխատություններում բավականին քրտինք է թափել և ի վերջո այդպես էլ չի կարողացել իր սկսած գործը հասցնել վախճանի, այսինքն ո՞րն է Լեռնակերտի ոգին, այն իրոք ղարաբաղյա՞ն է, թե՞ պարզապես բոլորովին նոր ոգի է, որ ձևավորվել է ինքնիրեն: Այստեղ է, որ Սիմոն Սարխոշյանցը մատերիալիստական դիրքերից ապացուցեց, որ Լեռնակերտի ոգին զուտ ղարաբաղյան է, քանզի նրա բնակիչները ծագումով, միս ու արյունով, չափ ու ձևով, իրենց ղարաբաղյան կոշտ ու հաճելի բարբառով ղարաբաղցիներ են:

Լեռնակերտը նշանավոր է իր ղարաբաղյան ոգով: Սա աքսիոմա է, իսկ աքսիոման, ինչպես հայտնի է երկրաչափության դասագրքերից, ապացուցման կարիք չի զգում: Եվ, վերջապես, կա Ղարաբաղի բարբառ, որ լեզվաբանները երկար տարիներ ուսումնասիրել, գլուխ են ճաքացրել և ապացուցել, որ այդ բարբառը զուտ ղարաբաղյան է, հետևաբար Լեռնակերտն իր ոգով ղարաբաղյան հրաշք է:

Ուրեմն՝ հազար անգամ ոչ, բյուր հազար անգամ ոչ, Լեռնակերտը նշանավոր քաղաք է, ինչպես Աթենքն ու Հռոմը, Փարիզն ու Լոնդոնը, Նեապոլն ու Բաղդադը... Նշանավոր է իր զարմանալի համեստությամբ և ղարաբաղյան իր մեծահոգությամբ, նրանով նաև, որ հավակնություններ չունի նմանվելու եվրոպական նշանավոր քաղաքներին, ուզում է լինել ինքնատիպ, յուրովի:

Եթե Լեռնակերտը չլիներ նշանավոր քաղաք, ես ինչպե՞ս կհանդգնեի սույն վեպն ավարտելուց հետո, նորից գրիչ վերցնել ու գրել Առաջաբան: Ինչպես նշանավոր մարդկանց, այնպես էլ նշանավոր քաղաքների մասին գրված վեպերը չեն կարող չունենալ Առաջաբան: Առաջաբանը վեպի համար նույնն է, ինչ քարավանի համար նառը, գնացքի համար՝ շոգեքարշը, խմորի համար՝ թթխմորը, մերանը՝ մածնի համար և այլն:

Եվ թող իմ սիրելի հայրենակիցները չկարծեն, թե մեր նշանավոր քաղաքի մասին սույն վեպը գրել եմ միայն նրա համար, որպեսզի ես էլ Լեռնակերտի հետ մնամ նշանավոր ու անմահ: Օ՜, ո՛չ, ինձ համար հաճելի է ամբողջ կյանքում մնալ Լեռնակերտի փառքի ստվերի տակ: Դա ինձ համար կլինի շատ մեծ պատիվ:

Եվ, վերջապես, սա իմ մերած մածունն է, քաղցր դուրս կգա թե թթու՝ թողնում եմ ընթերցողի դատին: Եթե մի քանիսին դառնացրել եմ, ես ոչ մի մեղք չունեմ. գրել եմ այն, ինչ գիտեմ, ինչ եղել է...

1980 թ. օգոստոս

ՄՈՒՏՔՆ ԼԵՌՆԱԿԵՐՏ

Այդ թվականին Լեռնակերտում կար վաթսուն ծուխ, մի զորանոց՝ իր պարապ-սարապ կազակներով, մի եկեղեցի, մի քահանա, որ կոչվում էր Տեր-Վասիլի, մի ժամկոչ Մանաս: Տեր-Վասիլին «Աստվածաշունչն» այնպես արագ էր կարդում, որ թվում էր, թե հայհոյում է աստծուն:

Նա յուրաքանչյուր հավատացյալից մի փարչ օղի էր վերցնում և աղոթում նրա հոգու փրկության համար՝ «Մեղայ ամենասուրբ երրորդութեանն հոր և որդվոյ հոգվոյն սրբոյ»:

Իսկ շտաբս-կապիտան Իոնես Խասապետովը երկարահասակ, սրած բեղերով, թաթարի նեղ աչքերով մի մարդ, որ ազգությամբ մթամ հայ էր, բայց հայերեն չէր խոսում, ամեն օր կռվում էր կնոջ՝ Կատինկայի հետ և նորից հաշտվում:

Ամռան վերջերին գուբեռնատն ու պրիստավը եկան Լեռնակերտ: Կապիտան Խասապետովը նրանց պատվին լավ քեֆ սարքեց:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Իսկ այդ տարիներին Լեռնակերտում ապրում էին երեք Ծատուր, երեք Աստվածատուր, երեք Սարգիս, երեք Աթուն, մի Պողոս, մի Սեդրակ, մի կոշկակար Ալեքսան: Երեք Ծատուրներից միայն մեկն էր Ուստա Ծատուր, մնացածները շարքային ծատուրականներ էին, և նրանց համար Ուստա Ծատուրի խոսքն օրենք էր: Աթուններն էլ իրենց Ուստա Աթունն ունեին: Ուստա Ծատուրը դարբին էր, Ուստա Աթունը՝ պայտառ: Կոշկակար Ալեքսանին սկզբում ոչ ոք չէր համարձակվում «ուստա» անվանել: Դե փինաչուց ի՞նչ ուստա: Ավագ Ծատուրը մի գեղեցիկ օր զննեց նրա կարած չստերը, ժպտաց բեղի տակ ու ասաց. «Հալալ լինի, Ալեքսան, հիմա ուստա ես»:

Ալեքսանը Լեռնակերտի գրագետ մարդն էր, «Մշակ» էր կարդում, խնջույքներում ու հարսանիքներում «Դուն էն գլխեն» էր երգում, շոշափում քաղաքական կարևոր հարցեր, մեկ-մեկ էլ Տեր-Վասիլիին ձեռ առնում: Տեր-Վասիլին չէր վիրավորվում, չէր հայհոյում, ընդհակառակը, նա գտնում էր, որ Ալեքսանը չափազանց խելոք մարդ է, և այդ խելոք մարդու տեղը թագավորի պալատն է: Այդ նույնը հաստատում էր նաև Դուքան Սեդրակը և ապա ձայնը իջեցնում. «Ալեքսանի գլխում ծուռ գաղափարներ ու վտանգավոր մտքեր կան»:

Ալեքսանը լեռնակերտցիների աչքում բարձրացավ նաև իր «ծուռ» գաղափարներով ու վտանգավոր մտքերով, իր «Դուն էն գլխեն»-ով ու քաղաքական հարցերով, իր ուրախ կատակներով ու զվարթ ծիծաղով: Տեր-Վասիլին հաճախ էր լսում նրա՝ «Դուն էն գլխեն»-ը, և չնայած ոչինչ չէր հասկանում, շոյում էր շեկ մորուքն ու ասում. «Մալադեց Ալեքսան, տի նաստայաշչի պեվեց»:

Կապիտան Խասապետովը լավ գիտեր, որ Տեր-Վասիլին փարաջայի գրպանում օղու շիշ է պահում, լավ կոնծելուց հետո հայհոյում աստծուն, բայց լռում էր, որովհետև ինքն էլ պակաս կոնծողներից չէր: Նա մի անգամ այնքան կոնծեց, որ ինքն էլ չիմացավ, թե ինչպես նետվեց փողոց, հանեց

հեծելազորայինի երկար թուրն ու գոռաց. «Ձամնո՜յ, օռլի...»: Նույն պահին ցանկապատի ետևից դուրս պրծավ Նալբանդ Աթունի Օռլի անունով շունը, բռնեց հարբած կապիտանի շալվարից ու քաշեց: Դա բավական էր, որպեսզի տարածվի Լեռնակերտում, թե իբր շտաբս-կապիտան Խասապետովը ներքնաշապիկ չի հագնում...

Կապիտան Խասապետովը հարբեցող էր, կնոջից վախենում էր, մեկ-մեկ գնում էր Շուշի, պրիստավի հետ թուղթ խաղում և տանուլ տալիս գրպանում եղած փողերը, բայց այնքան էլ վատ մարդ չէր: Մի գիշեր, երբ գայլերը խուժեցին Լեռնակերտ, նա հրամայեց կազակներին, որ կրակ բացեն կապը կտրած գազանների վրա: Կազակները կրակեցին, փախցրին գայլերին, բայց պատահական գնդակը կպավ Ուստա Աթունի էշի ճակատին ու փռեց ցանկապատի տակ:

Լեռնակերտն ապրում էր իր ձանձրալի կյանքով: Ուստա Ծատուրը դարբնոցում երկաթ էր ծեծում, կոշկակար Ալեքսանը նորոգում էր կապիտան Խասապետովի Կատինկայի մաշիկները, Դուքան Սեդրակը հորանջում էր խանութի առջև, երբ հանկարծ փողոցը լցվեց աղմուկով: Ուստա Ծատուրի դարբնոցի կողքին կանգնեց մի շքեղ կառք, կառքից դուրս եկան գավառապետն ու պրիստավը: Գավառապետը հաստ ուսերով, կլոր փորով, շեկ բեղ ու մորուքով մարդ էր: Պրիստավը ձիգ տված մաստակ էր, մանր աչքեր ուներ, երկար ծնոտ, նեղ ճակատ: Նա տնկվեց գավառապետի կողքին ու արագ-արագ զեկուցեց.

- Վաշի բլագարոդիե, էտո Լեռնակերտ...

Գավառապետը քիթը ծռմռեց ու նայեց Ուստա Ծատուրի կողմը: Ուստա Ծատուրը գոգնոցով մաքրեց դեմքի քրտինքը, մոտեցավ, գլուխ տվեց գավառապետին.

- Դոբրի դեն, վաշի վելիչեստվո:

«Վաշի վելիչեստվոն» ոտից գլուխ չափեց Ուստա Ծատուրին ու բարկացած հարցրեց.

- Վաշե իմյա:

- Վաշի բլագարոդեն, Ծատուր Լեռնակերտսկի,- պատասխանեց Ուստա Ծատուրը, ապա ներկայացրեց մյուս վարպետներին,- վաշի բլագարոդեն, էտո Նալբանդ Աթուն, էտո Ուստա Ալեքսան, էտո փուքս փչող Պողոս, ա էտո Դուքան Սեդրակ:

Լեռնակերտցիք հասկացան, որ գավառապետն ու պրիստավը լավ բանի համար չէին եկել, քաշվեցին մի կողմ ու սպասեցին: Պրիստավը ինչ-որ բան ասաց գավառապետին ու դարձավ կանգնածներին.

- Ձեր մեջ հասկանա ո՞վ ռուսերեն լավ:

Բոլորի հայացքները ակամայից ուղղվեցին Դուքան Սեդրակի կողմը: Դուքան Սեդրակը եղել է Ռուսաստանում, կապիտան Խասապետովի հետ մեկ-մեկ ջարդում է ռուսերեն ու հարբած ժամանակ երգում. «Վասադուլի վագարոդի, վասադուլի վագարոդի...»:

Գավառապետը նայեց Դուքան Սեդրակին, մտրակը թափահարեց օդում ու խոսեց: Խոսեց սկզբում շատ հանգիստ, կամաց-կամաց տաքացավ, պլշեց աչքերը ու շուռ եկավ Դուքան Սեդրակի կողմը.

- Պոնյատնո՞... Նու, պերեվեդի՛...

Դուքան Սեդրակը, որ ոչինչ չէր հասկացել գավառապետի ռուսերենից, թուքը կուլ տվեց ու «թարգմանեց».

- Լեռնակերտի ժողովուրդ, պարոն գուբեռնատն ասում է՝ էդ դուք քանի՞ գլուխ ունեք ձեր ուսերին, որ ինձ նման թագավորական մարդուն էդպես եք դիմավորում: Ասում է՝ ղուռումսաղներ, էս սահաթին ձեզ Սիբիր կքշեմ... Ասում է՝ տակոյ-սակոյ, հետո ուրիշ բաներ էլ է ասում և շատ էլ լավ է անում:

Ուստա Ծատուրը աչքի պոչով նայեց Ալեքսանին, Ալեքսանը՝ Նալբանդ Աթունին, իսկ վերջինս դարձավ Սեդրակին.

- Գասպադին վաշի վելիչեստվո է, ինչ զահրումար է, ասա՝ մեր Լեռնակերտը քեզ փեշքեշ: Ասա՝ էս տերը մեռած գելերը ոչխար չեն թողել, որ ոտիդ տակ մորթենք: Ասա՝ դե մենք էլ մարդ ենք մեզի գյորա, աքլորից բանից կմորթենք, եղածով յոլա գնա...

Դուքան Սեդրակն անցավ ռուսերենին.

- Վաշի վելիչեստվո, տամ լեսի, մնոգո վոլկի, մը բեդնի լյուդի... Ա եսլի տի պետուխ, պոժալուստա...

Գավառապետը կարմրեց ու պայթեց.

- Կտո՞ պետուխ, մերզավե՛ց:

- Վաշի բլագարոդեն, տի մնե նի պոնիլ:

- Նետ, նետ, կտո՞ պետուխ:

- Պետուխ՝ էտո մուժ կուրիցա:

- Կա՞կ, կա՞կ...

Սեդրակին թվաց, թե գավառապետը կյանքում աքլոր չի տեսել, թևերը թափահարեց, տեղում պտույտ տվեց և ապա ցատկեց, կանգնեց թթենու տակ ընկած դատարկ տակառին, վիզը ձգեց ու ծղրտաց աքլորավարի.

- Ծուղրուղու՜...

Փողոցը լցվեց հռհռոցով, գավառապետը օրորեց գլուխն ու նետեց.

- Վոտ, դուռա՛կ...

Բայց չգիտես որտեղից, հանկարծ փողոցում հայտնվեց զուգված-զարդարված Կատինկան, և գավառապետի բարկությունն իսկույն անցավ:

Առաջին անգամ լեռնակերտցիք վկա եղան այն բանին, թե ինչպես տղամարդը այդքան մարդկանց ներկայությամբ համբուրեց կնոջ ձեռքը:

- Վա՜յ, բեյնամուս կնիկ,- գլուխը շրջեց Նալբանդ Աթունը:- Այ բալամ, բա սրանք սկի աբուռ չունե՞ն:

- Եվրոպայում օրենքը էդպես է,- բացատրեց Դուքան Սեդրակը:- Եվրոպայում կնանիքը տղամարդկանց ներկայությամբ կարող են ծիծաղել, կարող են պռոշտի անել, կարող են ուրիշ դալաթներ էլ անել...

- Իսկ որտե՞ղ է քո այդ Եվրոպան,- հարցրեց փուքս փչող Պողոսը:

Դուքան Սեդրակը ձեռքը մեկնեց դեպի Քիրս սարը.

- Հրե՞ն էնտեղ... Շատ ա հեռու: Ֆայտոն պիտի նստես, հետո պոեզդ, հետո պարախոդ, որ հասնես Եվրոպա: Եվրոպայում կնանիքն իրենց պռոշներին ներկ են քսում, ֆոկզտրոտ են պարում: Մենք հետամնաց ժողովուրդ ենք:

- Եվրոպան Պարիժից մե՞ծ է,- էլի հարցրեց Նալբանդ Աթունը:

- Մեծ է, շատ է մեծ:

- Լեռնակերտը Պարիժ չի,- բարկացավ Նալբանդ Աթունը:- Ղարաբաղը Պարիժ չի, Բաքու չի, Թիֆլիս չի, Երուսաղեմ չի... Ղարաբաղը՝ Ղարաբաղ է:

Կոշկակար Ալեքսանը, որ մինչ այդ լուռ կանգնած էր մի կողմ, մոտեցավ Դուքան Սեդրակին:

- Լավ, Դուքան Սեդրակ, էդ գուբեռնատն ինչի՞ համար է եկել:

- Գուբեռնատը եկել է... դե երևի մի բան կա, որ եկել է:

- Իսկ մերզավեցն ի՞նչ բան է, ինչու քեզ մերզավեց անվանեց:

- Հորս անունը Միրզա է, ռուսերեն դուրս է գալիս մերզավեց:

Ալեքսանը քրքջաց.

- Դե հիմա հասկաց, մերզավեց Դուքան Սեդրակ, գուբեռնատը եկել է, որ բարձրացնի խարջը, մեզ պլոկի... Իսկ դու ռուսերեն էնքան ես հասկանում, որքան Նալբանդ Աթունը՝ ֆրանսերեն: Հիմա պոնյատնո՞:

- Պա՛հ, ես քու ռուսեվուր հասկացող ջանին մատաղ: Արա, բա չորս տարի Ռուսաստանում ի՞նչ եմ արել:

Ուստա Ծատուրն իր «Օրագրում» չի նշում, թե գավառապետը Լեռնակերտում ինչ էր անում: Սակայն ըստ ժամկոչ Մանասի՝ «Պարոն գուբեռնատը երեկոները ռուսական եկեղեցու խորանում սիլի-բիլի էր անում Խասապետովի Կատինկայի հետ, իսկ Տեր-Վասիլին ձևացնում էր... Ասենք Տեր-Վասիլին էլ մի բարի պտուղ չէր...»:

Նույնը հաստատում է նաև փուքս փչող Պողոսը, սակայն Ուստա Ծատուրը նրա վկայությունը համարում էր անվավեր, որովհետև «փուքս փչողին խոսք չի հասնում»: Խոսքը հասնում էր Ալեքսանին, որ վերջին ժամանակները ավելի շատ է թերթ կարդում և Ուստա Ծատուրի ու Նալբանդ Աթունի համար արտասանում.

Շենին կլխեն հանգիստարան,
Քու հար ընդեղ թաղած ա,
Ըսօր-եքյուծ քեզ միար էլ
Կասին՝ «ընդեղ թաղած ա»:
Վերջը տա յա
Լաց մի ինիլ...

Նալբանդ Աթունի աչքերը արցունքոտվում են, կոկորդում շարժվում է ինչ-որ բան. մուրճը ցած է դնում, հիշում իր հայրենակից բանաստեղծ Լևոն Աթաբեկյանին ու հառաչում.

- Լոխ արազ ա, լաց մի ինիլ...

ԳՈՐՈԴՈՎՈՅ ԱՆՏՈՆԸ

Գուբեռնատը եկավ ու գնաց: Պրիստավը եկավ ու գնաց: Խասապետովը քիթը կախել է, իսկ Կատինկան ամեն օր եկեղեցում Տեր-Վասիլու հետ «Վասադուլի» է պարում:

Հիմա Լեռնակերտը ոչ քաղաք է, ոչ գյուղ: Ամեն գիշեր ծմակում քաղցած գայլերը զուզա են տալիս: Գավառապետին խնդրեցինք, որ մի բան անի, նա էլ չգիտես որտեղից մի Գորոդովոյ Անտոն գտավ, ուղարկեց մեզ մոտ: Ի՞նչ գորոդովոյ, բերանը կապած սարի անասուն: Ակաս-մակաս գորոդովոյն էր պակաս: Ասում են՝ Ղրիմի հայ է, բայց հայերեն կարգին չի խոսում:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Գորոդովոյ Անտոնը մի քիչ հայերեն գիտե, մի քիչ թուրքերեն, մի քիչ էլ ռուսերեն: Նրան Դուքան Սեդրակն է հասկանում միայն, և Ուստա Ծատուրն ասում է. «Ագռավը ագռավի լեզուն լավ կհասկանա»:

Կոլոտ մարդ է Գորոդովոյ Անտոնը՝ գլուխը հսկա մի դդում, այդ հսկա դդումի վրա մի զույգ փոքրիկ անցքեր, որոնք մահկանացուների համար ծառայում են որպես աչքեր: Առավոտից մինչև ուշ երեկո նստում է Դուքան Սեդրակի խանութի առջև, գլուխն առնում ափերի մեջ, մտածում. ի՞նչ է մտածում, այդ միայն իրեն է հայտնի: Ճաշին Սեդրակը մի թաս գինի է տալիս.

- Անուշ արա, պարոն Անտոն, անուշ արա: Եթե դու չլինես՝ մեր Լեռնակերտը կքշեն տանեն:

Գորոդովոյ Անտոնը դատարկում է թասը, լիզում հաստ շուրթերը, երկար թուրը դնում ծնկներին և գլխով հաստատում:

- Դա՜, Լեռնակերտ ես պահեմ...

Դուքան Սեդրակը ծիծաղում է լախ-լախ.

- Վա՜յ, մեռնես դու, Գորոդովոյ Անտոն: Այ անաստված, դո՞ւ ես Լեռնակերտը պահում, թե՞ Լեռնակերտն է քեզ պահում:

Գորոդովոյ Անտոնը բնավորությամբ մեղմ մարդ է, ոչ ոքի չի վիրավորում, չի հայհոյում և ոչ ոքի վրա մատ չի թափահարում: Իսկ եթե սուլիչը դնում է բերանին, նշանակում է Դուքան Սեդրակի բանջարանոցը այծ է մտել:

- Պարոն Անտոն, մի բաժակ գինի էլ տամ, ռուսեվուր մի բայաթի վեր կալ:

Անտոնը դատարկում է հերթական թասը և խռպոտված ձայնով երգում.

- Է՛խ տի գուսի, դասվիդանիյա...

Երգում է այնքան, որ Նալբանդ Աթունը զայրանում է ու ձեռքերը թափահարում.

- Արա, ա շան տղա, խվատիտ, զահլես տարար: Ա՛յ Սեդրակ, մի բաժակ էլ տուր, թող ձենը կտրի:

- Բա փո՞ղը,- հարցնում է Դուքան Սեդրակը:- Ասա տեսնեմ՝ փողն ո՞վ պիտի տա:

- Այ ցեխից բաքմազ քաշող մերզավեց, փողը ես կտամ, մենակ թող ձենը կտրի:

- Ցեխից բաքմազ քաշո՞ղ,- քրքջում է փուքս փչող Պողոսը:- Ամեն բան լսել եմ, բայց ցեխից բաքմազ քաշող լսած չկամ:

Մի օր էլ լուրը տարածվեց Լեռնակերտում, թե Գորոդովոյ Անտոնը, բերանը կապած սարի անասուն Անտոնը, ամեն գիշեր Խասապետովի Կատինկայի հետ անտառում «շալթայ-բալթայ» է անում: Սկզբում ոչ ոք չէր հավատում, ախր Կատինկան աղա կնիկ է, ի՞նչ է գտել նա Գորոդովոյ Անտոնի մեջ:

Դուքան Սեդրակը ստուգելու նպատակով մի լավ հարբեցրեց Անտոնին, թևը դրեց նրա ուսին ու հարցրեց.

- Պարոն Անտոն, Կատինկայի հետ ո՞նց ես:

Անտոնը, անշառ, լռակյաց Անտոնը մի ակնթարթում կարծես վերափոխվեց, շողշողացին մանր աչքերը, ձեռքը տարավ դեպի թուրը.

- Կատինկան ազիզ կնիկ, Կատինկային ով ծուռ նայել, ես իմ թրով նրա վիզը կտրել, աչքեր հանել...

- Այ անաստված, բա որ կապիտան Խասապետովն իմանա՞:

- Ես կապիտան Խասապետովի գործերին չխառնվել, ինքն էլ չխառնվել իմ գործ...

Դուքան Սեդրակը հասկացավ, որ այդ հարցում Գորոդովոյ Անտոնի հետ վիճելն անմտություն է, լցրեց գինու թասը, մեկնեց նրան.

- Խմի՛ր, ջանդ գա, պարոն Անտոն:

Անտոնը խմեց, լիզեց շուրթերը, ամփոփվեց իր մեջ:

- Պարոն Անտոն,- խոսեց Սեդրակը,- դու բալշևիկների կո՞ղմն ես, թե՞ մենշևիկների:

- Ես քաղաքական հարցեր չշոշափեմ:

- Ալեքսանդր Ծատուրյանին ճանաչո՞ւմ ես:

- Ալեքսան բարի մարդ, իմ գործերին չխառնվել:

- Ստեփան Շահումյանին ճանաչո՞ւմ ես:

- Հա՛, Ստեփան լավ տղա:

- Բոգդան Կնունյանցի անունը լսած կա՞ս:

- Իմ ի՞նչ գործ, ես գորոդովոյ:

- Պա՛հ, քո ինչն ասեմ, Գորոդովոյ Անտոն, ախր դրանք բալշևիկներ են, իշխանության դեմ են գնում:

- Նու չտոժ:

1917 թվականի հոկտեմբերը ցնցեց աշխարհը, իսկ Գորոդովոյ Անտոնը լայն հորանջեց ու անտարբեր հայացքը հառեց Դուքան Սեդրակի գինու տակառին: Տարին անբարենպաստ էր, և դրա համար էլ Դուքան Սեդրակը Վարարակնի ջուրը շուռ էր տվել տակառի վրա: Բայց նա իր հաշիվների մեջ սխալվեց. կազակները մի գիշերվա մեջ հավաքեցին իրենց եղած-չեղածը ու պատրաստվեցին թողնել Լեռնակերտը: Եթե կազակները չկան, չկա նաև գինու առևտուրը:

Կապիտան Խասապետովի Կատինկան կուչ էր եկել կառքի մի անկյունում և լալիս էր անձայն: Տեր-Վասիլին, որ հասցրել էր ճանապարհվելուց

առաջ մի քանի բաժակ օղի կոնծել, տեղավորվեց Կատինկայի կողքին ու ասաց.

- Նե պլաչ, դոչինկա, վսյո բուդետ խորոշո:

- Չո՛ռ խորոշո, զահրումա՛ր խորոշո,- մրթմրթաց փուքս փչող Պողոսը:- Համ հետը ղալաթներ է անում, համ էլ դոչինկա ասում:

Հրաժեշտից առաջ, կապիտան Խասապետովը ազդեցիկ երևալու նպատակով, հագել էր տոնական մունդիր, կախել խաչերը, բեղերը ցցել: Ընգացին սանձերը, եկեղեցու ճաքած զանգը տխուր ծլնգաց, և փողային նվագախումբը նվագեց Ինտերնացիոնալ: Կապիտանի դեմքը կապտեց զայրույթից. կանգնեց ասպանդակին, հանեց թուրն ու գոռաց.

- Մալչա՛տ, սվոլուչի՛...

Շարքերը խառնվեցին իրար, մի աժդահա կազակ հայհոյեց Խասապետովին ու գոչեց.

- Դրուզյա, դազդրաստվույետ ռևոլյուցիա...

Դա առաջին խռովությունն էր Լեռնակերտում:

Խասապետովը թափահարեց թուրը, բղավեց, բղավեցին ուրիշները, շարքերը խառնվեցին իրար: Մի կազակ շուռ տվեց ձիու գլուխն ու քառատրոփ սլացավ անտառի կողմը:

Տեղի ունեցավ մի ուրիշ հրաշք. հայկական եկեղեցու կողքին, փոքր մեյդանում, Գորոդովոյ Անտոնը փակեց կառքի ճանապարհը, թևերը լայն տարածեց, բառաչելու պես բղավեց.

- Կատինկա՜, դորոգայա՜...

Դա կրծքից պոկված սիրահար ասպետի հառա՞չ էր, թե՞ բողոք: Կատինկան նույնիսկ չցանկացավ վերջին անգամ իր ասպետին արժանացնել իր մի փշուր ժպիտին: Անտոնը երկար նայեց կառքի ետևից ու փռվեց փոշոտ փողոցում: Միայն փուքս փչող Պողոսը մոտեցավ սիրահարված գորոդովոյին, բռնեց նրա ցնցվող ուսերից ու ասաց.

- Վե՛ր կաց, վաշի բլագարոդիե, վեր կաց, աշխարհը Կատինկայով չի վերջանում, ուրիշ Կատինկա էլ կգտնես:

Անտոնը հառաչեց.

- Դու ինձ չհասկանալ, Պողոս, Կատինկան լավ կնիկ, ազիզ կնիկ:

ՎԱՐԺԱՊԵՏ ՍԻՄՈՆ ՍԱՐԽՈՇՅԱՆՑ

Կազակ Մատվեյը կայազորի հետ չգնաց: Երկու օր թաքնվեց անտառում, երկու օր Պողոսը հաց ու ջուր տարավ նրա ետևից: Ալեք Բարթուղյանը եկավ Լեռնակերտ, Մատվեյին տեղավորեց մեր դարբնոցի կողքին գտնվող փոքրիկ օթախում, կանչեց մեզ ու ասաց. «Ընկեր Մատվեյն էսօրվանից ձեր ազիզ ախպերն է. մի լավ աղջիկ էլ կգտնեք, կամուսնացնենք հետը, և մարդը օրենքով լեռնակերտցի կդառնա»:

Աղջիկն ինքը՝ Մատվեյը գտավ, վանեցի որբ աղջիկ էր, անունը՝ Եսթեր: Պսակեցինք և նորապսակներին ցանկացանք երկար կյանք ու երջանկություն: Լեռնակերտում մի ծուխ էլ ավելացավ:

Իսկ Վարժապետ Սիմոնը որտեղի՞ց հայտնվեց...

(Ուստա Ծատուրի օրագրից)

Վարժապետ Սիմոնը Լեռնակերտում հայտնվեց այնպես, ինչպես Քրիստոսը՝ Երուսաղեմում: Դուքան Սեդրակը քիչ էր մնում բղավեր. «Ժողովո՜ւրդ, աչքդ լո՜ւյս, Հիսուս Քրիստոսը հարություն է առե՜լ»: Բայց չբղավեց՝ մոտեցավ, գլուխ տվեց ու հարցրեց.

- Ներեցեք, պարոն, դուք բալշևի՞կ եք, թե՞ մենշևիկ:

Վարժապետ Սիմոնը նրա հարցին հարցով պատասխանեց.

- Էսիկ Բեռնակե՞րտն է:

- Ոչ թե Բեռնակերտը, այլ Լեռնակերտը,- ուղղեց փուքս փչող Պողոսը:- Իսկ դուք երևի առաջին անգամն եք լինում Լեռնակերտում :

Վարժապետ Սիմոնը գեղեցիկ գավազանը խաղացրեց ձեռքում, հանեց ճերմակ ձեռնոցները, ժպտաց.

- Հարկավ, առաջին անգամ: Ես աշխատավոր ժողովրդին շատ կհարգեմ:

- Ներեցեք, պարոն, դուք բալշևի՞կ եք, թե՞ մենշևիկ,- կրկին հարցրեց Դուքան Սեդրակը:

Վարժապետ Սիմոնը նորից հարցին հարցով պատասխանեց.

- Ահավասիկ, պարոն, ձեզ մոտ ի՞նչ կուսակցություններ կան:

- Կան էլի...

- Վասնզի ես առաջին անգամն եմ բարեհաճում լինել ձեր քաղաքում, ուստի պատիվ ունեմ հայտնելու՝ ես Սիմոն Սարխոշյանցն եմ:

- Դե որ էդպես է, բարով եք եկել,- Դուքան Սեդրակը նորից խոնարհեց գլուխը.- Հիմա դուք բալշևի՞կ եք, թե՞ մենշևիկ:

Վարժապետ Սիմոնը գեղեցիկ գավազանը խաղացրեց ձեռքում, հանեց ճերմակ ձեռնոցները, ժպտաց.

- Դուք ներկա էտապում ի՞նչ կուսակցության կարիք ունեք, վասնզի ես այստեղ նոր մարդ եմ:

- Կուսակցություններից կշտացած ենք,- ասաց Դուքան Սեդրակը,- իսկ էդ վասնզին, որ ասում ես, նոր կուսակցությո՞ւն է:

Նալբանդ Աթունը նկատեց անծանոթին, մոտեցավ, զննեց ու զարմացավ.

- Յա՞, սա մեր Վարժապետ Սիմոնն է: Այ տնաշենի վարժապետ, էսքան տարի որտե՞ղ էիր կորել:

Վարժապետը սկզբում շփոթվեց, հետո հավաքեց իրեն ու կարծես ոգևորվեց.

- Ահավասիկ, ես նորից ձեզ մոտ եմ, հայրենակիցներ, կլսեմ ձեր անուշ ձայնը և ինձ կզգամ աշխարհի ամենաերջանիկ մահկանացուն, վասնզի այս շռնդալից ժամանակներում ինձ գործելու անհուն և անչափ ասպարեզ է պետք:

- Սիմոնը Սիմո՛նն է, համա չեմ հասկանում, թե ինչ լեզվով է խոսում,- ուսերը թոթվեց Նալբանդ Աթունը:

Դուքան Սեդրակին շլացրին Վարժապետ Սիմոնի գեղեցիկ գավազանն ու լայնեզր գլխարկը, փոքրիկ մորուքն ու խոսելաձևը և նորից հարցրեց.

- Ներեցեք, պարոն, դուք բալշևի՞կ եք, թե՞ մենշևիկ:

- Աշխարհի ամենաարդար կուսակցությունը, հարկավ, պարոններ, մենշևիկների կուսակցությունն է,- խոսեց վարժապետը:- Թույլ տվեք հայտնել, որ ես՝ Սիմոն Սարխոշյանցս, երդվյալ մենշևիկ եմ: Ի դեպ, պարոններ, ինձ այստեղ է ուղարկել միստեր Սենգիստոնը: Անգլիացիները ձեզ համար փթերով հաց են բերում, բերում են ազատություն...

- Անգլիացիները ղալաթ են անում,- մուրճը թափահարեց Նալբանդ Աթունը:- Նրանց ետևից կարմիր խնձոր ենք ուղարկե՞լ: Թող չբերեն:

Մատվեյը շիկացած երկաթի ծայրով վառեց ծխախոտը, աչքով արեց Ալեքսանին: Ալեքսանը կիպ մոտեցավ Վարժապետ Սիմոնին, նայեց ձեռքի գավազանին ու հարցրեց.

- Այդ գեղեցիկ գավազանը միստեր Սենգիստո՞նն է նվիրել ձեզ:

- Հարկավ, միստեր Սենգիստոնը:

- Եվ դուք էլ փոխարենը նրան եք նվիրում Ղարաբա՞ղը:

- Պարոն, իսկ դուք ո՞վ եք, բոլշևի՞կ, թե՞ մենշևիկ:

- Ես արհեստավոր եմ, պարոն վարժապետ:

- Իսկ ես հարգում եմ արհեստավորներին: Ահավասիկ, ուզում եմ հիշեցնել, որ միստեր Սենգիստոնը բոլշևիկների հետ երբեք չի կատակում:

Վարժապետ Սիմոնը Դուքան Սեդրակի աչքում դարձավ մի նոր Քրիստոս, և նա իր տան դռները բացեց վարժապետի առջև ու ասաց.

- Իմ տունը քո տունը հաշվիր, պարոն Սարխոշյանց:

Հյուրը կերավ, խմեց, թիկն տվեց թախտին ու հարցրեց.

- Պարոն Սեդրակ, դուք բոլշևի ՞կ եք, թե՞ մենշևիկ:

- Դե իհարկե, մենշևիկ: Բոլշևիկը կազակ Մատվեյն է, Ալեք Բարթուղյանը, Ուստա Ծատուրը, փինաչի Ալեքսանը: Ներեցեք, պարոն Սարխոշյանց, ուզում եմ մի բան իմանալ...

- Խնդրեմ, պարոն Սեդրակ:

- Ասում են՝ ժամանակավոր կառավարությունը վեց գունդ է ուղարկում Լեռնակերտ, երեսուն թնդանոթ, երկու գեներալ, ճի՞շտ է:

- Իսկ մենք ժամանակավոր կառավարության հետ ի՞նչ գործ ունենք... Մեր հիմնական նպատակն է՝ Ղարաբաղը մաքրել բոլշևիկներից և ստեղծել անկախ պետություն: Այդ գործում մեզ անշուշտ կօգնեն անգլիացիները:

Դուքան Սեդրակի տրամադրությունը հասավ գագաթնակետին: Նա հիմա կուզեր համբուրել Վարժապետ Սիմոնի փեշերը, ոտքերը, գավազանը ու Լեռնակերտով մեկ գոռալ. «Դուք Հիսուս Քրիստոսն եք, իսկ ես ձեր խոնարհ աշակերտը»: Սակայն նա հիշեց, թե ինչպես խաչեցին Քրիստոսին, ինչ դաժան բախտ վիճակվեց նրա աշակերտներին, քորեց ծոծրակն ու ասաց.

- Դուք հրաշք մարդ եք, պարոն Սարխոշյանց:

Երկու օր անց ռուսական կայազորի բակում տեղի ունեցավ ժողովի պես մի բան: Վարժապետ Սիմոնը հավաքվածներին կոչ արեց. «Հավատալ միայն մենշևիկներին, որովհետև մենշևիկները աշխատավոր ժողովրդի բարեկամներն են»: Խոսեց կես ժամ, մի ժամ, թափահարեց ձեռքերը, ինչ-որ տեղից ցիտատներ բերեց ու երբ նկատեց, որ բակում Դուքան Սեդրակից ու ժամկոչ Մանասից բացի՝ ուրիշ մարդ չկա, թաշկինակով մաքրեց քրտնած դեմքն ու հառաչեց.

- Ի՞նչ հետամնաց մարդիկ են այս լեռնակերտցիները:

Հետամնացը Նալբանդ Աթունն է, որ բաց արեց նրա փուչերը.

- Դատարկ մարդ է, մի տեղ մոխիր չի թափում. մեր շենում վարժապետություն էր անում, կիրակի օրերը ժամում «Քրիստոսը հարյա՞վ» երգում և պրիստավի վրեն շաբաթը մի անգամ թուղթ ուղարկում՝ էսինչ էսինչյանը թագավորի դրած օրենքին դեմ է գնում: Տղերքը տվին, ջարդեցին քիթն ու մռութը, փախավ Չանաղչի: Չանաղչեցիք էլ շան օր գցեցին, էնտեղից էլ փախավ... Մի խոսքով տիտռիկ-միտռիկ մարդ է:

ԱՊԵՏՆԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ

Ի՞նչ ժամանակներ են, հիմա արի գլուխ հանիր, դաշնակ, մենշևիկ, մուսավաթ, հնչակ, մնչակ... Շունը տիրոջը չի ճանաչում: Բոլորն էլ մի գլուխ ազգի անունից են խոսում և ազգի անունով ազգին թալանում: Պակասն էլ անգլիացին էր, տեսավ, որ էս շուն-շան տղերքը իրար ռեխ են պատռում, եկավ ու ինքն էլ մի կողմից սկսեց թալանել:

Պարոն Լալայանն ասում է՝ ազգի հույսը դաշնակցականներն են, Սիմոն Սարխոշյանցը՝ չէ՛, մենշևիկներն են, Խմբապետ Խորենը բողազը պատռում է՝ ազգի հույսն ու հավատը մաուզերն է...

(Ուստա Ճատուրի օրագրից)

Շուշին ցնցվեց մեծ դեպքերի առթիվ: Պարոն Լալայանը օգտվեց այդ ցնցումից ու իր «բանակը» համալրեց բաշիբզուկներով: Իսկ միստեր Սենգիստոնը որոշեց Ղարաբաղը դարձնել ազատ, անկախ պետություն: Այսինքն՝ այնպիսի պետություն, ինչպես, օրինակ, Իտալիան, Ֆրանսիան, Հունաստանը... Ղարաբաղը պիտի ունենա իր արտաքին ու ներքին գործերի մինիստրները, իր բանակը, գերբը, դրոշը և հիմնը: Մեկը մյուսի ետևից սունկերի պես բուսան նոր մինիստրներ, և ապա «ազատ, անկախ պետություն»: Մինիստրները որոշեցին Ասկերանը դարձնել «Համայն Արցախաց երկրի» մայրաքաղաք, նախկին հայտնի ձիագող Ապետնակ Մելիք Տեր-Աթաջանբեկնազարյանին՝ ապագա անկախ պետության արքա: Իսկ արքային հարկավոր էր թագ ու գահ, նազիր-վեզիր, որ կարողանա երկիրը կառավարել, աջ ու ձախ հրամաններ արձակել. «Մենք՝ Համայն Արցախաց տիրապետության թագավորս՝ Ապետնակ առաջինս...»:

Եվ պարոն Ապետնակը դեռ գահ չբարձրացած, «ապագա պետությունը» ուժեղացնելու նպատակով սկսեց մինիստրներ նշանակել ավանսի կարգով: Պարոն Համբարձում Լալայանին դարձրեց արտաքոց և ներքոց գործերի նախարար, Վարժապետ Սիմոնին՝ լուսավորության նախարար, Մերզավեց Դուքան Սեդրակին՝ առևտրի նախարար, Ղոչի Մոթալ Մինասին՝ գյուղատնտեսության նախարար, դեռ վրան էլ գումարած արդյունաբերությունը, ցարական բանակի նախկին սպա Խորեն Խանձիլյանին՝ սպարապետ:

Ամեն ինչ պատրաստ է, դրված է ապագա պետության հիմքը, մնում է պայմանագիր կնքել Անգլիայի հետ և Կարմիր Ռուսաստանից խզել կապերը: Բայց մինչև կապերը խզելը, պարոն Ապետնակը հրավիրեց պրես-կոնֆերանս և հայտարարեց.

- Պարոնայք մինիստրներ, նախքան մանր-մունր հարցերին անցնելը, ուզում եմ խորհրդակցել ձեզ հետ, թե ի՞նչ գույն պիտի ունենա մեր դրոշակը:

- Դեղին գո՜ւյն,- գոռաց Մոթալ Մինասը:

- Կապո՜ւյտ, կապույտ, - ճչաց պարոն Լալայանը:

- Պարոննե՛ր,- տեղից վեր թռավ ապագա սպարապետը,- ամենից հարմարը դարչնագույնն է:

- Իսկ ինչո՞ւ դարչնագույն և ոչ թե նարնջագույն կամ սևի ու սպիտակի խառնուրդը, - խոսեց Դուքան Սեդրակը:

- Ապո՜ւշ,- բղավեց Մոթալ Մինասը,- ո՞նց թե՝ սևի ու սպիտակի խառնուրդը:

Ապագա մինիստրները սկսեցին գզգզել իրար, հայհոյել, ջարդել աթոռները, և պարոն Ապետնակը ստիպված պրես-կոնֆերանսը հայտարարեց ավարտված:

Սակայն կարճ տևեց պարոն Ապետնակի կառավարությունը: Օրը ցերեկով խմբապետ Խորենը սպարապետի իրավունքով իր տղորանց հետ խուժեց ժամանակավոր կառավարության ժամանակավոր պալատ, բարձրացրեց մաուզերը և շատ հանգիստ ասաց.

- Ձերդ վսեմափայլություններ, ցրեցեք ձեր ապագա կառավարությունը և հրաժարվեցեք գահից:

Պարոն Ապետնակը, որ ոտը-ոտին գցած սեմիչկա էր չրթում, զարմացավ.

- Էդ ինչի՞ համար:

- Նախ նրա համար, որ սեմիչկա չրթելը ոչ մի արքայի պատիվ չի բերում: Հետո էլ նրա համար, որ մենք Ապետնակ անունով ոչ մի արքա չենք ունեցել: Ունեցել ենք Արշակ թագավոր, Արտաշես, Տիգրան, Պապ, Աշոտ, Գագիկ, բայց Ապետնակ անունով արքա ոչ մի դարում չենք ունեցել: Դու ի՞նչ թագավորացու ես, որ մի կարգին անուն չես գտել:

Պարոն Ապետնակը հրաժարվեց գահից ու սեփական կամքով մաուզերի փողը դրեց ճակատին և ցրիվ տվեց իր թագավորական գլուխը: Ինքը ցրիվ չտար, պարոն Խորենը ցրիվ կտար...

Պարոն Ապետնակին թաղեցին բարձր մակարդակով և եզրափակման խոսքը տվեցին խմբապետ Խորենին:

- Մենք հանձինս պարոն Ապետնակ Մելիք Տեր-Աթաջանբեկնազարյանի,- ասաց նա,- կորցրինք լավագույն մի մարդու, որի անունը մեր սրտերում միշտ անմեռ կմնա: Պարոն Ապետնակը բոլշևիկների զոհն է, և մենք երդվում ենք լուծել նրա վրեժը:

Լեռնակերտում մի խմբապետ Խորեն էլ ավելացավ: Խորեն-Սիմոն-Սեդրակ եռյակը ռուսական զորանոցը դարձրեց իր շտաբը, Վարժապետ Սիմոնին կարգեց շտաբի պետ ու որոշեց բանակցություններ վարել Շուշի քաղաքում նստած միստեր Սենգիստոնի հետ:

Միստեր Սենգիստոնը Լեռնակերտը միայն մի անգամ տեսավ և այն էլ հեռադիտակով՝ Շուշվա սարալանջից: Նրա առջև տնկվեց ռուսական եկեղեցու թեքված խաչը: Կարա-Բեքիրի ձեռքից վերցրեց կարաբինը, նշան բռնեց սև խաչի վրա ու քաշեց ձգանը: Կարաբինը փռշտաց և գնդակը կուլ գնաց Մուղոզի ձորին: Մուղոզի ձորից մինչև Լեռնակերտ ձիով մի ժամվա ճանապարհ է: Նույնիսկ Մուղոզի ձորից ոչ մի գնդակ չի կարող հասնել Լեռնակերտ: Սակայն Մոթալ Մինասը իր քաղցր լեզվով հաստատեց.

- Միստեր Սենգիստոն, գրազ կգամ, որ ձեր արձակած գնդակը կպել է խաչին:

Միստեր Սենգիստոնը թփթփացրեց նրա մեջքին.

- Օ քե՛յ, միստեր Մինաս, անգլիացին սուր աչք ունի:

- Անգլիացին գյոզալ մարդ է,- ժպտաց Կարա-Բեքիրը:- Անգլիացին հեռադիտակ ունի, վիսկի ունի, կարաբին ունի: Անգլիացին մեզ կպաշտպանի բալշևիկներից:

Չնայած եկեղեցու զանգի վրա կրակելը սրբապղծություն է, բայց միստեր Սենգիստոնը այդ համարեց ջենտլմենություն ու հռհռաց: Դա արդեն նվաճողի լկտի հռհռոց էր, եթե ուզում ես նվաճել մեկի երկիրը, հայհոյիր նրա սրբերին, անպատվիր նրա պաշտամունքը, և քեզ կհամարեն ուժեղ:

Եվրոպացու ուժը ավելի շատ խորամանկության մեջ է, քան զենքի: Զենքը մի կույր գործիք է, որը հնազանդվում է խորամանկներին: Միստեր Սենգիստոնը կրակել է եկեղեցու զանգի վրա, իր արձակած գնդակը հասել է Լեռնակերտ, ուրեմն օրենքով Լեռնակերտը պատկանում է իրեն: Կարող է վաղն այնտեղ ստեղծել մի ձիաբուծարան, մի արգելանոց որսի համար, և Լեռնակերտ կոչվածը դարձնել սեփական կալվածք: Կարա-Բեքիրին կնշանակի այդ կալվածքի վրա կառավարիչ ու կհրամայի՝ հաշվի՛ր, թե քանի խնոցի է լխկլխկում հարսների ոտքերի արանքում, որքան ոչխար կա, որքան կով կա, տարեկան քանի տոննա բուրդ կգա:

Միստեր Սենգիստոնը մի անգամ էլ հեռադիտակի փողը ուղղեց Լեռնակերտի վրա և դարձավ իր հրացանակիրներին.

- Լեռնակերտում կա՞ն ռուսներ:

- Չկան:

- Ի՞նչ ժողովուրդ են ապրում այնտեղ:

- Հայեր են,- պատասխանեց Մոթալ Մինասը:

- Թուրքեր են,- պատասխանեց Կարա-Բեքիրը:

- Միայն հայեր,- բարկացավ Մոթալ Մինասը:

- Չէ, թուրքեր,- կատաղեց Կարա-Բեքիրը:

- Երբ ասում եմ՝ հայեր, նշանակում է՝ միայն հայեր,- գոռաց Մոթալ Մինասը:

- Երբ ասում եմ՝ թուրքեր, նշանակում է՝ թուրքեր,- ոռնաց Կարա-Բեքիրը:

Միստեր Սենգիստոնը ժպտաց խորամանկ: Ահա թե որտեղից կարելի է բռնել: Նվաճողն առաջին հերթին իրար դեմ է լարում երկու ազգերին ու օգտվում առիթից: Այդ միտքը դեռևս մի քանի տարի առաջ հայտնել է իր բարեկամներից մեկը՝ գեներալ Դենստերվիլը: Իսկ գեներալ Դենստերվիլը հին գայլ է և վաղուց արդեն աչք ունի Բաքվի հարուստ նավթահանքերի վրա: «Տվեք ինձ նավթաշատ Բաքուն,- ասել էր,- և ես ամբողջ Եվրոպան կխեղդեմ բռիս մեջ»:

- Օ քե՜յ, դուք նացիոնալիստներ,- հռհռաց միստեր Սենգիստոնը:- Ես հարգեմ ու սիրեմ հայեր և թուրքեր: Հայեր և թուրքեր քաջ ժողովուրդ: Միստեր Մինաս, ես ձեզ կարգել Ղարաբաղ փոխարքա: Միստեր Կարա-Բեքիր, դուք Լեռնակերտ կառավարիչ, լինել խան, հարեմ պահել, գրկել սիրուն կնիկներ, ծխել ղեյլան...

- Շնորհակալ եմ, միստեր Սենգիստոն,- գլուխ տվեց Մոթալ Մինասը,- ես կարդարացնեմ ձեր հույսերը:

- Չոխ սաղոլ,- գլուխ տվեց Կարա-Բեքիրը,- ես կմնամ միշտ ձեր հավատարիմ ծառան :

- Օ քե՜յ, ձեր Ղարաբաղ դարձնեմ դրախտ,- եզրափակեց անգլիացին:

ԳԱԼԻՖԵ ԳՈՒԳՈՒՇԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ

Գալիֆե Գուգուշի բաղնիս-համամը էսօրվա պես միտս է՝ երկու դարանդազ լողարան էր, մեկը կանանց համար, մյուսը՝ տղամարդկանց: Կտրին նավթի երկու մեծ չան կար, մեկը տաք ջրի համար, մյուսը՝ սառը:

Գալիֆե Գուգուշի կնիկը՝ Թամամը, համ բիլեթ էր ծախում, համ սապոն, ազատ ժամերին էլ կեղ (թիզ) չափում: Չոփուռ կնիկ էր, տղամարդու ձայն ուներ: Էդ Թամամի վրա Պողոսը էսպիսի մի երգ էր կապել.

Աղջի Թամամ, գնամ համամ,
Լավ լողանամ և հետո գամ
Քեզ գողանամ:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Առաջին բաղնիքը Լեռնակերտում, Լավաշչի Բաղալի տան կողքին կառուցեց Գալիֆե Գուգուշը, ճակատին էլ մի հսկա ցուցանակ կախեց, որի վրա խոշոր տառերով գրված էր՝ «Պաղնիս-համամ Կալիփեյ Կուկուշի լավ լղանալ սապնաջուր և դուշ»:

Բաղնիսի աջ թևում տղամարդկանց լողարանն էր, ձախում՝ կանանց: Կար նաև մի փոքրիկ խցիկ, որտեղ լողանալու իրավունքը վերապահված էր այնպիսի մարդկանց, ինչպիսիք են աղյուսագործարանատեր Մամբրե

Խաբարդանովիչ Չոլախյանը, Թոկ ու չվան ծախող Մելիք Մուջուզբեկյանը, անփոխարինելի թամադա Մուշեղ Դոմբազովիչ Չանչախովը, ընթերցողներին արդեն հայտնի Սիմոն Սարխոշյանցը և այլ նշանավորներ:

Գալիֆե Գուգուշը գեղեցիկ սեռի հանդեպ այնքան էլ անտարբեր չէր, չնայած որոշ մարդիկ ասում էին՝ «Դրանը լեզուն է մենակ, ձեռքովը բան չի գալիս»: Խնդրեմ, նա կանանց լողարանի միջանցքի պատից կպցրել է մի նկար, որտեղ պատկերված է առասպելական Եվան այնպիսի վիճակում, որ կանայք ամոթից կարմրում և չանչ էին անում. «Ա՛ռ է՞, հողս գլխիդ, բա դու նամուս ունե՞ս»: Եվայի մի ձեռքում հայելի էր, մի ձեռքում օճառ, իսկ այդ նշանակում է, որ նա՝ առասպելական Եվան, իր ժամանակին բարձր է գնահատել բաղնիքը:

Տղամարդկանց լողարանի միջանցքի պատին Ադամն է, որն իր մանր աչքերով ու բութ դեմքով հիշեցնում է Գորոդավոյ Անտոնին, չնայած վերջինս պնդում է, որ դա հենց ինքը Գալիֆե Գուգուշն է, իսկ էն մյուսը՝ Եվան, Գուգուշի կնիկ Թամամն է: Թե այդ նկարները որտեղից են հայտնվել Լեռնակերտում, այդ մասին հավաստի տեղեկություններ չունենք: Օրինակ, Մեռել լողացնող Մանգասարը պնդում է, որ իբր Գալիֆե Գուգուշը մտել է ռուսի ժամը և «Աստվածաշնչից» պոկել Ադամի ու Եվայի նկարները, ինչպես նաև գողացել Տեր-Վասիլիի փիլոնը և ուրիշ թանկարժեք իրեր:

Շաբաթ և կիրակի օրերը տղամարդիկ իրենց լողարանն են շտապում, կանայք՝ իրենցը: Երկու լողարանի միջև ընկած միջնապատն այնքան բարակ է, որ կանանց զրույցն ու վեճը հասնում է տղամարդկանց, տղամարդկանց վեճն ու զրույցը, ինչպես նաև անտաշ կատակները, կանանց: Լեռնակերտի Տավարած Մուխանը կարող էր կանգնել միջնապատի մոտ ու իր կնոջն այսպիսի խոսքեր ասել. «Աղջի, Համասփյուռ, բա չլողացա՞ր պրծար, որ ռադ լինես, կորչես մեր տունը»: Կամ Բոստանչի Սրափիոնի Քոլան էն կողմից կարող էր մատը թափ տալ ամուսնու վրա ու կարգադրել. «Սրափիոն, սրանից դենը Մեռել լողացնող Մանգասարին թարխուն չտաս, հողեմ դրա գլուխը»: Մանգասարի կնիկն էլ իր ամուսնուն՝ «Մանգասար, որ էդ տափու եկած Սրափիոնը մեռնի, չլողացնես»...

Ինչպես տեսնում եք, լեռնակերտցիներն իրենց ընտանեկան վեճերը շարունակում էին Գալիֆե Գուգուշի բաղնիս-համամում, քննարկում կարևոր հարցեր, հայտնում զանազան մտքեր ու ծաղրում մեկը մյուսի մարմնական թերությունները...

Կան հավաստի տեղեկություններ առ այն, որ Սիմոն Սարխոշյանցը լողարանում հրավիրել է ժողով, ներկաներին բացատրել, թե մենշևիկյան և դաշնակցական կուսակցություններն ինչով են տարբերվում իրարից: Բայց այդպես էլ ներկաները բան չեն հասկացել նրա ճառից և ձեռ են առել վարժապետին. «Ա՛յ վարժապետ, քո էդ կուսակցությունները մի կտոր սապոն են դառնո՞ւմ, որ էդքան դուրս ես տալիս»:

Պատահեց այնպես, որ զավզակի մեկը բարակ պատից ճեղք բացեց դեպի կանանց լողարանը: Այդ ճեղքն առաջինը նկատեց Դուքան Սեդրա-

կը, նայեց ու հռհռաց: Մեռել լողացնող Մանգասարը նույնպես նայեց ու հռհռաց: Ժամկոչ Մանասը, որ ամբողջ կյանքում կնոջ հետ խոսած չկար, նայեց, զույգ ձեռքերով երեսը փակեց: Ճեղքի մոտ մի մեծ հերթ գոյացավ և հռհռոցը դարձավ բազմաձայն:

- Սա էլ մեր քաղաքի պռաժեխտրն է,- Դուքան Սեդրակը պռաժեխտր ասելով նկատի ուներ այն հրաշքը, որ տեսել է Ռուսաստանում, այսինքն՝ կինոն:- Ժողովո՜ւրդ, լավ նայեցե՜ք, էն Մամբրե Խաբարդանովիչի կնիկը չի՞... Պա՛հ, պա՛հ, պա՛հ, ի՜նչ ջան ունի, մի էդպիսի կնիկ ունենաս, գրկես ու աշխարհի հերն անիծես:

Հաջորդ օրը միջնապատին բացվեց մի ուրիշ ճեղք, ապա երրորդը, չորրորդը... և տղամարդիկ այլևս մոռացան լողանալը. գալիս նայում են բացված ճեղքից ու հռհռում: Դա նրանց համար և՛ թատրոն էր, և՛ կինո, և՛ օպերա, և՛ բալետ:

Բայց ահա մի անգամ Դուքան Սեդրակը մոտեցավ ճեղքին և ի՞նչ տեսնի, որ լավ լինի՝ իր կողակիցը, իր աննամուս Նոյեմը կանգնել է ճիշտ այնպես, ինչպես նկարի Եվան: Արյունը խփեց գլխին, և ինքն էլ չիմացավ, թե ինչպես մերկանդամ հայտնվեց կանանց լողարանում ու գոռաց.

- Ա պռաժեխտրի լիրբ, չե՞ս կարողանում մեր խարաբումը լողանալ...

Սա այն դեպքն էր, որ շոշափեց Լեռնակերտցիների պատիվը: Կանայք երեսները շուռ տվեցին Գալիֆե Գուգուշի բաղնիս-համամից, հաճախորդ տղամարդկանց թիվը նույնպես պակասեց, և Մամբրե Խաբարդանովիչը Դուքան Սեդրակին անվանեց մունդռիկ, իսկ Գալիֆե Գուգուշին կարգադրեց միջնապատը քանդել, տեղն աղյուս շարել:

Այդպես է Մամբրե Խաբարդանովիչը, որ մեկին բարի լույս է ասում, չի մոռանում հիշեցնել. «Դե լավ, կորած տեղ չի, վաղն արի մի երեք հարյուր աղյուս տամ»: Դա էլ ասում է այնպիսի տոնով, կարծես ձրի է տալիս և տվածն էլ ոչ թե աղյուս է, այլ ոսկի:

Ամռան օրերին լեռնակերտցիք առանձին մի հաճույքով են իջնում գետափ, լողանում, պառկում տաքացած ավազների մեջ, կատակում, ծիծաղում, վիճում, բամբասում, երգում ու քեֆ անում:

Քանի այդ օրերին բաղնիքը հաճախորդ չի ունենում, Գալիֆե Գուգուշը մի տախտակ է կախում պատուհանից՝ «Բաղնիս-համամ կապիտալնի ռեմոնտ», և Մեռել լողացնող Մանգասարի հետ իջնում գետափ:

Այստեղ է Լեռնակերտի մերանն ու սերուցքը: Գալիս է Մամբրե Խաբարդանովիչը՝ Մնացական Դանդարովի ֆայտոնով, գալիս է կնոջ՝ Հերիքնազ Առնավուդովնայի ու չքնաղաչյա աղջկա՝ օրիորդ Օլյայի հետ: Հերիքնազ Առնավուդովնան համարվում է Լեռնակերտի ամենալուսավորյալ կինը. գիրք է կարդում, թուղթ խաղում, տղամարդկանց հետ վեճի բռնվում, սակայն, չգիտեմ ինչու, օրիորդ Օլյան մոր հանդեպ այնքան էլ ուշադիր չէ կամ, ինչպես Սրափիոնի կինն է վկայում՝ «Մեր ու աղջիկ ամեն օր իրար ուտում են»:

Այստեղ են Սիմոն Սարխոշյանցն ու Մուշեղ Դոմբազովիչ Չանչախովը, բժիշկ Առաքել Սերմաքաշյանն ու Ֆոտո Գավրուշը, Դուքան Սեդրակն ու ժամկոչ Մանասը...

Թամամը ամուսնու ետևից մի քանի անգամ կանչում է ու հիշեցնում. «Գուգո՜ւշ, շատ չխմես, ցավդ տանեմ, կռիվ բան չանես, քեզ լավ կպահես»: Գուգուշը պատասխանում է. «Ա՛յ կնիկ, յանի կյանքում դու ինձ հարբած տեսած կա՞ս...»:

Սիմոն Սարխոշյանցը հանգիստ, փիլիսոփայի տրամաբանությամբ առաջ է տանում զրույցը: Աշխարհը, ասում է, հիմնված է մատերիայի վրա: Բնության մեջ ոչ մի մատերիա չի կորչում, մատերիան փոխվում ու դառնում է մի ուրիշ մատերիա: Ահավասիկ, կավահողը երեկ հող էր հասարակ, այսօր՝ աղյուս:

Մամբրե Խաբարդանովիչը լցվում է անհուն հպարտությամբ ու երախտագիտությամբ՝ հանդեպ Սիմոն Սարխոշյանցի, որ իր աղյուսն արժանացրեց այդքան մեծ պատվի և չի մոռանում հիշեցնել՝ «Եթե աղյուս է հարկավոր, վաղը մի երեք հարյուր հատ կուղարկեմ: Բան չկա, փողը կարող ես մյուս օրն էլ տալ»:

- Մարդը նույնպես մատերիա է,- Սարխոշյանցին լրացնում է Մուշեղ Չանչախովը:- Մարդը մեռնում և դառնում է որևէ միջատ՝ բզեզ, մորեխ, լու, փայտոջիլ...

- Մեռել լողացնող Մանգասարը մահից հետո ի՞նչ պիտի դառնա,- շատ լուրջ տոնով հարցնում է Դուքան Սեդրակը:

- Կամ լու, կամ ոջիլ,- հռհռում է Մուշեղ Դոմբազովիչը:

- Մատերիալիստական ուսմունքը շատ հին ուսմունք է,- իր զրույցն է շարունակում Սիմոն Սարխոշյանցը:- Հույն հանճարեղ փիլիսոփաներ Արիստոտելն ու Սոկրատեսը իրենց ուսմունքով հաստատել են շատ կարևոր մի բան՝ մատերիան դա հենց ինքը շարժում է: Ահավասիկ, այս գետի ջուրը, որ հոսում է՝ ամեն րոպե փոփոխական է, ինչպես...

- Ինչպես, ասենք, ձեր կուսակցությունների գաղափարախոսությունը,- խայթում է Աղամ Բիրղամիչը:- Տո՜, գլուխներս տարար քո մատերիայով, բան ասա, բան հասկանանք:

Գալիֆե Գուգուշը, որի գլուխը ոչ մի մատերիա էլ չի մտնում, երկու բաժակից հետո փափկում, մոմ է դառնում, բոլորին նայում քաղցր աչքով ու հերթով բոլորի ցավը տանում:

- Ցավդ տանե՛մ, Մամբրե Խաբարդանովիչ, դու լավ մարդ ես, Լենինակերտում քեզ նման լավ մարդ չկա... Ախր էնքան լավ ես, որ քիչ է մնում պառկեմ էս գետի կողքին, աչքերս փակեմ ու մեռնեմ:

Մեռել լողացնող Մանգասարի աչքերն այնպես են փայլում, որ թվում է՝ հիմա կճանկի մոմ դառած Գուգուշին ու կսկսի իր մեռելալողոցը: Բայց Գուգուշը դեռ ջահել է ու պինդ, ապրելու շատ տարիներ ունի: Այ, Մամբրե Խաբարդանովիչի հայրն իսկապես մեռնելու ապրանք է, բայց չի մեռնում:

«Քավթառի հագի շորերն էլ հնացել են,- մտածում է Մանգասարը - գոնե նորը առնեն, որ հավեսով լողացնեմ»: (Ընթերցողներին հիշեցնենք, որ Մանգասարի վարձը լողացրած մեռելի համար՝ հանգուցյալի զգեստներն են):

- Գալ տարի թազա բաղնիս կկառուցեմ,- խոստանում է Գալիֆե Գուգուշը:- Թազա մոդի բաղնիս, ամեն ինչը տեղը: Մենակ աշխարհում թող խաղաղություն լինի,- նա այստեղ այնպես է նայում Վարժապետ Սիմոնին, կարծես աշխարհի պատերազմն ու խաղաղությունը նրանից է կախված:- Որ խաղաղություն լինի, հացը բոլ կլինի, աղյուսը՝ շատ, բաղնիքում լողացողները աստղերի չափ... Վա՜յ, խաղաղության ցավը տանեմ... Թե չտանեմ, Նալբանդ Աթունի էշի տղան դառնամ:

Օրվա այդ ժամին է, որ հառաչում, հեկեկում, մղկտում է Ուստա Կարոյի դուդուկը և շուշեցի Շաշան ծոր է տալիս անուշ.

Դարդս լացե՞ք, սարի սմբո՞ւլ,
Ալվան, ալվան ծաղիկնե՞ր...

Չէ, Շաշայի դարդին դարդ չի հասնի: Շաշայի դարդը թափես անտակ ծովը, ծովը կցամաքի, վարար գետի բերանը տաս, գետը կծովանա... Մենակ Օլյան է, Օլյայի սիրտն է, որ քար է դառել ու չի լսում Շաշայի կլկլոցը, նրա դարդին դարման չի անում:

Արցունքները բուռ-բուռ հոսում են Գալիֆե Գուգուշի աչքերից, գրկում է դարդոտված Շաշայի գլուխը, համբուրում ճակատն ու հառաչում.

- Շաշա ախպեր, դարդդ տուր ինձ՝ ես մեռնեմ: Թե չմեռնեմ, հազար ամոթ ինձ...

Շաշան փոխում է երգը.
Քեզ ո՞նց գովեմ ես սազով,
Սպանեցիր ինձ քո նազով...

Օրիորդ Օլյան լցնում է գինու բաժակը, ժպտում, բայց ուշքն ու միտքը ուրիշ տեղ է: Լեռնակերտի անփոխարինելի թամադա Մուշեղ Դոմբազովիչ Չանչախովը առաջարկում է խմել Մամբրե Խաբարդանովիչի կենացը, որովհետև առանց Խաբարդանովիչի Լեռնակերտն աղյուսագործարան չէր ունենա, ինչպես նաև զրկված կլիներ այնպիսի հազվագյուտ էակից, ինչպիսին օրիորդ Օլյան է:

- Մեր Լեռնակերտը փոքրիկ Պարիժ է,- իր բաժակաճառը առաջ է տանում Մուշեղ Չանչախովը և այն միտքը զարգացնում, որ Լեռնակերտցիք ավելի կուլտուրական են, ավելի քաղաքակիրթ, քան իրենք՝ պարիժցիք:- Իսկ այդ գալիս է նրանից,- նա քնքշանքով նայում է Օլյայի աչքերին,- այդ գալիս է նրանից, որ մեր նոր սերունդն ունի իր հատուկ վերաբերմունքը կյանքի հանդեպ, իր աշխարհայացքը, ֆալանգան, ֆաբուլան, ամպուլան և նկատառումները:

Մուշեղ Չանչախովը աշխատում է խոսքը համեմել նոր բառերով և փույթ չէ, թե ինչ են ներկայացնում այդ բառերն իրենցից: Օրինակ, մի խնջույքի ժամանակ նա լեռնակերտցիներին համեմատել է տրոյացիների հետ և գտել, որ Լեռնակերտը մոխիրներից հառնած Փյունիկ թռչուն է:

Բայց այդ դեռևս չի նշանակում, թե Մուշեղ Չանչախովը զավզակի մեկն է, հիմարություններ է դուրս տալիս: Այդ էր պակաս: Մարդը, Մեռել լողացնող Մանգասարի ասելով՝ Սորբոն է ավարտել, Գալիֆե Գուգուշի ասելով՝ «պորտը գրքերի մեջ է կտրվել», իսկ այդ երիցս անիծված Պողոսը, որ չգիտե, թե որտեղ ինչ է դուրս տալիս, նրան, այսինքն՝ Մուշեղ Չանչախովին, անվանել է ծակ փիլիսոփա: Այդպես է, տան տերտերին օրհնյա չկա: Հիմա, որ Մուշեղ Դոմբազովիչը Լեռնակերտը թողնի գնա, չեն ասի, թե Լեռնակերտում մի լավ գլուխ կար, այն էլ գնաց: Կասեն:

- Ես քո ազիզ ցավը տանեմ, Մուշեղ Չանչախով,- Գալիֆե Գուգուշը պատռում է կոկորդը և նրան թվում է, որ իրեն չեն լսում, վիրավորվում է, ձայնն ավելի բարձրացնում.- Հիմա կգնամ գետը ընկնեմ ու խեղդվեմ: Բա որ խեղդվեցի, բա որ Լեռնակերտը առանց բաղնիսի մնաց, ո՞վ պիտի պատասխան տա:

Երբ Ուստա Կարոյի դուդուկը հառաչեց ու լռեց, խանանդա Շաշան դափը գրկած մրափ մտավ ուռենու տակ, Գալիֆե Գուգուշը երևի գետում խեղդվելու պայծառ հեռանկարներով փռվեց գետափին... Երբ Մամբրե Խաբարդանովիչը, Մուշեղ Չանչախովը և նույնիսկ Հերիքնազ Առնավուդովնան ընկան Մորփեոսի գիրկը, օրիորդ Օլյան գլուխը բարձր բռնած, թեթևաքայլ եղնիկի պես սահեց դեպի ձորը:

Եթե լեռնակերտցիք ուզում են իմանալ, թե ինչ բան է հեքիաթային հավերժահարսը, թող այն որոնեն ոչ թե Պուժունց Մոսու նաղլերում, այլ Բալայի ձորում, Բալայի ձորի փրփուր ջրերի մեջ: Բայց ո՞վ կարող է ծուռ աչքով նայել օրիորդ Օլյային: Նայելու իրավունքը տրված է միայն Փուքս փչող Պողոսին: Այսինքն՝ այն Պողոսին, որ գոմեշի վիզ է ոլորում, մի ձեռքով խաղացնում է ծանր կռանը, բռունցքը դեմ անում Մոթալ Մինասի քթին ու ասում՝ «Հասած տանձ է, կե՛ր»:

Ուրեմն այսպես, օրիորդ Օլյան շարժվեց դեպի ձորը, Պողոսը մոշու թփի ետևից հանեց գլուխը, և հենց այդ պահին գետափին տնկվեց Մոթալ Մինասը, ձգեց կարճ վիզն ու բառաչեց.

- Աղջի՜, Օլյա, գժվելս եկե՞լ է:

Ու մինչ Օլյան ափերով կփակեր դեմքը, ու մինչ հարբած Շաշան կբացեր աչքերը, որ մի անգամ էլ նայի իր հավերժահարսին, Բալայի ձորում լսվեց Մոթալ Մինասի բառաչը.

- Հասե՞ք, սպանեցի՜ն...

Սպանողը այդ արջ-արջի տղա Պողոսն էր, սպանվողը՝ Մոթալ Մինասը, իսկ օրիորդ Օլյան թաց շորերով նստել ժայռի կողին, անխիղճ-անխիղճ ծիծաղում է Պողոսի բռունցքների տակ թավալվող Մոթալ Մինասի վրա:

- Վո՜ւյ, Օլյա՜ս,- ճչաց Հերիքնազ Առնավուդովնան:- Լեռնակերտը պաժառ կտա՜մ, բրիշակ կդարձնե՜մ:

- Հանգստացիր, Հերիքնազ Առնավուդովնա,- շան որդի Չանչախովն էլ այնպես է գրկել Հերիքնազ Առնավուդովնայի վիզը, կարծես իր սեփական

կնիկն է:- Առանձնապես բան չկա, Հերիքնազ Առնավուդովնա, օրիորդ Օլյային առանձնապես բան չի պատահել:

- Բա այն ո՞ւմ են սպանում,- Հերիքնազ Առնավուդովնան հանգստանալու միտք չունի.- Վո՜ւյ, Օլյա՜ս, աղջի՜կս...

Այդ դեպքից հետո լեռնակերտցիք նոր միայն հասկացան, որ Փուքս փչող Պողոսը սեր է կապել օրիորդ Օլյայի վրա, որ Օլյան կատակով նրան Պողոսիկ է անվանում, որ Հերիքնազ Առնավուդովնան մատը թափահարել է աղջկա վրա ու կրկնել Հովհաննես Թումանյանի հայտնի պոեմի հայտնի տողերը՝ «Աղջիկը մենակ ձո՞րը կըմըտնի»:

Իսկ Օլյան արհամարհանքով նայել է մորն ու պատասխանել.

- Դու քեզանից խոսիր, մարդդ գլխիդ կանգնած, աչքդ էդ զավզակ Մուշեղ Չանչախովի վրա է:

Հերիքնազ Առնավուդովնան հերսոտվել է ու ճչացել.

- Մալչի՛, նեգոդնիցա՛...

ՉՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԻԱԹ

Հենց որ ցրտերն ընկնում են, էդ անունավոր լեռնակերտցիները ցրտից խեղճանում, արջաքուն են մտնում: Պատահում է փողոցում մեկ-մեկ երևում են Գալիֆե Գուգուշն ու Թոկ ու չվան ծախող Մուջուզբեկյանը, իրար ծուռ-ծուռ նայում են ու հայդա՛, պոչները քաշում: Իսկ Մեռել լողացնող Մանգասարն անընդհատ տրտնջում է՝ Գալիֆե ախպեր, ապրուստը դժվարացել է, մեռնող չկա...

Թու՛, քու մարդ ասողին...

(Ուստա Ճատուրի օրագրից)

Լեռնակերտը հարավային լինելով հանդերձ՝ որոշ չափով էլ հյուսիսային է, որովհետև դեկտեմբերին այստեղ այնպիսի ցուրտ քամի է փչում, որ Մեռել լողացնող Մանգասարը գրկում է վառարանի խողովակն ու տրտնջում՝ «Թու՛, էլի շան եղանակները սկսեցին, բա մարդ էլ Լեռնակերտո՞ւմ ապրի: Չէ՛, օրներս վատ տեղ մթնեց»:

Չյունը գալիս դիզվում է փողոցներում ու բակերում, տների կտուրներին ու բանջարանոցներում, և երդիկներից ծգվում է բարակ ծուխը:

Տարվա այդ եղանակին Սիմոն Սարխոշյանցը, ինչպես ասում են՝ լրիվ ամփոփվում է ինքն իր մեջ և Լեռնակերտի համար կանխագծում նոր հորիզոններ: Ինչո՞ւ Լեռնակերտը չունենա իր օրաթերթը: Առանց տպագիր օրգանի ի՞նչ քաղաքական պայքար: Իսկ ի՞նչ ուղղություն պիտի ունենա այդ թերթը՝ միապետակա՞ն, թե՞ հանրապետական, դեմոկրատակա՞ն, թե՞ պահպանողական, նացիոնալիստակա՞ն, թե՞ ինտերնացիոնալիստական... Եվ պատասխանը միշտ լինում է նույնը՝ «Նայած, թե որտեղից է քամին փչում»:

Պարոն Սիլվեստին ամենից շատ հետաքրքրում է Կարմիր Ռուսաստանը: Ի՞նչ է տեղի ունենում բոլշևիկյան Ռուսաստանում: Ինչպե՞ս կվերջանան Կոլչակի, Դենիկինի, Վրանգելի, Յուդենիչի արշավանքները: Նա իր սենյակում կախել է աշխարհի քարտեզը, աշխարհի պետությունների թնդանոթներն ուղղել Կարմիր Ռուսաստանի վրա: Խոսում է ոգևորված և, չնայած նրան լսում է միայն պարոն Լալայանը, բայց խոսքի տակ ու գլխին գոչում է՝ պարոնա՜յք, հիմա մենք համոզվեցինք, որ Կարմիր Ռուսաստանի բախտը մազից է կախված:

Լալայանը գլուխն օրորում է. «Համա էդ մազը ոնց որ շատ ամուր մազ դուրս եկավ: Լավ, ասենք թե Անտանտը հաղթեց, ասենք թե պարոն Կոլչակը դարձավ թագավոր, մեզ ի՞նչ օգուտ»: «Իսկ մենք Ղարաբաղը կհռչակենք ինքնուրույն պետություն,- ակնոցն ուղղում է պարոն Սիլվեստը:- Քեզ անպայման կդարձնենք արտաքոց գործերի նախարար: Իսկ դրա համար, պարոն Լալայան, անպայման պիտի սովորես անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուները»:

Քաղաքական պայքարը երբեք չի հետաքրքրել և չի հետաքրքրում Հերիքնազ Առնավուդովնային, որովհետև, նրա կարծիքով, կանայք քաղաքական պայքարի մեջ կորցնում են իրենց կանացիական թովչանքը և դառնում կոշտ ու կոպիտ արարածներ: Եվ նա շարունակում է նամակները՝ Թիֆլիսում ապրող իր քրոջը.

«Սիրելիդ իմ քույր Հերիսելիա:

Դու մանկությունից էլ հետաքրքրասեր աղջիկ ես եղել և քո հարցասիրությամբ մեզ շատ ես տանջել: Դու գրում ես, թե ի՞նչ քաղաք է Լեռնակերտը, և ինչպե՞ս ենք ապրում այստեղ, կիրակի օրերն ինչո՞վ ենք զբաղվում. ընդհանրապես ի՞նչ է իրենից ներկայացնում Լեռնակերտը:

Դրանք այնպիսի հարցեր են, որ միանգամից չեմ կարող սպառել:

Օլյան առաջվա պես ինձ չի լսում, և մենք հաճախ ենք իրար հետ ընդհարվում ու օրերով խռովում: Մամբրեն նրան շատ է երես տվել, և հիմա չգիտեմ, թե ինչ կլինի այդ կամակոր աղջկա վերջը:

Երեկ Մուշեղ Դոմբազովիչը մեր հյուրն էր: Նա չափազանց կուլտուրական և նրբանկատ մարդ է, և ես կուզեի, որ կյանքդ կապած լինես այդպիսի մարդու հետ: Պատկերացնո՞ւմ ես, նա ընդհանրապես ինձ շատ է հարգում ու մեծարում: Նա ինձ ասում է՝ «Հերիքնազ Առնավուդովնա, դուք քանի գնում, ավելի եք գեղեցկանում: Նայում եմ ձեզ և թվում է՝ տասնութ տարեկան աղջիկ եք: Ախր գրողը տանի, մեկ էլ տեսաք սիրահարվեցի»:

Սիրելիդ իմ քույր Հերիսելիա, քեզ չի՞ թվում, որ ժամանակները կամաց-կամաց փոխվում են դեպի ոչ ցանկալին: Չնայած ես քաղաքական հարցերով չեմ զբաղվում, բայց, այնուամենայնիվ, զգում եմ, որ այդ բոլշևիկները մեր գլխին մի օր մի նոր խաղ պիտի խաղան: Ահա այստեղից էլ ապագան աչքիս երևում է մի տեսակ անհասկանալի, ինչպես մեր Մամբրեի միտքը...»:

Հերիքնազ Առնավուդովնայի նամակը թողնենք կիսատ և բացենք Գալիֆե Գուգուշի դուռը:

Այստեղ են Դուքան Սեդրակն ու ժամկոչ Մանասը, Վարսավիր Արտուշն ու Ֆոտո Գավրուշը: Զառերը գլորվում են նարդու խաղատախտակին, Գալիֆե Գուգուշը ոգևորված ծափ է տալիս.

- Վա՜յ, ձեր ցավը տանեմ, ախպեր զառեր: Դե հիմա էլ մի սե բիր տվեք, որ պարոն Արտուշի ոտը կապեմ:

Վարսավիր Արտուշը սրտին մոտ է ընդունում Գալիֆե Գուգուշի կատակը.

- Արա՜, էդ ո՞ւմ ոտ ես կապում:

- Խնդրում եմ իմ տանը ինձ վրա չբղավես,- զառերը ձեռքում խաղացնում է Գալիֆե Գուգուշը:- Աշխարհում դեռ չի ծնվել էն մարդը, որ կարողանա իմ տան մեջ ինձ վրա բղավել:

- Իսկ ես կբղավեմ:

- Ցավդ տանե՜մ, դու ո՞վ ես, որ ինձ վրա բղավես:

Վեճի ամենաթունդ պահին ներս են մտնում ծյունակոլոլ Մանգասարը և Մոթալ Մինասը:

- Նորությունը լսե՞լ եք,- Մանգասարը առաջ է մղում նորության հեղինակին՝ Մոթալ Մինասին:- Ասում են՝ բոլշևիկները Մոսկովում սեպարատ հաշտություն են կնքել:

- Սեպարատը չգիտեմ, բայց հաշտությունից ի՞նչ վնաս ունենք,- Գալիֆե Գուգուշը մի կողմ է հրում նարդին:- Սեպարատն ո՞վ է:

- Սեպարատը... - Մոթալ Մինասը նայում է սեղանին դրած օղու կիսատ շշին:- Սեպարատը, պարոն Սարխոշյանցի ասելով, այնքան էլ լավ բան չի: Բաքվի բանվորներն էլի սկսել են...

- Պա՛հ, նորություն ասաց, - Դուքան Սեդրակը քրքջում է: - Դա անցած տարում էր: Որոշված է՝ Կափկազը պիտի դառնա նեյտրալնի:

- Նեյտրալնին ի՞նչ է,- Գալիֆե Գուգուշը դիմում է Դուքան Սեդրակին:

- Ցենտրալնու մի տեսակը: Մենք պիտի ունենանք մեր թագավորը, զորքը, զորապետը... Պարոն Սարխոշյանցն էդպես է ասում:

- Բա բաղնի՞սը. առանց բաղնիսի պետություն կլինի՞,- վրդովվում է Գալիֆե Գուգուշը:

- Բաղնիսը ի՜նչ մեծ բան է. առաջներում որ բաղնիս չի եղել, Ղարաբաղը քանդվե՞լ է:

- Սեդրա՛կ, սխալ բաներ ես ասում,- գոռում է Գալիֆե Գուգուշը,- բա որ բաղնիս չլինի, տերության մեծամեծերն իրենց կեղտերը որտե՞ղ պիտի մաքրեն: Առանց բաղնիսի ի՞նչ պետություն, ցավդ տանեմ:

- Բա տերության մեռելներն ո՞վ պիտի լողացնի,- արանքն է ընկնում Մեռել լողացնող Մանգասարը:

Վարսավիր Արտուշն ասում է՝ էլ ի՜նչ պետություն, որ չունենա իր հատուկ վարսավիրանոցը, Ֆոտո Գավրուշը բղավում է. «Առանց ֆոտոյի տերություն չկա: Ձեզ եմ հարցնում, պարոնա՛յք, տերության ղեկավարները որտե՞ղ պիտի նկարվեն, որ խալխին ցույց տան իրենց սփաթները»: «Ինչ-

պես բոլոր մահկանացուները, այնպես էլ տերության ղեկավարները,- խոսում է Ժամկոչ Մանասը,- պիտի եկեղեցի հաճախեն: Ես գտնում եմ, որ պետությունը սկսվում է եկեղեցուց»: Մեռել լողացնող Մանգասարը ընդհատում է նրան՝ «Ուրեմն ձեր խելքով պրեմիերները, թագավորները, մինիստրները չե՞ն մեռնում: Բա ո՞վ պիտի լողացնի նրանց, եկեղեցի՞ն...»:

Դրսում ոռնում է քամին, ձյան փաթիլները պար են բռնել օդում: Հերիքնազ Առնավուդովնան շարունակում է իր կիսատ նամակը.

«Լեռնակերտում այնքան ձյուն է եկել, որ հնարավոր չէ դուրս գալ փողոց: Աղյուսի գինը ընկել, ջրի գին է դարձել, իսկ այս քավթառը՝ կեսրայրս, խելքը լրիվ թռցրել ու հիմարություններ է դուրս տալիս: Օրինակ, երեկ տեղից վեր թռավ, թե՝ «Տեսա՞ք ոնց իմացա: Լուն ոջիլի կնիկն է, թախտաբիթին՝ մոծակի զոքանչը, իսկ ես Հիսուս Քրիստոսն եմ»:

Ե՜րբ պիտի սատկի այս քավթառ առնետը: Ա՛յ, եթե կարողանաս մի քիչ մկնդեղ ուղարկել... մեր պադվալը լցվել է մկներով»:

Բայց այդպես էլ մեզ բախտ չվիճակվեց մինչև վերջ հետևել Հերիքնազ Առնավուդովնայի նամակին: Շրխկոցով բացվում է դուռը և ներս է խուժում ծերունի Խաբարդանը, այսինքն Մամբրե Խաբարդանովիչի հարազատ հայրը:

- Եկե՜լ եմ,- գոռում է:- Եկե՜լ եմ, ես Հիսուս Քրիստոս Նազարեթցին եմ, ցո՛ւյց տվեցեք, որտե՞ղ է իմ Գողգոթան:

Քանի որ ցնդած ծերունին իրեն երևակայում է Հիսուս Քրիստոս, Հերիքնազ Առնավուդովնան մեծ բավականությամբ նրան ենթարկում է Հիսուս Քրիստոսի չարչարանքներին, այսինքն ճիպոտով դաղում է կողերը, փակում ցուրտ ներքնահարկում ու ասում.

- Քավթառ, ահա՛ և քո Գողգոթան: Դե հիմա գնա վայելիր:

Եվ Լեռնակերտի ցուրտ երկնքում, ձյան փաթիլների ու սանձարձակ քամու հետ գլուխկոնծի է տալիս ցնդած Խաբարդանի խեղդված ձայնը.

- Քրիստոնյանե՜ր, ազատեցե՜ք ձեր Քրիստոսին դժոխքից:

Բայց լսողն ո՞վ է: Մամբրե Խաբարդանովիչն իր կիսամութ սենյակում շարունակում է հաշվել աղյուսի առևտրից եկած փողերը, Սիմոն Սարխոշյանցը ապագա թերթի համար քաղաքական պայքարի լայն ճանապարհ է հարթում, Մուշեղ Չանչախովը գործով գնացել է Շուշի, որպեսզի հորից՝ մանրավաճառ Դոնբազից, կարողանա մի քանի ոսկի պոկել, Գալիֆե Գուգուշը, Վարսավիր Արտուշը, Դուքան Սեդրակը, Մոթալ Մինասը, Ժամկոչ Մանասը և Մեռել լողացնող Մանգասարը շարունակում են իրենց վեճը սեպարատ հաշտության և նեյտրալնի պետության շուրջ... Իսկ Օլյան քաշվել իր սենյակը, կարդում է Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթերը», երազում Պողոսին ու աչքերից բուռ-բուռ արցունքներ թափում:

Լեռնակերտը մրսում է:

ԱԶԳԻ ՀՈՒՅՍԸ

Թիֆլիսից մի մարդ եկավ՝ հագին խրոմի սապոգներ, գլխին թուխ փափախ, բինոկոլը դոշին, գոտուց մաուզերը կախ: Շան տղան բեղերը սրած եկավ, գլուխը մի պարկ արյուն առած եկավ. իջավ ձիուց, սանձը նետեց իր թիկնապահին ու գոռաց.

- Քյոփօղլու Խորեն, էս սահաթին փորդ ծխով լցնեմ...

(Ուստա Ճատուրի օրագրից)

Իսկ քյոփօղլու Խորենի փորում ծուխ լցնելու տեղ չկար, գինով արդեն լիքն էր: Նա ոտի վրա հազիվ էր կանգնում, լեզուն էլ չէր բռնում, որ խոսի: Թիֆլիսից եկածը ձեռքը դրեց մաուզերի կոթին, ոտքը խփեց գետնին, փոշի բարձրացավ:

- Քյոփօղլու Խորեն, քեզ հետ խոսում է Նորին մեծության գնդապետ Ապոլոն Պահլևունին: Զգա՛ստ:

Խմբապետ Խորենը մեջքը դեմ տվեց Դուքան Սեդրակի խանութի պատին, ոտքերը չռեց, որ կարողանա կանգնած մնալ:

- Լսո՛ւմ եմ, ձձերդ գգերազանցություն...

- Զորքդ որտե՞ղ է:

- Ձձերդ գգերազանցություն, զզորքը սսպասում է ձձեր հհրամանին:

Պարոն Պահլևունին ձեռքերը հանգուցեց թիկունքին, գնաց-եկավ, գնաց-եկավ և շրա՛խկ, խփեց խմբապետ Խորենի դեմքին:

- Քյոփօղլու Խորեն, ասա տեսնեմ որտե՞ղ է պարոն Ապետնակը:

Խորենը բռնեց քիթը, փլվեց պատի տակ ընկած կոճղի վրա: Նույնիսկ չփորձեց պաշտպանվել, չասաց՝ «Ձերդ գերազանցություն, դուք ի՞նչ իրավունքով եք ձեռք բարձրացնում Համայն Արցախաց աշխարհի սպարապետի վրա»:

Վարժապետ Սիմոնը աչքով արեց Դուքան Սեդրակին, վերջինս երկտակվեց պարոն Պահլևունու առջև ու խոսեց.

- Ձերդ գերազանցություն, երկար ճանապարհ եք եկել, հոգնած եք, գուցե մի քիչ հանգստանա՞ք...

Պարոն Պահլևունին մտրակի կոթով թեքեց փափախը, հանեց ոսկե ծխատուփը, գլանակը ծուռ կծեց ու ոտքով խփեց Դուքան Սեդրակի հետույքին.

- Հայվան, վառի՛ր ծխախոտս:

Սեդրակը վառեց լուցկին, պարոն Պահլևունին ծուխ արեց, կորավ ծխի մեջ, հետո գլանակի քոթուկը նշան բռնեց, մատի ծայրով նետեց Դուքան Սեդրակի վրա ու ծիծաղեց: Ծիծաղեց պաուզաներով ու լրջացավ.

- Ձեզ եմ հարցնում, ապուշներ, որտե՞ղ է պարոն Ապետնակը:

- Պարոն Ապետնակը,- Վարժապետ Սիմոնը թաշկինակը մոտեցրեց աչքերին, սրբեց քիթը.- Ձերդ գերազանցություն, պարոն Ապետնակը, պարծանքը մեր հոգու և սրտի, հերոսի մահով... Մենք նրա պայծառ հիշատակը մեր սրտերում միշտ վառ կպահենք:

- Պարոն Ապետնակը բալշևիկների անմեղ զոհն է,- հառաչեց Դուքան Սեդրակը:- Պարոն Ապետնակը գնաց, Ղարաբաղը թողեց որբ:

- Իսկ դուք այստեղ տանձի կո՞թ եք, թե՞ ձմերուկի կորիզ,- ոտքը նորից գետնին խփեց պարոն Պահլևունին:- Որտե՞ղ է ձեր հեծելազորը, որտե՞ղ են ձեր կտրիճները...

Ստեղծվեց զինվորական հանձնաժողով, պարոն Սիլվեստը նշանակվեց հանձնաժողովի վարչապետ, Վարժապետ Սիմոնը՝ տեղակալ: Արշավանքից առաջ պարոն Պահլևունին ճառ ասաց և վերջում հանեց թուրն ու գոռաց.

- Օ՜ն, անդր առա՜ջ... Դեպի Չանաղչի՜...

Թալանը եղավ այնպես, ինչպես որոշել էր պարոն Պահլևունին: Յուրաքանչյուր ծուխ պարտավոր է իր ունեցած զնգուն ոսկին հանձնել ապագա պետության մեծամեծին: Պարոն Պահլևունու քսակը կամաց-կամաց լցվեց, տոզեց ու ծանրացավ: Քսակի հետ տոզեց ու ծանրացավ նաև պարոն Պահլևունին, ու մատը ճոճեց խմբապետ Խորենի վրա.

- Քյոփողլու Խորեն, դե հիմա պատմիր տեսնեմ՝ պարոն Ապետնակին ինչպես դեռ գահ չբարձրացած՝ գահընկեց արեցիր:

Խմբապետ Խորենը, որ սպասում էր այդ հարցին, գլուխ տվեց ու պատասխանեց.

- Ձերդ գերազանցություն, պարոն Ապետնակը բալշևիկների անմեղ զոհն է:

- Իսկ դու, տանձի կոթ, ինչո՞վ կարող եմ համոզված լինել, որ կմնաս միշտ ինձ հավատարիմ:

- Երդվում եմ իմ կյանքով... Դուք, պարոն գնդապետ, մեր ազգի հույսն եք:

Բայց հաջորդ օրը «ազգի հույսն» արդեն չկար: Չկար ոչ նրա թիկնապահը և ոչ էլ ոսկու քսակը: Խմբապետ Խորենը փափախը գետնովը տվեց, վիրավորված գայլի պես սկսեց ոռնալ.

- Վա՜յ, էդ Թիփլիզի կինտո՞ն մնաց, որ խաբի ինձ...

Իսկ Ուստա Ծատուրը այդ առթիվ իր «Օրագրում» գրեց, «Խմբապետ Խորենը Չանաղչուց եկավ խիստ կատաղած, հայհոյեց Սիմոն վարժապետին.

- Դու մարդ չես,- ասաց,- փալաս ես, ասենք թե՝ ես հարբած եմ եղել, բան չեմ հասկացել, ասենք թե՝ պարոն Սեդրակը ապուշի մեկն է, բա դու ինչպե՞ս ես հավատացել այդ ավազակ շան որդուն:

Հետո զայրույթի մի մասն էլ թափեց պարոն Սիլվեստի վրա. «Դու էլ Համադանի էշ ես, փալանդ է պակաս»: Պարոն Սիլվեստը խոսքի տակ չմնաց. «Համադանի էշը հենց դու ես,- ասաց,- որ Լեռնակերտում դարձար խաղք ու խայտառակ»:

Իրար լավ անպատվեցին, իրար շան տեղ կապեցին, խմբապետ Խորենն էլ տվեց ջարդեց պարոն Սիլվեստի շուշաբանդները և գոռաց.

- Չորսաչքանի ղուռումսաղ, դե հիմա գնա քեզ համար սպարապետ գտիր: Ա՜յ, ես ձեր կնիկն ու մերը, ես ձեր...

Թոքու՜շ, Խորեն, թոքու՜շ»:

ԳԺԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ

Ղարաբաղում որտեղ մի խելառ ու գիժ կա, մի օր, ի վերջո, հայտնվում է Լեռնակերտում...

(Ուստա Ծատուրի օրագրից)

Մեծահարուստ, գորգերի ու կտորեղենի վաճառական Բիրղամ Դոնբազովի քալլագյոզ, ղումարբազ, քեֆչի Աղամը Ղազանչեցոց ժամի բակում տեսավ հայտնի ձիավաճառ Ամիրբար Չարչիխանյանի աղջկան, երակներում արյունն ասես կրակի պես թշշաց, գլուխը պտտվեց. չլսեց զանգերի երկար ու ձիգ ղողանջը, չիմացավ, թե ինչպես մտավ աստծո սուրբ տունը, չլսեց, թե տեր Հովսեփը ինչ էր խոսում բեմից: Նրա ուշքն ու միտքը Բարիշկայի վրա էր, Բարիշկայից բացի՝ ուրիշ ոչինչ չէր տեսնում:

Որքա՞ն մնաց եկեղեցում, կողքին ո՞վ էր կանգնած՝ այդ էլ չիմացավ. խելակորույս դուրս վազեց, կանգնեց բակում, և երբ Բարիշկան ուզում էր ֆայտոն նստել, մոտեցավ, գլուխն ասպետավարի խոնարհեց ու խոսեց.

- Ինչո՞վ կարող եմ ծառայել օրիորդ Բարիշկային:

Օրիորդ Բարիշկան ոչ միայն նրան չարժանացրեց իր մեն մի ժպիտին, այլև չնայեց՝ տեսնի շո՞ւն է հաչում, թե՞ կատու է կլավում: Աղամի սրտում մի բան փլվեց, ինքն էլ հաստատ չիմացավ, թե ինչ փլվեց, արյունը ոնց որ քլթքլթաց երակներում, և այնպե՜ս հառաչեց, որ ձիերը խրտնեցին, փախցրին ֆայտոնում նստած Բարիշկային, տարա՜ն, տարա՜ն, տարան... թե ուր տարան, դա Աղամի իմանալու բանը չէ:

Վա՜յ, անմուրազ Աղամ, սարսաղ Աղամ, Ամիրբար Չարչիխանյանի աղջիկը քեզ մի քնձռոտ, քոսից սատկող շան տեղ չդրեց, չնայեց տեսնի՝ դու իսկապես մա՞րդ ես, թե՞ մայմունի մեկը: Դե հիմա գնա գլուխդ ժամի պատերովը տուր, գնա կանգնիր Ջըդըռ-դուզում, Համադանի ավանակի նման զռռա, թող խալխը նայի ու մի կուշտ ծիծաղի: Արա՜, ինչպե՞ս է, որ էն հացը աչքերդ չի քոռացնում, էն լակած արաղը և գինին քթովդ չեն թափվում... Վա՜յ, անմուրազ Աղամ, խաղք ու խայտառակ Աղամ...

Աղամը հերսոտվեց, դիվոտվեց, գժվեց, գրպանից հանեց հինգ տրաքչանի նագանը, հինգ անգամ կրակեց օդում, հայհոյեց Բիրղամ աղային, իր ողորմածհոգի պապին ու տատին, որ այդ գծուծ, փողի համար հոգի տվող Բիրղամին օրորոցում չեն խեղդել: Հետո իրեն գցեց Մնացական Դանդարովի ֆայտոնի մեջ ու բղավեց.

- Քշի՛ր, Մնացական, քշի՛ր... Ուր ուզում ես՝ քշիր, ուր ուզում ես՝ տար, թեկուզև դժոխքի դուռը: Հա՛ դժոխքի դուռը, ես դրախտում տեղ չունեմ, դրախտն ինձ համար չի:

Կուշտ կերած ձիերը նույնպես դիվոտվեցին, թռցրին ֆայտոնը, և քիչ էր մնում գիժ Ատանին ոտնատակ անեին: Տկլոր, անտուն, անոթի, բայց իր մերկությամբ բախտավոր, իր գժությամբ երջանիկ, իր հիմարությամբ խելոք, իր դժբախտությամբ ուրախ Ատանը հարկ չհամարեց հայհոյել շաշ-

ված ֆայտոնչի Մնացական Դանդարովին ու դիվոտված Աղամին՝ խելագար-խելագար ծիծաղեց ու ոռնաց.

- Ո՜ւռ՜ւռ՜ւ... Աղա՜մը, Աղամ Բիրղամի՜չը...

Աղամն ի՞նչ: Մի հարցնող լինի, տո՛, քամակը բաց շաշի գլուխ, Աղամն ի՞նչ, գի՞ժ է, սարսա՞ղ է, տկլո՞ր է... Ախր, Աղամն ի՞նչ, այ վանքի տավար:

- Դեպի Ջըդըռ-դուզ,- Աղամը գրպանից հանեց հինգ տրաքչանին, ուզում էր Թոփխանայի մեյդանում էլ աղմուկ բարձրացնել, բայց փամփուշտ չկար, վերջացել էր, իսկ Թոփխանան վաղուց էր դատարկվել. մարդիկ գնացել էին իրենց գործին:

Ջըդըռ-դուզում մղկտում էր Չանաղ Հաբեդի քամանչան, Խանանդա Շաշան, դժբախտ Շաշան, իր ծնված օրից՝ կանանց համար հոգի տվող Շաշան այնպես էր կլկլացնում, կարծես աշխարհի վերջն է, և աշխարհն էլ ըստ նրա կլկլոցի՝ ընկույզի պես մի փուչ բան է, խնձորի նման որդնած, երկնքի պես ունայն: Վա՜յ, փուչ աշխարհ, դատարկ աշխարհ, անտեր աշխարհ, ինչո՞ւ ես ստեղծվել:

Խանանդա Շաշան տեսավ դիվոտված Աղամին, դափը դրեց ականջին ու կլկլացրեց մի ուրիշ երգ.

Էս աշխարհը ստեղծվել է չարի համար,
Տառապում եմ հավատարիմ յարի համար,
Ինչի՞ս են պետք ոսկի, արծաթ ու աբրեշում,
Կյանքս կտամ մի սիրունի խալի համար:

Խանանդա Շաշան մի քիչ Սայաթ-Նովա է, մի քիչ Միսկին Բուրջի, մի քիչ Հաֆեզ, մի քիչ էլ Օմար Խայամ: Ամենից մի քիչ վերցնում է, դարձնում իրենը, կլկլացնում, և ավազակը լավ է երգում:

Աղամը դափը խլեց նրա ձեռքից ու բղավեց.

- Հերի՛ք է, գլխակեր բայդուշ:

Չասաց, թե ինչու է հերիք: Աշխարհն արդեն դադարել էր նրա համար գոյություն ունենալուց. Թոփխանայի մեյդանն արդեն մեյդան չէր, այլ դատարկ տարածություն, Բիրղամ աղան մեյմունի մեկն էր, տեր Հովսեփը սև ագռավ էր, իսկ այն սև ագռավը, որ թառել էր ծառին, կոկորդ էր պատռում, սև շվաք էր: Աշխարհը նրա համար մի արմաղ-շարմաղ Բարիշկա էր, աշխարհում Բարիշկայից բացի ոչինչ չկար:

Աղամի կոկորդը քոր եկավ, աչքերը լցվեցին, մոռացավ, որ ատրճանակը դատարկ է, պաղ փողը դրեց ճակատին, բայց որովհետև անտերն առանց փամփուշտի գանգ չի ցրիվ տալիս, գոչեց.

- Խանանդա Շաշա, բա էս անտեր կարկաժս ո՞նց ցրիվ տամ:

- Աղամ, դու տղամարդ ես,- Շաշան գրկեց նրա գլուխը,- Աղամ, դու Բիրղամ աղայի տղան ես:

Աղամի հոգում նոր նինջ մտած դևերն արթնացան:

- Բիրղամ աղայի հերն անիծած, քու էլ հերն անիծած: Ես էն տղամարդու հերն էլ կանիծեմ, որ մինչև առավոտ ինձ հետ քեֆ չանի: Աշխարհում

մեռնել կա, իսկ մեռնելուց առաջ ինչո՞ւ այնպես չապրենք, որ մեռնելուց հետո ասեն՝ էս շան տղան կյանքը տվեց իր սիրուհու խալի համար:

Խորոված մանղալի վրա ճլճլաց, Չանաղ Հաբեդի քամանչան մղկտաց, մղկտացրեց աշխարհի քար սրտերը: Աղամի արդեն բարակած, մի թելից, մի մազից կախված սիրտը ծլնգաց ու ծլծլաց հալվող մոմի պես, և նա հառաչեց.

- Բարիշկան ինձ քոսոտ շան տեղ չդրեց, Բարիշկա՜ն...

Աղամը լալիս ու ծիծաղում է, ծիծաղում ու լալիս է, բղավում ու հայհոյում է, և ամենից շատ հայհոյում է Բիրղամ աղային, որ իրեն լույս աշխարհ է գցել, արժանացրել Հիսուս Քրիստոսի չարչարանքներին: Հետո հիշեց իր սիրեկան Ալմաստին, որ Գուրզա օձի նման փաթաթվում է իրեն, օձի նման լեզու է բանեցնում, օձի նման գալարվում է ու ասում. «Աղամ, եթե հանկարծ սիրես ուրիշին, կգնամ ինձ Ջըդըռ-դուզի քերծից գցեմ ձորը, շներին ու ղուզղուններին բաժին դառնամ...»:

- Լիրբը ստում է,- Աղամը գինու բաժակը սեղմեց ափի մեջ ու փշրեց, գինին արյան պես կաթկթեց նրա մատներից:- Հիմա ո՞նց եք, որ գնամ էդ լրբին բերեմ էստեղ, լրիվ մերկացնեմ: Թող Շուշին թամաշա անի: Թող որքան մերկ կնկա կարոտ մարդիկ կան՝ գան թամաշա անեն:

Շուշին շատ թամաշաներ էր տեսել, այդ մեկն էլ որ տեսներ, էլի ոչինչ չէր փոխվի, ոչինչ չէր պակասի. Ջըդըռ-դուզը կմնար նույն Ջըդըռ-դուզը, Քաջքի մահլեն՝ նույն Քաջքի մահլեն, Գիժ Ատանը՝ նույն Գիժ Ատանը, Բիրղամ աղան՝ նույն ժլատ Բիրղամ աղան: Իսկ արմաղ-շարմաղ Բարիշկան, մեղրն ու յուղն իրար խառնած Բարիշկան... Հնար լիներ, գլուխդ դնեիր ծնկներին... Չէ, ինչո՞ւ ծնկներին, ոտքերի տակ դնեիր, լաց լինեիր, այնքան լաց լինեիր, որ մեռնելդ գա: Որ մեռնում ես, շունշանորդի, լավ մեռիր, այնպես մեռիր, որ Ղարաբաղը դրնգա:

Խանանդա Շաշան հասկացավ Աղամ Բիրղամիչին, Չանաղ Հաբեդին մի բան ասաց, Չանաղ Հաբեդը մղկտացրեց քամանչան, Խանանդա Շաշան այդ մղկտոցին խառնեց իր երգը.

Երվում եմ յանա-յանա,
Ա՛յ անջիգյար, էս ի՞նչ բանա,
Մի անգամ էլ թող քեզ նայեմ,
Գուցե սիրտս քիչ դինջանա:

- Չէ՛, սիրտ չի մնացել,- Աղամը գլուխը դրեց սեղանին, փակեց աչքերը:

Նա քնեց խռոված, խռոված արթնացավ, բայց միտքը՝ պոչն ու ականջները կտրած շան պես դեռ արթուն էր: Այդպես խռոված անցավ Թոփխանայով, Քաջքի մահլեյում մի քիչ դիվոտվեց, բարձրացավ Ճակուռի ձորով, գնաց մտավ Բիրղամ աղայի դուքանը:

Կեսօր էր, Շուշին ուղտաքուն էր մտել, ճանճ տզզար, տզզոցը Պեխ աղբյուրից կլսվեր: Բիրղամ աղայի գործակատար Երանոսը գլուխը դախլին դրել, այնպես էր քուն մտել, կարծես գիշերը Շոշի Սանգարներում կարճ կորեկ էր հնձել: Աղամը բռնեց նրա ուսերից, թափահարեց, ասես թթի ծառ է,

հիմա թութը խշշալով կթափվի,- քաշեց դեպի իրեն, հայացքով ցույց տվեց երկաթե դախլը:

- Մեջը որքան փող կա, հանիր տուր ինձ:

- Բիրղամ աղան կսպանի,- վախեցավ Երանոսը,- գնամ հարցնեմ:

- Ի՞նչ հարցնես, ախմախ,- Աղամը գժվեց,- քեզ ո՞վ է ասում հարցրու: Բիրղամ աղան քեզ ի՞նչ պիտի անի: Թե որ բերանը բացեց՝ էն աստվածը, փորը ծխով կլցնեմ: Վախենում ես՝ չլցնե՞մ: Քո արևը, կլցնեմ:

Աղամը չհաշվեց վաճառասեղանի վրա թափված թղթադրամները, հավաքեց, լցրեց գրպանները, գնաց ուղիղ Բերդինկա Սանասարի «Լավ խորոված, լավաշ հաց» խորտկարանը, գրպանից հանեց փողերը, ասաց.

- Բերդինկա ախպեր, մեր ախպերությունը վկա, թե որ մի բան պակաս լինի, թափանթրիքդ ցրիվ եմ տալու: Վախենում ես ցրիվ չտա՞մ: էդ մեկ: Կրկնիր՝ էդ մեկ:

Սանասարը կրկնեց.

- էդ մեկ, Աղամ ախպեր:

- Իմ անունից մարդ ես ուղարկում Ամիրբար Չարչիխանյանի մոտ:

- Աղամ ախպեր, ես էդ մըզմըզի հետ խոռով եմ:

- Իմ ի՞նչ գործն է, թե խոռով ես. գնա ոտը պաչիր ու հաշտվիր: Չէ՛, մարդ չես ուղարկում, դու ինքդ գնում ես ու հրավիրում... ինչպե՞ս են ասում...

- Ընտանյոք հանդերձ:

- Ըհը՛, ընտանյոք հանդերձ, էդ երկու:

- էդ երկու:

- Երրորդը և ամենակարևորը. եթե օրիորդ Բարիշկան այդ ընտանյոք հանդերձում չեղավ, լավ իմացիր, քո ազիզ ախպերը, հրե՜ն, տեսնո՞ւմ ես, էն չափարի տակին թազնած շունն է լինելու:

Աղամը երկու բաժակ թթի օղի խմեց, կանչեց Գիժ Ատանին, բուռը մի արծաթե դրամ խոթեց ու պահանջեց հաշվել, թե աստծո Շուշի քաղաքում քանի գիժ կա:

Ատանն ամեն գժի անվան վրա մի հռհռոց արձակելով հաշվեց.

- Պել Վանին, քոսը ընդրա ջանին՝ հի՜, հի՜, հի՜... Տավար Ըռքելը, ես նրա մերը՝ հի՜, հի՜, հի՜... Ճապաղ Գյուլումը, մեր թաղի զուլումը՝ հի՜, հի՜, հի՜... Կռեչան Խեչանը, թող դուրս գա ջանը՝ հի՜, հի՜, հի՜...

Հաշվեց, չմոռացավ նաև իր անունը: Եղավ քսաներկու գիժ:

- Ատան,- Աղամը ժպտաց,- իսկ դու չե՞ս կարծում, որ մեր արքայական Շուշի քաղաքի համար քսաներկու գիժը շատ է քիչ: Ինձ էլ հաշվիր: Ես գժերի գիժն եմ, գժերի թագավորը:

- Փա՜ռք քեզ, աստված,- Ատանը դեմքին խաչ հանեց և երկու ձեռքը պարզեց վեր,- փա՜ռք քեզ, տեր երկնային, մենք էլ արդեն թագավոր ունենք:

Երևի Շուշին իր ստեղծման օրից այդպիսի փառահեղ խնջույք չէր տեսել: Հրավիրվել էին Խանանդա Շաշան ու Չանաղ Հաբեդը, Դուդուկ Ենովքն ու Թառչի Մակարը, Դափչի Գարան ու Քյանդիրբազ Մամիկոնը, Աշուղ Գարաքն ու Նաղարա Սրափիոնը, Պատիֆոն Զիզին ու Գրամաֆոն Գափռյելը, Դու-

խավոյ Անդրուշան ու Գարմոն Մուխայել Բաբուռյանը… Լեռնակերտից հրավիրվել էր ինքը՝ թամադաների թամադա Մուշեղ Չանչախովը:

Երբ Ամիրբար Չարչիխանյանն ընտանյոք հանդերձ իջավ Ֆայտոնից, քառասուն հրացանից քառասուն կարմիր բոց ժայթքեց, քառասուն ջահելներ քառասուն գորգ փռեցին թանկագին հյուրերի ոտքերի տակ: Այդպես լինում է միայն հեքիաթներում: Թամադաների թամադա Մուշեղ Չանչախովը այնքան լավ խոսեց, այնքան անուշ խոսքեր ասաց այդ շանորդին, որ Ամիրբար Չարչիխանյանի բերանը բաց մնաց: Դուդուկը մղկտաց, զուռնան ծկլթաց, քամանչան հեծկլտաց, Շաշան երգեց աշխարհի ամենալավ երգը: Շաշան, այդ բայղուշը, լացացրեց, ամա՜ն, լացացրեց:

Ղարաբաղում ալվան վարդ ես, այ իմ գոզալ,
Շուշվա բաղում դու մի հատ ես, այ իմ գոզալ,
Ջրդրռ-դուզի քերծից գնամ ձորը ընկնեմ,
Չեմ հասկանում, թե ինչ մարդ ես, այ իմ գոզալ:

Այդ պահին Աղամ Բիրղամիչի համար աշխարհում մի ուրիշ աշխարհ կար, և այդ աշխարհը Բարիշկան էր: Երկնքի միլիոնավոր աստղերի մեջ մի աստղ կար, և այդ աստղը Բարիշկան էր: Աշխարհի անմուրազների ու դժբախտների մեջ մի դժբախտ կար, և այդ դժբախտը Աղամն էր: Հիմա կգնա ու կմոտենա Բարիշկային, կողքից կախած սուրը կհանի ու կասի. «Բարիշկա, հոգիս, ջանս, կյանքս, առ էս դամեն, սիրտս խրիր ու վերջացրու: Մի օր ծնվել եմ, մի օր էլ պիտի մեռնեմ: Դե որ մեռնել է, թող քո ձեռքով մեռնեմ»:

Հետո Աղամը զգաց, որ հարբած է, լեզուն ամուր պահեց ատամների տակ, զսպեց երակներում թշշացող արյան հոսքը, նայեց տեսավ Բարիշկան աչքն իր աչքին է գցել, (թե՞ այդպես թվաց) սիրտը թունդ ելավ. ո՞նց էր, որ չասաց՝ շնորհակալ եմ, թանկագինս, որ ինձ հիմա շան տեղ ես դնում: Ուզո՞ւմ ես գնամ ձեր բակում վեր ընկնեմ, պոչս գետնին քսեմ, ձեռքերդ ու ոտքերդ լիզեմ և ուրախությունից կլանչեմ: Դու քո սիրուն ձեռքերով ինձ շղթայիր, կապիր ձեր դարպասի կողքից, և մարդ չէ, հավքն էլ այդ կողմերով չի անցնի:

- Աղամ Բիրղամիչի կենացը…

Երևի թամադաների թամադա Մուշեղ Չանչախովը շատ լավ խոսքեր ասաց, թե չէ՝ ինչո՞ւ պիտի Բարիշկան այդպես նայեր Աղամին ու ժպտար: Այդ նա չէ՞ր, որ ասաց՝ Աղամ Բիրղամիչ, ձեր կենացը:- Նա էր, աստվա՜ծ իմ, նա էր, նրա ձայնն էր: Ոնց որ ժայռից պոկված զուլալ աղբյուր. խմես, խմես, չկշտանաս, գլուխդ թաղես այդ զուլալության մեջ ու խեղդվես:

- Սազանդար, տո՛ւշ…

Աղամը կարծես չզգաց, որ դա իր ձայնն է, որ իր երակներում իր սեփական արյունն է հոսում, որ այդ ոտքերն ու ձեռքերն իրենն են… Դա մի խելագար պոռթկում էր, խելագար մի հողմապար, և պարողն ինքն էր՝ շուշեցի մեծահարուստ Բիրղամ աղայի միանձար որդի Աղամը: Ականջներում լեռնաղբյուրի կարկաչն էր, աչքերում անծայրածիր մի տարածություն, և այդ տարածությունը լցված էր Բարիշկայով: Շուշի քաղաքում ոչ ոք Աղա-

մի պես չէր կարող պարել, Աղամի պարն ուրիշ է, ուրիշ են նրա ցասկոտ պտույտներն ու ոտքերի խաղը: Գիժ Ատանը, որ կանգնել թթենու տակ, նայում էր, զարմացած ոռնաց.

- Ո՜ւռ՜ւռ՜ւ... Աղամը...

Այսինքն՝ Աղամը տղամարդ է, պրիստավին, ոստիկանապետ Լալաևին, դատավոր Մարտիրոս Բուռնոթքաշյանին, գավառապետին շան տեղ չի դնում: Դե հիմա թող Տմբլաչի Խաչանն իր դհոլին խփի, ժուռնալներում ու գազեթներում ինչ ուզում է՝ գրի: Թող վարժապետ Սպանդարը կարդա նրա գրածները ու ծիծաղի: Թող Բիրղամ աղան տեսնի իր դատարկված դախլը ու կատաղի:

Հետո...

Հետո Աղամ Բիրղամիչը չի հիշում, թե ով էր իր ականջին շշնջում. «Բարիշկայի սիրտը սեր ես գցել, այ քափուռ»: Չի հիշում, թե ովքեր իր թևերն ընկան ու տարան:

Արթնացավ, գլուխը պտտվում էր, բերանը չորացել էր. տրորեց աչքերը, տեսավ մահճակալի կողքին կանգնած կիսամերկ Ալմաստին, կռնչաց.

- Բայղո՜ւշ, առանց ինձ քունդ չի՞ տանում:

Ալմաստը լրբածիծաղ տվեց:

- Էդ ո՞ւմ համար էիր քեֆ սարքել: Կարծում ես՝ չգիտե՞մ: Բա ինչի՞ անտեր շան նման քուչեքն ես ընկել: Թողնեմ, որ Շուշի քաղաքում խաղք ու խայտառակ դառնա՞ս:

Աղամը չխոսեց, հագավ շորերը, դուրս եկավ փողոց, գնաց Թոփխանայի կողմերը: Ատանը իր ատանությունն էր անում, խալխին ծիծաղեցնում: Տեսավ Աղամին, աչքով արեց, էլի ծիծաղեց, բայց խելոք բան ասաց.

- Գժերի թագավոր, օրիորդ Բարիշկայի ոտքերի տակ շան պես թագնես, շան պես սատկես:

- Ռեխդ փակի՛ր, Ատան,- բարկացավ Աղամը:

- Աղամ Բիրղամիչ, Գժերի թագավորության մեջ բոլոր գժերն էլ հավասար իրավունք ունեն:

Գիժ Ատանն իսկապես խելոք էր խոսում: Չէ՛, Շուշիում միայն երկու գիժ կա, մեկը Ատանն է, մյուսը՝ ինքը: Իսկ այդ երկու գժերից ո՞վ է ավելի խելոքը:

- Ռեխդ փակի՛ր, Ատան...

- Կարծում ես՝ փակելը հե՞շտ է: Իսկ ինչո՞ւ երեկ դու չփակեցիր քո ռեխը: Ինչե՞ր էիր դուրս տալիս: Ասում էիր՝ ամբողջ Շուշին չարժե Բարիշկայի մի մազին:

- Ատան, կսպանեմ:

- Բարիշկային երկինք բարձրացրիր, գնացիր մտար լիրբ Ալմաստի ծոցը: Բարիշկան քեզ լրիվ կգժվեցնի, և մենք սրտակից ընկերներ կդառնանք, գժերի թագավոր Աղամ Բիրղամիչ:

Աղամը մի բան պիտի աներ, որ Շուշին ցնցի: Գնաց դուքանների կողմը, Դուդուլ Դավութի խորտկարանում երկու բաժակ օղի գցեց. գրպանում մի

սև շահի չէր մնացել՝ գազազեց, նորից հայհոյեց ժլատ ու ագահ Բիրղամ աղային. դուրս եկավ խորտկարանից, ու տեսավ նրան՝ Ավագջան Բարաթքարհունջյանի կտորեղենի խանութի կողքին, մոտեցավ ասաց.

- Բարիշկա, ես քու շունն եմ, ինչո՞ւ ես ինձ սպանում:

Նրա ձայնը պատռեց կեսօրվա տաք լռությունը. վաճառասեղանների ետևից վաճառականները զկռտալու պես փռթկացրին, բազազ Սարգիսը հռհռաց, հաշպաս Սաղաթելը ծիծաղից բռնեց փորը, գինեվաճառ Մուխանը տակառի ետևից բարձրացրեց մերկ գանգն ու այնպես ծիծաղեց, կարծես ձայնը դուրս էր գալիս գինու կարասից... Բարիշկան թեթևակի շարժեց հոնքը, բայց չխոսեց, գլուխը բարձր բռնած, շորորվելով հեռացավ: Աղամը լաց լինելու նման ծիծաղեց, ծիծաղելու նման լաց եղավ, լացն ու ծիծաղն իրար խառնեց, բայց գտավ, որ ինքը ճշմարտությունն է ասել, և փույթ չէ, թե ով ինչպես կհասկանա այդ ճշմարտությունը: Կողքին կանգնած էր իր մերկությամբ ու գժությամբ երջանիկ Ատանը, իր անգիտությամբ բախտավոր Ատանը, և նա հաստատեց.

- Դու ճիշտ ես, ո՜վ գժերի անմուրազ թագավոր Աղամ Բիրղամիչ*:

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ

Սիրուց մերժված, վառված, տոչորված ու թալանված Աղամ Բիրղամիչը Կանաչ ժամի գմբեթից թքած ունեցավ իր հայր Բիրղամի ճակատին, մի զույգ ատրճանակ խրեց գոտու տակ, փափախը քաշեց ճակատին, նստեց Մնացականի Դանդարովի ֆայտոնը, երեք անգամ կրակեց օդում ու հրամայեց.

- Դեպի Լեռնակերտ:

Նա Շուշիում այլևս անելիք չուներ, հոր վրա ատրճանակ էր քաշել, Գիժ Ատանի ճակատը համբուրել և համարել Շուշի քաղաքի ամենախելոք մարդը, ու դարձել բեղից ընկած բրինձ: Ինքն էլ չգիտեր, թե ինչու ասաց՝ դեպի Լեռնակերտ, քանզի այդ պահին ավելի հարմարը ջահանդամն էր: Բայց նրա միտքը գործում էր ճիշտ այն ժամացույցի պես, որի մեծ ու փոքր սլաքներն իրարից անկախ պտտվում են իրենց առանցքի շուրջ:

Աղամ Բիրղամիչը Լեռնակերտ հասավ ճիշտ այն ժամին, երբ Վարժապետ Սիմոն Սարխոշյանցն իր ստամոքսի պահանջով պտտվում էր Դուքան Սեդրակի տան շուրջը: Եվ Ղարաբաղի չթագադրված գժերի թագավոր Աղամ Բիրղամիչին դիմավորեց հենց ինքը՝ Սիմոն վարժապետը:

Այդպես միայն Գերմանիայի արտաքին գործերի մինիստրը կարող էր դիմավորել Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստրին:

- Ողջունում եմ ձեր գալուստը, մեծարգո Աղամ Բիրղամիչ,- ասաց նա,- արդարացի է ձեր հզոր պոռթկումը, քանզի դուք ձեր այդ վեհ իդեալներով ընդունակ եք ավելի փառապանծ գործերի: Դուք, ով մեծապատիվ հերոս, գործունեություն եք ծավալում այնպիսի պատմական ժամանակաշրջա-

նում, երբ Ղարաբաղը կանգնած է հրաբուխների վրա: Իսկ ինչո՞ւ դուք չդառնաք հրաբուխի խառնարանից ժայթքող լավան, որ ահավասիկ շուտով կշառաչի Լեռնակերտում: Թույլ տվեք անձամբ սեղմել ձեր աջը:

Աղամ Բիրղամիչը Վարժապետ Սիմոնի այս ճառից համարյա բան չհասկացավ, բայց քանի որ հերոս էր հռչակվել, հանեց ատրճանակն ու հարցրեց.

- Առաջինն ո՞ւմ թափանթրիքը ցրիվ տամ,- ու նկատեց Դուքան Սեդրակին և նշան բռնեց նրա փորին:- Ես հիմա մի գնդակով այդ ախմախին կպառկեցնեմ: Բիրղամ աղային թաղեմ, թե չպառկեցնեմ:

Դուքան Սեդրակն առանց գնդակի արդեն պառկել էր գետնին ու ոռնում էր.

- Բիրղամիչ, հերոս Բիրղամիչ, չկրակես, ես էլ եմ ձերոնցից:

- Լավ, գնդակը խնայեցի,- մեծահոգաբար ժպտաց Աղամ Բիրղամիչը, ատրճանակը խրեց գոտու տակ ու դարձավ Սարխոշյանցին.- Իսկ քո էդ ճառից փորս չկշտացավ... Բա հերոսին էդպե՞ս են դիմավորում:

- Հարկավ, այս նշանավոր օրը կնշենք,- Վարժապետ Սիմոնը մոտեցավ Դուքան Սեդրակին,- թշվառական, դու այդպե՞ս ես հարգում հերոսին:

Խորոված ի հոտը բռնեց Լեռնակերտը: Խմբապետ Խորենը եկավ իր երկու թիկնապահներով, պարոն Սիլվեստը մաքրեց ակնոցի քրտնած ապակիներն ու Լալախանբեկյանի ականջին ասաց.

- Աղամ Բիրղամիչը թափով տղամարդ է երևում, մենք անշուշտ նրան կդարձնենք մենշևիկ, եթե, իհարկե, Վարժապետը չխլի մեր ձեռքից:

Ճաշկերույթն անցավ այնպիսի բարեկամական ու անկեղծ մթնոլորտում, որ Խմբապետ Խորենը, լավ կոնծելուց հետո, հանեց մաուզերն ու բղավեց.

- Պարոնայք, ցրում եմ Լեռնակերտի նախկին կառավարությունը: Լիազորված եմ հայտարարելու, որ այսօրվանից երկիրն անցնում է զինվորական իշխանության ձեռքը, և պարոն Լալախանբեկյանին նշանակում եմ պրեմիեր-մինիստր:

Պարոն Սիլվեստին դուր չեկավ Խմբապետ Խորենի այդ լկտիությունը, բռունցքն իջեցրեց սեղանին ու գոչեց.

- Իրավունք չունեք, պարոն նախկին գեներալ-գնդապետ: Ձեզ ոչ ոք իրավունք չի տվել խառնվել քաղաքական հարցերին: Դուք տհաս եք այդ գործում: Ես, պարոնայք, մենշևիկյան կուսակցության անունից առաջարկում եմ Աղամի Բիրղամիչին նշանակել զինված ուժերի մինիստր, իսկ պարոն Խորենին ձերբակալել ու հանձնել զինտրիբունալին:

- Շուշաբանդներդ կջարդեմ,- Խմբապետ Խորենը ձեռքը տարավ դեպի գինու շիշը, սակայն Աղամ Բիրղամիչը բռնեց նրա ձեռքը:

- Պարոն Խորեն ես, թե ինչ զիբիլ ես,- ասաց,- եթե քեզ կարգին չպահես, էս սահաթին կճապաղացնեմ:

- Քածի գերի շան տղա,- Խմբապետ Խորենը փրփրեց,- Շուշի քաղաքում մի քածի համար քեզ խայտառակել ես: Ես թքել եմ քո Բարիշկայի վրա:

Աղամ Բիրղամիչը բռունցքի մի հարվածով տապալեց խմբապետին, կրծքին չոքեց ու ասաց.

- Խմբապետ Խորեն, եթե ներողություն չխնդրես, հենց էս սահաթին վերջդ է:

Պարոն Սիլվեստը այս դեպքն արձանագրեց որպես քաղաքական լուրջ հեղաշրջում, սեղմեց Բիրղամիչի ձեռքն ու ասաց.

- Դուք արդարացրիք մեր հույսերը:

Լեռնակերտում սկսվեց գժերի իշխանությունը:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ԼԱԼԱԵՎ

1919 թվականի դեկտեմբերին Ղարաբաղի գեներալ-նահանգապետը Լեռնակերտի վրա ոստիկանապետ նշանակեց Լալևին, որպեսզի զսպի խառնակիչներին ու խռովարարներին: Լալևը Լեռնակերտ մտավ ութ ստրաժնիկներով:

(Ուստա Ծատուրի օրագրից)

- Պարոն գեներալ-նահանգապետ, Ձերդ գերազանցություն, պատիվ ունեմ զեկուցելու, որ սույն թվականի դեկտեմբեր ամսույս 6-ին հանդիպեցի Լեռնակերտի քաղաքագլուխ Աղամ Բիրղամովիչ Տոմբազովին, նա ինքը՝ Ձեզ հայտնի շուշեցի վաճառական Բիրղամ աղայի հարազատ որդին, որը ոչ մի կուսակցության չի պատկանում, նախկինում եղել է յառնիյ կարտոժնիկ, սկանդալիստ, պիանիսկա, շուլլեր ու ժուլիկ... Նա ինքը, որ մի քանի տարի առաջ Շուշի քաղաքում շատ մեծ աղմուկ բարձրացրեց մի աղջկա համար և անպատվեց իր հորը՝ Բիրղամ աղային: Սակայն ներկայումս, դատելով Աղամ Բիրղամիչի վարքագծից, նա նշանավոր անձնավորություն է Լեռնակերտում և, կարծում եմ, որոշ հարցերում կօգնի մեզ՝ իրագործելու մեր նպատակները:

Պատիվ ունեմ հայտնելու նաև, որ Սիմոն Սարխոշյանցն ինձ է տրամադրել մի խումբ խռովարարների ցուցակը: Ահա դրանք՝ Մալաքյան Ալեքսան, Պետրոսյան Ծատուր, Առաքելյան Հարություն, Սամոգրադով Մատվեյ, Սահակյան Պողոս...

(Լեռնակերտի ոստիկանապետ Լալևի գաղտնի զեկուցագրից)

Ոստիկանապետ Լալևը կառքից իջավ Մեծ մեյդանում, կարգադրեց իր ստրաժնիկներին լինել զգույշ, առայժմ չդիմել խիստ միջոցների: Նրան թվում էր, թե իրեն անպայման պիտի դիմավորեր քաղաքապետը, բայց միակ դիմավորողը Գորոդովոյ Անտոնն էր, որը գլուխ տվեց ոստիկանապետին ու ասաց, որ Աղամ Բիրղամիչը կարգադրել է իր մոտ անցնել ժամը երկուսին: Դա իսկապես զայրացրեց ոստիկանապետ Լալևին, ու սև բաշլուղի մեջ փաթաթված այդ կարճահասակ մարդը բղավեց Գորոդովոյ Անտոնի վրա.

- Իսկ դու այդ ինչպե՞ս ես կանգնել: Զգա՛ստ, սրիկա՛: Ես հիմա կգնամ քո քաղաքապետի հերը անիծեմ:

Պարոն ոստիկանապետը հենց առաջին օրը սխալվեց իր հաշվիների մեջ: Աղամ Բիրղամիչը պատմության ուսուցիչ Արտավազդ Կարմիրյանի հետ դուռակի էր խաղում և, տեսնելով իր անկոչ հյուրին, նայեց ժամացույցին ու ասաց.

- Պարոն ոստիկանապետ, մինչև ժամը երկուսը դեռ երեք ժամ կա, այդ ինչո՞ւ եք շտապել:

Ոստիկանապետ Լալանը չնահանջեց, երեք քայլ առաջ եկավ ու պատասխանեց.

- Պարոն քաղաքապետ, այսօրվանից գեներալ-նահանգապետի հրամանով ես նշանակված եմ այստեղ, այս քաղաքում ոստիկանապետ: Դուք պարտավոր եք...

- Ես ոչ մի բան էլ պարտավոր չեմ,- հանգիստ ասաց Աղամ Բիրղամիչը:- Նախ ես ոչ թե քաղաքապետ, այլ քաղաքագլուխ եմ, երկրորդ՝ ոչ մի շունշանորդի չպիտի խառնվի իմ գործերին: Երրորդ և ամենագլխավորը՝ քո այդ գեներալ-գնդապետը քեզանից կարող է կնյազ ու թագավոր սարքել, բայց ես թքել եմ բոլոր կնյազների ու թագավորների վրա: Այնպես որ, պարոն ոստիկանապետ, ոչ թե քաղաքագլուխն է ենթարկվում ոստիկանապետին, այլ ոստիկանապետն է ենթարկվում քաղաքագլխին: Ո՞վ է լսել, որ գլուխը ենթարկվի ոտքերին:

- Դուք մոռանում եք, որ ինձ գեներալ-նահանգապետն է նշանակել, և դուք պարտավոր եք ենթարկվել...

- Ենթարկվե՞լ... Ո՞ւմ ենթարկվել,- Աղամ Բիրղամիչը ծիծաղեց ու դարձավ Արտավազդ Կարմիրյանին,- այս տավարին կարո՞ղ ես բան հասկացնել:- Հետո հավաքեց սեղանին փռված խաղաթղթերը, դարսեց ու ձեռքով մոտ կանչեց ոստիկանապետին.- Թուղթ խաղո՞ւմ եք: Դուռակի: Խաղում ենք քո գեներալ-նահանգապետի վրա:

Ոստիկանապետ Լալանը լսել էր Աղամ Բիրղամիչի մասին, բայց այն, ինչ տեսավ, իր պատկերացրածից վեր էր:

Նա այդպես էլ չկարողացավ հասկանալ, թե գեներալ-նահանգապետին ուղղված իր գաղտնի զեկուցագիրն ինչպես է Աղամ Բիրղամիչի ձեռքն ընկել:

«Լեռնակերտում ոչ մի խռովարար չկա: Սրանից դենը քո այդ գեներալ-գնդապետին ինչ գրես, ինձ ցույց կտաս,- եզրափակեց Աղամ Բիրղամիչը:- Այսօրվանից քո այդ թուլաներն իմ հրամանատարության տակ են»:

Ուստա Ծատուրն ասում է, որ Բիրղամիչն իր սարքած օյինբազություններից հաճույք է զգում և հաճույք պատճառում ուրիշներին: Արդյոք պատճառը նորից այդ հաճո՞ւյքը չէր, որ նա հունվարի սառնամանիքին, Մեծ մեյդանում շարք կանգնեցրեց կիսամերկ ստրաժնիկներին, թե պիտի զինավարժություն անեք: Հրամանատարությունն էլ հանձնեց Գորոդովոյ Անտո-

նին: Որպեսզի այդ տեսարանը կատարյալ լինի, նա շարքի առջևում կանգնեցրեց հարբած ոստիկանապետին ու ասաց.

- Ձերդ գերազանցություն, լսեցեք ու կատարեցեք պարոն Անտոնի հրամանները:

Իսկ Գորոդովոյ Անտոնը, այդ բերանը կապած անասունը, այնքան էր ոգևորվել, որ իր քաջարի բանակին հրամայեց փորսուղ տալ Մեռել լողացնող Մանգասարի տան կողքի աղբանոցում ու սպասել Աղամ Բիրղամիչի հերթական հրամանին:

1920 թ. փետրվարին Շուշիի գավառի Լեռնակերտ քաղաքի ոստիկանապետ Լալանը գեներալ-նահանգապետից ստացավ հատուկ հանձնարարություն՝ մեկնել Խնածախ, Դաշբուլաղ և Խանաբադ գյուղերը՝ ձերբակալելու մի խումբ խռովարարների: Ոստիկանապետ Լալանն իր ստրաժնիկներով առավոտյան ճանապարհվեց, երեկոյան վերադարձավ քիթն ու մռութը ջարդված: Խանաբադցիները իրենց գործը լավ են տեսել, և հիմա ոստիկանապետ Լալանը չգիտե ինչ պատասխանի գեներալ-նահանգապետին: Նրան փրկեց Աղամ Բիրղամիչի հնարամտությունը, և նրա թելադրանքով գրեց.

«Պարոն գեներալ նահանգապետ,

Ձերդ գերազանցություն,

Պատիվ ունեմ զեկուցելու, որ Խնածախ, Դաշբուլաղ, Խանաբադ գյուղերում ընդհանրապես ոչ մի խռովության դեպք չի եղել, չհաշված այն փաստը, որ հարբածի մեկը Խանաբադում հայհոյել է Խմբապետ Խորենին, վերջինս ապտակել է նրան ու անվանել խռովարար:

Պատիվ ունեմ զեկուցելու նաև, որ պարոն Առուստամ Լալախանբեկյանը հաճախակի է նման սխալ տեղեկություններով պղտորում ջրերը: Թույլ տվեք հավաստիացնել Ձերդ գերազանցությանը, որ մեր ծառայությունը կատարում ենք անձնվիրաբար և այդ գործում մեզ օգնում է քաղաքագլուխ Աղամ Բիրղամիչը:

Լեռնակերտի տեղամասի ոստիկանապետ

Մ. Գ. Լալան»:

Արդյոք հասկանո՞ւմ էր ոստիկանապետ Լալանը, թե քաղաքագլուխ Բիրղամիչն ինչ խաղ է խաղում իր գլխին: Հասկանո՞ւմ էր, որ ինքը ենթարկվում է մի մարդու, որն, ինչպես Ալեքսանն է ասում՝ մեր ժամանակների Քաջ Նազարն է, միայն այն տարբերությամբ, որ Քաջ Նազարը վախկոտի մեկն էր, իսկ Բիրղամիչը համարձակ ու ճարպիկ արկածախնդիր է:

Եվ այս Բիրղամիչը նստել աշխարհի ուսերին, ծիծաղում է աշխարհի վրա, ինչպես հայտնի հեքիաթի Քաջ Նազարը... Եվ ինչու զարմանալ, երբ ոստիկանապետ Լալանն իր մի այլ զեկուցագրում Ձերդ գերազանցությանը թախանձագին խնդրում է «նկատի առնել Բիրղամիչի անձնվեր ծառայությունները»:

ՇՈԳԸ

Խմբապետ Խորենը թողեց Լեռնակերտը, գնաց գյուղերում ավազակություն անելու: Դե Լեռնակերտում բան չի մնացել, թալանել է: Վարժապետ Սիմոնը և Դուքան Սեդրակը էլի առաջվա պես լիզում են միստեր Սենգիստոնի ոտքերը: Թո՛ւ, շան տղերք, խեղճ շների հացն էլ կտրեցին:

Ժամկոչ Մանասը գողացավ ռուսական եկեղեցու զանգն ու փոխեց չորս գրվանքա գարու հետ:

Երաշտ տարի է, բերք չկա:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Շոգը չոքեց Լեռնակերտի բկին: Ուստա Ծատուրի դարբնոցում փուքսը հևաց ու թանչին տվեց: Պողոսը ջրի կուլան գլխին քաշեց, կլկլացրեց, սիրտը չհովացավ: Նալբանդ Աթունը փակեց արհեստանոցը, որովհետև այդ շոգին անասուն պայտելը մեղք է: Դուքան Սեդրակը ծուլորեն տարածեց թևերն ու հորանջեց.

- Շոգ է, խեղդվում եմ:

- Էս շոգը համաշխարհային մասշտաբի շոգ է,- ասաց Վարժապետ Սիմոնը:- Էսպիսի շոգ կարող է լինել միայն եգիպտոսում:

«Համաշխարհային մասշտաբի շոգը» դարձավ լայն քննարկման առարկա, և պայտառ Աթունը հարցրեց Ալեքսանին.

- Ալեքսան, բա լավ, խեղճ պարիժեցիք ինչպե՞ս են դիմանում էս շոգին:

- Պարիժի հերն անիծած, դու Լեռնակերտից խոսիր,- բարկացավ Ալեքսանը:- Դու Դուքան Սեդրակից խոսիր, որ հոր գլխի գինը դրել է շաքարի վրա: Պարոն Լալայանից խոսիր, որ անգլիացու զուռնայի տակ պապալ-պապալ է անում: Դու խոսիր խմբապետ Խորենից, որ գյուղերը թալանում է: Քեզնից խոսիր, Ուստա Ծատուրից խոսիր, ինձնից խոսիր...

Բայց Պարիժը մտել էր Նալբանդ Աթունի գլուխը, դուրս չէր գալիս:

- Չէ, Ալեքսան, աստծուն քարով մի տուր, ախր պարիժեցիք էլ մեզ նման հայ քրիստոնյաներ են:

- Է՛դ որտեղի՞ց իմացար:

- Գազեթում գրած ա:

- Այ ցավդ տանեմ, դու գազե՞թ ես կարդում:

- Ալեքսան, էդպես մի խոսիր, Պարիժը լավ քաղաք ա:

- Իսկ դու Պարիժում եղե՞լ ես,- հարցրեց Պողոսը:

- Եղել եմ, չեմ եղել, էդ քո գործը չի, դու փուքս փչող ես, գնա փուքսդ փչի:

Ալեքսանը գլուխն օրորեց: Զարմանալի մարդ է Նալբանդ Աթունը, մեկ էլ տեսար գլխում տարօրինակ մի հարց ծագեց: Անցած օրն էլ բռնել էր Վարժապետ Սիմոնի բկից, թե վարժապետ, կարո՞ղ ես ասել, աշխարհում քանի՞ քաղաք կա, քանի՞ կին և քանի՞ հավատ:

Գորոդովոյ Անտոնը՝ Լեռնակերտի առաջին և վերջին ոստիկանը, երկար թուրը բռնած կողքից, լնգլնգալով անցավ ցանկապատին քսվելով:

Այդպես անցնում է տիրոջ խնամքից զրկված շունը՝ նոր տեր գտնելու հույսով: Եվ եթե Լեռնակերտը չի կարողանում մի խեղճ ոստիկան պահել, նշանակում է կորցրել է իր գլուխը:

Մերզավեց Դուքան Սեդրակը շրխկոցով փակեց խանութի դուռը և քթի տակ աշխարհի հերն անիծեց: Լեռնակերտցիք այլևս իր խանութը չեն մտնում, առևտուր չեն անում: Գինին քացախ է կտրել, շաքարը խոնավացել է, կարագից շնահոտ է գալիս է: Եթե այդպես շարունակվի, կթողնի Լեռնակերտն ու կտեղափոխվի կամ Թիֆլիս, կամ Թավրիզ, կամ Թեհրան, կամ ջահանդամը: Թող Լեռնակերտը մնա առանց խանութի, թող Գորոդովոյ Անտոնը քաղցից զկռտա, թող Վարժապետ Սիմոնը իր յուղի մեջ տապակվի:

Ա՜զգ, ազգային գործիչնե՜ր, ազգային վեհ գաղափարնե՜ր...

Ազգա՞ն է, ազգ չկա: Կան ազգի անունով ազգի տունը քանդողներ, կան ազգային աղվեսներ: Անհավատ ժողովուրդ են լեռնակերտցիք, եկեղեցի են գնում միայն նրա համար, որպեսզի ծիծաղեն ժամկոչ-տիրացու Մանասի վրա: Ուստա Ծատուրին ասում են՝ «Աստված պահի երեխանեռիդ»: Ուստան ձեռքը թափ է տալիս.

- Թե որ աստված պահող լինի, իր որդի Քրիստոսին կպահեր, դռնեդուռ չէր գցի՝ Գորոդովոյ Անտոնի նման:

Իսկ ժամկոչ Մանասն էլ՝ «Քրիստոս հարյա՜վ... »: Ձահրումար, բոյդ թաղեմ...

Դուքան Սեդրակը մի անգամ էլ անիծեց աշխարհի հերը ու հևալով գնաց տուն:

- Կթողնեմ Լեռնակերտը,- բղավեց նա:- Ինձ համար Լեռնակերտ չկա: Լեռնակերտը սուտ է, ինչպես Քրիստոսը հարյավ...

Լեռնակերտ:

Լեռնակերտն երկու անհայտով հավասարում է Վարժապետ Սիմոնի համար: Մի անհայտը դաշնակցական կոմիտեն է, մյուսը՝ միստեր Սենգիստոնը: Որի՞ կողմը թեքվի: Երկու անհայտների պատասխանը մեկն է՝ զրո: Զրոն առանց միավորի թիվ չի, դատարկություն է, Գորոդովոյ Անտոնի գլուխն է: Սկզբում նա երկուսին էլ հավասարապես ծառայում էր, բայց հետո, չգիտես որտեղից, նորից գլուխ բարձրացրին էսէռներն ու մենշևիկները, հնչակներն ու մուսավաթիստները, անարխիստներն ու կարիերիստները, աջերն ու ձախերը, հավատացյալներն ու անհավատները... Պակասն էլ լրացրեց մենշևիկ Սիլվեստը: Եկավ Թիֆլիսից, մեծ ընկուզենու տակ ժողով արեց և ինքն իրեն ընտրեց Լեռնակերտի մենշևիկյան կուսակցության պարագլուխ: Մթամ եղած պարագլուխները քիչ են: Եվ բոլոր դրոշները խառնվեցին իրար, պարագլուխները սկսեցին իրար զզգզել, անպատվել աջ ու ձախ, ձախ ու աջ...

Նալբանդ Աթունը գլուխը հանեց արհեստանոցի փոքրիկ լուսամուտից ու ասաց.

- Հերի՜ք է, հերի՜ք է, այ շան տղերք, ձե՛զ էլ, ձե՛ր գաղափարներին էլ, ձեր ետևներից եկողներին էլ...

1918 թվականի սեպտեմբերին այդ աղմուկն ավելի սաստկացավ: Բաքվում տապալվել էր Կոմունան, իշխանությունը անցել մուսավաթների ձեռքը:

Վարժապետ Սիմոնը շտապեց Շուշի, միստեր Սենգիստոնի մոտ լիցքավորվելու: Նա սեղմեց միստերի լավ խնամված ձեռքը ու նստեց բազմոցին: Միստեր Սենգիստոնը վառեց կարճ ծխամորճը, փռվեց պատուհանի տակ դրած բազմոցին, ոտքը ոտքով գցեց: Մոթալ Մինասն ու Կարա-Բեքիրը հնազանդ թիկնապահների իրավունքով գրավեցին նրա աջ ու ձախ կողմերը: Միստերը խաղաց գրպանի ժամացույցի ոսկե շղթայով, փստացրեց ծխամորճն ու դարձավ Վարժապետ Սիմոնին.

- Միստեր Սիմոն, Լեռնակերտը լա՞վ...

- Լեռնակերտն այսօր ավելի օ քե՜յ, միստեր Սենգիստոն, - դեղնած ատամները ցուցադրեց Վարժապետ Սիմոնը:- Վերջացա՜վ, Փարիզի կոմունան այլևս չկա:

- Ալլահը անգլիացուն երկար կյանք տա,- շողոքորթեց Կարա-Բեքիրը:- Մենք առանց անգլիացիների կորած ենք:

- Անգլիացին ջենտլմեն է,- խոր գլուխ տվեց Մոթալ Մինասը:- Ղարաբաղն օրենքով պատկանում է անգլիացուն:

...Միստեր Սենգիստոնը երկար ճեմեց գորգի վրա ու շուռ եկավ Վարժապետ Սիմոնի կողմը.

- Խոսեցե՛ք, միստեր Սեմեոն, ես ձեզ լսել:

Սիմոնը խոնարհեց գլուխը.

- Ուզում ենք իմանալ, թե միստեր Սենգիստոնը ինչպե՞ս է զգում իրեն:

- Դուք միայն դրա համար եկե՞լ...

- Մենք շատ ուրախ ենք, որ անգլիացիները կարողացել են Բաքվում վերջ տալ...

Միստեր Սենգիստոնը չթողեց, որ նա ավարտի խոսքը, ոտը խփեց հատակին.

- Լռե՛լ, միստեր Սեմեոն, անգլիացին ազնիվ ջենտլմեն: Կոմունիստների գործին չխառնվել: Կոմունարներին գնդակահարել ոչ անգլիացի: Կոմունարներին դուք ինքներդ գնդակահարել:

Վարժապետ Սիմոնը ջրից հանած ձկան պես բերանը բաց ու խուփ արեց, որոնեց հարմար բառեր, չգտավ: Միստեր Սենգիստոնը ծխամորճը լցրեց, փլվեց բազմոցին ու ծուխը ագահորեն ներս քաշեց:

- Անգլիացին ազնիվ է,- ասաց նա:- Անգլիացին ձեզ օգնել, դուք խոզեր, չհասկանալ:

- Անգլիացին ազնիվ է,- թևերը կրծքին ծալեց Կարա-Բեքիրը: - Անգլիացին արյուն չի թափում:

- Այդպես է,- հաստատեց Մոթալ Մինասը:- Անգլիացիները աշխարհի ամենախաղաղասեր ժողովուրդն են:

Վարժապետ Սիմոնը քրտնեց:

Տոթ է, սոսկալի տոթ:

Ի՜նչ կլինի Լեռնակերտի վերջը:

Փողոցով դղրդոցով մի կառք անցավ, ինչ-որ մեկը կանչեց.
- Մածո՜ւն, լավ մածո՜ւն, գոմեշի մածո՜ւն...
Նրա ձայնը խլացավ աղմուկի մեջ:
Ի՞նչ կլինի Լեռնակերտի վերջը:

ԿԵՑՑԵ ԱՆԿԱԽ ԼԵՌՆԱԿԵՐՏԸ

Ղարաբաղի պրեմիեր-մինիստր Աղամ Բիրղամիչն ուղիղ մի ամիս քափ ու քրտինքի մեջ մտած գրքեր էր թերթում, որպեսզի իմանա, թե ինչ բան է «պրեմիեր-մինիստրը»: Նա խճճվեց պատմության էջերում, և քանի որ դպրոցում էլ պատմությունից թույլ էր, վարժապետ Հայրոն ասում էր. «Ապուշ ծնվել ես, ապուշ էլ կմեռնես», նա հազիվ մի կերպ հասկացավ, որ պրեմիեր-մինիստրը թագավորին հավասար բան է, իսկույն հրավիրեց պրես-կոնֆերանս ու հայտարարեց.

- Պարոնայք, ինչպես երևում է, Ղարաբաղը այնքան էլ փոքր տերություն չէ: Ուստի ես գտնում եմ, որ մեր հարաբերությունները հարկավոր է խզել Շուշի քաղաքից և Լեռնակերտը հռչակել անկախ տերություն:

- Կեցցե անկախ Լեռնակերտը,- գոչեց Դուքան Սեդրակը:

- Ձենդ կտրի,- Վարժապետ Սիմոնը խփեց Դուքան Սեդրակի գլխին,- իսկ դու ո՞վ ես, որ խառնվում ես մեր գործերին,- և ապա դարձավ Աղամ Բիրղամիչին.- Հարկավ, անկախությունը այս խառն օրերին մեզ շատ է հարկավոր, սակայն պարոն պրեմիերը մոռանում է գլխավորը՝ այդ անկախությունը մեզ կտանի դեպի կործանում:

Աղամ Բիրղամիչը կյանքում երբեք քաղաքական հարցերով չէր զբաղվել, և նա սկսեց նախատել իր մինիստրներին, որոնք չեն ուզում հետաքրքրվել իրենց պրեմիերի անձնական կյանքով:

- Պարոնայք,- նա մի բաժակ օղի լցրեց ու խմեց,- պարոնայք, մի՞թե ձեզ դուր է գալիս, որ այդ Ամիրբար Չարչիխանյանը չի ուզում իր գեղեցկուհի Բարիշկային ինձ կնության տալ: Բա որտե՞ղ է ձեր արժանապատվությունը: Կամ՝ Բարիշկան, կամ՝ Լեռնակերտը կքանդեմ:

Նույն օրը խնամախոսները՝ պարոն Սիլվեստը, Վարժապետ Սիմոնը և Առուստամ Լալախանբեկյանը, ճանապարհվեցին Շուշի:

Ամիրբար Չարչիխանյանը թանկագին հյուրերին ընդունեց ընդգծված քաղաքավարությամբ, հրավիրեց հյուրասենյակ, առատ սեղան բացեց:

Առաջինը խոսեց պարոն Սիլվեստը.

- Պարոն Ամիրբար Չարչիխանյան, փոթորկուն օրեր է ապրում մեր Ղարաբաղը: Ռուսաստանում տապալվեց թագավորը, և դա օրինաչափ երևույթ է: Ժամանակավոր կառավարությունը չդիմացավ, փլվեց, դա նույնպես օրինաչափ է: Բայց տեղի ունեցավ մեծ սխալ՝ Ռուսաստանում

իշխանությունն անցավ բոլշևիկներին: Օ՜, ոչ, պարոնայք, մենք չենք թողնի, որ այդ նույն բանը տեղի ունենա Ղարաբաղում: Իսկ դրա համար հարկավոր է միայն ու միայն հենվել մենշևիկների վրա: Եվ դուք, պարոն Չարչիխանյան, պարտավոր եք անդամագրվել մենշևիկյան կուսակցությանը: Ես այս բաժակը բարձրացնում եմ ի փառս մենշևիկյան կուսակցության:

Ապա խոսեց Վարժապետ Սիմոնը.

- Մեծարգո և նմանապես հարգարժան պարոն Ամիրբար Չարչիխանյան, մեր չքնաղ Ղարաբաղը գտնվում է հրաբուխների վրա: Ահավասիկ, եկել է ընդվզման ժամը, որ հանուն ազգի փրկության, ելնենք ընդդեմ ոսոխաց ադյունախում: Թող մեզ զորավիգ լինեն Վարդան Մամիկոնյանն ու Գայլ Վահանը, թող մեր երկնքում սավառնի ոգին մեր նախնյաց... Միայն դաշնակցական կառավարությունը կփրկի մեր ազգին: Ուրեմն խմենք մեր փառապանծ դաշնակցական կուսակցության կենացը: Ուռռա՜ա, պարոններ...

Բակում Ամիրբար Չարչիխանյանի կատաղած շունը հաչեց:

Առուստամ Լալախանբեկյանը շատ հեռվից սկսեց՝ համաշխարհային ջրհեղեղից: Ասաց, որ Նոյ նահապետը ազգությամբ անպայման հայ պիտի լինի և ինքն էլ կամ դաշնակցական, կամ մենշևիկ: Ու երբ եկավ, հասավ Ղարաբաղի մելիքներին, երևի խմիչքի ազդեցության տակ կորցրեց մտքի թելն ու դիմեց պարոն Սիլվեստին.

- Սակայն, պարոն Սիլվեստ, մենք ի՞նչ նպատակով ենք եկել այստեղ:

- Իհարկե, բարի նպատակով,- պատասխանեց պարոն Սիլվեստը,- մենք ամեն տեղ հետապնդում ենք միայն բարի նպատակ: Հարգարժան պարոն Չարչիխանյան, դուք հավանաբար գիտեք մեր պրեմիեր-մինիստրին...

- Իսկ ո՞վ է,- հարցրեց Չարչիխանյանը:

- Ազգային հերոս... Աղամ Բիրղամիչը...

- Դա էն Աղամը չի՞, որ թալանել է հորը:

- Ներեցեք,- գլուխն օրորեց Վարժապետ Սիմոնը,- Աղամ Բիրղամիչը շատ մեծ դեմք է: Ահավասիկ, մենք եկել ենք հայտնելու, որ նա սիրում է ձեր դուստր օրիորդ Բարիշկային:

- Այո, սիրում է մեծ սիրով,- հաստատեց պարոն Սիլվեստը:- Դուք այս հարցում անպայման կշահեք, պարոն Չարչիխանյան:

Հավանաբար, խնամախոսությունը կավարտվեր հաջողությամբ, եթե այդ պահին ներս չխուժեր Բիրղամ աղան:

- Լեռնակերտի աղվեսներն էստեղ են,- նա ծիծաղեց բարձր ու մոտեցավ սեղանին,- գնացեք ձեր այդ մունդռիկ Աղամին ասեք, որ անունն իմ դավթարից ջնջել եմ: Պրծավ, ես Աղամ անունով տղա չունեմ...

Խնամախոսներն ուշ երեկոյան վերադարձան Լեռնակերտ: Աղամ Բիրղամիչը զայրույթից գալարվում էր:

- Ես այդ Ամիրբար Չարչիխանյանին և Բիրղամ աղային շանսատակ կանեմ,- ու ձեռքն հավաքեց Վարժապետ Սիմոնի օձիքը,- էս սհաթին Խմբապետ Խորենին ետ ես կանչում ռազմաճակատից և ուղարկում օրիորդ Բարիշկայի ետևից:

Աղամ Բիրղամիչը հանեց ատրճանակը, կրակեց պատուհանից ու գոչեց.
- Կեցցե անկախ Լեռնակերտը:

ԱՆՆԱԽԱԴԵՊ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբապետ Խորենը իրիկնամուտին գրոհեց Ավետարանոց-Չանաղչու վրա, առավոտյան նահանջեց: Չէր նահանջի, եթե Խմբապետ Աղաջանը ժամանակին օգնության հասներ: Բայց Խմբապետ Աղաջանն էլ իր հերթին օգնության կարիք ուներ: Սա էլ առավոտյան հարձակվեց Ննգու վրա, կեսօրին նահանջեց:

Խմբապետ Խորենի գրոհը տակտիկական նկատառումներով էր, նահանջը՝ ստրատեգիական:

Խմբապետ Աղաջանի հարձակումը ստրատեգիա էր, ծլկելը՝ տակտիկա: Խմբապետ Խորենը, ժամանակակից ռազմագետների վկայությամբ, ընտրել էր Ալեքսանդր Մակեդոնացու կռվելու ոճը, իսկ Խմբապետ Աղաջանը՝ Նապոլեոն Բոնապարտի, այսինքն՝ ավելի նոր ոճ ու մեթոդ, և չնայած ոչ առաջինի, ոչ էլ երկրորդի ոճն ու մեթոդն իրենց չարդարացրին, այնուամենայնիվ, կարողացան ժամանակակից ռազմագիտության մեջ նորություն մտցնել, և կարևորն էլ հենց այդ նորությունն էր:

Մինչ երկու զորապետները ստրատեգիա ու տակտիկա էին մշակում ամենալավագույն նկատառումներով, Սիմոն Սարխոշյանցն ու պարոն Սիլվեստն էլ իրենց հերթին թեորիա և պրակտիկա էին մշակում մեկը մյուսին սևացնելու հրապուրիչ հեռանկարներով: Երկու լիդերներն իրենց հույսը դրել էին Խմբապետ Խորենի վրա, իսկ Խմբապետ Խորենը միանգամայն ուրիշ նպատակ էր հետապնդում՝ իր զորքը համալրել նոր ուժերով և այնպիսի հանդիսավորությամբ մտնել Լեռնակերտ, ինչպիսի հանդիսավորությամբ Գարիբալդին էր մտել Հռոմ: Խմբապետն ատամ ուներ Աղամ Բիրղամիչի՝ այդ շառլատանի ու ղումարբազի վրա, և սպասում էր Խմբապետ Աղաջանի օգնությանը:

Ի վերջո, երկու զորապետները հանդիպեցին Քռասնի գյուղի մոտ: Բանավոր աղբյուրների վկայությամբ, այդ հանդիպումն այնքան էլ սրտառուչ չէր: Խմբապետ Աղաջանը նայեց Խմբապետ Խորենի ծերմակ չերքեզկային, թավ հոնքերն իրար տվեց ու մռլտաց. «Հարիֆ, ոնց որ տեսնում եմ, դու եկել ես ոչ թե կռվելու, այլ աղջիկ առնելու»: Խմբապետ Խորենը նայեց Խմբապետ Աղաջանի կուբանկա փափախին, բայց ուրիշ բան ասաց. «Կոմիտեն,- ասաց,- որոշել է միացյալ ուժերով շարունակել պայքարը ոսոխաց դեմ»: «Ես թքել եմ քո Կոմիտեի վրա,- փրփրեց Խմբապետ Աղաջանը:- Ուզում ես բանակի ընդհանուր հրամանատարությունը ձեռքդ վերցնե՞լ, հա՞... Ա՛ռ քեզ, համա կվերցնես»: Եվ Խմբապետ Աղաջանը բռունցքի միջից ցցեց բթամատը:

Այո, սիրելի ընթերցող, գործը կարող էր հասնել արյունահեղության, բայց Խմբապետ Խորենը լեզուն պահեց ատամների տակ, չուզեց գլուխ դնել այդ վայրենու հետ: Դա կլիներ դոնկիխոտություն, որովհետև Խմբապետ Աղաջանն իր թիկունքում ուներ թալանչիների մի մեծ ավազակախումբ, իսկ ինքը՝ բավականին փոքրիկ մի ջոկատ: Հիմա հասկացա՞ք, թե ինչու Լեռնակերտի խմբապետն զգում էր Խմբապետ Աղաջանի օգնության կարիքը և ինչու լեզուն քաշեց ատամների տակ, երբ այդ վայրենին թքեց Կոմիտեի վրա:

Այնուամենայնիվ, Խմբապետ Խորենը չհրաժարվեց իր մտադրություններից. նա որոշել էր Լեռնակերտ մտնել ընդգծված հանդիսավորությամբ, հին իշխանությունը տապալելու, նոր իշխանություն ստեղծելու մտադրությամբ: Նրա հաշիվը Սիմոն Սարխոշյանցի և պարոն Սիլվեստի հետ չէ: Նա հաշիվ ուներ Աղամ Բիրղամիչի հետ: Եվ որոշեց Ռուբիկոնն անցնել:

Ամռան զով երեկո էր Լեռնակերտում: Մոթալ Մինասը գրազ էր բռնել Աղամ Բիրղամիչի հետ՝ դոչի բռնել աղյուսագործարանատեր Մամբրե Խաբարդանովիչի Փելա անունով բուղայի հետ: Մեծ մեյդանում ահագին մարդ էր հավաքվել՝ դիտելու Լեռնակերտի պատմության մեջ այդ անսովոր մենամարտը: Մարտավկան Փուքս փչող Պողոսն էր:

Հապա պատկերացրու, սիրելի ընթերցող, դեմ դիմաց կանգնած են կատաղած ցուլն ու հարբած Մոթալ Մինասը: Մեկը կոտոշներ ունի գլխին, մյուսն անկոտոշ է: Նրանք գնում-գալիս, ճակատ-ճակատի են խփում. Մոթալ Մինասն ինչպիսի՞ ամուր գանգ պիտի ունենա, որ դիմանա կատաղած բուղայի կոտոշներին:

Ամբոխի աղմուկ-աղաղակի ներքո, Տավարած Դուդուլը մեյդան դուրս բերեց Փելա բուղային, Պողոսը՝ Մոթալ Մինասին: Առաջինը Պողոսը մարտակոչ նետեց Մոթալ Մինասին. «Մոթալ Մինաս, հուլ, հուլ, հուլ»: Նրա օրինակին հետևեց Տավարած Դուդուլը, և սա էլ ասաց. «Փելա, հուլ, մի քեզ տեսնեմ՝ հուլ, հուլ, հուլ»: Փելա բուղան ոտքերով քանդեց գետինը, նույն բանն արեց Մոթալ Մինասը... Բայց ավա՜ղ, մենամարտն ընդհատվեց, որովհետև նույն պահին մեյդան խուժեցին Խմբապետ Խորենի կտրիճները:

Ահա այստեղ էր, որ Աղամ Բիրղամիչը, Լեռնակերտի քաղաքագլուխն ու պրեմիերը մոտեցավ Խմբապետ Խորենին և բոլորին պարզ ու լսելի ձայնով ասաց. «Խմբապետ Խորեն, հասարակական կարգը խախտելու համար դուք ձերբակալված եք»: Իսկ դա եղավ այնքան անսպասելի, որ Խմբապետի հավատարիմ տղերքը չկարողացան ձայն հանել:

- Սա դավաճանություն է,- գոռաց Խմբապետ Խորենը:- Սա խայտառակություն է ազգային:

Խմբապետը չէր կարողանում ոտքի վրա կանգնել, բայց դա վախից չէր, նա Քռասնի գյուղում բավականին շատ էր կոնծել: Աղամ Բիրղամիչն իրեն հատուկ սառնասրտությամբ մի դույլ ջուր շփացրեց նրա դեմքին ու ասաց.

- Բաղնիքդ անուշ, Խմբապետ Խորեն,- ապա դարձավ Մոթալ Մինասին.- երեք սուտկա նստեցնել, որպեսզի խելքը գլուխը հավաքի:

Մինչ իր հաշիվների մեջ սխալված Խմբապետ Խորենը մութ գոմում գալարվում ու հայհոյում էր Աղամ Բիրղամիչին, Սիմոն Սարխոշյանցը բարձր տրամադրությամբ դուռակի էր խաղում Առուստամ Լալախանբեկյանի հետ: Նրա միտքը սավառնում էր ուրիշ մի աշխարհում, որովհետև... սիրահարվել է: Այո, այո, Սիմոն Սարխոշյանցը սիրահարվել էր, չնայած երդում ուներ՝ սեփական անձը, այդ թվում՝ նաև սերը, ողջակիզել հանուն վեհ գաղափարների: Բայց նա դրժեց այդ երդումը, որովհետև սերը նույնպես հայրենասիրական վեհ զգացում է: Լեռնակերտի ծխական դպրոցի թվաբանության ու երգեցողության ուսուցչուհի Ելիզավետա Շեկունցը մտել էր Սիմոն Սարխոշյանցի սիրտը:

- Պարոն Սարխոշյանց, դուք այսօր մի տեսակ եք,- Առուստամ Լալախանբեկյանը սեղանից հավաքեց խաղաթղթերը:- Նշանակում է ձեզ անտարակույս ուրախացրել է այն փաստը, որ Աղամ Բիրղամիչը շատ անարդար է և նմանապես անարդար գործ բռնեց:

- Հարկավ, դա այնքան էլ անհաճելի բան չէ,- գլուխը շարժեց Սիմոն Սարխոշյանցը,- սակայն ելնելով որոշ հանգամանքներից, դա միակ ճիշտ քայլն է, որ կատարեց Աղամ Բիրղամիչը:

- Իսկ այդ ի՞նչ հանգամանքներ են:

- Խմբապետ Խորենն ավանտյուրիստ է:

- Փաստեր ունե՞ք...

- Ահավասիկ, զորավոր փաստեր: Եթե Աղամ Բիրղամիչը չդիմեր այդ քայլին, մենք այս պահին այստեղ մեզ համար հանգիստ նստած դուռակի չէինք խաղա:

- Նշանակում է ձեր մատը խառն է, այսպես ասած, այդ գործին:

- Քավ լիցի:

- Ցտեսություն, պարոն Սարխոշյանց:

- Ցտեսություն, պարոն Լալախանբեկյան:

Քիչ հետո Վարժապետն Աղամ Բիրղամիչին ասաց. «Խմբապետ Խորենին հովանավորում է նաև Առուստամ Լալախանբեկյանը»:

Ասաց և ծուլվեց գիշերվա խավարին: Այդ խավարի մեջ նրան առաջնորդում էր սիրավառ սիրտը: Աղյուսագործարանատեր Մամբրե Խաբարդանովիչի վարձով տված տան երկրորդ հարկի պատուհանի լույսն էր այդ պահին նրա փարոսը: Նա քայլում էր այն կատվի զգուշավորությամբ, որը տան մի պուճախում մուկ է տեսել:

Սիմոն Սարխոշյանցը մտքում արդեն կոնսպեկտավորել էր իր ասելիքը: Աստիճաններով բարձրացավ դանդաղ ու զգույշ, կանգնեց դռան ետևում, բայց հանկարծ վարանեց: Շտապում եմ, մտածեց Սիմոն Սարխոշյանցը, ենթարկվելով իմ սրտի թելադրանքին, մոռացել եմ գլխիս տեղը: Ի՞նչ կմտածի օրիորդ Ելիզավետան. փողոցում ընդամենը մի անգամ եմ հանդիպել, բարևել ու անցել: Ուրիշ ոչինչ:

Նա զգույշ ու դանդաղ իջավ աստիճաններով, բայց այդ պահին ինչ-որ

մեկը պատշգամբից մի դույլ լվացքաջուր նետեց նրա՝ Սիմոն Սարխոշյանցի վրա, իսկ մի ուրիշն ինչ-որ տեղից նետեց.

- Բաղնիքդ անուշ, վարժապետ:

Ոտքից-գլուխ լվացքաջրով ողողված Սիմոն Սարխոշյանցը սթափվեց, ծեծված շան պես քաշեց պոչն ու, ցանկապատներին քսվելով, հեռացավ:

- Ո՜վ ժամանակներ, ո՜վ բարքեր,- կասեր Լեռնակերտի ծխական դպրոցի պատմության ուսուցիչ Արտավազդ Կարմիրյանը և ապա կավելացներ.- այսպես է ասել հռոմեացի հռչակավոր հռետոր Ցիցերոնը,- և ապա,- ահա թե որտեղ է թաղված շան գլուխը:

Իսկ Սիմոն Սարխոշյանցն այդ օրը միայն մի բան ասաց: Նա արտաբերեց երեք բառ. «Ինչպիսի՜ աննախադեպ խայտառակություն»:

ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄ
(Ըստ անհայտ հեղինակի)

Եվ ամենակարողն իր յոթն առաքյալներից մեկին, որ ամենախորամանկն էր և ամենագիտունը և, որ ըստ «Աստվածաշնչի», կոչվում էր Ղուկաս առաքյալ, ուղարկեց Լեռնակերտ ու պատվիրեց այսպես՝ իմացիր, թե ինչ ժողովուրդ են այդ լեռնակերտցիները, ինչով են զբաղվում և ինչ դավանանք ունեն:

Եվ Ղուկաս առաքյալը Մազե կամուրջին հանդիպեց Գորոդովոյ Անտոնին ու հարցրեց.

- Ո՛վ մահկանացու Գորոդովոյ Անտոն, ապա ինձ ասա՝ ո՞ր ճանապարհով և ինչպե՞ս կարելի է ապահով հասնել Լեռնակերտ:

Գորոդովոյ Անտոնը, որ այդ օրը երևի քիչ կոնծել էր, բայց բարեբախտարար խելքի մնացորդը գինու հետ դեռ կուլ չէր տվել, շատ քաղաքավարի հարցին հարցով պատասխանեց.

- Թույլ տուր իմանալ, խելքդ տե՞ղն է:

- Իհարկե, տեղն է:

- Դե որ տեղն է, էլ ինչո՞ւ ես հարցնում, գնա քո ճանապարհով, ես Լեռնակերտի հետ գործ չունեմ և պոլիտիկայով չեմ զբաղվում:

Ղուկաս առաքյալը, որ հավանաբար հեռու էր քաղաքական հարցերից, բան չհասկացավ առաջին հանդիպած մարդուց, կեսօրին մտավ Լեռնակերտ, բացեց Դուքան Սեդրակի խանութի դուռն ու տեսավ, թե ինչպես այդ ողորմելին ջուր է խառնում քացախած ու թթված գինուն ու քթի տակ երգում՝ «Երդվենք տիրոջ խաչերով, գինին խմենք փարչերով...»:

Եվ Ղուկաս առաքյալը հանեց մեղքերի իր դավթարն ու գրեց. «Առաջին մահկանացուն, որին տեսա Լեռնակերտում, խաբեբայի ու սրիկայի մեկն է, և նրա տեղը դժոխքն է»:

Գրեց ու մեղքերի դավթարը թևի տակ մտավ Գալիֆե Գուգուշի համամ-բաղնիսը:

- Ողջո՜ւյն, ո՛վ մահկանացու Գալիֆե Գուգուշ:

Գալիֆե Գուգուշը, տեսնելով աստծո առաքյալին, տեղից վեր թռավ.

- Վա՜յ, ես քո սեփական ցավը տանեմ, պարոն Ղուգյազ առաքել... Համամ-բաղնիսս քեզ փեշքեշ, մտիր մի լավ լողաց, թե քեզանից մի կոպեկ վերցնեմ, Բոստանչի Սրափիոնի սև էշի տղան դառնամ:

Եվ Ղուկաս առաքյալը մեղքերի իր դավթարում գրեց. «Երկրորդ մարդը, որին հանդիպեցի, շողոքորթի ու զավզակի մեկն է»: Ապա ծեծեց Սիմոն Սարխոշյանցի դուռը, բարևեց ու հարցրեց.

- Ո՛վ Վարժապետ Սիմոն մահկանացու, դու ի՞նչ դավանանքի մարդ ես և...

Եվ Վարժապետ Սիմոնը չքողեց, որ աստծո առաքյալն ավարտի իր խոսքը, իսկույն վրա տվեց.

- Քրիստոնյա եմ, կաթոլիկ, ինչպես նաև մենշևիկ, դաշնակցական, էսէռ, հնչակ, համ էլ բունտական, աջ սոցիալիստ, ձախ սոցիալիստ...

Եվ Ղուկաս առաքյալը սպիտակով սևին գրեց... (աստծո առաքյալները իրենց արձանագրությունները միշտ գրում են սև թղթի վրա, որովհետև աստված այդպես է կամենում) հա, ուրեմն գրեց. «Երրորդ մարդը, որին հանդիպեցի Լեռնակերտում, երկերեսանիի մեկն է»:

Ղուկաս առաքյալը դեռ չէր թեքվել ռուսի ժամի կողքով, երբ դեմ առ դեմ հանդիպեց Ժամկոչ Մանասին: Վերջինս իսկույն գրկեց սուրբ առաքյալին, ուրախության ճիչեր արձակեց և, օգտվելով առիթից, թռցրեց նրա գրպանից աստծո ձեռքով ստորագրված առաքելության մանդատն ու ծլկեց:

Ղուկաս առաքյալը այստեղ քորեց ծոծրակն ու գրեց. «Ապա աստծո տան մոտ հանդիպեցի մի ստահակի, որին կարող եմ ազատորեն անվանել խաչագող»:

Գրեց ու շարունակեց իր ճանապարհը:

Պարոն Սիլվեստը քափ ու քրտինքի մեջ մտած, ճառ էր ասում, և նա Ղուկաս առաքյալին ընդունեց պատշաճ հարգանքով ու ասաց.

- Պարոն առաքյալ, հուսամ, որ դուք էլ ցանկություն ունեք մտնելու մենշևիկյան կուսակցության շարքերը:

- Ես միայն աստծո կուսակցության անդամն եմ,- պատասխանեց Ղուկաս առաքյալը,- ես ենթարկվում եմ միայն աստծուն:

- Նշանակում է դուք տգետի մեկն եք, և հավանական է, որ այն չեք, ինչ ձեզանից ներկայացնում եք: Ես կհրամայեմ ձեզ բանտարկել:

Եվ Ղուկաս առաքյալը արձանագրեց՝ պարոն Սիլվեստը քաղաքական ինտրիգանի մեկն է:

Գրեց ու էլի շարունակեց իր ճանապարհը:

Ուստա Ծատուրը ցաքատ էր ջրդեղում, Նալբանդ Աթունը պայտում էր շոշեցի Երկար Խաչու ձին, երբ Ղուկաս առաքյալը մոտեցավ նրանց ու ողջունեց.

- Բարի օր, ով Լեռնակերտի քրտնաջան արհեստավորներ: Ինձ աստված է ուղարկել ձեզ մոտ: Ես Ղուկաս առաքյալն եմ:

Ուստա Ծատուրը ցաքատը հանեց ջրից, դրեց զնդանի վրա ու բեղի տակ ժպտաց.

- Ախպեր, այնքա՜ն առաքյալներ են եկել Լեռնակերտ ու գնացել... Սիլվեստ առաքյալ, Խորեն առաքյալ, Պահլևունի առաքյալ, Կարկազ Լեռնակերտցի առաքյալ, Վարժապետ Սիմոն առաքյալ, Մուշեղ Չանչախով առաքյալ...

- Դրանք կեղծ առաքյալներ են,- Ղուկաս առաքյալը հորանջեց, ձեռքը տարավ դեպի գրպանը, որ ցույց տա աստծու ձեռքով ստորագրված առաքելական մանդատը, բայց հիշեց, որ այն թոցրել են:- Իսկական առաքյալը ես եմ:

Նալբանդ Աթունը խփեց ձիու վերջին ոտքի վերջին նալի վերջին մեխն ու մոտեցավ նրան.

- Դու մենշևի՞կ ես, թե՞ դաշնակցական:

- Ես Ղուկաս առաքյալն եմ:

- Հնչա՞կ ես, թե՞ էսէռ:

- Ես աստուծո առաքյալն եմ:

- Իսկ աստված աջերի կո՞ղմն է, թե՞ ձախերի:

- Աստված, դա ինքը ամենակարողն է՝ տեր-երկնայինը:

- Դե ուրեմն մենք էլ լեռնակերտցի ենք՝ տեր-երկրայինը: Մենք, որ չենք խառնվում ձեր երկնային գործերին, դուք ինչո՞ւ եք խառնվում մեր երկրային գործերին: Մենք աշխատավոր մարդիկ ենք, մեր գործն ու հոգսն ունենք, գնա բանիդ: Ադա՛, Ծատուր, բա սրան պոլիտիչեսկի մի լավ չպայտե՞մ...

- Լեռնակերտցիները անհավատներ են, հեթանոսներ են լեռնակերտցիները,- սարսափահար գոչեց Ղուկաս առաքյալը, մեղքերի դավթարը նետեց հնոցի մեջ ու համբարձվեց այնտեղ, որտեղից եկել էր:

Ասում են՝ այդ օրվանից աստված ոչ մի առաքյալ չուղարկեց Լեռնակերտ:

ԲԱԶԱՐԸ

Այնտեղ, որտեղ վերջանում է Լեռնակերտը, մի ժամանակ Բոստանչի Սրափիոնի հայրը՝ Բոստանչի Սամսոնը, բողկ էր վարում: Ցարական կայազորի նախկին շտաբս-կապիտան Լոզանսկին նայում էր հողի մեջ տոզած բողկերին ու զարմացած շարժում գլուխը: Էդ տնաշենի տղան ոնց որ կյանքում առաջին անգամն է բողկ տեսնում: Ահա հենց այստեղ էլ ծնվեց բազարը, որի հիմնադիրն ու կնքահայրը եղավ ինքը՝ Մամբրե Խաբարդանովիչի հայրը՝ Խաբարդան աղան: Առաջինը նա այստեղ բացեց իր դուքանը և բազարն էլ կոչեց իր անունով՝ Բազար Խաբարդան:

Ինչե՜ր ասես, որ չէր վաճառում Խաբարդան աղան՝ Նախիջևանի աղ, Տոդի քյալլա պանիր, Կուսաբերդի գինի, Շամախու լավաշ, Նուխիի հալվա,

Թարթառի ձուկ, Տրապիզոնի թութուն, անգլիական ծամոն... Ինքն էլ այնպիսի քաղցր լեզու ուներ, որ կարող էր մազութը դոշաբի տեղ վաճառել:

Դուքան Սեդրակն այն ժամանակ դեռ Դուքան Սեդրակ չէր, այլ հասարակ նոքար Սեդրակ, ծառայում էր Խաբարդան աղայի մոտ: Նա շատ բան սովորեց իր ուսուցչից, և չանցած երկու տարի, բացեց իր սեփական դուքանը՝ «Դուքան Սեդրակ»: Գինի էր վաճառում, հետո գինուն ավելացավ Շոշի օղին, Շոշի օղուն՝ Սարուշենի արդար յուղը, բայց Դուքան Սեդրակը դեռ նշանավոր մարդ չէր:

Լեռնակերտի բազարի երկրորդ նշանավոր դեմքը ազոխցի Կանդազ Կյափին էր (գրոց անունը՝ Կափռիյել): Սա էլ իր խանութի ետևում քոչից մնացած հիվանդ ոչխարներ էր մորթում ու այնպիսի խորոված էր սարքում՝ ճենճահոտը բռնում էր ամբողջ Լեռնակերտը, գրգռում շտաբս-կապիտան Լոզանսկու ախորժակը:

Կանդազ Կյափին կարճ ժամանակամիջոցում կարողացավ լեզու գտնել շտաբս կապիտան Լոզանսկու հետ, և Լեռնակերտի մսի առևտուրը վերցրեց իր ձեռքը: Երկու տարում նա այնքան բարձրացավ, որ Խաբարդան աղան չհամբերեց, կանգնեց նրա ճանապարհին ու գոռաց.

- էդ հի՞նչ ա, Կյափի, մարդ ես դարձել, ինձ էլ օգում չըս մարդատեղ դնես: Էս բազարը իմն ա, քոնը չի:

Կանդազ Կյափին անկուլտուրական մարդ էր, անպատվեց Խաբարդան աղային՝ դու չարչի ես, ասաց, դու կոպեկի համար հոգի տվող մարդ ես. որ մի անգամ փռշտամ, քեզ նման քսան Խաբարդան կտնկվի մեր շահարում:

Խաբարդան աղան շատ խիստ զայրացավ, բողոք գրեց Շուշի քաղաքում նստած պրիստավին. «Ձերդ գերազանցություն, համարձակվում եմ զեկուցել, որ էդ սվոլոչ Կանդազ Կյափին ինձ անպատվել է խալխի առջև, ինչպես և հոտած միս է ծախում իր դուքանում, կարտ է խաղում, կանանց ծուռ աչքով է նայում, և սուկին սինը օրենքից չի վախենում»:

Կանդազ Կյափին նույնպես թուղթ գրեց. «Վաշի բլագարոդնի, այդ ոջիլ ուտող Խաբարդան աղան ինձ այնպիսի փիս-փիս խոսքեր է ասել, որ եթե լսես՝ մազերդ բիզ-բիզ կկանգնեն: Հարկ եմ համարում հայտնել նաև, որ այդ պաղլեցը հասարակ բյազը ծախում է շոլկի տեղ, բաքմազի հետ մազութ է խառնում: Թե սուտ ասեմ, էն սև էշի տղան դառնամ»:

Պրիստավը երկուսին առանձին-առանձին կանչեց իր գրասենյակը, երկուսից առանձին-առանձին կաշառք վերցրեց, հետո նստեցրեց կողք-կողքի ու գոռաց.

- Ի՞նչ եք շների նման իրար փաղաղում: Դուք մա՞րդ եք, թե՞ տավար: Տեսեք, հա՜, սրանից հետո թե ձեզ մարդավարի չպահեք, երկուսիդ էլ Սիբիր կքշեմ: Վայ, կորե՛ք աչքիցս:

Բազարի երրորդ դեմքը Սիրեկան Պետոն է, որն իր ձեռքն էր վերցրել բրդի, թաղիքի, օճառի առևտուրը, և այծի մազի հետ մի քիչ բուրդ էր խառնում ու ներկայացնում որպես ղարաբաղյան զտարյուն ոչխարի բուրդ: Պետոյի բախտը թղթախաղում չէր բերում, բայց սիրո հարցում մրցակից

չուներ: Կանդազ Կյափին պնդում է, որ Խաբարդան աղայի Մամբրե անունով լակոտն աչք-ունքով, բոյ-բուսաթով նման է Սիրեկան Պետոյին: Աղա Խաբարդանն էլ աչքի տակով նայում էր Կյափու Սիրանուշ անունով աղջկան ու ասում. «Սիրեկան Պետոն լիա վեր սաբիր ա եկալ, էս շան քածը դաստի ստեղ վենն ա կացալ»:

Այս նշանավոր եռյակին հետևում են ուրիշ նշանավոր և աննշան առևտրականներ, որոնք չնայած խոշոր դեմքեր չեն, բայց էլի դեմքեր են, կամ ինչպես Նալբանդ Աթունը կասեր՝ ծմակում գայլ չեղած տեղը՝ աղվեսն էլ է գազան կոչվում: Արժե դրանցից հիշատակել Վերբյլուդ Վարդազարին: Կրասկա Վարդանին, Լաչառ Լալազարին, Խոնչա Խուրշուդին, Կռապաշտ Կնյազին, Խախալ Պապաշին: Ահա սրանց մեջ Կրասկա Վարդանը իսկապես դեմք էր՝ մի օր՝ կանաչ, մի օր՝ կարմիր, մի օր՝ դարչնագույն, մի օր՝ կապույտ կամ դեղին... նայած, թե այդ օրը ում դուռը կամ պատշգամբն ինչ գույնով է ներկել: Վարդանը կատակչի մարդ է, մի անգամ շոշեցի Ադամի էշը բռնել, շերտ-շերտ ներկել էր ու դարձրել աֆրիկյան զեբր, կրկնապատիկ գնով վաճառել խնածախցի Հասրաթին ու ասել. «Սա զագրանիչնի սորտի ավանակ է, գիշեր-ցերեկ բեռնիր ու քշիր, հոգնել չունի»:

Սակայն Լեռնակերտի բազարը կլիներ ձանձրալի, կարգ ու կանոն չէր լինի, եթե չլիներ նրա գլխավոր դեմքը՝ Օրենք Օհանը: Սա մի կարճահասակ, բավականին մեծ գլխով, ծուռ-ծուռ ոտքերով մարդ է, որի գոռոցից ցնցվում էր ամբողջ քաղաքը, և Հերիքնազ Առնավուդովնան նրա ձայնը լսելուն պես, մատներով փակում էր ականջներն ու ծկլթում.

- Վո՜ւյ, նաստայաշչի ասյո՜լ, նաստայաշչի դիկա՜ր...

Օրենք Օհանը հենց որ երևում է շուկայում, առաջինն իր բարձր ու զիլ զռռոցով նրան դիմավորում է քարաշենցի Գալուստի ավանակը: Թե Գալուստի ավանակի և Օրենք Օհանի միջև ինչ ազգակցական կապ կա, այդ հարցին չի կարող նույնիսկ պատասխանել Սիրեկան Պետոն:

Օրենք Օհանը դանդաղ շարժվում է դեպի Կանդազ Կյափու դուքանը, իր ձեռքով լավ տեղից մի երեք գիրվանքա միս կտրում ու հարցնում.

- Հը՛, Կափռիյել, էլի էդ ախմախ Խաբարդանը էշիդ չու է ասե՞լ:

- Ոտերս կերել է,- Կյափին ցցում է կուրծքը:- Սուդից հետո ձենը կտրել է:

Օրենք Օհանը հիմա էլ շտապում է Խաբարդան աղայի մաղազինը:

- Բարի լույս, Խաբարդան Հաբուդովիչ:

- Լույսը բարի, պարոն Օհան:

- Քիչ առաջ էդ մութլախ Կանդազ Կյափուն շանը տեղը կապեցի: Նա ո՞ւմ թուլան է, որ քեզ վրա բերան բացի: Թիֆլիսից լավ ապրա՞նք ես բերել:

- Բա Կանդազ Կյափու աչքն էլ չե՞մ հանել: Լավ աբրեշում ունեմ, մի երկու արշին կտրեմ՝ տուր կնկանդ: Իսկ էդ Կյափու անունը էլ չտաս մոտս:

Ժամանակները փոխվեցին, ժամանակների հետ փոխվեց նաև օրենք Օհանը: Դաշնակցականները եկան, ստիպեցին, որ մաուզեր կախի կողքից: Օրենք Օհանը ենթարկվեց, այսինքն դարձավ դաշնակցական: Մենշևիկները եկան, խլեցին մաուզերը, նագան տվեցին: Օհանը դարձավ

մենշևիկ: Բունտականները խլեցին ատրճանակն ու կողքից մի թուր կախեցին: Իսկ էսէռները խլեցին թուրը, մի լավ դնքստեցին ու ասացին՝ պաշոլ տի վոն, երկերեսանի ավանակ:

Լեռնակերտի բազարի նախկին ահ ու սարսափը դարձավ մի կոպեկանոց, խմում ու հարբում էր, ձենը գլուխը գցում.

Կուզես՝ բալշևիկ լինեմ.
Կուզես՝ մենշևիկ լինեմ,
Կուզես մաուզեր կապեմ,
Խաբարդան աղայի
Փորտիքը թափեմ:

Օրենք Օհանի տեղը եկավ բռնեց Բայղուշ Բալասանը: Անկուշտ մարդ էր, ուտում էր ու չէր կշտանում: Բոլորից փող էր հավաքում, ասում՝ էսքան պիտի տամ դաշնակցականներին, էսքան՝ մենշևիկներին, էսքան՝ էսէռներին, էսքան՝ բունտականներին: Բայց ահա մի անգամ ներկարար Վարդանը դրա գլխին լավ խաղ խաղաց. տարավ իր հաշվին լավ խմեցրեց, այնքան խմեցրեց, որ Բայղուշ Բալասանը մոռացավ սեփական բերանի տեղը. հետո ոտից-գլուխ մերկացրեց, ոտից-գլուխ կանաչ-կարմիր-դեղին ներկեց, բաց թողեց շուկայում: Ի՜նչ աղմուկ, ի՜նչ աղաղակ՝ հա՜յ, հարա՜յ, փախե՜ք, սատանան եկավ: Մարդիկ բերանները բաց նայում էին ու հարց տալիս իրար՝ սատանա՝ սատանա է, բայց որտե՞ղ են դրա պոչն ու պոզերը:

Այս խայտառակությունից հետո Բայղուշ Բալասանը չերևաց ոչ միայն Լեռնակերտի բազարում, այլև՝ ոչ մի տեղ: Բայղուշ Բալասանի տեղը հիմա էլ բռնեց Խմբապետ Աղաջանի ադյուտանտ Հազարապետ Զանազանովը: Սա էլ շուկա էր գալիս իր շքախմբով, մաուզերը հանում, կրակում էր օդում ու բղավում.

- Զգա՜ստ, ձեզ հետ խոսում է նորին մեծության ադյուտանտ Հազարապետ Զանազանովը: Ուշադրությո՜ւն, պարոններ. դաշնակցական կոմիտեն որոշել է ազգի պատիվը բարձրացնելու համար գրավել ամբողջ Կափկազը և ստեղծել նոր տերություն՝ ծովից-ծով Ղարաբաղ: Իսկ դրա համար մեզ ոչ միայն զենք, այլև փող է հարկավոր:

Հազարապետ Զանազանովը երկու ամսում դարձավ մեծահարուստ մարդ, որոշեց բռնել Խմբապետ Աղաջանի տեղը: Իհարկե, Խմբապետ Աղաջանը քնած չէր, հենց ուղիղ շուկայում ձեռքն հավաքեց իր ադյուտանտի օձիքը, մի շառաչուն ապտակ հասցրեց նրա մռութին ու գոռաց.

- Մութլա՜խ, էս սահաթին չոքի՛ր և պաչիր ոտքերս:

Հազարապետ Զանազանովը կատարեց հրամանը, Խմբապետ Աղաջանը չբավարարվեց դրանով, պայտած սապոգով տվեց նրա փորին, խլեց փողերն ու քշեց Լեռնակերտից:

Լեռնակերտի բազարը երկար ժամանակ ձեռքից ձեռք էր անցնում: Ի վերջո այն անցավ մենշևիկ Սաղաթել Քոլաքաշյանի տրամադրության տակ, սա էլ Դուքան Սեդրակին նշանակեց բազարկոմ:

Դուքան Սեդրակը դարձավ նշանավոր անձնավորություն:

ՄՈԼՈՐՎԱԾԸ

Դոխտուր Առաքել Սերմաքաշյանը Լեռնակերտ եկավ այն օրերին, երբ արդեն թագավորին թախտից գցել էին: էդ տնաքանդի տղան ոնց որ ուղտի ականջում քնած... Ասացինք՝ թագավորին դալոյ են արել, ոչ շառ խոսեց, ոչ խեր: Ասացինք՝ Կերենսկին իշխանության գլուխն է անցել, թե՝ «էդ ո՞վ է, չեմ ճանաչում»: Նալբանդ Աթունը հարցրեց՝ «Այ բալամ, բոլշևի՞կ ես, թե՞ մենշևիկ, դաշնա՞կ ես, թե՞ հնչակ»: Սա գլուխը շարժեց՝ «Գործ չունեմ, բժիշկ եմ»:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Երբ համայն Արցախաց աշխարհի արքայացու Ապետնակ Առաջին (ու վերջին) Մելիք Տեր-Աթաջանբեկնազարյանն ատրճանակի փողը հերոսաբար դրեց ճակատին ու ցրիվ տվեց իր գանգը, ըստ օրենքի պիտի լիներ մեկը, որ հաստատեր այդ քաջարի անձնավորության մահը: Այդ մեկը եղավ բժիշկ Առաքել Սերմաքաշյանը: Այո, առաջինը նա մտավ Ղարաբաղի այդ երևելի մարդու դղյակը, աջ ականջը (ձախը խուլ է) հպեց հանգուցյալի արքայական կրծքին ու ասաց՝ «Ոնց որ մեռած լինի»: Իսկ երբ նկատեց դդումի պես ցրիվ եկած գանգը, պլշեց աչքերն ու սարսափահար ճչաց՝ «Պարոնա՛յք, նա արդեն մեռած է»:

- Ներեցեք, հարգարժան բժիշկ,- Սիմոն Սարխոշյանցը հանեց շլյապան ու հարցրեց դողացող ձայնով.- Դուք այդ ինչպե՞ս իմացաք:

Բժիշկ Սերմաքաշյանը մի բաժակ ջուր խմեց, հանգստացավ ու ցուցադրեց իր փայլուն բժշկագիտությունը:

- Առաջին՝ մարդը պառկել է անշարժ: Երկրորդ՝ չի շնչում: Երրորդ՝ ձեն չի հանում ու աչքերը տեղը չեն: Եվ վերջապես չորրորդ՝ գլուխն ամբողջովին ցրիվ է եկել:

- Իսկ դուք գիտե՞ք ով է այս մարդը,- Սիմոն Սարխոշյանցը թաշկինակը մոտեցրեց աչքերին ու մաքրեց քիթը.- Ղարաբաղի պարծանքը: Դուք հաստատեցիք այս անմահ մարդու մահը, և դա ձեզ համար մեծ պատիվ է: Շնորհակալություն ուշադրության համար:

- Չափազանց ուրախ եմ և զգացված, - գլուխը խոնարհեց Բժիշկ Սերմաքաշյանը,- որ հաստատեցի այդ մեծ մարդու մահը: Եթե առաջիկայում նման մահեր լինեն, դիմեցեք ինձ:

Հետագայում Բժիշկ Սերմաքաշյանը առանց դիահերձումի հաստատեց նաև Գորոդովոյ Անտոնի մահը ու արձանագրեց հետևյալը. «Ինքնասպանություն կախաղանի միջոցով: Մահը վրա է հասել կախվելուց հետո: Կախվելուց առաջ կենդանի է եղել: Ողորմի հոգուն»:

Միջահասակ, ճաղատ գլխով, ցանցառ բեղ ու մորուքով մարդ է բժիշկ Առաքել Սերմաքաշյանը: Որովհետև ձախ ականջը չի լսում, քայլում է աջ կողքի վրա թեքված, շրջվում է աջ կողքի վրա, խոսելու ժամանակ միշտ աջն է շարժում: Գուցե դա է պատճառը, որ պարոն Սիլվեստը մի ժամանակ նրան մեղադրում էր «աջ թեքման» մեջ և գտնում, որ այդ սուբյեկտը կա-

շառված է իսպանացիների կողմից: Իսկ թե ինչու իսպանացիների կողմից և ոչ թե անգլիացիների կամ գերմանացիների,- դա արդեն պարոն Սիլվեստի անձնական գործն էր:

Այնուամենայնիվ, Վարժապետ Սիմոնը ժխտեց պարոն Սիլվեստի կարծիքը՝ ելնելով այն փաստից, որ Բժիշկ Սերմաքաշյանը հավասարապես դեղահաբեր է վաճառում և՛ դաշնակցականներին, և՛ մենշևիկներին, և՛ հնչակներին, և՛ էսէռներին, հետևաբար նա կոսմոպոլիտ է:

Պակասը լրացրեց Մուշեղ Չանչախովը.

- Ի՞նչ կոսմոպոլիտ, - ասաց,- նա կամ ֆուտուրիստ է, կամ կաթոլիկ: Գրազ կգամ, այդ մարդը մեր Լեռնակերտի գլխին մի օր խաթա կբերի:

- Իմ արևը, իմ աչքին էլ պղտոր մարդ է երևում,- իր կարծիքը հայտնեց Դուքան Սեդրակը:- Գլխացավի դեղին էլ ասպիրին է ասում: Էդ Ասպիրինը Իսպանոց աշխարհի արտաքոց գործերի նախարարն է:

- Ավանակ,- եզրափակեց Աղամ Բիրղամիչը,- ասպիրինը հենց դեղի անունն է...

Իսկ Բժիշկ Սերմաքաշյանը գլուխը կախ իր գործին, իր այցելուներին միշտ միևնույն խորհուրդներն է տալիս՝ «Գլխացավի դեպքում՝ ասպիրին, մալարիայի դեպքում՝ խինին, փորացավի դեպքում՝ լուծողական, մրսելու դեպքում՝ բանկա, ճիճուների դեմ՝ դդումի կորիզ»:

Լեռնակերտցիներն էլ տարօրինակ մարդիկ են, տարօրինակ ու անշնորհակալ, փոխանակ գնահատեն մարդու ծառայությունները, նրան անվանեցին «դդումի կորիզ»:

Մենակ այդ չի, երբ քաղքենի մայրիկները ուզում են իրենց սիրասուն բալիկներին վախեցնել, ասում են՝ թե որ ձենդ չկտրես, Դդումի կորիզին կասեմ՝ գա քեզ տանի: Կամ վերցնենք ավարա Դուքան Սեդրակին. մեկ էլ տեսար փողոցից կանչեց՝ պարոն Դդումի կորիզ, մեր Նոյեմի փորը ցավում է, ի՞նչ անեմ: Իսկ մի անգամ Բժիշկ Սերմաքաշյանը շատ խիստ վիրավորվեց ու պատասխանեց՝ նիգադա՛յ, տի նիգադա՛յ, էլ ի՞նչ պիտի անես, կլիզմա արա՛:

Մամբրե Խաբարդանովիչը, ելնելով մարդասիրական վեհագույն նպատակներից, որոշեց ամուսնացնել Բժիշկ Սերմաքաշյանին: Նույնիսկ գտավ հարսնացու, հարսնացուն Մեռել լողացնող Մանգասարի քույրն էր՝ Սուսամբարը, որ մինչև այդ երեք անգամ պսակվել էր ու երեք անգամ բաժանվել:

Հարսանքի թունդ պահին, երբ Մուշեղ Չանչախյանը թամադայի իրավունքով հերթական ճառն էր ասում, փեսացուն ելավ տեղից, ներողություն խնդրեց թամադայից ու խոնարհաբար ասաց.

- Պարոններ, իմ քնելու ժամանակն է, թույլ տվեք գնալ:

Հարսանքավորները զարմացած նայեցին իրար, իսկ հարսնացուն վեր թռավ տեղից ու թափահարեց բռունցքը.

- Վո՜ւյ, հողեմ ես քո կարկաժը, մթամ դու էլ մա՞րդ ես:

Սակայն Սուսամբարը չէր ուզում չորրորդ ամուսնությունից հետո էլ կույս մնալ, և դեն նետեց դեմքի քողն ու ճչաց.

- Վո՜ւյ, չթողնեք, դուռը փակեցեք...

Այդպես էլ նա ամբողջ կյանքում մնաց կույս, այդպես էլ Բժիշկ Սերմաքաշյանն ամբողջ կյանքում մնաց ամուրի:

Աշխարհում փետրվարյան հեղափոխություն եղավ, Հոկտեմբերյան մեծ հեղափոխություն եղավ աշխարհում, Բժիշկ Սերմաքաշյանը խխունջի պես գլուխը քաշեց իր պատյանի մեջ, և միայն նէպ-ի տարիներին դուրս սողաց իր պատյանից, նայեց շուրջն ու հարցրեց Դուքան Սեդրակին.

- Լեռնակերտում էս ի՞նչ է կատարվում:

Նէպ-ը չմտավ նրա գլուխը, և երբ տարիներ հետո Լեռնակերտի երկնքում առաջին անգամ ինքնաթիռ տեսավ, տարակուսանքով շարժեց ուսերն ու շշնջաց.

- Բա այսքան ժամանակ ես որտե՞ղ էի:

Նալբանդ Աթունը նայեց նրա ետևից ու վրա բերեց.

- Ջահանդամի տակին:

ՆԱՀԱՆՋ

Երեկ միստեր Սենգիստոնը թողեց Շուշին և ծլկեց: Դե որ միստեր Սենգիստոնը ծլկել է, նշանակում է վերջը լավ կլինի...

(Ուստա Ծատուրի օրագրից)

Անգլիական հրանոթները մի քանի անգամ փոշտացրին ու լռեցին: Դա արդեն լուրջ փոշտոց չէր: Միստեր Սենգիստոնը Ղարաբաղի զտարյուն նժույգները քշեց Անգլիա, ինքն էլ պոչը ծալեց ու պոկ եկավ:

Մոթալ Մինասն ու Կարա-Բեքիրը հայհոյեցին միստեր Սենգիստոնին, հետո նրանից հիշատակ մնացած հեռադիտակի ու կարաբինի համար ջարդեցին իրար քիթ ու մռութ: Մոթալ Մինասը եկավ նորից Լեռնակերտ, որ կամ պարոն Սիլվեստի ոտքերը լիզի, կամ Վարժապետ Սիմոնի առջև պոչ խաղացնի:

Մոթալ Մինասը մտավ Նալբանդ Աթունի տունը, մի պուլիկ մեղր լափեց, վրան մի պուլիկ մածուն դատարկեց, հետո առաջը քաշեց մի դույլ կեռաս...

Աթունը դույլը խլեց նրա ձեռքից.

- Այ խիղճդ թաղեմ, այդքան լափել կլինի:

Մոթալ Մինասը փսփսալով տեղից վեր կացավ.

- Վա՜յ, մեջքդ կոտրվի, Նալբանդ Աթուն...

Մեջքդ կոտրվի, Նալբանդ Աթուն, ինչո՞ւ չես թողնում Մոթալ Մինասը մի պուլիկ մեղրի, մի պուլիկ մածնի վրա մի դույլ կեռաս էլ ուտի, մի դույլ թան խմի, մի դույլ... զահրումար ու ղաֆրան:

Հիմա էլ Լեռնակերտը Վարժապետ Սիմոնի համար դարձավ երեք անհայտով հավասարում: Նա մի օր դաշնակցական է, մի օր մենշևիկ, մի օր

բոլշևիկ: Նրան քաշում են նժարների ծանր կողմերը, իսկ այդ ծանր կողմերը եղանակների պես փոփոխական են:

Դուքան Սեդրակը նստել թթենու շվաքում, թերթ էր կարդում: Իսկ երբ Սեդրակը թերթ է կարդում, նշանակում է տրամադրությունը տեղը չի:

Վարժապետ Սիմոնը բացեց դարպասը, մտավ ներս, նստեց Սեդրակի կողքին ու հորանջեց:

- Նարդի չխաղա՞նք:

- Գլուխ չունեմ,- նետեց Սեդրակը:

- էհ, առանց գլխի էլ յոլա կգնաս, գլուխն ինչի՞դ է:

- Հերիք է, Սիմոն, հերիք է:

- Այ մարդ, գիշերը հո վատ երա՞զ չես տեսել:

- Տեսել եմ, շուն եմ տեսել, գել եմ տեսել, սև կատու եմ տեսել... Ձեր այդ Խմբապետ Խորենը խոզ է, միստեր Սենգիստոնը աղվես է, պարոն Սիլվեստը չորսաչքանի օձ է:

- Սեդրա՛կ, ես թույլ չեմ տա, որ անպատվես մեր ազգային փառապանծ հերոսներին: Թույլ չեմ տա:

- Իսկ քո էդ ազգային հերոսները ինչո՞ւ մկան ծակին հազար թուման են տալիս: Ինչո՞ւ փինաչի Ալեքսանը ապրում է, ինչո՞ւ բալշևիկ Մատվեյը գիշերները մանիֆեստ է կարդում: Ինչո՞ւ Ուստա Ծատուրն ինձ մերզավեց է անվանում, որտե՞ղ է քո միստեր Սենգիստոնը:

Դուքան Սեդրակը հևում է: Քրտինքը հոսում է դեմքով, աչքերը բներում պար են գալիս:

- Դե խոսիր է՞, խոսիր, սիրտս պայթում է:

Վարժապետ Սիմոնը հորանջեց.

- Ա՞խ է՞... Ա՛ շաշ, ինչի՞ ես քեզ սպանում: Դու դուքան ունես, ապրուստիդ ապրուստ չի հասնի:

- Դուքանս բալշևիկները կխլեն:

- Հա՞յ, հա՞յ, ինչպես չէ, կխլե՛ն: Սաղ աշխարհի տերությունները հրեն Կարմիր Ռուսաստանի վրա են թափվել, որ տեղը վարեն, բոստան ցանեն: Պարոն Դենիկինն ասել է՝ մինչև աշխարհից Ռուսաստանը չջնջեմ, չեմ դինջանա: Միստեր Սենգիստոնն էլ Լոնդոնում հրավիրել է պառլամենտ ու հայտարարել. «Պարոն դեպուտատներ, Արցախաց աշխարհը հույսով ու հավատով մեզ է սպասում: Տվեք ինձ հարյուր թնդանոթ, և ես Արցախը կդարձնեմ դրախտ»: Միստեր Չերչիլը հարցրել է. «Իսկ Արցախում ունե՞ս այնպիսի մարդ, որ կարողանա ղեկավարել երկիրը»: Միստեր Սենգիստոնը պատասխանել է. «Ունեմ: Այդ մարդը մեծարգո Սիմոն Սարխոշյանցն է»: Եվ որոշել են առաջին հերթին ջնջել Կարմիր Ռուսաստանը:

- Բա որ չջնջե՞ն:

- Որ ասել են, կջնջեն:

- Հաստա՞տ:

- Հաստա՛տ:

- Երդվի՛ր:

- Քո ազիզ արևը: Խորենին թաղեմ, թե սուտ ասեմ:

Դուքան Սեդրակը հանգստացավ:

- Ներիր, վարժապետ ջան, ախր շատ էի տաքացել: Դու իմ մեծ ախպերն ես, քեզնից, թաքցնելու բան չունեմ:

- Խոսի՛ր, փոքր ախպեր:

- Ախր էդ չեշմակավոր ղուռումսաղը հոգիս կերավ, է՞ :

- Պարոն Սիլվե՞ստը:

- Հա, հա, էդ դալնիբոյնի շան որդին:

- Ի՞նչ է ուզում:

- Օղի է ուզում, յուղ ու բրնիձ է ուզում, գինի է ուզում: Տվեցի: Հիմա էլ մաուզերը դեմ է արել ճակատիս, թե՝ ոսկի տուր, մաքուր, զնգուն ոսկի:

- Յա՜,- տեղից բարձրացավ վարժապետը:- Պարոն Սիլվեստը հիմա էլ էդպիսի դալաթներ է անո՞ւմ: Ես դրա պոչիցը մի վեդրո կկախեմ և սաղ Լեռնակերտի շները վրեն հուշտ տամ: էդ Թիֆլիսի կինտոն է մնացե՞լ, որ մեր նամուսը տափովը տա:

Հնդկահավը թփրտաց Դուքան Սեդրակի ոտքերի տակ, թշշաց խորոված, և Վարժապետ Սիմոնը քաղցած շան նման լիզեց շուրթերը:

Չէ, Դուքան Սեդրակի հաշվին դեռ կարելի է ապրել:

...Բոստանչի Ավագը դարբնոց մտավ չանգռոտված, գլուխը փալասով փաթաթած: Դեմքին չորացել էր արյունը, աչքերը վառվում էին զայրույթից: Ուստա Ցատուրը մուրճով խփեց զնդանին և խոժոռեց դեմքը.

- Այ տղա, ի՞նչ է պատահել:

- Ցեծեցին, լավ ծեծեցին, ուստա:

- էդ ո՞նց ծեծեցին:

- Հա՛, ծեծեցին:

- Ախր ովքե՞ր է՞:

- Մոթալ Մինասն ու Կարա-Բեքիրը:

- Ինչի՞:

- Բոստանում վարունգ չմնաց, պոմիդոր չմնաց, լափեցին, ջհանդամը, միայն ձենները կտրեն: Չկտրեցին: Հիմա էլ կանգնել են, թե ձմերուկ ենք ուզում: Այ ուստա՛, ցավդ տանեմ, ախր ինձ ձմերուկ որտեղի՞ց...

Ուստա Ցատուրը արձակեց գոգնոցը, նետեց փուքսի վրա, հետո դարձավ Պողոսին՝ գնացինք:

Պողոսի բռունցքները ծանրացան, դարձան կողքից կախված փթանոցներ, հոնքերը բարդ-բարդ կուտակվեցին և արյունը եռաց: Նա Լեռնակերտի ամենահանգիստ և ամենաուժեղ տղան է: Պողոսը ոլորում է գոմեշի վիզը, ծանր կռանը խաղացնում մի ձեռքով և այնպես է թափահարում Նալբանդ Աթունի թթենին, որ գետինը շարժվում է:

Մեծ մեյդանում Մոթալ Մինասն ու Կարա-Բեքիրը սեմիչկա են չրթում: Ուստա Ցատուրը մոտեցավ, ոտից գլուխ չափեց նրանց:

- Սրտներդ ձմերուկ է ուզո՞ւմ, շան տղերք,- ասաց ու բռունցքը մոտեցրեց Մոթալ Մինասի մռութին: Կարա-Բեքիրը ձեռքը տարավ դեպի մաուզե-

ը, սակայն նույն պահին նրա գլուխը ճռճռաց Պողոսի թևի տակ: Կարա-Բեքիրը մորթվող եզան պես բառաչեց ու փռվեց փողոցում:

Լեռնակերտը հուզվեց ու նորից խաղաղվեց: Ալեքսանը ծոր տվեց.

Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան,

Վհատվելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան...

Նալբանդ Աթունը օրորեց գլուխը.

- Իմ արևը, մեր Ալեքսանի նման երգիչ Պարիժում էլ չկա...

Իսկ Դուքան Սեդրակը դատարկեց օղու հերթական բաժակը, ձեռքը խփեց սեղանին.

- Վարժապետ, ուզում եմ իմանալ, Լեռնակերտի վերջն ի՞նչ կլինի:

- Լավ կլինի, Սեդրակ, լավ կլինի:

- Հա, գիտեմ, որ լավ կլինի, համա մենակ չգիտեմ, թե էդ ո՞ւմ համար լավ կլինի...

ԿԱՐԿԱԶ ԼԵՌՆԱԿԵՐՏՅԻ

Լավ միտս չի, թե էդ Կարկազը երբվանից երևաց Լեռնակերտում: Կամ տասնութ թվի վերջերին էր, կամ տասնինի կեսերին: էդ խառնի-խուռն տարիներին էնքան մարդիկ են եկել ու գնացել, էդքանին ես ո՞նց միտս պահեմ:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Ժամկոչ Մանասը ռուսի ժամի զանգը գողանալուց հետո, միշտ տարօրինակ երազներ էր տեսնում: Եվ ինքը՝ Ժամկոչ Մանասն էլ, ամբողջությամբ վերցրած, մի տարօրինակություն է. գլուխը սեխի պես ձգված, ոտքի մեկը կարճ, մյուսը՝ երկար, հոնքի մեկը սև, մյուսը՝ շեկ, իսկ թևերն այնքան երկար են, որ քիչ է մնում գետնին քսվեն: Կարծես ինչ-որ մեկը տարբեր տեղերից հավաքել է մարդկային մարմնի այդ զանգվածները, կցմցել իրար, զոռով մարդ սարքել, անունը դրել Ժամկոչ Մանաս: Դրա համար էլ Նալբանդ Աթունն ասում է. «էս տնաշենի Ժամկոչի մոտ ոչ մի բան էլ իրենը չի... Ոնց որ Կյալուստ Խախալյանի ֆայտոնը՝ մի անիվը փետից է, մի տիվը՝ ռեզինից, ծածկոցը՝ ժեժտից, դիշտին՝ երկաթից, լծասարքը՝ կանեփից...»:

Եվ ահա, մի գիշեր Ժամկոչ Մանասը իբրև երազում տեսավ Տեր-Վասիլիին: Տեր-Վասիլին նրան երևաց սուրբ Պետրոսի տեսքով ու ասաց. «Ռուսի ժամի խորանում ոսկի ունեմ պահած. զանիծվի զնա, ով զձեռք մեկանի զոսկուս»:

Ժամկոչ Մանասն այս ամենը Դուքան Սեդրակին պատմեց որպես իրական դեպք, և հանդիսավոր կերպով մի անգամ էլ կրկնեց Տեր-Վասիլիի խոսքերը. «Զանիծվի զնա, ով զձեռք մեկանի զոսկուս»:

Երբ Լեռնակերտը խաղաղ քնած էր, և Սիմոն Սարխոշյանցը երազում անարգանքի սյունին էր գամում իր գաղափարական ախոյաններին, Աղամ Բիրղամիչը Մոթալ Մինասի հետ զբաղված էր թղթախաղով, պարոն Սիլվեստն ու Լալախանբեկյանն իրենց ապագա գործողությունների համար նոր ծրագիր էին մշակում, Խմբապետ Խորենը Խմբապետ Աղաջանի հերն էր անիծում և պահանջում հարձակվել Լեռնակերտի վրա ու գահընկեց անել Աղամ Բիրղամիչին… Երբ Նալբանդ Աթունի շունը եռանդով հաչում էր լուսնի վրա, Դուքան Սեդրակը վերցրեց բահն ու քլունգը, շտապեց Տեր-Վասիլիի գանձերը հայտնաբերելու: Նա հավատացյալի պես նախ դեմքը խաչակնքեց, բայց քանի որ ոչ մի աղոթք չէր հիշում, հայհոյեց պարոն Սիլվեստին ու Վարժապետ Սիմոնին, մտավ խորանն ու անցավ գործի:

Ճանր սալաքարը շարժվեց նրա ոտքի տակ, ականջին կարծես ոսկու զնգոց հասավ, ախորժալուր, գայթակղիչ զնգոց: Շուռ տվեց սալաքարն ու սկսեց էլի փորել: Փորեց մի ժամ, երկու ժամ, և հանկարծ գլխավերևում, լուսանցքից ներս ընկած լուսնի շողերի տակ նկատեց մի դեղնագույն գանգ: Դա ժամկոչ Մանասի սեխն էր:

- Սեդրակ…

Դուքան Սեդրակը բահը բարձրացրեց՝ սեխին իջեցնելու համար, բայց զգաց, որ դա անմտություն կլինի. դեռ ոսկին չգտած, ինչո՞ւ զուր տեղը արյուն թափել:

- Սեդրակ,- ժամկոչ Մանասը նախատող հայացք ուներ և աչքերում հետաքրքրություն կար,- էդ ո՞նց կլինի, Սեդրակ, երազը ես եմ տեսել, բայց դու ուզում ես գողանալ իմ երազի ոսկին: Դա արդար չի, Սեդրակ:

- Հավասար կիսում ենք,- Սեդրակը ներքևից վերև նայեց,- դե ի՞նչ ես տնկվել հոգեառ հրեշտակի պես, արի օգնիր:

Սկսեցին փորել միասին, հերթով: Փորեցին և այնքան խորացան, որ երբ Դուքան Սեդրակը մի անգամ էլ նայեց վերև, աչքերը մթնվեցին:

- Արա, այ սարսաղ, բա ո՞նց պիտի դուրս գանք:

Ժամկոչ Մանասի սեխի ներսում հետաքրքիր մի միտք ծագեց.

- Արի էնքան փորենք, որ հասնենք աշխարհի էն մի ծերը:

- Էն մի ծերը Ամերիկան է,- Դուքան Սեդրակն ինքն էլ զարմացավ իր հայտնագործությունից:- Մենակ չգիտեմ՝ գլխների՞ս վրա պիտի դուրս գանք Ամերիկա, թե՞ ոտքներիս վրա:

Թե ինչպես մեր ոսկեխույզները դուրս եկան իրենց փորած հորից, դա մեզ անհայտ է: Հայտնի է միայն այն, որ հաջորդ օրն էլ սկսեցին քանդել լուսանցքի ձախակողմյան պատը և հայտնաբերեցին շտաբս-կապիտան Խասապետովի Կատինկայի ներքնաշապիկը, կամ ինչպես զավզակ Սեդրակն է ասում՝ ուրախության տոպրակը:

Իսկ հիմա մեր հերոսներին թողնենք իրենց գտած գանձի կողքին քոռ ու փոշման նստած, պատմենք Կարկազ Լեռնակերտցու մասին:

Այդ օրը ռուսի ժամի բակում իր օյինբազություններն էր ցուցադրում հռչակավոր Համբալ Արշակը: Երբ նա մի ձեռքով գետնից պոկեց հինգ

փթանոց ծանրաքարը, լեռնակերտցիք ծափահարեցին, Համբալ Արշակը երես առավ ու դարձավ հանդիսատեսներին.

- Մի՞թե ձեր քոսոտ քաղաքում չկա մեկը, որ իր ուժերը փորձի ինձ հետ:

Այստեղ էր, որ հայտնվեց Կարկազ Լեռնակերտցին, լայն-լայն քայլերով մոտեցավ նրան ու գոռաց.

- Քո գոմշի ուժով շուտով չքացիր այստեղից, անպետք:

Ներկա օրերում լեռնակերտցիներին գաղափար է պետք:

Դա բավական էր, որ Կարկազ Լեռնակերտցու բանաստեղծ-իրավաբանի համբավը տարածվի քաղաքում: Եվ Դուքան Սեդրակի ու Ժամկոչ Մանասի գործը հանձնվեց նրան:

Դուքան Սեդրակը մեղադրվում էր գողության ու սրբապղծության մեջ: Այդ ավազակը քանդուքար էր արել ռուսի ժամի խորանը և տիրացել ժամկոչ Մանասի երազում տեսած ոսկուն: Դա հաստատեց ինքը՝ Ժամկոչ Մանասը:

Դատը տեղի ունեցավ նախկին զորանոցի ներսում: Ովքեր ասես, որ չէին եկել ներկա լինելու այդ հետաքրքիր դատին: Կարկազ Լեռնակերտցին նախ մի հայացք նետեց ներկաներին, ապա նայեց Դուքան Սեդրակին ու հարձակվեց Սիմոն Սարխոշյանցի ու պարոն Սիլվեստի վրա, նրանց համարեց բուրժուական փտած գաղափարախոսներ և գոչեց.

- Քնից արթնացեք, ով քաղաքացիներ,

Ու ճանաչեցեք ոսոխներին ձեր.

Ժամն է տարաժամ, կյանքը խառնածին,

Կեցցե հավիտյան մեր քաջ այրուձին:

- Կեցցե՜ հավիտյան մեր քաջ այրուձին,- տեղից վեր թռավ Դուքան Սեդրակը,- կեցցե՜ Կարկազ Լեռնակերտցին:

Կարկազ Լեռնակերտցին թևը դրեց Դուքան Սեդրակի ուսին ու ասաց.

- Արդարացված է ձեր արդարությունը, ով քաջդ Սեդրակ...

Ուրեմն Կարկազ Լեռնակերտցին պատահական անձնավորություն չէր Լեռնակերտում, և պատահական չէր նրա գաղափարական պայքարը Սիմոն Սարխոշյանցի ու պարոն Սիլվեստի դեմ:

Իր ծավալուն աշխատություններից մեկում («Հնարավոր է ներկա պայմաններում Լեռնակերտը դարձնել մտքի կենտրոն») Կարկազ Լեռնակերտցին առաջ քաշեց մի շարք մտքեր, որոնցից մի քանիսը հարկ ենք համարում ներկայացնել ընթերցողներին.

ա) Լեռնակերտը կդառնա մտքի կենտրոն, եթե միտքը իշխի հոգու վրա, և պարոն Սիլվեստն ու Սիմոն Սարխոշյանցը հրաժարվեն իրենց փտած ու արխայիկ գաղափարախոսությունից.

բ) բանվոր դասակարգը պարտավոր է չեզոք դիրք բռնել գյուղացիության հանդեպ և հրաժարվել քաղաքական հարցերից.

գ) ներկա պայմաններում հարկավոր է այնպիսի մի հզոր գլուխ, որ կարողանա անշեղորեն պայքարել ամեն ձևի կուսակցությունների դեմ և ղեկավարել Լեռնակերտի մտքի կենտրոնը: Ես իմ գլուխն ամբողջովին նվի-

ռում եմ այդ մեծ ու նվիրական գործին: Կեցցե՜ անկուսակցական կուսակցությունը:

Եվ Կարկազ Լեռնակերտցին իր գլուխը կամավոր դրեց Լեռնակերտի կենտրոնում, հավաքեց պ. Սիլվեստի, Վարժապետ Սիմոնի, Խմբապետ Խորենի, Ապետնակ առաջինի և վերջինի դրոշները, կցմցեց իրար ու ստացավ, ինչպես Ուստա Ծատուրն է ասում՝ աջաբսանդալ:

Մի շարք գրավոր ու բանավոր տեղեկություններից երևում է, որ Կարկազ Լեռնակերտցին եղել է մեծ մտքի ու կարողությունների տեր անձնավորություն: Նրա ձեռագիր մատյանի 367-րդ էջում կարդում ենք այսպիսի հանճարեղ մտքեր. «Լուսինն է ցուրտ, և խոնավ, ջրային, գիշերային, իգական և չարահար: Իշխէ մաղձին, ուղղոյ, կզակին, ձախ աջին», կամ՝ «Յորժամ հիվանդն զգայ զցավ, տուր իրա ըմբել մին կերակրոյ գըդալով զմագնէզիա, քանզի մագնէզիաս տրորել ի մեջ ջրոյ, խափանէ զփսխումն և տայ հիվանդին լուծանել»:

Սիմոն Սարխոշյանցը, ծանոթանալով այս տողերին, այն միտքն է հայտնել, որ իբր Կարկազ Լեռնակերտցին իր մտքերը թռցրել է էֆիմերտիից: Իսկ ո՞վ է իմանում, գուցե էֆիմերտին է իր մտքերը թռցրել Կարկազ Լեռնակերտցուց: Այդ վիճելի հարցով թող զբաղվեն փիլիսոփաները:

Կարևորն այն է, որ Կարկազ Լեռնակերտցին շատ զարգացած անձնավորություն էր, և հենց նա էր փրկել Դուքան Սեդրակի կյանքը:

Այո, այո, այն տխուր օրը, երբ Դուքան Սեդրակը նստած էր մեղադրյալի աթոռին, իրեն խիստ վատ զգաց՝ փորացավն ու գլխացավը խառնվել էին իրար: Բայց Կարկազ Լեռնակերտցին կանխեց վտանգը. «Առավոտյան մեկ գոմեշի դոզայի լուծողական, երեկոյան՝ երկու»: Երկու օր խեղճ Սեդրակը քնում էր զուգարանում և այնպիսի ձայներ էր արձակում, որ կինը՝ Նոյեմը, չանչ էր անում դեպի զուգարանն ու ասում. «Ձահրումար, էշի մեկը»:

Շուտով ուրիշ լուր տարածվեց. Կարկազ Լեռնակերտցին որոշել է Լեռնակերտում ստեղծել ուղտաբուծարան: Դրան իսկույն հետևեց Կարկազ Լեռնակերտցու դասախոսությունը «Ուղտի կաթը երկարացնում է մարդկանց կյանքը» թեմայով:

- Երկար ուսումնասիրություններից ու փորձերից հետո,- ասաց նա,- ես գտել եմ, որ հիմալայան ուղտի կաթն իր մեջ պարունակում է մարդու օրգանիզմի համար պիտանի բազմաթիվ վիտամիններ: Դա հնարավորություն կտա, որպեսզի մենք ապրենք երկու հարյուր տարուց ոչ պակաս:

Իսկ Հիմալայ հասնելու և այնտեղից ուղտեր բերելու համար միջոցներ են հարկավոր: Առաջինն իր քսակը բացեց Դուքան Սեդրակը, որ նույն օրն էլ հեռակա կարգով նշանակվեց ապագա ուղտաբուծարանի կառավարիչ: Դուքան Սեդրակին հետևեցին աղյուսագործարանատեր Մամբրե Խաբարդանովիչ Չոլախյանը, թոկ ու չվան ծախող Մելիք Մուջուզբեկյանը, Գալիֆե Գուգուշը և այլ երևելի անձինք:

Սրտահույզ էր հրաժեշտի տեսարանը: Մամբրե Խաբարդանովիչը գրկել էր Կարկազ Լեռնակերտցուն և ասում էր. «Մենք քեզ երբեք չենք մոռանա, ով

մեծագործ մարդ: Քո անունը պատմության էջերում ոսկե տառերով կգրվի և ամեն մայր աշխարհ եկած իր արու զավակին քո անունով կկոչի»:

Բայց, ցավոք սրտի, ոչ մի ուղտ էլ չհասավ Լեռնակերտ: Իսկ ինքը՝ Կարկազ Լեռնակերտցին (գրոց անունը՝ Կարապետ Կազյան) ինչպես հայտնվել էր, այնպես էլ անհետացավ:

Ասում են, իբրև, ճանապարհին ուղտերը կատաղել ու հոշոտել են այդ մեծ մարդուն: Մի ուրիշն էլ պնդում է, թե Կարկազ անունով մի հայտնի գիտնական իրեն հերոսաբար նետել է գնացքի անիվների տակ ու գոչել.

- Կեցցե՜ Լեռնակերտը...

Սակայն հայտնի չէ. նա գնացքի անիվների տակ նետվելուց առա՞ջ է գոչել՝ «Կեցցե Լեռնակերտը», թե՞ անիվների տակ ճխլտվելուց հետո: Խոսք եղավ նաև այն մասին, որ իբր Ռոստովում Կարապետ Կազյան անունով մի անասնաբույժ հայտարարել է, որ իբր ինքըՄովսես Կաղանկատվացու տոհմի վերջին շառավիղն է, որոշել է Նոր Նախիջևանում հիմնել թանգարան և տեղի հայերից բավականին գումար է կորզել ու փախել անհայտ ուղղությամբ:

Դժվար է ասել, թե այս տեղեկությունները որքանով են հավաստի: Փաստն այն է, որ երբ Սիմոն Սարխոշյանցը լսում է այդ մարդու անունը, թքում է անհայտ ուղղությամբ ու նետում.

- Ժուլիկ ավազա՛կ...

- Սինլքոր ավանտյուրի՛ստ,- ավելացնում է պարոն Սիլվեստը:

- Եվ դուք չթողեցիք, որ ես դրա բուրդը քամուն տամ,- բարկանում է Աղամ Բիրղամիչը:

- Գլուխս ոնց վարեց,- Դուքան Սեդրակը բռնում է գլուխը:

- Ախր ձեր էդ կարկաժը որտե՞ղ էր, որ հավատացիք էդ Կարկազին,- ծիծաղում է Նալբանդ Աթունը:- Տեղն է ձեզ, դե հիմա ուղտի կաթ լակեցեք...

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՐԱԴՈՔՍ

Այո, սիրելի ընթերցող, օրինական հարց է ծագում՝ այդ ինչպե՞ս եղավ, որ Աղամ Բիրղամիչը Կարկազ Լեռնակերտցու բուրդը քամուն չտվեց: Ինչպե՞ս կարող է Աղամ Բիրղամիչի նման հայրենասերը հանդուրժել այդ դուրսպրծուկին, երբ Լեռնակերտի պատիվն իր պատիվն է: Ղարաբաղյան պարադոքս՝ կասեր պատմության ուսուցիչ Արտավազդ Կարմիրյանը, մի շատ կուլտուրական մարդ, որի համար, ինչպես պնդում են բերանբացները, աղյուսագործարանատեր Հերիքնազ Առնավուդովնան հոգի է տալիս: Եվ այստեղ է, որ Լեռնակերտի բազարի տեր ու տնօրեն Օրենք Օհանի (որի մասին մենք կպատմենք հետո) ամուսնալույծ քույրը՝ Սաթենիկ Կերոբովնան, ճաք-ճաք է լինում, թե տեսնո՞ւմ եք, այս Լեռնակերտի նարոդը գռեհիկ ու

չտես է, պրոստո դիկար, պրոստո ազիացի... «Բեսսովեստնի,- ասում է,- նեուժելի մի անգամ չեք նայում ձեր պադշիվկա արած տրուսիկներին ու նոր միայն ուրիշների վրա ծիծաղում: Օյ, օյ, օյ, պրոստո ուժասնո»:

Ինչպես տեսաք, Սաթենիկ Կերոբովնան նույնպես բարձր կուլտուրայի տեր անձնավորություն է, Բոստանչի Սրափիոնի պատմելով՝ թութը ասեղով է ուտում և ամեն առավոտ գոգլի-մոգլի է խմում, որպեսզի ձայնը չխզվի: Այդ նա է, որ Մամբրե Խաբարդանովիչի բանկետները զարդարում է իր հիասքանչ ձայնով և այնպես է «Քելե-քելե» երգում, որ Դուքան Սեդրակը հոնգուր-հոնգուր լաց է լինում ու լացի միջից ասում. «էդ կնիկն իմը լիներ, գիտե՞ք ինչ կանեի...»: Դուք հավանաբար կռահեցիք, որ Դուքան Սեդրակն անպայման մի հիմարություն պիտի ասի, որպեսզի Սիմոն Սարխոշյանցը գլուխն օրորի ու նախատի. «Դու մարդ չես, մաքուր էշ ես, քո տեղը գոմն է»:

Բայց մենք շեղվեցինք մեր պատմությունից:

Ուրեմն, այդ ինչպե՞ս եղավ, որ Աղամ Բիրղամիչը այդ Կարկագ Լեռնակերտցու բուրդը քամուն չտվեց:

Ասում են՝ այդ օրերին Լեռնակերտի պրեմիեր-քաղաքագլուխը իբր գտնվում էր Կիսլովոդսկում, և, Մոթալ Մինասի հավաստի տեղեկություններով, հորաքույրն իր հարստությունը կտակել էր եղբորորդուն: Մոթալ Մինասն ուրիշ բան է ասում. Աղամ Բիրղամիչը բացակայում էր այդ օրերին, որովհետև գտնվում էր Շուշիում, Բարիշկայի սերը նորից նրան գլխահան էր արել: Բայց դա կատարյալ բամբասանք է...

Բամբասանք կարելի է համարել նաև Տավարած Դուդուլի կնոջ քսփսոցը. մթամ ինքն իր աչքով Աղամ Բիրղամիչին տեսել է ծմակում՝ մի սիրուն կնոջ հետ, և այդ սիրուն կինը ձախ այտին սև խալ ուներ: Իսկ թե ով է այդ սիրուն կինը, որ ձախ այտին սև խալ ունի, Տավարած Դուդուլի կողակիցը չի ասում: «Չեմ ասի,- ասում է,- որ ասեմ, մեր Դուդուլն ինձ ցաքի կրակի մեջ կդնի»:

Դուքան Սեդրակը լսում է այս ամենը ու քթի տակ ժպտում: Այսինքն՝ մեր էս լեռնակերտցիք էշի ականջում ոնց որ քնած լինեն: Ի՞նչ Շուշի, ի՞նչ Կիսլավեսկե,- և զգուշորեն շուրջն է նայում ու պատմում անհավատալի բաներ: Ուրեմն, այն օրը, երբ Աղամ Բիրղամիչը շան օր գցեց Խմբապետ Խորենին, դպրոցի պատմության ուսուցիչ Արտավազդ Կարմիրյանի հետ գնաց թվաբանության ու երգեցողության ուսուցչուհի Ելիզավետա Շեկունցի տունը: Այնտեղ էին նաև հայոց լեզվի ուսուցչուհի Համեստ Ազատյանը, Հերիքնազ Առնավուդովնան, Սաթենիկ Կերոբովնան, Մոթալ Մինասը: Դուռակի էին խաղում: Դուքան Սեդրակը չի շարունակում, «էսքան բան»,- ասում է, բայց նրա կինը՝ Նոյեմը, շարունակում է պատմությունը: Ուզում եք հավատացեք, ուզում եք մի հավատացեք, ձեր գործն է. լվացքաջուրը Սիմոն Սարխոշյանցի վրա է շպրտել Համեստ Ազատյանը, Աղամ Բիրղամիչն էլ ասել է. «Բաղնիքդ անուշ, վարժապետ»:

Բայց այդ ինչպե՞ս եղավ, որ Սիմոն Սարխոշյանցն այսքանից հետո ներեց Աղամ Բիրղամիչին: Դեռ ավելին, նա մի լավ շշպռեց Դուքան Սեդրա-

կին. «Էշ ծնվել ես, էշ էլ կսատկես: Հասկացիր, խոզի գլուխ, Աղամ Բիրղամիչն այդ օրերին Կոմիտեի հանձնարարությամբ գտնվում էր Թիֆլիսում»: Ղարաբաղյան պարադո՞քս... Օ՜, ո՛չ, Սիմոն Սարխոշյանցին հարկավոր էր Աղամ Բիրղամիչի աջակցությունը, որովհետև իր և պարոն Սիլվեստի միջև ծագած կոնֆլիկտը հասել էր գագաթնակետին: Երկու քանդիրբազները չէին կարող խաղալ մի թոկի վրա, և նա Դուքան Սեդրակին ասաց. «Մենք այդ ակնոցավոր իժի դիմակը համարյա պատռելու վրա ենք: Այդ ավանտյուրիստ սրիկան դավաճանում է մեր կուսակցությանը»:

Բայց ի զարմանք Դուքան Սեդրակի, պարոն Սիլվեստն իրեն բոլորովին դավաճանի պես չէր պահում: Առավել զարմանալին այն է, որ այդ ժլատ ու ագահ Մամբրե Խաբարդանովիչն իր քսակը բացեց Սիլվեստի առջև, բավականին գումար տրամադրեց նրան, որպեսզի Լեռնակերտում ստեղծի հատուկ զորախումբ:

Ստեղծվեց հատուկ զորախումբը՝ տասնչորս աժդահա տղամարդ՝ Խմբապետ Աղաջանի մոր ծիծը տակից կտրողներից, որոնք ձերբակալեցին Ալեքսանին, ապա ռուս Մատվեյին ու Նալբանդ Աթունին՝ որպես հայրենիքի դավաճանների: Հարցաքննությունը վարում էր ինքը՝ պարոն Սիլվեստը, և հենց այդ նույն օրը կարծես երկինքը փուլ եկավ: Շարժն այնքան ուժգին էր, որ Ելիզավետա Շեկունցի փոքրիկ օթախը օրորվեց: Հերիքնազ Առնավուդովնան կպավ Աղամ Բիրղամիչին, Սաթենիկ Կերոբովնան գրկեց Մոթալ Մինասին, հայոց լեզվի ուսուցչուհի Համեստ Ազատյանը բռնեց պատմության ուսուցիչ Արտավազդ Կարմիրյանի ձեռքն ու քիչ էր մնում սարսափից խոստովաներ իր սերը, իսկ Արտավազդ Կարմիրյանը ցույց տվեց, որ ինքը վախկոտներից չէ, ու հիշեց նապոլեոնյան հին գվարդիայի գեներալ Կոմբրոնի թևավոր խոսքը Վաթերլոյի ճակատամարտում. «Գվարդիան մեռնում է, բայց չի հանձնվում»:

Բայց այստեղ ի՞նչ գործ ունի գվարդիան, երբ հոդս էր ցնդել Խմբապետ Խորենի տրամադրության տակ գտնվող զինանոցը, այսինքն՝ երկու մեծ տակառ վառոդ:

Պարոն Սիլվեստի իշխանությունը միայն մի շաբաթ տևեց: Հատուկ զորախմբի հրամանատարը հարբեց և բերանից թռցրեց, որ իբր զինանոցն իրենք են պայթեցրել՝ պարոն Սիլվեստի հատուկ հանձնարարությամբ: Աղամ Բիրղամիչը չսպասեց, մտավ պարոն Սիլվեստի շտաբը, նստեց սեղանի վրա, մի ծխախոտ վառեց ու խոսեց.

- Դուք ախմախ եք, պարոն Սիլվեստ: Դուրս է գալիս, որ ամենամեծ դավաճանը հենց դուք եք: Լա՛վ, ժամանակ չունեմ, այն փողերը հանիր:

- Ի՞նչ փողեր,- պարոն Սիլվեստի ակնոցը քրտնեց:

- Չգիտե՞ս: Դե լավ, կհիշեցնեմ. Մամբրե Խաբարդանովիչից պոկած փողերը: Ժամանակ չունեմ, պետական կարևոր գործեր կան: Իսկ ընդհանրապես արդեն ձանձրացել եմ պրեմիեր-մինիստրություն անելուց, պետություն-պետություն խաղալուց:

Օ, ոչ, ընթերցող, Աղամ Բիրղամիչը հարբած չէր: Թող Վարժապետ Սիմոնը պնդի, թե նրա մեջ քնել է հայրենասերի խիղճը և արթնացել խռովարարի ոգին: Թող Առուստամ Լալախանբեկյանը պարոն Սիլվեստի ականջին շշնջա. «Եվ այս ղումարբա՞զը պիտի բարձրացնի ազգի ոգին»: Թող Հերիքնազ Առնավուդովնան իր աննամուս ամուսնու քթի տակ Բիրղամիչի հետ կաբարդինսկի լեզգինկա պարի: Թող Լեռնակերտի անփոխարինելի թամադա Մուշեղ Չանչախովը շարունակի իր չարախոսությունները. «Օ, ոչ, պարոնայք, այս Աղամ Բիրղամիչը քաղաքական շուտնիկ է»: Աղամ Բիրղամիչը թքած ունի այդ կարծիքների վրա: Ինչ ուզում՝ այն էլ անում է:

- Բայց սպասեցեք,- Սիմոն Սարխոշյանցը զույգ ձեռքով բռնում է գլուխը,- իսկ ո՞րն է Աղամ Բիրղամիչի իդեալը, ընդհանրապես ո՞վ է այս ազգային հերոսը՝ միապետակա՞ն է, թե՞ հանրապետական, բոլշևի՞կ է, թե՞ մենշևիկ, բունտակա՞ն է, թե՞ օկտյաբրիստ... Իսկ գուցե ծախու մի հոգի է, որ Կոմիտեի գաղտնիքները հայտնում է թշնամուն: Ինքը՝ Առուստամ Լալախանբեկյանն է պնդում, որ վերևից եկած «գաղտնի նամակներն» ու հրահանգները տեսել է զուգարանում՝ շատ անհարմար վիճակում:

Հիմա էլ այդ անիծյալ պարադոքսը թխսահավի պես նստեց Սիմոն Սարխոշյանցի ուղեղում:

Մինչդեռ Լեռնակերտից դուրս գործերը շատ վատ են: Խմբապետ Խորենն ու Խմբապետ Աղաջանը նորից ընդհարվել են, մաուզեր քաշել իրար վրա: Խմբապետ Աղաջանի գրաված գյուղերը Խմբապետ Խորենն է գրավում, Խմբապետ Խորենի գրավածը Խմբապետ Աղաջանն է գրավում: Իսկ հանգամանքներից օգտվում են հարևան թուրքերը՝ ասպատակելով հայկական գյուղերի վրա:

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ

Պարոն Սիլվեստը նիստ հրավիրեց և Լեռնակերտում տեղի ունեցած վերջին խայտառակ դեպքերի համար մեղադրեց Աղամ Բիրղամիչին:

Խմբապետ Խորենն առաջարկեց կալանավորել քաղաքագլուխ Աղամ Բիրղամիչին և նրա փոխարեն քաղաքագլուխ նշանակել Մուշեղ Չանչախովին: Սիմոն Սարխոշյանցն ու Առուստամ Լալախանբեկյանը պաշտպանեցին նրա առաջարկությունը և ապա հանդես եկան մի նոր առաջարկությամբ.

- Այս խառնակությունների համար, պարոնայք,- խոսեց Սիմոն Սարխոշյանցը,- առաջին հերթին մեղավոր են բոլշևիկ Ալեքսանը և Մատվեյը: Ձեզ եմ հարցնում, պարոնայք, նրանք ի՞նչ իրավունքով են խայտառակում մեր ազգի փառապանծ հերոս Խմբապետ Խորենին:

Ապա ընդարձակ ճառով հանդես եկավ Մուշեղ Չանչախովը: Նա խոստացավ ուղիղ մի շաբթում կարգ ու կանոն հաստատել Լեռնակերտում,

կալանավորել Ալեքսանին ու Մատվեյին, քարուքանդ անել Ուստա Ծատուրի, Նալբանդ Աթունի արհեստանոցները:

Դահլիճում դեռ չէին լռել ծափահարությունները, երբ հանկարծ դուռը շրխկոցով բացվեց ու ներս մտավ Աղամ Բիրղամիչը՝ երկու ղոչու հետ: Բիրղամիչի մի ձեռքում մաուզեր էր, մյուս ձեռքում՝ նագան:

- Նիստը համարում եմ փակ,- գոչեց Բիրղամիչը:- Ես, որպես պրեմիեր-մինիստր և նմանապես քաղաքագլուխ, առաջարկում եմ, որ հենց այսօր Խմբապետ Խորենը Լեռնակերտից հեռանա էշը հեծած... Դուք, պարոն Սիլվեստ, հրապարակայնորեն պիտի հրաժարվեք ձեր ախմախ գաղափարներից: Նույնը վերաբերում է նաև պարոն Սարխոշյանցին... Իսկ դուք, հարգարժան պարոն Չանչախով, հենց հիմա պիտի կանգնեք այս սեղանին ու «Լեզգինկա» պարեք:

Դա Աղամ Բիրղամիչի հերթական օյինբազությունն էր: Մուշեղ Չանչախովը խայտառակությունից փրկվելու համար ցատկեց պատուհանից ու մինչև գոտկատեղը տնկվեց Դուքան Սեդրակի աղբանոցում: Մի խայտառակությունից փրկվեց և ընկավ մի ուրիշ խայտառակության մեջ: Ինչ խոսք, դա էլ հերոսություն է: Աղամ Բիրղամիչը նույն օրը Մնացական Դանդարովի ֆայտոնով սլացավ Շուշի, վաճառեց իր հայրական տունը և իր Բարիշկայի հետ մեկնեց... Առայժմ անհայտ է, թե որտեղ մեկնեց Աղամ Բիրղամիչը: Ասում են՝ Թիֆլիսում մի քանի ամիս ախպեր-տղորանց հետ քեֆ էր անում: Թիֆլիսից գնաց Բաքու, Բաքվից՝ Միջին Ասիա...

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՄԵԼԵՈՆ

էդ ստից Սորբոնն ավարտած Մուշեղ Չանչախովը միշտ իշխանության անունից էր խոսում: Քանի թախտին թագավոր կար, թագավորական էր. տեղը Կերենսկին նստեց, գլուխն իսկույն Կերենսկու նման կլոր խուզեց և ժամանակավոր կառավարության անունից հայտարարում էր, թե ազգի փրկությունը դաշնակներն են: Հենց որ Կարմիր բանակը եկավ, Չանչախովը սկսեց համաշխարհային հեղափոխության անունից չանչախություն անել:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Շուշեցի մանրավաճառ Դոնբազի՝ Մուշեղ անունով արու զավակը 20 թվականի մայիսին խաչ քաշեց դաշնակցականների իշխանության վրա և Ալեք Բարթուղյանի ներկայությամբ մի մեծ ճառ ասաց համաշխարհային հեղափոխության օգտին: Ալեք Բարթուղյանը բանի տեղ չդրեց նրա ճառը և այդ մեծաքանքար, ճարտարախոս, անփոխարինելի թամադա մարդուն անվանեց «երկերեսանի քաղաքական լիրբ»:

Մուշեղ Չանչախովը չազդվեց, չընկճվեց և աչքը չթարթեց, ցիտատներ էր բերում Մարքսից ու Էնգելսից, քննադատում օպորտունիստներին ու անարխիստներին: Նա իր համար հետաքրքիր կենսագրություն ստեղծեց. իբր Սորբոնում սովորելու ժամանակ նեղը լծեց բուրժուական գաղափարախոսներին, և իբր 17 թվականի փետրվարյան հեղափոխության թունդ պահին, մի խումբ կտրիճների հետ խուժել է ցարի պալատը, կանգնել այդ բռնակալի, այդ արյունարբու ցարի դիմաց ու գոչել. «Հրե՛շ, ահա և եկել է հատուցման ժամը, պատասխան պիտի տաս»:

Այն օրերին, երբ աղյուսագործարանատեր Մամբրե Խաբարդանովիչը ծանր կացության մեջ էր, Մուշեղ Չանչախովը համարձակորեն բացեց նրա դուռը, մոտ երկու ժամ խոսեց համաշխարհային հեղափոխության դերի ու միջազգային նշանակության մասին, մի վայրկյանում հողմացրիվ արեց կապիտալիզմի փտած ամրոցները և ապա շուռ եկավ Հերիքնազ Առնավուդովնայի կողմն ու ասաց.

- Եվ ահա, ելնելով ներկա բարդ իրադրություններից ու պայմաններից, ես քաղաքական նկատառումներով եկել եմ խնդրելու օրիորդ Օլյայի ձեռքը:

Քանի որ Հերիքնազ Առնավուդովնան իր գեղեցկությունն ու առողջությունը չփչացնելու համար քաղաքականությամբ չէր զբաղվում, նայեց ամուսնուն, վերջինս ճռճռացրեց մանրբուրժուական աթոռն ու հարցրեց.

- Ներեցեք, իսկ այդ ի՞նչ քաղաքական նկատառումներ են:

- Ամուսնանալով Օլյայի հետ,- Չանչախովն այստեղ նայեց օրիորդ Օլյային և մեծահոգաբար ժպտաց,- ես կամրապնդեմ ձեր քաղաքական դիրքերը, այսինքն՝ դուք կունենաք համաշխարհային հեղափոխությանը նվիրված փեսա և կապրեք ապահով:

- Օհո՜, տեսե՜ք, կամրապնդի մեր քաղաքական դիրքե՜րը,- Օլյան ծիծաղեց,- դուք, պարոն Չանչախով, գլուխ ունե՞ք ձեր ուսերին:

- Եվ այն էլ հոյակապ գլուխ:

- Խելոք լինելու համար գլուխը դեռևս քիչ է, հարկավոր է ունենալ նաև խելք,- և այդ ասաց օրիորդ Օլյան, ապա մոտեցավ այդ անպատկառին ու շրա՛խկ, այնպես ապտակեց, որ Չանչախովի աչքերը մթնվեցին:- Մենք քո ողորմությամբ չէ, որ պիտի ապրենք: Դո՛ւրս այստեղից, քաղաքական քամելեոն:

Մուշեղ Չանչախովի համար այդ անսպասելի էր, և երբ մի քանի օրից հետո Օլյան ամուսնացավ Պողոսի հետ, նա հանդես եկավ մի ճառով, որտեղ Պողոսին մեղադրեց բազում թեքումների մեջ, Հեղկոմի նախագահ Ալեքսանին անվանեց «բուրժուական փտած բերդերի ծպտված իշխան», և ուրիշ շատ բաներ:

Մուշեղ Չանչախովը հրապարակ էր որոնում իր հայացքները լրիվ դրսևորելու համար, և այդ հրապարակը շուտով նրան տրամադրեց Խմբապետ Աղաջանը: Խմբապետ Աղաջանը ավազակախմբի հետ «ազգի փրկության» լոզունգի տակ արշավում էր գյուղերի վրա, ծեծում, գողա-

նում, սպանում, թալանում ու բղավում. «Կեցցե՜ ազատ ու անկախ հեղափոխությունը»:

Արցախի նոր տիրակալի «սխրագործությունները» անմահացնող պատմագիր էր հարկավոր, և պատմագրի պատվավոր պարտականություններն իր վրա վերցրեց Մուշեղ Չանչախովը:

Կարծում եմ, ընթերցողը դեմ չի լինի, եթե նրան ներկայացնենք Մուշեղ Չանչախովի գրչի փայլատակումներից մի քանի դրվագ:

«20 թիվ, սեպտեմբեր: Խմբապետ Աղաջանը հայհոյեց շտաբի պետ Ղուկասին, անվանեց նրան քաչալ ղազ, աղբի ոջիլ, քոսոտ մոզի, ավանակի ականջ և այլն: Ղուկասը շտաբի պետի իրավունքով երդվեց՝ «Թե ես էդ շան փորից եկածի բեղը չկտրեմ, ետևիցս շան թուլա կանչեցեք»: Բայց նա չհասցրեց կատարել իր երդումը, որովհետև հաջորդ օրը Խմբապետ Աղաջանը ընկավ կարմիրների սարքած դարանը և գլուխը փրկելու համար ինքն իր ձեռքով կտրեց իր բեղը: Սեփական բեղը»:

«20 թիվ, հոկտեմբեր: Խմբապետ Թյունին սպանվեց, տասնապետ Վանին փախավ-միացավ կարմիրներին, հարյուրապետ Հաբեթը թքեց Արջ Մաթոսի դեմքին ու անվանեց նրան «Քրիստոսի օրհնած ավանակ»:

Մեծ պայքարը դեռ առջևումն է»:

«20 թիվ, դեկտեմբեր: Ցուրտը կատու է խանձում: Երեկ մեր քաջերից վեց հոգի հերոսաբար սառչեցին պոստում: Շան տղերքը լակած պառկել, քնել են ու այդպես էլ մնացել քնած:

Խմբապետը կարգապահությունը բարձրացնելու նպատակով հրամայեց թալանը կատարել կազմակերպված, դիմադրողներին պայտել»:

«21 թիվ, հունվար: Այսօր տեղի ունեցավ ռազմական տրիբունալի հերթական հավաքը: Երեք հոգի մեղադրվում են դավաճանության մեջ: Տրիբունալի նախարարը Քաչալ Ղուկասն էր, տեղակալը՝ Տեր-Մուջուզը: Ղուկասը նոր էր սկսել իր ճառը, երբ հանկարծ մաուզերը թափահարելով ներս խուժեց Խմբապետ Աղաջանն ու գոռաց՝ «Կարմիրները գալիս են, փախե՜ք»: Տեր-Մուջուզը տակը իսկականից լցրեց, իսկ Աղաջանը սկսեց հռհռալ՝ «Վա՜յ, շան տերտեր, ախր կատակում էի»:

«21 թիվ, մարտ: Մի գլուխ նահանջում ենք: Ղարաբաղը փոքրացել ու հիմա նեղ է գալիս մեզ վրա: Չեմ հասկանում, ինչո՞ւ գլուխս զուր տեղից գցեցի շառի մեջ: Ի՞նչ պիտի լինի սրա վերջը»:

«21 թիվ, ապրիլ: Ի՜նչ դաշնակցական, ի՜նչ Աղաջան, ի՜նչ Ղուկաս ... Ես այն գլխից պայքարել և այսօր էլ շարունակում եմ պայքարել հանուն համաշխարհային հեղափոխության վերջնական հաղթանակի: Խիղճս մաքուր է, և ես մաքուր խղճով գոչում եմ՝ «Կեցցե...»:

Այստեղ ընդհատվում է Մուշեղ Չանչախովի ձեռագիրը և, ինչպես տեսնում եք, նրա «կեցցեն» մնում է կիսատ: Գուցե մարդու թոքերում այնքան օդ չկար, որ ավարտեր իր «կեցցեն» կամ, ո՞վ գիտե, գուցե կաթվածը վրա էր հասել այն պահին, երբ ուզում էր արտաբերել՝ «համաշխարհային հեղափոխությունը»:

Առածն ասում է՝ սարը սարին չի հանդիպում, մարդը մարդուն հանդիպում է: Այդ է վկայում Ուստա Պողոսի այս փոքրիկ պատմությունը.

«41-ին, երբ Կարմիր բանակը մտավ Թեհրան, հանկարծ նկատեցի մի ճաղատ մարդու՝ փողոցում թարխուն վաճառելիս: Նա ցատկեց տեղից ու գոչեց՝ «Կեցցե՛ ազատարար Կարմիր բանակը»: Դեմքը ծանոթ էր: Մոտեցա, նայեցի մոտիկից... Պա՛հ, քո ինչն ասեմ, Մուշեղ Դոմբազովիչ Չանչախովն էր:

- Հը, պարոն Չանչախով,- ասացի,- քեֆդ ո՞նց է:

Նա չհասցրեց իմ հարցին պատասխանել: Փողոցում հայտնվեց անգլիական մի զառամ գնդապետ, նույն պահին Չանչախովը ձեռքը պարզեց վեր ու ճչաց՝ «Կեցցե՛ պարոն Սենգիստոնը»:

Չէ, Չանչախովը էլի նույն քաղաքական քամելեոնն էր մնացել:

ՖՈՏՈ ԳԱՎՐՈՒՇԸ

...էն տարիներին Լեռնակերտն ուներ մի կլուբ, երեք խանութ, երկու անտեր ժամ, երկու ֆայտոն, մի լուսանկարչատուն, որ կոչվում էր «Նկարեմ տամ», մի ճաշարան, մի շուկա, մի գլխավոր փողոց, մի փոքրիկ դեղատուն, մի բաղնիք...

(Տարեգրություն անհայտ հեղինակի)

...Հա՛, էդպես էր: «Նկարեմ տամ»-ի ապարատչին Գալիֆե Գուգուշի աներտղան էր, որը հետագայում դարձավ Մամբրե Խաբարդանովիչի հորաքրոջ ամուսինը: Ոտանավորներ էլ էր հորինում:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Բարակ, սրված քթով, ծուռ սանրված նոսր մազերով, երկարավիզ, նեղ ուսերով և իրարից բավականին մոտիկ, անգույն աչքերով մարդ է Ֆոտո Գավրուշը: Նրա մոտ ընդհանրապես ամեն ինչ սրված են՝ և՛ ականջները, և՛ նույնիսկ ոտնամանների քթերն ու հոնքերը: Նա այն հազվագյուտ մահկանացուներից է, որոնց դեմքին նայելով՝ չես կարող ասել, թե քանի տարեկան է, և, որոնց քաշը ո՛չ ավելանում է, ո՛չ պակասում: Այստեղ տեղին է հիշել Գալիֆե Գուգուշի խոսքը՝ «էդ տնածակի տղան հացը պակաս տարում կշռվեց՝ հիսունից չանցավ, մորեխի տարում հիսուն էր, հիմա էլ հիսուն է. ո՛չ ավելանում է, ո՛չ էլ պակասում»:

Նալբանդ Աթունը նրան Գալուշ է անվանում, երեխաները՝ «Ապարատի ծակին նայիր», Պողոսը, երևի նկատի առնելով նրա կանացի ձայնն ու կանացիական բնավորությունը՝ «Մադումազել Գրուշկա»:

Ֆոտո Գավրուշը Լեռնակերտի առաջին բանաստեղծն է այն իմաստով, որ նրա ոտանավորները միայն Լեռնակերտի մասին են ու լեռնակերտցիների: Հիշատակման արժանի է «Տաղ ի վերա Լեռնակերտի» ոտանավորը, որտեղ հեղինակը ոգևորված գոչում է.

Բացված ալ վարդ ես ծմակի միջին,
Դու սոսկ քաղաք չես, այլ պայծառ եդեմ.
Ես սիրում եմ քո այդ վիճի-վիճին,
Դու իմ կարոտն ես վաղուց և արդեն:

Լուսանկարիչ Գավրուշն իր արվեստը ռեկլամելու նպատակով «Նկարեմ տամ» ցուցանակի կողքին կախել է ժպտադեմ աղջիկների նկարներ:

Նալբանդ Աթունը մի անգամ նայեց այդ նկարին ու հարցրեց.

- Գալոշ ախպեր, էս սիրուն կնիկն ո՞վ է:

Գավրուշը կատակով պատասխանեց.

- Չգիտե՞ս, մեր Պետոյի կնիկն է:

- Պետոն ո՞վ է:

- Բալունց Առաքելի տղան:

- Բալունց Առաքելն ո՞վ է:

- Քաչալ Մոսու թոռը: Ճանաչեցի՞ր:

- Ճանաչելը՝ չճանաչեցի, մենակ չիմացա, թե էս սիրուն կնիկն ո՞վ է, որ էսպես սիրուն-սիրուն ինձ է նայում:

- Ասացի, չէ՞, Պետոյի կնիկն է:

- Տո՜, Պետոյի հերն անիծած, նրա հետ ի՞նչ գործ ունեմ... Եկել եմ պատկերքս քաշես:

- Բա պատկերքդ երեկ չե՞մ քաշել:

- Դե որ երեկ ես քաշել՝ տուր գնամ:

Նալբանդ Աթունը նայեց իր պատկերքին ու հարցրեց.

- Գալուշ ախպեր, էս մարդն ո՞վ է:

- Չճանաչեցիր:

- Քո արևը, չէ:

- Դու ես, քո պատկերքը:

Նալբանդ Աթունն իսկապես իրավունք ուներ չհավատալու, որովհետև դա ավելի շուտ Գավրուշի հերթական անհաջող նեգատիվն էր:

- Ա՛յ տնածակի տղա,- չարացած թափահարեց լուսանկարը,- հիմա ասա տեսնեմ, սա իմ սա՞ղ վախտվա լուսանկարն է, թե՞ մեռած:

Գավրուշի լուսանկարչական ապարատը, որով նա վաստակում է օրվա իր հացը, գունաթափ ու քրքրված մի արկղ է՝ եռոտանու վրա, և երբ նա սև մահուդը բարձրացնում, գլուխը ծածկում է այդ մահուդի տակ, եռոտանին դառնում է հնգոտանի:

Եթե ապարատի առջև երեխա է նստած, նա լայն ժպտում է ու ասում՝ «Ապարատի ծակին նայիր, հիմա ծիտը դուրս կգա»: Կանանց նկատմամբ խիստ կուլտուրական է և հարգալից՝ «Ապա, խնդրում եմ, հնարավորին չափ ուղիղ նայեցեք», իսկ ջահել աղջիկներին՝ «Գեղեցկուհի, ժպտա, ժպիտը հոգու հայելին է»:

Նրա համար բոլոր կանայք, նույնիսկ Դուքան Սեդրակի Նոյեմը, գեղեցկուհիներ են՝ աֆրոդիտեներ, լիլիթներ, կարմեններ, դեզդեմոնաներ... Իսկ

դա վկայում է այն մասին, որ Ֆոտո Գավրուշը բավականին զարգացած մարդ է, գաղափար ունի համաշխարհային գրականությունից: «Ես հասարակ ֆոտոգրաֆ չեմ,- ասում է նա,- ես ժամանակին լուսանկարել եմ Լև Տոլստոյին, Հռոմի պապին, Պետրոս Ադամյանին, գեներալ Մադաթովի թոռանը, Ղազարոս Աղայանին...»:

Ֆոտո Գավրուշը ամուրի է, և ամեն անգամ, երբ փեսան՝ Գալիֆե Գուգուշը, խոսք է բացում ընտանիքավորվելու մասին, Գավրուշը մինչև վերջ խոնարհ աշակերտի պես լսում է ու փիլիսոփայում.

- Այո, ամուսնությունը մարդուս կյանքում շատ կարևոր հանգամանք է, ընտանիք կազմելը երկու կողմերի փոխադարձ կապերի փոխադարձ համաձայնություն:

Գալիֆե Գուգուշը բարկությունից տրաքվում է.

- Արա, դու ցի՞րկ ես, թե՞ թատրոն: Որ էդքանը իմանում ես, էլ ո՞ւմ ես սպասում, պսակվիր էլի, պսակվիր և միանգամից այդ կապերն ու հանգամանքները պարզեցրու:

Մայիսյան մի պայծառ օր, երբ արևը ոսկե ծիրան էր թափում Լեռնակերտի վրա, երբ Ուստա Ծատուրը ծռմռված երկաթը դրել էր զնդանի վրա ու մտածում էր՝ «Թե սրանից բան դուրս եկավ, Դուքան Սեդրակից էլ մարդ դուրս կգա...», երբ Նալբանդ Աթունը նայում էր թթենու շվաքում նստած Ժամկոչ Մանասի դեղնագույն գանգին ու միտք անում՝ «Ախր էդ տնաքանդի մոտ ոչ մի բան իրենը չէ, է՞, ոնց որ հավաքովի...», երբ Դուքան Սեդրակն իր դատարկված խանութում ճանճ էր բռնում, թևերը պոկում ու ինքն իրեն խորհում՝ «Տեսնես էս անտերները դաշնակցականների՞ կողմն են, թե՞ մենշևիկների կամ բոլշևիկների...», ահա այդ ժամանակ Ֆոտո Գավրուշի քրքրված արկղի առջև նստեց շքեղ մի տիկին: Ֆոտո Գավրուշն ընդգծված քաղաքավարությամբ մոտեցավ նրան ու ասաց.

- Ապա, խնդրում եմ, հնարավորին չափ ուղիղ նայեցեք:

Շքեղ տիկինը հարմար դիրք ընդունեց ու ժպտաց, և նրա ժպիտն այնքան դուր եկավ Գավրուշին, որ ձեռքը տարավ, մոտեցրեց նրա ծնոտին ու շարունակեց.

- Այսպես, ահա այսպես... Դե, խնդրում եմ չշարժվել:

- Չե՞ռքդ,- տիկինը խփեց Գավրուշի ձեռքին ու ոլորեց աչքերը.-Ես ձեզ համար գավառացի աղջիկ չեմ:

Այո, այդ շքեղ տիկինը գավառացի չէր, լեռնակերտցի չէր և ոչ էլ շուշեցի. Մամբրե Խաբարդանովիչի հարազատ հորաքույրն էր, որ ծնվել էր Թիֆլիս քաղաքում և ամուսնու մահից հետո որոշել էր այլևս չամուսնանալ կամ ծայրահեղ դեպքում... Տիկին Հեղինեն «ծայրահեղ դեպքը» դրեց հարցականի տակ, մի անգամ էլ ժպտաց նազանքով ու հարցրեց.

- Ձեր լեռնակերտցիք ի՞նչ կմտածեն իմ մասին:

Ֆոտո Գավրուշը բարի նպատակով նստեց նրա դիմաց, բռնեց նրա փամփլիկ ձեռքն ու բարի նպատակով պատասխանեց.

- Հուսամ, որ վաղը նորից կհանդիպենք:

...Ֆոտո Գավրուշի և Հեղինեի ամուսնությունը տեղի ունեցավ այնքան արագ, որ նույնիսկ Դուքան Սեդրակի բոշբողազ Նոյեմը չհասցրեց կարգին բամբասել և բավարարվեց այսքանով՝ «Չեմ հասկանում, Գավրո՞ւշն է առել էդ կնկանը, թե էդ կնիկն է առել Գավրուշին»:

Սակայն դա չխանգարեց Ֆոտո Գավրուշին, որպեսզի նա հետագայում ունենա մեկը մյուսից սիրուն արու զավակներ և երդվի իր կնոջ անունով.

- Հեղինեիս արևը, էնպե՞ս պատկերքդ քաշեմ...

Գավրուշը Լեռնակերտի առաջին տղամարդն էր, որ հանդգնեց երդվել կնոջ անունով:

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ

Սիրտս քեզ հետ, սերս քեզ հետ,
Հրաշք քաղաք իմ Լեռնակերտ,
Սրտիս այգում բացված վարդ ես,
Դարաբաղում դու մի հատ ես:
Ֆոտո Գավրուշ

Լեռնակերտը քաղա՞ք է, թե՞ գյուղ: Դա մի հարց էր, որ երկար ժամանակ հանգիստ չէր տալիս այն երևելի լեռնակերտցիներին, ովքեր խորոված ու մածունը պատառաքաղով էին ուտում, թութը՝ ասեղով, Գալիֆե Գուգուշի համամ-պաղնիսին ասում էն բանյա, օղին խմում ուղտի աչքի չափ ռյումկաներով, երեկոները թևանցուկ արած դուրս գալիս զբոսանքի, և երբ ուզում էին զարմանալ, ոչ թե Նալբանդ Աթունի նման «պահ» էին անում կամ Բոստանչի Սրափիոնի պես «վի...», այլ ուղղակի՝ չուդնո...

Ապետնակ Մելիք Տեր-Աթաջանբեկնազարյանը ինքնասպանություն գործեց՝ չուդնո: Օրիորդ Օլյան սեր կապեց Պողոսի վրա՝ չուդնո: Դուքան Սեդրակը բաղնիսում իր կնոջ կողերը ջարդեց և անվանեց «պրաժեխտրի լիրբ»՝ չուդնո: Կարտոժնիկ Կևին ու Պիանիսկա Աղամը Բաղեն շենում իրար մի լավ դնքսեցին՝ չուդնո: Քաղցած գելերը գիշերվա կեսին մտան Լեռնակերտ՝ չուդնո, Պարոն Սիլվեստը ծեծեց պարոն Լալայանին՝ չուդնո, Պողոսը քիչ էր մնում շանսատակ աներ Մոթալ Մինասին՝ չուդնո: Գալիֆե Գուգուշը որդու անունը Հեղկոմ դրեց՝ չուդնո... Ասացեք, խնդրեմ, ո՞ր գյուղում կարող եք այսքան չուդնո գտնել: Դե, ուրեմն, Լեռնակերտը ոչ թե գյուղ է, այլ՝ քաղաք:

Եթե դատելու լինենք Մամբրե Խաբարդանովիչի խոսելաձևից ու շարժումներից, Հերիքնազ Առնավուդովնայի ծաղկանկար հովհարից ու նախշուն տուֆլիներից, ինչպես նաև նրանց երկհարկանի տնից, որ ունի սպալնի ու բոլշոյ զալ, բալկոն ու սադ, ջրավազան ու տուալետ, ուրեմն Լեռնակերտը քաղաք է:

Լեռնակերտը քաղաք է Սիմոն Սարխոշյանցի ու Մուշեղ Չանչախովի հեղինակավոր կարծիքով, որովհետև այս ընտիր լեռնակերտցիները փողոց են դուրս գալիս շլյապայով ու ձեռնափայտով, փայլփլուն ոտնամաններով ու նախշուն փողկապներով, շոշափում քաղաքական հարցեր և ծանոթներին հանդիպելիս հանում շլյապաները, խոնարհաբար թեքվում և ասում՝ «Ողջույններիս ամենահավաստիքը...»:

Բայց այստեղ ուրիշ մի հարց է ծագում՝ Լեռնակերտն ինչպիսի՞ քաղաք է՝ կենտրոնակա՞ն, թե՞ ծայրամասային, գավառակա՞ն, թե՞ պարզապես քաղաք: Գավառականը դեռևս կատարյալ քաղաք չէ, ինչպես ողորմած հոգի պարոն Ապետնակը, որ արքա էր ավանսի կարգով: Կամ Դուքան Սեդրակը, որի մասին Նալբանդ Աթունն ասում էր՝ «Ո՛չ կարող ես ասել մարդ է, ո՛չ էլ կարող ես ապացուցել, որ մարդ չի»:

Թող Հերիքնազ Առնավուդովնան որքան ուզում է իր շուրթերն ու եղունգները ներկի, բինոկոլով պատշգամբից նայի աջ ու ձախ... Թող Սիմոն Սարխոշյանցը Մամբրե Խաբարդանովիչին հանդիպելիս հանի շլյապան ու գոչի՝ «Ողջույններիս ամենահավաստիքը փռում եմ ոտքերիդ տակ...»: Թող Կարտոժնիկ Կևին դանակ քաշի Պիանիսկա Աղամի վրա ու սպառնա՝ «Պադլեց, հիմա ո՞նց ես, որ թափանթրիքդ շաղ տամ...»: Թող Գալիֆե Գուգուշը օրական քսան անգամ Լեռնակերտի և լեռնակերտցիների ցավը տանի... միևնույն է, Լեռնակերտը Լեռնակերտ է, ճիշտ այնպես, ինչպես Մամբրե Խաբարդանովիչը Մամբրե Խաբարդանովիչ է, Դուքան Սեդրակը՝ Դուքան Սեդրակ, դեռ մերզավեցն էլ վրեն:

Բայց Բոստանչի Սրափիոնը և Տավարած Մուխանը այլ կարծիքի են, և չես կարող նկատի չառնել նրանց կարծիքը:

Նախ՝ Լեռնակերտում չկան սալահատակած փողոցներ, շքեղ ցուցափեղկերով խանութներ, գավառապետ ու պրիստավ, բանտ ու սուդ, բուլվար ու թատրոն, ակսելբանդերով գեներալ-նահանգապետ ու բեղերը սրած ոստիկանապետ, փափուկ ֆայտոններ ու դուխավոյ օրկեստր...

Մյուս կողմից՝ լեռնակերտցիները այծ ու ոչխար են պահում, բուրդ են գզում, էշ ու ձի ունեն, կով են կթում, բոստան են անում, կալ կալսում, և իրար հետ այնպիսի լեզվով են խոսում, որ նույնիսկ Գաղթական Պետրոսը զարմանում է՝ «Ճանը՜մ, էս լեռնակերտցիք ի՞նչ լեզվով կխոսին»: Բա Տավարած Մուխանը, որ ծեգը-ծեգին ձենը գլուխն է գցում.

- Լեռնակերտի խա՜լխ, տավարը բերե՜ք, քշո՜ւմ եմ...

Վա՜յ, վա՜յ, վա՜յ... բա քաղաքում տավար են պահո՞ւմ, բա պարիժեցին թո՞ւյլ կտա, որ բուլվարի կողքով նախիր քշեն: Ո՞վ է տեսել, որ էշն օր-ցերեկով բաղնիսի բակում զռռա, խանգարի Հերիքնազ Առնավուդովնայի անուշ քունը, իսկ Փանոսյան Արիստոտելի այծը բարձրանա Մեռել լողացնող Մանգասարի կտուրը, պոզահարի չորս ամուսնությունից կույս մնացած օրիորդ Սուսամբարին:

Ուրեմն Լեռնակերտը գյուղ է և այն էլ աստծո աչքում ընկած գյուղ: Բոստանչի Սրափիոնը «աստծո աչքում ընկած գյուղ» ասելով նկատի ունի

այն, որ Ժամկոչ Մանասը գողացել է ռուսի ժամի զանգը և փոխել մի փութ կորեկի թե գարու հետ: Ուրիշ փաստեր էլ կան: Հանգուցյալ Խմբապետ Խորենը, այդ համադանի էշը, այնքան է լակել, որ փսխել է ժամի պատի տակ, Հերիքնազ Առնավուդովնայի ներկայությամբ շալվարի կոճակներն արձակել է ու... Թոքու՜շ, Խորեն, թոքո՜ւշ... Իսկ Մեռել լողացնող Մանգասարը «Աղոթարան»-ի էջերը պոկել, բռնոթու տոպրակներ է սարքել:

- Լեռնակերտը շեն է, լեռնակերտցիք՝ շենացիներ,- մահակն օդում թափահարում է Տավարած Մուխանը:- Բա որ քաղաք է, որտե՞ղ են ձեր թատրոնն ու բուլվարը, դավթարխանան ու բանկը...

Բայց ահա Մամբրե Խաբարդանովիչը հայտնվում է փողոցում, նույն պահին երևում է Մնացական Դանդարովի ֆայտոնը, Հերիքնազ Առնավուդովնան պատշգամբից հեռադիտակով նայում է... աստված գիտե, թե ում, Ֆոտո Գավրուշը մի տզտզան երեխայի ստիպում է, որ ապարատի ծակին նայի, իսկ շան լակոտը ոչխարի պես բառաչում է՝ «Ես ապարատի ծակին չեմ նայում, ապարատի ծակին չիշիկ անեմ»:

Հապա Վարսավիր Արտուշի «Վարսավիրանոց-Դալլաքխանա-Պարեկ-մախտրսկի»-ին, ուր ամեն շաբաթ թրաշվում են Մամբրե Խաբարդանովիչն ու Սիմոն Սարխոշյանցը, Մուշեղ Չանչախովն ու Գալիֆե Գուգուշը, իսկ Մկր. Սազանդարովը այդտեղից միշտ դուրս է գալիս դեմքին բամբակ կպցրած ու բացում իր հայհոյանքների տոպրակը.

- Էդ ծմակից բռնած անգլամազ արջը երեսիս սաղ տեղ չի թողել:

- Ես ինչ մեղավոր եմ,- արդարանում է Վարսավիր Արտուշը:- Հենց որ նայում եմ տնաքանդի տղի քթին, ծիծաղս բռնում է: Եթե իմ փոխարեն ուրիշը լիներ, քիթը քոքից կկտրեր:

Վարսավիր Արտուշը ասող-խոսող մարդ է, և չես հասկանում, թե նրա ասածներից որն է ճիշտ, որն է սուտ: Օրինակ, պատմում է, որ ինքն անձամբ թրաշել է Իրանի շահին և այնպես է թրաշել, որ շահը քնել է ածելու տակ ու հաջորդ օրը խնջույքի հրավիրել իրեն, նստեցրել կողքին, ասել՝ «էս աշխարհում երկու մեծ մարդ կա, մեկը դու ես, մյուսը՝ ես»: Ասում ու երդվում է՝ «Թե սուտ ասեմ, էն Դուքան Սեդրակը շուն դառնա... Մեռել լողացնող Մանգասարին թաղեմ, թե սուտ ասեմ»:

- Լեռնակերտը քաղաք է, էն էլ շահար քաղաք,- ածելին թափահարում է Վարսավիր Արտուշը:- Որ քաղաք չլինի, ես այստեղ ի՜նչ դալաթ եմ անում: Հրե՜ն, Իրանի շահը քսան մարդ է ուղարկել իմ ետևից... Թե սուտ ասեմ, Մոթալ Մինասը հազար ցավի գա, Դուքան Սեդրակի տունն էլ պաժառ ընկնի:

Եվ նորից հարցը ֆուտբոլի գնդակի պես գլորում են դես ու դեն, Սիմոն Սարխոշյանցը հմուտ ձեռնածուի պես ձեռնափայտը պտտում է ձեռքում՝ «Այո՜ս, Լեռնակերտը քաղաք է, բայց որոշ չափով պրովինցիալ քաղաք», Գալիֆե Գուգուշը բղավում է.

- Ա՛յ ցավդ տանեմ, քաղաքը քաղաք է, բա էդ պրովինցիալն ինչի՞ ես կպցնում: Իբր Լեռնակերտի կարկատանները քի՞չ են, մեկն էլ դու ես ավելացնում:

- Մեռնեք էլ, շեն է,- իրենից դուրս է գալիս Տավարած Մուխանը:-Ես որ ասում եմ շեն է, ուրեմն շեն է: Դե որ քաղաք է, ձեզ համար կարգին տավարած գտեք, ես չկամ:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ...

Խմբապետ Խորենն ու Խմբապետ Աղաջանը Նոգի գյուղում իրար վրա մաուզեր են քաշել, ավել-պակաս խոսք ասել ու դարձել թշնամիներ: Աղաջանն իր խմբով քաշվել է ծմակները, Խորենը կորեկով ծախած շան նման էլի եկել է, Լեռնակերտում շնթռնել:

Վարժապետ Սիմոնը, պարոն Սիլվեստը և Դուքան Սեդրակը հաշտվել են Խմբապետ Խորենի հետ: Միասին էլ լակում են ու գոռում. «Հանուն հայրենյաց կռվենք ու մեռնենք...»:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Ռուսաստանում կապիտան Խասապետովի Կատինկայի բախտը չբերեց: Խասապետովը ժամանակավոր կառավարության տապալումից հետո միացավ սպիտակգվարդիականներին, շարժվեց Պետրոգրադի վրա ու... աստված նրա հոգին լուսավորի: Կատինկան ամուսնուն կորցնելուց հետո, չկարողացավ սև զգեստներ գտնել, ստիպված երեք անգամ ամուսնացավ, երեք ամուսիններն էլ փուչ դուրս եկան: Եկավ Աստրախան, Աստրախանում սիրահարվեց մի բոցմանի, պարոն բոցմանը ուղարկեց նրան Բաքու, ինքը գնաց անհայտ ուղղությամբ:

Եվ Կատինկան կարոտեց Լեռնակերտին, կարոտեց նրա փոշոտ փողոցները, կարոտեց Գորոդովոյ Անտոնին, կարոտեց Դուքան Սեդրակի սֆաթին, եկավ: Եկավ ու հանդիպեց պարոն Սիլվեստին, պարոն Սիլվեստը ասպետավարի չոքեց նրա առջև, համբուրեց փամփլիկ ձեռքն ու ասաց.

- Կատյա, Կատինկա, Կատյուշա՛, սիրում եմ ձեզ:

Կատյա-Կատինկա-Կատյուշան տվեց իր համաձայնությունը: Վարժապետ Սիմոնը դարձավ քավոր, Խմբապետ Խորենը՝ խաչեղբայր, ուտելխմելը Դուքան Սեդրակի հաշվին էր:

Հարսանիքը տեղի ունեցավ ռուսական եկեղեցում: Նորապսակներին օրհնեց Ժամկոչ Մանասը: Նա Աստվածաշունչը թարս բռնեց ու վրա տվեց.

- Օրհնիալս պարոն Սիլվեստոյ և օրիորդոյ Կատինկոյ, ամե՛ն: Աստված ծնեալ Իսահակ, Իսահակ ծնեալ Հակոբ, Հակոբ ծնեալ Հուդա...

Նորահարս Կատինկան չհամբերեց.

- Նո՛ւ, դուռաչոկ, կուդա՞, կուդա՞...

Խմբապետ Խորենը զգալով, որ ծալը պակաս ժամկոչը կարող է ուրիշ ափեղցփեղություններ էլ դուրս տալ, վռնդեց նրան եկեղեցուց ու խմեց «երկու անթառամ ծաղիկների կենացը»:

Մինչև ուշ գիշեր կերան, խմեցին, մինչև ուշ գիշեր երգեցին. «Հանուն հայրենյաց կռվենք ու մեռնենք», ու մրափ մտան:

Իսկ առավոտյան...

Առավոտյան պարզվեց, որ նորահարսը իր ամուսնուն շփոթել է պարոն Խորենի հետ: Այդ դեռ ոչինչ, նման բան պատահում է: Բայց ցավն այն է, որ ինչ-որ մեկը մտել է զորանոց, հավաքել զենքերն ու հեռացել: Գոնե, մի թուր էլ չի թողել, որ պարոն Խորենը պահակի թափանթրիքը ցրիվ տա:

Եվ Խմբապետ Խորենը տրորեց կարմրած աչքերը, մոռացավ գիշերվա դեպքը ու մտրակը թափահարեց օդում.

- Եթե զենքը չհանձնեք, Լեռնակերտը կվառեմ:

Չազդեց:

- Բոլորին կճոճեմ կախաղանի վրա:

էլի չազդեց:

Նկատեց թթենու տակ կանգնած փուքս փչող Պողոսին, մոտեցավ, բռնեց օձիքից:

- Հիմա կխոսե՞ս, թե՞ ոչ:

Պողոսը չխոսեց, ուղղակի բռնեց նրա գոտկատեղից, բարձրացրեց, պտտեցրեց օդում ու նետեց Դուքան Սեդրակի խանութի կողմը: Դուքանի դուռը պոկվեց, լսվեց կանացի մի սուր ճիչ: Խանութից դուրս եկան կիսամերկ Կատինկան և պարոն Սիլվեստը: Փողոցում բարձրացավ հռհռոց, Դուքան Սեդրակը, որ երեկվանից հարբած էր, թռավ թթենու առջև ընկած դատարկ տակառի վրա ու երկու ձեռքը բարձրացրեց.

- Պարոննե՛ր, այդ ի՞նչ իրավունքով եք ձեռք բարձրացնում...

Հրացան չպայթեց, թրեր չշաչեցին. Փուքս փչող Պողոսը ոլորեց Խմբապետ Խորենի ձեռքերը, կանգնեցրեց թթենու տակ և հայտարարեց.

- Ժողովո՛ւրդ, էս ավազակի դատը մեր ձեռքովն ենք անում:

Բայց Խմբապետ Խորենին բախտ չվիճակվեց լսելու «դատարանի» արդար որոշումը. նա պոկվեց տեղից, մի ակնթարթում մոտեցավ Գորոդովոյ Անտոնին, պատյանից դուրս քաշեց նրա երկար թուրը, կոթը դեմ արեց գետնին, ընկավ վրան: Դա Խմբապետ Խորենի առաջին և վերջին քաջագործությունն էր:

ԹԱՐԽԱՆ ԹԵՐԽԱՇՅԱՆ

Նէպի տարիներին Լեռնակերտի մեյդանում՝ հայոց ժամի մոտ Թարխան Թերխաշյանն ու Մկրտիչ Սազանդարովը մագազին բացեցին: էդ մագազինի վրա Նալբանդ Աթունը էսպիսի մի խաղ կապեց.

Գնացի մագազին՝
Գինին՝ բոչկա-բոչկա,
Արաղը լիտրով,
Գինին բոչկա-բոչկա:
Կերա ու խմեցի,
Փորս հեչ բան չընկավ:

Նէպը չբերեց Դուքան Սեդրակի բախտը, և նա իր խանութը դարձրեց խաշարան: Թերխաշյանն ու Սազանդարովն իրենց նէպը մի քիչ շուտ սկսեցին: Իսկ երբ իսկական նէպը եկավ, սկսեցին քչփչալ. թագա կարգերը շուտով կվերանան, և մեկ էլ տեսար՝ թագավորին նորից թախտին նստեցրին...

(Ուստա Ծատուրի օրագրից)

Օգոստոսին Թարխան Թերխաշյանը Թիֆլիսից եկավ՝ գլխին երկար կզրոկով կեպի, բլուզի օձիքն օսլայած, գոտին արծաթե, շալվարը գալիֆե, մորուքը եռանկյունի, բեղերը ցից-ցից, ոտքերին ճռճռացող սապոգներ: Ոտքը աջ է դնում՝ ճը՜ռռ, ձախ է դնում՝ ճը՜ռռ, կանգնում է՝ էլի ճը՜ռռ:

Ու Թարխան Թերխաշյանը ճռճռացող սապոգներով քայլեց Լեռնակերտի ծուռ ու մուռ փողոցներով, ռուսերեն բարևեց ծանոթներին ու անծանոթներին, ռուսերեն զարմացավ, ռուսերեն ուրախացավ, ռուսերեն հայհոյեց Դուքան Սեդրակին ու վերջում էլ ատամների արանքից լեզվի ծայրով նետեց.

- Կը չորտովո մատերի:

Դուքան Սեդրակը խոսքի տակ չմնաց, պատասխանեց.

- Կը չորտովո մատերի էլ, կը չորտովո դեդուշկա էլ, բաբուշկա էլ, հալա ուրիշ բաներ էլ...

Թարխան Թերխաշյանը Լեռնակերտում նորություն էր:

Փոստի Մադաթը փոշի բարձրացնելով եկավ, կանգնեց Ուստա Ծատուրի դարբնոցի բակում և ասաց. Թարխան Թերխաշյանը յառիյ կամերսանտ է, Թիֆլիսի բանկերը փողով լցրել է, հիմա էլ ուզում է Լեռնակերտում մագազին բացել: Ով հավատում էր՝ հավատաց, ով չէր հավատում, ասաց՝ «Չէ մի, էշի պոզեր»: Դե լեռնակերտցու համար ինչ կա, կուզի ուղտի վրա էլ պոզեր կդնի, կուզի Դուքան Սեդրակի քամակից մի մեծ պոչ կկպցնի: Որ կպցրեց, պրծավ, պոկողն ո՞վ է:

Նալբանդ Աթունը կամերսանտ Թարխանին բռնեց ու սկսեց իր հարցաքննությունը:

- Տավարիշչ Թարխան, դուք Թիֆլիսի՞ց եք:

Թարխան Թերխաշյանը ռուսերեն մտածեց, վրացերեն շվշվացրեց, հայերեն պատասխանեց.

- Ծնյալս ի քաղաքն Թիֆլիս, Հավլաբարո թաղին մեջ:

- Պեպոյին ճանաչո՞ւմ ես:

- Ի՞նչ Պեպո:

- Պեպոն, էլի, էն, որ ասում է՝ ես քու սեփական հերն եմ անիծել, Արութին Ջիմզիմովյան, բա դու նամուս չունե՞ս, դու սկի մարդ չե՞ս...

- Լսած չկամ:

- Հովհաննես Թումանյանին ճանաչո՞ւմ ես:

- Չգիտեմ, չեմ լսել:

- Ղազարոս Աղայանին գիտե՞ս:

- էդ ո՞վ է:

- Աշուղ Ջիվանու անունը լսած կա՞ս:

- Դա ո՞վ է:

- Լավ, դե որ Թիֆլիսումն ես ծնվել, թող քո ասածով լինի... Հիմա ասա տեսնեմ Քռի մեջ քանի՞ վեդրո ջուր կլինի:

- Չգիտեմ:

- Արա՛, տնածակ-տնածակի տղա, Պեպոյի անունը լսած չկաս, Թումանյանին չես ճանաչում, Աղայանին չգիտես, Ջիվանու անունը լսած չկաս, չգիտես, թե Քռի մեջ քանի վեդրո ջուր կա, բա դու էդ ո՞նց ես ծնվել Թիֆլիսում: Լավ մտածիր, գուցե ոչ մի տեղ էլ չես ծնվել...

Թարխան Թերխաշյանն ասաց, որ չնայած ինքը ծնվել է Թիֆլիսում, բայց իրեն հոգով-սրտով համարում է լեռնակերտցի, սիրում է Ղարաբաղն ու ղարաբաղցիներին:

- Չէ, չէ, ասա տեսնեմ ո՞նց ես ծնվել Թիֆլիսում,- Նալբանդ Աթունը ոտքը խփեց գետնին:- Թահիր ու թուհրիցդ երևում է, որ բանվոր դասակարգ չես, գյուղացի չես, մաճ չես բռնել, երկաթ չես ծեծել:

- Ինտելիգենտ եմ:

- Հայեվուր ասա՝ հասկանամ:

- Ինտելիգենտը քո խելքի բանը չի:

- Ուրեմն՝ Ղարաբաղն էլ քո խելքի բանը չի:

Կամերսանտ Թարխանը ճռճռացրեց սապոգները, ճռճռալով քայլեց մեյդանով, նստելու տեղ չգտավ: Վախենում էր գալիֆե շալվարը կեղտոտի: Վախենում էր Սրափիոնի ցանկապատի կողքի կոճղին մեջքը հենի, որովհետև կոճղը բորբոսնած է, ճեղքերից ինչ-որ կարմրագույն բլոճներ են դուրս եկել, ուլունքների պես շարվել կողք-կողքի: Վախեցավ նաև Դուդուլի ականջներն ու պոչը կտրած Բողարից, որ ընդհանրապես ոչ ոքի վրա չի հաչում: Բողարն իր այդ խաղաղասիրությունը հավանաբար ժառանգել էր հանգուցյալ Գորոդովոյ Անտոնից:

Եվ որպեսզի կամերսանտ Թարխանը տրաքվի, կտոր-կտոր դառնա, Դուքան Սեդրակը երգում է.

Ղարաբաղ բաղ եմ արել,
Ջիգարս դաղ եմ արել,
Դոստ ու դուշմանի միջին
Քեֆս միշտ չաղ եմ արել:

Բայց կամերսանտ Թարխան Թերխաշյանը չի տրաքվում, կտոր-կտոր չի դառնում. երկարակոթ գլանակ է ծխում. օսլայած օձիքով բլուզ է հագնում, ճռճռացնում սապոգները: Կարծես շան որդին Լեռնակերտ է եկել միայն նրա համար, որ օսլայած օձիքով բլուզ հագնի, երկարակոթ գլանակ ծխի և ճռճռացնի սապոգները: Մթամ այդ ամենը չէր կարող Թիֆլիսում անել: Թիֆլիսը մեծ քաղաք է, կարելի է:

Նալբանդ Աթունի ջղերն այլևս չդիմացան.

- Արա՛, էդ տերը մեռածներին խի՞ չես մի քիչ մազութ քսում, որ ձեն չհա-

նի... Առավոտը՝ ճը՛ռռ, կեսօրին՝ ճը՛ռռ, իրիկունը ճը՛ռռ... Ի՞նչ է, գլխներիս գեներալ Մադաթո՞վն ես, թե՞ կնյազ Կուտուզովը:

- Գեներալ Մադաթովն ո՞վ է:

- Գեներալ Մադաթովին չգիտե՞ս,- ու Նալբանդ Աթունը քրքջաց.- Վա՛յ, կամերսանտ՝ կամերսանտի տղա:

- Մադաթովն ո՞վ է,- նորից հարցրեց Թարխան Թերխաշյանը:

- Իսկ կնյազ Կուտուզովին գիտե՞ս:

- Չէ, չգիտեմ:

- Որ կնյազ Կուտուզովին չգիտես, գեներալ Մադաթովն ինչի՞դ է:

Դուքան Սեդրակը գլուխը հանեց իր խանութի նեղլիկ պատուհանից, հռհռաց, հռհռաց, ու էլի պիտի հռհռար, բայց փուքս փչող Պողոսի նետած պոմիդորը սեպվեց նրա բերանի մեջ, ու հռհռոցը փոխվեց ղլղլոցի:

Օգոստոսի վերջերին Լեռնակերտի մեյդանում տնկվեց Թարխան Թերխաշյանի և Մկրտիչ Սազանդարովի «Թ. Տերխաշով - Մ. Սազանդարով էժան գներով ապրանքների ու մթերքների մաղազին»-ը: Վաճառասեղանի ետևում երևաց բուլղարական սորտի մի կարմիր տաքտեղ, այսինքն Մկրտիչ Սազանդարովի քիթը, որ հափշտակել էր իր տիրոջ դեմքի մեծ մասը: Լեռնակերտցիք սկզբում մոռացած առևտուրը, նայում էին Սազանդարովի հրաշք քթին և քիչ էր մնում հարցնեին՝ էդ տաքտեղը քանիսո՞վ ես ծախում...

Օգոստոսի վերջերին Դուքան Սեդրակի խանութի ճակատին երևաց մի ցուցանակ. «Մտեք, անուշ արեք քաղցր ճաշեր»: Քաղցր ճաշերը՝ առավոտյան խաշ, երեկոյան խաշ, կեսօրին խաշ: Փուքս փչող Պողոսը «ճաշեր»-ը ջնջեց, դարձրեց՝ ճանճեր, Թարխան Թերխաշյանը եկավ կարդաց, երեսը զզվանքով շուռ տվեց. «Թո՛ւ, պադլեց»:

Մկրտիչ Սազանդարովն ուրիշների հաշվին ուտող-խմող, կոպեկի համար հոգի տվող մարդ է: Ուրեմն, այս Սազանդարովը Թարխան Թերխաշյանի համար և՛ գլխավոր գործակատար է, և՛ գլխավոր հաշվապահ: Մկրտիչ Սազանդարովը ամեն երեկո շրխկացնում է համրիչի հատիկները, հաշվում օրվա եկամուտը, հետո բավականությունից ծպացնում շրթունքներն ու ծոր տալիս.

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատա՜ղ...

Բայց որովհետև չգիտե երգի շարունակությունը, երաժշտության տակտով հայհոյում է Դուքան Սեդրակին.

Հերն եմ անիծել Դուքան Սեդրակի,

Որ Լեռնակերտի մեջ հարյավ ու ավա՜ղ...

Կռիվ չեղավ, արկեր չպայթեցին, բայց եղավ երկրաշարժ: Նէպման Թարխանը հարուստ-հարուստ քնեց, արթնացավ աղքատ: Եկան ասացին՝ հերիք է որքան փող ես դիզել, քո «էժան գներով ապրանքների ու մթերքների մաղազինը» պիտի հանձնես պետությանը և ապրես ճակատիդ քրտինքով:

Պետությունը Ուստա Ծատուրն ու Նալբանդ Աթունն են, փուքս փչող Պողոսն ու փոստի Մադաթն են... Նախրապան Դուդուլը, որ վերջապես

գտել էր գրոց անունը, դարձել Դուրասան, նույնպես պետություն էր: Դուքան Սեդրակը պետություն չէր, կոտր ընկած վաճառական էր: Դուքան Սեդրակը կանգնեց թթենու տակ, խելագար-խելագար ծիծաղեց, խելագար-խելագար բռունցքը խփեց կրծքին և լուրջ-լուրջ մատը տնկեց վեր.

- էնտեղ աստված կա, աստված տեսնում է:

Ու Լեռնակերտը նրա աչքին օրորվեց, Թարխան Թերխաշյանն օրորվեց, Մկրտիչ Սազանդարովն օրորվեց, աշխարհն օրորվեց: Ու նրան թվաց, թե ճռնչաց Թարխան Թերխաշյանի մաղազինը, նստեց ու տափակեց գետնին: Հիմա Դուքան Սեդրակը կարող է քայլել իր մրցակիցների փլատակների վրայով, բարձրացրեց ոտքը, չհասավ, էլի բարձրացրեց, կորցրեց հավասարակշռությունն ու փռվեց գետնին:

- Համա լակել է, հա՜,- ծիծաղեց Ուստա Ծատուրը:

Թարխան Թերխաշյանը պիտի ծիծաղեր, բայց ո՞ւմ վրա, երբ աշխարհը հիմա իր վրա էր ծիծաղում: Ու նա կեպին քաշեց աչքերին, քայլեց: Սապոգները պապանձվել, չէին ճռճռում: «Մի նագան լիներ, կարկաժս ցրիվ կտայի»,- մտածեց նա դառն հեգնանքով և կարծես մի պահ տեսավ իր փշրված գանգը ընկած փողոցում, ցատկեց, որ անցնի վրայով, դեմ առավ Նալբանդ Աթունին: Նալբանդ Աթունը ձեռքը մեկնեց դեպի դարբնոցը, ցույց տվեց պատից կախած թուղթը:

- Կարդա՛ :

Թարխան Թերխաշյանը կարդաց. «Այսօր՝ ժամը 8-ին, իրիկունը ռուսի ժամում թատրոն: Շիրվանզադե: «Պատվի համար»: Հանդես է գալիս Հովհաննես Աբելյանը իր խմբով»:

Եվ Նալբանդ Աթունը հարցրեց.

- Հովհաննես Աբելյանին ճանաչո՞ւմ ես:

- ճանաչում եմ:

- Ո՞վ է:

- Արտիստ է:

- Արտիստ չի, դերասան է:

- Շիրվանզադեին ճանաչո՞ւմ ես:

- Պիսատել է:

- Պիսատել չի, գրող է:

- Որ ի՞նչ,- հոնքերը վեր քաշեց Թարխան Թերխաշյանը:

- Ոնց թե՝ ինչ... Բջիջի քարտուղար Ալեքսանին էլ պիտի ճանաչես, ընկեր Մատվեյին էլ, Ուստա Ծատուրին էլ, ինձ էլ, Պողոսին էլ, փոստի Մադաթին էլ:

- Իսկ դուք ո՞վ եք,- համարյա ճչաց Թարխան Թերխաշյանը:- Դուք ո՞վ եք:

- Մենք Լեռնակերտն ենք:

ՈՒՍՏԱ ՇԱՏՈՒՐԻ ՕՐԱԳՐԻՑ

Վարժապետ Սիմոնը շլյապան փոխեց կեպիով՝ չօգնեց: Մորուքը խուզեց, բեղերը խուզեց, ասաց՝ ես բանվոր դասակարգ եմ, Նալբանդ Աթունը ծուռ-ծուռ նայեց նրան ու հարցրեց. «Բա որ դու բանվոր դասակարգ ես, մե՞նք ինչ ենք»: Սիմոն Սարխոշյանցը լարեց ուղեղը, մտածեց, մտածեց և տեսավ, որ բան չի ստացվում, բռնեց Միջին Ասիայի ճանապարհը: Ասաց՝ ես մեծ մասշտաբի մարդ եմ, պիտի մեծ-մեծ քաղաքներում ապրեմ:

Պարոն Սիլվեստը ծլկեց Լեռնակերտից: Ծլկեց, էն էլ ինչպե՜ս ծլկեց: Տնաքանդի տղան մի անգամ էլ ետ չնայեց, տեսնի որտեղ մնացին Դուքան Սեդրակն ու Վարժապետ Սիմոնը: Անտոնը չկարողացավ տանել այդ «անհավասարությունը», թուրը հանեց թախտի տակից, փոխեց մի շիշ գինու հետ, խմեց, հարբեց: Եվ խեղճ ու կրակ Գորոդովոյ Անտոնը թոկը գցեց վիզը, կախվեց Դուքան Սեդրակի դուքանի առջևի թթենուց: Խե՜ղճ Անտոն, խե՜ղճ, ինչո՞ւ եկար, ինչո՞ւ գնացիր:

Դուքան Սեդրակը մի օրում ցածրացավ, իջավ և հասավ Գորոդովոյ Անտոնի մակարդակին: Դուքան Սեդրակն էլ պիտի գնար պարոն Սիլվեստի հետևից, չգնաց: Ասաց՝ ես Լեռնակերտի մասշտաբի մարդ եմ, ազնիվ ծնվել եմ, ազնիվ էլ կմեռնեմ: Եվ որպեսզի իր ազնվությունը ապացուցի, նավթ էր վաճառում, վաճառվող նավթի հետ ջուր էր խառնում, և լեռնակերտիցների ճրագները ավելի շատ ծուխ էին արձակում, քան՝ լույս: Հեղկոմի նախագահ Ալեքսանը մի օր էլ կանգնեց Դուքան Սեդրակի խանութի մոտ ու հարցրեց. «Լավ, հիմա քեզ հետ ի՞նչ անենք. առաջներում գինուն էիր ջուր խառնում, հիմա էլ՝ նավթին»:

Ժամկոչ Մանասը խուզեց ցանցառ մորուքը, ցերեկները հայհոյում էր աշխարհի բոլոր սրբերին, գիշերները աղոթում աստծուն: Հայհոյեց, աղոթեց, հայհոյեց, աղոթեց և տեսավ, որ բան չի ստացվում, խելքի մնացորդները գլուխն հավաքեց ու խելառվեց:

Դուքան Սեդրակը և Վարժապետ Սիմոնը դարձան, ինչպես Հեղկոմի նախագահ Ալեքսանն է ասում՝ երկու անհայտով հավասարում: Պողոսը հայտնին գտնելու համար դարբնոցի պատին ածխով գրեց. Վարժապետ Սիմոն + Դուքան Սեդրակ + Պարոն Սիլվեստ = Օ: Ուստա Շատուրը էդ զրոյի կողքին մի զրո էլ նկարեց, զրոներին քիթ ու բերան ավելացրեց, աչք ու ունք ավելացրեց և առջևում մի հարցական տնկեց:

Մամբրե Խաբարդանովիչն առերես նոր կարգերն ընդունեց, բայց դե վա՜յ էն ընդունելուն, էլի միտքը ծուռ էր. հավաքում էր գլխին, քսի-փսի անում, ասում կարիք չկա հուսահատվելու, նոր կարգերը երկար չեն դիմանա: Իսկ աղջիկը՝ Օլյան, հորը բանի տեղ չդրեց, ամուսնացավ Պողոսի հետ:

Գալիֆե Գուգուշը... Վա՜յ, մեռնես դու, Գուգուշ. մի գլուխ հեղափոխության ցավն էր տանում: Տղայի անունն էլ Հեղկոմ էր դրել. Թամամը համ օրորոցը օրորում է, համ էլ երգում.

Խորհրդային նոր զակոնով
Բայ-բայ արա, Հեղկոմ բալա,
Հորով լինես, լինես մորով,
Շուտ մեծանաս, Նարկոմ դառնաս:

ՕԹԵԼԼՈՆ, ԴԵԶԴԵՄՈՆԱՆ, ԱԲԵԼՅԱՆԸ ԵՎ ՆԱԼԲԱՆԴ ԱԹՈՒՆԸ

Օհաննես Աբելյանը ռուսի ժամի բակում իջավ Մնացական Դանդարովի ֆայտոնից, երեսը կատակով խաչակնքեց ու ասաց.«Վայ թե լեռնակերտցիք բռնեն ու վերջում էլ ինձ քահանա օծեն»: Աբելյանի հետ մի սիրուն կնիկ էլ էր եկել, Դեզդեմոնա պիտի խաղար: Մեր էս Նալբանդ Աթունը նայեց էդ սիրույն կնկանն ու գլուխն օրորեց. «Մթամ աշխարքում մենք էլ ենք ապրում, Աբելյանն էլ»: Աբելյանը լսեց ու քթի տակ ծիծաղեց:

Ուրեմն երեկոյան Աբելյանը ռուսի ժամում Օթելլո խաղաց, էս Նալբանդ Աթունը թատրոնի էն թունդ վախտը մի էնպիսի անհամություն արեց, մի էնպիսի՞ անհամություն, որ սկի ոչ ասելու բան է, ոչ էլ գրելու բան...

(Ուստա Ծատուրի օրագրից)

Թատրոնը Լեռնակերտում նորություն էր: Նորություն էր նաև մարմարի պես ճերմակ դեմքով այն դերասանուհին, որ թևանցուկ արեց Աբելյանին, գլուխը նազանքով ետ գցեց ու քրքջաց: Կարծես չոր անապատում աղբյուր կարկաչեց:

- Վա՜յ, սատանա-սատանայի կնիկ,- ասաց Նալբանդ Աթունը:- Մթամ աշխարհում մենք էլ ենք ապրում, Աբելյանն էլ:

- Չեմ ասե՞լ՝ արսըզ-արսըզ դուրս չտաս,- բարկացավ Ուստա Ծատուրը,- Աբելյանը ժողովրդական մարդ է, դու ինչո՞ւ ես նրա հետ չափվում:

- Որ էդ սիրուն կնիկն ինձ էլ պադրուշկա անի, ես էլ ժողովրդական կլինեմ,- պատասխանեց Նալբանդ Աթունը և նորից կրկնեց.- Վա՜յ, սատանա-սատանայի կնիկ:

Մի աֆիշ Ուստա Ծատուրի դարբնոցի պատից կախեցին, մի աֆիշ Նալբանդ Աթունի դարպասից, մի աֆիշ փոստի շենքի ճակատից: Որովհետև մի քանի օր առաջ «Պատվի համարը» ցնցել էր Լեռնակերտը, հիմա բոլորը սրտատրոփ սպասում են «Օթելլո»-ին: Երեկոյան դեմ փոստի Մադաթը կանգնեց բոստանչի Սրափիոնի կտրին, վիզը երկարեց ու կանչեց.

- Լեռնակերտի ժողովո՛ւրդ, Աբելյանի թատրոնը սկսվում է, եկե՛ք...

Տավարած Դուդուլը «Օթելլո»-ի մասին որոշ բաներ լսել էր Փոստի Մադաթից: Փոստի Մադաթն ասել էր՝ Օթելլոն արաբ է, իրա կնիկը կամ ինգլիզ է, կամ ֆռանցուզ: էդ արաբը նամուսով մարդ է, կնկա ղալաթները չի կարողանում տանել, բռնում՝ խեղդում է: Տավարած Դուդուլը հիշեց

Փոստի Մադաթի պատմածն ու ռեկլամեց ներկայացումը.

- Ժողովո՛ւրդ, Հովհաննես Աբելյանն էս թատրոնում իրա լիրբ կնկանը պիտի խեղդի, եկեք թամաշա արեք:

- Եվ աչքն էլ կհանի,- լուրջ-լուրջ արձագանքեց բոստանչի Սրափիոնը:- Իսկական տղամարդը Աբելյանն է, բա Մամբրե Խաբարդանովիչի նման կլինի՞... Դուդուլ ախպեր, մի անգամ էլ կանչի, թող էդ աննամուս Մամբրե Խաբարդանովիչը լավ լսի:

- Իմ անունը Դուդուլ չի,- նեղացավ Դուդուլը:- Դուդուլը էն քյոհնա վախտերումն է եղել: Իմ իսկական անունը Դուրասան է:

- Յա՞,- զարմացավ Սրափիոնը,- դու էդ ե՞րբ դերասան դարձար:

- Ասացի՝ Դուրասան:

- Է՞, լավ. ի՞նչ տարբերություն կա Դուրասանի ու Դերասանի միջև:

Ու եկան: Ռուսական եկեղեցում ասեղ գցեիր, գետնին չէր ընկնի: Եկել էր Մամբրե Խաբարդանովիչը՝ Հերիքնազ Առնավուդովնայի հետ, Սիմոն Սարխոշյանցն էր եկել՝ կեպին քաշած աչքերին, Մեռել լողացնող Մանգասարն ու Ժամկոչ Մանասը, Գալիֆե Գուգուշն ու Թամամը, Ֆոտո Գավրուշն ու Վարսավիր Արտուշը... Եկել էին հարևան Քարաշեն, Արմենավան, Խնածախ, Շոշ գյուղերից, և բոլորն էլ լոգունգներով. «Կեցցե՞ սոցիալիստական թատրոնը, կորչի՛ բուրժուական փտած արվեստը»: Վարագույրները քաշեցին, բեմում երևաց մի արաբ՝ ականջներից կլոր-կլոր օղեր կախ արած, ատամները ճերմակ, հագին թանկարժեք զգեստներ: Արաբը խոսեց ինչ-որ Յագոյի հետ, հետո ներս մտավ Դեզդեմոնան՝ երեսը ճերմակ, թևերը ճերմակ, պարանոցը ճերմակ, շորերը ճերմակ: Փոստի Մադաթին մնում էր միայն զարմանալ, թե այդ արաբը որտեղից գիտե հայերեն, և թեքվեց ու շշնջաց Դուդուլի ականջին. «Ուրեմն՝ էս արաբը հայ է, և ինքն էլ Հայաստանի հայ...»:

Ու երբ Օթելլոն զայրացավ կնոջ վրա ու գոռաց.

«Դև՛, դև՛, դև՛:

Երկրի արգանդը եթե հղանար կնոջ արցունքից,

Ամեն կաթիլից մի կոկորդիլոս կծնվեր: Կորի՛ր,

Կորի՛ր իմ աչքից...»,- դահլիճն ավելի լարվեց, վիզն ավելի երկարեց դեպի բեմը: Բոլորն անհամբեր սպասում են, թե ինչով պիտի ավարտվի արաբի ու նրա գեղեցիկ կնոջ պատմությունը:

Ու եկավ այդ պահը: Երբ կատաղած Օթելլոն նետվեց Դեզդեմոնայի վրա, բռնեց կոկորդն ու ասաց՝ «էլ ուշ է», տեղի ունեցավ զարմանալի բան. Նալբանդ Աթունը վեր թռավ տեղից, նետվեց բեմ ու Օթելլոյին հրեց մի կողմ.

- Ի՞նչ ես անում, այ տնաքանդ-տնաքանդի տղա, հո ալան-թալան չի:

Մեծահռչակ Աբելյանը, որ հիմա Նալբանդ Աթունի համար միայն արաբ է, շրջվեց, նայեց Աթունին... բռնեց փորն ու քրքջաց: Նրա այդ քրքիջը դուր չեկավ Նալբանդ Աթունին. դուր չեկան կլոր-կլոր օղերը, ճերմակ-ճերմակ ատամներն ու փայլփլուն զգեստները, և ձայնն ավելի բարձրացրեց.

- Չէ՛, ասա մի տեսնեմ՝ խի՞ ես ուզում խեղդել էդ սիրուն կնկան: Ախպեր, չես կարողանում պահել, տուր մենք պահենք:

Դահլիճը պայթում էր ծիծաղից, իսկ Նալբանդ Աթունը կպել էր Աբելյանից ու իրենն էր քշում.

- Չէ՛ , ասա մի տեսնեմ՝ խի՞ ես ուզում խեղդել էդ անմեղ կնկանը:

Շփոթված Դեզդեմոնան կուչ էր եկել մի անկյունում, լուռ նայում էր, թե այդ ամենն ինչով պիտի վերջանա:

Այո, ինչպես Ուստա Ծատուրն է վկայում՝ «շատ անհամ բան ստացվեց»: Բայց դե ներկայացումը պիտի ավարտել, և Աբելյանը ելքից դուրս գալու համար որոշեց լեզու գտնել Նալբանդ Աթունի հետ: Ասաց, որ ինքը Դեզդեմոնային իսկականից չի խեղդում, և խնդրեց, որ հարգարժան Նալբանդը թողնի բեմը: Բայց Նալբանդ Աթունը առոք-փառոք նստեց Դեզդեմոնայի մահճակալին ու գլուխն օրորեց.

- Չէ, արաբ ախպեր, ես էստեղից հեռացողը չեմ: Ես չեմ թողնի, որ Լեռնակերտում, էն էլ աստծու տանը, կնիկ խեղդեն:

Աբելյանը տեսավ, որ Նալբանդ Աթունը տեղում պինդ է նստել, իսկ ներկայացումն էլ մնացել է թերատ, ստիպված կատարեց Օթելլոյի վերջին մենախոսությունը, հանեց սուրը, գոչեց՝ «Ահա այսպես» և զարկված ընկավ գետնին: Նալբանդ Աթունը զարմանքից պլշեց աչքերը, անմեղ-անմեղ նայեց դահլիճին ու ասաց.

- Պա՛հ, քու շառը կտրվի, հա՜...

Այսպես ավարտվեց Նալբանդ Աթունի, Օթելլոյի և Դեզդեմոնայի պատմությունը: Ավարտվե՞ց... Չէ՛, չավարտվեց: Ամբողջ մի ամիս Լեռնակերտում այդ մասին էին խոսում և ծիծաղում:

Ասում են՝ հաջորդ օրը Նալբանդ Աթունը մոտեցել է Աբելյանին ու հարցրել.

- Ուրեմն էդ Օթելլոն հայացած արա՞բ է:

- Չէ, մավր է:

- Մավրն ի՞նչ է:

- Ցեղ է:

- Իսկ էդ սիրուն կնիկը ֆռանցու՞զ է, թե՞ ինգլիզ:

- Իսկ ինչու՞ ֆռանցուզ կամ ինգլիզ:

- Ես էլ էդ եմ ասում էլի՜, էդ եմ ասում: Բա ֆռանցուզի կնիկը արաբի վրա սեր կկապի՞... Ուրեմն էդ բոլորը ստից սարքած բանե՞ր են...

- Հա, սարքած:

- Բա էդ ո՞վ է սարքել:

- Շեքսպիրը:

- Շեքսպիրն ո՞վ է:

- Անգլիացի է:

- Պա՛հ, ձեր ինչն ասեմ: Էդ ինչի՞ մեր հայերի ղորթից սարքած բաները թողել, անգլիացու ստից սարքած բաների ետևից եք ընկել:

Ու Աբելյանը քահ-քահ ծիծաղել, ձեռքը դրել է Նալբանդ Աթունի ուսին և ասել.

- Համա դու էլ հետաքրքիր մարդ ես, հա՜... Այ տնաշենի նալբանդ, քիչ էր մնում էդ կնկա պատճառով ինձ սպանեիր:

- Վա՜յ, քու ցավը տանեմ, ընկեր Աբելյան, ինձանից հո չե՞ս նեղացել:

- Չէ, չեմ նեղացել:

- Դե որ չես նեղացել, գնանք մի-մի թաս արաղ խմենք:

Ու Նալբանդ Աթունը մեծահռչակ Հովհաննես Աբելյանին հրավիրել է ի-րենց տուն, բաժակ-բաժակի խփել, ասել.

- Ախպեր Աբելյան, քո էդ շնորհքի կենացը: Քո էդ բաց ճակատի կենա-ցը: Քո էդ Դեզդեմոնի կենացը: Քո թատրոնի կենացը: Քանի Նալբանդ Աթու-նը սաղ է, Լեռնակերտի դռները քո առաջ միշտ բաց կլինեն:

Հովհաննես Աբելյանը դատարկել է բաժակը, խորամանկ-խորամանկ նայել Նալբանդ Աթունի աչքերին, լուրջ-լուրջ հարցրել.

- Ախպեր Աթուն, դրուստն ասա, հո սեր չե՞ս կապել էն սիրուն կնկա վրա:

- Ի՞նչ սիրուն կնիկ,- մթամ չի հասկացել Նալբանդ Աթունը, փորձել է խոսքը շուռ տալ.- մի-մի թաս էլ չխմե՞նք:

- Խմելը՝ կխմենք, մենակ դրուստն ասա: Դեզդեմոնային սիրահարվե՞լ ես:

- Դեզդեմոնը ո՞վ է:

- Խոսքդ ինչո՞ւ ես կտուրը գցում, աչքերիցդ երևում է...

- Ախպեր Աբելյան, էդ ի՞նչ արաբայի շառ է:

- Չէ, ճիշտն ասա: Բա էլ որտե՞ղ մնաց մեր ախպերությունը:

Նալբանդ Աթունը երեխայի պես կարմրել է, նայել դես ու դեն ու վիզը խեղճ-խեղճ ծռել.

- Դե լավ էլի՜, ախպեր Աբելյան, էսքան տարվա պահած աբուռս ինչի՞ ես թափում: Մի քար դու դիր էդ բանի վրեն, մի քար՝ ես, մի քար՝ մեր Ծա-տուրը, մի-մի քար էլ՝ մեր լեռնակերտցիք, մենակ աշխարհով մեկ չանեք:

ՆԷՊ

ՆԷՊ-ը, Ալեքսանի ասելով, նշանակում է՝ նոր տնտեսական քաղա-քականություն, Փոստի Մադաթի բացատրությամբ՝ «Հլա սպասեցեք, նոր պլատֆորմի վերջն ուրիշ բան է դուրս գալու», ըստ Դուքան Սեդ-րակի՝ «Ասում էի, չէ՞, աշխարհն էսպես չի մնա», Գալիֆե Գուգուշի խելքով՝ «Տղա ես, տակդ ու գլուխդ լցրու»:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Այսօր՝ ահա մենք համարձակ
պարզում ենք նէպ,
Որ իմանանք ով է մեր դեմ,
ով է մեզ հետ:

(Խոսք անհայտ բանաստեղծի)

Իսկ Մամբրե Խաբարդանովիչը ոչինչ էլ չասաց, որովհետև նախ նա ոչ թե խոսքի, այլ գործի մարդ է, և հետո էլ՝ իր մտքերը բարձրաձայն արտահայտելու սովորություն չունի:

Նա այդ օրը արթնացավ բարձր տրամադրությամբ, թրաշվեց, Հերիքնազ Առնավուդովնայի այտը համբուրեց, դուրս եկավ փողոց: Հերիքնազ Առնավուդովնան նայեց ամուսնու ետևից, քրթմնջաց դժգոհ. «Հողե՜մ գլուխդ, գիշերները բարձը գրկում՝ խռմփացնում է կուշտ կերած արջի նման, ցերեկներն՝ ինձ միտը գցում»:

- Բարի՜ լույս, Մամբրե Խաբարդանովիչ,- նրան առաջինը ողջունեց Գալիֆե Գուգուշը,- լավ բաղնիս ունեմ, համեցեք:

- Մեծապես շնորհակալ եմ,- պատասխանեց Մամբրե Խաբարդանովիչը,- ես հիմա շատ կարևոր գործեր ունեմ, ուշանում եմ:

- Բարի՜ լույս, Մամբրե Խաբարդանովիչ,- երկտակվեց Մեռել լողացնող Մանգասարը:- Ինչպե՞ս է հայր Խաբարդանի թանկագին առողջությունը:

- Հիանալի:

Մեռել լողացնող Մանգասարը հոնքերը կախեց ու հայհոյեց մտքում. «Քավթառը պինդ ճակատ ունի, ոտը դեմ է արել, չի ուզում մեռնել»:

- Բարի՜ լույս, Մամբրե Խաբարդանովիչ,- Դուքան Սեդրակը ցուցամատով նետեց թևերը պոկած ճանճը, վիզը երկարեց:- Բա որ ասում եմ աշխարհն էսպես չի մնա՜...

- Բարի՜ լույս, Մամբրե Խաբարդանովիչ,- խխունջի պես գլուխն իր խցիկից հանեց Բժիշկ Սերմաքաշյանը:- Գլխացավի հիանալի հաբեր ունեմ:

- Հարգանքներիս ամենահավաստիքը,- բարձրագոչ ողջունեց Սիմոն Սարխոշյանցը,- դեհ, ի՞նչ կասեք, հարգարժան Մամբրե Խաբարդանովիչ, ձեզ չի՞ թվում, որ ժամանակները նորից փոխվում են հօգուտ մեզ:

- Հնարավոր է,- Մամբրե Խաբարդանովիչը արագացրեց քայլերը, չցանկանալով զրույցի բռնվել Սիմոն Սարխոշյանցի հետ:

Բայց Վարժապետ Սիմոնը իսկույն հասավ նրան, բռնեց թևը.

- Ներեցեք, Մամբրե Խաբարդանովիչ, մի բան պիտի խնդրեմ:

- Ի՞նչ կա:

- Ինչպես ասում են՝ ես փողի խիստ տագնապ եմ զգում, եթե հնարավոր է, հանուն մեր բարեկամության...

- Իսկ այն պարտքերն ո՞վ պիտի վերադարձնի:

- Ներեցեք, ինձ ճանապարհածախս է հարկավոր, վաղը պիտի մեկնեմ Միջին Ասիա:

- Բարի ճանապարհ:

Սիմոն Սարխոշյանցը ուզում էր նրան մի լավ շշպռել՝ բուրժուական տզրուկ, հլա սպասիր, բոլշևիկներն այնպե՜ս թոզդ քամուն տան... Բայց լեզուն պահեց ատամների տակ, չէր ուզում ճանապարհվելուց առաջ բոլոր կամուրջները վառել:

- Ողջո՜ւյն Մամբրե Խաբարդանովիչին,- իր քրքրված ապարատ-արկղի

կողքից ձեռքր պաթետիկ տոնով առաջ պարզեց Ֆոտո Գավրուշը:- Ե՞րբ կբարեհաճեք լուսանկարվել ընտանյոք հանդերձ:

Ուստա Ցատուրը սովորականի պես իր գործին էր, Նալբանդ Աթունը հիմա էլ ժամկոչ Մանասին թողել, բռնել էր Մեռել լողացնող Մանգասարի օձիքը՝ «Յանի փեշակդ մեռել լողացնելը չի՞... Յանի դու էլ քեզ մարդ ես հաշվո՞ւմ»:

Մամբրե Խաբարդանովիչը փեսայի՝ Պողոսի հետ պինդ էր խռովել, ասել էր՝ ես ոչ Պողոս անունով փեսա ունեմ, ոչ էլ Օլյա անունով աղջիկ: Նա աչքի պոչով նայեց շիկացած երկաթի հետ կոխ բռնած փեսային, սիրտը փափկեց:

- Մեր տղա, Օլյան ինչպե՞ս է:

Պողոսը երկաթը թշշացրեց ջրի մեջ ու պատասխանեց.

- Օլյան լավ է:

- Չեք գալիս, չեք գնում:

- Չենք գալիս, չենք գնում,- Պողոսը ժպտաց քթի տակ:- Ախր ինչո՞ւ գանք, ինչո՞ւ գնանք:

- Նեղացա՞ծ եք:

- Չէ մի: Ումնի՞ց և ինչի՞ պիտի նեղանամ:

- Լավ, ես գործ ունեմ, հետո կխոսենք:

Մամբրե Խաբարդանովիչը վիճելու տրամադրություն չուներ, նա գործի մարդ է, նրա համար կարևորը և գլխավորը այն է, որ կարողանա ետ բերել իր նախկին փառքը: Աղյուսագործարանի կողքին կկառուցի կահույքի ֆաբրիկա, Մեծ մեյդանում կունենա իր գրասենյակը, հետո կբարձրանա և թքած կունենա այդ Գուգուշի, Սեդրակի, Գավրուշի... այդ չարչիների, այդ չախկալների, այդ քնձռոտների վրա: Ժամանակը հիմա խոսում է Մամբրե Խաբարդանովիչի օգտին, հարկավոր է շտապել, շտապել, նորից շտապել:

Շինությունը, որի ճակատին մի ժամանակ գրած էր՝ «Դուռը բաց, կեր խորոված», և երբ խորոված ուտելու ախորժակով ժամկոչ Մանասը դուռը բացեց, այնտեղ արդեն մկներն էին պարում,- հետագայում դարձավ մանր-մունր ապրանքների մաղազին, 18 թվականի վերջերին, Գալիֆե Գուգուշի և Մուշեղ Չանչախովի համառ ջանքերով՝ կլուբ: Ինչո՞ւ Թիֆլիսը, Բաքուն, Երևանը, Շուշին կլուբ կունենան, Լեռնակերտը՝ ոչ:

Դա ծխից սևացած պատերով, նեղ լուսամուտներով երկարավուն մի օթախ էր, որտեղ ամեն երեկո Լեռնակերտի նշանավորները թուղթ էին խաղում, զառեր գլորում ու քննարկում զանազան հարցեր: Երբ Թարխան Թերխաշյանն ու Մկր. Սազանդարովը հայտնվեցին Լեռնակերտում, Գալիֆե Գուգուշը օրակարգի մեջ մտցրեց Թերխաշյանի ճռճռան սապոգները և Մկր. Սազանդարովի բոլգարսկի տաքտեղ քիթը:

- Լեռնակերտի պատմության մեջ այդպիսի քիթ չի եղել և չի լինի,- ասում էր Գալիֆե Գուգուշը:- Լեռնակերտը պիտի հպարտանա, որ Սազանդարովի նման մարդը դարձել է իր օրինական բնակիչը:

Այդ օրը Գալիֆե Գուգուշը երկու բաժակից հետո փափկել և մոմ էր դառել: Նա ասաց, որ ինքը կամավոր կերպով ՆԷՊ-ի ցավը տանում է, և որովհետև դա շատ մեծ երևույթ է Լեռնակերտում, խոստանում է շուտով իր բաղնիս-համամի ճակատին խփել նոր ցուցանակ՝ «Նոր էրայի պաղնիս»:

Ահա այդ ժամանակ էլ բացվեց կլուբի դուռը և երևաց Մկր. Սազանդարովի բուլղարական տաքտեղը: Գալիֆե Գուգուշը լայն տարածեց թևերը, խոնարհեց գլուխն ու ասաց.

- Մկրտիչ Սազանդարով, ես քո բոլգարսկի տաքտեղ քթի ցավը տանեմ: Թե չտանեմ, հազար ամոթ ինձ: Այդ քիթը որ իմը լիներ, ցիրկում բոլ-բոլ փող կաշխատեի...

Մկր. Սազանդարովը, այդ տգետը, այդ ողորմելին, որ պարտավոր էր քաղցր ժպտալ Գալիֆե Գուգուշին, ասել՝ շնորհակալ և զգացված եմ, որ իմ քթի մասին այդպիսի մեծ կարծիք ունեք, ոտնահարեց քաղաքավարության տարրական նորմերը և ապտակեց Լեռնակերտի պարծանք Գալիֆե Գուգուշին:

Լեռնակերտի ընտիր հասարակության ներկայությամբ ապտակել Գալիֆե Գուգուշին, դա արդեն անպատվություն է և պազոր: Բայց Գուգուշը նամուսով մարդ է, գլխին կնկա լաչակ չէր կապել, որ կուլ տար այդ ահավոր վիրավորանքը: Նա բռնեց իր ախոյանի ուսերից և գլխով, ինչպես Դուքան Սեդրակն է վկայում՝ բաշկոյ տվեց:

- Որ բաշկոյ տվեց,- հաստատում է Մեռել լողացնող Մանգասարը,- էս Մկրտիչ Սազանդարովը պարկի պես փռվեց հատակին, դարձավ լողացման ենթակա մեռել:

- Ես որ թատրոն եմ ասում, դուք կինո հասկացեք, որ կինո եմ ասում՝ ցիրկ հասկացեք, որ ցիրկ եմ ասում՝ ինչ ուզում եք հասկացեք,- պատմում է Ուստա Ցատուրը.- Ոնց որ Չարլի Չապլինի լազաթ բաները: Սաղ Լեռնակերտի խալխը հավաքվել ու թամաշա էր անում: Սկի Խանանդա Շաշայի համերգին էդքան մարդ չէր գալիս: Գուգուշս ո՞րն է, շան տղան ասլան էր կտրել: էս Թերխաշյանը գլուխը բարձրացրեց, Գուգուշս սրա կարկաժին՝ դըրա՛խկ: Դուքան Սեդրակը կոտրած գդալի պես մեջ ընկավ, Գուգուշս սրա գլխին՝ շըրա՛խկ: Մեռել լողացնող Մանգասարը բերանը բացեց՝ թըրա՛խկ: Դե հիմա եկեք ձեր մեռելացուները տարեք:

Երբ Պողոսը կապը կտրած նէպմանականներին դուրս արեց կլուբից, վեճը բորբոքվեց մեծ ընկուզենու տակ: «էն աշխարհը գնացած, ետ եկած» Մկր. Սազանդարովը իսկապես ցուցադրեց իր արտակարգ տաղանդը և ապացուցեց, որ ինքը ոչ միայն մեծ քթի, այլև հոյակապ հայհոյանքների վարպետ է: Նա հայհոյում էր չափազանց պատկերավոր, էպիտետները օգտագործում տեղին ու դիպուկ և անում այնպիսի համեմատություններ, որ նույնիսկ Ֆոտո Գավրուշը կնախանձեր նրան:

- Գալիֆե Գուգուշ, դու ռուսի ժամի պատի տակին պպզած անգլիական բուլդոգ շուն ես: Հավլաբարի քուչեքումը մոլորված մեյմունի թանձրագույն տեսակ... Դաբաղից ընկած ոչխարի որդնած ու պիղեծնած կճղակ...

Դու մարդ չես, այլ մարդկային կերպարանքով ողորմելի մի պոչավոր, որին Չարլզ Դարվինն անվանել է կապիկ: Դու ատամները թափած հիմալայան սապատավոր ուղտի քուռակ և անապատում սատակած զոլավոր գորտի ձագ ես...

Գալիֆե Գուգուշը, որ քիչ առաջ առյուծ էր կտրել, մեծ բավականությամբ ընդունեց Մկր. Սազանդարովի բերանից թափվող լալա-ջավահիրները, նույնիսկ քիչ էր մնում հուզմունքից արտասվեր, սակայն տղամարդու պես զսպեց իրեն, ձեռքը դրեց կրծքին ու ասաց.

- Վա՜յ, ես քո սոբստվենների ցավը տանեմ, Մկրտիչ Սազանդարով: Արա՜, դու հրաշք մարդ ես, դու մեծ, Չարլի Չապլինից էլ, Թարխան Թերխաշյանից էլ, Կարկազ Լեռնակերտցուց էլ մեծ մարդ ես: Եվ ես, անապատում սատկած ճերմակ զոլավոր գորտս, մինչև հիմա այդ չեմ հասկացել: Թե սրանից դենը քո թանին թթու ասեմ, հազար ամոթ ինձ: Թե սրանից հետո բաղնիսս մտնես, քեզանից մի կոպեկ վերցնեմ, Նալբանդ Աթունի շան կողքին պպզեմ ու Մեռել լողացնող Մանգասարի վրեն հաչեմ...

Մամբրե Խաբարդանովիչը, ինչպես արդեն վերևում ասացինք, գործի մարդ է, այս զավզակների, բերանբացների, անտաշների ու սանձարձակների հետ ոտք մեկնելու իրավունք չունի:

Երկար ընդմիջումից հետո աղյուսագործարանը ծուխ արեց, հունցած կավը շիկացավ, ձևափոխվեց ու դարձավ աղյուս, ապա սկսեց գործել տաբուրետի ֆաբրիկը, դրա կողքին «Պատվերներով գլխարկ»-ը և, վերջապես, Մամբրե Խաբարդանովիչն էր, որ Լեռնակերտում առաջին անգամ բացեց «Պապիրոս-թամբաքի-մուշտուկ-չիբուխ» խանութը:

Ճիշտ է, լուրեր տարածվեցին, որ իբր Մամբրե Խաբարդանովիչը թամբաքու հետ թբղլու չորացած տերև է խառնում, նրա արտադրած տաբուրետները մի շաբաթ էլ չեն դիմանում, որ իբր Հերիքնազ Առնավուդովնան ամեն օր՝ կեսօրին, ճիպոտով ծեծում և անկյուն է կանգնեցնում իր կեսրայրին, թե իբր Մամբրե Խաբարդանովիչը ամեն երեկո իր հարազատ հոր վրա գոռում է՝ «Վերջապես ինչո՞ւ չես ուզում պատվով սատկել, քավթառ ղուզղուն»: Բայց այդ ամենը դատարկ բաներ են, այսինքն խալաստոյ կրակոցներ, որ Մամբրե Խաբարդանովիչը ականջի ետևն է գցում ու քթի տակ ծիծաղում:

Բայց տեղի ունեցավ փոքրիկ մի դեպք, որն, ինչ խոսք, չէր կարող պատիվ բերել Մամբրե Խաբարդանովիչին, մի մարդու, որ անզուգական ամուսին է, հիանալի հայր, լավ ընտանիքի հրաշալի զավակ:

Մի տոթ օր, երբ հոգնած ու բեզարած Լեռնակերտը գլուխը դրել զով անտառի ծոցում և հանգիստ ու համաչափ ննջում էր, ծերունի Խաբարդանը՝ Մամբրե Խաբարդանովիչի հարգարժան հայրը, բարձրացավ Դուքան Սեդրակի խանութի կտուրը, զգեստները ցուցադրաբար մեկ-մեկ հանեց, նետեց փողոց, կտրի ծերին կանգնեց մերկանդամ ու խզված բասով գոռաց.

- Ա՜յ խալխ, ես Հիսուս Քրիստոսն եմ, հարություն եմ առել, եկեք թամաշա....

Եվ ցնդած ծերունին սկսեց պարել, չնայած Աստվածաշնչի ոչ մի էջում խոսք չկա այն մասին, որ Հիսուս Քրիստոսը խաչվելուց առաջ պար է բռնել մերկանդամ և այն էլ Լեռնակերտում՝ Դուքան Սեդրակի խանութի կտրին: Ուրեմն, ըստ ցնդած Խաբարդանի, Քրիստոսը երկու անգամ է խաչվել, մի բան, որին չի կարող հավատալ նույնիսկ ժամկոչ Մանասը:

Ջահելները հռհռացին, կանայք շուռ տվեցին իրենց երեսները, այրի Սուսամբարը չորս անգամ խաչ հանեց դեմքին ու նետեց.

- Վո՜ւյ, հողս քավթառ գլխիդ, բա դու սկի աբուռ չունե՞ս:

Դա ծերունի Խաբարդանի վերջին պարն էր:

Երբ լեռնակերտցիք հարգանքով ու պատվով ծերունու դիակը պահ տվեցին հողին, Գալիֆե Գուգուշը մեռելահացին բարձրացրեց բաժակն ու ասաց.

- Խաբարդան Հաբուդովիչի ցավը տանեմ, ապրեց մեծ կյանքով և իր գեղեցիկ մահով զարդարեց մեր Լեռնակերտը: Երանի նրան, ով իր մահից առաջ կկարողանա պարել այնպես, ինչպես այդ իմաստուն ծերունին էր պարում Դուքան Սեդրակի խանութի կտրին: Խաբարդան հայրիկը ժողովրդական մարդ է:

- Բա ո՜նց,- կոտրած գդալի պես մեջ ընկավ Դուքան Սեդրակը:- Մարդ ժողովրդական պիտի լինի, ինչպես, օրինակ, ես: Այդ ո՞ր հիմարը կթողեր, որ մերկանդամ մարդը պարի իր կտրին, բայց ես թողեցի և դա մեծ պատիվ է ինձ համար: Խաբարդան հայրիկի շատ թանկագին կենացը: Լազաթ մարդ էր և լազաթ-լազաթ էլ մեռավ: Օղորմի՜ իրեն:

Իսկ Մեռել լողացնող Մանգասարը խիստ նեղացավ, որ իր կենացը մոռացան, նեղացավ նաև նրա համար, որ Մամբրե Խաբարդանովիչը ծերունու հին զգեստներն էր տվել իրեն, որպես մեռելալողացի վարձ:

Փոքրիկ օղակները միանում իրար, դառնում են մեծ շղթա: Մամբրե Խաբարդանովիչի կարծիքով՝ կարևորը շղթայի ծայրն է: Այդ շղթայի ծայրը աղյուսագործարանն է, որ իր ձեռքում պիտի ամուր պահեր: Այն արտելը, որ հիմնել է Ծատուր-Աթուն-Պողոս եռյակը, աղյուսագործարանի կողքին ոչինչ է: Բայց, այնուամենայնիվ, արտելն ու արտելականները սղոցում են Խաբարդանովիչի ուղեղը, և նա ամեն օր նույն հարցն է տալիս իրեն՝ «Ախր սրա վերջն ի՞նչ կլինի»:

Կլուբում տեղի ունեցավ ժողով, և այդ ժողովին չհրավիրվեց ոչ Մամբրե Խաբարդանովիչը, ո՛չ Գալիֆե Գուգուշը, ո՛չ Թարխան Թերխաշյանը, ո՛չ Մկր. Սազանդարովը և ո՛չ էլ Դուքան Սեդրակը:

Ժողովում խոսեցին Փոստի Մադաթն ու Ուստա Ծատուրը, ռուս Մատվեյն ու Նալբանդ Աթունը... Դուքան Սեդրակը, որ կանգնել էր կլուբի դռան ետևում, իր ականջով լսեց, թե ինչպես Ալեքսանը ասաց. «Ընկերներ, սա կապիտալիզմի մնացուկների ժամանակավոր աշխուժացում է: Սրա վերջն էլ կտանք: Մենք Լեռնակերտում պիտի հիմնենք մեր արտելները... Իսկ հիմա մի քանի խոսք կոոպերացիայի մասին...»:

Դուքան Սեդրակը չհասցրեց մինչև վերջ լսել, որովհետև այդ պահին Մատվեյը բացեց դուռը ու ոտքով տվեց նրա փափուկ տեղին.

- Պաշոլ տի վոն, մերզավե՛ց:

Հաջորդ օրը կլուբի պատից կախված էր այսպիսի մի չափածո կոչ.

Թող չքվեն-կորչեն
Մամբրե ու Թերխաշ,
Հիմա մեր կոչն է՝
Հպարտ քայլով մարշ:
Մենք ենք Լեռնակերտի
Իսկական տերը.
Կորչի՛ վաշխառուն,
Կեցցե՛ արտելը:

Մամբրե Խաբարդանովիչի մարմնով ահեղ սարսուռ անցավ, մեջքը հենեց Արտուշի վարսավիրանոցի պատին, որ չընկնի: Վարսավիր Արտուշը ներսում զրույցի էր բռնվել Ֆոտո Գավրուշի հետ. «Հա, իմ արևը,- ասում էր,- որքան մտածում եմ, էս արտելը խելքի մոտիկ բան է: Որ արտել դառնանք, իրար թիկունք լինենք, մեր կողքովն ո՞վ պիտի անցնի»:

Մամբրե Խաբարդանովիչը շարունակությունը չլսեց, անցավ դարբնոցի կողքով, քայլերն ավելի արագացրեց, տուն հասավ անտրամադիր, պառկեց ու քրտնեց.

- Բանկա կպցնե՞մ,- Հերիքնազ Առնավուդովնան ձեռքը դրեց ամուսնու ճակատին.- Վո՜ւյ, կրակի պես վառվում է:

- Մրսում եմ,- Մամբրե Խաբարդանովիչը մշուշված աչքերով նայեց կնոջը:- Մրսում եմ...

- Դոկտոր Սերմաքաշյանին կանչե՞մ...

- Չեմ ուզում: Էս ցուրտն ուրիշ ցուրտ է, բուժում չկա:

- Դե լավ, երեխա չես:

- Արտելը մեր տունը կքանդի: Հա՛, կքանդի: Դուրս է գալիս, որ ես գետի վրա նստել, ալյուր եմ մաղում: Գալիֆե Գուգուշը, Վարսավիր Արտուշը, Ֆոտո Գավրուշը նույնպես արտել են գրվել:

- Է՜, դու էլ գրվիր:

- Ի՞նչ գրվեմ, արտե՞լ,- Մամբրե Խաբարդանովիչը թիկնեց բարձին,- գրվեմ, հա՞, գրվեմ... որ ունեցվածքս քամո՞ւն տամ... որ դու էլ լրբությո՞ւն անես: Ուզածդ էդ չի՞...

Նա չլսեց, թե կինն ինչ պատասխանեց, և ամբողջ գիշեր տաքության մեջ զառանցում էր.

- Արտե՜լը, արտե՜լը տունս կքանդի...

ՊԼԱՏՖՈՐՄ, ՊԼԱՏՖՈՐՄ...

Չեմ հասկանում, թե էս Լեռնակերտի բանը ինչ կլինի. ոչ գյուղի նման գյուղ է, ոչ ավանի նման ավան, ոչ էլ քաղաքի նման քաղաք... Հին Լեռնակերտը կամաց-կամաց նահանջեց, մեջքը դեմ արեց Վարարակնի ձորի բերանին, ասաց՝ սպանեք էլ, տեղիցս շարժվողը չեմ: Ասաց՝ դուք էդտեղ ապրեցեք նոր կյանքով, թողեք ես էստեղ հին կյանքով մեռնեմ...

(Ուստա Ճատուրի օրագրից)

Լեռնակերտի հետ նահանջեց Դուքան Սեդրակն իր խարխլված խանութի շենքով, գինու դատարկված տակառներով: Դառնացած նահանջեց: Մի գլուխ հայհոյում էր Սիմոն Սարխոշյանցին, որ հիմա ապրում է ով գիտի որտեղ, և ոչ մի թուղթ չի գրում՝ հարցնի իր զինակցի որպիսությունը...

Նահանջեց նաև Թարխան Թերխաշյանը, խորացավ ձորում, ամուր ցանկապատ քաշեց, և որպեսզի Դուքան Սեդրակի երեսը չտեսնի, չլսի նրա ծղրտոցը, (վա՜յ, կամերսանտ-կամերսանտի տղա) տան դռներն ու պատուհանները բացեց դեպի արևմուտք ու մտածեց. «էն արևը, որ արևելքից է դուրս գալիս, հալբաթ մի օր էլ արևմուտքից դուրս կգա»:

Հետո Թարխան Թերխաշյանը զոռ տվեց ուղեղին և գտավ, որ աշխարհում մի նոր նէպ էլ կլինի, նորից խանութ կբացի, կապրի աղավարի:

Նէպ չեղավ: Ճռնչացին մեյդանի փայտաշեն ու կավաշեն տները, բարձրացավ թանձր փոշի, Դուքան Սեդրակը ձորից վիզը երկարեց, Թարխան Թերխաշյանը վիզը երկարեց, երկու անհաշտ թշնամիները ատելությամբ նայեցին իրար և համարյա միասին գոչեցին.

- Քաղաքը քանդում են:

Եվ որովհետև քաղաքը քանդում են, իսկ իրենք էլ բաժանելու բան չունեն, ատելությունը կամաց-կամաց նահանջեց, ու իրենք էլ չիմացան, թե ինչպես հաշտվեցին, դարձան նախ հին ծանոթներ, հետո մտերիմներ ու բարեկամներ: Թարխան Թերխաշյանը հանեց նէպի ժամանակից մնացած հնամաշ կեպին ու խոսեց: Ասաց՝ Ալեք Բարթուղյանը ժողով է արել ու էդ ժողովում ասել՝ «Մեր պլատֆորմը հիմա նոր պլատֆորմ է»:

«Պլատֆորմը» Դուքան Սեդրակի գանգի մեջ չտեղավորվեց, մտքում մի քանի անգամ կրկնեց, «պլատֆորմ, պլատֆորմ, պլատֆորմ» անծանոթ բառը մտքում խախալեց, մաղեց, ծամծմեց ու բացատրեց.

- Ուրեմս դրանք որոշել են Լեռնակերտը քանդել, տեղը պլատֆորմ շինել:

- Պլատֆո՞րմ,- Մկր. Սազանդարովը Վարսավիր Արտուշի ածելու տակ այնպես շարժվեց, որ օճառված վրձինը խցկվեց նրա քթանցքը.- Ասում ես պլատֆորմ, է՞լի... Իսկ այդ պլատֆորմը մենակ Ղարաբաղի համա՞ր է, թե՞ մեժդունարոդնի...

- Մեժդունարոդնի է,- Վարսավիր Արտուշը մաքրեց նրա քթանցքը,- բանվոր դասակարգի համար է: Ես էլ եմ բանվոր դասակարգ: Գալիֆե Գուգուշը՝ նույնպես: Իսկ դու Թարխան Թերխաշյանից կապերդ խզե՞լ ես:

- Թարխանը ժուլիկ է, աղվես է Թարխանը, պադլեց է:

- Երևի փողերը հավասար չի կիսել:
- Ես թուքել եմ նրա փողերի վրա:
- Թուքել չի, թքել է,- ուղղեց Արտուշը:
- Թող քո ասածով լինի՝ թքել եմ: Էդ պլատֆորմը շո՞ւտ կլինի:
- Ալեքսանն ասում է՝ կլինի:
- Թող լինի, ինձ ի՞նչ, ես էլ եմ բանվոր դասակարգ:

Իսկ Թարխան Թերխաշյանի համար, որ պլատֆորմը ոչ այլ ինչ է, եթե ոչ նէպի նման մի բան, հարգանքով նայեց Դուքան Սեդրակին ու գլխով հավանության նշան արեց: Դուքան Սեդրակն էլ որոշեց իր գիտելիքներով ավելի զարմացնել նէպմանականին ու հիշեց Սիմոն Սարխոշյանցի «ահավասիկը», կպցրեց այն պլատֆորմին ու համոզված տոնով հաստատեց.

- Ահավասիկ, պլատֆորմ...

Պլատֆորմը Փոստի Մադաթի համար այն զարմանալի սարքերն էին, որ բերեցին Բաքվից, ասացին՝ տելեֆոններ են: Փոստի պետ Կարապետյանը պտտեց փոքրիկ բռնակը, լսափողը սեղմեց ականջին, ասաց՝ «Ալո՛, ալո՛... Քարաշեն, լսո՞ւմ ես»: Քարաշենը լռում էր, և փոստի պետ Կարապետյանը կարգադրեց՝ «Բջիջների քարտուղարների ժողով է, ընկեր Առաքելյանին ուղարկեցեք»:

Երեկոյան Փոստի Մադաթը ականջը հպեց այդ փոքրիկ արկղին, ձայն չհանեց: Պտտեց բռնակը, վերցրեց ընկալուչը, հակառակ կողմի վրա սեղմեց ականջին ու գոռաց. «Քարաշեն, ալո... Արա, ընկեր Առաքել, էդ ինչի՞ ձայնդ ներքևից է գալիս»: Այդ պահին ներս մտավ Դուքան Սեդրակը, ոտքի ծայրերի վրա մոտեցավ, ինքն էլ դեմ արեց ականջը:

- Խանգարում ես,- Փոստի Մադաթը ոլորեց աչքերն ու շարունակեց հեռախոսազրույցը.- Ասում եմ՝ ձայնդ տելեֆոնի էն մի կողմովն է գալիս... թա՞րս եմ բռնել,- ընկալուչը շուռ տվեց:- Հա՜, հիմա իսկականից ալո՜...

Հեռախոսավարուհի Թամարը ճանաչեց Փոստի Մադաթի ձայնը, հուպ տվեց շրթունքներն ու պատասխանեց.

- Ի՞նչ Քարաշեն, սա Մոսկովն է, Մոսկովը լսում է: Մադաթը շփոթվեց, բայց չկորցրեց իրեն.

- Մոսկո՞վն է... Ալո, Մոսկով, Լեռնակերտից է... Լսո՞ւմ ես:

- Լսում եմ, լսում եմ:

- Մեզ բոլ-բոլ ցեմենտ է հարկավոր, տրուբա է հարկավոր, էն լույսի ստանցու համար սարքեր են հարկավոր... Ալո, լսո՞ւմ ես:

- Լսում եմ, էլ ի՞նչ է հարկավոր:

- Շոլկի նոր փաբրիկ ենք կառուցել, գիտե՞ս:

- Գիտեմ:

- Էդ փաբրիկի համար նոր չարխեր են հարկավոր: Ընկեր Բարթուղյանն ասել է՝ էդ բաները Մոսկովը պիտի ուղարկի, ինչի՞ չեք ուղարկում: Ալո, լսո՞ւմ ես:

- Լսում եմ: Իսկ ձեզ մոտ գործերն ինչպե՞ս են գնում:

- Շատ լավ են գնում... այսինքս՝ պլատֆորմով...

Հեռախոսավարուհի Թամարի համար «պլատֆորմը» անծանոթ բառ էր, շրջանցեց.

- Ալո, ալո... խոսողն ո՞վ է:

- Փոստի Մադաթն է:

- Ուրեմն, ընկեր Փոստի Մադաթ, ձեր պատվերը կատարված է: Ցտեսություն:

Փոստի Մադաթն ընկալուչը կախեց, փքված-փքված գնաց-եկավ ու կանգնեց Դուքան Սեդրակի դիմաց:

- Հը՛, տեսա՞ր:

- Հալալ է, ախպեր... Բա սրանից հետո քեզ հետ խոսե՞լ կլինի... Բայց էդ պլատֆորմն ի՞նչ բան է...

- Պլատֆորմը չգիտե՞ս,- Մադաթը ծիծաղեց,- մինչև հիմա էդ հասարակ բանը չգիտե՞ս:

- Չգիտեմ, ախպեր:

- Բա ինչո՞ւ չգիտես: Ինչո՞ւ ուրիշ բաներ գիտես, բայց մեր հարազատ պլատֆորմը չգիտես: Որ չգիտես, ինչո՞ւ ես մտել խորհրդային փոստը: Գնա Ֆոտո Գավրուշի մոտ, թող բացատրի:

Ֆոտո Գավրուշը նոր ապարատ էր ստացել, տրամադրությունը բարձր էր, Դուքան Սեդրակի հարցին չափածո պատասխանեց.

Հին աշխարհը քանդել ենք,
Ցմփորներին բանտել ենք,
Պլատֆորմը շեն կենա,
Խորհրդային արտել ենք:

Երբ մի շաբթից հետո ապագա հիդրոկայանի սարքերը Եվլախից տեղափոխեցին Լեռնակերտ, Փոստի Մադաթը փոշի բարձրացնելով գնաց Ուստա Ծատուրի մոտ ու հարցրեց.

- Ուստա Ծատուր, հիմա ես ինչպիսի՞ տղա եմ:

- Այսինքն՝ ո՞ր կողմանի:

- Պլատֆորմի կողմանի:

- Պլատֆորմի՞,- Ուստա Ծատուրը մանր-մանր ծիծաղեց:- Ախպեր, էս ի՞նչ բան է, Թարխան Թերխաշյանն է խոսում՝ պլատֆորմ, Դուքան Սեդրակն է խոսում՝ պլատֆորմ, Նալբանդ Աթունը մի գլուխ՝ պլատֆո՛րմ, պլատֆո՛րմ, պլատֆո՛րմ... Լավ, մի չիմանա՞նք, թե ինչ բան է էդ պլատֆորմը:

Թարխան Թերխաշյանն ասաց՝ պլատֆորմը նէպի մի նոր տեսակն է, Դուքան Սեդրակը չհամաձայնեց նրա հետ. «Պլատֆորմը,- բացատրեց նա,- ահավասիկ, դա հենց ինքը պլատֆորմ է, դեռ մի բան էլ ավելի»:

Նալբանդ Աթունը նայեց Փոստի Մադաթին.

- Բա լավ, մի չիմանա՞նք, թե էդ պլատֆորմն ինչ բան է...

ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնակերտի ժողովուրդն իր աչքով իսկական ավտոմոբիլ տեսավ: Փոստի Մադաթը նոր պլատֆորմով ճառ ասաց, Խանանդա Շաշան էդ ավտոմոբիլի վրեն նոր երգ վեր կալավ:

Մաշինեն եկավ, յարո ջան,
Ակները մա՜նր, բեռները ծա՜նր,
Արի՜, մի գնա, արի՜, մի գնա,
Եկել ես, մնա՜...

էդ նշանավոր օրը Հաբունց Ղուշին ջուխտ երեխա բերեց, տղայի անունը Ավտոմոբիլ դրեցին, աղջկա անունը՝ Մաշինե:

(Ուստա Ծատուրի օրագրից)

Լեռնակերտը քաղա՞ք է, թե՞ գյուղ:

Մեր ձեռքի տակ է Հեղկոմի նախագահ Ալեքսանի հաշվետվությունը, որտեղ գրված է. «Լեռնակերտը մի վայր էր, ուր ավերակներից բացի ուրիշ ոչինչ չկար, հատ ու կենտ մարդիկ ստվերների պես էին երևում փողոցում»:

Իսկ որտեղ գնացին Մամբրե Խաբարդանովիչի երկհարկանի տունն ու աղյուսի գործարանը, Գալիֆե Գուգուշի պաղնիսն ու Վարսավիր Արտուշի «Վարսավիրանոց-Դալլաքխանա-Պարիկմախտերսկի»-ն, կլուբն ու Դուքան Սեդրակի խանութը, ինչպես նաև Բազար-Լեռնակերտն ու Թարխան Թերխաշյանի գովական մաղազինը: Ինչպե՞ս եղավ, որ այդ ամենը դարձան ավերակներ:

Հավանական է, որ Մամբրե Խաբարդանովիչը Լեռնակերտից ծլկելուց առաջ ավերակ է դարձրել իր աղյուսագործարանը և երկհարկանի տունը: Այդ մասին Ուստա Ծատուրն իր «Օրագրում» ոչինչ չի հիշատակել, իսկ Նալբանդ Աթունը հետագայում մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է. «էդ նէպման ղուռումսաղները վերջում շատ վնաս տվեցին մեր գյոզալ Լեռնակերտին»:

Իսկ այդ տարի Ղարաբաղում այնքան փոշի չկար, որքան միայն Լեռնակերտում: Նալբանդ Աթունը ոտքը դնում էր գետնին՝ փոշի էր: Բեղերը շոյում էր՝ փոշի էր: Արխալուղը թափ էր տալիս՝ փոշի էր:

- Ախպեր,- ասում էր,- էս էսեռ-մեսեռից, հնչակ-մնչակից մի կերպ ազատվեցինք, բա էս փոշուց ո՞նց ազատվենք:

Օգոստոսին Դուքան Սեդրակը սեմիչկա էր վաճառում: Շուտով Մեռել լողացնող Մանգասարն էլ սկսեց սեմիչկա վաճառել: Սեմիչկայի առևտուրը ոգևորեց նաև Մկրտիչ Սազանդարովին, ապա Գալիֆե Գուգուշի Թամամին ու Մոթալ Մինասին: Մեծ մեյդանը Դուքան Սեդրակինն էր, ռուսի ժամի դուզը՝ Թամամինը, բազարը պատկանում էր Մկր. Սազանդարովին: Մոթալ Մինասը տեղ չուներ, բնակալը կորցրած հավի նման դես ու դեն էր վազում ու հայհոյում. «Թո՛ւ, ես ձեզ մարդ ասողին... Սաղ տեղերը վերցրել են, կարծես իրենց հետ գերեզման պիտի տանեն»:

- Հինգ սեմիչկավաճառը Լեռնակերտի համար շռայլություն է,- բողոքեց Մկր. Սազանդարովը և անցավ բոված եգիպտացորենի վաճառքին:

- Լավ խամբա՛ր, Թիֆլիսի խամբա՜ր...

Դուքան Սեդրակը կարծես դրան էր սպասում, ինքն էլ անցավ եգիպտացորենի վաճառքին և եղավ տուրուդմփոց:

- Մերզավեց շանորդի, ինչո՞ւ քո ախոռում չես զռռում,- բղավեց Մկր. Սազանդարովը:- էդ էլ նէպ-ի ժամանակները չեն, թե ինչ ուզես՝ անես:

Թարխան Թերխաշյանը կամերսանտ էր, դարձավ առաջին կարգի սպեկուլյանտ: Ո՞վ կմտածեր, որ Թիֆլիսում պաղպաղակ կա, և այդ պաղպաղակը հատուկ արկղներով կարելի է տեղափոխել Լեռնակերտ՝ վաճառել: Թերխաշյանը փող աշխատելու ձևը գիտեր, և նա այս անգամ հրաժարվեց Սազանդարովից ու գործընկեր ընտրեց Մոթալ Մինասին:

- Մարոժնի՜, պերոժնի՜, դարոժնի՜,- կանչեց Մոթալ Մինասը: Նա պերոժնին ու դարոժնին ավելացնում էր պարզապես հանգի համար, և աչքաթակի տղան, որ անկուշտի մեկն էր, գրազ բռնեց Մկր. Սազանդարովի հետ, միանգամից քսանհինգ պաղպաղակ կերավ, բայց չմարսեց. այնպես էր դողացնում, ատամները խփում իրար, Մեռել լողացնող Մանգասարը քիչ էր մնում հրձվանքից ճչար. «Արա, էլ ո՞ւմ ես սպասում, մեռիր էլի, մեռիր, մի էնպես լողացնե՜մ, որ քեֆդ գա»:

Մոթալ Մինասը մի շաբաթ տանջվեց: Բժիշկ Սերմաքաշյանը զննեց հիվանդին ու ասաց՝ դատելով այն բանից, որ հիվանդը դողացնում է, ուրեմն ուժեղ մրսել է: Սակայն ելնելով այն հանգամանքից, որ ստամոքսից ինչ որ հեղուկ է բաց թողնում, ոչ այն է՝ կաթ է, ոչ այն է՝ շմաթ, ուրեմն կարելի է ասել, որ դա փորլուծություն է:

Բայց շարունակենք մեր պատմությունը:

Դուքան Սեդրակը որոշեց Գորոդովոյ Անտոնի օրինակով կախվել, թոկը փտած դուրս եկավ և մի կողմից էլ Նոյեմը ձենը գլուխը գցեց, թե՝ հա՜յ, հարա՜յ, Սեդրակս ձեռքից գնաց, հասե՜ք: Թո՛ւ, լաչառ, մարդ կարգին մեռնելու իրավունք էլ չունի:

Լեռնակերտն ապրում էր իր սովորական կյանքով, երբ տեղի ունեցավ ոչ սովորական մի դեպք: Փոշու կծիկը ետևից քարշ տալով, փնչալով, տնքալով հրապարակ խուժեց Լեռնակերտի առաջին ավտոմոբիլը:

- Մաշինեն եկա՜վ,- իրենց կտրից ծկլթաց չորս անգամ պսակված և չորս անգամ բաժանված (եթե Բժիշկ Սերմաքաշյանին էլ հաշվենք) Սուսամբարը:- Այ խա՜լխ, աչքներդ լո՜ւյս, մաշինեն եկավ:

Մաշինեն հրապարակում երկու պտույտ գործեց, երկու տոննա փոշի երկինք հանեց, փրթփրթաց ու կանգնեց: Շոֆերը Լազգունց Ստեփանն էր, դուրս եկավ ավտոմոբիլից, թափ տվեց շորերի փոշին ու խոսեց.

- Համա քաղաք եք պահում, հա՜, սաղ փոշի է:

Փոստի Մադաթը Լեռնակերտի նշանավոր ճառախոսը, որ վերջին ժամանակները սկսել էր քաղաքական բառարաններ ուսումնասիրել, որոշեց օգտագործել պատեհ առիթն ու ճառ ասաց.

- Ընկերներ, այսօր մեզ համար էքսպրոմտ օր է: Մենք վստահորեն և անշեղորեն, շեշտակիորեն ջախջախեցինք օպորտունիստների դոգմատիզ-

մը: Հապա նայեցե՞ք, Լեռնակերտը, բուրժուական նախկին քաղաք կոչ-վածն այսօր ավտոմոբիլ ունի...

Այնուհետև հռետորը խոսեց այն մասին, որ գիտությունն ու տեխնիկան զարգանում են մեծ արագությամբ, խարխլվել են բուրժուական անտոգոնիստական կարգերը, մինչև վերջ պայքարը շեշտակիորեն պիտի շարունակել նացիոնալիզմի ու դոգմատիզմի դեմ:

Փոստի Մադաթի ճառը մեծ ազդեցություն գործեց լեռնակերտցիների վրա և քիչ անց լուսանկարչական արկղ-ապարատը հրապարակ քարշ տվեց Ֆոտո Գավրուշն ու ձեռքը բարձրացրեց.

- Մոմե՛նտ, նկարում եմ:

Ապարատը չխկաց, Նալբանդ Աթունը նկատեց Թարխան Թերխաշյանին ու Մկր. Սազանդարովին, մատը ատրճանակի փողի պես տնկեց ու կրակեց.

- Դուք ուպուրտունիստներ եք, մենք՝ ավտոմոբիլիստներ:

...Ուրեմն այսպես, նախ հեռախոսը մուտք գործեց Լեռնակերտ, հետո այն պատմական ավտոմոբիլը, որից այսօր դժբախտաբար ոչինչ չի մնացել, այնուհետև Մկր. Սազանդարովի գրամաֆոնը, կամ ինչպես Նալբանդ Աթունն է ասում՝ ճլվստափոնը:

Դա մի հրաշք գրամաֆոն էր, երևի տեխնիկայի նախավերջին կամ ուղղակի վերջին խոսքը, որն առավոտից մինչև ուշ երեկո նույն երգն էր խզխզացնում:

Գացեք տեսե՛ք, ով է կերել զէծ,
Գացին տեսան գելն է կերել զէծ:

Բայց Մկր. Սազանդարովի «տեխնիկայի վերջին խոսքը» չդիմացավ քննության, իր տեղը զիջեց Թարխան Թերխաշյանի Չանչախ (Մուշեղ Չանչախովի ականջը կանչի) անունով թութակին, որը գիշեր-ցերեկ հայհոյում էր Դուքան Սեդրակին, Մկր. Սազանդարովին, Գալիֆե Գուգուշին, Մամբրե Խաբարդանովիչին, Հերիքնազ Առնավուդովնային: Հայհոյում էր, ինչպես ամենավերջին խուլիգանը և այնպիսի խոսքեր էր ասում, որ Հերիքնազ Առնավուդովնան մատները խրում էր ականջներն ու ճչում.

- Վո՞ւյ, այդ Ջունգլիստանից փախածը, այդ Թարխան Թերխաշյանը էս ինչե՞ր է սարքել:

Բայց ահա եկավ ՌԱԴԻՈՆ:

Չէ, նախ Փոստի Մադաթը եկավ Բաքվից, ջախջախեց Մկր. Սազանդարովի բուրժուական գրամաֆոնն ու Թարխան Թերխաշյանի քաղքենիական թութակը, կոչ արեց՝ «Բոլորս մի մարդու պես հայացքներս թեքենք դեպի ռադիոն»:

Մոնտյոր Բագրատն առաջին ռադիոապարատը կախեց Ուստա Ծատուրի դարբնոցի կողքի հեռագրասյունից, Նալբանդ Աթունը ականջը հպեց հեռագրասյունին, լսեց լարերի տժժոցը, գլուխն օրորեց.

- Չենը գալիս է, մենակ չեմ հասկանում, թե ինչ լեզվով է խոսում:

- Պա՞հ, էնպես էլ ռադիո եք ասում,- աչքերը ճպճպացրեց Դուքան Սեդրակը:- Թող ձեն հանի էլի՞, բա ինչի՞ ձեն չի հանում:

- Թե ձեն հանեց,- խոսեց Գալիֆե Գուգուշը,- Մեծ մեյդանում կկանգնեմ և շան նման կհաչեմ: Թե չհաչեմ, հազար ամոթ ինձ:

Եվ հանկարծ տարօրինակ ապարատը թշշաց ու սկսեց խոսել.

- Խոսում է Մոսկվան...

Սազանդարովը նայեց Գալիֆե Գուգուշին և նրա հայացքն ասում էր՝ ո՞ւմ ես սպասում, գնա Մեծ մեյդանում կանգնիր և շան նման հաչիր: Դուքան Սեդրակը նայեց աջ ու ձախ և, ոտքերը քարշ տալով, թողեց ասպարեզը, իսկ Թարխան Թերխաշյանը թևքով մաքրեց ճակատի քրտինքն ու մռլտաց.

- Դաաա՞...

ԸՆԿԵՐ ԼԻԿԿԱՅԱՆԸ

Ապրիս, ընկեր լիկկայան,
Համ ես դարձա գրագետ,
Համ էլ ազին ու այան:
Նալբանդ Աթուն

Պողոսը ակումբի ճակատից լոզունգ կախեց՝ «Կորչի՛ անգրագիտությունը, կեցցե՛ Լիկկայանը»: Վերջին բառը մեծատառով էր գրել և երևի դրա համար էլ Նալբանդ Աթունը Ստեփանակերտի առաջին լիկկայանի առաջին ուսուցչուհի ընկեր Վերգինեին սկզբում ընկեր Լիխկարյան էր անվանում:

Լիկկայանը բացելուց առաջ, ակումբում մեծ ժողով եղավ, որտեղ ընկեր Ալեքսանը խոսեց գրագիտության կարևոր դերի ու նշանակության մասին, վերջում կոչ արեց՝ «Կեցցե՛ համատարած գրագիտությունը: Բոլորս դեպի լիկկայան»:

Նալբանդ Աթունը կոշտ ու կոպիտ մատներով կավիճը սեղմեց գրատախտակին, կավիճը փշրվեց: Մատիտը սեղմեց թղթին, մատիտի սուր ծայրը ջարդվեց: Թափով գրիչը թաթախեց թանաքամանի մեջ, թանաքը ցայտեց, կեղտոտեց իր և Ուստա Ցատուրի ձեռքերը:

- Աթուն, մի քիչ կամաց,- ասաց Ուստա Ցատուրը,- սա քեզ համար բոյախանի կարաս չի, թանաքաման է:

Ընկեր Վերգինեն բռնեց Նալբանդ Աթունի ձեռքը, ժպտաց քնքշանքով ու ասաց.

- Վարպետ Հարություն, գրիչն ահա այսպես են պահում: Մի սեղմիր, ազատ, ազատ... Դե հիմա էլ դու ինքդ փորձիր:

Վարպետ Հարությունը մինչև նկարեց իր անվան սկզբնատառը, կորավ քափ ու քրտինքի մեջ և մտքում ասաց՝ «Լավ է միանգամից չորս գոմեշ նալեմ, քան մի տառ գրեմ»:

- Հիմա էլ «Թ» գրիր,- հուշեց ընկեր Վերգինեն:

- Չէ, ես էդ տառը չեմ գրի,- գլուխը շարժեց Նալբանդ Աթունը:

- Ինչո՞ւ:

- Ախր, ընկեր Լիխկարյան, ես ինչի պիտի էդ Թարխան Թերխաշյանի անվան տառը գրեմ: Փիս մարդ է:

Ընկեր Վերգինեն ծիծաղեց, այնքան գեղեցիկ ծիծաղեց, որ երբ Նալբանդ Աթունը նայեց նրա ճերմակ ատամներին ու ժպտուն աչքերին, մտածեց՝ «Լավ աղջիկ է, մեր Վարդանի համար պիտի առնեմ»:

Վարդանը Նալբանդ Աթունի կրտսեր եղբայրն է, Լեռնակերտի առաջին ինժեները, որ նոր էլեկտրակայան կառուցելու հարցով մեկնել էր Մոսկվա:

Ուստա Ծատուրը, Ուստա Պողոսը, Փոստի Մադաթը և էլի մի քանի հոգի աչքաբաց սովորողներ էին, այսինքն՝ էն գլխից էլ գրել-կարդալն իմանում էին, դրա համար ընկեր Վերգինեն նրանց միանգամից փոխադրեց չորրորդ դասարան: Ուստա Ծատուրն իր բանիմացությամբ մի երկու գլուխ բարձր էր նույնիսկ Փոստի Մադաթից. այնպիսի հարցեր էր տալիս ընկեր Վերգինեին, որ Փոստի Մադաթի բերանը մնում էր բաց: Ասում էր՝ ընկեր Վերգինե, ախր այդ ինչպե՞ս եղավ, որ Փարիզի կոմունան տապալվեց: Բա Ֆրանսիայի բանվոր դասակարգն ի՞նչ բանի էր: Ի՞նչ տարբերություն կա բուրժուական և սոցիալիստական հեղափոխության միջև, և որն է Պլեխանովի էական սխալը:

- Մեր Ծատուրը պրոֆեսորի խելք ունի,- հպարտանում էր Նալբանդ Աթունը:- Մի տեսեք ի՜նչ է ասում, է՜, էական: Ես էլ պակաս գլուխ չունեմ, բայց շատ ափսոս, կըրթս մի քիչ պակաս է:

Եվ նա իր պակաս «կըրթը» լրացնելու նպատակով սկսեց ավելի շատ մատիտներ ու գրչածայրեր ջարդել: Տանը նրան աղջիկն էր օգնում, արտելում՝ Ծատուրն ու Պողոսը: Պատահում էր, դասերը սկսվելուց առաջ, ակումբի բակից կանչում էր.

- Աղջի՛, Վարսեն:

- Լսում եմ, ապե՜ր:

- Ցավդ տանեմ, էն քիթը ծուռ տառի անունն ի՞նչ է:

Նալբանդ Աթունը մի տարում սովորեց այբուբենի տառերը, և մի օր ընկեր Վերգինեն նրա թևի տակ մի հաստ գիրք տեսավ ու հարցրեց.

- Վարպետ Հարություն, այդ ի՞նչ գիրք է:

- Մեր Վարդանի գրքերից է, ուրեմն ընկեր Կարլ Մարքսն է գրել, անունը «Կապիտալ» է:

Ընկեր Վերգինեն ներողամտաբար ժպտաց.

- Վարպետ Հարություն, «Կապիտալը» հիմա քեզ համար դժվար կլինի:

- Բա ինչի՞ մեր Վարդանի համար դժվար չի:

- Վարդանը բարձրագույն կրթություն ունի:

Քանի որ խոսք բացվեց Վարդանի մասին, Նալբանդ Աթունը նայեց շուրջը և, ինչպես լիկկայանում, մատը տնկեց վեր.

Ընկեր Վերգինե, կարելի՞ է մի հարց:

- Խնդրեմ:

- Նշանվա՞ծ ես:

- Չեմ հասցրել,- շիկնեց ընկեր Վերգինեն:

- Եկ մեր Վարդանի հետ պսակենք, համ ինձ դարձրու համատարած գրագետ, համ՝ մերոնց:

Ընկեր Վերգինեն ծիծաղեց, և քանի որ գեղեցիկ էր ծիծաղում, նրա ծիծաղն անմեղ աղջկա ծիծաղ էր, Նալբանդ Աթունը չվիրավորվեց:

Վարդանը Մոսկվայից վերադարձավ, շուտով ձորում որոտաց դինամիտը, Թարխան Թերխաշյանը նայեց Մկր. Սազանդարովին ու ասաց.

- Սկսվեց:

- Ի՞նչը սկսվեց,- բուլղարական տաքտեղ քիթը շարժեց Մկր. Սազանդարովը:- Չլինի՞ թե կռիվ է:

- Կռիվ է, էն էլ թունդ կռիվ:

- Ո՞ւմ դեմ:

- Իմ դեմ, քո դեմ, Մամբրե Խաբարդանովիչի դեմ, Դուքան Սեդրակի դեմ, Լեռնակերտի դեմ:

- Ես ձեր ցուցակում չկամ,- հերսոտվեց Մկր. Սազանդարովը:- Ինձ էդ ցուցակից հանիր:

Գալիֆե Գուգուշը ձորի գլխին կանգնեց, նայեց ժայռերի հետ կռիվս տվող բանվորներին ու դարձավ Դուքան Սեդրակին.

- Ախր, ցավդ տանեմ, ջրից ո՞նց կարող են լույս ստանալ, էսքան տարի բաղնիս եմ պահել, ինչի՞ մի անգամ էդ լույսը չտեսա: Թե էդ բանը գլուխ գա, կգնամ Մեծ մեյդանում կանգնեմ, կովի պես բառաչեմ:

Եվ լույսը եկավ ու հասավ Լեռնակերտ: Ստվերները կամաց-կամաց չքացան: Մեծ մեյդանում երկու հարյուր մոմանոց լապտերը ճառագեց, ընկեր Ալեքսանը սեղմեց ինժեներ Վարդանի ձեռքը, Ուստա Պողոսը կարդաց իր ոտանավորը.

Լեռնագէս, Լեռնագէս,
Սիրտս քեզ, հոգիս քեզ,
Մեր սիրուն քաղաքը
Դարձել է մի պարտեզ:

Ուստա Ծատուրը այդ դեպքից մի շաբաթ անց գրեց իր օրագրում. «Լեռնագէսի կանաչ-կարմիր լույսի տակ տեղի ունեցավ ընկեր Վերգինեի և Վարդանի հարսանիքը: Թամադան ընկեր Մատվեյն էր: Մեր Աթունի տրամադրությունը բարձրացավ, խոսք խնդրեց ու էսպիսի մի ոտանավոր վեր կալավ.

Ո՞վ կարող է հասնել մեզ,
Հիմա ունենք Լեռնագէս.
Ապրիս, ընկեր լիկկայան,
Համ ես դարձա գրագետ,
Համ էլ ազին ու այան:

Լեռնակերտը բանաստեղծների քաղաք է դառնում»:

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ

Թեհրանաբնակ Միհրան Չանչախովը, որդին Մուշեղ Դոմբազովիչ Չանչախովի, նայեց աշխարհագրական քարտեզին, մատը շարժեց Սև ու Կասպից ծովերի, Քուռ ու Արաքս գետերի արանքում, գտավ Ղարաբաղը, բայց Լեռնակերտը չգտավ:

- Ծերունին,- ասաց,- իր կյանքի վերջին օրերին երևի խելքը թռցրել էր. աշխարհում Լեռնակերտ անունով քաղաք չկա:

Ծերունին նրա հանգուցյալ հայրն էր, Մուշեղ Չանչախովը, որ մահվան մահճում հաճախ էր հիշում Ղարաբաղը և որդուն խորհուրդ տալիս՝ կգնաս քո աչքով տեսնես Լեռնակերտը... Պարտական մնաս, թե չտեսնես:

Անգլիացի միստեր Սենգիստոնի թոռը՝ Չարլզ Սենգիստոնը, իր մառախլապատ Լոնդոնում կարդաց պապի հուշերը, ուր գրված էր. «Ես Շուշի քաղաքի բլրալանջից հեռադիտակով տեսա Լեռնակերտը: Օ՛ քեյ, ես այն կդարձնեմ իմ սեփական կալվածքը»:

Չարլզ Սենգիստոնը քարտեզի վրա գտավ Կովկասը, ապա Բաքուն, Երևանը, Թբիլիսին, Բաթումին, Կիրովականը, Լենինականը, բայց Լեռնակերտը չգտավ, թափ տվեց ձեռքը.

- Երևի հանգուցյալի աչքին է երևացել,- ասաց,- Կովկասում Լեռնակերտ անունով քաղաք չկա:

Փարիզում հրատարակվող հայատառ մի թերթում պարոն Սիլվեստը հանդես եկավ հոդվածով, ուր իրեն ներկայացնում էր ղարաբաղագետ: Նա ընթերցողների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ Ղարաբաղ կոչվածը լեռնոտ մի երկիր է, ուր միայն ապրում են խաշնարածներ, և միակ պտղատու ծառը թթենին է:

Մի զբոսաշրջիկ, որի պապը եղել է նախկին լեռնակերտցի, տասնինը կամ քսան թվականներին չվել է Ղարաբաղից՝ օտար ափերում բախտ որոնելու... Մի զբոսաշրջիկ, որի երակներում հոսում էր ղարաբաղցու արյունը, բայց նա չգիտեր, թե դա ինչ արյուն է, ոտք դրեց մեր հրաշք հողին, նայեց շուրջն ու հարցրեց մի պատանու, որ թոռն էր Նալբանդ Աթունի թե Ուստա Ծատուրի.

- Ներեցեք, ինչպե՞ս է կոչվում այս քաղաքը:

- Լեռնակերտ:

- Իսկ որտե՞ղ է հին Լեռնակերտը:

- Հին Լեռնակերտը հանգչում է նոր Լեռնակերտի ոտքերի տակ... Դուք ի՞նչ եք կորցրել հին Լեռնակերտում:

- Իմ հարազատ պապի ոտնահետքերը:

- Ցավում եմ,- պատասխանեց պատանին,- դու մեր քաղաքում կարող ես գտնել միայն նրանց ոտնահետքերը, ովքեր հին Լեռնակերտը դարձրել են նոր Լեռնակերտ:

ԷՊԻԿԱԿԱՆ ԱՆՏՐԱԿՏ

Ահա և ընթերցող, մենք ետևում թողեցինք հին Լեռնակերտը և հասանք նոր Լեռնակերտ: Դա երկար ու դժվարին մի ճանապարհ էր, սակայն բոլոր դեպքերում մեզ համար ուղեցույց փարոս էր Ուստա Ծատուրի հանրահայտ «Օրագիրը» և Նալբանդ Աթունի այն միտքը՝ թե մի բան, որ սկսում ես, պիտի վերջացնես: Գուցեև Ուստա Ծատուրն իր «Օրագրում» գույները խտացրել է մի քիչ, և հեղինակն էլ ինչ-որ տեղ զոռ է տվել իր երևակայությանը: Բայց շարունակենք:

Լեռնակերտը՝ ծառերի, ծաղիկների, երգ ու ծիծաղի այս քաղաքն ունի մուտքի երկու դուռ: Գլխավոր մուտքը սկսվում է Բաղեն շենից, ուր ճանապարհի խաչմերուկում կանգնած է հսկա մի առյուծ՝ քարե պատվանդանին: Երկրորդ մուտքը սկիզբ է առնում Մազե կամրջից: Այստեղ ոչ մի Մազե կամուրջ չկա, կողք-կողքի երկու լարակոփ կամուրջներ են, հին կամրջի տակ Գորոդովոյ Անտոնի գյուլն է: Լեռնակերտի առաջին և վերջին ոստիկանը միշտ լողանում էր այդ գյուլում և, ասում են, մահից առաջ նա կտակել էր՝ երբ շունչս փչեմ, աճյունս կհանձնենք Մազե կամրջի գյուլին:

Մտնում ես Լեռնակերտ, և առաջինը քեզ ողջունում են բժշկական ուսումնարանի ուսանողուհիները: Այո, այո, «ուհիները» և ակամա մտածում ես՝ հավանաբար այս ուսումնարանում ընդունում են միայն Ղարաբաղի գեղեցկուհիներին: Եթե Գալիֆե Գուգուշը ջահել լիներ, ինչպիսի՜ ոգևորությամբ կտաներ այս սիրուհիների ցավը. «Ա՛յ գյոզալներ,- կասեր,- էնքան ապրեմ, որ դուք բժիշկներ դառնաք, ընկնեմ ձեր նշտարի տակ, մեռնեմ՝ դարդս չի...»:

Ի դեպ, երբ ուսումնարանը նոր էր բացվել, բժիշկ Առաքել Սերմաքաշյանին հրավիրեցին դասավանդելու մարդու անատոմիա: Հարգարժան բժիշկը ձեռքի տակ չունենալով մարդակազմության վերաբերյալ նկարներ, անընդհատ գորտեր էր հերձում և փորձում ապացուցել, որ կապկից առաջ, մարդու նախահայրը գորտն է եղել: Սերմաքաշյանի մանկավարժական գործունեությունը շատ կարճ տևեց. ապագա բժշկուհիներն ու բուժքույրերը նրան ձեռ էին առնում. անվանում գորտաբան, ցնդած հեքիմ և այլն:

Կարո՞ղ եք Լեռնակերտ մտնել, հանկարծ չայցելել Ուստա Ծատուրին ու Նալբանդ Աթունին: Դա կլինի անարդարություն: Եթե Ուստա Ծատուրը Լեռնակերտի կենդանի հանրագիտարանն ու պատմությունն է, ապա Նալբանդ Աթունը այդ պատմության ու հանրագիտարանի փաստացի հաստատումն է ու պատասխանատու խմբագիրը:

Լեռնակերտը լեռնակերտցիների համար նույնն է, ինչ Մոսկվան՝ մոսկվացիների, Երևանը՝ երևանցիների համար: Նրանք իրենց սիրուն քաղաքը զարդարել են ծառերով ու ծաղիկներով, շուրջը ստեղծել այգեստաններ: Քայլում ես քաղաքի կենտրոնական պողոտայով՝ ծառեր են, անցնում ես Թումանյանով՝ ծառեր են, մտնում ես Ստեփան Շահումյանի անվան քաղաքային մարզադաշտ՝ ծառեր են: Բայց տարօրինակն ու զարմանալին այն է, որ լեռնակերտցի բանաստեղծները մինչև այսօր իրենց սիրուն քա-

ղաքի մասին մի այնպիսի բանաստեղծություն չեն գրել, որ Ուստա Ծատուրը կարդա ու ասի. «Ուխա՜յ, հոգիս փառավորվեց»:

Իսկ այդ տարիներին Լեռնակերտում յուրաքանչյուր գրագետ մարդ ոտանավոր էր գրում: Առանձնապես լայն տարածում էին գտել սոնետներն ու նոնետները, տերցիններն ու տրիոլետները: Իրենց նորարար համարող պոետները գրում էին հարյուր, նույնիսկ երկու հարյուր տողանոց սոնետներ, տասնչորս տողանոց տրիոլետներ, գազելներով պոեմներ, ինչպես նաև՝ պոեմներով գազելներ: Շառաչուն հանգերի համար շատ մեծ պայքար էր ծավալվել:

Շուտով գյուղատնտեսական տեխնիկումը դարձավ քաղաքի բանաստեղծական կենտրոնը: Ապագա ագրոնոմներն ու անասնաբույժներն իրար հետ խոսում էին չափածո, ժողովներում չափածո ելույթներ ունենում, չափածո նամակներ գրում իրենց սիրածներին, ուսուցիչների տված հարցերին պատասխանում չափածո: Ճիշտ այնպես, ինչպես դրամատիկական պոեմներում: Նրանք առանձնապես ուշադրություն էին դարձնում խոսքի արտաքին գեղեցկությանն ու շառաչուն հանգերին: Այսպես.

ՈՒՍՈՒՑԻՉ- Ասա՛, մայր հողին ի՞նչ կխոստանաս,
Որ հեկտարներից շատ բերք ստանաս:
ՈՒՍԱՆՈՂ - Այն խոր կիերկեմ խոփով իմ ցնծուն
Եվ ժամանակին տամ պարարտացում:
ՈՒՍՈՒՑԻՉ - Դու, ահավասիկ, անասնաբույժ ես,
Կովը դաբաղից ինչպե՞ս կբուժես:
ՈՒՍԱՆՈՂ - Մենք նոր կովերի հզոր ցեղ ունենք
Եվ դաբաղի դեմ հուժկու դեղ ունենք:

Մկր. Սազանդարովի գրելացավը նույնպես բռնեց, և որպեսզի ունենա իր ներշնչման աղբյուրը, սիրահարվեց Մեռել լողացնող Մանգասարի քրոջը՝ Սուսամբարին ու նէպից հիշատակ մնացած հաշվապահական մատյանում սկսեց արտագրել Օմար Խայամի քառյակները: Ճիշտ է, նա չկարողացավ Օմար Խայամ դառնալ, բայց դրա փոխարեն կոնծելու մեջ այնքան առաջադիմեց, որ գինին ուղղակի շշից էր խմում:

Գրական դիսպուտներն ու գրական դատերը տեղի էին ունենում տեխնիկումի ակումբում, և այն վարում էր շռնդալից բանաստեղծ Ջումի Ջուրշատունցը: Պատահում էր, որ գործը հասնում էր բռնցքամարտի ու ըմբշամարտի, և տեխնիկումի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Աղաբեկ Գագունցը հաղթողներին ընդգրկում էր սպորտային հատուկ սեկցիաներում, ասում. «Այ լակոտներ, հերի՛ք է որքան ոտանավորներ եք գրել, հիմա էլ սպորտով զբաղվեք»:

Ջումի Ջուրշատունցն իրեն համարում էր Լեռնակերտի առաջին պաշտոնական բանաստեղծը: Դա նիհար, շիլաչք, ծռված բերանով մի երիտասարդ էր, ուղղակի Մեռել լողացնող Մանգասարի կենդանի պարոդիան: Հագնում էր ժանգագույն կոստյում և փողոցով այնպես էր քայլում, կարծես ոչ ոքի չի նկատում:

Գրական դատը հրապուրեց նաև Մկր. Սազանդարովին (գրական անունը՝ Մկրտիչ Սազանդար) և որոշեց մեղադրել Օմար Խայամին, որ մեծ բանաստեղծ լինելով հանդերձ, թոցրել է իր՝ Մկր. Սազանդարովի մտահղացումները և քառյակներ սարքել: Վկան պիտի լիներ Գալիֆե Գուգուշը, բայց վերջինս իր տեղը զիջեց Վարսավիր Արտուշին: Արտուշը, որ ընդհանրապես իր մասնագիտությանը համապատասխան փափուկ սիրտ ուներ, հրապարակայնորեն հայտարարեց՝ «Օմար Խայամը լավ մարդ է, Խերսոնում եղած ժամանակս մի քանի անգամ թրաշել եմ նրան և «Եվրոպա» ռեստորանում միասին մի պոչինկա գինի ենք խմել»...

Բայց դու ներիր ինձ, ընթերցող, որ ես այստեղ ընդհատում եմ պատմությունս: Մեղավորը Մամբրե Խաբարդանովիչն է, որ այդպես հանկարծակի ինքնասպանություն գործեց: Դա սույն վիպակի համար չնախատեսված մահ էր:

Այն տխուր օրը, երբ Մամբրե Խաբարդանովիչը հարստահարվեց, գտավ, որ իր ապրելն ավելորդ է: Նա սպասում էր մի նոր նէպի, բայց նոր նէպ չեղավ: Դա ամռանն էր, պայծառ մի օր, Պաժառնի Վաղոն Մամբրե Խաբարդանովիչի դիակը հանեց Լեռնագէսի ջրավազանից:

Մամբրե Խաբարդանովիչի մահը ցնցեց... իհարկե, երկրաշարժ չեղավ, այդ ցնցումն այնքան աննշան էր, որ Մեռել լողացնող Մանգասարը բոլորովին չզարմացավ. նա հանգուցյալին պառկեցրեց տախտակների վրա ու սկսեց երեսերանք տալ. «Տեսար, չէ՞, Խաբարդանի տղա Մամբրե Խաբարդանովիչ, դու էլ գնացիր: Հը՛, հիմա ի՞նչ կասես՝ քիթդ այնպես էիր ցցել, ոնց որ աշխարհի տերը լինեիր: Վաղվանից կոստյումդ ես պիտի հագնեմ. մի քիչ հնացել է, բայց ոչինչ... Խոսքը մեր մեջ, Խաբարդանովիչ, դու լավ մարդ չես: Աշխարհը կքանդվե՞ր, որ էն բոլ-բոլ փողերից մի քանի մանեթ էլ ինձ տայիր: Հիմա ո՞նց ես, որ չլողացնեմ, թողնեմ՝ ինչպես կեղտոտ եկել ես, կեղտոտ ապրել ես, էդպես կեղտոտ էլ ներկայանաս տիրոջ արդար դատաստանին»:

Անշուք էր Մամբրե Խաբարդանովիչի թաղումը. ոչ ոք դամբանական չասաց, քելեխի ներկաները մի երկու բերան հառաչեցին, հիշեցին հանգուցյալ Գորոդովոյ Անտոնին ու Մամբրե հայրիկին, գտան, որ աշխարհում ամեն ինչ անցավոր է, և ինչպես ապրելը, այնպես էլ մահը, օրինաչափ երևույթ է այս անցավոր աշխարհում:

ՆՈՑԱ ԿԵՆԱՑԸ

Կանաչավանն առաջներում կոչվում էր Հափուռ մահլա: Մելիք Մուջուգբեկյանն ուզում էր այստեղ թոկ ու չվանի փաբրիկ բացել, Արջ խեղդող Արշակը ծմակից գոռաց. «Արա՜, հե՜յ, դու ո՞ւմ շունն ես, որ ուզում ես քո թոկ ու չվանով մեր Մալինկի Թիֆլիզը կեղտոտել: Դե հաշտուփուշտադ քաշիր, քանի կարկաժդ չեմ ճղել»:

Կանաչավանի ներքևի թաղը կապված է Քարաշենի հետ, վերին թաղը՝ Լեռնակերտի: Իսկ այդ նշանակում է, որ կանաչավանցիք հոգով գյուղացի են, սրտով՝ բանվոր դասակարգ: Էդ մասին Ֆոտո Գավրուշը էսպիսի մի ոտանավոր է հորինել.

Համ քաղաք ենք, համ գյուղ ենք,
Համ մետաքս ենք, համ յուղ ենք,
Լեռնակերտը կանաչ ծառ,
Մենք այդ ծառին մի ճյուղ ենք:

(Ուստա Ցատուրի օրագրից)

Հափուռ մահլայի ամենահարգված մարդը Այս է տապան Համբարձին է, մի արհեստավոր, որ գերեզմանաքարեր էր տաշում, վրան գրում. «Այս է տապան լուսահոգի...» և հասկանալի պատճառով բաց էր թողնում ապագա հանգուցյալի անուն-ազգանունը, ծննդյան ու մահվան թվերը: Համբարձին դժգոհ էր իր արհեստից. «Սա ի՞նչ փեշակ է,- ասում էր,- բա մարդ էլ հանգուցյալների վրա մի մեծ քար դնի ու ասի՝ հողը ձեզ վրա թեթև լինի՞»:

Հափուռ մահլան փոխվեց, շենք ու շնորհքով ավան դարձավ: Այս է տապան Համբարձին մի քար տաշեց, վրան գրեց. «Այս է տապան լուսահոգի Հափուռ Մահլայի», տարավ դրեց Արջ խեղդող Արշակի ղարադամի կտրին ու ասաց. «Պրծա՜վ, սա իմ վերջին տապանաքարն է, սրանից դենը նոր կառուցվող շենքերի համար եմ քար տաշելու»:

Խոսել կանաչավանցիների մասին և հանկարծ մոռանալ Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչին, նշանակում է մտնել պատկերասրահ ու չտեսնել աշխարհահռչակ նկարչի գլուխգործոցը կամ լինել եգիպտոսում, անտարբեր անցնել աշխարհի այն յոթ հրաշալիքներից մեկի կողքով, որ կոչվում է Քեոփսի բուրգ:

Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը ոչ միայն Կանաչավանի, այլև Լեռնակերտի ամենապերճախոս և փաստական հարուստ գիտելիքների տեր մարդն է: Նա այնքան գեղեցիկ է խոսում, որ հարսանքավորներն ուտելխմելը մոռանում, բերանները բաց նրան են լսում: Իսկ թաղումների ժամանակ այնպես է անմահացնում հանգուցյալներին՝ Գալիֆե Գուգուշն ուզում է կյանքում մի անգամ մեռնել, այնպես մեռնել, որ կարողանա լսել, թե Բադալ Մարկոսովիչն ինչպիսի ընտիր բառերով է մեծարում իրեն: Հետո մարդիկ զարմանում են նաև, որ այդ պերճախոս մարդը հասարակ հաշվապահ է և ոչ թե մեծագույն պատմաբան կամ գրող: Առանձնապես հիացած էր Նալբանդ Աթունը. «Մեր էս Բադալ Մարկոսովիչի գլուխը գլուխ չի է՜,- ասում է,- գլուխ չի, քաղաքային գրադարան է, ինչ ուզես՝ կգտնես»:

Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչի ղեկավարած հարսանիքներն ուրիշ համ ու հոտ ունեն. նրա թավշյա ձայնը, հռետորի կեցվածքը, աչքերի փայլը... Ահա նա բարձրանում է տեղից դանդաղ ու հանդիսավոր, մի տիրական հայացք է նետում հարսանքավորների վրա ու սկսում: Հեռուներից է սկսում, այնքան հեռուներից, որ Փոստի Մադաթն իր գիտելիքներին նոր գիտելիքներ բազմապատկելու հեռանկարով, գրպանից հանում է մատիտն ու բլոկնոտը, նշումներ կատարում:

- Հարսանյաց հանդեսներն այնքան հին են,- ասում է Բադալ Մարկոսովիչը,- որքան հին է այս մոլորակը, որ կոչվում է Երկիր: Դեռևս նախնադարյան համայնական կարգերում, երբ դեռևս ոչ մի խոսք չէր կարող լինել քաղաքակրթության մասին, սերը, որպես մարդկային սրտի վեհագույն զգացում, գոյություն ուներ: Իսկ երբ սերը գոյություն ուներ, նշանակում է գոյություն ուներ նաև ամուսնությունը, այդ պարտադիր ոսկե շղթան, որ սուրբ կապանքներով շղթայում է երկու հրաբորբ սրտերն ու ասում՝ և եղիցե լույս:

Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը վերջապես Քարե դարից գալիս հասնում է Պղնձե դարին, կամաց-կամաց մոտենում երկաթե դարին, և դեռ չհասած Ոսկե դարին, Փոստի Մադաթը նշումների տետրակը թե բլոկնոտը ծնկներին ննջում ու այնպես է խռմփացնում, որ Գալիֆե Գուգուշը ստիպված նկատողություն է անում. «Արա՜, ընկեր Մադաթ, ի՞նչ ես խեղդվում, չե՞ս կարողանում մարդավարի խռմփացնել, հարսանիքը խանգարում ես»: Ինչ կարող ես անել, աշխարհում ամեն մարդ ունի իր թերությունը. Փոստի Մադաթի թերությունն էլ հարսանիքներում ու ժողովներում քնել-խռմփացնելն է:

Եթե Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը հարսանիքների անփոխարինելի թամադան է, ապա Կտոն պրիշոլ Պավլին թամադայի անփոխարինելի օգնականն է՝ սեղանը ծաղկեցնելու գծով: Նա արհեստով թիթեղագործ է, և մի հետաքրքիր սովորություն ունի՝ փողոցում ում հանդիպում է, ծանոթ լինի, թե անծանոթ, թևերը բարձրացնում է ու գոչում. «Օ՜յ, օ՜յ, օ՜յ, կտո՞ պրիշոլ, կտո՞ պրիշոլ... Պրիվետ իզ դալոկովո Կափկազա բեզ աթկազա»: Դա նրա և՛ բարի լույսն է, և՛ բարի օրը, և՛ բարի երեկոն: Ռուսերեն էլ մի քիչ գրաճանաչ է, Պուշկինի «Ձմռան երեկոն» այնպես է արտասանում, որ եթե հեղինակը կենդանի լիներ ու լսեր, կասեր՝ բանաստեղծությունը ոնց որ իմն է, բայց թե ինչ լեզվով է արտասանում, չեմ կարող ասել:

Կտոն պրիշոլ Պավլին, որ հրաշալի ձայն ունի, այդ չի կարող ժխտել նույնիսկ Ղարաբաղի հռչակավոր Խանանդա Շաշան: Տնաշենի տղան այնպես է նայում Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչին ու կլկլացնում. «Դուն էն գլխեն իմաստուն իս, խիլքդ հիմարին բաբ մի անի», որ Բադալ Մարկոսովիչը կուրծքը հպարտ ցցում է, գլխով համաձայնության նշան անում, այսինքն դու ճիշտ ես, ես էն գլխից էլ իմաստուն եմ եղել, հարկ եղած դեպքում, հանուն մեր Կանաչավանի, իմաստուն էլ կմեռնեմ:

Գալիֆե Գուգուշը պնդում է, որ Կտոն պրիշոլ Պավլու կոկորդը շատ հազվագյուտ կոկորդ է, իտալացի մի հայտնի պրոֆեսոր մեծ գումար է խոստացել այդ կոկորդի համար: Դուքան Սեդրակը զարմանքից չռում է աչքերը:

- Իսկ Պավլու կոկորդը պրոֆեսորն ի՞նչ պիտի անի:

- Ուզում է ուսումնասիրել, տեսնի դա ի՞նչ բողազ է, որ էդպիսի անուշ ձայներ է հանում:

- Է՜, թող Խանանդա Շաշայի կոկորդն ուսումնասիրի:

- Խանանդա Շաշայի կոկորդը ստից բան է:

Կանաչավանի նշանավոր մարդկանցից է նաև էվրիկա Արտուշը, որի միտքը գիշեր-ցերեկ բևեռված է մի շատ կարևոր գյուտի վրա՝ ստեղծել հավերժական շարժիչ: Այսինքն՝ այնպիսի մի շարժիչ, որ առանց նավթի, բենզինի, մազութի, էլեկտրական հոսանքի՝ աշխատի: Նա այդ նպատակով հավաքել է բազմաթիվ անիվներ ու թափանիվներ, տարբեր չափսերի առանցքակալներ ու ավտոմեքենաների մասեր, և ամեն օր, երբ աշխատանքից տուն է գալիս, փակվում է իր փոքրիկ արհեստանոցում, սկսում աշխատել: Քանդում է, հավաքում է, հավաքածը նորից է քանդում ու հավաքում: Ասում են՝ նա պրակտիկապես գտել է հավերժական շարժիչ ստեղծելու եղանակները, բայց թեորիապես չի կարողանում ապացուցել, թե ինչպես է գտել այդ եղանակները:

Կանաչավանցիների հարգելի հյուրն է Ֆոտո Գավրուշը: Կարգ է, որտեղ հարսանիք, այնտեղ էլ Ֆոտո Գավրուշը՝ իր եռոտանի ապարատով: Այն պահին, երբ Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը առաջարկում է խմել «երկու անթառամ ծաղիկների» կենացը, Ֆոտո Գավրուշը ներս է քաշում ապարատը, ձեռքը հանդիսավոր կերպով բարձրացնում ու գոչում. «Մոմենտ, չշարժվե՛լ, անմահացնում եմ»:

Ֆոտո Գավրուշը երևի Լեռնակերտի միակ տղամարդն է, որ երդվում է իր կնոջ անունով. «Հեղինեիս ազիզ արևը վկա, էնպես մի նկար հանեմ, որ հայիլ-մայիլ մնաս»: Ընդհանրապես արժե երդվել այդպիսի կնոջ անունով, մի գլուխ արու զավակներ է պարգևում Ֆոտո Գավրուշին: Նալբանդ Աթունն ասում է՝ մեր էս Գավրուշի մոտ երեխաներ ստեղծելն ավելի հեշտ է ստացվում, քան պատկերք քաշելը: Այստեղ է, որ Դուքան Սեդրակը նախանձից ճաք-ճաք է լինում, զինքը ցրիվ է տալիս, քիչ է մնում թոկը գցի վիզը՝ խեղդվի: «Ա՛յ բալամ,- ասում է,- մեր Նոյեմն էլ է շնչում նույն օդը, նույն ջրից խմում, մենակ չեմ հասկանում, թե էդ ինչիդ է՝ իմ կնիկը փիս «խոզի նման մենակ էգեր է ծնում»:

- էդ նրանից է,- բացատրում է Նալբանդ Աթունը,- որ Ֆոտո Գավրուշը ազնիվ աշխատավոր է, իսկ դու կեղտոտ՝ նավթի հետ ջուր ես խառնում:

Այդ տարիներին Կանաչավանում հարսանիքներն այնքան շատ էին, որ Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը համատեղության կարգով մի օրում երկու-երեք հարսանիք էր ղեկավարում, ցուցադրում թամադայական իր հրաշալի տաղանդը, Փոստի Մադաթը մասնակցում էր բոլոր հարսանիքներին, և որ չքնի, ձայն էր խնդրում ու ելույթ ունենում: «Ներկա էտապում մենք կանգնած ենք նոր պլատֆորմի վրա,- ասում էր,- ուստի կարևորը ոչ թե մարդուս արտաքին գեղեցկությունն է, այլ՝ հոգու մատերիալիստական մակարդակը, իդեալիստական մաքրությունը և հումանիստական երջանկությունը»:

Ըստ տեղեկությունների, մի օրում Կանաչավանում տեղի է ունեցել չորս հարսանիք և Կտո պրիշոլ Պավլին այնպիսի թափով է երգել «Մի բալա է էս իմ յարը», որ Կրասկա Վարդանը բռնել է թխլիկ Սոֆիկի ձեռքը, գնացել նրա հոր՝ Փոստի Մադաթի մոտ, ասել՝ ես և Սոֆիկը իրար սիրում ենք մատերիա-

լիստական բարձր մակարդակով, իդեալիստական մաքրությամբ, ուստի խնդրում ենք ձեր հայրական հումանիստական համաձայնությունը:

Փոստի Մադաթը, չնայած լավ էր ճանաչում Կրասկա Վարդանին, բայց նրա իդեալիստական մակարդակը ստուգելու համար պահանջել է լրացնել հատուկ անկետա, մի տեղեկանք միլիցիայից բերել, մի տեղեկանք՝ թաղկոմից, մի տեղեկանք էլ՝ Բադալ Մարկոսովիչից՝ «առ այն մասին», որ ինքը ազնիվ աշխատավորի զավակ է, կապիտալիստական երկրներում բարեկամներ չունի, կյանքում առաջին անգամ է ամուսնանում և այլն: Կրասկա Վարդանը բարեխղճորեն կատարել է իր ապագա աներոջ պահանջները, ներկայացրել է բոլոր փաստաթղթերը, բայց Փոստի Մադաթը չի բավարարվել, ասել է. «Համաձայնը՝ համաձայն եմ, բայց մի պահանջ էլ ունեմ՝ ձեր հարսանիքը պիտի կատարվի նոր պլատֆորմով՝ ձևով իդեալիստական, ոգով՝ հայրենասիրական: Ուստի հարկավոր է մի տեղեկանք էլ կոմսոմոլից»:

Ահա այդ զրնգուն պայծառ աշնանը, երբ Կարկառը ձորում իր հին երգն էր մանում, Կտոր պրիշոլ Պավլին Հայկասար Ճաղարովիչի տանիքն էր թիթեղապատում ու քթի տակ դնդնում. «Ես պուճուր, յարս պուճուր...», լուր տարածվեց Կանաչավանում, թե էվրիկա Արտուշը վերջապես ավարտել է հավերժական շարժիչի գյուտը: Մարդիկ շտապեցին շնորհավորելու տաղանդավոր մեխանիկ-գյուտարարին, և երբ ներս մտան նրա արհեստանոցը, ի՞նչ տեսնեն, որ լավ լինի... էվրիկա Արտուշը, էդ անաստված-անաստվածի տղան, գրկել էր Նարգիզ բիբու շեկլիկ Նազիկին, անուշ-անուշ պռոշտի էր անում:

- Արա՜, ընկեր Արտուշ, բա որտե՞ղ է քո հավերժական շարժիչը,- քրքջաց Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը, և քանի որ խոսելու առիթը եկել էր, ինքն էլ բաժակաճառ ասելու լավ տրամադրություն ուներ, վերցրեց ձեռքն ընկած բաժակը, երկու կողմերին ցանկացավ փոխադարձ երջանկություն, մի տուն լիքը շեկ ու թխահեր մանուկներ, և նույն պահին Ֆոտո Գավրուշը ներս մտավ իր եռոտանի ապարատով.

- Մոմե՛նտ: Չշարժվե՛լ, անմահացնում եմ:

Եվ երբ ապարատը չխկաց, Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչն իր խոսքը եզրափակեց այսպես.

- Աշխարհի գլխավոր ու հավերժական շարժիչ ուժը սերն է և կարիք չկա ուրիշ հավերժական շարժիչ որոնել: Ուրեմն, հարգելի սեղանակիցներ ու սեղանակիցուհիներ, թույլ տվեք խմել նոցա կենացը, ովքեր ծնվել ու ապրում են սիրո համար, քանզի սերն է բոլոր գեղեցիկ գործերի այն ոգեշունչ ուժը, որին բանաստեղծներն անվանում են Մուսա:

Կտոր պրիշոլ Պավլին սպասել չտվեց, ոտքի վրա կլկլացրեց. «Դուն իմ մուսան ես, առանց քեզի ապրել չեմ կարող» և զնգացին բաժակները՝ նոցա կենացը:

Չէ, կանաչավանցիները հետաքրքիր մարդիկ են, արժե խմել նոցա կենացը:

ՊԱԺԱՌՆԻ ՎԱՂՈՆ

Վաղոյի՞ն եք հարցնում: Մեր քաղաքում քանի՞ Վաղո կա, հա՜...Պրյամոյ Վաղո, Սվաղչի Վաղո, Մեխանիկ Վաղո, Չոռնի Վաղո, Սեկրետնի Վաղո, Կաչագար Վաղո, Շոֆեր Վաղո, Պաժառնի Վաղո... Յանի Լեռնակերտում մա՞րդ կա, որ Պաժառնի Վաղոյին չծանաչի: Բեղեր ունի՝ ըհը՛, ծայրերը կարող ես տանել ետևից քշկռել: Ճիշտ է, մի երկու անգամ հակահիդեհային կանոնները խախտելու համար մեզ էլ է տուգանել, բայց խոսք չունեմ, ազիզ մարդ է:

(Ուստա Ծատուրի օրագրից)

- Մազերիս համրանքով պաժարներ եմ հանգցրել:

Դա ասում է քաղաքի հակահիդեհային ջոկատի պետ Պաժառնի Վաղոն, որի գլուխն ընդհանրապես զուրկ է բուսականությունից: Եթե ասեր բեղերիս մազերի համրանքով, ավելի ճիշտ կլիներ, որովհետև քաղաքում նրա փարթամ բեղերի պես ոչ ոք բեղեր չունի: Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչն ասում է՝ Պաժառնի Վաղոն ամեն առավոտ բեղերը սև ներկ է քսում, բայց դա բամբասանք է, և պատիվ չի բերում Մարկոսովիչի նման մեծահռչակ թամադային: Եթե ասեր՝ քաղաքում հենց որ մի սիրուն կնիկ է տեսնում, ձեռքը տանում է դեպի մերկ գլուխն ու ասում՝ ախր մազն ի՞նչ է, որ չի բուսնում, սև չլինի՝ սպիտակ լինի, դեղին լինի, կանաչ լինի, միայն թե լինի՝ էլի մարդիկ կհավատան:

Պաժառնի Վաղոյի խոսակցության հիմնական թեման հրդեհն է: Եթե որևէ մեկն անցած տարիներից ուզում է ինչ-որ դեպք հիշել, նա իսկույն ճշտում է օրը. «Հա՛, ոնց չէ, միտս է, դա էն օրն էր, որ նէպման Մամբրե Խաբարդանովիչն իրեն գցեց Ստեփգէսի հովուզը՝ խեղդվեց: Ողորմի՞ իրեն, փիս մարդ էր»: Եթե նրան հարցնելու լինեն՝ ո՞ր ամսի և որ օրին է մեր թատրոնը բեմադրել Վաղարշ Վաղարշյանի «Օղակումը», իսկույն կպատասխանի. «Դա այն ժամանակ էր, որ ֆաշիստները Ռայխստագը վառեցին, որպեսզի շառը դնեն կոմունիստների վրա: Համա ընկեր Դմիտրովը, կեցցե՛ս, հալալ լինի, դատի ժամանակ դրանց շանը տեղը կապեց, ո՞նց կապեց...»:

Ինչպես տեսնում եք, Պաժառնի Վաղոն տեղեկություններ ունի նաև համաշխարհային մասշտաբի հրդեհների, ինչպես նաև դրանց ծագման պատճառների մասին: Նա կարող է ասել, թե կայսր Ներոնը որ թվականին է վառել Հռոմը, մոնղոլական նվաճողները ինչ քաղաքներ են վառել, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աշխարհում քանի խոշոր հրդեհ է եղել... Կարճ ասած, Պաժառնի Վաղոն, Փոստի Մադաթի վկայությամբ, հրդեհների ցիկլոպեդիա է, իսկ Դուքան Սեդրակի չարախոսությամբ՝ պաժառնի շլանգ:

Ահա փողոցով տագնապի ազդանշան հնչեցնելով սլանում է հրշեջ կարմիր ավտոմեքենան: Կողքի հատուկ նստատեղին, գլխին պղնձագույն սաղավարտ, ձեռքին ջրացայտ խողովակը, թավ բեղերը կտրիճավարի ցցած՝ հրշեջ ջոկատի պետն այնպիսի դիրք է ընդունել, կարծես այդ պա-

հին Ֆոտո Գավրուշն ապարատը դեմ է արել ու հրամայել. «Չշարժվել, ստո՛պ, նկարում եմ: Մոմենտ: Չը՛խկ: Ապրես, պատկերդ պատրաստ է, կտանես տեսնես՝ եթե դու ես, քեզ նման է՝ կվերցնես, եթե դու չես՝ կտաս ձեր հարևանին, կարող է՝ ինքն է»:

Եվ արժե նկարել Պաժառնի Վաղոյին:

Երբ Թարխան Թերխաշյանը փորձեց հրդեհել արդեն պետականացված աղյուսագործարանը, այդ ո՞վ նրա ձեռքից խլեց նավթի շիշն ու ասաց. «Հլա մի կաց, ա՛յ նեպման թերխաշ աղվես, բա մենք քնա՞ծ ենք, որ օրը ցերեկով ուզում ես ոչնչացնել մեր հարազատ ժողովրդի սոցիալիստական սեփականությունը»: Պաժառնի Վաղոն չէ՞ր, որ Կարմիր մեբել ֆաբրիկայի չորանոցում Մոթալ Մինասի ձեռքից լուցկին խլեց, ոլորեց նրա կարկուտ թակած ականջներն ու ասաց. «Հը՛, Մոթալ Մինաս, էշին տաք ջուր կտա՞ս, թե՞ ցուրտ»: Պաժառնի Վաղոն էր: Այդ նա էր, որ իր քաջ տղաներով հանգցրեց Արտիստների շենքում ծագած հրդեհն ու արժանացավ թատրոնի դիրեկտոր ընկեր Կարպիս Ալամյանի գովասանքին. «Մալադեց Վաղարշակ Վարդանովիչ, այսօրվանից դու մեր թատրոնում քո պատվավոր տեղն ունես»:

Եթե Պաժառնի Վաղոն հրդեհներ հանգցնելու գործում իսկական կտրիճ է, ապա կանանց ներկայությամբ իրեն այնպես է կորցնում, որ նույնիսկ Ղըռչի Ակուփի կինը՝ Համասփյուռը, ասում է. «Վու՜յ, աղջի, էս խեղճը ո՞նց պիտի կնիկ առնի, բերանումը ոնց որ լեզու չլինի»:

Ամռան մի տոթ օր, երբ Դուքան Սեդրակը պառկել էր թթենու շվաքում ու բերանը լայն բացել, և աներես ճանճերը ներս ու դուրս էին անում նրա բերանից... Երբ Մեռել լողացնող Մանգասարը արդեն լրիվ ցնորված, քայլում էր փողոցով, ծեծում պատահած դարպասն ու հարցնում. «Ձեր տանը մեռել չկա՞, գամ լողացնեմ» ու ծիծաղում ցնդած-ցնդած... Երբ Թարխան Թերխաշյանն ու Սուսամբար Աղաջանովնան լեզվակռվից անցել էին բռնցքամարտի, և դժվար էր կանխագուշակել, թե ով պիտի հաղթի... Երբ Մկր. Սազանդարովը ցանկապատի արանքից հանել էր իր բուլղարական տաքտեղ քիթն ու մտիկ էր տալիս նրանց մենամարտին, քաղաքի շենքերից մեկում հրդեհ բռնկվեց: Նույն պահին փողոցով դղրդալով անցավ հրշեջ ավտոմեքենան: Դեպքի վայրը հասնելուն պես, Պաժառնի Վաղոն ցատկեց ավտոմեքենայից, սանդուղքն ամրացրեց երկրորդ հարկից ծուխ ժայթքող բնակարանի լուսամուտին ու նետվեց կրակի ու ծխի մեջ: Նման դեպքերում հրշեջի պարտքն է առաջին հերթին փրկել մարդկային կյանքը: Իսկ աղյուսագործարանի հաշվապահուհի Լիդիա Պետրովնան մոռացել էր իր թանկագին կյանքը, ուշակորույս ընկել մահճակալին:

Եվ Պաժառնի Վաղոն գրկեց նրան, երկրորդ հարկից իջեցրեց, ցույց տվեց առաջին օգնությունը...

Երբ Լիդիա Պետրովնան բացեց մշուշված աչքերը, հրշեջ ջոկատի պետը հանուն այդ աչքերի պատրաստ էր նետվելու թեկուզև բոցավառված

բենզինի բաքի մեջ: Աչքեր չէին, կապույտ մանուշակներ էին, ի՞նչ բուրմունք, ի՞նչ բուրմունք...

Պաժառնի Վաղոյի սրտում այնպիսի մի հրդեհ բռնկվեց, այնպիսի մի հրդեհ, որ ոչ մի հրշեջ չէր կարող հանգցնել այդ կրակը:

Ասում են՝ սեպը սեպով են հանում, և կյանքում այնպիսի հրդեհ կա, որ մարում են միայն... հրդեհով:

Հրշեջ ջոկատի պետն առավոտյան շատ վաղ արթնացավ, Վարսավիր Արտուշի մոտ էքստրնի թրաշվեց, բարձրացավ արդեն ծանոթ շենքի ծանոթ աստիճաններով, ծեծեց դուռը, ճակատի քրտինքը թաշկինակով մաքրեց, շատ քաղաքավարի բարևեց Լիդիա Պետրովնային ու ասաց.

- Լիդիա Պետրովնա, խնդրում եմ իմ մասին վատ բան չմտածեք: Ես եկել եմ հրդեհի պատճառներն արձանագրելու: Դա մտնում է իմ անմիջական պարտականությունների մեջ:

Լիդիա Պետրովնան հրշեջ ջոկատի պետին շատ քաղաքավարի ներս հրավիրեց, աթոռ առաջարկեց, պատասխանեց նրա հարցերին ու հիշեց երեկվա դեպքը:

- Ընկեր պետ, ես ձեզանից շնորհակալ եմ,- և նա այնպես նայեց Պաժառնի Վաղոյին, այնպես անուշ-անուշ ժպտաց, որ միայն անսիրտ մարդիկ կարող էին չզգալ, թե այդ պահին ինչ էր կատարվում հրշեջ ջոկատի պետի սրտում: Ի՞նչ հայացք, ի՞նչ քնքշանք, ի՞նչ ժպիտ, ի՞նչ շուրթեր:- Դուք փրկել եք իմ կյանքը,- շարունակեց Լիդիա Պետրովնան:- Դուք իմ փրկարարն եք, և ես երբեք դա չեմ մոռանա:

- Դե, առանձնապես...,- Վաղոն շփոթվեց, քրտնեց, կարմրեց, կակազեց: Կարծես այն Վաղոն չէր, որ համարձակորեն նետվում էր բոցերի մեջ, այդ թավ բեղերն էլ իրենը չեն, կպցրած են, ինչպես թատրոնում:- Լիդիա Պետրովնա, նման դեպքերում մենք իրավունք ունենք... նո՛ւ, ինչպես ասում են, գրկել թեկուզև քաղաքացուհիներին: Կյանքի հարց է: Իսկ դուք, խնդրում եմ, իմ մասին վատ բան չմտածեք: Ես սա ասում եմ բարի մտքով: Եթե դեմ չեք, վաղը ես ինքս կգամ և ձեր ծխնելույզը... Հասկանո՞ւմ եք, օրենքով պիտի վերացնել հրդեհի օջախը:

Լիդիա Պետրովնան էլ կարծես դեմ չէր հրդեհի օջախը վերացնելուն, մանավանդ, որ այդ հրդեհը հասարակ հրդեհ չէր, սրտի հրդեհ էր:

Հաջորդ օրը Վաղարշակ Վարդանովիչին նա, այսինքն՝ Լիդիա Պետրովնան, հյուրասիրեց մուրաբայով ու թեյով, մյուս օրը՝ կոնյակով, իսկ մի շաբաթից հետո, աշխարհի ամենաքաջ և ամենաամոթխած մարդը բռնեց նրա թևն ու ասաց.

- Լիդիա Պետրովնա, ես ձեզ սիրում եմ անկեղծորեն և խնդրում եմ իմ մասին վատ բան չմտածեք:

Լիդիա Պետրովնան էլ, իր հերթին, շատ քաղաքավարի պատասխանեց.

- Եթե դուք ինձ իսկապես սիրում եք, ես էլ ձեզ եմ սիրում, խնդրում եմ դուք էլ իմ մասին վատ բան չմտածեք:

Շարունակությունը նման է ուրախ հեքիաթի:

Երբ թամադաների թամադա Նոցա կենաց Բադալ Մարկոսովիչը մեկ ու կես ժամ խոսեց ամուսնության դերի ու նշանակության մասին, և ապա անցավ Հաննիբալի արշավանքին ու Գոյունվալդի ճակատամարտին, նոր էր սկսել պատմել Ալեքսանդր Մակեդոնացու հերոսական ճակատամարտերի մասին, Ուստա Ծատուրը չհամբերեց, տեղից գոչեց. «Գորկո՜, գորկո՜...»: Եվ Պաժառնի Վաղոն աչքերը փակեց ու նորահարսի ականջին շշնջաց.

- Լիդիա Պետրովնա, մասսան պահանջում է... եթե կարելի է... խնդրում եմ վատ բան չկարծեք:

- Կարելի է, կարելի է, Վաղարշակ Վարդանովիչ,- ժպտաց Լիդիա Պետրովնան, և այտը մոտեցրեց Պաժառնի Վաղոյի պապակված շուրթերին:

Այդ օրը կյանքում առաջին անգամ Պաժառնի Վաղոն համբուրեց այն հրաշք էակին, որ տղամարդկանց սրտերում հրդեհներ է առաջացնում, և որի պատճառով վառվեց Տրոյան, Օթելլոն խանդից գալարվեց, Պաղտասար աղբարը բղավեց. «Օ՜հ, կինե՜ր, կինե՜ր», Սեյրանը, Ռոմեոն, Մեջնունը, Համլետը, Արբենինը, Սոսը, Սարոն... Բայց դրանք անցած-գնացած սերեր են: Պաժառնի Վաղոն այդ օրը հասկացավ շատ կարևոր մի բան՝ առանց կնոջ աշխարհում գոյություն չունի ոչ սեր, ոչ կարոտ, ոչ խաղաղություն և ոչ էլ... սրտի հրդեհ:

Առաջ անցնենք:

Պատերազմի առաջին տարում Պաժառնի Վաղոն ոտքից վիրավորվեց ու ընկավ պարտիզանների մոտ: Նա փոխեց իր մասնագիտությունը՝ հրշեջ ջոկատի նախկին պետը սկսեց ինքն իր ձեռքով վառել: Վառում էր թշնամու զինանոցները, մթերքների պահեստները, պայթեցնում կամուրջները, քանդում երկաթագծերը: Երբ հրդեհների հրաշեկ բոցերը լիզում են երկինքը և որոտում ռումբերը, խաչակիր տանկերով բեռնված գնացքները գլորվում են անդնդախոր ձորերը՝ բոլորն ասում են, որ դա Պարտիզան Վաղոյի գործն է: Նա այնպես էր վառում, որ պարտիզանական գնդի հրամանատար Անդրեյ Մարտինյուկն ասաց. «Գրողը տանի, ո՞վ կհավատա, որ դու երբևիցե հրշեջ ես եղել»:

Երեք տարուց ավելի Պարտիզան Վաղոն վառեց, քանդեց, պայթեցրեց, ֆաշիստներին մատների վրա այնպես խաղացրեց, որ էսէսականները նրա գլխի համար մեծ գումար նշանակեցին: Բայց իր գլխից բեզարածն ո՞վ է, որ ձեռք բարձրացնի Պարտիզան Վաղոյի վրա:

Քառասունհինգին, երբ կարմիր բանակը գրոհում էր Բեռլինի վրա, Պարտիզան Վաղոն կնոջը նամակ գրեց, ջերմ ու կարոտալի նամակ. «Իմ աննման Լիդիա Պետրովնա, իմ թանկագին երեխաների մայր, Բեռլինի վրա եմ գնում, և խնդրում եմ իմ մասին վատ բան չմտածես»:

Լիդիա Պետրովնան կարդաց ամուսնու նամակն ու պատասխան գրեց, սրտահույզ ու բովանդակալից պատասխան. «Իմ թանկագին Վաղարշակ Վարդանովիչ, իմ աննման երեխաների հայր, ուրախ եմ, որ Բեռլինի վրա

ես գնում: Ես քեզ սպասում եմ ու կսպասեմ թեկուզև հազար տարի, խնդրում եմ դու էլ իմ մասին վատ բան չմտածես»:

...Տարիներ են եկել ու անցել, աշխարհի գետերով շատ ջրեր են հոսել: Այսօր էլ Պաժառնի Վաղոն չի փոխվել, կարծես նույն Վաղոն է մնացել: Նույն փարթամ բեղերը, նույն ուրախ դեմքը և նույնն է նրա տրտունջը՝ իր բուսականությունից զուրկ գլխի նկատմամբ: Եվ նույնն է նրա սրտի կրակը:

ԻԲՐԵՎ ՎԵՐՋԱԲԱՆ

Մի պարոն Սիլվեստ, որ տարվա բոլոր եղանակների հետ փոխում է իր համոզմունքներն ու դրոշը, քսանական թվականներին ծլկեց արտասահման, կանգնեց տարբեր դրոշների տակ և Հայրենական մեծ պատերազմից հետո, հանկարծ հայտնվեց եթերում. «Ի՞նչ Ղարաբաղ, ի՞նչ բան,- բարբառեց նա,- դա հետամնաց մի երկրամաս է: Իսկ այդ Լեռնակերտը գավառական հետամնաց մի ավան է, որի բնակիչները հիմնականում զբաղվում են բանջարաբուծությամբ»:

Պարոն Սիլվեստը փչեց մի տարի, երկու տարի, այնքան փչեց, որ թոքերը թուլացան, և մի օր էլ զգալով՝ փչոցները տեղ չեն հասնում, իրեն նետեց գնացքի տակ ու «անմահացավ որպես ազգային հերոս»:

Մի բախտախնդիր Կարա-Բեքիր, մուսավաթական մի տականք, քսանչորս թվականին բռնվեց անասնագողության մեջ, հետո անցավ սահմանը, հայտնվեց Անկարայում: Նա այստեղ հանդես էր գալիս որպես «Ղարաբաղի հայրենասեր մուսուլմանների ներկայացուցիչ», կազմակերպում էր պրես-կոնֆերանսներ ու կոչ անում. «Ուղղափառնե՞ր, ժամանակն է, մենք պիտի արշավենք Ղարաբաղի վրա, քշենք բոլոր հայերին ու փրկենք մեր նախնիների սուրբ հողը»: Ասում են՝ մինչև այսօր էլ Կարա-Բեքիրը Անկարայից շարունակում է ոռնալ Ղարաբաղի վրա:

Մի օյինբազ Աղամ Բիրղամիչ Սամարղանդում հանդիպեց Սիմոն Սարխոշյանցին, տարավ ռեստորանում իր հաշվին հյուրասիրեց ու սկսեց ձեռ առնել: Վարժապետ Սիմոնին նա մեծարեց զանազան էպիտետներով, հետո զգալով, որ նա հումորի զգացում չունի, ասաց. «Չէ՛, վարժապետ, քո մեջ ղարաբաղցու արյուն չկա, էլի էն ցնդած վարժապետն ես»:

Ահա և ընթերցող, վերջացրինք մեր ասքը Լեռնակերտի մասին: Վերջացրի՞նք... Օ՜, ոչ, մենք պարզապես հասանք այնտեղ, որտեղից սկսվում է Նոր Լեռնակերտը: Հորիզոնները երբեք չեն վերջանում, հորիզոններից այն կողմ նոր հորիզոններ ու նոր հեռաստաններ կան*:

1972-1982 թթ.
ք. Ստեփանակերտ

ԱՄԱՐԱՍ

Արցախի Վարանդա եւ այժմ Շուշու գ. մէջ Շուշի քաղաքից 45 վ. հեռու հռչակաւոր հայոց վանք եւ ուխտատեղի, ուր գտնվում է Գր. Լուսաւորիչի թոռն ս. Գրիգորիսի շիրիմը. հին ժամանակ Աղուանից թագաւորութեան մէջ եւ աթոռանիստ Աղուանից կաթողիկոսների:

Վանքը շինել է Աղուանից Վաչական Գ. թագաւորը 489-ին, որ 1387 թ. ենթարկվեց Լէնկթէմուրի աւերմունքին եւ մնաց աւերված մինչև 19-րդ դ. սկիզբը, կոչվելով թուրքերից Աղ-Օղլան. ռուսները, տիրելով Ղարաբաղին, մաքսատուն շինեցին այդտեղ մինչև 1847թ. երբ մետրապօլիտ Բաղդասար Ջալալեանի աշխատութեամբ մաքսատունը տեղափոխեցին Արաքսի ափը - Խուդափիրին, և վանքը յանձնեցին հայերին: Վանքը վերանորոգվեց 1858 թ. և 1881-ին օծվեց Անդրէաս եպիսկոպոսի ձեռքով. ունի հողեր, այգիներ:

(Հ. Առաքելյան. «Հանրագիտական բառարան» 1912 թ.)

1.

Մայրաքաղաքից եկած նկարիչը բեղ ու միրուք չունի, ուսերին թափված երկար մազեր չունի: Տարօրինակություններ էլ չունի, որ ասենք տաղանդավոր մարդ է: Վանքեր ու բերդեր է նկարում, հասարակ մատիտով, առանց գույների: Գույները նա որոնում է գրավոր ու բանավոր պատմությունների մեջ: Ինչ-որ տեղ նա բանահավաք է: Նրա ինչի՞ն են պետք այդ հին, կիսավեր, խարխլված, սառույցի պես մրսեցնող վանքերն ու բերդերը: Նա կարո՞ղ է իր այդ մատիտանկարներով որոշ բան ավելացնել պատմությանը կամ թեկուզ հաստատել այն, ինչ հայտնի էր մեր պապերին, ինչ այսօր գիտենք մենք: Ուրեմն, թող նկարի Եսայի կաթողիկոսին՝ Գանձասարի վանք-տաճարում՝ ճերմակափառ միրուքով, ոսկի խաչը կրծքին, սևազգեստ, հպարտ, աչքերում մի քիչ թախիծ, ճակատի կնճիռների ծալքերում՝ իմաստության լույս:

Մենք նրան հարցրինք, չէ, հարցնելու պես խորհուրդ տվեցինք՝ գուցե մեչիդներ ու մզկիթներ էլ նկարես: Այդպես ավելի լավ կլինի՝ Քրիստոսն ու Փեղամբարը կողք-կողքի նստել և իրար չեն խանգարել: Սրամիտ անեկդոտներ են պատմել գեղեցիկ կանանց, տեր Աստծո, Ադամի, Նոյի, Մաթուսաղայի, հրեշտակների, Ջաննաթի ու Ջահանդամի մասին և ծիծաղել: Այսինքն՝ մահմեդականները մեզ չեն ստիպել, թե պիտի ընդունեք մեր հավատը: Հազկերտը կամ Շապուհը նենգությամբ չեն գլխատել մեր թագավորներին: Արշակ թագավորը Անհուշ բերդում քեֆ է արել, գինովացած ժամանակ կսմթել պարսկուհիների փափուկ տեղերն ու ասել. «Այ քույրիկներ, ինձնից ինչո՞ւ եք վախենում, ես ձեր թագավորի եղբայրն եմ...»: Այսինքն՝ Ավարայրի ճակատամարտում արյուն չի հեղվել և, ընդհանրապես, պատմիչ եղիշեն սխալ է, գույները շատ է խտացրել: Ախր, ի՞նչ ճա-

կատամարտ, Վարդան Մամիկոնյանի տղերքն ու Հազկերտի տղերքը ի-րար մի թեթև մուշտի են տվել, հետո գրկախառնվել, թե՝ հաշտվենք, ախ-պերք ենք: Համ ախպերք ենք, համ հարևաններ ենք, բա աշխարհն ի՞նչ կասի, որ մի դատարկ հավատի համար իրար թթու խոսք ասենք:

Նկարիչը ծիծաղում է, հետո մի սիգարեթ վառում և բացատրում՝ ես ու-զում եմ Ղարաբաղ նկարել, ավելի պարզ՝ պատմական Արցախ: Ի՞նչ Ար-ցախ, ասում ենք, հիմա Արցախ չկա: Արցախը Մովսես Խորենացու, Ստե-փանոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Մովսես Կաղանկատվացու ժամանակներում էր: Մի քսան տարի առաջ ուզում էինք մեր երգի-պարի պետական անսամբլն «Արցախ» կոչել, քիչ մնաց այդ Արցախի համար անսամբլը ցրեին: Ներողություն խնդրեցինք, և Արցախը մնաց պատմու-թյան դարավոր փոշիների տակ: Տղա ես, հիմա այդ Արցախը հանիր փոշի-ների տակից: Իրավունք չունես: Դու Անաստաս Միկոյանից մե՞ծ մարդ ես: Անաստաս Միկոյանը Մոսկվայում նստել է ու ասել, որ իբր Ղարաբաղը մնում է Ղարաբաղ, Հայաստանը՝ Հայաստան: Հայերեն է ասել, շեշտելով յուրաքանչյուր բառը: Լսողներ են եղել, և դա նրանց շատ է դուր եկել:

Նկարիչը հիմա չի ծիծաղում: Հորինել են, ասում է, Միկոյանը այդպիսի բան չի կարող ասել: Լավ չէ, երբ մարդիկ հեղինակավոր անձանց անունով առևտուր են անում: Եվ ինչո՞ւ համար՝ որպեսզի մի քանի տարի էլ իրենց ա-թոռները պահեն: Դե, վերջապես, Անաստաս Իվանովիչն էլ մարդ է, ինչ-որ տեղ կարող է սխալվել: Դուք չե՞ք սխալվում: Գյուղի անունը Կուսաբերդ է, բայց դուք ասում եք՝ Կարաքենդ կամ Ղզղալա: Քառասնին ինչո՞ւ է Դաղդա-ղան, Քարին տակը՝ Դաշալթի... Դա հո Անաստաս Միկոյանը չի հնարել: Լավ, հերիք է: Գնում ենք Ամարաս: Հը՞, ասում եմ, մի ոչխար էլ առնենք, տա-նենք մեզ հետ: Բա առանց մատաղացվի ո՞նց կլինի: Լավ քեֆ կանենք:

Այդ ե՞րբ էր, տուրիստների մի խումբ ուզում էր տեսնել Ամարասի վան-քը: Այդ ջահել տղաներին ու աղջիկներին ուղեկցում էր Արտաշես Սահա-կյանը, շարքային մի հրահանգիչ, որ մասնագիտությամբ պատմության ու-սուցիչ էր, հույս ուներ, ավելի շուտ՝ աչք ուներ բաժնի վարիչի աթոռին: Դա այն Արտաշես Սահակյանն էր, որ մի տարի առաջ ուսուցիչների կոնֆե-ռանսում բարձր մակարդակով ճառ ասաց. «Ժամանակը չէ՞, որ գրակա-նության դասագրքերից հանվեն Ռաֆֆին, Պատկանյանը, Շիրազը, ինչ-պես նաև Դեմիրճյանի «Վարդանանքը», որպեսզի մեր մատաղ սերունդը դաստիարակվի ինտերնացիոնալիզմի ոգով»: Եվ այս Արտաշեսը հիմա տուրիստներին ուզում է զարմացնել իր ինտերնացիոնալիզմով: «Ահա Ա-մարասի վանքը,- ասում է,- այս վանքը կառուցվել է Փանահ խանի օրոք և նրա մեծ օժանդակությամբ»: Կապուտաչյա ուկրաինուհին փռթկացնում է: Այ տղա, ասում է, ուրեմն էդ Փանահ խանը կարգին ինտերնացիոնալիստ է եղել, իսկ գուցե իսկապես նա կարդացել է Մարքսի աշխատությունները: Տես, է՜, այս գեղեցիկ ճարտարապետական կոթողը կառուցել ու նվիրել է հայերին: Նշանակում է պատմությունը սուտ է, ձեր գրերը սուտ են, դուք սուտ եք...

Բայց մեղադրողը ուկրաինուհի է, հայ չի, որ ինտերնացիոնալիստ, փանահխանագետ Արտաշես Սահակյանը նրան մեղադրի նացիոնալիզմի մեջ: Ուկրաինուհին էլ ծծկեր երեխա չի, որ աչքերը փակի ու հաստատի. «Ճիշտ է, ընկեր Սահակյանը, դուք հրաշալի գլուխ ունեք»: Իսկ ռյազանցի Սաշա Մակարովը չի կարողանում զսպել իրեն. «Դուռակ տի... Դու ոչ միայն քո ժողովրդին, այլև մեզ՝ ռուսներիս, ուկրաինացիներիս, բելոռուսներիս ու էստոնացիներիս ես վիրավորում: Դու ազգային ինքնասիրություն չունես, քաղաքացի Սահակյան: Մենք նրա համար չենք Ղարաբաղ եկել, որ հեքիաթներ լսենք»: Քաղաքացի Սահակյանն ինչ ասի, որ լավ լինի. «Չլինի՞ թե դուք ծպտված հայեր եք»:

Նկարիչը տխրում է: Սիգարեթ չունե՞ք: Լավ, հարկավոր չի, ես ունեմ: Ծպտված հայե՞ր: Դա արդեն խուլիգանություն է: Որտե՞ղ է հիմա այդ Արտաշես Սահակյանը: Ես կուզեի նրա հետ խոսել: Տղերք, խնդրում եմ, ախպոր պես, տխուր բաներ չպատմեք: Լավ, հասկացանք, այդ Արտաշես Սահակյանն անասուն է, կարիերիստի մեկն է... Հո չի կարելի նման սրիկաների միջոցով կարծիք կազմել մարդու մասին: Ես չեմ կարդացել, բայց լսել եմ. ասում են՝ ինչ-որ պատմաբան գիրք է գրել, զրպարտել ղարաբաղցիներին, և այդ գիրքը հիմա ասպարեզից հանել են: Դրանք դատարկ կրակոցներ են: Բայց նկարիչը տխուր է, հոնքերը բարդ-բարդ կուտակել է, և ձայնը կարծես իրենը չի, յոթ սարի ետևից է գալիս.

- Գնանք կոնյակ խմենք,- նա հանգած սիգարեթը տրորում է ափի մեջ: Դա փրկության ելքն է:- Տղերք, ես խմել եմ ուզում: Չէ, շատ չէ, մի քիչ: Ասում են՝ Ղարաբաղի կոնյակը վատը չէ: Չեմ փորձել:

Հյուրանոցի մոտ, մայթեզրին, մի սիրուն աղջիկ է կանգնած: Ես գիտեմ, եկել է Գեորգի Մինասյանին տեսնելու: Գեորգի Մինասյանը երգիչ է, էստրադային աստղ, հրաշք. նայում է աղջիկների բաց սրունքներին և ցույց է տալիս, թե դրանք բանի տեղ չի դնում, Մոսկվայում, Լենինգրադում և չգիտեմ ինչ քաղաքներում, դրանցից լավերն է տեսել: Պա՞հ, այդ էր պակաս, որ գավառական այս փոքրիկ քաղաքում հրապուրվի ինչ-որ գեղջկուհիներով: Ախր, ինքը տաղանդավոր է, կանգնում է բեմում, ձեռքում խաղացնում միկրոֆոնը և երգում. «Ես սիռահառ պատանի, բեռել եմ քեզ մատանի»: Խմբագրությունը հատուկ թղթակից է ուղարկել հյուրանոց, Գեորգի Մինասյանի մոտ, որ հերթական համարին «բարձր մակարդակով» մի հարցազրույց ներկայացնի: Գեորգի Մինասյանը հյուրանոցային իր համարում խիստ զբաղված է եղել: Բա ո՞նց, աղջիկներ են եկել, ի՞նչ աղջիկներ՝ ներկած հոնքերով, ներկած եղունգներով, ներկած թարթիչներով, ներկած աչքատակերով, նապաստակի շշկլված աչքերով աղջիկներ: Գեորգի Մինասյանը մեր «Ղարաբաղի» հյուրանոցում հիմա Շառլ Ազնավուր է, Թոմ Ջոնս է, Ադամո է, Մարիո Լանցա է: Գեորգի Մինասյանը մի արհամարհական հայացք է ձգել թղթակցի վրա ու շպրտել. «Պառին, յա զանիտ, ու մենյա նետ վրեմենի»: Այսինքն՝ աղջիկների կողքին մի քիչ Շառլ Ազնավուր է խաղացել, մի քիչ էլ՝ լկստված Ռոբերտ Ֆիշեր: Ուրեմն՝ տեսեք, օրիորդներ, ես ահա այսպես եմ

շշպռում թղթակիցներին: Սրանք ի՞նչ մարդիկ են, ուզում են իմ միջոցով հոնորար աշխատել... Այդ թղթակիցը ես եմ եղել: Օհո՜, այդ էր պակաս, որ Ժորժիկ Մինասյանն ինձ մարդատեղ չդնի: Եվ ինչ եմ արել. ես էլ ինձ մի քիչ լավ չեմ պահել, բղավել եմ աղջիկների վրա. «Ռադ եղեք այստեղից, ես ուզում եմ Ժորժիկ Մինասյանին հասկացնել, որ ինքը ոչ Շառլ Ազնավուր է, ոչ էլ Ադամո: Լավ կլինի՝ հայերեն երգելուց առաջ, մի քիչ էլ հայերեն սովորի, թե չէ՝ «Ես սիռահառ պատանի, բեռել եմ քեզ մատանի»... Աղջիկները աղջիկներ են, ինձ անվանում են անկուլտուրական մարդ, արվեստից հեռու գեղջուկ, բայց դա բարձրաձայն չեն ասում, թողնում են, որ ինքը՝ Ժորժիկ Մինասյանն ասի, և զարմանում են. այդ ինչպե՞ս է, որ Ժորժիկը միլիցիա չի կանչում: Ուրեմն, մեծահոգի տղա է, խելոք, զարգացած, նվիրված արվեստին…

Իսկ Գեորգի Մինասյանի լուսանկարը տպագրվեց թերթի կիրակնօրյա համարում, հաջորդ օրը նա եկավ խմբագրություն, երևի խմբագրին բողոքելու, խմբագիրը խորհրդակցությունում էր, ինձ հետ «սրտաբաց» զրույց ունեցավ: Ասաց. «Հայեռ ենք, չէ՞ մառդ ենք, չէ՞: Ես եղել եմ եռկրի շատ գոռոդնեռում, հայեռի պատիվը բարձր եմ պահել»: Ես նրան ասացի. «Ի սեր աստծո, ինձ հանգիստ թողեցեք, թերթի հերթական համարին հոդված պիտի հասցնեմ»:

Դա Գեորգի Մինասյանն էր: Իսկ կոմերիտմիության քաղաքային կոմիտեի քարտուղար Վ. Ներսեսովը կարգադրել է, որ ապարատի ներսում ոչ ոք հայերեն չխոսի: Մեզ մոտ բոլորը, ասել է, պարտավոր են խոսել միայն ռուսաց լեզվով: Հարցրել են՝ ախր ինչի համար, ընկեր առաջին քարտուղար: Նա շատ հանգիստ, առանց իր խղճին հաշիվ տալու, պատասխանել է՝ հայերը նացիոնալիստներ են: Հայերենը երրորդական լեզու է, մեր պետական լեզուն ռուսաց լեզուն է: Դա ասել է Ներսեսովը, Արտաշես Սահակյանի ամենավատագույն տեսակը: Դրանով չի բավարարվել, կարգադրել է, որ իր ենթակաները գեղարվեստական գիրք չկարդան, գտնելով, որ գեղարվեստական գրականությունը կարող է իջեցնել երիտասարդների քաղաքական մակարդակը:

Գեորգի Մինասյանն ու Վ. Ներսեսովը, իհարկե, Ամարասի հետ ոչ մի կապ չունեն, բայց իմ այս պատմությունը դուր է գալիս նկարչին, ծիծաղում է: Դա պարզապես անեկդոտ է, ասում է, իսկ դու էլ հետաքրքիր մարդ ես, այնպիսի սառնասրտությամբ ես պատմում այդ բաները, կարծես դա քեզ չի վերաբերում: Իսկ եթե ես լինեմ քո փոխարեն, այդ Ներսեսովին կնստեցնեմ իր տեղը: Բայց ներիր, այսօր իմ հաշվին ենք խմում: Ես փող ունեմ, իսկ դու երևի հոնորարդ դեռ չես ստացել: Հա, ուրեմն Գանձասարի մասին էինք ուզում խոսել:

Գանձասա՞ր, ի՞նչ Գանձասար: Ախ, վանքի մասին ես հարցնո՞ւմ: Ուրեմն, Գանձասարի վանքը կառուցել են քոչվոր ցեղերը: Դրանք շատ հետաքրքիր քոչվոր են եղել, որտեղ գնացել, կոթողներ են կերտել և նվիրել տեղի ժողովրդին: Ուրեմն, այս քոչվոր ցեղի առաջնորդ Մուրթուզա բեկը նայել, տեսել է՝ պատմական Արցախում մի ցեղ կա, այդ ցեղը ոչ գիր ունի,

ոչ լեզու: Ոչ հայ է, ոչ վրացի, ոչ գարգառ, ոչ քուրդ: Ինչ անի, որ օգնի այդ խեղճ ու թշվառ ցեղին: Մարդ է ուղարկել Հայաստան, թե մի քանի վարդապետներից բանից ուղարկեցեք, ուզում եմ Արցախում լուսավորություն տարածել: Վարդապետները եկել են, այդ անլեզու խալխին Մեսրոպի գրերը սովորեցրել, թե՝ հիմա դուք հայ եք: «Չէ, մենք հայ չենք,- բողոքել են էս արցախցիները:- Մենք ինչո՞ւ հայ պիտի լինենք: Հայերը կուլտուրա չունեն, արվեստ չունեն, գրականություն չունեն, պատմությունն ի՞նչ է, դա էլ չունեն»: Մուրթուզա բեկը մեծահոգի մարդ է եղել, ասել է. «Վալա՜հ, բիլլա՜հ, դուք շաշ եք: Ախր հայն էլ է խալխ, թող մեր հաշվին մի քիչ շատանա, որ չկորչի»: Եվ մեծահոգի բեկն իր քոչվոր ճարտարապետին կարգադրել է, որ կառուցեն Գանձասարի վանքը:

Նկարիչը բաժակը խփում է բաժակիս: Դու իսկապես հումոր ունես, ասում է, բայց շատ է դառն, շա՜տ: Ես հիմա ուզում եմ ծիծաղել, բայց դա ծիծաղի բան չի: Լավ, եթե իրոք պատմությունը ինչ որ տականքներ կարողանում են նենգափոխել, հետևանքների մասին մտածո՞ւմ են: Այդ դեպքում ես նրանց այսպիսի մի քանի հարց կտամ. Ղարաբաղի մելիքներն ի՞նչ էին ուզում Պետրոս առաջինից: Իսրայել Օրին ի՞նչ գործ ուներ ռուսական արքունիքում: Միանալ Ռուսաստանի՞ն: Փրկվե՞լ: Իսկ ո՞ւմից փրկվել: Պարզ է, պարսիկներից ու թուրքերից: Չէ՞ որ պարսիկներն ու թուրքերն էին ուզում զավթել Ղարաբաղը: Իսկ գեներալ Վալերիան Մադաթովը ինչո՞ւ ջարդեց պարսիկներին: Չլինի՞, թե պարսիկներն իր մոր սիրեկաններն են եղել: Ախր, սա պատմական փաստ է, չես կարող ժխտել: Կաջարը, Փանահ խանը, Իբրահիմ խանը հո աստղերից չեն իջել: Ուրեմն այն կողմերից են եկել, ճի՞շտ է:

- Ենթադրենք:

- Իսկ ինչո՞ւ ենթադրենք:

- Պատմության արխիվների փոշին թափ տալուց օգուտ չկա: Ավտոմեքենան սպասում է: Գնում ենք Ամարաս:

Տոթ է: Խճուղու տաք ասֆալտի անհաճելի հոտը մտնում է մեր թոքերը: Նկարիչը փակում է աչքերը, հենց այնպես, հանգստանում է: Բայց անհանգիստ է և մի քիչ էլ անտրամադիր: Այս ի՞նչ բան է, եկել եմ Ղարաբաղ, որ վանքեր նկարեմ, բայց պարզվում է, որ այդ վանքերի կողքին անպայման մի քանի մզկիթ էլ պիտի նկարեմ, որպեսզի չմեղադրվեմ նացիոնալիզմի մեջ: Ես «Դլե յաման» եմ երգում, բայց ինձ ստիպում են, որ «Բազարդան ալմա ալարամ-սաթարամ» էլ երգեմ: Սա դարձավ բարեկամությո՞ւն: Մեր քիրվան, Սադըխ ամին, մեր տունը մոթալի պանիր էր բերում, և երբ նրան հյուրասիրում ենք կարագով ու մեղրով, նա չի ասում. «Քիրվա Արսեն, իմ բերած մոթալի պանրով ինձ հյուրասիրիր»: Հայրս նրանց տունը հյուր էր գնում, նրանք էլ իրենց ազիզ հյուրին պանրով, թեյով ու շարբաթով են հյուրասիրում: Հայրս չի ասում, թե ինչի շարբաթի կողքին թթի օղի չեք դնում: Հայրս չի ասում՝ դուք չկայիք, որ մենք ազգ էինք... Ինչ է, աշխարհը մի՞թե այսքան փոքր է, որ ինչ-որ Արտաշես Սահակյան...

- Լավ, չասացիր, ի՞նչ եղավ այդ Արտաշես Սահակյանը:

- Պաշտոն, այնուամենայնիվ, ստացավ, հետո մեղադրվեց անբարոյականության մեջ ու վտարվեց:

- Որտե՞ղ է հիմա նա:

- Երևանում:

- Ի՞նչ է անում:

- Գլուխը գովում է: Ասում է Ղարաբաղում ես պաշտպանել եմ Ռաֆֆուն, Պատկանյանին, Շիրազին, Մուրացանին, Լեոյին, դրա համար էլ ինձ քշել են: Ասում է՝ ես մեծ մասշտաբի հայրենասեր եմ: Ես չլինեի, «Մենք ենք, մեր սարերը» երևի հիմքից կպոկեին: Ասում է՝ Գանձասարի և Ամարասի վանքերի հիմքում իմ սիրտն եմ դրել:

- Դրա հասցեն գիտե՞ս:

- Հասցեն ինչի՞դ է:

- Հետը պիտի խոսեմ:

- Թող կորչի:

Կորչելու բաներ կան, որ չեն կորչում: Հոդվածը ներկայացնում եմ բաժնի վարիչին, կարդում, ասում է՝ հավանում եմ, շատ լավ ես գրել, բայց մի քիչ պիտի կրճատես: Մի քիչ էլ խմբագրի տեղակալի պատվերով եմ կրճատում, բայց խմբագիրը բարձր ճաշակի տեր մարդ է, «մի քիչով» յոլա չի գնում, ձեռքում ծանր ու թեթև է անում մեքենագրած էջերն ու ասում. «Շատ է երկար, մի երեք էջի սահմանում կրճատիր»: Դա նրա ամենասիրած խոսքն է՝ շատ է երկար, կրճատիր: Նրա կարծիքով, ամենալավ ակնարկը երկու էջից չպիտի անցնի, իսկ պատմվածքը՝ չորս էջից: Եթե սահմանն անցար, ուրեմն ակնարկը ակնարկ չի, պատմվածքն էլ՝ պատմվածք չի: Ես չգիտեմ, թե առհասարակ նա ինչպես է գրում և գրիչն ինչպես է բռնում: Բայց շատ լավ է հագնվում, և այդ լավ հագուստի մեջ նա նմանվում է մանեկենի: Թռուցիկ հավաքներում էլ մեկ-մեկ անեկդոտներ է պատմում՝ այն իմաստով, որ որևէ մեկին դիպչի: Այսինքն՝ այս առակի կամ անեկդոտի ոչխարը այսինչ այսինչյանն է, իսկ ես փիղն եմ, արծիվն եմ, առյուծն եմ: Թերթն ինչպես իր հոր սեփականությունը. ում ուզում է՝ տեղ է տալիս, չի ուզում՝ հոդվածի կամ ակնարկի վրա կանաչ թանաքով մակագրում է. «Նպատակահարմար չէ, կարիք չկա անդրադառնալ այդ հարցին»: Ստորագրությունը գեղեցիկ է, երևի նա այդ ստորագրության վրա մի քանի տարի աշխատել է՝ հղկել, մշակել, գեղեցկացրել:

Նա գտել է հեշտ ապրելու ձևը: Թերթում քննադատական հոդվածներ ու ֆելիետոններ չեն տպագրվում: Ո՞վ գիտե, մեկ էլ տեսար այդ քննադատվածները վերադասի խնամու կամ բաջանաղի խնամիներն ու բաջանաղները դուրս եկան: Կարող է ամբողջ օրը գրասեղանի ետևում նստել և տեղից չշարժվել: Կենդանի արձան է, պատվանդանն է միայն պակասում: Թռուցկաժողովում մի անգամ քննադատեցի թերթի վերջին համարում տպագրված առաջնորդողը: Ասացի՝ ջուր է, մեջտեղ բան չկա: Հավաքից հետո, ժամը տասներկուսին, խմբագիրը զանգեց ինձ, խնդրեց իր մոտ անցնել: Ներս

մտա: Ցույց տվեց աթոռը. մատները ճտճտացրեց ու խոսեց. «Քննադատել, իհարկե, կարելի է, բայց ոչ այդ տոնով: Ուրեմն, դուրս է գալիս, որ մեր թերթը ջուր է, և մենք էլ ջրավաճառ ենք»: Էլի մատները ճտճտացրեց ու հիշեց. «Նախանցյալ օրը, ձեր հերթապահության ժամանակ, թերթում քաղաքական կոպիտ սխալ է գնացել»: Ես չհարցրի, թե ինչ սխալ է գնացել, ասացի՝ այդ օրը ես հերթապահ չեմ եղել. լավ կլինի գտնեք մեղավորին ու պատժեք նրան: Նա «հըմ» արեց ու տեղում անշարժացավ: Մի բան է որոնում, որ գտնի, մեղադրի ինձ: Չգտավ: Ուզում էի ասել՝ ախր ինչո՞ւ եք տանջվում, ես թերթում հանդես եմ եկել նաև թույլ ու գորշ հոդվածներով: Դրանցից մեկը վերցրու և ասա՝ ամոթ է, սա զիբիլ է: Բայց չես կարող, որովհետև այդ հոդվածները դու ես կրճատել, ավելի ճիշտ՝ հյութը քամել, թողել ես չիչը: Քեզ չիչն է հետաքրքրում և ոչ թե հյութը: Դու առանց վերադասի ոչ մի կարծիք չունես: Վաղուց ժամանակն է, որ անցնես թոշակի, բայց չես անցնում: Գիտես, եթե թոշակի անցնես, փողոցում քեզ ոչ ոք չի բարևելու: Դու պիտի մեռնես գրասեղանի ետևում, որպեսզի քո հրատարակած թերթում գրեն. «Նա մեռավ իր պոստում: Նրա հիշատակը հավերժ կապրի ապրողների սրտում»:

Տափաստանի մաքուր օդը մեր թոքերից դուրս է մղում ասֆալտի գաղջ հոտը: Ինչ տափաստան, կանաչ օազիս է, թթենիներ են, խաղողայգիներ: Հիմա կերևա Ամարասի վանքը: Նկարիչը մտքում վանք է նկարում: Քսաներորդ դարում՝ վանք: Գիտության և տեխնիկայի այս հզոր դարում ի՞նչ վանք: Վանքն անցյալ է, միջնադար: Դե լավ, վանք նկարիր: Վանքի կողքին կամ արձակ բակում մի աղջիկ նկարիր: Մի աղջիկ՝ բաց սրունքներով, թափանցիկ, պայծառ գայթակղիչ, մի քիչ թախծոտ: Նա հրեշտակի պես գեղեցիկ է, անմեղ, և չի հասկանում, որ իր սրունքները գեղեցիկ են, զիստերը ցանկալի… Բայց նա սկի այնքան էլ անմեղ չի. քիչ առաջ վանքի խոնավ ու ցուրտ խորանում համբուրվում էր մի տղայի հետ:

Մեղա քեզ, աստված:

2.

Մեղա քեզ, աստված, մեղա:

Վանքի բակում ոչ մի անմեղ հրեշտակ չկա: Վանքի բակում մակաղել է կոլտնտեսության ոչխարի հոտը: «Մատաղացուներ են,- նկարչի դեմքը ջղաձգվում է:- Ափսոս, լուսանկարչական ապարատս չեմ վերցրել»: Վանքի պահակն իր բարձր աշտարակից մեզ նկատում է և բղավում ոչխարապահի վրա: Ա՛յ բալա, բա դու մարդ չե՞ս, բա դու խիղճ չունե՞ս, էս ոչխարներն էստեղ ի՞նչ դալաթ են անում: Ախր, ես այս հնության վրա պահակ եմ, պահակության համար ռոճիկ եմ ստանում: Դե ռոճիկ էլ ասում եմ,- հիմա մեզ հետ է, մեզ է դիմում,- ինչ ռոճիկ, կոլխոզն ամիսը քսանհինգ աշխօր է տալիս: Տուն-տեղ թողած, էստեղ եմ:- Դառնում է ոչխարապահին.- Ոչխարներդ այստեղից կորցրու, աչքս չտեսնի, թե չէ՝ նամակ կգրեմ ընկեր Կարապետյանին: Որ գրեցի՝ կորած ես, տեղ չունես:- Ոչխարապահը մահակը ծույլ-ծույլ թափահարում՝ ու ոչխարի հետ է. «Ագռիո, ագռիո, հու, հու…,- ու

դեպի պահակը.- Ման օլում, սխալվել եմ, սխալմունք է: Ցադվ տանեմ, աշխարհում ո՞վ չի սխալվում: Ստալինը, որ Ստալին էր, էլի սխալվել է: Բա լավ, որ մենք չսխալվենք, էլ ո՞վ պիտի սխալվի: Պիտի սխալվենք, որ էդ սխալի վրա մեր սխալը տեսնենք»:

Սա, ներկայացում է վանքի բակում: Վանքի պահակն իր դերն է խաղում, ոչխարապահը՝ իր դերը: Վատ չեն խաղում: Լավ էլ մարդիկ են, չեն ասում՝ էդ ինչի մեզ վաստակավորի կամ ժողովրդականի կոչում չեք տալիս: Մենք ի՞նչ պակաս դերասաններ ենք: Հա, ռեժիսոր էլ ունենք. մեր կոլտնտեսության նախագահն է:

Ներին կանգնել է վանքի կողքին, սրբատաշ մի քարի, կուրծքը հպարտ ցցել, ասես ուզում է լուսանկարվել: Ոչխարապահը դանդաղ, ծուլորեն ոչխարի հոտը քշում է վանքի բակից և, հավանական է, մտքում հայհոյում է մեզ: Այ ես ձեր... Ախր որտեղի՞ց եկաք, ի՞նչ եք կորցրել այս կողմերում: Կարծես Գանձասարը քիչ է, հիմա էլ եկել եք Ամարաս:

Մեր ավտովարորդը, հաղթանդամ մի տղամարդ, գիտե, որ դա ներկայացում է, ձեռքով պահակին մոտ է կանչում: Մեծ մարդ ես, ասում է, չես ամաչո՞ւմ: Այդ ո՞ւմ եք ուզում խաբել. ձեր կոլտնտեսության նախագահը չգիտե՞, որ վանքը ոչխարանոց եք դարձրել: Սա՞ է քո պահպանած հնությունը: Կոլտնտեսությունից ամսական 25 աշխօր ես ստանում, պետությունից՝ 75 ռուբլի: Պահակը խեղճանում է, բայց չի նահանջում. «Հարյուր դիմում եմ գրել, որ ինձ ազատեն այս գործից, չեն ազատում: Անձամբ դիմել եմ ընկեր Կարապետյանին: Չի ազատում»...

Կեսօր է, վանքը ստվեր չունի: Մեր ավտովարորդը թթենու տակ խարույկ է վառում՝ խորոված համար: Նկարիչն իր գործին է, նկարում է: Ես գործ չունեմ, մտքումս արձակ բանաստեղծություն եմ հորինում:

3.

Հրաշք է ասես կանգնած տիրաբար այս կանաչ հովտում:

Մի պառավ տատիկ խորանի առջև զույգ մոմ է վառում, չգիտեմ աստծո՞ւն, թե՞ այս հրաշքին է նա լուռ աղոթում:

Հավատացյալի մի սուրբ երկյուղով կանգնել եմ ահա կիսամութի մեջ, շուրջս եմ նայում:

Բարձր գմբեթի քիվերին նստած աղավնիներն են կամաց ղունղունում, իսկ երես առած ճնճղուկները կռիվս են տալիս, ճռվողում անվերջ:

Ու ես փակում եմ աչքերս մի պահ:

Հիմա ուր որ է ղողանջեն պիտի զանգերը պղնձե:

Հիմա կթնդա կամարների տակ տաղը Հարության և Վարդավառի:

Հիմա մի խելառ, մի ծուռ վարդապետ թաքուն կնայի պատի տակ կանգնած քնքույշ Շողերին ու ախ կքաշի:

Հիմա կգա մի թխաչ պատանի և սուրբ Մարիամի պատկերի առջև սիրտը կմաշի...

Հիմա...

- Ընկեր ջան, մի բան հարցնեմ,- պահակն է:

Ես մտքումս պատառոտում եմ մտքումս հորինած արձակ բանաստեղծությունն* ու ասում՝ հարցրու:

- Դու կոմունի՞ստ ես:

- Ես վարդապետ եմ,- ասում եմ,- էջմիածինից են ուղարկել:

Նա չի հավատում: Ասենք՝ գուցե հավատում է, ի՞նչ իմանաս: Թող գնա գյուղում հայտնի, որ էջմիածինից վարդապետ է եկել: Վազգեն Առաջինն է ուղարկել: Որ Վազգեն Առաջինն է ուղարկել, նշանակում է՝ Ամարասի վանքը բացում են: Դե որ բացում են, ուրեմն՝ պետությունը որոշում է հանել:

- Հաստա՞տ,- ստուգում է պահակը:

- Հաստատ:

- Բա ինչո՞ւ,- ներողամտաբար ժպտում է,- բա ինչո՞ւ բեղ ու միրուք չունես: Առանց դրան ո՞նց կլինի:

- Ես ինչ մեղավոր եմ, որ չի բուսնում, քոսակ եմ:

- Չէ, դա քոսակ մարդու խոսք չի,- նա ծիծաղում է:- Բայց, խոսքը մեր մեջ, դու կոմունի՞ստ ես:

- Ես ամեն ինչ եմ,- ասում եմ,- Կարմիր կիսալուսնի, ջրահեղձների միության, գրքասերների միության, ԴՈՍԱԱՖ-ի, բնության պաշտպանության, հնությունների պաշտպանության ընկերությունների անդամ եմ: Ես Գրիգոր Լուսավորչի քարտուղարն եմ, Եսայի կաթողիկոսի դպիրը, Ֆրիկի հետ այս վանքում՝ ձեր կոլտնտեսության նախագահի պապի, պապի պապի պապին Մեսրոպի գրերը սովորեցրել եմ, որպեսզի նրանց ծոռները այս սուրբ վանքի պատերին խզբզեն. «Սլավիկ+Սեդա = սեր»: «Սիմոնյան Վալերիկ 1971թ.»: «Մարգարյան Մառինե 1968թ.»: «Սա մեր Ամառասի վանկն է»... Ամոթ է, հարգելի հայրիկ, սա վանք չի, որ դու ես պահում:

Մեր ավտովարորդը թթենու շվաքում սփռոց է բացել. խորոված, գինի, կոնյակ, վարունգ, պոմիդոր, պանիր, լավաշ... Ամեն ինչ կա: Նկարիչը գոհ է, գործերը լավ են գնում: Նա պահակին հրավիրում է մեզ հետ ճաշելու. «Համեցեք, հայրիկ, մի-մի բաժակ կոնյակ կխմենք, կբացվենք»: Պահակը բացվում է: Այս վանքն, ասում է, Մելիք Շահնազարն է կառուցել: Մելիք Շահնազարը Վասակի նման դավաճանի մեկն է եղել, ծերացել ու հասկացել է իր սխալը: Որ իր ժողովրդի աչքում բարձրանա, ուրեմն այս վանքը կառուցել է: Կանչել է աշխարհի ամենալավ վարպետներին, ասել. «Էս ձեզ ոսկի, արծաթ, բռիլանտ... Մենակ էնպիսի մի վանք պիտի սարքեք, որ Գանձասարի ժամը շվաքում մնա»:

Դա է պահակի իմացած պատմությունը Ամարասի վանքի մասին: Իսկ երբ Արտաշես Սահակյանը զբոսաշրջիկներին պատմում էր. «Այս վանքը կառուցել է Փանահ խանը», վանքի պահակը ձայն չէր հանում, վախենում էր զրկվել պաշտոնից: Հիմա չի վախենում: Ասում է՝ Փանահ խանն ի՞նչ է, մենք Մելիք-Ավան ենք ունեցել, Մելիք Եսայի, Մելիք Եգան... Ղարաբաղը սրանք են պահել: Սրանք են ջարդել թշնամու ղոշունը: Սրանք իսկական հայեր են եղել:

- Իսկ Փանահ խա՞նը:

- Հա, Փանահ խանը,- բաժակը ցած է դնում:- էդ մասին էլ է Ռաֆֆին գրել: Ռաֆֆին հունարով գրող է եղել, սաղ Ղարաբաղը ոտքով շրջել է, մեծերին հարցրել, թե էս բանը ոնց է եղել: Կարդացել է գերեզմանների գրերը, մաղել-խախալել, Թիֆլիսում գիրք սարքել: Ողորմածհոգի հերս տեսել է Ռաֆֆուն: Ասում է՝ իմաստուն մարդ է, Ղազարոս Աղայանից էլ է իմաստուն: Խելոք չլիներ, ո՞նց կգրեր «Խենթը»:

Հիշեցի քեռուս: Սովորում էր քաղաքում: Չգիտեմ, լա՞վ էր սովորում, թե՞ վատ: Դպրոցը գրադարան ուներ, գրադարանը հսկողության տակ էր: Ռաֆֆու և Պատկանյանի գրքերն ինչո՞ւ տեղ գտնեն այդ գրադարանում: «Սրանք նացիոնալիստներ են,- ասաց պաշտոնյան, ոտքով հրեց գրքերի կապերը, նկատեց քեռուս,- մրսո՞ւմ ես,- իսկ գրադարանում իսկապես ցուրտ էր:- Տեսնում եմ, մրսում ես: Տար, բակում վառիր ու մի լավ տաքացիր: Լուցկի չունե՞ս: Ահա քեզ լուցկի: Հիշիր, տղա, հիմա դու պատմական դեմք ես դառնում: Հասկանո՞ւմ ես, դու ոչնչացնում ես նացիոնալիստներին»: Իսկ քեռիս գրքերը շալակում և բերում է գյուղ: Քեռիս խենթի հետ խենթանում է, Սամվելի հետ ըմբոստանում և թողնում դպրոցը: Ասում է՝ դպրոց չկա, գիտություն չկա: Գիտությունը Ռաֆֆին է, Պատկանյանն է, Չարենցը, Բակունցը, Շանթը... Քեռուս կանչում են քաղաք: Քննիչը հարցնում է՝ Ռաֆֆուց ի՞նչ ես կարդացել: Քեռիս շարժում է ուսերը՝ Ռաֆֆի՞, ի՞նչ Ռաֆֆի: Մեր գրքերում այդ անունով գրող չկա: Քեռիս մտքում ծիծաղում է քննիչի վրա, որովհետև լավ դերասան է: Հա, ասում է՝ Ռաֆայելին գիտեմ, մեր գյուղացի Սիմոնի տղան է: Քննիչն ուզում է ապտակել քեռուս, քեռիս գրպանից մի բուռ չամիչ է հանում, մեկնում նրան. «Կեր,- ասում է,- մեր բեդանի թթենու չամիչն է, համեղ է»: Քննիչը մարդ է, մտածում է՝ կա-չկա, էս լակոտը Ռաֆֆու «Խենթը» կարդացել, խենթացել է: Չէ, թող գնա կորչի, ես գժերի հետ գործ չունեմ: Քեռուս անունը Խենթ է մնում՝ հիշատակ Ռաֆֆուց: Հիմա էլ քեռիս կա, առաջվա պես Ռաֆֆի է կարդում ու ոգևորված գոչում. «Գրողն էսպես պիտի գրի, է՜... Աշխարհում Ռաֆֆուց մեծ գրող չկա»: Ես վանքի պահակի մեջ ուզում եմ մի քիչ տեսնել քեռուս, և հարցնում եմ. «Ռաֆֆին ինչպիսի՞ գրող է»: Պահակը դատարկում է հերթական բաժակը (կոնյակը նրան շատ է դուր եկել) ու պատասխանում. «Մե՜ծ, շա՜տ մեծ գրող է: Եթե թույլ տաք, ես հիմա կխմեմ Ռաֆֆու կենացը: Ռաֆֆին հոգի գրող է»:

Մենք Ամարասի վանքի բակում խնջույք ենք սարքել: Մոտիկ այգիներից մի քանի հետաքրքրասեր պատանիներ են եկել, նայում են մեզ: Մի տատիկ, որ մեզ է հասել 19-րդ դարից, և 20-րդ դարի շեմին նա դեռ աղջիկ էր, եկել զույգ մոմ է վառել, որպեսզի... Ինչ, գուցե ուզում է տեսնել երկու հազար թիվը, թե որդու կամ թոռնիկի համար է աղոթում: Իսկ այդ թոռնիկը երևի գյուղատնտես է կամ ուսուցիչ: Այդ գյուղատնտեսը կամ ուսուցիչը երեկոյան խեղճ պառավին կնախատի. Այա, կասի, ախր ինչո՞ւ ես մեզ խայտառակում... Եվ գուցե ոչ մի բան էլ չասի իր դարն ապրած պառավին: Ես մտքում չափածո տողեր եմ հորինում... Չէ, չեմ հորինում, վերհիշում եմ

այն տողերը, որ մի տարի առաջ հորինել եմ մեր գյուղի կիսավեր վանքում.

Կիսավեր վանքի կիսավեր պատին
Մի կիսատ մոմ է թրթռում ծույլ-ծույլ,
Կիսավեր վանքում մի բարի տատիկ
Կիսատ աղոթք է շշնջում աստծուն:

Կիսավեր վանքի կիսավեր բակում
Ցուփ ծաղիկները ծիծաղում են ջինջ,
Կիսավեր վանքի կիսավեր բակում
Լուռ երազում է մի քնքուշ աղջիկ:

Կիսավեր վանքի կիսավեր ճեղքից
Մի դեղին մողես գլուխն է հանել,
Կիսավեր վանքի կիսավեր փեղկից
Մոշին իր կանաչ փեշն է ծածանել:

Կիսավեր վանքի կիսավեր բակում
Մի թխաչ մանուկ խաչքարին նստած-
Օդանավեր է փնտրում երկնքում՝
«Նելսոն Ստեփանյան»՝ թևերին գրած*:

Դա մեր կիսավեր վանքի բակո՞ւմ է, թե՞ Ավետարանոց գյուղում: Գայանեի վանքում: Գայանեի մասին Լեոն վեպ է գրել՝ «Մելիքի աղջիկը»: Մելիքի աղջիկը դարձել էր դրամա, բեմ բարձրացել: Հանդիսատեսները տասը տարի դիտել են ու ծափահարել: Հանդիսատեսները տգետ են եղել, չեն հասկացել, որ Լեոն նացիոնալիստ է: Դա հասկացել է միայն մի մարդ և կուսակցության անունից կարգադրել՝ «էդ զիբիլը բեմից հանել: Գայանեն ո՞վ է, որ թուր է բարձրացնում մեր եղբայր ժողովրդի վրա»: Ասել են՝ ներեցեք, այսինչ-այսինչովիչ, Գայանեն ձեռք է բարձրացնում ոչ թե եղբայր ժողովրդի, այլ արյունարբու թշնամու վրա: Բայց այսինչ-այսինչովիչը հասարակ այսինչ-այսինչովիչ չի եղել, բռունցքը խփել է գրասեղանին ու բղավել. «Հերի՛ք է քրքրեք անցյալը: Հերի՛ք է ձեր ստից սարքած պատմությունը մեր աչքը խոթեք: Հերի՛ք է: Մոռացե՛ք էդ դատարկ բաները»:

Հա, ուրեմն, մոռանանք անցյալը: Վարդան Մամիկոնյանը սուտ է: Մովսես Խորենացին քերթողահայր չի: Սելջուկներն իրենց անապատներից մեզ համար քսան հազար ոչխար են բերել, թե՝ քեֆ արեք: Լենկթեմուրն էլ բարի զորավար է եղել, ոչ թալանել է, ոչ վառել, ոչ էլ՝ սպանել: Ֆրիկը չի բողոքել «ընդդեմ ֆալլաքի», Գրիգոր Նարեկացին խաս ու ղումաշ վարդանոցում նստել, սիրուն-սիրուն աղջիկների համար բայաթիներ է սարքել: Թումանյանը չի ասել՝ «Աչքդ թեքեցիր, բանիդ տերը չես»: Իսահակյան Ավետիքն ինչո՞ւ պիտի ասեր. էլ ինչո՞ւ ես քարը թողնում քարի վրա, քար աշխարհ, Սիամանթոն՝

Կոտորա՜ծ. կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դուրս,

Եվ բարբարոսներն արյուններով կդառնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայեն:
Ագռավներու բազմություններ կանցնին վերերեն,
Արյունոտ բերաններով ու գինովի քրքիջներով...

Մենք անցյալ չունենք: Չէ մի, այդ էր պակաս, որ Կաջարը Պարսկաստանից վեր կենա գա, թե՝ ուզում եմ Ղարաբաղը նվաճել: Ո՞ւմ համար է նվաճում, կին չունի, երեխա չունի, կռտած մարդ է: Պարսկաստանից քառասուն ուղտաբեռ խուրմա էր բերել, մի ուղտաբեռը փոխում էր մի սիրուն աղջկա հետ: Տո, կռտած յաբու, քավթառ մութրուբ, աղջիկը քո ինչի՞ն է: Իսկ Մելիք Ավանն իր Դիզակ բերդից՝ եկ տեսնենք, այ Կաջար շահ... Բա մեր ատոմային ռումբը, մեր կատյուշան, մեր հայրոպլանները որտե՞ղ են:

Սա մեր գյուղացի բրուտ Լևոնի հնարածն է: Բրուտ Լևոնը սիրում է սուտն ու ճշմարտությունն իրար խառնել: Ասում է՝ քսան թվին ես և Ղուկասենց Ստեփանը Ցարիցինում երկու պոլկ սպիտակ բանակ ենք հնձել: Նրանք եկել են՝ մենք հնձել ենք, նրանք եկել են՝ մենք հնձել ենք: Հա, էդպես է, հաստատում է Ղուկասենց Ստեփանը, հնձել ենք: Եվ երկուսն էլ ծիծաղում են իրենց ստի վրա: Հետո միասին տխրում են, երբ հիշում են Կերչի ճակատը: Լևոնն ասում է. Կերչում մի վանք կար, ոնց մեր Ամարասի վանքը: Ստեփանը՝ չէ, ի՞նչ Ամարաս, ոնց-որ Գանձասարի վանքը... Եթե Ռումինիայում, Լեհաստանում, Կալիֆոռնիայում, Ֆրանսիայում հայկական վանքեր կան, ինչո՞ւ Կերչում չլինի: Թո՛ւ, շան տղերք, մենք Ռումինիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Իրաքում, Սան-Ֆրանցիսկոյում ի՞նչ գործ ունենք: Ինչո՞ւ եք մեզ աշխարհով մեկ ցրել: Հո սերմացու չենք: Հիմա լավ կլինի՞, որ բռնենք ֆրանսիացու կոկորդն ու ասենք՝ սա մեր հողն է, այս ծառերը, արտերը, սարերը, քարերը մերն են, կորեք այստեղից:

- Սա Ամարասի վանքն է,- ասում է պատմության ուսուցիչ Նարեկ Հովսեփյանը: Այս վանքը կառուցվել է շատ, շատ հին ժամանակներում, հիմքը հեթանոսական է: Բայց դպրոցի դիրեկտոր Սոկրատ Մելիքյանը նրան ընդհատում է.

- Հազար անգամ ասել եմ՝ գլուխդ դինջ պահիր: Ամարասի վանքի հետ ի՞նչ գործ ունես: Երեխաներին երես ես տալիս, որտե՞ղ է քո քաղաքական զգոնությունը: Որտե՞ղ մնաց ինտերնացիոնալիզմը: Ախր, այս կռվախնձորն ո՞վ է տնկել այստեղ: Հիշիր, ընկեր Նարեկ Հովսեփյան, կոմունիզմի ժամանակ դասակարգերը վերանում են: Որ դասակարգերը վերանում են, ազգերն իրար են խառնվում, դառնում անդասակարգ մասսա:

- Իսկ այդ անդասակարգ մասսան ինչ լեզվով պիտի խոսի:

- Ժամանակը ցույց կտա:

Պատմության ուսուցիչ Նարեկ Հովսեփյանը վիճում է դիրեկտորի հետ, զգալով, որ միևնույն է, դրանից ոչինչ չի շահի: Ասում է՝ Ժամանակով կատուն ճոն էր, Շունն էլ գլխին գդակ չուներ,- ու դառնում է աշակերտներին.- Երեխեք, ցրվեցեք, գնացեք ձեր տները, մեր էքսկուրսիան համարում եմ ավարտված: Հնությունների հետ գործ չունեք, գնացեք ատոմային, ջրած-

նային ռումբեր ուսումնասիրեցեք: Տեսեք, հա՜, նեյտրոնայինը չմոռանաք: Որտեղ բերդեր, վանքեր, եկեղեցիներ, ամրոցներ կան, պիտի պայթեցնենք: Թող կորչեն դրանք, հնի մնացուկներ են, նախնադարյան են, ֆեոդալական, կապիտալիստական են: Մենք անցյալ չունենք: Պատմությունը որպես առարկա, վերանում է: Եթե սուլթան Համիդը ավազակ չի եղել, ուրեմն Նապոլեոն Բոնապարտը չի հարձակվել Ռուսաստանի վրա: Ղարաբաղի մելիքները չեն դիմել Պետրոս Մեծին, թե՝ ուզում ենք միանալ Ռուսաց երկրին: Իսկ ինչո՞ւ պիտի մոռանան Պարսկաստանի և Թուրքիայի մայրական գուրգուրանքները, միանան Ռուսաստանին: Բա սուլթան Համիդի, Թալեաթ փաշայի արած լավությունները կարելի՞ է մոռանալ: Դա կլինի երախտամոռություն:

Տեսեք, հա, ուրիշ տեղ չասեք, թե Կոմիտասն իր աչքով տեսել է 1915 թվականի ջարդերը և խելագարվել: Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Սևակը մահացել են իրենց բնական մահով: Չէ, չէ, ի՞նչ բնական մահ, ինքնասպանություն են գործել: Թուրք փաշան խղճմտանքով մարդ է եղել, ասել է. «Այ էրմանիլար, այ գարդաշլար, այ շայիրլար, ձեր ցավը տանեմ, ինչո՞ւ եք այդպես ջահել-ջահել մեռնում, մենք ձեզ ի՞նչ վատություն ենք արել»: էդ փաշայի ձեռքին ոչ թուր է եղել, ոչ մաուզեր: Լավ փաշա է եղել, է, լավ փաշա: Ոչ մի հայի չի ասել՝ տեղդ ծուխ է, վեր կաց, էն անծուխ տեղը նստիր: Ջահանդամը՝ ծուխ է, մեր հայ եղբայրն է, ծխին էլ է սովոր, կրակին էլ, զուլումին էլ: Հասկացա՞ք, երեխաներ, էդ թուրք փաշաները եղել են հայերի իսկական բարեկամները: Բա որ թուրքերը չլինեին, հայերն ինչպե՞ս կարող էին տաճարներ ու բերդեր կառուցել, «Մատյան ողբերգության» գրել, «Սասնա ծռեր» ստեղծել, Անի անունով մայրաքաղաք ունենալ: Չէ, Կառլ Մարքսը Թուրքիային համաշխարհային պոռնիկ չի անվանել: Դա ուրիշ տերության մասին է ասել:

Սա պատմության ուսուցիչ Նարեկ Հովսեփյանի մենախոսությունն է: Մարդը մենախոսում է, ինքն իրեն ուտում է: Ուրեմն՝ ցրված է: Լավ ուսուցիչ է, բայց շատ է ցրված: Դրանց ցեղն այդպես է: Նարեկ Հովսեփյանի հայրն ասել է՝ Ամարասի վանքը չորրորդ դարում հիմնել է Գրիգոր Լուսավորիչը, այնուհետև, իր որդին թե թոռը՝ Գրիգորիս կաթողիկոսը թե եպիսկոպոսը շարունակել է նրա կիսատ գործը: Իսկ Աղվանաց աշխարհի թագավոր Վաչագանը Գրիգորիսի գերեզմանին, վանքի ներսում, կառուցել է մատուռ: Այդ մատուռը հիմա էլ կա: Մեսրոպ Մաշտոցը եկել, Ամարասի վանքում բացել է առաջին հայկական դպրոցը: Չեք հավատո՞ւմ, կարող եք կարդալ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գիրքը, դա պատմություն է:

Մոնղոլ Աբաղա խանի ականջին ձեն էր հասել՝ Արցախում ապրուստը թափված է, ձրի, գնա տես ինչ ես անում: Աբաղա խանն իր ղոշունով եկել, տնկվել է Խազազի սարի ստորոտում ու կանչել. «Այ հայեր, հերիք է, հայ լինելուց օգուտ չունեք: Եկեք ընդունեցեք մեր հավատը, մոնղոլ դարձեք, որ ձեր քեֆին ոչ ոք չդիպչի»: Հայերն ասացին՝ Աբաղա թրիք, Աբաղա շուն-

շանորդի, Աբաղա քուռակ, թե դու լավ մարդ ես, միտքդ ծուռ չի, ինչո՞ւ քո մոնղոլներից վեր ես կացել, եկել այստեղ: Որ մենք հազար տարի առաջ ազգ էինք, դուք որտե՞ղ էիք: Որ մենք Տիգրան մեծ, Արշակ թագավոր, Վարդան Մամիկոնյան ունեինք, դուք ի՞նչ ունեիք: Եվ այդ բանի վրա մեծ դալմաղալ եղավ: Մոնղոլը զարկեց, հայերը զարկեցին, հայի ու մոնղոլի կռիվ եղավ: Աբաղա խանն իր ղոշունը քշեց, հայ-հույ արեց… Ամարասի վանքում մի երեմ վարդապետ կար, փարաջան հանեց, թուրն առավ ձեռքը, նստեց ձին ու կանչեց. «Վարդապետներ, ով հավատում է իր աստծուն, ով Քրիստոսի հավատին է, թող հետևի ինձ…»: Վարդապետ Երեմն իր վարդապետներով թիկունքից խփեց Աբաղա խանին, Աբաղա խանը չդիմացավ, փախավ: Մովսես Կաղանկատվացին իր գրքում գրում է. «Նույն տարին Բաբանը Պարսկաստանից եկավ, անցավ Արաքս գետից այս կողմ և բնակվեց Ամարաս գավառում. սկսեց խաղաղության բանակցություն վարել, որպեսզի հնազանդվեն իրեն. ոմանք ժամանակավոր զղջումով հնազանդվեցին… Այստեղից Բաբանը վերադարձավ իր երկիրը՝ Պարսկաստանի Ատրպատական, իր տեղը թողեց Ռոստոմ անունով մի զորավար՝ զորքի հետ միասին և նրան պատվիրեց չպատերազմել բերդի դեմ, այլ սիրով գրավել, որպեսզի հնազանդվեն: Իսկ Ռոստոմը անտեսեց Բաբանի պատվերը, դուրս եկավ պատերազմելու… Այդ ժամանակ բերդեցիներն ապավինեցին Քրիստոսի զորությանը և, խաչերն ու սրբերի մասունքները դիմացները բռնելով, ծանր հարվածներով ջարդեցին պարսկական զորքը: Ազատվելով նրանցից՝ գոհանալով փառաբանում էին Քրիստոսին»:

Նկարիչն իր գործին է, նկարում է: Նկարում և զրուցում է կողքին կանգնած շիկահեր պատանու հետ: Ասում է՝ այ տղա, ինչո՞ւ ես այդքան շեկ: Պարթև անունով պատանին պատասխանում է՝ հայերն առաջներում շեկ են եղել. այնքան ցավեր են տեսել, դարդից թխացել են: Պարթև պատանին հպարտանում է, որ իր հոր անունը Մեսրոպ է, պապի անունը՝ Արտակ, պապի պապի անունը՝ Պարթև: Ասում է՝ մեր տոհմը հերոսական անցյալ ունի, եթե էսպես գնանք պատմության խորքերը, գիտե՞ք որտեղ կարող ենք հասնել՝ Տիգրան Մեծին: Նկարիչը գլխով հաստատում է՝ ճիշտ է, այ ես էլ եմ իմ օխտը պորտը ստուգել, և գնացել հասել եմ Սարգիս Պիծակին: Եվ հարցնում է պատանուն՝ ի՞նչ կասես, հիմա սա վա՞նք է, եկեղեցի՞ է, թե՞ տաճար: Պատանին ասում է՝ եկեղեցի է, վանք է, տաճար է, հրաշք ճարտարապետություն է: Հայկական Սովետական հանրագիտարանում գրված է. Ամարասի մայր եկեղեցին կառուցված է Շուշի քարահանքի բաց մոխրագույն սրբատաշ որձաքարով: Չորս գեղեցիկ սյուների վերևում կիսաբոլոր կամարներն են, որոնց վրա հենված է գմբեթավոր ձեղունը: Տաճարի սրահի երկարությունը 23 մ է, լայնությունը՝ 13.33 մ»: Պարթև պապը Ամարասի վանքի մասին ոտանավոր է գրել, ուղարկել խմբագրություն: Չեն տպել, ասել են՝ թերթը շատ կարևոր խնդիրներ ունի՝ սիլոսացում, գոմաղբի տեղափոխում, եգիպտացորենը դաշտերի թագուհին է, հովիվ Արշակ Յուզբաշյանը հարյուր մաքուց 130 գառ է ստացել… Այ, դրանց մասին ոտանավոր սարքիր, թե չէ՝ Ամարասի վանքն իրենից

ի՞նչ է ներկայացնում: Պատանին ոտանավորն ուղարկել է բանաստեղծ Հովհաննես Շիրազին, Շիրազը կարդացել ու ասել է. «Հրբը, ուրեմն մեր Մեսրոպ Մաշտոցը Արցախի Ամարասի վանքում դպրոց է բացել: Դա արդեն պոեմի թեմա է»:

4.

Եվ այսպես, Մեսրոպ Մաշտոցը եկավ, Ամարասի վանքում բացեց առաջին հայկական դպրոցն ու ասաց. «Կորչի անգրագիտությունը, կեցցե համատարած գրագիտությունը»: Իսկ ինչպե՞ս էր կոչվում այդ դպրոցը՝ ծխակա՞ն, լիկկայա՞ն, տեխնիկո՞ւմ, ուսումնարա՞ն, ինստիտո՞ւտ, համալսարա՞ն, թե՞ ակադեմիա: Մեսրոպ Մաշտոցն էլ հո հասարակ ուսուցիչ չէր. պրոֆեսոր էր, դոկտոր էր, ակադեմիկոս էր, զորապետ էր, նաև՝ գեներալ, մարշալ, ծովակալ: Բայց որովհետև Մեսրոպը փառասեր մարդ չէր, թքել էր այդ կոչումների վրա ու մնացել Մեսրոպ Մաշտոց: Իսկ Արցախ մեկնելուց առաջ նա եղավ Սահակ Պարթևի մոտ: Պարթևն ասաց.

- Այ Մեսրոպ, ախր էդ ո՞նց կլինի, էդքան մեծ գործեր ես կատարել, այ տնաշենի տղա, բայց մինչև հիմա ոչ մի կոչում չունես: Ասում եմ՝ քեզ վաստակավոր դարձնեմ, ի՞նչ ես ասում:

- Վաստակավո՞ր,- ժպտաց Մեսրոպը:

- Հա, վաստակավոր:

- Վաստակավոր ի՞նչ:

- Վաստակավոր ուսուցիչ:

- Իսկ առանց դրան չի լինի՞:

- Պրծավ, որոշել եմ: Այսօրվանից վաստակավոր ես: Եթե Արցախում էլ գործերդ լավ գնացին, վերադառնալուդ պես՝ ժողովրդական կդարձնեմ:

- Ժողովրդական ի՞նչ:

- Դերասան, գյուղատնտես, քիմիկոս, ֆիզիկոս... Չգիտե՞ս ինչ՝ ուսուցիչ:

- Վախենում եմ՝ տակիցը դուրս չգամ:

- Պա՜հ, քո տունը շինվի,- ծիծաղել է Սահակ Պարթևը:- Դու որ այդ գրերի տակից դուրս ես եկել, ուրեմն՝ ժողովրդական ես:

- Ես ի՞նչ իմանամ, դու գիտես:

Սահակ Պարթևը ճանապարհ դրեց Մեսրոպ Մաշտոցին և գլուխն օրորեց: Պա՜հ, քո ինչն ասեմ, Մեսրոպ, մարդ էլ այդքան պարզ ու հասարակ կլինի՞: Քո փոխարեն եթե ուրիշը լիներ, կգար բկիս չոքեր, թե ինձ չեխական գառնիտուր տուր, հինգ սենյականոց բնակարան եմ ուզում, «Վոլգա» ավտոմոբիլ եմ ուզում, սառնարան եմ ուզում, հեռուստացույց... Լավ, էս Մեսրոպը ոչ մի բանի կարիք չունի՞: Պա՜հ, քո ինչն ասեմ, Մեսրոպ տղա, հայ ես, էլի, մաքուր հայ ես:

Մեսրոպ Մաշտոցը եկավ, հասավ Արցախ, հավաքեց տեղի անվանիներին, թե՝ Ամարասի վանքում դպրոց եմ բացում, որ երեխոցը հայերեն գրեր սովորեցնեմ: «Հայերեն գրե՞ր,- զարմացան Արցախի անվանիները: Ուրեմն, հայերեն գրեր կա՞ն: Ախպոր պես, խնդրում ենք, ցույց տուր տեսնենք

այդ գրերն ինչպես են գրում»: Մեսրոպը հանեց մագաղաթը, մելանը և գլխատառերով գրեց ԱՐՑԱԽ: Արցախը, ասաց, ձեր հողի, սարի, քարի, անտառի, գետի անունն է: Ապա դարձավ դիմացը կանգնած մարդուն՝ քո անունն ի՞նչ է: Մարդն ասաց՝ Ներսես: Մեսրոպը մագաղաթին գրեց՝ Ներսես: Ներսեսը նայեց գրածին, գլուխը շարժեց.

- Տես է, իսկականից Ներսես, այսինքն՝ ես եմ: Ուրեմն, դու Հիսուս Քրիստոսի առաքյա՞լն ես:

- Իմ անունը Մեսրոպ է: Ինձ կոչում են՝ Մեսրոպ Մաշտոց:

- Մեսրոպ Մաշտոց իմաստուն,- ասաց Ներսեսը,- ես խավար մարդ եմ, մի բան լավ չեմ հասկանում, էդ գիր սովորելու նպատակն ի՞նչ է:

- Որ մնանք հայ և պահպանենք մեր մայրենի լեզուն:

- էդ գիրը մեզ քանի՞ տարի հայ կպահի:

- Շատ…

- Հինգհարյո՞ւր:

- Չէ, շատ:

- Հազա՞ր:

- Շատ, էլի շատ:

Ներսես մարդու իմացած ամենամեծ թիվը հազարն էր, դրանից դենը ուրիշ ոչ մի թիվ չգիտեր, հարցրեց.

- էդ շատը որքա՞ն կլինի:

- Հազար, էլի հազար, էդ հազարի վրա՝ նորից հազար,- բացատրեց Մեսրոպը.- Մեզանից հետո կգան մեր թոռները, ծոռները, ծոռների ծոռները… Մի խոսքով՝ հավիտենից հավիտյան:

- Ուրեմն, դու աստված ես,- գոչեց Ներսես մարդը:

- Իմ անունը Մեսրոպ է:

- Դու Մեսրոպ անունով աստված ես:

- Ես Մեսրոպ Մաշտոցն եմ:

- Դու մեր Մեսրոպ Մաշտոց աստվածն ես:

…Այս պատմությունն ուրիշ տարբերակներ էլ ունի: Այդպե՞ս է եղել իրականում, թե՞ հորինել են: Կարևորն այն է, որ Մեսրոպ Մաշտոցն Ամարասի վանքում դպրոց է բացել, գրեր է սովորեցրել հայ մանուկներին: Սերունդներ են անցել, սերունդներ են եկել, այդ սերունդները սերտել են Մեսրոպի գրերը, դարձել պրոֆեսորներ, դոկտորներ, ակադեմիկոսներ, զորապետներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, լեզվաբաններ, գրողներ… Հետո նրանք՝ այդ գիտնականները գտել են, որ իրենց համար երկու սենյականոց բնակարանը քիչ է, երեքն են պահանջել, երեքն էլ է քիչ դուրս եկել, չորս, հինգ սենյականոց բնակարան են պահանջել: Մի լավ բանաստեղծ ոտանավոր է հորինել.

Կարդա, այ իմ խելոք մանուկ,
Կարդա, գրի տարին բոլոր,
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսավոր:

Իսկ դրանից առաջ մի հայ գուսան-բանաստեղծ երգ է հորինել. «Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե»: Բայց մի ուրիշ գրագետ էլ Մեսրոպի գրերով անստորագիր նամակ է թխել. «Ղարաբաղի հայերը,- գրել է զրպարտիչը,- նացիոնալիստներ են, մարզկենտրոնի երկրագիտական թանգարանում Մեսրոպ Մաշտոցի նկարն ու արձանը պահում են»: Դե հիմա արի ապացուցիր, որ նապաստակն ուղտ չէ: Որ երկուսին գումարած երկու՝ չորս է: Որ երկու անգամ երկու՝ էլի չորս է: «Չէ, չորս չի, տասնչորս է,- ասում է ինտերնացիոնալիստի դիմակով ծպտված բանսարկուն:- Տասնչորս է: Տա-սըն-չորս,- վանկարկում է:- Իսկ գիտե՞ք ինչ բան է տասնչորսը: Մեկ, երկու, երեք, չորս, ես կպարեմ տասնչորս: Տասնչորսը դաշնակցականների հիմնն է, մաուզեր է, մա-ու-զեր: Ցովից-ծով Հայաստան: Երկիր Նաիրի: Անդրանիկ, Դրո, Նժդեհ, Համազասպ, Սեպուհ, Շավարշ, Վռամ, Դալի Ղազար, Թևան, Արամ, Հրայր Դժոխք, Ղոչի Երեմ, Մակիչ, Սեփո, Վարոս... Եղավ տասնչո՞րս: Դե՝ բրոս: Եթե ճիշտն եք ուզում իմանալ՝ ձեր Մեսրոպ Մաշտոցն էլ է դաշնակցական: Հը, հիմա բռնվեցի՞ր: Շահումյանի, Կամոյի, Սպանդարյանի, Կնունյանցի անուններով չերդվես: Որ քո Մեսրոպ Մաշտոցը հայերեն գրերը չհորիներ, հեղափոխությունը կտապալվե՞ր, թե՞ Հակոբ Հակոբյանը չէ՞ր գրի. «Հեյ, ձեզ մատաղ, բանվոր տղերք, մեկ էլ, մեկ էլ մի զարկ տվեք...»: Իսկ Թումանյանը ի՞նչ է գրել. «Ժամանակով շունը ճոն էր, կատուն գլխին գդակ չուներ...»: Կամ Իսահակյանը. «Դարդս լացեք, սարի սմբուլ, ալվան-ալվան ծաղիկներ»: Փոխանակ զենք վերցնի ու կռվի հեղափոխության համար, ասում է. «Դարդս լացեք, սարի սմբուլ»: Չարենցը: Ի՞նչ Չարենց: Դա էն Չարե՞նցը չի, որ գրել է. «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում»: Դա արդեն նացիոնալիզմ է: Եթե դրա միտքը ծուռ չի, ինչո՞ւ միայն Մասիս սարն է սիրում: Բա մեր Կարպատները, Կազբեկը, Հիմալայները ո՞վ պիտի սիրի: Իսկ, եթե կուզեք, այդ Մասիսն ամենևին էլ մերը չէ, Թուրքիայում է: Հիմա ի՞նչ կասեք...»:

Իսկապես տգետին ու հիմարին առարկելը դժվար է: Բայց այդ տգետին ամբիոն էլ են տրամադրում և նա ամբիոնից մատ է թափահարում իր ժողովրդի վրա, իր հայրերին, մայրերին, քույրերին, եղբայրներին, քեռիներին համարում է նացիոնալիստներ: Ես հանում եմ ծոցատետրս և այդ թափթփուկին պատասխանում եմ չափատողերով.

Դու ատում ես այն, ինչ հայկական է,
Մեսրոպագիր է ու մեսրոպատառ,
Քո դեմ մեր հայոց երգը ական է
Եվ ռումբ է հայոց երգը քեզ համար:

Մեր կոթողները քեզ դուր չեն գալիս,
Քեզ դուր չեն գալիս տաճարներն այս պերճ,
Ահով ես նայում դու մեր խաչքարին,
Տգեղը տեսնում գեղեցիկի մեջ:

Գոռում ես, ճչում, սպառնում անվերջ
Եվ շանտաժներով քո ճամփան հարթում,
Դու այնքան նենգ ես՝ ազգայինի մեջ
Տեսնում ես միայն ազգամոլություն:

Մեր հին ոսոխին անվանում քեռի,
Բամբասում ես մեզ, լկտի ծանակում,
Ճամփա ես տալիս շողոքորթներին,
Ճշմարտախոսի բերանը փակում:

Եղբայրություն ես ամբիոնից գոռում,
Երդվում դրոշով բարեկամության,
Բայց մեր հին վերքն ես նորից փորփրում,
Խարխլում ես դու սյուները մեր տան:

Եվ դու նենգում ես պատմությունը մեր,
Հատել ես ուզում մեր արդար լեզուն,
Մեզ անպատվում ես բիրտ ու լրբորեն,
Անամոթաբար մեզ չարախոսում:

Դու դատում ես մեզ, բայց ո՞ւմ անունից
Եվ ովքեր են քո դատը պաշտպանում,
Այդ ո՞ւմ վրա ես գոռում ամբիոնից,
Ումնի՞ց ես այդպես դու վրեժ առնում:

Դու եղբայրության սուրբ դրոշի տակ,
Ազգի տարազով ծպտված մանեկեն,
Կեղծ նեյնիմների ուշացած թութակ,
Մեր դեմ ամբարված հին լուտանք ու քեն...

Եվ դու էլ կանցնես, ինչպես որ անցան
Քո նախորդները անբարիշտ ու չար,
Ով դու հին ու նոր կրկնվող հանցանք,
Դու հայրենադավ փառամոլ լաչառ*:

Իսկ Մեսրոպ Մաշտոցի կիսանդրին հանեցին թանգարանից: Մեսրոպ Մաշտոցն ախր ո՞վ է, հեղափոխություն չի արել, սպիտակ գվարդիականների դեմ չի կռվել, Խասան լճի ճակատամարտին չի մասնակցել, ի՞նչ իրավունքով է տեղ գտել սոցիալիստական մեր թանգարանում...

1975-78 թ.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ժողովածուն Վազգեն Օվյանի տպագրության պատրաստ անտիպ երեք գրքերից մեկն է: Առաջին գիրքը՝ «Այս Ղարաբաղն է» վերնագրով, կազմված է չափածո լավագույն գործերից (բանաստեղծություններ, առակ-հեքիաթներ, «Նազար-նամե» պոեմ): Մյուս գիրքն ընդգրկում է գրողի դրամատիկական ստեղծագործությունները, «Քարաշեն» վիպակը եւ մանրապատումները:

Ժողովածուն կազմելիս, սակայն, նպատակահարմար գտանք այս գրքում ընդգրկել նաեւ գրողի «Այս Ղարաբաղն է» գրքի բանաստեղծությունների մի որոշ մասը:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բաժինը կազմելիս հիմք ենք ընդունել ժամանակին հեղինակի կազմած «Այս Ղարաբաղն է» ժողովածուն: «Այլ բանաստեղծություններ» ենթաբաժնում զետեղել ենք անտիպ այն ստեղծագործությունները, որոնք խորհրդային տարիներին հեղինակը չէր կարող ընդգրկել իր կազմած գրքի մեջ: Միաժամանակ, այս բաժնում զետեղել ենք մի քանի տասնյակ այլ բանաստեղծություններ, որոնք նույն պատճառով հեղինակը չէր կարող ընդգրկել իր կազմած գրքի մեջ: Բաժնում տեղ են գտել 1960-1985 թթ. գրված լավագույն ստեղծագործությունները:

էջ 19 - «Խոթավանքում» բանաստեղծության վերջին քառյակն ունի նաև այլ տարբերակ. *«Կիսավեր վանքի կիսավեր բակում*
Մի թխաչ մանուկ նստած խաչքարին-
Օդանավեր է փնտրում երկնքում՝
Թևերին գրած՝ «Յուրի Գագարին»:

էջ 19 - *«Հուդային»* - Բանաստեղծությունն ուղղված է Ղարաբաղի նախկին տիրակալ Բորիս Կնորկովին:

էջ 21 - *«Բ. Կ.-ին, Դու ծախու հոգի»* - Նկատի ունի Բ. Կնորկովին:

էջ 21 - *«Բասարական»* - Նկատի ունի Բ. Կնորկովին: Վերնագիրն ընտրել է Կնորկովի «Բորիս Սարկիսովիչ» անուն-հայրանվան հապավումից՝ Բա-սար:

էջ 34 - *«Ծոռն Հուդայի տունս մտավ...»* - Նկատի ունի Բ. Կնորկովին:

էջ 36 - *«Երբ փարոս է ճանապարհիդ*
Ալի Բաբան Ղարաբաղում» - Նկատի ունի Բ. Կնորկովին, որի ղեկավարության տարիներին նրա իսկ թողտվությամբ ադրբեջանական տարբեր բնակավայրերից Արցախ էին գալիս և ընտանիքներով բնավորվում հազարավոր ադրբեջանցիներ:

էջ 37 - *«Որ այդ գրերով՝ մի հուդայածին*
Պիտի զրպարտեր... Մեսրոպ Մաշտոցին» - Նկատի ունի Բ. Կնորկովին:

էջ 39 - *«Լուտանքներ մերեց կծուծում իր գոս,*
Հռչակվեց դոկտոր-ակադեմիկոս» - Նկատի ունի Զիա Բունիաթովին:

էջ 40 - *«Եվ չգիտես ինչ ճանապարհով պիղծ՝*
Հռչակել իրեն մեր բախտի տերը» - Նկատի ունի Բ. Կնորկովին:

էջ 42 - *«Ցցեց իր մատը մեր հրաշքի դեմ»* - Նկատի ունի Բ. Կնորկովին որ ուզում էր վերացնել Արցախի խորհրդանիշ դարձած «Մենք ենք, մեր լեռները» կոթողը, սակայն տեղի տալով Հայաստանի մտավորական կանների և «Յունեսկոյի» բողոք-զգուշացումներին, ետ կանգնեց հրեշավոր իր մտադրությունից:

էջ 147 - *«Իմ հին բարեկամ,*
Ճանաչում եմ քեզ», Դ-ին - Թերևս նկատի ունի Հ. Ալիևին: Տես նաև՝ «Սև վեզիրը» (էջ 120), «Քեզ ճանաչում ենք քո ժպիտից կեղծ...» (էջ 149):

էջ 147 - *«Դու քո ամբողջ էությամբ*
Քաղաքական խուլիգան» - Նկատի ունի Բ. Կնորկովին:

էջ 150 - *«Եվ նոր Նազարն այս իր նախորդի պես*
Ոչ թե անտեղի ճանճ է փախցնում,
Այլ ճանճերին է հերոս դարձնում» - Նկատի ունի խորհրդային ղեկավար Լ. Ի. Բրեժնևին:

էջ 178 - *«Սմբատ և Բաբեկ»* - Ժամանակին ադրբեջանական և ռուսական մամուլում ադրբեջանցի բանաստեղծ Ռասուլ Ռզան բանաստեղծություն (պոեմ) էր տպագրել, որտեղ հայ Սմբատ իշխանին մեղադրում էր ադրբեջանցի «ազգային հերոս» Բաբեկին «դավաճանաբար մատնելու» մեջ, միաժամանակ՝ «մատնիչներ ու դավաճաններ» որակելով հայերին: Վ. Օվյանի այս ստեղծագործությունը պատասխանն է Ռ. Ռզայի այդ զառանցանքի...

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բաժնում տեղ գտած գործերի գերակշիռ մասն անտիպ է: Մեծ մասը գրվել է 1970-76 թվականներին:

էջ 181 - *«Ղարաբաղ»* - «Քեզ որոնեցի...» բանաստեղծության (տես՝ էջ 11) արձակ-բանաստեղծական տարբերակն է:

էջ 182 - *«Ոսոխիդ աչքում...»* - Հետագայում դարձրել է նաև չափածո և օգտագործել «Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» դրամայում (տես՝ էջ 121, «Փառաբանումն»):

էջ 195 - *«Անհայտ զինվորի գերեզմանի մոտ»* - Համանուն վերնագրով չափածո տարբերակը տես՝ էջ 59:

էջ 196 - *«Հիրոսիմա»* - Համանուն վերնագրով չափածո տարբերակը տես՝ էջ 60:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Բաժինը կազմվել է «Շաղասար», «Երգը մնաց լեռներում», «Տոհմածառ» եւ «Մեղրի ժամանակը» գրքերում տպագրված լավագույն պատմվածքներից, ինչպես տասնյակից ավելի գործերից, որոնք տպագրվում են առաջին անգամ:

էջ 256 - *«Շուշանը»* - Տպագրվել է նաև «Շամիրամը» վերնագրով:

էջ 274 - *«Տապը»* - Պատմվածքը «Սովետական գրականություն» ամսագրում (1982 թ.) տպագրվել է «Շարմաղը» վերնագրով:

«ԼԵՌՆԱԿԵՐՏ»

Վեպի առաջին տարբերակը 1973 թ. տպագրվել է «Խանքենդուց մինչև Ստեփանակերտ» և «Խանքենդի» վերնագրերով: Ժամանակին այն լայն ընդունելություն էր գտել ընթերցողների շրջանում, և հեղինակը ձեռնամուխ է եղել վեպի նոր՝ երկրորդ մասը գրելուն: Այնուհետեւ գրել է նաև երրորդ մասը:
Սույն «Լեռնակերտ»-ը կազմվել է վեպի առաջին եւ երկրորդ մասերից: Մենք հիմք ենք ընդունել հեղինակի կազմած, զգալիորեն վերամշակված տարբերակը, միաժամանակ, նպատակահարմար գտնելով ավելացնել հեղինակի կող-

մից դուրս թողնված գլուխներ («Ապետնակ թագավորը», «Ձմեռային հեքիաթ», «Ազգի հերոսը», «Գժերի թագավորը», «Ոստիկանապետ Լալաև», «Կեցցե անկախ Լեռնակերտը», «Աննախադեպ խայտառակություն», «Կարկազ Լեռնակերտցի»), որոնք ավելի են ամբողջացնում վեպի կառուցվածքը եւ հնարավորություն են տալիս ավելի լայն պատկերացում կազմել Վ. Օվյանի նշանավոր այս երկի մասին:

էջ 395 - *«Գժերի թագավորը»* - Այս գլուխը հեղինակն անջատել էր վեպից և առանձնացրել որպես առանձին պատմվածք: Բնականաբար, նա վեպից դուրս էր թողել նաև այն գլուխները, որ առնչվում են «Գժերի թագավորի»՝ Աղամ Բիրղամիչի հետ:

էջ 480 - *«Վերջաբան»* - Իրականում այստեղ ավարտվում է վեպի երկրորդ մասը: Երրորդ մասը, որի գործողությունները կատարվում են նախապատերազմյան և հետպատերազմյան տարիներին (1940-1945 թթ.), բացառությամբ երեք գլուխների («Էպիկական անտրակտ», «Նոցա կենացը» և «Պաժառնի Վաղոն»), հեղինակը նպատակահարմար չի գտել օգտագործել «Լեռնակերտ»-ում:

«ԱՄԱՐԱՍ»

Այս գրվածքը տպագրվում է առաջին անգամ: Տպագրելիս հիմք ենք ընդունել հեղինակի ձեռքով մեքենագրված օրինակը: Ըստ երեւույթին, պետք է, որ գոյություն ունենար նաեւ շարունակություն, որի առանձին հատվածները հարազատների եւ բարեկամների շրջանում հեղինակը երբեմն ընթերցում էր:

էջ 489 - Տես՝ էջ 183, «Ամարասի վանքում»:

էջ 491 - Տես՝ էջ 19, «Խոթավանքում»:

էջ 498 - Տես՝ էջ 19: Այստեղ օգտագործել է «Հուդային» բանաստեղծության 11 քառյակներից 8-ը: Երկրորդ քառյակը մասնակիորեն փոփոխված է, իսկ երրորդ քառյակը «Հուդային»-ում չկա:

ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆ
(կենսագրական համառոտ տեղեկություններ)

Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ Վազգեն ՕՎՅԱՆԸ ծնվել է 1932 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտի (այժմ՝ Ասկերան) շրջանի Դաշուշեն գյուղում: 1954 թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը, ապա ուսուցչություն է արել Վարդաշենի շրջանի Ճալեթ գյուղի ութամյա դպրոցում: 1955-58-ին ծառայել է սովետական բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է հայրենի Դաշուշեն գյուղի յոթամյա դպրոցում: 1960 թ. նշանակվել է Ստեփանակերտի մշակույթի շրջանային տան դիրեկտոր: Նույն թվականից ԽՍՀՄ գրողների միության անդամ է: 1961-85-ին աշխատել է ռադիոհաղորդումների մարզային կոմիտեում՝ որպես գրական-երաժշտական բաժնի ավագ խմբագիր (1976-79 թթ. աշխատել է «Սովետական Ղարաբաղ» օրաթերթի խմբագրությունում՝ որպես նամակների բաժնի վարիչ):

Վ. Օվյանի առաջին բանաստեղծությունը տպագրվել է «Սովետական Ղարաբաղ» թերթում՝ 1948 թ.: 1961 թ. լույս է տեսել գրողի անդրանիկ գիրքը: Այնուհետև պարբերաբար տպագրվել են «Լեռների լեգենդը», «Շաղասար», «Խանքենդի», «Երգը մնաց լեռներում», «Տոհմածառ», «Մեղրի ժամանակը» գրքերը: Հետմահու լույս են տեսել «Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» և «Ղարաբաղի արծիվը» գրքերը: Ունի անտիպ երեք ժողովածու:

Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը 1969-ին բեմադրել է նրա «Մեծ Լոռեցին», 1973-ին՝ «Լուսաբացը լեռներում» պիեսները, 1980-ին՝ «Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» քնարական դրաման, որոնք լայն ընդունելություն են գտել հանդիսատեսների շրջանում, իսկ «Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» պիեսը բեմադրվել է 100-ից ավելի անգամ՝ միշտ ուղեկցվելով լեփ-լեցուն դահլիճով: Վ. Օվյանի «Մեծ Լոռեցին» ներկայացումը Հայաստանում Հովի. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված մրցույթում արժանացել է երկրորդ մրցանակի:

Վ. Օվյանը շատ ծրագրեր ու երազանքներ ուներ: Սակայն անսպասելի ծանր հիվանդությունը ի չիք դարձրեց գրողի բոլոր ծրագրերը: 1987 թվականի փետրվարի 23-ին Վազգեն Օվյանը վախճանվեց:

2002 թ. մայիսի 8-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի, հասարակական գործունեության ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների համար և Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի օրվա, Շուշիի ազատագրման 10-րդ տարեդարձի կապակցությամբ հետմահու պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

«ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է»...

2002-ի մայիսին յոթերորդ անգամ կգտնվեի Ստեփանակերտում՝ թե՛ մասնակցելու «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի 10-ամյակի հանդիսությանը և թե՛ նույն ատեն այցելելու-քննելու Հիմնադրամի Տորոնտոյի մարմնի ստանձնած ծրագիրները:

Ամսի 21-ին հավաքված էինք մայրաքաղաքի Մշակույթի պալատում՝ տոնելու 10-ամյա հանդիսությունը: Ծրագիրը շատ գեղեցիկ էր: Պաշտոնական ելույթներից հետո սկսվեց գեղարվեստական մասը: Մեկը մյուսի հետևից բեմ էին բարձրանում կտրիճ տղաներ և աղջիկներ, որոնք երգում էին ու պարում ղարաբաղյան արիությամբ: Հետո բեմ բարձրացավ մի ասմունքող և արտասանեց «Այս Ղարաբաղն է» բանաստեղծությունը: Ես, աթոռիս մեջ մխրճված և մարմինս փշաքաղված, ունկնդրում էի այդ սքանչելի գործը: Երբ մեծ ծափահարություններով քերթվածքն ավարտվեց, իմ քով նստած, իմ մոտիկ բարեկամ, ԼՂՀ նախագահի աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ Բորյա Ալավերդյանին հարցրի, թե ով է այդ գլուխգործոց բանաստեղծության հեղինակը և խնդրեցի այդ քերթվածքից մի օրինակ գտնել ինձ համար:

Բորյան ասաց, որ բանաստեղծի անունը Վազգեն Օվյան է, և վաղը կփորձի մի օրինակ գտնել: Հաջորդ առավոտ նա արդեն լուծել էր խնդիրը, և Վազգեն Օվյանի դուստրը՝ Նարինեն, վարչապետարանի շենքի առջև ինձ համար «Այս Ղարաբաղն է» բանաստեղծության մի օրինակ մակագրեց: Առիթ չեղավ իրար հետ խոսելու բանաստեղծի մասին, բայց հայտնի եղավ, որ իր գործերը չէր տպագրված: Ես աճապարում էի, որովհետև պետք է մեկնեինք Վանք՝ քննելու մեր ծրագիրը:

Բայց ես արդեն որոշել էի այս անզուգական գործը ներկայացնել տորոնտոհայությանը: Այս որոշումը իրականացավ Արցախից վերադառնալուց մի քանի օր հետո: Հունիսի 10-ին Հիմնադրամի Տորոնտոյի Մարմնի 10-ամյակի հանդիսությանը իմ խոսքը սկսեցի «Այս Ղարաբաղն է» քերթվածքով: Ժողովուրդը մեծ հուզումով ունկնդրում էր և նույն ատեն ուրախանում, որ Արցախից այսքան ուժգին և խորիմաստ գրող է դուրս եկել՝ հակառակ 70-80-ական թվականների դաժան տարիներին:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Տորոնտոյի Մարմնի համար մեծ պատիվ է՝ մասնակցել հեղինակի գործերի հրատարակությանը, և Արցախյան գրչի մշակույթն այս ձևով ներկայացնելու համայն հայությանը: Վստահ ենք, որ Վազգեն Օվյանի հոգին այսօր ճախրում է Արցախի երկինքներում, որի անկախությունը ինքը չկարողացավ տեսնել իր ողջ կյանքում:

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉՅԱՆ
Ատենապետ
«Հայաստան» Համահայկական
Հիմնադրամ, Տորոնտո

ՎԱԶԳԵՆ ՕՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Վազգեն Օվյանը վառ արտահայտված անհատականություն էր մեր գրական անդաստանում՝ ոչ միայն իր ստեղծագործություններով, այլ նաև իր կեցվածքով, մարդկային դրսևորումներով: Ի տարբերություն շատերիս, նա վաղ մտավ գրական աշխարհ, դեռ դպրոցական տարիներից նրա բանաստեղծություններն ու ֆելիետոնները տպագրվում էին «Խորհրդային Ղարաբաղում»: Հատկապես ֆելիետոնները և երգիծական ոտանավորներն առաջ էին բերում ընթերցողների քրքիջն ու հրճվանքը: Մարդիկ կարիք ունեին քրքջալ այն այլանդակ երևույթների վրա, որ կային կյանքում:

Երկար տարիներ մենք աշխատել ենք մարզային ռադիոյում, նստում էինք նույն աշխատասենյակում, դեմ-դիմաց: Առավոտ կանուխ, մենք շուտ էինք գալիս աշխատանքի, նա բացում էր իրենից անբաժան թղթապանակը, այնտեղից հանում, ինչպես ասում են, դեռ թանաքը չչորացած թերթիկները ու սկսում կարդալ: Գիշերները նա շատ էր աշխատում, կարդում էր նոր գրած բանաստեղծությունները, որոնք ի մեծի մասի երգիծական բնույթ ունեին: Լավ հումոր էր, երբեմն կծու երգիծանք, քահ-քահ ծիծաղում էինք:

Վ. Օվյանի պոեզիայում նկատվում էր էպիկական շունչ, և նրան խորհուրդ էի տալիս, որ անցնի արձակի: Իմ հորդո՞րն էր, թե՞ ուղղակի նրա տաղանդն էր հուշում, անցավ արձակի, և այստեղ էլ տեղի ունեցավ նույնը՝ կյանքի թարմ ընկալում, ինքնատիպ հուզական արձակ: Ընդհանրապես, Վազգեն Օվյանը բազմակողմանի տաղանդի տեր էր և հետագայում, երբ հասունացել էր, գրեց դրամատիկական գործեր, որոնք հաջողությամբ բեմադրվեցին Ստեփանակերտի դրամատիկական թատրոնում:

Երբ առաջին բանաստեղծությունները, առաջին գիրքը հրատարակվեց, մամուլը, գրասեր հասարակությունը ծափողջույններով դիմավորեց... Թե՛ արձակի մեջ և թե՛ պոեզիայում Օվյանի խոսքը թարմ էր, ինքնուրույն: Սիրում էին նրա պոեզիան, նույնը նաև նրա պատմվածքները. երբ առանձին գրքով լույս տեսան, նրանք, Շիրազի ասած, գարնանամուտի թարմություն էին բերել՝ իր գյուղից, իր ապրումներից, իր ծննդավայրից, իր լեռնային միջավայրից... Դա գալիս էր գրողի տաղանդի բնույթից, անձնական նկարագրից: Անկեղծ էր ու հավատավոր, մանկան պես միամիտ: Բառն ընկալում էր իր նախնական իմաստով, վարքագծի երկիմաստությունը չէր ընդունում, չէր ընկալում: Նրան կարելի էր հեշտ մոլորեցնել: Աշխատանքի բերումով, թերևս ընկերական հարաբերությունների թելադրանքով դիտողություն էի անում, նրա փոխարեն վրդովվում. Տնաշեն, ասում էի, ամեն ասածի մի հավատա: Բայց ո՞ւմ ես ասում: Մարդն այդպիսին էր, անկեղծ ու հավատավոր, և այդպիսին էլ մնաց գրականության մեջ: Գուցե բնավորության և ի վերջո տաղանդի այդ գիծը այն երակն էր, որ իսկապես նրա գրականությունը դարձնում է արժեքավոր:

Մեր Արցախյան շարժման ամբողջ ընթացքում երկու բան կսկիծի նման անընդհատ հետապնդում էր. որ եթե մեր Շարժման մեջ կենդանի լիներ Սևակը, այն ինչպիսի հզոր լիցք կստանար նրա խոսքից: Այս նույն միտքը ես կապում եմ նաև Վազգեն Օվյանի հետ. որ եթե նա կենդանի լիներ, ինչ-պե՞ս կփայլատակեր իսկապես նրա մեծ երգիծանքը, հատկապես ադրբեջանական մամուլի դեմ գաղափարական պայքարում: Բայց, ավա՜ղ, կյանքը տնօրինեց այլ կերպ:

Սակայն, այնուամենայնիվ, այն գաղափարները, հանուն որոնց ապրում ու ստեղծագործում էր, նախակարապետը եղան այն գոյապայքարի, որ տեղի ունեցավ նրանից հետո: Այսօր, կարծում եմ, մեր քաղաքացիական, մարդկային պարտքն է, որպեսզի վերհիշենք մեր գործընկերոջը, մեր տաղանդավոր գրողին:

ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գրող, հրապարակախոս

Վազգեն Օվյանի լեզուն պատկերավոր է, աֆորիզմի սահմանին հասնող կարճ, համոզիչ, տպավորիչ... Այդ իսկ պատճառով լարվածությամբ կարդացվում են նրա նովելները՝ մի շնչով, առանց կանգ առնելու: Բնածին է նրա հումորը, լեռնցու լայն բնավորությունն արտահայտող, կակուղ և կիրթ միևնույն ժամանակ:

...Կարծես այլևս ծերմակ կետեր չեն մնացել մեր գրականության մեջ, իսկ Վազգեն Օվյանի նովելները կարդացվում են հետաքրքրությամբ, ուշադրությամբ, որպես թարմ էջեր անծանոթ անցյալից: Մենք այդ հեղինակից շատ սպասելիքներ ունենք՝ նովելի բնագավառում: Նա բառի ու նախադասության արժեքը գիտե: Նա ծաղկանոցում անտեղի ծաղիկներ չի քաղի: Աչքի տեսածը գրվածքի նյութ չի դարձնի:

Ա. Մ. ԱՐՇԱՐՈՒՆԻ
պրոֆեսոր

Վազգեն Օվյանի «Լեռնակերտ» («Խանքենդուց մինչև Ստեփանակերտ») վիպակն իր «ելման» կետում առնչություններ ունի Չարենցի «Երկիր Նաիրի»-ի, Բակունցի «Կյորես»-ի, Խանզադյանի «Մատյան եղելության»-ի հետ (թեև խիստ տարբեր են մատուցման եղանակները, յուրօրինակ են կերպն ու հայացքը): Ապա և անուղղակի շոշափումներ կան «Լեռնակերտի» և Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակի միջև, քիչ այն կողմ է նաև Մահարու «Այրվող այգեստանները»:

Օվյանն իր «Լեռնակերտ» վիպակով դառնում է մեր նախորդների ավանդների շարունակողներից մեկը... Եթե նյութի ընտրության կամ ելակետի հարցում գրողը հենվում է նախորդների վրա, ապա ոճի, արվեստի, արտահայտման եղանակների տեսակետից այս վիպակը միանգամայն

ուրույն երկ է՝ համեմված շատ հաճախ նրբին հումորով, հաճախ էլ սարկաստիկ ծիծաղով: Ընդհանրապես, Օվյանի արձակն աչքի է ընկնում հումորի, երգիծանքի ուրույն միջոցների հարստությամբ: Առանձին դեպքերում, այս մարզում նա հասնում է ակնհայտ նվաճումների:

Վազգեն Օվյանն արագ էր աշխատում: Զարմանալի եռանդով նա պիեսին զուգահեռ գրում էր պատմվածք կամ նովել, բանաստեղծության հետ ընթերցողի դատին էր հանձնում որևէ առակ կամ հումորեսկ: Իր գրական գործունեության երեսուն տարում քիչ գործ չի արել Վ. Օվյանը՝ և՛ իբրև գրող, և՛ իբրև քաղաքացի: Միշտ զբաղված, բայց զարմանալի կերպով աշխույժ, սրտաբաց ու սրտամոտ, կատակասեր ու եռանդուն, չափազանց բարի ու անկեղծ,- ահա այսպիսինն է, բանաստեղծ, դրամատուրգ, արձակագիր, իր հողին ու ջրին նվիրված, ղարաբաղյան իր շիտակությամբ պարզ ու պայծառ Վազգեն Օվյանը:

ՍԵՐԳԵՅ ԱԹԱԲԵԿՅԱՆ
գրականագետ

Ուզում եմ խոսք գրել իմ տաղանդավոր ու վաղամեռիկ գրչեղբոր՝ Վազգեն Օվյանի մասին... Սակայն ես ի՞նչ կարող եմ գրել մի մարդու մասին, որն իր ձեռքով է գրել իր անմահության հավերժախոս լեգենդը: Այո, նա մեկն էր այն երջանիկներից, որոնք իրենց կենդանության օրոք զգում էին իրենց գրչի ուժը և կարողանում շռայլորեն օգտվել այդ ուժի շնորհներից:

Ժողովրդի ցավը նրա ցավն էր, և այն դարմանելու համար նա չէր խնայում ոչինչ՝ ո՛չ գրիչը, ո՛չ աչքերի լույսը և ոչ էլ առողջությունը: Աշխատում էր անգամ ծանր հիվանդության պայմաններում, երբ գամված էր անկողնուն:

Իսկական պրոֆեսիոնալ գրող էր՝ նախանձելի եռանդով ու պատասխանատվությամբ: Համեստությունը նրա կյանքի օրենքն էր: Չուներ գրողի պոզա և սովորական մահկանացուի պես էր պահում իրեն: Մինչդեռ նա արժանի էր ամեն մի կոչման: Սակայն նա կյանքից գնաց սրբազան գրողի կոչումով, և այդ կոչումն էլ եղավ հավերժության ճամփորդի նրա ուղեկիցը:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
բանաստեղծ

Հանձին Վազգեն Օվյանի, գործ ունենք մի հասուն հեղինակի հետ, որն արդեն ունի գրական որոշակի մակարդակ, ավելին՝ նրա ժողովածուները վկայում են, որ Օվյանն օժտված է երգիծելու անուրանալի ձիրքով, առողջ, օգտակար ծաղրը սկզբից մինչև վերջին էջը ուղեկցում է քեզ և, կրկնում ենք, այդ ամենն այնքան անբռնազբոս ու սրամիտ, որ գրոտեսկն անգամ հավանական է թվում:

ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
բանաստեղծ, գրականագիտության
դոկտոր, պրոֆեսոր

Վազգեն Օվյանը Արցախի այն մտավորականներից էր, ում աչքը բանաստեղծի աչք լինելով՝ ցավի միջից էլ ժպտում էր կյանքին, իսկ սիրտը՝ տառապում տոտալիտարիզմի թմրանյութերով քնեացված ժողովրդի և՛ ֆիզիկական, և՛ բարոյական կորուստներով... Գրողի կենդանության օրոք մտերիմ ընկերներից շատերն անգամ չէին պատկերացնում այդ տառապանքի խորությունը: Մեկ-մեկ, երբ շատ էր «լցված» լինում, արտահայտվում էր՝ կրակ կտրած: Այդպիսի պահերին հավատում էիր, որ աչքերն, իրոք, հոգու հայելին են...

Երբ գրողն արդեն չկար, և որդին բացեց հոր անտիպի պահոցը, հայտնաբերվեցին շարքեր, որոնք ասես այսօր են գրվել: Մեր ի վերջո բացլեզու դարձած ցավի՛, ազատամարտի՛ անունից:

ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆ
բանաստեղծ, լրագրող

Վազգեն Օվյանի մեջ սերտ զուգակցված են տաղանդավոր բանաստեղծը, հրապարակախոսը, առակագիրը և, միաժամանակ, պայծառ մարդն ու մեծ հայրենասերը:

ՀՐԱՉՅԱ ՌՈՒԽԿՅԱՆ
ժողովրդական նկարիչ

Նրանից վախենում, բայց առավել շատ նրան սիրում ու հավատում էին: Վախենում էին իշխանավորներն ու սրանց թիկունքը պաշտպանող, իսկ ավելի ստույգ՝ այդ թիկունքով ապահովություն ու դիրք թռցնողները՝ պաշտոնյա, թե ստրկամիտ այլ ծառայող, անգամ՝ իրենց մտավորական ներկայացնող «երևելիք»: Նրան սիրում էին շարքային մարդիկ, ավելի ճշգրիտ՝ խիղճ ու հոգի ունեցող բոլոր նրանք, որոնց համար ազնիվ ու գեղեցիկ խոսքը այն ժամանակ անփոխարինելի փրկօղակի պես էր: Վերջիններս՝ սիրողները, երիցս մեծաքանակ էին առաջինների՝ վախեցողների, ապա և՝ ատողների համեմատությամբ: Որտեղ մեծամասնություն, այնտեղ իշխանություն. Վ. Օվյանը մարդկանց մտքի վրա իրական իշխող էր՝ իր վարքով ու գրականությամբ:

Նա, իրոք, անվիճելի ժողովրդական գրող էր անցած դարի 70-80-ական թվականներին: Արցախյան իրականության մեջ թերևս միակ անհատն էր, որ շուրջանակի ճնշող խորհրդային ռեժիմի օրոք գրավեց խոսքի ազատության հնարավոր բոլոր սահմանները և, ըստ էության, միակ գործող ընդդիմադիրն էր: Եղավ այն հազվագյուտ հայ գրողներից, որի դարակներում մնացին բազմաթիվ անտիպ ստեղծագործություններ՝ իրենց գրաքննչական «արատների» և երգիծական ուղղվածության պատճառով: Սակայն Վազգեն Օվյանի գրական ներկայությունը ցպահանջ է մնում իրեն վերագտնել ցանկացող այսօրվա հասարակության համար ևս:

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
բանաստեղծ

ՀԱՆԳԱԾ ՀՐԱԲԽԻ ՋԱՀԱԿԻՐԸ

Արցախցի մեծ գրող ու մեծ հայրենասեր Վազգեն ՕՎՅԱՆԸ չտեսավ մեր ազգային-ազատագրական զարթոնքը, թեև զգում էր նրա մոտալուտ պոռթկումը: Իսկ մենք զգացել ու զգում ենք նրա բացակայությունը այդ պոռթկման մեջ: Հաճախ եմ մտորել, թե ինչպե՞ս նա իրեն կպահեր այս կամ այն դեպքում, ի՞նչ կասեր, ո՞ւմ կծաղկեր նրա սրամիտ գրիչը: Այս վերջին հանգամանքը վիճելի ու սուբյեկտիվ կարող է լինել: Բայց անվիճելի է, որ նա մեր շարժմանը պետք էր, նրա արդար ու սրամիտ խոսքի կարիքը կար:

Կա նաև այսօր: Համոզված եմ՝ նա իրեն այլ կերպ կպահեր, քան պահում են նրա գրչընկերները: Մի կասկածեք՝ նա իրեն այլ կերպ էր պահում նաև կևորկովյան բռնապետության տարիներին ու լիովին տարբերվում էր իր նույն գրչընկերներից: Կարծում եմ՝ այսօր ոչ թե կպաշտպաներ այս կամ այն գործչին, առավել ևս՝ ոչ թե կբռներ կշեռքի ծանր նժարի կողմը, այլ իր անկախ ու արդար խոսքը կասեր: Կասեր ժողովրդի սրտից: Կասեր տղամարդու պես, ազնիվ ու համարձակ մտավորականի պես: Ցավոք, այսօր նա մեզ հետ չէ: Բայց ի՞նչ է նշանակում գրողի մեզ հետ չլինելը: Իսկական գրողը միշտ մեզ հետ է: Մեզ հետ է նաև նա: Մեզ հետ են նրա արտակարգ և լիազոր դեսպանները՝ իր իսկ ստեղծագործությունները, որոնք մի ավելորդ անգամ փաստում են, որ նա մեզ հետ է, որ նրա խոսքը բոլոր ժամանակների համար է: Այդ թվում՝ մեր ժամանակների համար:

Անչար ու անհիշաչար մարդ էր, քչով բավարարվող, բայց այդ քիչը ուրիշի շատից լավ վայելող և այն միշտ կիսելու պատրաստ: Երբեք չֆետիշացրեց փողը («փողն ինձ պետք է սոսկ ապրելու համար»): Կենսասեր ու կենսախինդ մարդ էր, և ոչինչ մարդկային խորթ չէր նրան: Բայց գիտեր նաև գնահատել գեղեցիկը բարոյականության շրջանակներում: Մեծ հոգի ուներ («Ես կարող եմ երջանկանալ թեկուզ անկեղծ մի խոսքով, մի «բարի լույսով»): Ուրիշներն իր անունից ու հեղինակությունից ավելի էին օգտվում, քան ինքը: Երբեք չգերագնահատեց իրեն, ինչն ուրիշ կերպ էին մեկնաբանում շրջապատի մարդիկ՝ «իր գինը չգիտե»: Ազնիվ էր ու միանշանակ: Երբեք փարիսեցի չեղավ, երբեք չփորձեց իր վրա հարմարեցնել սրբի քղամիդը, թեև ուրիշներն այն չէին հանում անգամ քնելիս: Ասում էր՝ կյանքում ավելի հեշտ է կույս մնալ, քան անարատ: Թևավոր խոսքի ուժ ունեցող այս խոսքերում կենսական ահռելի իմաստնություն կա:

Վազգեն Օվյանի կյանքի ու ստեղծագործության գիտակից շրջանը լիովին համընկնում է այն ժամանակահատվածի հետ, երբ ԽՍՀՄ կոչված մեծ կայսրությունում տիրում էր Բրեժնևը, Ադրբեջան կոչեցյալ կրտսեր կայսրությունում՝ Բրեժնևի վասալ, շողոմաժպիտ Ալիևը, իսկ կրկնակի լծի

տակ գտնվող տառապյալ Ղարաբաղում՝ Բրեժնևի վասալի վասալ Կևորկովը: Միացյալ կայսրությունում այդ ժամանակահատվածը հետագայում ստացավ լճացում անունը, հավաքվեցին և հրատարակեցին այդ ժամանակին վերաբերող անեկդոտներ, առակներ և այլն: Ու պարզվեց, որ բավականին ծիծաղելի ժամանակներ էին: Մինչդեռ իրականությունն այն է, որ այդ ժամանակները գրեթե նույնքան ծիծաղելի էին, որքան Ներոնի, Հիտլերի, Ստալինի ժամանակները:

Մի հայտնի երգիծաբան ասել է՝ մենք ճշմարտությունը կատակով ենք հրամցնում, այլապես մեզ կկախեին: Խորունկ միտք է: Հենց այդ իսկ պատճառով Վազգեն Օվյանը ժամանակակիցների հուշերում մնաց որպես զավեշտախոս ու հանաքչի:

Հիշեցնենք, 60-ական թվականների կեսերին արցախահայության հերթական պոռթկումից հետո Ստեփանակերտ գործուղվեց ազգուրաց Բորիս Կևորկովը՝ զսպաշապիկ հագցնելու ժողովրդին: Ազգայնամոլների երևան հանումը հիշեցնում էր ուրվականների որս: Հենց այդ տարիներին, երբ «հայ» բառից խուսափում էին ինչպես բորոտից և դեմքով դեպի Հայաստանը քնելը բավարար հիմք էր ազգայնամոլության մեջ մեղադրվելու համար, իսկ դրան զուգընթաց հետևողականորեն ադրբեջանացվում էին մեր հողը, մեր անցյալն ու մշակույթը, Վազգեն Օվյանը գրեց իր «Մեծ գայլի, շնագայլի և այլոց մասին» հեքիաթը: Ով տեղյակ է Ղարաբաղի պատմությանը վերջին հարյուրամյակում, նա իսկույն ժամանակատարածքային աղերսներ կգտնի այդ հեքիաթի և Ղարաբաղի պատմության միջև:

Այս շքերթներից հոգնել եմ արդեն
Ու ձանձրացել եմ ճառերից դատարկ,
Ճառ է հաղորդում ռադիոն երգի տեղ,
Վալսի փոխարեն՝ աղմուկ-աղաղակ:

Որքա՜ն դիպուկ է Օվյանը բնորոշել իր ապրած ժամանակաշրջանը: Եվ այդպես էր իրոք: Հացի փոխարեն՝ լոզունգ, զգացմունքի տեղ՝ ցիտատ, իրավունքի տեղ՝ պարտականություն: Արվեստը վար էր բերվել երկինքներից ու հասցվել գետնաքարշ շարժման: Եվ «Ժամանակի շունչը դարձիր» չարենցյան հայտնի պատգամը, տիրացուաբար ըմբռնվելով, վերածվել էր ժամանակաշրջանի շունչը դառնալու հրովարտակի:

Ահա թե ինչպես է արցախահայ գրական ջոկատի այսօրվա առաջնորդներից մեկն այն ժամանակ նախանշել մեր գրականության զարգացման հիմնական ուղղությունները. «Աղդամ-Ստեփանակերտ երկաթուղու շինարարությունը, բնական գազի անցկացումը, արդյունաբերական ու կուլտուրական նշանակության բազմաթիվ օբյեկտների շինարարությունը, անասնապահական խոշոր համալիրի կառուցումը և նման այլ մեծագործություններ իրենց արժանի արտացոլումն են գտնում մարզի գրողների գեղարվեստական գործերում: Ասել է թե՝ անընդհատ զարգացող կյանքն առաջադրում է իր պահանջները» («Գրական Ադրբեջան»):

Գրողներն իրար հետ մրցում էին, թե ով պիտի իր ներբողով առաջինը «օծի» նորաբաց խոզաբուծական ֆերման, դյուցազներգություն ձոնի ի փառս որևէ տնտեսության աշնանացանի բարեհաջող ավարտի կամ ցնծերգի կենտրոնական հրապարակում տեղադրված էլեկտրոնային ժամացույցը: Եվ սա կոչվում էր գրականությունը մերձեցնել կյանքին... Շատերի համար գերագույն նպատակ էր արժանանալ տիրակալի (Բորիս Կևորկովի) բարեհաճությանը: Սակայն տիրակալի «գրական հարեմում» լինելը նաև նրա զուռնայի տակ պարելու պարտադիր պայմանն ուներ: Շատերը, Օվյանի բնորոշմամբ՝ «թմբուկ գրողները», չէին խորշում դրանից: Նրանք լավ էին ապրում մյուսների համեմատ, բայց նաև կաշկանդված էին: Լինել թե չլինել տիրակալի շրջապատում՝ համլետյան այս հարցին ոմանք, այնուամենայնիվ, կարողացան բացասական պատասխան տալ...

Ձգողության ուժ տուր ինձ մագնիսի,
Որ ոսկուց ժանգոտ երկաթը զատեմ:

Սա պարզապես Օվյանի հուսահատ ճիչն էր: Նա իսկապես կարողացավ տիրապետել այդ ուժին: Երբեք չշփոթեց ոսկին ու ժանգը, չծնրադրեց սուտուփուտ բագինների առաջ, տուրք չտվեց ժամանակաշրջանի սեթևեթ շնչին: Այդ է վկայում գրողի հարուստ գրական ժառանգությունը, ուր նա, ի տարբերություն իր գրչակիցներից շատերի, գրականությունը չիջեցրեց արձակ և չափածո ժուռնալիստիկայի մակարդակի, խուսափեց պատեհապաշտությունից, բայց կարողացավ նաև ժամանակավրեպ չլինել, իր ստեղծագործություններում արծարծեց հավերժական թեմաներ ու խնդիրներ, գնաց դեպի իր ժողովրդի հոգևոր ակունքները: Գրականագիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունեն նրա «Լեռնակերտ» («Խանքենդուց մինչև Ստեփանակերտ»), «Նազար-նամե» մեծակտավ գործերը, բանաստեղծական ժողովածուները, երգիծական պատմվածքներն ու պիեսները:

Մտավորականների մի մասը գերադասեց ընդհանրապես հեռանալ Ղարաբաղից և տարագրության գնով անեղծ պահել իր պատիվն ու ապահով՝ իր կյանքը: Մի քանիսն էլ, զորօրինակ Օվյանը, որոշեցին այնուամենայնիվ մնալ, չթողնելով, որ ազգը լիովին գլխատվի: Եվ մնացին: Դժվար էր, իրոք, իսկ երգիծաբանի համար՝ երիցս դժվար: Նրա լավագույն գործերը դատապարտված էին անտիպության, իսկ ինքը՝ գրողն էլ լարախաղացի նման էր, որ ցանկացած պահի կարող էր ընկնել ու փշրվել: «Դու մեր ոսոխի պնչից թռած բիճ». ահա թե ինչպես է նա իր «Բ. Կ.-ին» էպիգրամում բնորոշել Ղարաբաղի տիրակալին:

Գրել է այս և հարանման ուրիշ շատ տողեր, քաջ իմանալով, որ դեռ շատ ջրեր պիտի հոսեն, որպեսզի դրանք տպագրվելու բախտին արժանանան: Իսկական գրողներն այդպես էին վարվում: Գրում էին, թեև գիտեին, որ գրածները մնալու են գրադարակների վրա: Ռուսներն այդ գործերն անվանում էին դարակային գրականություն: Եվ ահա, վերոհիշյալ դժնդակ ժամանակներում ստեղծագործած գրողների վաստակը պիտի գնահատել առաջին հերթին այդ դարակների ծանրությամբ:

Նրանք, ովքեր գրում էին «կարելիի» մասին և խուսափում «չի կարելիից», այսօր, պարզվում է, գրեթե բան չունեն տալու մերօրյա ընթերցողներին: Լճացման տարիների արցախահայ (կարծում եմ՝ նաև հայ) գրականության դարակներում սոսկալիորեն քիչ բան կա: Եվ այդ քչի մեջ իր բաժինն ունի Վազգեն Օվյանը: Նա հավատում էր, որ կգան լավագույն ժամանակներ, երբ հունն արդեն անզոր կլինի պահել ջրերի խռովքը: Գիտեր, այլապես չէր գրի.

Լեռները լուռ են,
Բայց ոչ խուլ ու կույր՝
Տեսնում են, զգում.
Քարը խոսում է,
Քարը ասում է.
Հին հրաբխի խառնարանում դեռ
Հուրը չի պաղել...
ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ է:

Այս տողերը գրեց այն ժամանակ, երբ ջրերը դեռ խռովահույզ չէին, երբ արցախցին գլուխը կախ ու շրթունքները սեղմած տանում ու համբերում էր ամեն ինչ, երբ նրան օտարացնում ու հալումաշ էին անում: Բայց գրողը տեսնում էր նրա հոգու խմորումները և կանխազգում էր գալիքը: Ավա՜ղ, ինքը չտեսավ իր կանխազգացած ժամանակը՝ 1987-ի ձմռանը հոգեմաշ հիվանդությունից հետո նա վախճանվեց:

Բայց ցավն այն է, որ Վ. Օվյանի համար դժվարությունները շարունակվում են նաև մահից հետո: Ավելի ճիշտ՝ նրա ստեղծագործությունների համար: Փոխվեցին, այո, ժամանակները, ազատագրյալ Արցախն ունեցավ իր հրատարակչությունները, իր հայեցողությամբ գրքեր տպագրելու հնարավորությունը: Բայց ստացվեց այնպես, որ Օվյանը կրկին տուժեց: Գրողի գիրքը տարիներ շարունակ փոշի էր հավաքում ԼՂՀ գրողների միության ամենատարբեր սենյակներում, մինչդեռ նորաթուխ և նորահայտ բանաստեղծներն ու գրողներն այդ ընթացքում հասցրին մի քանի գրքեր տպել, իսկ ոչ նորաթուխները՝ ավելի շատ:

Թող պարադոքս չթվա, բայց գրողի նկատմամբ վերոհիշյալ սառնությունը միևնույն ժամանակ նաև նրա վաստակի ամենալավ գնահատականն է՝ ուրեմն դեռ կենդանի են նրա հերոսները...

Այնուամենայնիվ, մի բան կարելի է աներկբա ասել. նա այն գրողն է, որի ստեղծագործությունները մարտիկ են դաստիարակում, անշեջ են պահում ազգային կրակը և ցույց են տալիս դեպ տաճար տանող ճանապարհը: Երևի գրողի առաքելությունն էլ դա է:

ԳԵՂԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՄԵՆԱԱՐՑԱԽՑԻ ԳՐՈՂԸ

Բանաստեղծ, արձակագիր, երգիծաբան, թատերագիր... Այս բառերից յուրաքանչյուրը և բոլորը միասին, անվերապահորեն կարող են նախորդել Վազգեն Օվյան անուն-ազգանվանը: Այդուհանդերձ, նա ամենից շուտ և ամենից շատ Արցախցի էր, թերևս, ճիշտ կլինի ասել՝ ամենաարցախցի գրողը: Այդ են հաստատում նրա թողած գրական ժառանգությունն ու նրա գրողական կերպարը:

Խոր, աստվածային սեր ուներ Արցախ հայաշխարհի հանդեպ: Եվ նույնքան խոր ցավ՝ նրա ճակատագրի նկատմամբ: Այս սիրուց ու ցավից են հյուսվել նրա բազմաժանր ստեղծագործությունները՝ համեմված արցախական-ժողովրդական բառ ու բանով, զվարթ հումորով: Այդ սերն ու ցավը, ավելի ճիշտ՝ այդ սիրո ցավն էլ սպանեց նրան:

Շատ էր գրում, և ընթերցողը սպասում էր նրա ստորագրությանը, քանզի հավատում էր այդ ստորագրության շիտակությանը: Ինչ էլ գրել է՝ իրեն չի դավաճանել, չի ծռել հոգին: Ինչպես յուրաքանչյուր ճշմարիտ գրող, պատվերով չէր գրում և հեռու էր ձոն-ներբողներից, «պալատական» հովվերգությունից, որքան էլ դրանք հույժ մոդայիկ ու գայթակղիչ լինեին, նույնիսկ՝ անհրաժեշտ, «հացի խնդրի» պես մի բան: Այլ կերպ ասած՝ կյանքում, առավել ևս գրական կյանքում շահադիտական մղումներ չի ունեցել երբեք ու միշտ մնացել է իր արժանապատիվ բարձրության վրա: Ըստ իս, Վազգեն Օվյանը, առաջին հերթին, դրանով է հենց առանձնանում իբրև անհատականություն, ինչն էլ առանձնակի հմայք է հաղորդում նրա՝ իբրև գրողի, մարդու և, ինչու չէ, քաղաքացու դիմագծին:

Շռայլորեն օժտված էր հումորով, երգիծելու ակնհայտ շնորհքով: Սիրում էր կրկնել հայտնի ճշմարտությունը՝ հումորից զուրկ մարդը կատարյալ մարդ չէ: Բայց քանի որ Տերը, դժբախտաբար, ամենքին չի շնորհել այդ օժտվածությունը, նրա սրամտություններից, անմեղ կատակներից երբեմն նեղանում էին: Մինչև իսկ՝ իր գրչընկերները: Դա, բնականաբար, նրան սաստիկ զարմացնում էր, սակայն չէր խանգարում, որ շարունակեր «իրերը կոչել իրենց անուններով»:

Վերին աստիճանի դյուրահավատ էր, որը ինչ-որ տեղ միամտության երանգ էր ստանում, ինչը, հարկավ, բխում էր նրա բյուրեղյա ազնվությունից: Ամենից շատ ատում էր կեղծիքը, քծնանքն ու շողոքորթությունը, որ հատկապես այդ տարիներին բուռն փթթում էին ապրում, ի ցավ սրտի՝ չշրջանցելով նաև գրչի մարդկանց: Մի բանից էր, երևի, գոհ Օվյանը. դրանք առատ նյութ էին մատակարարում իր գրչին՝ երկնելու նորանոր առակներ,

էպիգրամներ, պամֆլետներ: Ինչպես բոլոր շիտակ հոգիները, նա էլ շատ հաճախ տուժում էր իր ազնիվ կեցվածքի, ճշմարտությունը կենսակերպ համարելու «մեղքից»...

Վազգեն Օվյանը, ինչպես մեր գրողների ճնշող մեծամասնությունը, գրական ասպարեզ է իջել բանաստեղծությամբ՝ հրատարակելով «Լուսաբաց» (1961 թ.) և «Լեռների լեգենդը» (1966 թ.) փոքրիկ ժողովածուները, ապա անցել է արձակի՝ ընթերցողի սեղանին դնելով «Շաղասար» (1970թ.), «Խանքենդի» (1975թ.), «Երգը մնաց լեռներում» (1978 թ.), «Տոհմածառ» (1980թ.) և «Մեղրի ժամանակը» (1984թ.) գրքերը: Այսքանը հասցրեց հրապարակ հանել, չհաշված Ստեփանակերտի պետթատրոնում բեմադրված իր երեք պիեսներն ու պարբերական մամուլում սփռված բազմաթիվ երգիծական ու ոչ երգիծական պատմվածքները, առակները, էպիգրամները:

Օվյանի գրական ժառանգության ստվար մասը մնացել է անտիպ, այդ թվում՝ պոեմներ ու չափածո այլ գործեր և «Ղարաբաղի արծիվը» պատմավեպը, որն, անշուշտ, հաճելի անակնկալ էր ընթերցողների համար: Վերջինս, ինչպես նաև գրողի երգիծական բնույթի չափածո և արձակ ստեղծագործությունները՝ «Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց» խորագրով, հետագայում, թեև ոչ պատշաճ մակարդակով, լույս տեսան առանձին գրքերով՝ շնորհիվ իր զավակների նվիրական ջանքերի ու բարերար մարդկանց սիրահոժար օժանդակության:

Հուսանք, որ վաստակաշատ գրողի ընտրանին կհրատարակվի պետական հովանավորությամբ՝ վաղամեռիկ գրողի ծննդյան 70-ամյակի առթիվ, իր նորանկախ հայրենիքում, որի ազատության գաղափարը նրա համար վեր էր ամեն ինչից և որի համար նա անդադրում մաքառել է իր ըմբոստ, ազգային-հայրենասիրական պաթոսով տոգորված ստեղծագործություններով, մինչև կյանքի մայրամուտը (1987 թ.)՝ վայր չդնելով գրիչը՝ միակ զենքը: Անկարևոր չէ ավելացնել նաև, որ նույն շարժառիթով Վ. Օվյանը ԼՂՀ նախագահի հրամանագրով հետմահու արժանացել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

Վազգեն Օվյան գրողը այն քչերից մեկն է, որ անվերապահորեն հավատում էր իր հայրենիքի բախտի աստղին, ինչը շատերի համար այլևս ընդմիշտ կորսված պատրանք էր՝ նենգադավ կիսալուսնուն կուլ գնացած, և ամեն կերպ ջանում էր այդ աներեր հավատը փոխանցել ուրիշներին, ներարկել զանգվածների մեջ: Եվ մի՞թե դա չէ իսկական գրողի, ստեղծագործող մարդու առաջնահերթ առաքելությունը՝ քայլել հասարակության առջևից, ոչ թե՝ պոչից, զգալ, տեսնել այն, ինչ ուրիշների համար տեսանելի չէ, ապավինելով իր ազատաբաղձ ժողովրդի անկոտրում կամքին ու հզոր ուժին՝ կանխազգալ նրա վաղվա օրը, որ վերուստ տրված էր Երկնայինի կողմից:

Այս Ղարաբաղն է.
Եվ զգույշ մի քիչ՝ հրաբուխն հանգած
Կարող է հանկարծ

Քո ոտքերի տակ բորբոքվել նորից,
Դարերով լռած իր խառնարանից
Նետել հուր ու բոց,
Հողմահար անել և բերդ, և ամրոց:

Շիկացած հոգով գրված «Այս Ղարաբաղն է» ծավալուն բանաստեղծությունը կամ ասքը, որ «հանրագիտարանային» ճշգրտությամբ կերպավորում-շնչավորում է մեր սեգ լեռնաշխարհը՝ իր հերոսական, մաքառումներով ու փորձություններով լեցուն պատմությամբ, վստահաբար կարելի է համարել Արցախ աշխարհին նվիրված լավագույն պատումներից մեկը (եթե ոչ լավագույնը) հայ պոեզիայում: Կրքոտ, մարտնչող հայրենասիրությամբ են շնչում նաև բանաստեղծի՝ արցախյան թեման ներառող մյուս գործերը, որոնց մեջ զարմանալի սեր ու գորովանք կա դեպի մայր երկիրը և, միաժամանակ, ցավ ու մորմոք.

Ղարաբաղ եմ ասում՝
Հոգիս բաց է լինում,
Ղարաբաղ եմ տեսնում՝
Սիրտս լաց է լինում...

Իր ասելիքը արտահայտելու համար բանաստեղծը, մռայլ, դժնի իրականության պարտադրմամբ, ստիպված էր հաճախ դիմել ալեգորիզմի՝ «բանաստեղծական ծածկալեզվի», բայց այն երբեմն այնքան դիպուկ ու թափանցիկ էր ստացվում, որ անհնարին էր դառնում տպագրությունը: Ուղղակի ստեղծագործական խիզախություն պիտի համարել «կնորկովյան» խեղդուկ մթնոլորտում ծնված նրա գործերը՝ «Հեքիաթ մեծ գայլի, շնագայլի և այլոց մասին», «Հուդային», «Բասարական», «Մենք», «Հայրենադավը», «Պարոդիաներ» («Հիմա է՞լ լռենք», «Դու հպարտ չես, իմ Ղարաբաղ», «Կկորչեն հավետ...» և այլն), «Կրկես», «Ութնյակներ» և այլն, որոնց մեջ, ինչպես հայելում, արտացոլված է տվյալ ժամանակաշրջանի անթերի պատկերը: Ի դեպ, Վազգեն Օվյանը մեր միակ գրողն է, որ հանդգնեց «անմահացնել» նորօրյա Մելիք-Շահնազար 2-րդին՝ ազգադավ Բ. Կնորկովին, նրան բնութագրելով ոչ այլ կերպ, քան՝ «մեր ոսոխի պնչից թռած բիծ»:

Այդ տարիներին, երբ գրական պարտադիր, օրախնդիր թեմա էին համարվում «հարվածային կառույցները», իմա՝ Աղդամ-Ստեփանակերտ երկաթուղին, գազիֆիկացումը և այլն՝ որպես հարազատ Ադրբեջանի և անձամբ Հ. Ալիևի՝ Արցախի նկատմամբ հայրական հոգատարության բոցավառ դրսևորում, Օվյանը՝ հավատարիմ մնալով գրողի իր կոչմանը, հեռու մնաց էժան և անմիտ ճամարտակություններից ու գրեց «Նազար-նամե» երգիծական մեծ պոեմը, հիշատակված «Ղարաբաղի արծիվը», «Լեռնակերտ» («Խանքենդուց մինչև Ստեփանակերտ») վեպի երկրորդ և երրորդ մասերը (առաջին մասը, ինչպես ասվեց, հրատարակել է որպես առանձին վիպակ) և այլն, որոնք կարոտ են գրականագիտական լուրջ ուսումնասի-

ության և որոնցով իրավամբ կարող ենք հպարտանալ Արցախի գրական ընտանիքի անդամներս:

«Նազար-նամե» պոեմը հետաքրքիր նորություն է մեր գրականության մեջ ոչ միայն ժանրային առումով, այլև թեմատիկայի յուրօրինակ մեկնաբանությամբ. հեղինակը ընդարձակելով գործողությունների շրջանակը, մեր ժամանակներին ավելի է մոտիկացրել մշտարթուն ու հավերժական հերոսին՝ Քաջ Նազարին, որին ժամանակին մարմնավորել են Թումանյանը, Իսահակյանը, Դեմիրճյանը, Զորյանը, Համաստեղը: Ուշագրավ են նաև Օվյանի բանահյուսական մյուս մշակումները, մանավանդ՝ արցախցի Եզոպոսի՝ Պըլը-Պուղուն վերաբերող գրվածքները:

«Ղարաբաղի արծիվը» արցախական թեմայով գրված երրորդ պատմավեպն է հայ գրականության մեջ՝ Լեոյի «Մելիքի աղջիկը» և Սերո Խանզադյանի «Շուշի» գործերից հետո: Հավելենք, որ Վազգեն Օվյանը Արցախի գրական օջախի առաջին ու միակ անդամն է, որ դիմել է այդ ժանրին: Սկզբնաղբյուր ունենալով ռուս հայտնի զինվորական պատմաբան Վ. Պոտտոյի «Ղարաբաղի առաջին կամավորականները» աշխատությունը (1902 թ.), հեղինակը տեսանելի գույներով վերակենդանացրել է 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի անցքերը՝ առնչված հայ-ռուսական հարաբերություններին ընդհանրապես և օտար բռնակալների դեմ մղված ազատագրական պայքարին՝ մասնավորապես: «Հարկավոր է զենք բռնել սովորել,- իր համերկրացիներին է դիմում վեպի կենտրոնական հերոսը՝ Հովհաննես հարյուրապետը,- որպեսզի Աբաս Միրզայի ճանապարհն իսպառ փակենք դեպի Ղարաբաղ»: Ինչպես, այսինքն, մերօրյա պատերազմում էր:

Վազգեն Օվյանի՝ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» և Ա. Բակունցի «Կյորես» վեպերի ավանդներով գրված «Լեռնակերտ» ստեղծագործությունը ընթերցողին արդեն տեղափոխում է մեր ոչ հեռավոր անցյալը: Գունեղ, ինքնատիպ կոլորիտով, կենդանի, մտապահվող կերպարներով և աշխույժ երկխոսություններով ու սրամտություններով հագեցած այս պայծառ երկը ամենից առաջ արծարծում է մի շատ հին ու նույնքան նոր գերխնդիր. ամուր մնալ հայրենի հողի վրա և ամուր պահել մեր ազգային նկարագիրը:

Դժվար է գուշակել, թե ինչ մտահղացումներ կիսատ թողեց տաղանդավոր գրողը՝ ցավալիորեն շուտ հեռանալով մեզանից: Սակայն աներկբա է, որ Վազգեն Օվյանի բացակայությունը խիստ զգացվում է մեր այսօրվա թե՛ գրական-մշակութային, թե՛ հասարակական-առտնին կյանքում: Նա իր ապրած կյանքով հավաստեց, թե գրողը և, առհասարակ, արվեստագետը, ստեղծագործող մարդը ինչպես պե՛տք է ծառայի իր հայրենիքին, իր ժողովրդին...

ԿՈՄԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆ
արձակավիր, լրագրող

ՀԱՐԱՋԱՏ ԲՆԱՇԽԱՐՀԻ ՈԳԻՆ ՈՒ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Գաղտնիք չէ, որ գրականագիտությունը պարտք է Վազգեն Օվյանին: Ավելին, այդ պարտքին (հատկապես բանաստեղծի մահվանից հետո) սկսել են հավելվել նաև անարդար ուշացման տոկոսները: Ճիշտ է, հիշատակի ջերմ տողեր և նրա արվեստը գնահատող մի քանի հոդվածներ գրվել են, բայց դրանք, ըստ էության, հավասարազոր են պարտքն ուշացնողի նեղողամտություն հայցող խոսքերի: Ցավոք, այս փոքրիկ հոդվածն էլ դրանցից մեկն է: Բայց հուսանք, որ կան նաև բոլորիս անունից պարտքը մարելու պատրաստակամ մարդիկ:

Ընդունված է Վազգեն Օվյանի մասին խոսել բարի ժպիտով, որովհետև մարդկային առաքինությունը արատավորող երևույթները հիմնականում բարի ժպիտով են երգիծված նրա ստեղծագործություններում: Թերևս միակ բացառությունը կատարվում էր, երբ խոսքի սլաքն ուղղվում էր հայրենադավներին: Բայց այս անգամ խոսելու ենք նրա ստեղծագործության այն ոլորտի մասին, ուր երգիծանքը գրեթե բացակայում է, քանզի կան հոգեկան արժեքներ, իսկ դրանց թվում (այն էլ հայ բանաստեղծի համար) գերհոգեկան և գերբացարձակ մի արժեք՝ հայրենիքը, որի մասին խոսելիս «հոգին բաց է լինում», իսկ նրա ցավերը տեսնելիս «սիրտը լաց է լինում»: 1981 թվականին գրված այս բանաստեղծությունը արտաքնապես և միտումնավոր ոճավորված է Հ. Սահյանի հանրահայտ բանաստեղծության նմանությամբ: Բայց Օվյանը ոչ թե կրկնօրինակում, այլ զարգացնում է իր հանճարեղ ժամանակակցի միտքը՝ ընթերցողին հիշեցնելով, որ ճիշտ է՝ «Հայաստան ասելիս» (Հ.Ս.) կամ, որ նույնն է՝ երբ «Ղարաբաղ եմ ասում» (Վ. Օ.), «թևերս բացվում են» (Հ. Ս.) կամ՝ «երգս թև է առնում» (Վ. Օ.), բայց երբ «Ղարաբաղ եմ տեսնում, թևաթափ եմ լինում»:

Ղարաբաղ եմ ասում՝ հավքս ճագ է տալիս,
Ղարաբաղ եմ տեսնում՝ պատս ճաք է տալիս:
Ղարաբաղ եմ ասում՝ սիրտս պար է ընկնում,
Ղարաբաղ եմ տեսնում՝ գլխիս քար է ընկնում:

Հատկապես ուզում եմ անդրադառնալ իր մեծ նախորդների և ժամանակակիցների խորիմաստ մտքերը հաստատող, խորացնող, զարգացնող ու թարմացնող բանաստեղծություններին: Այսպես, Տերյանը «Երկիր Նաիրի» շարքը, այդ թվում՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծությունը գրել է ողբերգական այն օրերին, երբ իրոք հայ ժողովրդի գլխին կախված էր պատմության ասպարեզից իսպառ հեռանալու վտանգը: Մինչդեռ այդ բանաստեղծության սկզբնատողը բնաբան դարձնելով, նույն անհուն սիրով, ցավով ու սարսափով Օվյանը ստեղծում է մի գլուխգործոց, որը ոչ

թե պատերազմի ու նախճիրի, այլ Պարույր Սևակի դիպուկ բնորոշմամբ՝ արդեն տերմինավորված ճերմակ սպանդի խտացված արձագանքն է:

Կկորչեն հավետ և փառք, և անուն,
Ինչպես հողմի դեմ ծաղկունքը անզոր,
Եվ կգա մի օր, որ Ղարաբաղում
Մի հայ չես գտնի հայերեն խոսող:
Ես կլինեմ քո պոետը վերջին,
Քո վերջին բողոքն ու նամականին:
Ձեռքս կդնեմ իմ անմեղ խղճին,
Ողբամ՝ օ՜, տուր ինձ ծուխն իմ ծխանի:
Քո ողբասացը կլինեմ վերջին,
Օտար ոտքի տակ տրորված ածուդ,
Կլինեմ վերջին հառաչանքը քո,
Վերջին հանդուգն ու վերջին ծաղրածուն:
Եվ ինձ կանվանեն ցնորված ու խենթ
Թոռն ու ծոռները նենգ Փեղամբարի,
Ինձ կքարկոծի ամբոխը անգետ-
Դասական ոճով քսաներորդ դարի:
Եվ ես կլինեմ մոռացված հավետ՝
Վերջին պոետը իմ լեռնաշխարհի:

Պարզ է, որ նման բանաստեղծությունները խորհրդային տարիներին չէին կարող տպագրվել, որովհետև ժողովուրդների եղբայրության ու ազգերի իրավահավասարության լոզունգները, ցավոք, ընդամենը բառակույտեր էին, որոնց ծածկույթի տակ Ադրբեջանն արդեն հայաթափել էր Հայաստանից հափշտակած Նախիջևանը, և այդ գործընթացը շարունակվում էր նաև Արցախում: Եթե 60-ական թվականներից սկսած ընդհանուր առմամբ հայ գրողներին հաջողվում էր տպագրել գործեր՝ նվիրված Թուրքիայի կողմից բռնազավթված Արևմտյան Հայաստանին, կամ անդրադառնալ 1915 թ. հայոց ցեղասպանությանը զուտ այն պատճառով, որ Թուրքիան Արևմուտքի դաշնակիցն էր ու խորհրդային պետության պոտենցյալ թշնամիներից մեկը, ապա բոլշևիկների կողմից Ադրբեջանին «սեփականաշնորհված» հայկական տարածքներում իրագործվող ճերմակ սպանդի մասին գրված ոչ մի տող չէր կարող սպրդել գրաքննության մաղից: Բայց ինչպես Հովհ. Շիրազի շատ անտիպ գործեր (այդ թվում «Ողբ Ղարաբաղի» բանաստեղծությունը) բերնեբերան տարածվում էին Հայաստանով մեկ, այնպես էլ Վ. Օվյանի հայրենաշունչ երգերն էին թևածում Արցախ աշխարհի վրա:

Այդպես պոկում են սիրտը մարմնից,
Այդպես հոգին են հավատից հանում,
Այդպես խլում են լույսը աչքերից,
Այդպես հավատն են միայն սպանում:
Եվ կա՞ ավելի պատիժ մի դաժան,
Քան այս զրկանքը բիրտ ու ահավոր,

Երբ հողիդ վրա տերդ չես քո տան,
Քո տնկած ծառը ո՞ւմ է հարկավոր:

...Բայց Օվյանի արվեստում գերակշռողը ողբասացությունը չէ. նա մարտիկ էր բառի բուն և վեհազնյա իմաստով: Հասկանում էր, որ հայրենիքի (այս դեպքում նրա մի հատվածի՝ Արցախի) փրկությունը ակնթարթի հարց չէ, որ ամենօրյա պայքար է պահանջվում այդ վեհ նպատակին հասնելու համար: Եվ պայքարի ձևերը, նայած ժամանակին, կարող են լինել տարբեր ու բազմաբնույթ: Առաջին կարևոր խնդիրը դիմանալն էր, դիմանալ ու մնալ հարազատ հողի վրա, որպեսզի հարմար պահին հնարավոր լիներ նաև պարզել ազատության դրոշը և ի հեճուկս աշխարհի՝ հայոց վշտի հանդեպ խլացած ականջի՝ հնչեցնել ազգային-ազատագրական պայքարի պղնձահունչ շեփորը:

Հայ ժողովուրդն արդեն ընկալել և յուրացրել էր մեծն Սևակի հայտնի պատգամը «նախ՝ ինքդ քո մե՛ջ, և ապա՝ քո՛ շուրջ», հասկացել էր, որ «օտարության մեջ ազատ լինելն էլ ա՛յլ գերություն է, իսկ տան մեջ նույնիսկ գերի լինելը ա՛յլ ազատություն» (Պ. Սևակ):

Այս նույն գաղափարներով են տոգորված նաև Վ. Օվյանի շատ բանաստեղծություններ, գաղափարներ, որոնք հրամայաբար պարտադիր էին և՛ այն տարիներին, և՛ հիմա, և՛ մեր պատմության հնագույն դարերում, և՛... վաղը: Հիշենք չորրորդ դարում ստեղծված ժողովրդական լեգենդը, թե ինչպես էր հայոց Արշակ արքան Շապուհի առաջ խեղճանում, երբ քայլում էր պարսկական հողի վրայով, և ինչպես էր ըմբոստանում ու խրոխտանում՝ հայկական հողի վրա ոտք դնելիս: Սա՛ է պատմության անվիճելի տրամաբանությունը: Ինչպես անհատը, այնպես էլ ժողովուրդը հզոր է ու անկոտրում ի՛ր հողի վրա, ի՛ր հայրենիքում:

...Թե հանդերն այս չնաշխարհիկ
Ու լեռները թողնեմ անտեր-
Ամպրոպագոռ մեր Քիրս սարի
Կայծակները ինձ կշանթեն:
Թե որ դառնամ ես տարագիր
Ու ոտքիս տակ հող չունենամ-
Ղարաբաղս կաղաղակի.
- Քեզ պես որդին թող չունենամ:

Ու քանի որ Օվյանը սիրում էր առատաբուռն սնվել հայոց հին ու նոր քերթության կենսական աղբյուրներից, պարզ է, որ ժողովրդական բանահյուսության հորդաբուխ աղբյուրը բացառություն չէր կարող կազմել: Մանավանդ որ տեսնում էր, թե ինչպես արտաքին բարեկեցության մթնոլորտում արցախահայությունը տառապում էր ոչ միայն իր հողը հափշտակողների, այլև սեփական քաջ-նազարների ու հուդաների օտարահաճ ճիրաններում.

Այն ո՛վ է ասում, թե Նազար չկա...
...իբր վաղուց ենք նազարին թաղել:

Բայց գիտեր նաև հայրենասեր բանաստեղծը, որ ոչ թե ազգադավ հաճոյակատարները, ժամանակավոր գահավորված նազարներն ու վերգոներն են հայ ժողովրդի հավաքական ոգին մարմնավորողը, այլ Սանասարն ու Բաղդասարը, Մեծ ու Փոքր Միհրներն ու Դավիթը: Օգտվելով գրականության ընձեռած մանևրելու հնարավորություններից, նա փորձում է վերաիմաստավորել արցախյան բանահյուսության ուրախ-զվարթ հերոսի՝ Պըլը-Պուղու պատմությունը, այն ծառայեցնել ներկային: Այս չափածո դրամայում երգիծանքը քող է միայն, իրականում դրական հերոսների միջոցով Օվյանը ընթերցողին ու հանդիսատեսին ոգեշնչում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով: Ահա մի հատված՝ Մելիք Եսայու պարսից շահին ուղղված պատասխանից, որտեղ հայրենասեր իշխանը հիշեցնում է, որ հայ ժողովուրդը թեև համբերատար է, բայց գիտե նաև ծառս լինել, եթե վտանգվում են իր հայրենիքն ու ազգային ինքնությունը: Հայոց Թուր-Կայծակին թեև պատյանի մեջ է, բայց միշտ պատրաստ է շողարձակել իր հողը նվաճել փորձողների գլխավերևում.

Սակայն այնպես դուք ապրեցեք այս աշխարհում,
Որ այլևս ձեր դաշտերի ագռավները մեր լեռներում չկռնչան,
Մեր սանձակոծ նժույգները ձեր դաշտերում չխրխնջան,
Մեր լեռների ջինջ գետերը չպղտորվեն ձեր հանդերում,
Ձեր աշխարհի սև հողմերը չգալարվեն մեր արտերում,
Ձեր կռվատենչ զինվորները մեր լեռներում չհառաչեն,
Մեր լեռների կայծակները ձեր աշխարհում չշառաչեն:

Վազգեն Օվյանը չհասցրեց տեսնել, թե ինչպես այս խորհուրդներին չանսացող նորօրյա հափշտակիչների զինվորները ոչ միայն հառաչեցին, այլև խորտակվեցին արցախյան խորունկ ձորերում, քանզի հայոց լեռներում իրոք շողարձակեցին արդար վրեժի այն կայծակները, որոնց լիցքերը տարիներ առաջ կուտակվել ու շիկացել էին ազգի նվիրյալների հոգիներում: Այդ նվիրյալների շարքում Վազգեն Օվյանը առաջիններից էր՝ իր երկրային կյանքը և մեծ տաղանդը հարազատ ժողովրդի հավերժին ծառայեցրած բանաստեղծը, արձակագիրը, թատերագիրը, որի ստեղծածն ու ազգանվեր գործը գնահատելու համար հազիվ թե գտնվեն ավելի դիպուկ խոսքեր, քան իր իսկ տողերը.

Ես երազանքն եմ քո հազարաձև,
Ես քո իմաստուն համբերությունն եմ,
Մելիք, խան ու բեկ կգան ու կանցնեն,
Ես, սրբազան հող, քո զորությունն եմ:
Ես ապացուցված քո վեհությունը
Եվ քո ոգին ու երգը քաղցրաբառ...

ԱՇՈՏ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ԿՅԱՆՔՈՒՄ ՆՐԱ ՏԵՂԸ ՄՆԱՑ ԹԱՓՈՒՐ

Վազգեն Օվյան գրչի մարդու և քաղաքացու մասին արտահայտվելն անչափ դյուրին է և նույնչափ էլ դժվար, քանզի ծայրահեղության աստիճան անհանդուրժող, անհաշտ ու ըմբոստ մարդ էր և ստեղծագործող, տաքարյուն ու պոռթկուն: Նրա համար նշանակություն չուներ, թե ինչպիսի միջավայրում էր՝ պաշտոնյաների, թե շարքային մարդկանց: Ամենուր նույնն էր՝ անմիջական, առանց ետին մտքերի, պարզ ու անկաշկանդ, հաջողությամբ իր սուր գրչին փոխարինում էր սուր լեզուն, սրամիտ խոսքը:

Շատերի, առավել ևս իր գրչակից ընկերների համար դժվար էր համակերպվել նրա հետ: Չէր խնայում ոչ ոքի: Առաջին հայացքից նա դժվարամարս բնավորություն ուներ, սակայն երբ խորամուխ ես լինում ու թափանցում նրա էության մեջ, ինքդ քեզ համար որպես հայտնություն ու գյուտ բացահայտում ես բարությամբ ու սրտացավությամբ լեցուն մի խառնվածք, որի հանդեպ անհնար է անտարբեր վերաբերմունք ցուցաբերել:Մինչ մենք կծանոթանայինք նոր լույս տեսած գրքերի վերնագրերին, նա արդեն հասցնում էր դրանք ընթերցել և իր տեսակետն էր հաղորդում մեզ, խոսում դրանց գեղարվեստական արժանիքների ու թերությունների մասին, հանդես բերելով ինքնատիպ մոտեցում և տալով հիմնավորված գնահատականներ:

Վազգեն Օվյանը արտակարգ աշխատասեր անձնավորություն էր, որի շնորհիվ բեղմնավոր գրչի արդյունքում ընթերցողի սեփականությունն էին դառնում ժամանակի ոգին մարմնավորող գեղարվեստական գործերը, լինեն դրանք արձակ, թե չափածո, դրամատիկական երկ, թե ռադիոբեմականացում:

Թող չափազանցություն չթվա՝ անսահման դժվար է լրագրողական աշխատանքը համատեղել գեղարվեստական գործունեության հետ: Առաջին հերթին այն պարզ պատճառով, որ լրագրողականը կլանում է ստեղծագործող անձնավորության արդյունավետ ժամանակի հիմնական մասը, որի սղության հետևանքով չի հասունանում գաղափարը ու չեն մարմնավորվում մտահղացումները: Այս առումով էլ Վազգեն Օվյանը թերևս բացառություն էր: Ե՞րբ էր հասցնում հաղորդումներին զուգընթաց բանաստեղծություն հորինել, պատմվածք գրել, այնժամ դժվար էր կռահել, իսկ տարիների հեռվից բացահայտվում է մեզ հետաքրքրող հարցի պատասխանը՝ նրան այդ ամենը հաջողվում էր իր հանգստի, առողջության հաշվին: Նա չէր կարող չստեղծագործել: Գրելը հոբբի չէր նրա համար, ոչ էլ պարապ վախտի խաղալիք, դա ներքին էությունից բխող բնական պահանջ էր, անհրաժեշտություն: Նա ապրում էր ամեն մի ստեղծագործությամբ այնքան ժամանակ, քանի դեռ այն չի ավարտվել և չի հանձնվել ընթերցողի դատին:

Օժտված լինելով բնատուր ձիրքով, նրան հաջողվում էր նախանձելի թեթևությամբ թափանցել բոլոր ժանրերի խորքը, հավաքել ու ժողովել իրեն հասանելիք գանձերը, ապա ափսոսանքով ու սիրով բաժանվել դրանցից՝ հօգուտ ընթերցողի: Նա ողջ կյանքում տառապեց «շտապողականություն» կոչվող հիվանդությամբ: Շտապում էր անգամ ստեղծագործելու պահերին: Գուցե և կանխազգացողությունն էր դրդում շտապողականության՝ ստիպելով նրան անսահման թանկ գնահատել իրեն տրամադրված ժամանակը, առավելագույն արդյունք կորզել:

Առաջին հայացքից ինքնամփոփ թվացող Վազգեն Օվյան գրողն ու մարդը, գերադասելով համեստ ու անբիծ ապրելակերպը, փոթորկոտ հոգի ու խառնվածք ուներ, որը երևի թե հանդարտվում ու մեղմանում էր, երբ ինքն իր հետ էր, իր հերոսների շրջապատում, ստեղծագործական երկունքի պահերին, երբ սովորաբար մարդու հոգին փխրուն է դառնում ու խոցելի, չափից դուրս անկեղծ ու անաչառ:

Չէր սիրում արդեն ավարտված գործերի մասին խոսել, ավելի ճիշտ խուսափում էր, իսկ երբ, այնուամենայնիվ, խոսք էր բացվում իր այս կամ այն ստեղծագործության գրական արժանիքների մասին, երկչոտ երեխայի նման հազիվ էր կարողանում թաքցնել հուզմունքը, ջանում էր փոխել խոսակցության թեման և ավելի շատ գերադասում էր խոսք բացել այն մասին, թե ինչի վրա է աշխատում:

Գրամեքենայի ժապավենի թանաքը հազիվ չորացած, ստեղծագործությունը տրամադրում էր իր գործընկերներին՝ նրանց դիտողությունները լսելու ակնկալությամբ: Նման դեպքերում հակաճառելու փորձ անգամ չէր անում, լուռ ունկնդրում էր և օրեր, շաբաթներ հետո տպագրված տեսնելով ծանոթ գործը, դժվար չէր լինում նկատել, որ այնուամենայնիվ դիտողությունները հաշվի է առել: Ինքն էլ իր հերթին չէր զլանում անկեղծ լինել գործընկեր-ստեղծագործողների հանդեպ:

Կարելի է ասել ստեղծագործական ողջ հասուն կյանքն անցկացրեց ռադիոխմբագրությունում՝ գրական-երաժշտական հաղորդումների բաժնի ավագ խմբագրի պաշտոնում: Քանի կար ու անմնացորդ նվիրված էր իր գործին, իր մասնագիտությանը, այն, ասես, ընկալվեց, ընդունվեց որպես օրինաչափ երևույթ, իսկ երբ հեռացավ կյանքից, կոլեկտիվում զգացին, որ խմբագրությունում սյուն է փլվել, սյուն, որ ահռելի տարածք էր պահում իր ուսերին: Անփոխարինելի մարդ չկա: Նա նույնպես անփոխարինելի չէր: Նրան փոխարինեցին շատերը, բայց ավա՜ղ, այնուամենայնիվ, նրա տեղը մնաց թափուր՝ ռադիոյում, գրողների շարքում, և անգամ թատրոնում, ու այսօր էլ այդ իրավիճակը մնում է անփոփոխ:

Երևի թե հենց դրանում է արտահայտվում բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ Վազգեն Օվյանի մեծությունը:

ՄԱՐՍԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԴՀ ՊԲ «Մարտիկ» պաշտոնաթերթի խմբագիր

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վազգեն Օվյանը վախճանվել է 1987 թ. փետրվարի 23-ին, ղարաբաղյան շարժումից ուղիղ մեկ տարի առաջ: Սակայն շարժումից շատ տարիներ առաջ նա զգացել ու կանխատեսել է ղարաբաղյան ոգու պոռթկումը («Հրաբխի խառնարանում դեռ հուրը չի պաղել, այս Ղարաբաղն է...»)...

Ապրել է 55 տարի: Գրողի համար դա շատ է, թե քիչ՝ չգիտեմ (Բայրոնի, Լերմոնտովի, Դուրյանի, Մեծարենցի համեմատությամբ շատ է, Շոուի, Տոլստոյի, Ավ. Իսահակյանի համեմատությամբ՝ քիչ): Միայն գիտեմ, որ նրա բազմաթիվ մտահղացումներ այդպես էլ բախտ չունեցան իրագործվելու: Ես մինչևիսկ չգիտեմ՝ դա բնական մա՞հ էր, թե՞... Հրավիրված պրոֆեսորներից մեկը հիվանդության սկզբնական շրջանում զննելով նրան, կասկածել է. «Այս հիվանդությունն այսպես արագ չպիտի զարգանար...»: Նրան շատերն էին սիրում ու հարգում: Միաժամանակ, ուներ խոշորագույն և փոքր տրամաչափի բազմաթիվ թշնամիներ...

Նրա կարծիքն իմանալու համար իրենց գրական մարզանքներն էին ուղարկում շատ-շատերը՝ առաջին գրական քայլեր անող երիտասարդներ, ահել ու ջահել բանաստեղծներ, որոնց հանկարծ թվացել է, թե այդ գիշեր անց են կացրել մուսայի հետ: Ընդհանրապես կատակասեր, մարդամոտ բնավորություն ուներ: Երբ խոսքը Արվեստին ու Գրականությանն էր վերաբերում՝ նա դատավորի պես անաչառ էր: Թերևս այդ է պատճառը, որ ես պատմվածքներս առաջին անգամ համարձակվել եմ հորս ցույց տալ երբ արդեն 25 տարեկան էի:

Գրում էր օրվա բոլոր ժամերին: Առավել հաճախ՝ երեկոները, մինչև կեսգիշեր: Այդ օրերին երբ բացում էի նրա աշխատասենյակի դուռը, ծխախոտածխից մառախուղված սենյակում հազիվ էի նշմարում գրասեղանի հետևում նստած հորս, որ այդ պահերին ինձ պատկերանում էր որպես ամպերի մեջ նստած Աստված: Հետո ծխից ու անքնությունից մշուշված նրա կապույտ աչքերը հանկարծ պայծառանում էին և նա ասում էր. «Կարդամ՝ լսիր...»:

Երբ մահացել է, ես 27 տարեկան եմ եղել, սակայն այսօր, մեկ տասնյակ տարիների հեռվից երբեմն ինձ թվում է, թե ես, ցավոք, չեմ հասցրել մի կարգին ճանաչել հորս, չնայած շատ ու շատ հարցերում նա հաճախ էր կիսվում ինձ հետ և գրեթե միշտ ինձ դարձնում իր առաջին ընթերցողն ու քննադատը:

Գրում էր գրեթե բոլոր ժանրերով: Երբեմն կիսատ էր թողնում գրածը և ձեռնամուխ լինում նոր գործի: Նույն ստեղծագործությունը երբեմն մի քանի տասնյակ և ավելի անգամ մշակում-հղկում էր, ժամանակի սղության պատճառով որոշ գործեր չէր հասցնում մշակել կամ, պարզապես, մոռանում էր դրանց գոյության մասին:

Թողել է հարուստ գրական ժառանգություն: Սովորաբար գրողներն իրենց կենդանության օրոք տպագրում են իրենց լավագույն ստեղծագործությունները կամ դրանց մեծ մասը: Նրանց մահից հետո հայտնաբերում են նրանց միջակ ու թույլ գործերը և տպագրում որպես անտիպ մասունքներ: Կոմունիստական իրավակարգը հորս ստիպել է լույս աշխարհ հանել

հիմնականում ոչ լավագույն ստեղծագործությունները: Նա նմանվում է այսբերգի, որի միայն մի չնչին մասն է երևում, մնացյալը, հիմնականը, գերակշիռ մասը ջրի տակ է և պարզապես կոչվում է Անտիպ... Դրանցից մեկը «Ղարաբաղի արծիվը» պատմավեպն է, որ գրվել է մինչև 1984-85 թվականները: Այսօր թերևս շատ հեշտ ու հասարակ է թվում Ղարաբաղի մասին պատմավեպ գրելը: Այն տարիներին դա առնվազն կհամարվեր ազգայնամոլություն, նացիոնալիզմ: Մարդիկ հատուկ պաշտոններ էին զբաղեցնում և պետությունից պարբերաբար աշխատավարձ ստանում միայն նրա համար, որ նացիոնալիստներ հայտնաբերեն: Այդ մարդուկներից շատերն այսօր էլ կենդանի են և հուշեր են գրում... 180 աստիճանի անկյան տակ...

Երևանաբնակ ընկերները մի քանի անգամ խորհուրդ տվեցին տեղափոխվել Երևան. գրական անցուդարձին ավելի մոտ կլիներ, ավելի ազատ: Ձեռքը թափ տվեց: Ղարաբաղից դուրս իրեն չէր պատկերացնում:

Երբեք կաշառք չվերցրեց և, միաժամանակ, ոչ մեկին «նվիրատվություններ» չարեց: Հրատարակչությունների դռներ չծեծեց: Գիրքն ուղարկում էր և սպասում տպագրվելուն: Հիսունամյակին խոստացան 25 մամուլանոց գիրք տպագրել: Ընկերներից շատերի գրքերը լույս տեսան, իր գիրքը մնաց... և մի քանի տարի հետո լույս տեսավ 4,5 մամուլ ծավալով: Կյանքում դա ամենամեծ հիասթափությունն էր, որ ապրեց: Լավատես էր սակայն: Շարունակում էր գրել՝ համոզված, որ դրանք մի օր լույս պիտի տեսնեն:

Այսօր, երբ երաժշտություն են պատվիրում նրանք, ովքեր վճարում են, երբ լույս են տեսնում գրքեր, որ ընդհանրապես չպիտի գրվեին, երբ «շուկայական հարաբերություններ» կարգախոսի ներքո աշխույժ ծաղկում է չարչիությունն ու ողորմելիությունը, երբեմն դառնությամբ մտածում եմ, որ ճշմարտությունը ոչ միշտ է ջրի երես դուրս գալիս, քանզի այն շատ է ծանր... Մյուս կողմից, Վազգեն Օվյանը չկա, բայց ապրում են ոչ միայն նրա ստեղծագործությունները («Այս Ղարաբաղն է» անտիպ բանաստեղծությունը ձեռքից-ձեռք է անցնում, հնչել է անգամ հեռավոր Կանադայում), այլև նրա պամֆլետների ու սարկաստիկ մյուս ստեղծագործությունների հերոսները՝ այսօր արդեն հայրենասերի ու հրեշտակի դիմակ հագած երեկվա հուդանները, պնակալեզները, եկող-գնացող իշխանությունների առջև համերաշխորեն ծոներգեր թնդացնող, քծնող-շողոքորթների ոհմակը, մի աման ապուրի համար ինքնասիրություն ու ամեն կարգի սրբություն ծախել-վաճառելու պատրաստ գրչակները, որոնք Օվյանի բացակայության պայմաններում մի առանձին աշխուժությամբ ու եռանդով են կաղկանձում նրա անվան վրա...

Եվ, քանի դեռ այսօր էլ ապրում, ամեոբաների պես բազմանում ու շարունակում են շուրջբոլոր աղտեղություններ սերմանել տաղանդավոր գրողի սարկազմի թիրախները՝ բանսարկուն ու սրիկան, մատնիչն ու պալատական աշուղը, քանի դեռ շարունակվում է Բարու և Չարի պայքարը, ու քանի գրողի մահից հետո էլ շարունակում են ապրել նրա ստեղծագործությունները, ուրեմն Վազգեն Օվյանի պայքարը ճիշտ է եղել, ուրեմն նա ճիշտ է ապրել:

ՎԱՐԴԳԵՍ ՕՎՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅՍ ՂԱՐԱԲԱՂՆ Է

Լեռների լեգենդը 5
Նկարեցի լեռներ 5
Նկարիչ, Արցախ նկարիր 6
Քանի՞ հազար տարի 7
Հազար տարվա անտառ 8
Ղարաբաղ 8
Դու անուն չես սոսկ 10
Այստեղ ծորեր կան 11
Քեզ որոնեցի 11
Ղարաբաղ եմ ասում 12
Ինձ ստիպեցին 12
Թե իմ Մռավ սարից զատվեմ 13
Բարձր սարերդ 14
Շաղասար 14
Իմ Շաղասարի 15
Արտ է, արոտ է 15
Ոչ մի բան չի փոխվել 16
Սարեր 16
Քարաշեն 17
Ձոն 17
Գնամ խառնվեմ մեր գետերին 18
Խոթավանքում 19
Հուդային 19
Դու ծախու հոգի 21
Բասարական 21
Իմ Ղարաբաղը տեսե՞լ ես, ասա... . . 24
Հիմա է՞լ լռենք 25
Դու հպարտ չես, իմ Ղարաբաղ 27
Կկորչեն հավետ և փառք, և անուն . . . 28
Հոտը գալիս է 28
Դլե յաման 29
Մենք 30
Հայրենադավը 31
Հայրենիք 32
Ութնյակներ 33
Այս Ղարաբաղն է 37

ԿԱՊՈՒՅՏ ՀՈՒՇԵՐ

Առաջին երգը 44
Մանկություն 45
Կալում 47
Հորովել 49
Օրը 50
1941 թիվ 51
Ձիերը 51
Կռիվ էր, գնաց 53
Նահանջ տարի 53
Մայրը որոնում է 55
Այդ ի՞նչ կրակ էր 56
Անհայտ կորածը 56
Ասք անմահության 57
Եվ սպասում են 58
Անհայտ զինվորի գերեզմանի մոտ 59
Բարձունքում 59
Հիրոսիմա 60
Անտեր տունը 62
Եզը 63

ՍԻՐՈ ՏԱՐԻՆԵՐ

Առաջին սեր 64
Առանց քեզ 65
Գյուղից այն դին էր 65
Սոնան պարում է 66
Գյուղի տղերք 67
Քոնն են աշխարհի ծաղիկները. 68
Նանարը եկավ 69
Դու հորոտ-մորոտ նորահարս էիր . . 70
Հեքիաթ 70
Ո՞վ է մեղավոր 71
Ծաղկավաճառին 72
Հարսանիք 72
Ծովը կապույտ, ծովը անծայր 74
Ջսասանեց ինձ հողմը խենթ 75
Ես ջահել էի 76
Այս ուշ գիշերին 76
Ո՞վ զարմանալի 78

ՀԱՍՈՒՆ ՏԱՐԻ

Այդ ես չեմ երգում 79
Իմաստության տարի 80
Ինձ 81
Հայրական 83
Քանի կողքիս ես 83
Ծաղկում, բացվում ես 84
Ափին զարկվելս 84
Կալատեղերում 85
Երջանկությունը 85
Պոետներին մեծարել են . . . 87

Այս վազերը իմ ձեռքով եմ տնկել . . . 8
Այս շքերթներից հոգնել եմ արդեն . . . 88
Ութնյակներ 89
Տրիոլետներ 91
Արևը մարեց լեռան թիկունքին . . . 94

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Մոցարտի մահը 95
Բոլորից բարձր 95
Պատկեր 96
Պատասխան 96
Բաթու խան 96
Դիոգենես 97
Պագանինի և Պրոմեթևս 98
Դոն Կիխոտ 98
Էվրիկա 99
Երբ Բրունոյին առան կալանքի . . . 101
Թագավորներին՝ կախաղան 102
Հաննիբալ 103
Բանաստեղծները 104
Մեծերի բախտը 106
Թամբի վրա 107
Այս Պըլը-Պուղին 108
Անմահությունը 109
Պատմության դասին 110
Արքա Ալֆոնսը 111
Խաչակիրները 112
Պատմություն 114
Մելիք Ավան Տիզակցին 115
Մելիք Եսայի 115
Մարատ 116
Քրիստափոր Կոլումբոս 116
Լեգենդ Ադամի մասին 117
Լեգենդ խանդի մասին 119
Սև վեզիրը 120

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փառաբանումն 121
Պողոս վարդապետի բողոքը 122
Պողոս վարդապետի տրտունջը. . . 123
Պողոս վարդապետի աղոթքը . . . 124
Պողոս վարդապետի ցասումը . . . 125
Պողոս վարդապետի զայրույթը . . . 125
Մելիք Եսայու պատասխանը . . . 126
Մելիք Շահնազարի մենախոսութ. . . 127
Պողոս վարդապետի խրատը 127
Վասն հուդայության 128
Պողոս վարդապետի կտակը . . . 129

ՍԱՏԻՐԻԿՈՆ

Պզուկը 130
Պատահար 131
Որդին 132
Լոթի Աբոն 134
Առանց պետի 136
Բեմի աստղը 138
Դիրեկտոր-դուքս 139
Շաղակրատը 139
Ղարաբաղասերը 141

ՊԱՄՖԼԵՏՆԵՐ ԵՎ ԷՊԻԳՐԱՄՆԵՐ . . 142

ՊԱՐՈԴԻԱՆԵՐ

Առյուծամուտ 151
Ախ, այս Մասիսը 152
Ինչ որ պիտի ես գրեի 152
Այս տարիքում 153
Ես կուզենայի 154
Ասք պղնձաձայն 156
Ըմբոստացում 156
Իմ բարի Ֆեան և իմ իդեան 157
Մանուկներ ենք 159
Սիրերգ 159
Ախ, միտս ընկավ 159
Ղարաբաղաձոն 160
Օ՜, ոչ նա չէ 161
Դեկտեմբեր 161

ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատինք 163
Ինչ ասեմ այն խնդությանը 164
Մենք մեզ խաղում ենք 166
Ոչ մի օրենքով 167
Չնայած կյանքում 167
Օ, մեծեր, մեծեր 168
Այո, դժվար է 168
Ռեքվիեմ 169
Հայրենական 170
Գրական խուժանը 171
Ասք անմահության 172
Սմբատ և Բաբեկ 174

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղարաբաղ 181
Հայրենական 182
Ոսոխիդ աչքում 182
Ամարասի վանքում 183
Եվ ովքեր ասես 184
Արագիլ 184

Նժույգները 185
Բոսֆորի ափին 185
Դպրոցում 186
Արևհատը 187
Սերենադ 187
Երգը մնաց լեռներում 188
Ամենագեղեցիկ աղջիկը . . . 188
Հորովել 189
Կապույտ երազ 189
Երգ սիրո մասին 190
Մենախոսություն 190
Անծանոթ աղջիկ 191
Կալում 191
Օրհնյալ փոթորիկ 191
Մերժում 192
Լեռների կարոտը 192
Պապունց տունը 192
Սանդերքը 193
Մենք ծնվել ենք ժամանակին . . . 193
Պատմիր, հուշարձան 194
Որտե՞ղ ես դու 194
Անհայտ զինվորի գերեզմ. մոտ . . . 195
Անհետ կորածը 195
Հիրոսիմա 196
Քամին անտառում 197
Միայնակ կաղնին 197
Ջահելության ոտնահետքերը . . 197
Լեռներում 197
Շահրազադե 198
Կլեոպատրա 198
Ձնս, խելոք կաց 199
Դոն-Կիխոտ 200
Հպարտ ձին 200
Հեռագրալարերի երգը 200
Պատգամ որդուս 201
Տատս 201
Քայլող կուռքեր 202
Բարի վերադարձ 202
Ձախողվածին 203
Մայիսի համար 203
Զինվորը չվերադարձավ 203
Հովվերգություն 204
Ջոն 204
Այսքան ծափ ու աղմուկի մեջ 205
Հրդեհն անտառում 206
Բայաթի 207
Մարդ կա 208
Կռունկներս չեկան 209
Մեծարում 209
Մենախոսություն 210

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՏՈՒՆԸ

Պապունց տունը 213
Պատերազմը սխալ է 218
Ես նրա շարունակությունն եմ . . . 223
Հարսանիք 225
Մենք արդեն երեխաներ չէինք . . . 229
Կալը 232
Ջրաղացում 235
Տունը 239

ՏԱՊԸ

Մենդելեևի աղյուսակը 247
Նյուտոնի օրենքը 251
Շուշանը 256
Առաջին կետը 263
Թատրոն 268
Տապը 274
Խերսոնի Խեչոն 279
Կատուն 283
Քեռի Իսոն, գրամաֆոնը... 287
Կինո 291

ՄԻՋՕՐԵ

Ճապուտ 294
Մեղրի ժամանակը 302
Ուտող-խմող մարդիկ 306
Միջօրե 308
Ախ, իմ ճամփեն 312
Սևադա, տղաս 317
Հովնանը 325
Հազարապետը 338
Մեծ մամը 345
Մեծ մամի հիշատակին 350
Անծանոթ աղջիկը 359
Ծափերը 363

ԼԵՌՆԱԿԵՐՏ (վեպ)

Առաջաբան 369
Մուտքն Լեռնակերտ 371
Գորոդովոյ Անտոնը 375
Վարժապետ Սիմոն Սարխոշյանց . 377
Ապետնակ թագավորը 380
Գալիֆե Գուգուշը և ուրիշներ . . 383
Ջմեռային հեքիաթ 389
Ազգի հույսը 393
Գժերի թագավորը 395
Ինտերմեդիա 401
Ոստիկանապետ Լալան 403
Շոգը 406

Կեցցե անկախ Լեռնակերտը . . 409
Աննախադեպ խայտառակութ. 411
Ավանդապատում 414
Բազարը 416
Մոլորվածը 420
Նահանջ 422
Կարկազ Լեռնակերտցի 425
Ղարաբաղյան պարադոքս 429
Ինտերմեդիա 432
Քաղաքական քամելեոն 433
Ֆոտո Գավրուշը 436
Ինտերմեդիա 439
Հանուն հայրենյաց 442
Թարխան Թերխաշյան 443
Ուստա Ծատուրի օրագրից 448
Օթելլոն, Դեզդեմոնան... 449
Նէպ 452
Պլատֆորմ, պլատֆորմ 458
Վավերագրություն 462
Ընկեր լիկկայանը 465
Ինտերմեդիա 468
էպիկական անտրակտ 469
Նոցա կենացը 471
Պաժառնի Վաղոն 476
Իբրև վերջաբան 480

ԱՄԱՐԱՍ (ուղեգրություն) 481

Ծանոթագրություններ 499
Կենսագրական տեղեկություններ . . 503
«Այս Ղարաբաղն է»... 504
Վազգեն Օվյանի մասին 505
Հանգած հրաբխի ջահակիրը 509
Ամենաարցախցի գրողը 513
Հարազատ բնաշխարհի արձագանքը 517
Կյանքում նրա տեղը մնաց թափուր 521
Երկու խոսք 523

ՎԱԶԳԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ ՕՎՅԱՆ

ԼԵՌՆԵՐԻ ԼԵԳԵՆԴԸ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, ՎԵՊ, ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Նկարիչ՝ Ս. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Ն. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ն. ԱԴԱՄՅԱՆ
Կոմպ. շարվածք՝ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Զ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հանձնված է շարվածքի՝ 4.09.2002 թ.
Տառատեսակ՝ «M Helv», թուղթ՝ օֆսեթ,
տպագրական 33 մամուլ
Տպաքանակ՝ 1000: Գինը՝ պայմանագրային: